Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Նվիրվում է Հայաստանում քրիստոնեությունը
պետական կրոն հռչակելու 1700-ամյակին

Տպագրվում է պետական պատվերով

ՀԱՒԱՔՈՒՄՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1862

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և
աստղանիշերով ծանոթագրությունները
Գ. Բ. Թասունյանի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2001

ՀՏԴ 93/99+941(479.25
ԳՄԴ 63.3+63.3 (2Հ)
Վ 301

Խմբագիր՝ Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Վարդան Արևելցի.
Վ 30 Տիեզերական պատմություն (Աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղանիշերով ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի).- Եր.: Երևանի պետ. համալս., Երևանի համալս. հրատ., 2001, 408 էջ:

Պատմությունն ընդգրկում է արարչագործությունից մինչև 1267 թ. ընկած ժամանակաշրջանը: Հեղինակն իր պատմության նյութը քաղել է բազմաթիվ գրքերից ու աղբյուրներից: Այն կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների (հրեաներ, հույներ, արաբներ, պարսիկներ, սելջուկներ և ուրիշներ) պատմության վերաբերյալ:

Գիրքը Արևելցու պատմության աշխարհաբար առաջին ամբողջական թարգմանությունն է:

Գրաբար տեքստը տպագրվում է ըստ Վենետիկի 1862 թ. հրատարակության:

Վ $\frac{0503000000}{704(02)2001թ.}$ 200.

ISBN 5-8084-0369-0

© Թարգմանչի համար, 2001 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ նշանավոր պատմագիր, աշխարհագրագետ, իմաստասեր, մանկավարժ, թարգմանիչ, մեկնիչ, հասարակական, եկեղեցական գործիչ Վարդան Արևելցին ծնվել է 1198 թ., Գանձակում, մահացել 1271 թ., Խոր Վիրապում:

Հայ մատենագրության մեջ Վարդան Արևելցին հայտնի է նաև բազմաթիվ այլ անուններով, ինչպես՝ Վարդան Գանձակեցի, Վարդան Կիլիկեցի, Վարդան Մեծ, Վարդան Վարդապետ, Վարդան Պատմիչ, Աղվանից Վարդան և այլն: Բացի այդ, Վարդան Արևելցին իր ապրած կամ մերձակա ժամանակաշրջանում ունեցել է մի քանի անվանակիցներ, ինչպես՝ Վարդան Հաղպատեցի, Վարդան Այգեկցի, Վարդան Բարձրբերդցի, Վարդան Վանական և այլք, որի հետևանքով ձեռագրերում կամ չփոթվել են նրանց աշխատությունները, կամ էլ ասվել է ընդհանուր ձևով՝ «Վարդանայ վարդապետի արարեալ»: Որոշ ուսումնասիրողներ էլ նրան չփոթել են Կիլիկյան Հայաստանի մշակութային ու եկեղեցական գործիչ Վարդան Բարձրբերդցու հետ, և Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկը հրատարակել նրա անունով[1]: Մինչդեռ մասնագետների կարծիքով Վարդան Բարձրբերդցին ծնված պետք է լինի Կիլիկիայի Բարձրաբերդ ավանում, հավանաբար 13-րդ դարի երկրորդ քառորդում: Նա կրթություն ստացել է Կիլիկիայում և իր կյանքը հիմնականում անցկացրել այնտեղ[2]:

Վարդան Արևելցին մեծ ճանաչման է արժանացել դեռևս իր կենդանության ժամանակ և ժամանակակիցների կողմից վաստակել «անյաղթ հռետոր», «իմաստուն», «քաջաբան մեկնիչ», «հոգիապայծառ», «աշխարհալուր և տիեզերելոյս քարոզիչ», «արդիւնական», «եռամեծ», «սուրբ», «հոչակա-

[1] Տե՛ս Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծ. Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:

[2] Փ. Անթաստան, Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, էջ 32:

վոր և մեծիմաստ», «նոր լուսաւորիչ» և այլ պատվանունները:

Վարդան Արևելցու մասին առաջինը արտահայտվել է նրա աշակերտակից ու ընկեր Կիրակոս Գանձակեցին, որը նրան անվանել է «հանճարեղ ու իմաստուն»[3]:

Վարդան Արևելցու կյանքին, մատենագրական, հասարակական ու եկեղեցական գործունեությանն անդրադարձել են շատ հայագետներ, որոնցից առանձնապես հիշատակության են արժանի Հ. Ոսկյանը, Գ. Հովսեփյանը, Ղազար Ջահկեցին, Մ. Ջամչյանը, Մ. Էմինը, Ք. Պատկանյանը, Գ. Զարբհանալյանը, Ղ. Ալիշանը, Ն. Մառը, Մ. Օրմանյանը, Հ. Աճառյանը, Ն. Ակինյանը, Հ. Անասյանը, Լ. Խաչիկյանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրն անդրադարձել է Վարդան Արևելցու այս կամ այն ստեղծագործությանը կամ նրա գործունեության այս կամ այն կողմին: 1980-ական թթ. Արևելցու կյանքն ու գործունեությունը քննության հատուկ առարկա է դարձրել Փ. Անթապյանը, որը նրան նվիրել է երկու ծանրակշիռ հատորներ[4]: Դրանցից առաջինում հեղինակը տալիս է Վարդան Արևելցու երկերի պատմաբանասիրական, աղբյուրագիտական մանրամասն քննությունը, թարգմանական աշխատանքների վերլուծությունը, վեր հանում նրա մատենագրական և հասարակական գործունեությունը, իսկ երկրորդ գրքում կատարում է Արևելցու քաղաքական, հասարակական, պատմագիտական, աշխարհագրական, քերականագիտական, բարոյագիտական, լեզվագիտական, մշակութային գործունեության վերլուծությունը:

Բանասիրության մեջ վեճեր են գնում Արևելցու ծննդյան տարեթվի վերաբերյալ. այն տատանվում է 1198-1210 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Ժամանակակից ուսումնասիրողների կարծիքով՝ Վարդան Արևելցին պետք է ծնված լինի 1197-1200 թթ. ոչ ուշ[5]:

Վերջնականապես ճշգրտված չէ նաև նրա ծննդավայրը: Հետազոտողների մեծ մասը այն համարում է Գանձակը, բայց

---

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 294:

[4] Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, գիրք Բ, Երևան, 1989:

[5] Տե՛ս Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 34:

ոմանք էլ առարկում են դրա դեմ: Օրինակ՝ Փ. Անթապյանը գտնում է, որ նա պետք է ծնված լինի ոչ թե Գանձակում, այլ Գանձակի մերձակա գավառներից մեկում, թերևս Փառիսոսում, Գարդմանում կամ էլ դրանց առընթեր մեկ այլ գավառում:

Վարդան Արևելցին իր նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում: Այնուհետև նա ուսումը շարունակել է Նոր Գետիկի վանքում՝ աշակերտելով Մխիթար Գոշին: Դրանից հետո սովորել է Տավուշի վանքում, որտեղ նրա ուսուցիչը եղել է Հովհաննես Վանականը: Այդտեղ նա հմտացել է մատենագրության, քերականագիտության, աստվածաբանության մեջ և սովորել ու տիրապետել է մի քանի լեզուների՝ երրայերենին, ասորերենին, հունարենին, լատիներենին, պարսկերենին: Ուսումը ավարտելով նա ձեռնադրվում է որպես վարդապետ:

Երկու անգամ (1241-1246 և 1247 կամ 1248-1251 թթ.) Արևելցին եղել է Կիլիկիայում: 1239 թ. նա այցելում է Երուսաղեմ, իսկ վերադարձին հանգրվանում Կիլիկիայում՝ այնտեղ մնալով հինգ տարի: 1243 թ. մասնակցում է Սսի եկեղեցական ժողովին, որում ընդունված եկեղեցական կանոնները բերում է Արևելյան Հայաստան:

Կիլիկիա կատարած երկրորդ այցի ժամանակ Հայոց կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու համագործակցությամբ նա գրում է «Թուղթ ընդհանրական»-ը՝ ուղղված Արևելյան Հայաստանի բնակչությանը: Նա մասնակցում է նաև Սսի եկեղեցական ժողովի կանոնների մշակմանը:

Արևելյան Հայաստան վերադառնալուց հետո Վարդան Արևելցին կազմակերպում և անցկացնում է Հաղպատի ու Ջավախքի եկեղեցական ժողովները, հիմնադրում Սաղմոսավանքի, Թեղենյաց մենաստանի, Աղջոց Ս. Ստեփանոս ու Խորակերտի վանքերի դպրոցները և դասավանդում է Հաղպատի վանքի դպրոցում:

1255 թ. Արևելցին հիմնադրում է Խոր Վիրապի վարդապետարանը (դպրոցը) և դասավանդում այդտեղ: Այդ դպրոցում նրան աշակերտել են հայ մշակույթի խոշոր ներկայացուցիչներ Գևորգ Սկևռացին, Հովհաննես Երզնկացին (Պլուզը), Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Գրիգոր Բջնեցին և ուրիշներ:

1265 թ. Արևելցին լինում է Թավրիզում և հյուրընկալվում Հուլավու դանի մոտ:

Բանասիրության մեջ միասնական կարծիք չկա նաև Վարդան Արևելցու մահվան թվականի վերաբերյալ. առաջարկվել են մի քանի թվականներ՝ 1265, 1269, 1270, 1271: Գիտական գրականության մեջ վերջնականապես ընդունվել է վերջինը՝ 1271 թ.: Տարակարծություններ կան նաև նրա թաղման վայրի վերաբերյալ, բայց ուսումնասիրողներից շատերը գտնում են, որ նա պետք է թաղված լինի Խոր Վիրապում[6]:

Վարդան Արևելցին թողել է ստեղծագործական բազմաժանր ու հարուստ ժառանգություն, ավելի քան 120 աշխատություն: Նա կատարել է մեկնություններ ու թարգմանություններ, գրել «Լուծմունք Ս. Գրոցը» («Ժղլանք»), քերականական աշխատություններ, «Աշխարհացույցը», շարականներ, խրատներ, ճառեր, պատմագիտական աշխատություններ, խմբագրել տարբեր բնույթի աշխատանքներ և այլն: Բայց նրա ստեղծագործությունների գլուխգործոցը և հայ միջնադարյան պատմագրության նշանակալից երկերից մեկը «Հաւաքումն պատմութեան» («Տիեզերական պատմութիւն») երկասիրությունն է, որն ունի պատմաճանաչողական, աղբյուրագիտական (երբեմն՝ անփոխարինելի) արժեք: Այդ երկը համընդհանուր պատմություն շարադրելու նոր փորձ էր, որն սկսվում է արարչագործությունից և հասնում մինչև Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցու մահը (1267 թ.):

Մեր պատմիչներից շատերը (օրինակ՝ Մ. Խորենացին, Ղ. Փարպեցին, Եղիշեն և այլք) իրենց պատմությունները գրել են որևէ պատվիրատուի խնդրանքով, իսկ Վարդան Արևելցին պատվիրատու չի ունեցել: Բացի դրանից, նա իր պատմությունը չի նվիրել որևէ իշխանական տան կամ նշանավոր տոհմի, բայցևայնպես երկից բացահայտորեն երևում է նրա համակրանքը Բագրատունիների և Զաքարյանների նկատմամբ:

Վ. Արևելցին իր պատմությունը գրել է կյանքի վերջին տասը տարիների ընթացքում, պարբերաբար, հատկապես դասավանդման տարիներին: Նշեցինք, որ նա իր աշխատանքն ավարտել է 1267 թ., բայց մինչ այդ, այն է՝ 1265 թ. նրա երկը գողացվել է և մեկուկես տարի անց վաճառվել Տփղիսում: Գիրքը գտել է հեղինակի մերձավորներից մեկը՝ Մելերը, և վերադարձրել տիրոջը: Այդ մասին գրում է ինքը՝ Վարդան Արևելցին, իր պատմության մեջ. «Ցաւուրս յայս ի մեղաց իմոց անկաւ գրքունկս ի ձեռս հարամեաց, տղայօք մեր, և յողորմութենէն Յիսուսի ապրեցան տղայքն առ ժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս ի Տփխիս ի վաճառ բերեալ և գնեալ ի տանէ եղբօր մերոյ միոյ Մելեր կոչեցելոյ: Վասն որոյ ողորմութեան Տեառն փառք ի սուրբս ամենայն և յարարածս, և գնողին զսա՝ զթութիւն ի Քրիստոսէ»[7]:

Շատ ուսումնասիրողներ գտնում են, որ Վարդան Արևելցին իր պատմությունը գրել է Կայենաբերդի Ս. Անդրեի, Հաղպատի և Խոր Վիրապի վանքերում:

Արդեն նշվեց, որ Արևելցու երկասիրությունը համընդհանուր կամ, ինչպես հնում էին կոչում, տիեզերական պատմություն է: Մինչև իր պատմությունը գրելը նա արդեն ծանոթ էր նմանատիպ աշխատությունների: Դրանցից էին Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկի) «Տիեզերական պատմութիւնը», Մատթեոս Ուռհայեցու և Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն»-ները: Վերջինիս թարգմանությունն իրականացրել է ինքը՝ Վարդան Արևելցին: Հետևաբար ճիշտ են այն հետազոտողները, ի թիվս նրանց և Փ. Անթապյանը[8], որոնք կարծում են, որ Միխայիլ Ասորու «Ժամանակագրության» թարգմանության ժամանակ էլ Արևելցին հղացել է նման աշխատություն գրելու գաղափարը:

Վարդան Արևելցին իր պատմությունը գրելիս օգտվել է բազմազան ու բազմաթիվ գրքերից և դրանցից կատարել քաղվածքներ: Այստեղ բավարարվենք միայն գլխավոր աղբյուրները թվարկելով, այսպես՝ Աստվածաշունչ, Եվսեբիոս Կեսարացի, Կորյուն, Մովսես Խորենացի, Մատթեոս Ուռհայեցի, Մխիթար Անեցի, Վանական Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ: Բացի այդ, նա օգտագործել է նաև վիմական արձանագրություններ, դիվանագիտական փաստաթղթեր

---

[6] Տե՛ս Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 43, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 312:

[7] Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 161:

[8] Փ. Անթապյան, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 62:

թեր, ժողովրդական պատումներ, առասպելներ, զրույցներ, դեպքերի ժամանակակիցներից լսած տեղեկություններ:

Բայց պետք է նշել նաև այն, որ հիշյալ աղբյուրներից քաղած նյութի նկատմամբ միշտ չէ, որ նա հանդես է բերել քննադատական մոտեցում, ինչպես վարվել են, օրինակ, Մ. Խորենացին, Ղ. Փարպեցին, Ստ. Օրբելյանը և ուրիշներ իրենց պատմությունները գրելիս:

Վարդան Արևելցին երբեմն, հատկապես իր պատմության սկզբում, խախտել է նկարագրվող դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը: Այնուամենայնիվ, նրա պատմությունը շատ կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև անդրկովկասյան ժողովուրդների, **եբրայեցիների, հրեաների, հույների, լատինացիների, պարսիկների, արաբների, սելջուկների, մոնղոլների, խաչակիրների, եգիպտական մամլուքների** և այլ ժողովուրդների պատմության վերաբերյալ: Այն արժեքավոր տեղեկություններ, պատմական, փաստագրական տվյալներ է պարունակում նաև հայ-վրացական հարաբերությունների, Զաքարյանների, Բագրատունիների, նախարարական այլ տների, տարբեր ամիրայությունների, երկրի ներքին, սոցիալ-տնտեսական դրության, իրավական վիճակի, ազատագրական պայքարի, մշակութային, եկեղեցական ու հոգևոր կյանքի վերաբերյալ:

Արևելցին նոր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի Փառիսոս նահանգում հաստատված Շադդադյան ամիրայության քաղաքական, ռազմական ու տնտեսական կյանքի մասին: Եվ նկատի ունենալով, որ այդ տեղեկությունները միահյուսված են տվյալ գավառում ապրող հայության պատմության հետ, դրանց արժեքը է՛լ ավելի է բարձրանում:

Պակաս կարևոր չեն Վարդան Արևելցու հաղորդած տեղեկությունները Անիի պատմության վերաբերյալ:

Չնայած շատ տվյալների հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու, Սմբատ Սպարապետի, Միխայիլ Ասորու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու և այլոց երկերում, բայց Արևելցու հաղորդած տեղեկություններն ավելի հարուստ են:

Նրա պատմության միջոցով շատ բան կարելի է իմանալ վրաց թագավորներ Դավիթ Շինարարի, Գեորգի Գ-ի, Թամար

թագուհու և Զաքարյան եղբայրների մասին:

Եթե առանձնացնելու լինենք Արևելցու պատմության հանգուցային մասերը, ապա կարող ենք նշել հետևյալ հիմնական բաժինները՝ արարչագործության պատմությունը, հայկական միացյալ պետականության կազմավորումը, Արտաշեսյան դինաստիայի հիմնադրումը (2-րդ դարի սկիզբ մ. թ. ա.), քրիստոնեության ընդունումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, հայկական թագավորության կորուստը (5-րդ դար), հայկական պետականության վերականգնումը Բագրատունիների կողմից (9-րդ դար), սելջուկյան արշավանքները (10-11-րդ դդ.), Հայաստանի, այդ թվում նաև Կիլիկյան հայկական թագավորության պատմությունը (11-13-րդ դդ.):

Մանրթանալով Արևելցու «Տիեզերական պատմության» բովանդակությանը՝ ընդհանուր գծերով կարելի է նշել հետևյալը: Արարչագործության նկարագրությունը քաղաքրված է Աստվածաշնչից, Եվսեբիոս Կեսարացուց, Մովսես Խորենացուց, Միխայիլ Ասորուց, եկեղեցական հայրերի աշխատություններից և այլ աղբյուրներից: Ի դեպ, աշխատության այդ մասում վերաշարադրված է վերոհիշյալ երկերի նյութը: Աշխատության մեծ մասը կազմում է մինչև 12-րդ դարն ընկած ժամանակաշրջանի պատմությունը: Դրան հաջորդում է Արևելցու ապրած ժամանակաշրջանի պատմությունը, որն աշխատության ամենահիմնական ու արժեքավոր մասն է (13-րդ դ.): Գրքի այդ բաժինը պատմագրության մեջ բարձր գնահատականի է արժանացել այն պատճառով, որ հեղինակը մեծ մասամբ ականջալուր ու ականատես է եղել նկարագրվող դեպքերին ու իրադարձություններին: Պատմության այդ բաժինը հավաստի սկզբնաղբյուր է մոնղոլների սոցիալ-քաղաքական կյանքի, նրանց արշավանքների, հարկային քաղաքականության, կենցաղի, սովորույթների և բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ:

«Տիեզերական պատմությունից» իմանում ենք, որ Վարդան Արևելցին մտերմական հարաբերություններ է հաստատել մոնղոլական Հուլավու ղանի և նրա քրիստոնյա տիկնոջ՝ Տողուզ խաթունի հետ ու նրանց միջոցով շահել մոնղոլների բարյացակամությունը հայերի նկատմամբ:

Երբ մահանում է Հուլավուն, նրա այրին՝ մեծ թագուհի Տո-

ղուզ խաթունը, Արևելցուց խորհուրդ է հարցնում, թե Հուլավուի հոգու համար «... պատարագ լինի՞ թէ ոչ»: Իսկ նա պատասխանում է. «... չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն և հարկաց թեթևութիւն առնէք»[9]:

Մոնղոլները մեծ ավերածություններ, թալան ու կոտորած են կատարում ոչ միայն Հայաստանում, այլ նաև Անդրկովկասի այլ երկրներում, մասնավորապես Վրաստանում: Արևելցին իր ապրած ժամանակաշրջանը շատ դիպուկ կերպով բնութագրում է հետևյալ ձևով. «... կրակից ու վշտակից և սգակից եղեալ ի մեղսաբեր և ի ցասմնահար դարուս. և ի ժամանակս ցաւալից և ի կսկծահար՝ զբոլորն յինքն տարեալ և ըստ կարի թեթևացուցեալ, սիրտ և բան և զանձ ծախելով առատաբար և անխնայ»[10]:

Արևելցու պատմությունից փաստական հարուստ տեղեկություններ ենք քաղում Հայաստանի, Վրաստանի և հարևան երկրների ներքին կյանքի, մասնավորապես ավատատիրական (ֆեոդալական) հարաբերությունների մասին:

Պատմիչը, երբ խոսում է հայկական և հռոմեական եկեղեցիների մասին, բոլոր դեպքերում ընդգծում է ոչ միայն հայ եկեղեցու անկախության խնդիրը, այլ նաև նրա հավասարությունը Հռոմի և քրիստոնյա մյուս պետությունների եկեղեցիների հետ: Այդ առթիվ «Տիեզերական պատմութեան» («Հաւաքումն պատմութեան») մեջ կարդում ենք. «... և սուրբ Լուսաւորիչն՝ որ պապն կոչեցաւ ի Հռոմ, հաւասար այնմ որ նստի յաթոռն Պետրոսի առաքելոյն»[11]:

Արևելցին իր պատմության մեջ խոսում է նաև այն ժամանակվա աբխազների դավանանքի մասին:

Նկարագրվող դեպքերի վերաբերյալ չնայած նա ցուցաբերում է քննադատական մոտեցում, բայց միշտ չէ, որ կարողանում է գտնել քաղաքական, սոցիալական և հասարակական հարաբերությունների ու երևույթների հիմքում ընկած բուն, էական պատճառները: Հաճախ դրանց հիմքում դնում է նախախնամության գործոնը: Ինչ խոսք, այդ հարցում նա այնքան էլ մեղավոր չէ, եթե նկատի ունենանք նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական, կրոնական,

[9] Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 160-161:

[10] Նույն տեղում, էջ 163:

[11] Նույն տեղում, էջ 46:

բարոյական և այլ հարաբերությունների բարդությունն ու խճճվածությունը: Ընդհակառակը, Արևելցին նշված հարցում իր ժամանակի գործիչների համեմատությամբ շատ ավելի առաջադիմական է, և նրա արտահայտած բազմաթիվ մտքեր հաստատվել են հետագա դարերում:

Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութիւնը», ինչպես նաև մյուս աշխատություններն ունեն բազմաթիվ ընդօրինակություններ, և աշխարհի տարբեր ձեռագրատներում (Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Վատիկանի, Դյուբինգենի, Փարիզի և այլն) պահվում են դրանց ձեռագրերը: Իհարկե, ձեռագրերի մեծ մասը հանգրվանել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[12]:

Արևելցու «Տիեզերական պատմութիւնը» ամբողջությամբ հրատարակվել է երկու անգամ: Առաջին անգամ երկու ձեռագրերի հիման վրա հրատարակել է Մկրտիչ Էմինը 1861 թ., Մոսկվայում: Գիրքը խորագրված է «Պատմութիւն տիեզերական» և վերագրված է մեկ այլ Վարդանի՝ վերոնշյալ Վարդան Բարձրբերդցուն:

Սույն գրքի երկրորդ ամբողջական հրատարակությունն իրականացվել է Վենետիկում, 1862 թ.: Գրքի վրա թեև չի նշված հրատարակչի անունը, բայց պատմաբաններն ու բանասերներն ապացուցել են, որ հրատարակիչը բազմատաղանդ հայագետ, գրող, բանաստեղծ, գիտնական Ղևոնդ Ալիշանն է: Այդ հրատարակության հիմքում ընկած է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում պահվող թիվ 516 ձեռագիրը, որն ընդօրինակվել է հեղինակի մահվանից ոչ շատ ուշ, այն է՝ 1307 թ.: Հրատարակությանը կցած ընդարձակ առաջաբանում, որը գրել է Ղևոնդ Ալիշանը, պարզաբանվում է Վարդան Արևելցու և Վարդան Բարձրբերդցու անունների շփոթությունը: Առաջաբանում կարդում ենք. «... Եւ ոչ միայն յիրս և ի գիրս, այլ ինձ թուի և ի հայրենեացն կոչումն սխալեալ, որոց Բարձրբերդցի զսա ասեն. քանզի ոչ ոք ի նախնեաց անտի կոչէ զնա այսպէս, այլ մանաւանդ բանք նոցին

[12] Այսպես, օրինակ՝ «Հաւաքումն պատմութեան»՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից նկարագրվել ու ձեռագրացուցակներում արտացոլվել են թիվ 1482, 1487, 3069, 3074, 3078, 6593, 6714, 8890 ձեռագրերը:

ցուցանեն յարևելից Մեծաց Հայոց լինել զսա, և ամս ինչ պան-
դրխտութեամբ կեցեալ ի Հռոմկլայ և ոչ ի Բարձրբերդ. զայլ
ոմն Վարդան Բարձրբերդցի ցուցանելով ժամանակակից նո-
րին կրտսեր, որպէս յիշէ մատենագիր ոմն յամի 1286, որ է իբր
վեցտասան ամաւ յետոյ քան զմահ մեծիս այսորիկ Վարդա-
նայ: Իսկ զմիւսն զայն զկրտսեր՝ Երկրորդ Վարդան կոչէ Ղա-
զար Ջահկեցի կաթողիկոս, և նմա ընծայէ **զՀամառօտ մեկնու-
թիւն չորից աւետարանաց, զԱռական, զՀամառօտ աշխարհ-
հագրութիւն, զՄեկնութիւն քերականի** (ընդգծումները հե-
ղինակինն են - թարգմանիչ). յորոց յետինքն կարծին երրորդի
ուրումն կրտսերագունի Վարդանայ գործք»[13]: Ալիշանը գրքի առաջաբանում այնուհետև ցույց է տալիս, որ այդ երկասիրության հեղինակը Վանական վարդապետի աշակերտ Վարդան վարդապետը կամ Արևելցին պետք է լինի, և գիրքն էլ հրատարակում է նրա անունով:

Վարդան Արևելցու պատմությունը թարգմանվել է նաև օտար մի քանի լեզուներով: Այն ունի ամբողջական և մի քանի հատվածական թարգմանություններ: Ռուսական ամբողջական առաջին թարգմանությունը կրկին իրականացրել է Մկրտիչ Էմինը 1861 թ., Մոսկվայում: Այդ հրատարակությանը նա կցել է ընդարձակ առաջաբան և հարուստ ծանոթագրություններ: Երկի մյուս թարգմանությունները ոչ ամբողջական, այսինքն՝ հատվածական թարգմանություններ են, որոնք կատարել են հետևյալ հայագետները. Քերովբե Պատկանյանը 1874 թ. Պետերբուրգում ռուսերեն թարգմանել ու հրատարակել է այն հատվածները, որոնք վերաբերում են մոնղոլների պատմությանը: Արևելցու երկից մի քանի հատվածներ ֆրանսերեն են թարգմանել հայագետներ Մ. Բրոսսեն (1839 թ.), Է. Դյուլորիեն (1860 թ.), Լ. Մարիեսը, Մյուլդերմանը (1927 թ.):

Ինչպես կարելի է եզրակացնել սույն պատմության համառոտ վերլուծությունից, Վարդան Արևելցին հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից մեկն է: Ճիշտ է, նա չի հավասարվում մեր մյուս մեծերին՝ Մովսես Խորենացուն, Ղազար Փարպեցուն, Եղիշեին և մյուսներին, բայցևայնպես դասվում է առաջավոր պատմիչների շարքին: Բացի «Տիեզերական պատմութիւնից», Արևելցին պատմական, փաստական հարուստ նյութ է զետեղել նաև Միխայիլ Ասորու «Ժամանակագրութիւն» երկի թարգմանությանը կցած իր «Ցիշատակարանում»[14], գրած ներբողներում, ճառերում, խրատներում և այլ գործերում:

Հիշատակարանում նա տալիս է նաև **թաթար** (մոնղոլ) անվան ստուգաբանությունը, որը չնայած պարզունակ է թվում, բայց ինքնին հետաքրքիր է ու ինքնատիպ: Այսպես՝ «... զի թերևս **հար** և **տար**, որ է տաթար... Քանզի հարին անյազապէս և տարան աներկիւղաբար զորդիսն Սիօնի ի ստրկութիւն գերութեան»[15]:

Վարդան Արևելցին գրել է և՛ գրաբարով, և՛ միջին հայերենով՝ բոլոր դեպքերում աշխատելով գրել ու դասավանդել ժողովրդին հասկանալի լեզվով: Նա իր գործերի մի մասը շարադրել է զուտ դասական գրաբարով. ինչպես՝ «Հաւաքումն պատմութեանը»-ը («Տիեզերական պատմութիւնը»), մեկնությունները, ներբողները, ճառերը, շարականները, իսկ որոշ գործեր էլ («Ժղլանքը», զրույցները և այլն)՝ միջին հայերենով: Նրա լեզուն հարուստ է ու մշակված՝ շաղախված միջին հայերենի և ժողովրդախոսակցական լեզվի տարրերով:

Վարդան Արևելցու երկասիրության սույն թարգմանության համար հիմք է ծառայել վենետիկյան 1862 թ. հրատարակությունը: Թարգմանության ընթացքում միաժամանակ այն համեմատել ենք մոսկովյան 1861 թ. հրատարակության հետ և տարընթերցվածները ծանոթագրել տողատակին, աստղանիշերով:

Չնայած նրա ապրած ժամանակաշրջանում գրաբարը կրել էր զգալի փոփոխություններ, բայց այն դեռևս շարունակում էր գործել որպես գրական լեզու, հատկապես պատմագրության բնագավառում: Ինչպես արդեն նշվեց, Արևելցու պատմությունը գրված է կանոնավոր գրաբարով: Այստեղ, իհարկե, խոսքը վերաբերում է երկի հեղինակային լեզվին, իսկ այն

---

[13] **Վարդան Արևելցի**, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ Ա-Բ:

[14] Տե՛ս **Միխայիլ Ասորի**, Ժամանակագրութիւն, Վենետիկ, 1870, էջ 608-622:

[15] Նույն տեղում, էջ 614:

հատվածները, որոնք նա քաղել է առանձին հեղինակներից, գրեթե վերաշարադրվել են նույնությամբ: Արևելցին իր երկում օգտագործել է բայական տարբեր ժամանակաձևեր, երբեմն նույն պարբերության, նույնիսկ նույն նախադասության մեջ գործածել է 3-4 ժամանակաձևեր: Թարգմանելիս երբեմն դրանք բերել ենք ընդհանուր տեսքի՝ հիմնականում թարգմանելով իր իսկ գործածած պատմական ներկա ժամանակաձևով: Իսկ 13-րդ դարից սկսած նրա օգտագործած ժամանակաձևերը թողել ենք անփոփոխ՝ նկատի ունենալով, որ նա եղել է այդ ժամանակաշրջանի դեպքերի մասնակիցն ու ականատեսը:

Այսպիսով, Վարդան Արևելցին բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն է եղել, հայ մատենագրության խոշոր ներկայացուցիչներից մեկը: Նա մեծ է որպես պատմիչ, աշխարհագրագետ, գրող, մանկավարժ, հասարակական-քաղաքական ու կրոնական գործիչ, տոմարագետ, տիեզերագետ, իմաստասեր, քերականագետ, թարգմանիչ, խմբագիր, ճառագրագետ և այլն: Եվ իզուր չէ, որ ժամանակակիցների կողմից վաստակել է բազմաթիվ պատվանուններ ու իր հաստատուն տեղը գրավել հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչների շարքում:

ԱՌԱՋԱԲԱՆ*

Հայրենի և օտարազգի բանասերներից շատերը թախանձում են տպագրել մեր պատմագիրների գրքերը հերթականությամբ՝ մի պահ անտեսելով հայոց լեզվի ոճական նրբությունն ու առանձնահատկությունը: Ուշադրություն դարձնելով անցքերի ու դեպքերի ճանաչմանը, մանավանդ միջին դարեր կոչվող ժամանակաշրջանում, ուր առավել շատ են դեզերում այժմյան պատմաբաններն ու հնագետները, ձեռնարկեցինք նախ հրատարակել այդ ցանկալիներից չտպագրվածը[1]: Վարդան պատմիչի գործը, որը մեծ համբավ ու հռչակ ունի մեր ազգի մեջ՝ գերազանցելով ժամանակակիցներին և անհասանելի մնալով հետնորդների համար: Այդ պատճառով մյուս բոլոր մերձավորների ու հոմանունների մեջ Մեծ կոչվող այս Վարդան վարդապետն էր, որ բարձրապատիվ մակդիրներով է մեծարվում բոլոր հիշատակագիրների կողմից, ինչպես՝ **ամենագով, արդյունական, պանծալի, հոգեպապայծառ, մեծիմաստ, իմաստախոհ, եռամեծ, գիտնական, տրամաբան, աստվածաբան, մեծ ճարտասան, աշխարհալուր, աշխարհաքարոզ, տիեզերալույս, սուրբ** (ընդգծումը իրենն է - Գ. Թ.) և այլն: Բայց այս բոլոր կոչումները բավական չեղան անխառն պահելու նրա գործերն ու գրվածքները ուրիշների հետ, և բոլորի պիտանի ու ոչ պիտանի վաստակն այստեղ միայն սրա միջոցով հրատարակվեց: Եվ [չփոթություն կա][**] ոչ միայն իրադարձությունների մեջ, այլև, ինչպես ինձ թվում է, մեր նախնիները չփոթել են նաև անունը՝ նրան անվանելով Բարձր-

* Առաջաբանը գրված է գրաբարով Ղ. Ալիշանի կողմից:

[1] Մինչ մենք պատրաստում էինք տպագրելու այս գործը, լսեցինք, որ Մոսկվա քաղաքում այն արդեն տպագրվել է, բայց չհանդիպեցինք այդ մատյանին [այս և հետագա ծանոթագրությունները, որոնք տրված են արաբական թվանշաններով, հրատարակչինն են - թարգմանիչ]:

** Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերն ու նախադասությունները և՛ առաջաբանում, և՛ պատմության մեջ թարգմանչինն են, իսկ կլոր փակագծերի մեջ առնվածները առաջաբանում հրատարակչինն են, պատմության մեջ՝ հեղինակինը:

բերդցի, որովհետև նրա հաջորդներից ոչ ոք նրան այդպես չի կոչել: Եվ նրանց գործերը ցույց են տալիս, որ նա պետք է եղած լինի Մեծ Հայքի արևելյան կողմերից և ինչ-որ տարիներ ապրած լինի Հռոմկլայում և ոչ թե Բարձրբերդում, մեկ ուրիշ Վարդան Բարձրբերդցու էլ ցույց տալով նրան ժամանակակից ու կրտսեր, ինչպես որ հիշում է ոմն մատենագիր 1286 թ., որը մոտավորապես տասնվեց տարով ուշ է, քան այս մեծն Վարդանի մահը: Իսկ մյուսին՝ այն կրտսերին, կաթողիկոս Ղազար Ջահկեցին Երկրորդ Վարդան է կոչում ու նրան վերագրում **չորս ավետարանների համառոտ մեկնությունը, Առակները, Համառոտ աշխարհագրությունը, Քերականի մեկնությունը,** որոնցից վերջինները համարվում են երրորդ՝ ավելի կրտսեր ոմն Վարդանի գործեր:

Արդ՝ մեր այս պատմագիրը ծնունդով պետք է լինի Հայաստանի արևելյան կողմերից, Աղվանքին սահմանակից շրջանից, որտեղ և աշակերտել է Վանական վարդապետին ու պատվով ավելի բարձր ճանաչվել այդ հռչակավոր ուսուցչի երեք աշակերտների մեջ (նրանցից մեկը Կիրակոս Գանձակեցին էր, մյուսը՝ Թադեի վանքի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոսը) և նրա կենդանության ժամանակ հռչակվել իր զգոնությամբ ու հմտությամբ: Դրա շնորհիվ նա երբ Երուսաղեմ ուխտագնացության մեկնեց և եղավ Կիլիկիայում, ոչ միայն բազում մեծարանքներով ընդունվեց Հեթում Թագավորի ու Կոստանդին կաթողիկոսի կողմից, այլ նաև հինգ տարուց ավելի հյուրընկալվեց նրանց մոտ՝ հայրապետանոցի կարևոր գործերին օժանդակելու համար: Այդ մասին մեծ գովեստով խոստովանում է ինքը՝ կաթողիկոսը, իր շրջաբերական թղթի մեջ, որն ուղարկեց արևելք նույն Վարդանի միջոցով: «Իմ փոխարեն ձեզ մոտ ուղարկեցի արգասավոր վարդապետ Վարդանին, որին մեզ տվեց Աստծու նախախնամությունը՝ ձեր կողմերից գցելով ինձ մոտ: Հինգ տարի առաջ, երբ նրան տեսա, ճանաչելով ըստ կարելվույն, Աստծու միջնորդությամբ նրան կապեցի ինձ հետ իր կյանքով ու մահով, խիստ անհրաժեշտությամբ ու սիրով միացնելով ինձ հետ հավիտյանս... որը պահպանում է իմ սիրտն ու խոսքը ամեն ինչում»: Նա թղթի հետ արևելք տարավ և Սսի ժողովի կանոնները: Ժողովը գումարվել էր 1243 թ., որին մասնակցում էր նաև ինքը Կիլիկիայի վանահայրերի ու եպիսկոպոսների հետ միասին: Կարծում

եմ՝ նշված թվից ետ գնալով՝ կարելի է հասնել Արևմտյան Հայաստանում նրա հնգամյա բնակության սկզբին, Հեթումի թագավորության ժամանակ, որի խնդրանքով նա արեց մեկնությունն ու լուծմունքը: Այդ մասին գրում է նա ինքը թագավորին. «Հիշի՛ր, որ Թորոսի միջոցով հրամայեցիք յուղարբեր կանանց և պատարագի խորհրդի մասին գրել ձեզ, իսկ հետո դեմքով դեպի անդուլը հրամայեցիք, որ ձեզ համար գրում էինք զրույցներ քերականի մեկնությունից: Եվ ես մեծ սիրով գրեցի ձեզ արարածների լուծմունքը ավետարաններից»,- այսպիսի պարզ ու ռամկական ոճով են գրված լուծմունքներն ու զրույցները [ժղլանք]՝ թվով վաթսունվեց և մեծ համարձակությամբ որպես ծանոթը ծանոթին, կամ դաստիարակը՝ մանուկ արքային, ուր ասված է. «Աստծով մանկահասակ եք, բայց մտքով ու աչքով՝ զորավոր», որպեսզի ի վիճակի լինի ընթերցելու իր պարզ գրածը: Նա աղերսում է, որպեսզի իր հիշատակը մնա Զաբել թագուհու մոտ: «Թող թագուհին պահի, և պետք եղած ժամանակ դուք կվերցնեք նրանից»:

Կաթողիկոսի գրությունն ու ժողովի կանոնները 1246 թ., երբ բերեց արևելք, ստացավ տեղի առաջնորդների հավանության գրությունը, վերադարձավ ու այն բերեց հոգևոր տիրոջ մոտ և մի առ ժամանակ էլ մնաց այնտեղ: Այս անգամ, 1248 թ., թարգմանեց կամ խմբագրեց ասորերենից հայերեն փոխադրածը՝ Միխայել պատրիարքի ընդհանուր պատմությունը ասորի երեց ոմն Իշոխի միջոցով[1]: Կիլիկիայից երկրորդ անգամ վերադառնալուց հետո գալով արևելք՝ նա դադար առավ Կայենի ձորի Անդրեի վանքում և այն ժամանակ կամ դրանից հետո հորինեց իր մատենագրություններից գլխավորները, որոնք այժմ մեր ձեռքի տակ են: Եվ որովհետև մինչ այդ հռչակվել էր նրա անունը, հարկ է կարծել, որ դրանից առաջ նա հրատարակել էր այլ գրքեր ու ճառեր, որոնք կամ մեզ չեն հասել, կամ հասել են ոչ նրա անունով: Վարդանի կարևոր աշխատանքներն են՝ սուրբ գրքի մեկնությունները, առաջին մեկնիչների ժողովածուները, որոնք ժամանակի հնության պատճառով թվում է, թե Ա. Դանիելի համառոտ մեկնու-

[1] Թարգմանության հիշատակարանում, որ մեր ձեռքի տակ է, Վարդանի անունը չկա, բայց այդ մասին վկայում են Ղազար կաթողիկոսը և Միքայելին հետևող շատ հեղինակներ:

թյունն է՝ [արված] կրոնավոր եղբայրների խնդրանքով. Բ. Սաղմոսների մեկնությունը, ավելի համառոտ, քան Լամբրոնացունը՝ [արված] Հաղպատի առաջնորդ տեր Հովհաննեսի խնդրանքով, որը ոմանց կարծիքով Համազասպի նախորդն էր, իսկ իմ կարծիքով՝ նրա հաջորդը, որի անունը նույնպես Հովհաննես էր. Գ. Մովսեսի Հնգամատյանի մեկնությունը՝ [արված] տեր Համազասպի խնդրանքով. այն ավարտել է 1261 թ. Դ. Երգ երգոցի մեկնությունը՝ [արված] իր աշակերտակից Կիրակոս վարդապետ պատմիչի խնդրանքով, որը գրված է 1265 թ., իր մահվանից յոթ տարի առաջ, որի վերջաբանում մտերիմ խանդաղատանքով խոսում է իր ուսումնակցի ու ծերակցի հետ. «Իսկ դու՝ մորենիների ու աղուտ, անբուսաբեր վայրերի մշակդ, մեզ համար անուշ ու հարաժամ ճաշակդ և հույսդ Աստծու նկատմամբ, Կիրակոս վարդապետդ, որ հարկադրական հրամանով և մահվան գուժով քեզ պետք է ասել մեր մերձավորը, դու մեզ շղթաների արժանի ոտքերով մտցրիր գինու, յուղի, խնձորի, նռան տունը՝ նայելու, լսելու, խոսելու, հոտոտելու և շոշափելու համար կյանքն ու անմահությունը»: Սրանց վրա, որոնք ծանոթ են մեզ և շատերին, ինչ-որ մեկն ավելացնում է նաև Եսայի ու Երեմիա մարգարեների, դատավորների ու Հեսուի մեկնությունները, որոնք այլ տեղերում մենք չենք լսել Վարդանի անունով: Քո գրվածները մեզ համար կրկնակի պատվական են. նախ՝ մեր նախնի հայրերի մասին, որոնցից ոմանց գործերը այժմ ամբողջությամբ չունենք և կցկտուր տեղեկություններ սրա մեջ ենք գտնում, դրանց թվում նաև մեր սիրելի Եղիշեի՝ Մովսեսի գրքերի մեկնությունները, որոնցում դրսևորվում է հավաքողի մեծ զգոնությունն ու վարպետությունը, գրքերի առաջաբաններն ու վերջաբանները, ինչպես նաև պատմագրությունը, որոնք ընթերցման համար խոհական են, գովելի ու ախորժելի և որոնք հնարավորություն են ընձեռում խորամուխ լինելու հեղինակի հանճարեղության ու արձակի գրության ոճի մեջ, քան սեղմ ու համառոտ մեկնողական գործերում, ինչպիսիք են վերոհիշյալները, **Տերունական աղոթքների մեկնությունը, Վարք Հարանցի Հավաքածուն** և այլն: Իսկ ճառերի ու խրատական գործերի, որոնցով հնարավոր է լիովին դատել նրա մասին, հարազատությունը երկբայական է, որի պատճառով դրանք անտեսում ենք այստեղ, բացի Լուսավորչի ներբողից,

որը գրված է վերոնշյալ տեր Համազասպի խնդրանքով, որին նա ինքն էլ չափավոր ճաշակով գովասանքի է արժանացնում: Այդ նույն բանը ավելի մեծ առավելությամբ են հաստատում և նրա շարականները, ինչպես՝ **Որ նախխմացն**, առաքյալների, թարգմանիչների և Ս. Սարգսի[1] շարականը, ձայնի առաջին կողմից (Ա4) և չորսը, երգով ու եղանակով դանդաղագնացները՝ թերևս երգողի հանդարտ բարքը ցույց տալու համար: Ոմանք նրան են վերագրում նաև «Անթառամ ծաղիկը» պերճաբան շարականի երեք տունը, իսկ ուրիշները՝ նաև դրա մեկնությունը: Այդ պատճառով Առաքել Սյունեցին շարականի չափաբանված անվանակարգության հորինողին կոչում է՝

Սուրբն Վարդան յուսոյ տեղին:

Դրանք Վարդանի հավաստի երկասիրություններն են, իսկ Կիլիկիայից վերադառնալուց հետո նրա գործերն ու կյանքի անցքերը բավականաչափ չեն նշված: 1255 թ. գովասանքով է հիշատակվում մեծ վարդապետ և աստվածազգի այրն Վարդան նախ՝ Վիրապի վանքում որպես ուսուցչապետ, ապա Սաղմոսավանքում և Թեղենիսում, բայց հաստատապես չենք կարող ասել, թե նա հենց ինքն է: Նույնպես և այն Վարդան վարդապետը, որ Դաղիվանքի առաջնորդ, տեր Գրիգորիսի հետ գնաց հերքելու և հանդիմանելու դիվապատիր մոլորեցուցիչ Դավթին, մեր այս Վարդանը չէ, ինչպես որ կարծում է նոր պատմագիր Զամչյանը[2], որովհետև դեպքերի պատմիչ այդ Վարդանին ու Գրիգորիսին անվանում է սիրելի զույգ եղբայրներ [յօժարորդիս]: Կյանքի ցայտուն ու սխրալի դեպքն այն է, որը ինքն է պատմում գրքի վերջում, ինքն էլ վկա է եղել նրա մեծ համբավին, որ նա ուներ յուրայինների և օտար-

[1] Ոմանք Վարդանինը չեն համարում Ամենասուրբ Ս. Սարգսի շարականը՝ նրանում եղած այլ հավաստի եղանակի և վերջին տների պատճառով, որոնցում հիշատակված են Գագ լեռնաբլուրը և այդ կողմերի իշխանը, որին **մեր իշխան է կոչում:** Պատմության մեջ հիշատակված է նաև Վահրամը (էջ 144), որից հայտնի է դառնում, որ երգը հորինվել է այն կողմերում, ինչպես որ Նախխմացը Կիլիկիայում, որում ողբություն է մաղթում մեր թագավորին՝ Հեթումին և մեր կրոնական առաջնորդ, հայրապետ Կոստանդինին:

[2] Պատմություն Հայոց, հ. Գ, էջ 233:

ների մոտ, մինչև Աբբայի արևմուտքի աշխարհակալ Հուլավու դանի պալատը: Վերջինիս կողմից էլ նա հրավիրվեց թագավորների ու ավագ իշխանների հետ, և նա իր իմաստության ու ալևոր հասակի շնորհիվ մյուսներից ավելի համարձակ խոսեց այն ահեղի հետ, լսեց նրա գաղտնիքը և դարձավ նրա խորհրդատուն: Այդ դեպքի հետ կապված բազում կարևոր ու հետաքրքիր իրադարձություններ կան, որոնք պատմության բոլոր մասերի համեմատությամբ հաճելի են համարվում քննելու այն ժամանակվա[1] արևելյան կողմերի դեպքերը: Խանի արքունիքից վերադառնալուց հետո ես կարծում եմ, որ նա հանդիպել է Հարամի ավազակների, և գիրքն ընկել է նրանց ձեռքը, բայց իրենք հաջողությամբ առել են այն[2]: Կյանքի վերջին տարիներին [Վարդանը] հավանաբար ապրել է Հաղպատում, որտեղ էլ Կիրակոսի խնդրանքով գրել է Երգ երգոցի մեկնությունը՝ Հուլավուի մահվան տարում, երկու տարի անց ավարտել է պատմությունը, իսկ չորս տարի անց, այն է՝ Տիրոջ 1271 թ. վախճանվելով՝ իր ամոլակից Կիրակոսի հետ թաղվել է Հաղպատում: Նրա գերեզմանը այնտեղ թաղված հոյակապ այլ մարդկանց հետ համարում եմ իբրև ուխտատեղի ու պատվելի վայր, ինչպես հիշում է Թոմա Վանանդեցին՝

Վարդան մեկնիչին քաջաբան,

քանզի այնտեղ թաղված է նաև մեկ այլ նշանավոր Վարդան վարդապետ, ժամանակով ավելի առաջ. նա, ում խնդրանքով Ներսես Շնորհալին գրեց բարձրացուցիչ ճառի մեկնությունը:

Վարդանի այս պատմագրությունը նրա գրավոր վերջին վաստակն է, որը շատերի կողմից համարվել է նրա գլուխ-

[1] Նրանցից մեկն էլ հմուտ արևելագետ պարոն Էդուարդ Դյուլորիեն է՝ Փարիզի կայսերական մատենադարանի այժմյան ուսուցիչը, որն իրենց լեզվով թարգմանել և հրատարակել է այս դեպքը, ինչպես նաև մեր պատմիչից այլ հատվածներ իր մեկ այլ գրքում: Նույնպես և նրա համերկրացի պարոն Մ. Բրոսսեն՝ վրացական դպրության մասնագետների պարագլուխը, մեր հեղինակից շատ հատվածներ թարգմանել և կցել է իր հռչակավոր «Վրաց պատմության» հավելվածներին: Մեր պատմիչը ծանոթ է և ոչ քիչ այլ արևելագետների՝ սկսած Սեն-Մարտենից և Գաղրմերից:

[2] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան», էջ 161:

գործոցը, թերևս նրա նախահոչակ համբավից է տրվել այդ կարծիքը, քան թե իրեն հատուկ արժանիքներից, որովհետև [այնքան էլ] ախորժելի չէ ոչ լեզվական շարադրանքի գեղեցկությամբ և ոչ էլ մանրապատում ծանոթություններով ու նկարագրություններով: Այն թեև ընդհանրապես չափավոր ոճով է գրված, բայց տեղ-տեղ էլ ոճը դառնում է հասարակ, ինչպես, օրինակ՝ Հուլավուի հետ կապված պատմությունը, որը թերևս այդպես է գրվել իրեն ծանոթ աշխարհիկ իշխաններին հասկանալի լինելու համար: Դարձյալ և ըստ գրքերի քանակի. վեց հազար տարիների պատմությունը կամենալով ամփոփել տասներկու թերթում՝ կրճատում է խոսքերը, իսկ տեղ-տեղ էլ թվարկում լոկ անուններն ու թվերը: Եվ որովհետև այս գրելաոճը պահանջում է ժամանակաշրջանի աթոռների և գավազանների հաջորդականության կարգի աչալուրջ քննություն ու ճշգրտում, այս ամենի մեջ մեր հեղինակը անվրեպ չի գտնվում կամ էլ ծերության պատճառով ի վիճակի չի լինում մանրամասնորեն քննելու պատմիչների հավաստիությունը կամ էլ [կրկնում է] գրքերի առաջին ընդօրինակողների նույն սխալը, որի հետևանքով շատ տեղերում պակասավոր է օտար և հեռավոր թագավորների հաջորդականությունը և սխալ՝ նրանց թագավորության տարիները: Դրանք տեղ-տեղ ծանոթագրեցինք, իսկ մյուսներն անտեսեցինք, որովհետև գտնում ենք, որ այդ հաջորդականությունները հեղինակից չպիտի սովորենք, այլ փնտրողները դրանք կարող են գտնել ժամանակագիրների կողմից պատրաստված և ճշգրտված աշխատանքներում: Բայց ավելի ստույգ են մեր ազգի ու դրացիների [մասին եղած] իրադարձությունների նկարագրությունները, որոնցում համառոտված են շատ կարևոր գիտելիքներ և ուրիշների կողմից չնկատված աննշան դեպքեր, որոնք արդյունք են հեղինակի քննախույզ հմտության և ժամանակի հեղինակների գործերի իմացության, որոնց նա ծանոթ էր և մուտք ու ելք ուներ հռչակավոր Հաղպատի, Սանահնի, Զոլլագետի, Աղվանքի և կաթողիկոսարանի վանքերի գրադարանները, որոնք անսպառ օժանդակություն էին նրա համար: Եվ այդ տեսակետից մենք երախտապարտ ենք Վարդանին, որովհետև նա հակա-նե-հանվանե կամ առանց անունները տալու ծանոթաց-

նում է մեզ կորած շատ պատմագիրների գործերին՝ ներկայացնելով իրենից առաջ եղած գրեթե ավագ բոլոր պատմիչներին, շատ դեպքեր վերցնելով իրենից երկու դար առաջ եղած Սամվելից, Մխիթար Անեցուց, Մատթեոս Ուռհայեցուց, Միխայիլ Ասորուց, Վրաց պատմությունից և ուրիշներից, իսկ իր՝ ԺԳ դարի դեպքերը [նկարագրում է] լսելով ու տեսնելով: Այդքան բազմաթիվ բնագրեր և ուղեցույցներ ունենալով՝ հաճախ առանց ուշադրություն դարձնելու մեծարում է նրանց կարծիքները, մանավանդ որտեղ կան նշանավոր կամ սրբազան անձանց և կրոնական վարդապետության պատվավոր ու փառավոր գործեր: Նա դյուրահավան է լինում հաճելի, պանծալի ու հրաշանշան երևույթների նկատմամբ. այդ բանը կարելի է տեսնել նաև նրա մյուս գրքերում: Նման պատմագրության թվին [են պատկանում] Հռոմի գերագույն գահի հետ ունեցած դաշնակցության ու թղթակցության և Լուսավորչի մասին եղած պատմությունները, վարդապետներից ոմանց տեսիլները[1], որոնց վերաբերյալ հարկ համարեցինք ինչ-որ բան հայտնել կամ ծանոթագրել: Այդ նույն բանը երբեմն ցույց տվինք միայն այս նշանով (!), որտեղ Քաղկեդոնի ժողովի կամ հավատի նյութերն են, որոնք անփույթ կերպով սպրդած էին ի լուր ոչ միայն մեր ողջամտության, այլև ոչ իրեն՝ ուրիշ բաներում զգուշավոր ու բարեպաշտ հեղինակին, թե հասել է հետինների ժամանակը, որում ավելի պարզ ձևով բացատրվում է ու ճանաչվում սուրբ ժողովի դավանությունը՝ համաձայն հնում գումարված երեք ժողովների ու մեր վեհագույն հայրերի եկեղեցու: [Լավ կլիներ], եթե կամենար կամ ի վիճակի լիներ առավել անաչառորեն քան կանխակալ մեծարանքով քննել իրենից առաջ եղած վարդապետներին, որոնցից ոչ քչերը՝ նույն կասկածամտությամբ կամ այլ չար մտքով խաբված ները և խնդրի նրբություններին ոչ հասու եղողները, խորշում էին քաղկեդոնականությունից, վախենալով կարծեցյալ նեստորական բաժանումից՝ Քրիստոսի աստվածային և մարդկային բնության վերաբերյալ: Բայց պետք է նաև ազդվել բարեսեր հեղինակից, որովհետև, թեպետև իրեն հարազատ բան պետք

[1] Տե՛ս «Հաւաքումն պատմության», էջ 40, 46, 48, 54, 78, 87, 101, 112, 134, 154, 155:

է համարենք քաղկեդոնականների գրվածքները, բայց նա տակավին ավելի հեզ ու հանդարտ է գտնվում, քան այլախոհներից շատերը, և չի թերանում մեծարելու ժողովի հայրերին ու նրանց հետևող արժանավոր այլ անձանց: Այդ խնդրի մասին գրելով Հեթում արքային, մեջբերելով Աթանասի, Կյուրեղի, Գրիգոր Աստվածաբանի խոսքերը, որոնք երկու բնություն են ասում, և ընդունելով այդ նույն բանը՝ ասում է. «Ամեն բան տեղ ու պատճառ ունի, որովհետև լսողին, ժամանակին ու կարիքներին ինչպես որ պետք է եղել, այդպես էլ խոսել են, քանի որ այլ է կռվի խոսքը և այլ է ճշմարիտ խոստովանությունը խաղաղ ժամանակ, ինչպես որ Աթանասն ընդդեմ Արիոսի ասել է երկու բնություն... Իսկ Աստվածաբանը Կղոդիոսին հղած ճառում ասում է. «Բնությունները երկուսն են, քանզի [կան] Աստված և մարդ, բայց որդիները երկուսը չեն», և սա վեճ է ընդդեմ Ապողինարի, որն ասում էր, թե Քրիստոսը մի բնություն ունի...: Իսկ Կյուրեղը ընդդեմ դիվաբերան Եվտիքոսի, որը տեսքով ու կերպարանքով էր ասում Տիրոջ երևալը և մի բնություն ունենալը, ասաց՝ երկու և ոչ թե մեկ»: Արդ՝ ինչպես Կյուրեղի, այնպես էլ Քաղկեդոնի ժողովականների խոսքերը նույնն են, ո՛վ վարդապետ, իսկ նրանք՝ ժողովից առաջ և հետո եղած Հայրերը, զանազանելով ասում են մեկ կամ երկու բնություն՝ ըստ քո իսկ վկայելու: «Ամեն բան տեղ և պատճառ ունի», իսկ ով կամենում է քննել որպես հավատի սրբազան երևույթներ, ինչպես որ հենց էնը ամեն ինչով, պարտավոր է քննել հստակ ու անկիրք մտքով և եկեղեցու վարդապետությանը չպետք է խառնի ազգային ավելորդապաշտություններն ու խնդիրները, կամ Աստծու Հոգու հետ՝ մարդու հոգին, այն է՝ մարդուն հակառակողի հոգին, որով էլ բազմիցս աստվածամարտ կդառնա:

Սրանք արժանի համարեցինք հիշատակել այստեղ, որպեսզի այսուհետև, եթե պատմական կամ ուսումնական նպատակով հրատարակենք պատմիչներից կամ գրիչներից ուրիշ գործեր, որոնցում շատ կամ քիչ թերություններ կգտնվեն աստվածաբանական այս խնդրի շուրջը, մեր տեսությունը լավ ճանաչեն մատյանները հետազոտողները, որոնց համար սիրելի է մեր նախնիների մատենագրությունը, իսկ մատենագիրները նրանց բարեկամներն են, բայց բուն սերն ու բարիքը միմիայն ճշմարտությունն է, այն է՝ ճշմարիտ վարդապետությունը, ո-

ը ցանկանում և ուխտով խնդրում ենք, որպեսզի նույնպես լինի ամենքինը, առավել ևս մեր ազգակիցներինը, թե ինչպես և ինչու կընդունեն մեր իղձը:- Եվ որովհետև մի փոքր վերևում ինչ-որ երկբայությամբ էինք ասում, թե արդարև հարազատ խոսքերը այդ հեղինակի կողմից ասված կլինեն և ոչ թե այլափոխված հանդուգն ու կողմնակալ գրիչների կողմից, և դա այդ կարծիքներից ամբողջովին հեռու չենք համարում, մանավանդ որ գրքերի օրինակներն էլ ավելի հին են, և հեղինակի մատյանի հին օրինակներում էլ կան նենգափոխված տեղեր: Օրինակի համար՝ Արարածոց մեկնության մեջ, ուր սուրբ հոգու դուրս ելնելն ու բխելը հիշում է ըստ Եղիշեի խոսքերի ուղղափառ դավանության, որին և ինքն է հավանություն տալիս իր պատմության մեջ[1]: Եվ հաջորդ դարի հռոմեացի սաստիկ վրեժխնդիր ոմն մատենագիր զոհունակությամբ մեջ է բերում նույն վկայությունը՝ փակելու համար իր ժամանակի առանձին ընդդիմախոսների բերանը: Այդ նույն վկայությունը գտնում ենք ակներև ու ակնհայտ կերպով փոփոխված նաև գրքերի այլ օրինակներում, որոնք գրվել են հեղինակի մահվանից քիչ տարիներ անց[2]: Այս կողմնապահ ու թյուր հոգու առհավատչյան էին ընծայում տեղ-տեղ և այս պատմության օրինակները՝ ըստ յուրաքանչյուր գործածության ընդարձակելով կամ սաստկացնելով հեղինակի խոսքերը, որոնք այնքան էլ հեշտ չէ ընտրելն ու ջոկելը, որի համար այլ տեղերում չկան հեղինակների հավաստի վարքն ու միտքը: Դրանից ոմանք (Դալանոսի հետ) չարաչար խաբվում են և մինչև անգամ մեր Վարդանին են վերագրում Համանուն Սևալեռնցու, որը միշտ Վահրամ է կոչվել, անմիտ ու նախատական թուղթը՝ գրված Հեթումին՝ պարսավելու համար լատինացիներին, իբրև Հռոմի քահանայապետի թղթի պատասխան, որը 1247 թ. Հայոց արքայի մատ բերեց իսպանացի Նվիրակ Դիմանջը:

Արդ՝ այսքանով բավարարվենք՝ առանձին տեղերում շատ

1 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան», էջ 148:

2 «Երեքն են, որոնցից առաջինը չի ծնվել որևէ մեկից, երկրորդն առաջինի ծնունդն է, իսկ երրորդը երկրորդից ու առաջինից դուրս եկածն ու բխածն է» նախադասությունը նենգ մատները փոխում են այսպես՝ «Երրորդը դուրս է գալիս ու բխում ոչ թե երկրորդից, այլ առաջինից»:

թե քիչ [ներկայացնելով] և այնտեղից վերադառնանք մեր պատմագրին ու թերությունների հետ ավելացնենք նաև գովասանք՝ հենց նույն ինքը համառոտությունը, այսինքն՝ հեղինակի վարպետությունն այդ շատ տարիների, զանազան ազգերի ու տարբեր տեսակի գլխավոր դեպքերը հարմարեցնելու ու շարադրելու համար, որով, հիրավի, մեր պատմագիրների այս ոճն ավելի նախընտրելի է, այնպես որ նրանցից ոչ մեկը Ժ դարից հետո այսքան ճոխ ու համառոտված չի հավաքել ընդհանուր պատմությունը: Եվ շատ լավ ու գործին հարմար էլ ընտրվել է վերնագիրը, որն ուներ մեր Բ. ընտիր օրինակը՝ «Հավաքումն պատմության Համառոտ և բովանդակ բացատրությամբ, ընթերցողներին դյուրահաս, Աղամից հետո թվելով ժամանակները, պատմելով նրանցում կատարված դեպքերը, նաև շատ տեղերում խորհրդավոր խորհելով ու քննիմաց իմաստությամբ լուծելով շատերի տարակուսանքը, որին կպատահի յուրաքանչյուրը»: Հայտնի չէ, թե հեղինակը երբ է սկսել այս համառոտությունը, բայց այն ավարտել է 1265 թ., ինչպես որ ինքն է ասում. «Հուլաղու զանի մոտ գնալուց հետո և նրանից առաջ, ավելի քան երեսնամյա դեպքերը (1233-1265 թթ.) հույժ համառոտելով նշել եմ կամ բաց թողել, գրելով պատմագիրներ Վանականի և Կիրակոսի ոճով: Սակայն թաթարների ճամբարից վերադառնալուց հետո վերջապես ձեռնարկել եմ նշանավոր այդ տեսությունն ու պատմությունն աշխարհակալի հետ՝ հարմարեցնելով առաջինների գործերը և շաղկապելով երկուսն ու այդ ժամանակամիջոցում այլ պատահածները միմյանց հետ»: Դրանից հետո դարձյալ հիշատակում է խանի մահը, եգիպտացիների կողմից Կիլիկիային հասցրած հարվածները, իրեն հյուրընկալող ու մեծարող Կոստանդին կաթողիկոսի մահը և սրտառուչ ողբով ավարտում է գիրքը՝ չհասցնելով նշել, թերևս չլսելով իր մտերիմ մեկենասի՝ Հեթում թագավորի մահը: Նա մահացավ 1270 թ. հոկտեմբերի վերջին, իսկ մեր պատմիչը մահացավ հաջորդ տարվա առաջին կեսի վերջին, ինչպես որ մեզ թվում է:

Շատ համառոտ ասենք նաև այս պատմության գրչագիր օրինակների մասին, որոնց միջոցով էլ լույս ենք ընծայում այս տպագիրը: Անտեսելով նորագիր ընդօրինակումները՝ երկու հնագիր օրինակներից կատարեցինք ընթերցվածքների ընտրությունը, որոնցից մեկը Ա-ն է կամ Հ-ն, և ծանոթություններ-

ըի մեջ միշտ նշված է Հին Օ. (օրինակ) ձևով: Դա իսկապես հնագիր, հնատառ և հաճախակի կիրառությունից հնացած օրինակ է, ինչպես որ թվում է մեկ այլ նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանին. հետևաբար այն գրվել է հեղինակի մահից հետո մոտավորապես քսան տարուց ավել կամ պակաս ժամանակամիջոցում: Այն անթերի ու ամբողջական ձևով պարունակում է պատմությունը, բայց ուղղագրությամբ ու հարազատությամբ զիջում է Բ օրինակին, այսինքն՝ ընագիր կամ երկրորդ օրինակին, որի հետևանքով էլ մենք միշտ դա ընտրեցինք որպես ուղեցույց՝ թվերի վարպետ ու անսխալ գրչության, ուղղագրության ու ամբողջական շարադրանքի շնորհիվ: Հենց դա էլ հին ձեռագիրն է՝ գրված 1307 թ., այսինքն՝ հեղինակի մահից երեսունվեց տարի հետո: Եվ որովհետև սա ընդհատվում է այնտեղ, որտեղ նախ ավարտվել էր Վարդանի պատմությունը[1], թվում է, թե սա արված է հեղինակի ինքնագրից կամ շատ վաղ ընդօրինակված, ինքնագրին հավասար մի այլ ձեռագրից: Իսկ ՕՕ-ն նշանակում է, որ երկու օրինակը կամ բոլորն էլ ունեն նույն ընթերցվածը:

[1] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան», էջ 137:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*

Նախքան բոլոր խնդիրներին անցնելը՝ արարածներս նայենք էին [Աստծուն], սկիզբ առածներս՝ անսկզբին, ստորիններս՝ վերնայինին. ոչ այնքան այն ամենին, ինչ միայն նրան է հատուկ, այլ անհասական փառքի երևացող կայծին, որով ուղղենք մեր բաղձանքները** ոչ թե անձամբ, այլ միջնորդի օգնությամբ, որը Աստծու բարեկամ մեծն Մովսեսն է: Եվ քանի որ նա հեզ է, քան բոլոր մարդիկ, մեզանից ոչ ոք թող չզարշի այն ձեռքից ու գավազանից, որ Աստծուց են, որպեսզի դրանց ձեռք տալով՝ մենք իմաստնանանք: Ինչպես որ նա Տիրոջ անունը հարցնելիս լսեց, թե նա է էն, որից բացվեցին նրա իմաստության խորքերը, և այնտեղից վստահ լինելով նրան կոչեց Աստված ու Տեր, ամեն ինչի արարիչ ու ստեղծող, որովհետև թեպետև նրանից*** լսեց ամեն ինչի մասին, բայց էի միջոցով հասկանալով՝ որ նա Աստված է, որի միջոցով էլ գոյություն ունի էն, որովհետև «աստ ածող է»****, և նրա անունը Տեր է, քանի որ իրենից եղածների իշխանն ու դատավորն է: Եվ որովհետև միշտ գոյություն ունի էն և եղած չէ, նա է գոյությունը հայտնի դարձնում, իսկ Աստված՝ արարչագործությունը: Դրա համար էլ [Մովսեսը] իր առաջին գրքի անունը Արարածք և Ծնունդք կոչեց, որովհետև դրանք իր հետ

* Վարդան Արևելցու երկի մոսկովյան հրատարակությունը (1861 թ.) ունի «Պատմութիւն տիեզերական» խորագիրը, իսկ վենետիկյան հրատարակությունը (1862 թ.)՝ «Հաւաքումն պատմութեան»: Մենք հարմար գտանք պահել «Տիեզերական պատմություն» վերնագիրը:

** ՄՕ.-ում (մոսկովյան օրինակում, այսուհետև՝ ՄՕ.)՝ «զբաղձանս փափագման մերոյ»՝ մեր բաղձանքն ու փափագը:

Տողատակին արաբական թվանշաններով տրված ծանոթագրությունները վենետիկյան հրատարակչինն են, աստղանիշերով տրվածները՝ թարգմանչինը, իսկ հրատարակչի ծանոթագրությունների վրա թարգմանչի կատարած հավելումները տրված են անկյունավոր փակագծերի մեջ:

*** ՄՕ.-ում ի Տեառնէ՝ Տիրոջից:

**** «Աստ ածող է»՝ այստեղ բերող է:

առնչություն ունեցողներն են, ինչպես որ հայտնվում և քարոզվում է արարածների հարաբերությունը արարչին և ծնունդներինը՝ ծնողին: Եվ [Մովսեսն] իմացավ, որ էն մեկն ու միակն է, իսկ եղածները՝ բազմաթիվ, և չկա բազմություն առանց մեկի, բայց կա մեկը առանց բազմության: Նրանից չթաքնվեց Երրորդության իմաստը, քանզի նա ճանաչեց, որ էն եռանձնյա է, ինչպես որ նա խոստովանում է եռանձնությունը մարդուն ստեղծելու, լեզուները բաժանելու և այլ երևույթների ժամանակ: Եվ մյուս եղածները կամ մեկից ավելի բարձր են և կամ ավելին են, քան երեքը, որովհետև անկատար են: Իսկ էն երեքն է՝ ունենալով սկիզբ, շարունակություն և ավարտ, քանի որ նա է Աստված առաջին, միջին և վերջին: Եվ եթե այդպիսի ուրիշներն էլ գտնվեն, ապա դրանք նմանակներ են և ոչ թե հավաստի բաներ: [Մովսեսը] էին համարեց ամեն ինչի սկիզբը, քանի որ այն ամենը, ինչ եղել է և լինում է, նախ էությունն է, սկիզբը, և այն էից է գոյանում: Նա նաև իմացավ, որ էն պարզ է, որովհետև եղածներն ընդունեց, թանձրն ու մարմնականները* ճանաչեց: Իսկ եթե էն բարի է, ապա անփոփոխ է, անվախճան, անորակ, անքանակ և անձև, քանի որ բարի էն չկամեցավ բարին միայն իր համար ունենալ, այլ ստեղծեց բարի արարածներ՝ վայելելու համար արարչի անսպառ բարիքները: Որը** [Մովսեսը] սկսում է այսպես:

Ա. Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, բայց չհայտնեց սրանց նյութը, որովհետև ստեղծողը ոչ մի բանի կարիք չունի, սակայն ստեղծեց չորս տարրերը՝ հուրն ու օդը՝ տաք ու թեթև, ջուրն ու հողը՝ ցուրտ ու ծանր, որոնք ունեն չորություն և խոնավություն: Եվ սկզբից ասաց, որպեսզի ցույց տա արարելու ժամանակ չունենալը, քանզի իր արարածները պատկերացրեց երեք պայմանով՝ անժամանակությամբ, անբավությամբ և անչափությամբ: Քանի որ ի սկզբանե չունի ժամանակ. ոչ տարի, ոչ օր, ոչ ժամ, ոչ [ժամանակի] հատվածի մաս, և ոչ ոք ի վիճակի չէ իմանալու բոլոր եղածները, որովհետև դրանք որոշակի տեղում չեն գտնվում, ինչպես ինքն Աստվածն է: Իսկ փոփոխմամբ, շարժմամբ, քանակով, որակով և գոյությամբ նրանք զատվում են արարչի բնությունից: Այսպիսով, Աստծու իմաստությունը արվեստ է, զորությունը՝ արարող, բարությունը՝ անմարմին նյութ, որին նյութականացրեց և գոյացրեց նրա առատ ու կարող կամքը, ոչնչից ստեղծեց երկնքի ու երկրի ձևը՝ դնելով անպատրաստ հիմքի վրա: Քանի որ երեք կամարներ կան, մեկը մյուսից ավելի բարձր՝ հրեղեն, նրանից ներքև՝ ջրեղեն և օդեղեն, որը հաստատությունն է: Այդ երեքն էլ հողմով խառնվելով՝ շրջապատում են ամբողջ երկիրը, իսկ երկիրն իր վրա ունի ջուր՝ այն հաստատունը, որ հողմով այնտեղ է փչված, որին իր բնական ծանրությունը չի թողնում վերև թռչել, իսկ անդունդներից դեպի վեր փչելը չի թողնում վայր ընկնելու, իսկ Բանն Աստված վերցնելով տանում է այդ բոլորը: Երբ ստեղծվեց երկինքը, այն կենդանածնվեց հրեղեն հրեշտակներով, ինչպես որ նրանց կացարանն էլ հրեղեն է, ուր զետեղված են տասնյակ խմբեր՝ տեղով, փառքով ու զորությամբ տարբերակված, չորս տարրերից դուրս: Ըստ որում նրանք անփոփոխ են, անմահ, իսկ վերին երկինքը վարագույր է նրանց ու Աստծու միջև, որն անպատմելի օրինակ է:

Իմաստուններն ասում են, թե երկնքի առաջին պտույտի ժամանակ գոյացավ բնությունը, որն Աստծու արվեստագործությունն է, արարող զորությունը Աստծուց հետո. այն թերևս մեր չորս տարրերի ներգործությունն է:

Երկրորդ պտույտի ժամանակ [Աստված] ստեղծեց հաստատությունը և բարձրացրեց ջրի կեսը երկու պիտանի նպատակների համար, որպեսզի պահի երկրի առավել ծանրությունը և արգելի, որ հրեղեն երկինքը չկիզի մարմնավորներին:

Երրորդ պտույտի ժամանակ ակնարկելով Աստծու կամքը՝ շարժեց բույսերն ու խոտերը, որոնց սկիզբը հողի բորբոսն է, իսկ վերջը՝ սերմը, որ նրա մեջ է, ծառերը, որոնց սկիզբը բույսի մոտ եղած մամուռն է, իսկ վերջը՝ արմավենին, որը կենդանիների մոտ է, որոնցում կան արու և էգ:

Չորրորդ պտույտի ժամանակ եղավ Տիրոջ հրամանը լույսի վերաբերյալ, որը արփուց [երկնային լուսեղեն գոտուց] անջատված է: Այն բաժանեց երեք մասի և բաղում ամանների՝ արեգակի, լուսնի ու բազմաթիվ աստղերի: Արեգակի, լուսնի և յոթ այլ աստղերի ճանապարհը տասներկու կենդանակերպ-

* ՄՕ.-ում մարմինս՝ մարմինները:

** ՎՕ.-ում (վենետիկյան օրինակում, այսուհետև՝ ՎՕ.)՝ զոր, ՄՕ.-ում զի:

ները եղան: Արեգակը երեքով զարուն է անում, մյուս երեքը բարձրացնելով՝ ամառ է անում, հավասարակշռության ժամանակ ցածրանում է ու երեքով աշուն է անում, իսկ է՛լ ավելի հարավ իջնելով՝ ձմեռ է անում: Եվ երկրների խիստ բարձրության ու ցածրության պատճառով ցերեկը աճում է մինչև քսաներորդ* ժամը ու պակասում մինչև չորրորդը**: Եվ ինչպես ասում են իմաստունները, աշխարհում կա տասնչորս կլիմա, այսինքն՝ մաս: Յոթ մասը անմարդաբնակ է, որովհետև երկրի խիստ ցածրության պատճառով ցուրտ ու խավար է, որտեղ վեց ամիսը, խոյից մինչև կշիռը, միշտ ցերեկ է, իսկ վեց ամիսը, կշռից մինչև ձուկը, գիշեր է: Իսկ խորին Հնդկաստանում[1] միշտ հավասար է, ժամերը ոչ աճում են, ոչ պակասում, այլ մնում են տասներկու:

Իսկ հինգերորդ և վեցերորդ պտույտների*** ժամանակ հրաման եղավ ջրի ու ցամաքի կենդանիների մասին՝ սկսած կատաբույսերից ու սպունգներից, վերջացրած մարդով՝ բանական կատարյալ կենդանով: Կենդանիները բաժանվում են հազարավոր տեսակների, իրենց գլխավորներով՝ վիշապներով [լևիաթան[2]], որոնք ջրերում են ապրում և գազաններով [բեհեմովթ], որոնք չոր անապատներում են ապրում: Եվ ըստ Արիստոտելի՝ այս է ընդհանուր հոգին, այսինքն՝ բոլորին կյանք տվողը:

Եվ ահա բնությունը շարժում է երկնքի գունդը, նաև ժամանակը, տարրերը, բույսերը, կենդանիները, հրահալ նյութերը, ոսկին, արծաթը, ակնեղենը և այն ամենը, ինչ բնությունն է ստեղծում ծծումբով ու սնդիկով [ժիպակ], ինչպես ասում են գիտեցողները[1]:

Անդամների հորինվածքը գլուխ հասցնելով, ինչպես հմուտ նկարիչները, որ սկսում են ոտքերից, [Աստված] հրաշագործում է՝ հորինելով մի նոր բնություն՝ բաղկացած երկրներից ու երկրից ու նրանց միջև եղածներից, որպես մի պատկերի վրա շինված վեց խոնարհված ձեռքեր, ուր մեկը նման* է երեքին, որի հետևանքով ստեղծողի բնությունը, էությունն ու աստվածությունը մեկն է կարծվում: Գիտենալով կատարվելիք մեղքերի մասին՝ աստվածային մարգարեությունը չէր կարող արգելել հորդառատ բարերարության շարժումը, նաև հենց նույն բարերարությունից չէր հրաժարվում և իր ոտքերով հիվանդատես էր գալիս նրան, ում իր ձեռքերով էր ստեղծել: Եվ նրան հանձնելով երկրին՝ մատնում է մահվան դահճին՝ մեղքերը կրճատելու, նրա միջից չարությունը հանելու, չարի նենգությունը, օձի վնասները ցույց տալու համար, որպեսզի նա այլևս չլսի նրան, գիտենալով այն, ինչ որ ստեղծելու էր, այն է՝ վերստին նորոգումը: Բացի դրանից, նրա գութը չթողեց, որ նա ի կատար ածեր մահվան վճիռը, որ կտրել էր նրա համար, որովհետև չմեռավ հոգին, այլ հողը հող դարձավ, իսկ բնակիչը մնաց: Ստեղծողը զորեղ է ու գթած, նյութը նրա ձեռքում է, և հարության ժամանակը նրա համար անմոռաց է[2]:

Բ. Արդ՝ Աստված սերովբեների բոցով պատեց դրախտը, որը գտնվում է երկրի արևելյան կողմում, հաստատված մի բարձր լեռան[3] կատարին, որը հավասար է լուսնի գնդին: Դրախտը [հարուստ է] անծորելի պտղով և անթառամ սաղարթներով, ուր գիշեր-ցերեկ չի թափանցում արևը, այլ

* ՄՕ.-ում քսան:

** ՄՕ.-ում չորս:

[1] Սույթ կերպով Հնդկաստանում չկան հասարակածին մոտ ընկած իրար հավասար մասեր, որտեղ գիշերվա ու ցերեկվա ժամերը իրար հավասար լինեն [տասներկու ժամ]. գուցե խորին Հնդկաստան ասելով՝ Աֆրիկան է հասկացվում:

*** ՄՕ.-ում «Իսկ հինգերորդ շուրջն եկեալ ի վեցն»՝ Իսկ հինգերորդ շրջանը հասնելով վեցին:

[2] Լևիաթան՝ երբայերենից հայերեն թարգմանվում է վիշապ (Հովբ., Խ, 20, Եսայի. Իէ, 1). իսկ նկարագրությամբ թվում է, թե դա կետ ձուկն է կամ կոկորդիլոսը [տխտուր]: Բեհեմովթը թարգմանվում է գազան, ինչպես թարգմանված է Հովբի գրքում (Խ. 10), և թվում է՝ կա՛մ փիղ է, կա՛մ գետաձի:

[1] Այժմյան գիտնականները չեն ասում, թե բոլոր հրահալած նյութերի մեջ ծծումբ կամ սնդիկ կա:

* ՄՕ.-ում նմանիցի՝ կնմանվի:

[2] Այստեղ հին օրինակներն ավելացնում են՝ «Սուրբդ սրբոց, գթութեան և ողորմության խորք, քեզ փառք և գոհություն քո արարածների կողմից» [ՄՕ.-ում «Սուրբդ սրբոց, գթութիւն եւ ողորմութիւն քեզ՝ փառք եւ գոհութիւն»]:

[3] Ամենայն հավանականությամբ դրախտը եղել է երկրի մի ինչ-որ բարձրավանդակի վրա և ոչ թե լուսնամերձ տեղում:

պայծառանում է արփուց [լուսավոր երկնքից] կամ Աստծու փառքի նշույլներից, ինչպես նրա մեծ գործը և հրաշալի տեղը, որի տեսությանն անգամ արժանի չեղավ հանցավորը, այլ [Աստված] բոլոր կողմերից ու վերևից վառեց հրով, ինչպես չանթական հուրը, որը երբ ընկնում է, իրեն ու տեղը թաքցնում է աչքերից, որպեսզի ոչ ոք չհամարձակվի փնտրել նրան առանց Աստծու կամքի: Ուստի Ադամն ու Եվան երեսուն տարի կուսությամբ ողբացին իրենց անխոհեմությունը, ապա ճանաչեցին միմյանց և ընկնելով անասնական անարգանքի մեջ՝ ծնեցին Կայենին, որպես հիվանդ ծնողների հիվանդ ծնունդ, ինչպես ասում են բժիշկները, Կլիմաս անունով մի քրոջ* միջոցով, իսկ երեսուն տարի անց ծնեցին Աբելին ու նրա Աբելուհի քրոջը[1]: Եվս երեսուն տարի անց Կայենը սպանեց Աբելին, որովհետև Աբելը իր ծնողներից սովորել էր Աստծուն պատվել պատվական ու ընտիր ընծաներով և միմյանց սիրելու համար իր ու եղբոր համար զոհ մատուցել: Իսկ Աբելը բերեց իր և եղբոր անդրանիկ ու պարարտ գառներից, որի համար Աստված նախ նայեց Աբելին ու նրա ընծաներին, բայց Կայենի վրա չնայեց, որովհետև նա վատն էր բերել և միայն իր համար, իսկ եղբոր համար չէր բերել: Ի վերուստ հրով չընդունվեց, ինչպես որ ընդունվել էր Աբելինը: Դրա համար Կայենը կասկածեց Աբելի վրա, թե Աստված նրան կվերցնի դրախտ ընդունելի ընծայի համար, և նախանձից վառվելով՝ սպանեց նրան: Ադամն ու Եվան, իմանալով այդ մասին, նրա համար սուգ պահեցին հարյուր քառասուն տարի: Աստված Կայենին ողորմությամբ առաջարկեց զղջալ, բայց նա ստեց և մեղքերի վրա նոր մեղք ավելացրեց, որի պատճառով ճակատի վրա պիսակ [նշան][2] ելավ, և, ինչպես ասում են, սկսեցին դողդողալ նրա մարմնի բոլոր մասերը: Եվ ծնելով որդիներ ու թոռներ՝ նա երկար ապրեց տանջանքով ու մեռավ նախատինքներով: Նրա որդիները՝ Ենովքը, Գայերիդադը, Մայայելը*, Մաթուսաղան և Ղամեքը, հոր նման չար էին: Ինչպես Ղամեքն է խոստովանվում կանանց, թե ինքն սպանել է տղամարդկանց ու երիտասարդների: Նրա մասին ասում են արդար Ենովքի եղբայրները, որոնց սպանեց Ղամեքը և առավ նրանց կանանց և ոչ թե նա սպանեց Կայենին ու նրա որդուն, որի մասին ասում են, թե նա հոր նման էր, և Աստված ասաց, որպեսզի ոչ ոք չսպանի նրան: Ղամեքի որդիները՝ Թովբելը, Հուբաղը** և նրանց քույր Նոյոմը*** հնարեցին նվագարաններ, երգեր, սնդույր, և նրանցից սկիզբ առան պղնձագործությունն ու երկաթագործությունը:

Գ. Դրախտից դուրս գալուց երկու հարյուր երեսուն տարի անց Ադամը մխիթարվեց՝ ունենալով իր Սեթ որդուն, որը երկու հարյուր հինգ տարի հետո ծնեց Ենովսին, որը ցուցաբերելով ուղիղ վարք՝ հույս ուներ հատուցել Աստծուն և Աստծու անունը կանչեց օգնության: Նա տառեր հնարեց և գրեց պղնձե և խեցե երկու տախտակի վրա[1]: Նա կանխատեսեց, որ մեր աշխարհը երկու անգամ կործանվելու է ջրով ու հրով: Գրեց այս բանը և բոլոր իրերի անունները, որոնք գրել էր Ադամը, որպեսզի պահպանվեն պնակիտների վրա: Նա ասում է, որ [գրածը] ջրից կպահպանվի պղնձի վրա, իսկ հրից՝ թրծված խեցե աղյուսի վրա: Եվ դրա համար նա աստված կոչվեց, իսկ նրա որդիները՝ աստծու որդիներ: Ուրիշներն ասում են, թե նրա որդիներից երկու հարյուր անձինք հիշեցին դրախտի կյանքը և բարձրացան լեռները՝ պահելու կուսությունը և այդտեղից էլ կոչվեցին Աստծու որդիներ, և ապա ճանճրացածները իջան Ահերմոնի սարից[2], և նրանց հալածեցին իրենց եղբայրները: Եվ Կայենի որդիներն ու դուստրերը, նվագարանների ու սնդույրների միջոցով նրանց խաբելով, իրենց կողմը դարձրին և կին առան նրանց, ում ընտրում էին: Այդպես անելով՝ նրանք դրժեցին Աստծու ուխտը, որ Աստված

---

[1] Կայենի և Աբելի քույրերին ու կանանց հին պատմիչները զանազան անուններով են կոչում՝ ըստ հրեական և ասորական ավանդությունների:

* ՄՕ.-ում **Եբրա** է, փոխանակ **քեբրա**-ի՝ քրոջով:

[2] Կայենի պիսակը հետևյալն էր. ըստ ոմանց՝ եղբայրասպանի ճակատին եղջյուր էր բուսել, ըստ ոմանց՝ ինչ-որ ուռուցք կամ մի այլ նշան, իսկ շառերի կարծիքով՝ նրա երերալն ու դողդողալը նույն անեծքի արդյունքն են:

* ՄՕ.-ում **Մայիել:**

** ՄՕ.-ում **Հուբաղ:**

*** ՄՕ.-ում **Նոյամ:**

[1] Ըստ Հովսեփոսի և վարդապետական ավանդությունների՝ դրանք Ենովքի երկու արձանագրություններն են, որոնք ընդունել են նաև [հոգևոր] Հայրերը:

[2] Ահերմոն լեռան վրա նահապետների մենակեցության մասին պատմվում է Ենովքին վերագրվող անվավեր գրքում:

սահմանել էր նրանց համար*, այն է՝ նրանց հետ խնամություն չանել:

Դ. Եվ ասում են, թե դրախտից դուրս գալուց հազար տարի հետո Կայենի որդիներն իրենց թագավոր դրեցին Սամիրոս[1] անունով մեկին, իսկ Սեթի որդիները՝ Աղորոս անունով մեկին, որը հայտնագործեց կենդանակերպների ու մոլորակների քանակը: Նրանցից սկիզբ առավ քաղդեությունը, այն է՝ աստղահմայությունը [աստղագուշակությունը], և այդտեղից սկսած թվում են տասը թագավոր, իսկ նրանց ժամանակը՝ հազար հարյուր ութսուն տարի: Ենովքը հարյուր իններսուն տարեկանում ծնում է Մաղաղիելին. Մաղաղիելը հարյուր վաթսունհինգ տարեկանում ծնում է Հարեդին. Հարեդը հարյուր վաթսուներկու տարեկանում ծնում է Ենովքին: Ենովքը հարյուր վաթսունհինգ տարեկանում ծնում է Մաթուսաղային. Մաթուսաղան հարյուր վաթսունհինգ տարեկանում ծնում է Ղամեքին. Ղամեքը հարյուր ութսունութ տարեկանում ծնում է Նոյին և լինելով յոթ հարյուր յոթանասուներեք** տարեկան՝ մեռավ, հորից քսանինը տարի առաջ: Աղամի [դրախտից] դուրս գալուց հազար վեց հարյուր վաթսունվեց տարի հետո ծնվեց Նոյը, որի ժամանակ բազմացան չարիքներն ու անիրավությունը:

Սատանան նախ՝ որպես իրեն զենք գտավ որկրամոլությունը, ապա՝ կնասիրությունը, և ապա՝ սպանությունը: Եվ սատանան այս ամենն արեց, որպեսզի շատ խառնակվելուց կանայք լինեն անծնունդ, իսկ կենդանիները սպանեն միմյանց, և վերանա մարդկությունը: Քանի որ մի կնոջ համար քառասուն*** տղամարդ էր մեռնում, խաղաղությունը միայն կանանց հետ էր լինում, ասում է սուրբ հայր Եփրեմը: Իսկ հակառակ չարի՝ Տիրոջ խնամքից լինում են բազում խառնակություններ, որոնք էլ դառնում են անճոռնի հսկաների ծննդյան պատճառը: Եվ քանի որ կանանցից սկսվեց կամքի հիվանդությունը, հաղթանդամ կորյուններ ծնելիս մայրերը մեռնում էին, իսկ ծնվածներն ապրում: Նրանք աճելով՝ իրենց հսկա հասակներին էին նայում, հպարտանում և իրենց հավիտենական մարդ անվանում: Դրա համար Աստված նրանց երկարակյաց դարձրեց, որպեսզի գրի փոխարեն շատ զավակներ լինեն: Նրանք այնքան գոռոզացան, որ ամենևին մահվան ակնկալիք չունեին: Նրանց [կյանքը] կարճելով՝ արարիչն առավ նրանց կեղտոտված հոգու շնորհը և ասաց. «Դրանց տարիքը թող լինի հարյուր քսան տարի, և իմ հոգին թող չմնա դրանց մեջ*»: Դրանից հետո հարյուր քսան տարին առհասարակ բոլոր մարդկանց չտրվեց, այլ միայն ամուսիններին՝ զղջման համար: Նոյը եղավ հինգ հարյուր տարեկան՝ ապրելով մաքուր կյանքով ու կուսությամբ: Աստված նրան հրամայում է կին առնել, որդիներ ծնել և տապան շինել, որ բարձրանա ջրերի վրա: Կատարվեցին հետևյալ դեպքերը. հարյուր տարի[1] ապաշխարության ժամանակ տվեց, և որովհետև չապաշավեցին [չզղջացին], քսան տարով պակասեցրեց: Ասում են, որ այն գումարվեց Մաթուսաղայի՝ ջրերի տակ[2] անցկացրած ինը հարյուր վաթսուներկու տարիներին: Ըստ այդմ էլ ջրհեղեղը Նոյի վեց հարյուրերորդ տարում եղավ և կործանեց բոլորին՝ կենդանիներին ու մարդկանց, բացի նրանցից, ովքեր Նոյի հետ ութ մարդով գտնվում էին տապանում:

Ե. Աղամի դրախտում մնալու ժամանակը ոչ ոք չի կարող ասել** [հետևյալ պատճառներով]. նախ՝ որովհետև ժամանակաչափ արեգակը դրախտին չէր սպասարկում, և երկրորդ՝ քանի անմեղ էր Աղամը, նա անմահների շարքում էր, իսկ ան-

* ՄՕ.-ում ընդ նոսա՝ նրանց հետ:

[1] Այս ավանդությունը հեղինակը վերցնում է պատմիչ Միքայել Ասորուց: Սամիրոսի հաջորդները ոչ մի տեղ չեն հիշվում, իսկ Աղորոսի հաջորդներից տասը սերունդ քաղդեացիները թվում են մինչև ջրհեղեղը: Եվ շատերը նույնն են ընդունում նահապետների հետ Աղամից մինչև Նոյը, ինչպես որ ընդունում է նաև մեր Խորենացին (Ա., դ.):

** ՄՕ.-ում յոթ հարյուր հիսուներեք:

*** ՄՕ.-ում քսան:

* ՄՕ.-ում առ զոսա՝ դրանց մոտ:

[1] Հին ՄՕ.-ում «Եվ ինքը եղավ վեց հարյուր տարեկան» [այդպես՝ է նաև ՄՕ.-ում]:

[2] Ըստ յոթանասնից թարգմանության օրինակների՝ ջրհեղեղի թվականը Մաթուսաղայի մահվանից տասնչորս կամ յոթ տարով առաջ է եղել, իսկ ուրիշների կարծիքով կամ ըստ բնագրի՝ ջրհեղեղը համընկնում է նրա մահվան տարուն:

** ՄՕ.-ում գիտել՝ իմանալ, գիտենալ:

մահները տարիք չունեն: Իսկ հանցանք գործելուց հետո դրախտում չմնաց, որովհետև վճռով մահվան տակ ընկավ և մեռավ Աստծու համար: Գերեզմանի կարիք կար, իսկ դրախտն անմահների տեղն էր, որի համար երկիր դուրս գալով՝ մտնում է ժամանակի [ազդեցության] տակ: Եվ այդտեղից սկսած Հոգին Մովսեսի[1] միջոցով հաշվում է տարիները, որոնք ըստ յոթանասնից թարգմանության՝ դրախտից դուրս գալուց մինչև ջրհեղեղը լինում են երկու հազար երկու հարյուր քառասուն երկու տարի, իսկ ըստ եբրայական օրինակի՝ հազար վեց հարյուր հիսունվեց տարի, որը պակաս է հինգ հարյուր ութսունվեց* տարով: Դրա պատճառը համարում են հրեաների կնասիրությունը. նրանք առաջին ամուսնության տարիները կրճատեցին, որպեսզի ոչ ոք նրանց չարգելի երեխա ժամանակ կին առնել, քանի որ նրանց անմիաբանությունը նախքան ամուսնանալն էր: Ասում են, թե Ադամը հարյուր երեսուն տարեկանում ծնեց Սեթին, Սեթը հարյուր հինգ տարեկանում ծնեց Ենովսին, իսկ յոթանասնից թարգմանությունը ամուսնությունից հետո ժամանակը զույգ է դնում: Հարեզի, Մաթուսաղայի և Ղամեքի մեջ** դարձյալ միավորվում են, որը առավել ևս հանդիմանում է նրանց ստությունը, որովհետև եթե կրտսերներն ավելի երկար պահեցին ողջախոհությունը, ապա ավագներն ու պատվավոր մարդիկ է՛լ ավելի երկար պիտի պահեին: Արդ՝ Նոյը լինելով հինգ հարյուր տարեկան՝ ծնեց Սեմին, Քամին և Հաբեթին, որոնց հետ փրկվեց ջրհեղեղից, որը եղավ իր վեց հարյուրերորդ տարում: Նա տապանից դուրս գալուց հետո ապրեց ևս երեք հարյուր հիսուն տարի: Եվ ասում են, որ նա ծնեց մի այլ որդի՝ Մանիտոն անունով[2] և Աստղիկ անունով մի դուստր, որոնց և բաժանեց

[1] Արդարև, պատմական ժամանակի սկիզբը պետք է հաշվել ո՛չ Ադամի ստեղծումից, ո՛չ էլ դրախտից դուրս գալուց, այլ Կայենի ծննդից, որից էլ սկսվում է Ս. Գրքի ազգաբանությունը:

* ՄՕ.-ում յոթ հարյուր ութսունվեց:

** ՄՕ.-ում «Ի Ցարեդէն ի Մաթուսաղայէն և ի Ղամեքայն»՝ Հարեդից, Մաթուսաղայից, Ղամեքից սկսած:

[2] Մանիտոնին հիշում են մեր պատմիչները, Հայսմավուրքը և Մեթոդիոսը իր երկայնքի մարգարեական գործերում: Ըստ այդ հեղինակի՝ դրա անունով է կոչվում Անգղի Ման կղզին: Իսկ ոմանք էլ ասում են, թե Բրիտանիան Նոյի որդի Բրիտոնի անունից է ծագում:

ամբողջ աշխարհը. մաս հանեց նախ երեք բաժինները՝ ըստ երեք որդիների, որոնք դուրս եկան տապանից, այն է՝ Եվրոպա, Լիբիա, Ասիա: Ասում են, որ Եվրոպան նշանակում է բաժանված, քանի որ Նոյը այն բաժանեց՝ արևմուտքը կցելով նրան, սկսած արևելյան կողմի Եմավոն սարից ու տվեց Հաբեթին: Այդ մասի սահմանները ձգվեցին մինչև Կասպից ծովը և Կովկասյան լեռներն ու կղզիները, իսկ արևմտյան մի մասը կտրելով՝ տվեց Մանիտոնին, որի մասին ասում են, թե նա խնդրեց Ադամի ոսկորներից, որոնք Նոյը պահում էր տապանում: Նոյը նրան տվեց ծնկոսկրները և գնաց: Մանիտոնը գտավ հավահմայությունը. նա բյուրիտոնացիների* հայրն էր: Լիբիան նշանակում է մեծ բաժին, որը հարավային մեծ սահման ունեցող մասն է, որի մեջ մտնում են Եգիպտոսը, ամբողջ Հնդկաստանը և Եթիոպիան. այն տվեց Քամին: Խնկաբեր երկիրը, որ կոչվեց Երջանիկ Արաբիա, տվեց իր դուստր Աստղիկին, որտեղից եկավ տիկին Սաբան, որովհետև նրանից հետո այն ժառանգում են կանայք: Իսկ Ասիան, որ գտնվում էր արևելյան կողմում, աստվածային է ասվում[1]. այն տալիս է Սեմին՝ սկսած Կարմիր ծովից, Եվիլայից[2], Պաղեստինից, Ասորիքից մինչև Պարթևաստան, Վրկան և արևելք: Նրան արկղով տալիս է նաև նախաստեղծների ոսկորներից, որոնց երբ ուզում է տիրել Քամը, նա թաղում է Գողգոթայում ու Բեթղեհեմում և նզովք է դնում, որպեսզի չհափշտակեն միմյանցից**:

Աշխարհավեր ջրհեղեղից երկու տարի հետո իր հարյուր

* ՄՕ.-ում բյուրիտանացիների:

[1] Ասա՝ աստված հնչում է Եվրոպայի հյուսիսային ցեղերի անունով, ինչպես որ Ասկարտը՝ աստվածակերտ, աստվածաքաղաք կամ իրենց աստվածների արքայության քաղաք:

[2] Եվիլան Արաբիայի արևմտյան կողմում է, Կարմիր ծովի ափին, Եթիոպիայի և Եգիպտոսի դիմաց:

** ՄՕ.-ում դրանից հետո կա մի պարբերություն ևս, ահա այն՝ «Խնդութիւն և խաղաղութիւն արարածոց քոց և բարի բաժին՝ Տեր ողորմութեանց.- քեզ պատիւ և գոհութիւն յաւիտեանս. ամէն»՝ Տեր ողորմութեանց, քո արարածներին թող լինի խնդություն, խաղաղություն, բարի բաժին, իսկ քեզ՝ պատիվ և գոհություն հավիտյանս. ամեն:

երկուերորդ տարում[1] Սեմը ծնեց Արփաքսադին. Արփաքսադը իր հարյուր երեսունհինգերորդ տարում ծնեց Կայնանին. սա զարգացրեց քաղաքակրթությունը, գտավ աստղերով գուշակելու միջոցը, որի համար իր որդիները նրան աստված համարեցին և նրա կենդանության ժամանակ նրա արձանը պատրաստեցին ու պաշտեցին այն: Կայնանը հարյուր քսան* տարեկանում ծնեց Սաղային: Սաղան հարյուր երեսուներորդ տարում ծնեց Եբերին. Եբերը իր հարյուր երեսունչորսերորդ տարում ծնեց Փաղեկին, որը բաժանում է նշանակում, քանի որ նրանք չհամաձայնեցին Նոյի տված վիճակների հետ և սկսեցին վիճել, մինչև որ կրկին բաժանվեցին՝ մարդկային ցեղի շատ և քիչ աճման համաձայն: Այնուհետև սիրով միաբանելով միմյանց հետ՝ որոշեցին գնալ արևելք և տեսնել դրախտը, որովհետև լսել էին, որ այնտեղից են դուրս եկել նախաստեղծները: Եվ երբ շատ օրեր գնացին, տեսան, որ դրախտը մի լայնանիստ ծովով անջրպետված է ցամաքից: Այնտեղից վերադարձան՝ մտածելով, որ մեղքերի պատճառով ջուրն ավերեց երկիրը, և ծով անցավ դրախտի միջով: Այսօր էլ այն մեղքը մեզ հետ** է և չի պակասում աշխարհից: Եվ ահա եկե՛ք մեզ համար աշտարակ շինենք՝ մեզ պաշտպանելու մեղքի համար գալիք ջրի պատուհասից: Փաղեկը հարյուր երեսուներեք*** տարեկան էր, երբ ծնվեց Ռագավը: Աշխարհի իշխանները եկան Սենայար երկիրը, Քաղանե[2] դաշտը, քաղաքի հիմքը գցեցին, այն անմիջապես շինեցին և Ռագավի առաջին տարում սկսեցին աշտարակը: Ասում են, որ շուրջը դնում են ոսկեղեն և արծաթեղեն հրով թրծած աղյուսյա պատվանդան՝ շաղախված գաջով, կրով, կուպրով, լայն ու խոր հիմքով, լայն փողոցներով,

---

[1] Սուրբ Գիրքն ասում է, որ Սեմը հարյուր տարեկան էր, երբ ծնեց Արփաքսադին:

* ՄՕ.-ում հարյուր քառասուն:

** ՄՕ.-ում ի մեզ՝ մեր մեջ է:

*** ՄՕ.-ում հարյուր երեսունչորս:

[2] Սենայարը և Քաղանեն գտնվում են Միջագետքի ստորին մասում, արևելյան կողմում, որը հետո Բաբելոն կոչվեց, իսկ այժմ Իրաք-Արեբի:

լուսաբեր լայն պատուհաններով: Նաև ասում են, թե պատուհանների մոտ դրել էին լուսարձակներ: Անխոնջ վաստակով ամառ-ձմեռ աշխատում էին, և տեղի հողն էլ ձեռք էր տալիս. բոլոր կողմերից իջնողների և բարձրացողների խմբերը նման էին մրջյունների շարքերի, տղամարդիկ միմյանց էին ոգևորում, կանայք՝ իրենց ընկերներին: Եվ ոչ ոք չէր ասում, թե ինքն ավելի շատ աշխատեց, քան իր ընկերը, այլ ասում էր, որ ընկերն ավելի շատ աշխատեց, քան ինքը, որովհետև դեռևս անապական ու անցավ էր նրանց բնությունը: Մինչև Ռագավի քառասուներորդ տարին գործին դադար չտվեցին. նրանք աշխատում էին մինչև սրտխառնոցը, խեղդվելն ու մեռնելը և աշտարակը հասցրին մինչև անտես եթեր, որին թռչունը չի կարող հասնել, իսկ եթե ձգտի հասնել, թևակիզյալ կընկնի: Նաև ասում են, թե ոսկին հատակից սկսած մեջքերով տարան մինչև վերև, որը ջերմությունից հալվում էր, իսկ մարդիկ ջանում էին ինչ-որ հնարքներով անկեզ մնալ և գործը չդադարեցնել, մինչև որ ինքը՝ Տերը, ողորմելով թույլ էր տալիս դադար առնել անօգուտ ջանքերից: Ներբրովթի[1] տանը պահպանվել են զրույցներ, ըստ որոնց՝ նախ հրեշտակը եկավ Ներբրովթի մոտ, որը իշխան էր և շինարարների համար կերակուր էր որսում[2], ու ասաց նրան. «Ես եմ Աստծու հրեշտակը, արևելքի կողմնապետը,- այսպես է ասում երկնքի և երկրի տեր Աստվածը,- լռեցե՛ք, դադա՛ր առեք ինձ մոտ գալու ժամանակ, որովհետև չեք կարող, այլ ես կգամ ձեզ մոտ ժամանակին և ձեզ սանդուղք կտամ, որով դուք կարող եք գալ ինձ մոտ»: Բայց հրեշտակին չլսեցին, հետո ինքն ասաց իր էակիցներին. «Եկե՛ք մենք իջնենք և բաժանենք նրանց լեզուները»: Եվ քանի որ նրա ձեռքով ստեղծվածները, վախենալով նրա ցասումից, փախչում էին նրա մոտ, նրանց չպատժեց, այլ արբեցրեց դրախտի հոտով, որովհետև աշտարակի գլուխը դրախտի դիմաց էր: Եվ այսպես մխիթարվածները, հոգու անճառելի բուրմունքից զմայլվելով, մոռացան առաջին լեզուն: Աստված չաշխատեցրեց նրանց՝ երկրորդ անգամ ավերելով աշտարակը,

---

[1] Ինձ թվում է՝ Ներբրովթի տան զրույցները Ներբրովթի առասպելասավանդ պատմության գիրքն է, որը հիշում է նաև վրաց պատմիչը:

[2] Հին Օ.-ում հետո փոխված է՝ որ տայր [որ տալիս էր]:

այլ հողմին գործ հանձնարարեց ու նրանցից ոչ ոքի չսպանեց, քանի որ նրանց չկործանեց, այլ ցրեց: Եվ դրանից շատ բան բարի եղավ. նախ՝ մարդիկ իմացան իրենց տկարությունը և երկրորդ՝ գիտության և գեղեցկության պատճառները. առաջին դժվար ու կոպիտ լեզվից [առաջացան] հելլենացիների ավելի փափուկ, հռոմեացիների սաստկագին, հոների սպառնական, ասորիների աղաչական, պարսիկների պերճաբան, ալանների գեղեցկաձև լեզուները, զվարճալի գոթերենը [գուդը*], խլաձայն եգիպտականը, ճնճղուկաձայն հնդկականը, համեղ ու ամենազարդարուն հայկականը,- և ինչպես որ տեսակ-տեսակ գույներն ու հասակների տարբերություններն են գեղեցկություն ստեղծում, այդպես էլ լեզուների տարբերությունները: Եվ առաջին լեզուն մնաց Եբերի մոտ, որը չմիաբանեց ուրիշների հետ: Եվ ինչպես որ մեղքը մարդկանց բաժանեց երկու տան՝ Կայենինը և Սեթինը, այդպես էլ մարդիկ այստեղ երկու տեսակ եղան՝ Եբերը և յոթանասուներկու տանուտերերը՝ նմանությամբ միազոր և մեզ համար միշտ քաղցր Աստծուն, որը մեր պատճառով ստիպված՝ նաև պատժում է մեզ և կոչվում է Աստված ու Տեր: Եվ եթե կեսի հարության մեջ Եբերից են խոսում, ապա պետք է նաև ասել, որ ցեղեցեղ, շատ բանների կարիք ունեցող և բազմանուն մեր բնությունը, երբ մաքրվի ու պարզվի, պակասություն չի ունենա, և, ինչպես ասում է սուրբ Եղիշեն, կստանա հրեշտակների լեզուն, որով խոսում են Աստծու ու միմյանց հետ: Բայց Տերը լրացրեց մարդկանց կարիքները, իր խաչը տալով նրանց որպես աշտարակ՝ երկինք բարձրանալու համար և առաքինության օրինակները Հակոբի օրինակով ցույց տալով, այնտեղ կանչեց Հոգուն, որը փոխեց** նրանց լեզուները, մարդկանց փոխարեն կանչեց Աստծու հրեշտակներին, որպեսզի մարդիկ համաձայնեն բարձրանալ հրեշտակների մոտ: Ասում են, որ ազգերի համար սահմաններ կարգեց. ըստ Աստծու հրեշտակների թվի՝ նրանց բաժանեց հրեշտակների մեջ և բոլոր լեզուների համար Աստծու հրեշտակներից վերակացուներ նշանակեց, որպեսզի հեթանոսները ամենևին չօտարանան Աստծուց:

---

* Վ.-ում գուդ, ՄՈ.-ում գոթ:

** ՄՈ.-ում բաժանեց:

Զ. Բայց Բելը, գոռոզանալով իր վաթսուն կանգուն[1] անճոռնի հասակով, բոլոր իշխաններին հնազանդեցրեց իրեն, ինչպես պատծու, և ապա արձակեց, բացի Հայկից, որը Նոյի որդի Հաբեթի, նրա որդի Գամիրի, նրա որդի Թիրասի, նրա որդի Թորգոմի որդին էր: Հայկը Բելին չպաշտեց որպես աստված, այլ նրան չուն կոչեց*: Եվ որովհետև Բելը մեծ ամբոխով եկավ նրա վրա, Հայկը սպանեց նրան՝ խփելով պղնձյա տախտակով պատած նրա սրտին:

Իսկ Քամի որդիները, երբ գնացին իրենց երկրի կալվածքները, տեսան, որ Պաղեստինի և Հորդանանի կողմերը բարեբեր ու հարուստ են, իրենց ազգական Բելի զորությամբ բնակվեցին այնտեղ՝ զրկելով Սեմի որդիներին, և եղավ սաստիկ պատերազմ: Բացի դրանից, Հեկտանի որդիներ Սաբան, Եվիլան և Ուփիրը իմացան նրանց սպառազինության մասին և սկսեցին փնտրել իրենց համար ընդարձակ տեղ, որովհետև աճել ու բազմացել էին: Նրանց պատճառով մարդիկ գաղթում էին բնական ամրոցները, և ապա սկսեցին շինել բերդեր: Բայց պատերազմողները գտան ամրոցները գրավելու մեքենաներ, մինչև որ այդ ցեղերը ձանձրացան ու թողին նրանց՝ գրավելու այն երկիրը, որ նրանք կամենում էին: Սաբան առավ խընկաբեր երկիրը, որը Սաբա կոչեց, Ուփիրը՝ ոսկեբեր աշխարհը, որը Հնդկաստանն է, իսկ Եվիլան՝ թանկագին քարերով հարուստ երկիրը, որն իր անվամբ Եվիլատ կոչեց:

Իսկ Ռագավը հարյուր երեսուներկու տարեկանում ծնեց Սերուքին. Սերուքը հարյուր երեսուն տարեկանում ծնեց Նաքովրին: Սերուքը չինեց Սրուճը: Նաքովրը յոթանասունինը տարեկանում ծնեց Թարային: Թարան յոթանասուն տարեկանում ծնեց Աբրահամին: Եվ ասում են, որ այն ժամանակ էին

---

[1] Նաբուգոդոնոսորի արձանի հետ համեմատելով թվում է, որ Բելի բարձրությունը վաթսուն կանգուն էր: Մեր հեղինակը իր մյուս գրքերում հսկաների հասակը տասնհինգ կանգուն է ասում: Եվ այդ նույն չափով էլ Ջրհեղեղի ջուրը բարձրանալով լեռներից վերև՝ իսպառ բնաջնջում է նրանց:

* ՄՈ.-ում «այլ չուն կոչեց նրան» նախադասությունը չկա:

ապրում ամազոնները[1], որոնք զինված կանայք էին: Պատմում են, որ Թորգոմի ցեղի արու զավակներին կոտորելիս որպես թագավորության ժառանգ մնաց միայն մի կին, որը լինելով քաջասիրտ ու արի՝ կոտորում է բազմաթիվ ազգերի: Բայց գրժություն է առաջանում զորքի մեջ, և նա կոտորում է նրանց, կանանցից զորք կազմում ու կրկին գրավում է Ալիոն[2] քաղաքում գտնվող իր թագավորական աթոռը:

Է. Համառոտ կերպով հիշենք նաև մեր նախնի Հաբեթին, որը ջրհեղեղից հետո ծնեց Գամիրին, որից էլ գամիրներն են, Մագոգին, որից կելտերն ու գաղատացիներն են, Մեդային, որը շինեց Մարքը, Թոբելին, որից էլ թետալներն են, Մոսոքին, որ առավ Լյուբիկիան, Թիրասին, որից սերում են մեր Ասքանազն ու Թորգոմը, Հավանից հույներն են, Թարշիշից՝ վրացիներն ու տյուբենացիները, Կիտիմից՝ հռոմեացիներն ու լատինացիները: Թորգոմը[3] ծնեց Հայկին ու նրա յոթ եղբայրներին, Քարթլոսին, Կովկասին և ուրիշներին, որոնք ժառանգեցին հյուսիսը: Հայկից է սերում Արամանյակը, որի անունով կոչվեց Արագած լեռը, իսկ Արամանյակից սերում է Արամայիսը*, որը շինեց Արմավիրը: Արամայիսը ծնեց Ամասիային, որի անունով կոչվեց Մասիս լեռը: Ամասիան ծնեց Գեղամին, որը շինեց Գեղարքունին: Գեղամը ծնեց Սիսակին, որից էլ Սյունիքն է, և Հարմային, որը ծնեց Արամին, որի անունով էլ բոլոր ցեղերը մեզ կոչում են Արմեն: Եվ նա ընդարձակեց Հայաստանի սահմանները՝ նվաճելով կապադովկացիների ու Պոնտոնի[1] կողմերը, որ Արամանյակ էր կոչվում: Եվ Արամանյակից մինչև Պոնտոս ընկած է Առաջին Հայքը, Պոնտոսից մինչև Մելտենի քաղաքը՝ Երկրորդ Հայքը, այնտեղից մինչև Մոփաց գավառը՝ Երրորդ Հայքը, այնտեղից մինչև Մարտիրոսաց քաղաքն ու Աղձնիք՝ Չորրորդ Հայքը, իսկ իր սեփական աշխարհը կոչում է Մեծ Հայք: Նա ծնեց Արա Գեղեցիկին, որը սպանվեց Շամիրամի կողմից՝ թողնելով Անուշավան որդուն, որին հաջորդում են Պարետը, Արբակը, Զավանը, Փառանը[2], Սուրը՝ Հեսուի օրերում, Հոնակը, Համբակը, Առնակը, Նորայրը, Վստամը, Կարը, Գռակը[3], Հուանը, Ընձակը, Գռակը[4], Հավանը, Զարմայրը, որը Իլիական պատերազմում մեռնում է եթովպացիների զորքի հետ միասին: Պերճը՝ Դավիթ արքայի օրերում, Արբունը, Հույնը, Հուսակը, Կայպակը, որին պսակում է Վարբակես Մարը, որը թագը* խլելով Սարդանապալեից՝ տիրում է Ասորեստանին և Նինվեին: Սրա մոտ եկան Սենեքերիմի որդիները և պատվի արժանացան նաև Պարույրի կողմից: Նրան հաջորդում է իր որդին՝ Հրաչեն, որը Նաբուգոդոնոսորի հետ Երուսաղեմում էր գտնվում. նա Շամբատին իր հետ բերեց Հայաստան, որից սերեց Բագրատունյաց ցեղը: Հրաչեին հաջորդում են Փառնավազը**, Պաճույճը, Կայինակը, Փովան, Հայկակը, Երվանդը, որը ծնեց մեծ Տիգրանին, որը սպանեց Աժդահակին և բռնեց Կրիսոսին*** ու բաց թողեց: Այնուհետև գալիս են Բաբը, Տիրանը, Վահագնը, Առավանը,

---

1 Ամազոնների (կռվող կանանց) մասին կան զանազան առասպելներ ու զրույցներ: Նրանց երկիրը հավանաբար ընկած էր Պոնտոսի Թերմոդոն գետի ավազանում, որն այժմ կոչվում է Թերմե-չայ, որտեղ ցարդ լսվում է Մազոնդաղ լեռան անունը:

2 Ալիոն քաղաքը նույն Իլիոն, այսինքն՝ Տրովա քաղաքն է:

3 Ըստ Ս. գրքի՝ Թորգոմը Հաբեթի որդի Գամերի որդին է: Ըստ Խորենացու (որն ասում է ըստ Աբյուդենոսի և Մար Աբասի)՝ Թորգոմը Գամերի որդի Թիրասի, նրա որդի Հայկի հայրն էր, թեև, ինչպես ասում է ինքը Խորենացին, Ս. Գրքի մեր թարգմանության մեջ և այլ տեղերում այդ բանը չկա: Ս. գիրքը Ասքանազ Գոմերի որդին է համարում, իսկ մեր պատմիչները համարում են Թիրասի որդին՝ չփոթելով կամ էլ մանրամասնորեն կարգելով Գոմերի ազգաբանությունը և համանուն եղբորորդիներին, որոնց և ուրիշ շատերին անտեսում է Ս. գիրքը:

* Ե՛վ վենետիկյան, և՛ մոսկովյան օրինակներում Արմանյակ, Արմայիս:

1 Ակնարկում է Խորենացու խոսքը (Ա., ժդ.). «Այդ երկրամասը՝ Պոնտոնը (Բրոդին), (հույները) կոչում են Արմենիա, որ թարգմանվում է Հայք»: Մեր հերինակը Ա Հայքը կամ Կեսարիայի գավառը համարում է Արամանյակ կոչվածը: Խորենացին և ուրիշները Արամանյակ գավառի տեղը նշում են այժմյան Ազշեհրովայի կողմերում, որ հայերը կոչում են Աշխարհաբերդ:

2 Օ.-ում Փառնան:

3 ՕՕ.-ում Կարգռակ կամ Կարդռակ [ՄՕ.-ում Կաքդռակ]:

4 Հնում Հուակ.... Գլակ [ՄՕ.-ում Գռակ]:

* ՄՕ.-ում **գթագաւորն**՝ թագավորին:

** ՄՕ.-ում **Փառնաւազ**՝ Փառնվազ:

*** ՄՕ.-ում Կրեսաս:

որից սերում են Առավեղյանները, Ներսեհը, Զարեհը, Արմոգը, Գայգամը, Վանը, Վահեն, որին սպանեց Ալեքսանդր Մակեդոնացին:

Մեզ մնաց ասելու, որ Քամից են սերում Քուշը, Մեսրիմը, Ներբրովթը, այն է՝ Բելը, Բաբը, Անեբիսը, Արբելը, Քայաղը, մյուս Աբելը, Նինոսը՝ Շամիրամի ամուսինը:

Ը. Թվարկենք նաև թագավորների շարքը: Բաբելոնում Սերուքի հիսունվեցերորդ տարում առաջինը թագավորեց Ներբրովթը՝ պսակվելով հյուսած թագով և ոչ թե կռածո: Սա շինեց Շոշ քաղաքը, որ անվանում են Ասպահան: Նա սպանվեց Թորգոմի որդի Հայկի կողմից: Հետո թագավորեց Թիրոս քաղդեացին, որի օրոք զարգացան ոսկեհանության ու արծաթագործության արհեստները: Նրանից հետո յոթանասուներկու տարի թագավորեց Սամիրոսը որը Սեմի ցեղից էր: Նա սկսեց պատրաստել գրով դրվագված դահեկան և դրամ իր անունով: Նրա օրոք զարգացան քանդակագործությունը, ջուլհակագործությունը, չափ ու կշիռը և այլ արհեստներ: Մենադրոս* մոգը նրա մասին ասում է, թե նա երեք աչք ուներ: Նաքովրի քսանհինգերորդ տարում ճգնում էր Հորը՝ Եսավի որդի Ռագուելի, նրա որդի Զարեհի որդին, որը երեսունութ տարի զատերազմելով սատանայի դեմ, հաղթեց համբերությամբ ու փառավորվեց: Թարայի յոթերորդ տարում թագավորեց Արփիազատը, տասնութ տարի, իսկ նրանից հետո՝ Վիլոս Աթուրացին, վաթսունութ տարի՝ աթոռը Բաբելոնից տեղափոխելով Աթուրիա, այն է՝ Նինվե, բայց ոմն Քսարոս թագավորեց Բաբելոնում: Եվ Թարայի եղբայր Սահերոնը սպանեց նրան՝ Կայնան կուռքը հանելու պատճառով, որովհետև նա քրմապետ էր: Այստեղ շինվեց Դամասկոսը Հեթացի Արամի կողմից: Աբրահամի մոր անունը Մալքաթու էր: Աբրահամին ծնելուց տասը տարի հետո Թարան ծնեց Սառային իր կին Զրմրութից և ոչ թե Աբրահամի մորից, ինչպես ինքն ասաց Աբիմելեքին. «Իմ քույրն է, ասում է, հորից և ոչ մորից»: Աբրահամը տասնհինգ տարեկանից մինչև յոթանասուն տարեկանը փնտրեց Աստծուն, քանի որ քաղդեացիների հարուստ և շատ

* ՄՕ.-ում Մենանդրոս:

օգտակար երկիրը նրանց դրդեց ամեն մի չարիքի, որին այցելեց Աստված և բազմաթիվ սերմնագուռամների հրամայեց արածել նրանց դաշտերն ու այգիները երկար ժամանակ: Ամեն մարդ քիչ էր աշխատում և քիչ պաշար էր ունենում, և մարդիկ ընկան աղքատության մեջ: Աբրահամը իր հայրենիքի պահապանն էր, գիշերը ուսումնասիրում էր աստղագիտությունը, իսկ ցերեկը աշխատում էր պահպանել դաշտերը: Մարդիկ չնայած իրենց պաշտելի աստվածներին մատուցում էին ամեն տեսակի զոհեր, ուխտեր ու աղոթքներ, բայց նրանց դրությունը չէր թեթևանում: Նույն բանն անում էր նաև Աբրահամը և ապա խորհում, թե այդ պատուհասներն արդյո՞ք մեր պաշտելիներից չեն, որովհետև իրենք չեն կարող վերացնել, նաև պետք է կարծել, որ դրանք նաև աստղերի ազդեցությունից չեն, որոնք միշտ շարժման մեջ են և ծառայության տակ: Ուրեմն հայտնի է, որ կա դրանց կառավարող մեկը, որ մեզ անծանոթ է: Եվ ապա նա սկսեց աղաչանքով ասել. «Անծանոթ Աստված՝ ամեն ինչի և այս թռչունների արարիչ, դու հալածի՛ր սրանց», և իսկույն թռչուններն անհայտացան: Եվ Աբրահամն ասաց. «Ահա գտանք Աստծուն. օրհնյալ է քո տերությունը, և քո փառքը կլցնի ամբողջ աշխարհը»: Այդ բանը նա պատմեց իր հոր տանը, բայց ոչ ոք դրա վրա ուշադրություն չդարձրեց: Այն ժամանակ մեռավ Վիլոս թագավորը, և թագն առավ նրա որդի Նինոսը, որը շինեց իր հոր ոսկեղեն կառքը, ընդարձակեց Աթուր քաղաքը և իր անունով կոչեց Նինվե:

Սրա ժամանակ Մելքիսեդեկը[1] շինեց Երուսաղեմը, իսկ Աբրահամը չէր դադարում Աստծու հայտնությունը փնտրելուց: Աստված լսեց նրան, և ինչքան կարող էր տանել Աբրահամը, Աստված հայտնվեց նրան և ասաց. «Դո՛ւրս ելիր քո երկրից ու քո ցեղի միջից, և ես քեզ կտանեմ ձեր զրկված տեղը և այն կտամ քեզ ու քո զավակին»: Աբրահամն այդ բանն ասաց իր հորը, և նրանք դուրս ելան ու եկան մինչև Խառան ու այնտեղ տուն ստացան: Թարան այնտեղ շինեց կռատուն, որն այրեց Աբրահամը, իսկ նրա եղբայր Առանը կամեցավ հանգցնել կրակը, բայց ինքն այրվեց: Ոմանք ասում են, թե ջորին նա

[1] Ըստ ավանդության՝ Մելքիսեդեկը Սեմի որդի Արփաքսադի, նրա որդի Մելքեոսի որդին էր:

հնարեց և որի պատճառով էլ մեռավ Տիրոջ կողմից:

Եվ դարձյալ Աբրահամին է հասնում Աստծու ձայնը՝ դուրս գալ Խառանից, և նա դուրս եկավ՝ ըստ Տիրոջ խոսքի: Ասում են, թե Աբրահամը այլ կին ուներ* և Օվրեստես անունով որդի, որոնց բոլորին թողնելով՝ յոթանասունհինգ տարեկանում գնաց Պաղեստինից և ութսունութ տարեկանում հասավ Եգիպտոս ու այնտեղից դուրս եկավ՝ չմոռացվելով Տիրոջ կողմից: Երբ նա եղավ հարյուր տասնյոթ** տարեկան, իր որդուն բերեց զոհ մատուցելու: Հարյուր քառասունութ*** տարեկանում նա կնության առավ Կենտուրին**** և նրանից վեց որդի ունեցավ: Նա վախճանվեց հարյուր յոթանասունհինգերորդ տարեկանում՝ Հակոբի երեսունյոթերորդ տարում: Քառասուն տարեկանում Իսահակն առավ Ռեբեկային, որը վաթսուն տարեկանում հղիացավ և գնաց հարցնելու Մելքիսեդեկին, վերջինս նրան ասաց. «Քո արգանդում երկու ազգ կա, երկու ժողովուրդ»: Սահակի յոթանասուներկուերորդ տարում Եգիպտոսում Ապիսը տիրացավ տասնհինգերորդ***** հարբսությանը և աստված համարվեց. նրան ոմանք Սարապիս են անվանում: Սահակի հարյուր երեսունյոթերորդ տարում Հակոբը գնաց Խառան, Լաբանի մոտ, և ութսուն տարեկանում կնության առավ Լաբանի դուստր Լիային: Հակոբի ժամանակ Եգիպտոսի Փորոն****** թագավորը օրենքներ և դատավորներ կարգեց, իսկ Օվգեգիսը Ատտիկեում չինեց Ելևսինեյան*******: Հակոբը հարյուր տարեկանում բարձրացավ իր հայր Իսահակի մոտ, և Ղևին [այդ ժամանակ] տասնմեկ տարեկան էր, քանի որ նրան ծնել էր ութսունիններորդ տարեկանում: Տասնյոթերորդ տարում Հովսեփը վաճառվեց, երեսուներորդ տարում կանգնեց Փարավոնի առաջ: Հարյուր երեսուներորդ տարում

* ՄՕ.-ում կին տանիք՝ ամուսնանալ:
** ՄՕ.-ում հարյուր տասնհինգ:
*** ՄՕ.-ում հարյուր քսանութ:
**** ՄՕ.-ում Քետուրա:
***** ՄՕ.-ում տասներորդ:
****** ՄՕ.-ում Փարավոն:
******* ՄՕ.-ում Եվսփա:

Հակոբն իջավ Եգիպտոս. հարյուր քառասունյոթերորդ տարում մեռավ: Ղևին քառասունվեց տարեկանում ծնեց Կահաթին: Ոմանք ասում են, թե Հոբի փորձանքն այստեղից է գալիս: Կահաթը վաթսուն տարեկանում ծնեց Ամրամին: Ամրամը յոթանասուն տարեկանում ծնեց Մովսեսին: Հովսեփը վախճանվեց հարյուր տասը տարեկանում՝ Ամրամի վեցերորդ և Աստծու ավետիքի երկու հարյուր վաթսունվեցերորդ տարում: Այդ տարվանից սկսած Եգիպտոսում տասներեք տարի թագավորեց Քեբրոնը, իսկ նրանից հետո՝ Մենափտիսը, քառասուներեք տարի: Նա գետում խեղդում էր Իսրայելի երեխաներին, որոնցից փրկվեց Մովսեսը, որին վերցրեց նույն թագավորի դուստր Թերմոտիսը, որը դարձավ Մեմփիս քաղաքի Քանդար թագավորի կինը. դա Աստծու ավետիքի երեք հարյուր հիսուներորդ տարին էր: Մովսեսը երբ տասը տարեկան եղավ, տրվեց ուման Հանեսին ու Համրեսին*: Մովսեսի քսաներկուերորդ տարում Իսրայելի որդիներն սկսեցին աղյուսագործությունը: Քսանութերորդ տարում Մովսեսը իշխան եղավ և շինեց Թերմուպոլիս քաղաքը՝ Թերմոտիսի անունով, որին նաև Մառիս էին կոչում:

Թ. Իսկ եթովպացիները, որոնք հարկատու էին եգիպտացիներին, ապստամբելով ասպատակեցին և գերեցին Եգիպտոսն ու Մովսեսի մայրագրին [մայրացուին]: Մովսեսը գնալով պատերազմեց տասը տարի, առավ նրանց թագուհի Թեսբասին, իր մորը և վերադարձավ Եգիպտոս: Նրան նախանձեց Մառիսի, այն է՝ Թերմոտիսի ամուսինը, և երբ մեռավ Մառիսը, նրան թաղեց Մովսեսը: Եվ նրա ամուսինն ուղարկեց Իսրայելի չարչարիչ Քսանտիսին՝ սպանելու Մովսեսին, բայց Մովսեսը սպանեց նրան և փախավ Մադիամ: Հանեսն ու Համրեսը վերցրին Իսրայելի որդիներին և նրանց անապատով տարան տասնհինգ օրվա ճանապարհ ու տասնհինգ տարում չինեցին իրենց դրախտը: Շենքի կառուցումն ավարտելուց հետո Իսրայելի որդիներից վերցրին ինը հարյուր ութսուն երեխա և զոհեցին դևերին: Հավաքվեցին նրանց մոտ, դրախտին պահապաններ նշանակեցին, և դրանից հետո դևերն է՛լ ավելի հնազանդվե-

* ՄՕ.-ում Հանեսին ու Համրեսին:

ցին կախարդներին: Ասում են, որ չորս հարյուր դև չհնազանդվեց, մինչև որ կրկին նրանց անունով չզոհեցին, և ապա գալով առան նրանց հավանությունը, բայց փետրվար [չվոտ]* ամսին նրանք գործում են անհնազանդորեն, իրենց կամքով և տանում են մարդկանցից ոմանց:

Իսկ Մովսեսը կնության առավ այն Կենդուրի** որդիներից մեկի՝ Հեսկանի*** որդի Դադանի, նրա որդի Ռագուելի դուստր Սեփովրային և նրանից ունեցավ երկու որդի: Եվ ասում են, որ այնտեղ, Թեսալիայում**** է եղել ջրհեղեղը Դևկալիոնի[1] ժամանակ, իսկ Եթովպիայում Փայեթոնի ժամանակ եղել են հրդեհներ և տարբեր տեղերում բազում այլ ավերածություններ, ինչպես որ պատմում է Պլատոնը: Դևկալիոնը թագավորում էր պառնասցիների կողմերում: Յոթանասուն տարեկան լինելով՝ Մովսեսը արժանի եղավ տեսնելու Աստծուն, որը հրամայում է նրան գնալ Եգիպտոս և դուրս հանել Իսրայելին: Բայց նա ուշանում է տասը տարի և լինելով ութսուն տարեկան՝ գնում է Եգիպտոս, Աստծու ավետիքի չորս հարյուր երեսուներորդ տարում: Աբրահամի յոթանասունհինգերորդ***** տարուց սկսած կամ Հակոբի Եգիպտոս մտնելուց երկու հարյուր հինգ տարի առաջ երկու հարյուր քսանյոթ****** տարի մնացին Եգիպտոսում: Եգիպտացիները, տասը հարվածով ստիպելով, դուրս հանեցին Իսրայելի որդիներին՝ դրախտից դուրս գալուց հետո երեք հազար ութ հարյուր քառասուներկուերորդ տարում: Նրանք դուրս եկան հինգշաբթի օրը և կիրակի օրն անցան Կարմիր ծովով, և այստեղից էլ կոչեցին եբրայեցիք, որովհետև այն թարգմանվում է Եբրայն անցիկ: Պարզևով նոր լեզու ստացան և նրանով երգում էին հին օրհնանքը, որը նման էր նրանց հայրենի լեզվին: Եգիպտոսում յոթ ամիս երկրաշարժ եղավ, փուլ եկան շատ շենքեր, և բնակիչները դուրս ելան շենքերից: Նույն տարում Ամաղեկը պարտվեց Հեսուից, և նույն տարվա երրորդ ամսին Մովսեսը բարձրացավ Սինա լեռը: Եբրայեցի Ապոլիմոս իմաստասերն ասում է, թե Մովսեսը, Աստծու կողմից իմաստնանալով, քսաներկու տառ ստեղծեց, և դրանցով Աստված գրեց տասը պատգամներն ու տվեց Մովսեսին: Մովսեսը դրանցով նախ՝ գրեց Ելից գիրքը և ապա՝ Ծննդոց գրքի քսաներկու գլուխները և երեք այլ գրքեր: Եվ զգայուն արարածների օրինակը Մովսեսը ցույց տվեց խորանով, որ կատարվեց յոթ ամիս յոթնօրյա արարածների հետ: Մովսեսի հինգ գրքերն ունեն երեք հազար յոթ հարյուր երեսուն տարվա պատմություն, ըստ Եվսեբիոսի:

Ժ. Աստվածածանոթ Մովսեսը վախճանվեց հարյուր քսան տարեկանում, և նրա իշխանությունը խլեց Հեսու Նավեն, քսանյոթ տարի: Հեսուի վեցերորդ տարում Եգիպտոսի թագավորի եղբայր Դավանոսը եգիպտացիների հիսուն դուստրերով կոտորեց իր եղբոր հիսուն որդիներին, ազատվեց միայն Լինգոսը* և թագավորեց: Նրա մասին ասում են, որ ամենուրեք աչքի ընկավ**, որովհետև իմաստուն էր: Հեսուի տասնութերորդ տարում Փյունիկսն ու Կադմոսը, թեբացիների երկրից գալով Ասորիք, թագավորեցին: Եվ երկրամասը կոչվեց Փյունիկե և Կադմոսի տուն: Նրանք այնտեղ գիտություն տարածեցին. այսպես, օրինակ՝ Կիկրոպիսը Մեմփիս քաղաքից Աթենքի բնակիչներ բերեց և գիտության տուն ստեղծեց, նա հնարեց նաև հունական գիրը, որը ոմանք Կադմոսին են վերագրում: Հեսուն վախճանվեց հարյուր յոթ տարեկանում, և Գոթոնիելը դատավոր եղավ քառասուն տարի: Աֆրիկանոսը Հեսուի և Գոթոնիելի արանքում դնում է երեսուն տարի, իսկ հույները հիսուն տարի են ասում Գոթոնիելին, որովհետև ութ տարի ծառայեցին Քուսին, որը հաշվում են դրա հետ: Այստեղ թագավորեց արգիացիների Պելասգոսը, որտեղից Փիլս-

---

* ՄՕ.-ում չուոտ՝ չվոտ:

** ՄՕ.-ում Քեստուր:

*** ՄՕ.-ում Հեկտան:

**** ՄՕ.-ում Թեստալիա:

[1] Թեսալիայի Դևկալիոն թագավորը կառավարել է ԺԶ դարում փրկչի թվականությունից առաջ: Նրա ժամանակ հիշատակվում է Հայտնի ջրհեղեղը, որը հիշում է Պլատոնը Ատլանտ կղզու կամ աշխարհի մասին ճառելիս: Իսկ Փայեթոնը, ըստ առասպելների, արեգակի որդին էր, որի կառքը տխմարաբար վարվելով ու չեղվելով, հրկիզում է երկիրը: Այդ պատճառով նա չանթահարվեց Արամազդի ձեռքով և ընկավ Իտալիայի Պադոս (Պո) գետի մեջ:

***** ՄՕ.-ում յոթանասուն:

****** ՄՕ.-ում երկու հարյուր քառասունհինգ:

---

* ՄՕ.-ում Լիմբոս:

** ՄՕ.-ում քաջացեալ՝ հերոսանալով:

դոսն* էր՝ բոլոր կենդանիների բարոյախոսը[1]: Գոթոնիելից հետո իսրայելցիները տասնութ** տարի ծառայեցին Մովաբի Եղդոմ*** արքային, և այդ ժամանակը միացնում են Ավոդի**** տարիներին, որը դատեց Իսրայելին ութսուն տարի: Այստեղ լրացավ չորս հազար տարին Ադամից հետո:

Ավոդից հետո քսան տարի ծառայեցին այլազգիներին: Հզորացավ Սամեգարը և փղշտացիներից վեց հարյուր տղամարդու սպանեց արորի մաճով: Իսկ Իսրայելին քառասուն տարի դատեց Բարակը Դեբրովայի հետ՝ ծառայելով այլազգիներին: Սրա օրոք աթենացիների սպարապետ մնաց Հումը, և նրանք էլ անվանվեցին հույն[2]: Սրա օրերում հարյուր իմաստասեր[3] մի գիշերում տեսան մի տեսիլ՝ յոթ արեգակ, որը կին Սաբիլեն մեկնեց յոթ դարեր իմաստով, իսկ վեցերորդը՝ Քրիստոսով, որի ճառագայթները խավարեցնում էին մյուս արևները: Բարակից հետո յոթ տարի իշխեցին մադիանացիները*****, և Իսրայելին դատեց Գեդեոնը, քառասուն տարի՝ դրան միացնելով նաև այլազգիներին ծառայելը: Այստեղ հայտնվեց Դեդաղոս[4] հյուսն ու նկարիչը, որի մասին ասում էին, թե նրա նկարները կարծես շարժվում են: Աբիմելիքը կոտորեց Գեդեոնի յոթանասուն որդիներին և Իսրայելին դատեց երեք տարի, նրանից հետո եղավ Թովղան, քսաներկու տարի: Եվ ասում են, որ Հերակլեսը թալանեց Իլիոնը՝ սպանելով Անտեոսին[1], որին երկրածին էին համարում: Ցայիր Գաղատացին [իշխեց] քսաներկու տարի, նրանից հետո ծառայեցին այլազգիներին ութ տարի (ոմանք տասնութ տարի են ասում) և միացան ուրիշներին: Հեփթային՝ վեց տարի, Ալեքսանդրոսը առևանգեց Ելենին, և այդ պատճառով տասը տարի պատերազմ եղավ: Իլիոնը գրավելու ժամանակ Հերակլեսը խոցվելով իրեն գցեց կրակի մեջ: Եսեբոն՝ յոթ տարի: Նրանից հետո՝ Ելոնը տասը տարի, որը չկա յոթանասնից թարգմանության մեջ, այլ կա եբրայական օրինակում, Լաբդոնը*՝ ութ տարի: Հետո թագավորեցին հռոմեացիները, որոնց առաջին թագավորի անունը Անիաս էր: Լաբդոնից հետո քառասուն տարի ծառայեցին փղշտացիներին, և ապա բարձրացավ Սամսոնը, որն ազատեց նրանց և դատեց քսան տարի: Սրա հինգերորդ** տարում եղան Հռութի իրադարձությունները: Նրա օրոք մեռավ Զևսը և թաղվեց Կրետեում, որի մասին ասում են, որ ապրեց ութ հարյուր հիսուն տարի, որ և երկարակեցության համար Զևս կոչվեց, որը ծնունդից սկսած Դիա էր կոչվում: Եբրայեցիներն ասում են, որ Սամսոնի դատավարությունը [տևել է] քառասուն տարի: Հոհանեսը Սամսոնից հետո ոմն Եմագորի նշանակում է դատավոր քառասուն տարով: Բայց Աֆրիկանոսն ասում էր, թե քառասուն տարի դատավոր չկար, և խաղաղություն էր [տիրում]: Հեղին [դատավոր եղավ] քսան տարի՝ ըստ յոթանասնից օրինակի, իսկ ըստ ասորականի՝ քառասուն: Բայց պետք է իմանալ***, որ սուրբ առաքյալը**** մինչև Սամվելը դնում է չորս հարյուր հիսուն տարի, և դա այդպես կլինի այն ժամանակ, եթե Հեսուի և Սամվելի տարիները չհաշվվեն, քանզի Սամվելը Իսրայելին դատեց քառասուն տարի՝

---

* ՄՕ.-ում Փիլադոս:

[1] Փիլիսոդոս անունով մի պատմագիր հիշատակվում է Դ դարում Քրիստոսից առաջ, Դիոնիսիոս Կրտսերի օրոք Սիրակուզայում, իսկ կենդանիների մասին առակագիրը կամ եզոպոսի նախօրինակը ինձ ծանոթ չէ:

** ՄՕ.-ում տասնյոթ:

*** ՄՕ.-ում Եղքոմ:

**** ՄՕ.-ում Ավոդեոս:

[2] Ըստ Եվսեբիոսի: Բայց մենք հույներին գիտենք Հաբեթի որդի Հավանի անունից, իսկ Հումը աթենացիների զորավարն էր, որ մարտնչեց Թրակացի Եվմոլպեոսի հետ, որը փախել-եկել էր Ատտիկեից:

[3] Մեզ անծանոթ են հարյուր իմաստասերները, իսկ կին Սաբիլեն Սիբիլլա մարգարեուհին էր հեթանոսների մեջ, որոնք յոթ կամ ինն էին: Նրանց անունով եղած մատյանը քրիստոնյա աղանդավորների գործ է:

***** ՄՕ.-ում մակեդոնացիները:

[4] Դեդալը աթենացի հյուսն ու նկարիչ է, որը կառուցեց Մինով արքայի բավիրը (լաբիրինթոսը) Կրետեում:

---

[1] Անտեոսը լիբիացի հսկա էր, երկրի և ծովի (Պիսիդոնի) ծնունդը, որին խեղդամահ արեց Հերակլեսը՝ ըստ առասպելի:

* ՄՕ.-ում Աբդոն:

** ՄՕ.-ում քսանհինգերորդ:

*** ՎՕ.-ում [illegible]՝ պետք է իմանաս, ՄՕ.-ում [illegible]՝ պետք է գրտնես:

**** ՄՕ.-ում [illegible]՝ առաքյալները:

ըստ եբրայական օրինակի, իսկ ըստ Յոթանասնից օրինակի՝ քսան տարի, որովհետև նրա քսաներորդ տարում որոնեցին թագավոր, և դրանից հետո է նշվում թագավորների հաջորդականությունը: Քանի դեռ կենդանի էր Սամվելը, Սավուղի տարիները, որոնք հաճո չէին Աստծուն, բացի երկու տարուց, վերագրված էին Սամվելին: Սավուղը թագավորեց քառասուն տարի: Նրա թագավորության տասներորդ տարում ծնվեց Դավիթը, քսաներեքերորդ տարում օծվեց, իսկ Գողիաթին սպանելու ժամանակ նա քսանութ տարեկան էր: Դավթի ծննդյան երեսուներորդ տարում մեռավ Սամվելը: Սամվելի մահից հինգ տարի հետո սպանվեցին Սավուղն ու Հովնաթանը, և քառասուն տարի թագավորեց Դավիթը: Իր թագավորության տասներորդ տարում Աբեդդարի* տնից հանեց տապանակը, երբ քահանայապետն էր Աբիաթարը, իսկ մարգարեները՝ Գադը, Ասափը և Նաթանը, որը հանդիմանում էր** Դավթին: Իր թագավորության երեսունութերորդ տարում Դավիթը զևտացիներից ընտրեց հարյուր ութսունութ*** մարդու և բաժանեց քսանչորս խմբի, ամեն խմբում [կարգելով] տասներկու սաղմոսասացներ և Տիրոջ տապանակի սպասավորներ:

Ապրելով յոթանասուն տարի՝ նա վախճանվում է՝ թագը տալով Սողոմոնին, քառասուն տարի: Վերջինս տասներկու տարեկան էր, և առաջին տարում ծնվեց Ռոբովամը ամանացի Նաամա կնոջից: Իր թագավորության չորրորդ տարում նա սկսեց շինել տաճարը, Եգիպտոսից նրանց դուրս գալուց չորս հարյուր ութսուն տարի հետո՝ ըստ յոթանասնից թարգմանության գրքերի, իսկ ըստ եբրայական օրինակի՝ չորս հարյուր քառասուն տարի հետո: Բայց ճիշտը այսպիսին է. քառասուն տարի Մովսեսինը և քսանյոթ տարի Հեսուինը, որոնք միասին կազմում են վաթսունյոթ տարի, չորս հարյուր հիսուն տարի դատավորներինը՝ այլազգիներին ծառայելով, որը հինգ հարյուր տասնյոթ**** տարի է: Նրանից հետո՝ Շմուելն ու Շա-

* ՄՕ.-ում Աբիաթար:

** ՄՕ.-ում [illegible]՝ խնամում էր:

*** ՄՕ.-ում երկու հարյուր ութսունութ:

**** ՄՕ.-ում հինգ հարյուր տասնհինգ:

վուղը*, քառասուն տարի, քառասուն տարի էլ Դավթինը, լինում է իննսունյոթ** տարի և չորս տարի էլ Սողոմոնինը,- բոլորը միասին կազմում է վեց հարյուր մեկ տարի: Տաճարի չափը վաթսուն կանգուն է, լայնությունը՝ քսան, բարձրությունը՝ հարյուր քսան: Նա շինեց յոթ քաղաք: Նրա մոտ եկավ հարավի թագուհին, գովեց տաճարի սպասավորներին, Դավթի կարգած քսանչորս դասերը, որ Սողոմոնը տասներկու դասդարձրեց. մի դասում քսանչորս հազար մարդ, վեց հազար դատավոր, չորս հազար քնարահար, չորս հազար դռնապան և այլ հորինվածքներ: Նրա մոտից գնաց այն տիկինը: Սողոմոնը իր թագավորության երեսունյոթերորդ տարում մեղք գործեց և մեռավ հիսուներկու տարեկանում: [Այդ ժամանակ] մարգարեներն էին Սադովկը, Աքիասը և Սամյան***: Իմաստասերներն էին Հոմերոսն ու Սիդոսը, քահանայապետը՝ Սադովկը Եղիազարի ցեղից, իսկ ոմանք Թամարից են ասում, ինչպես որ գրված է թագավորությունների գրքերում: Փյունիկեցիների գրքում գրված է, թե Երուսաղեմում տաճարը շինվեց հարյուր քառասուներեք**** տարի առաջ, քան տյուրացիների Կարքեդոն քաղաքի կառուցումը: Սողոմոնն ու Քիրամը միմյանց առակներ էին գրում, և Քիրամը չէր կարողանում մեկնել Սողոմոնի առակները, բայց Տյուրոսում գտնվեց Աբդամանոս անունով մի մարդ, որը ոչ միայն կարողանում էր մեկնել, այլ նաև առակներ էր գրում Սողոմոնին, և Սողոմոնը ընկնում էր տարակուսանքի մեջ:

ԺԱ. Սողոմոնի որդի Ռոբովամը հորից հետո թագավորեց Հուդայում և Բենիամինում տասնյոթ տարի: Եվ այլ տասը ցեղեր իրենց թագավոր նշանակեցին Ռոբովամին*****, Նաբատի որդուն, Եփրեմի ցեղից: Սրա օրոք եգիպտական Սուսակիմ արքան եկավ, կողոպտեց Տիրոջ տաճարը և գնաց: Ռոբովամից հետո երեք տարի թագավորեց նրա որդի Աբիան, իսկ նրանից հետո՝ նրա որդի Ասան, քառասունմեկ տարի: Ռոբովամից

* ՄՕ.-ում Սամվել և Սավուղ:

** ՄՕ.-ում հինգ հարյուր իննսունյոթ:

*** ՄՕ.-ում Սամա:

**** ՄՕ.-ում հարյուր քառասունչորս:

***** ՄՕ.-ում Յերոբովամ Հերոբովամ:

հետո Իսրայելում երկու տարի թագավորեց նրա որդի Նաբատը, իսկ նրանից հետո՝ Բասասը, քսանչորս տարի: Նրանց ժամանակ մարգարեներն էին՝ Աքիան, Սամյան, Հովելը, Ազարիան (նույն ինքը Ադդովը), Անանիան, Հովանը, որին ուրիշները Զաքարիա են ասում, Եպիփանը նրան Իուդ է ասում, որին սպանեց առյուծը: Ասայի քսաներորդ տարում Իսրայելում երկու տարի թագավորեց Ելասը, որին սպանեց իր ծառա Զամբրին ու թագավորեց յոթ օր: Թագը խլեց Ամրին և թագավորեց տասներկու տարի: Նա չինեց Սամարիան, որը հետո կոչվեց Սեբաստիա, իսկ այժմ Մամլուզ: Ասայից հետո քսանինը տարի թագավորեց Հովսափատը, իսկ երկու տարի անց Իսրայելում քսաներեք տարի թագավորեց Ամրիի որդի Աքաաբը, որը կնության առավ Սիդոնի Իքթիլ* թագավորի դուստր Եզաբելին**: Հովսափատի քսանութներորդ տարում Իսրայելում մեկ տարի թագավորեց Ոքոզիան, նրանից հետո՝ նրա եղբայր Հովրամը, տասներկու տարի, նրանից հետո՝ Հեհուն, քսանութ տարի, նրանից հետո՝ Հովաքազը, տասնյոթ տարի: Հուդայում ութ տարի թագավորեց Հովրամը, նրանից հետո՝ մեկ տարի Ոքոզիան, Հովրամի յոթերորդ տարում վերը բարձրացավ Եղիան: Ոքոզիայից հետո [թագավորեց] նրա մայր Գոդոզիան, որը Եզաբելի դուստրն էր, և ապա Հովիդայա քահանայապետը Հուդայում թագավոր դարձրեց Ոքոզիայի որդի Հովասին, յոթ տարի: Մովսեսից հետո մնաց միայն Հովիդան, հարյուր երեսուն*** տարի: Նրա որդի Ազարիան մարգարեանում էր և հորից հետո եղավ քահանայապետ, որին սպանեց Հովասը իր թագավորության երեսուներորդ տարում. երեսունյոթերորդ**** տարում մեռավ Եղիսեն, իսկ իր թագավորության քառասուներորդ***** տարում սպանվեց Հովասը իր ծառաների կողմից, և Հուդայում քսանինը տարի թագավորեց Ամասիան: Նրա տասներորդ տարում տասնվեց տարի թագավորեց Հովասը, իսկ նրանից հետո՝

* ՄՕ.-ում Քթիլ:
** ՄՕ.-ում Հեզաբել:
*** ՄՕ.-ում հարյուր վեց:
**** ՄՕ.-ում երեսունհինգերորդ:
***** ՄՕ.-ում քսաներորդ:

Ռոբովամը, քառասուն տարի: Ոմանք ասում են, թե նա սպանեց Ամասիային, Երուսաղեմի պարսպից քանդեց չորս հարյուր կանգուն, և Հուդայում հիսուներկու տարի թագավորեց Ոզիան: Սկսած նրա քսաներորդ տարուց Իսրայելում թագավորում է Զաքարիան, նրանից հետո՝ Սելլոմը, մեկ տարի, իսկ նրանից հետո՝ Մանասեմը*, տասը տարի: Քսաներորդ տարում բորոտեց Ոզիան, և մինչև նրա մահը, քսանութ** տարի լռեց Եսային ու վերստին մարգարեություն արեց վաթսունմեկ տարի, իսկ լռությունից առաջ՝ քսանչորս տարի: Ոզիայի երեսունչորսերորդ*** տարում եկավ Փուան, Մանասեմից առավ ոսկու հազար քանքար: Եվ Ոզիայի քառասուներորդ տարուց սկսած Իսրայելում տասը տարի թագավորում է Փակեեն: Ոզիայի քառասունութերորդ տարում եկավ Թակղաթփաղսարը և գերեց տասը ցեղերի մեծ մասին: Ոզիայից հետո տասը տարի թագավորում է նրա որդի Հովնաթանը: Պորփյուրոսը[1] ճանաչվում է որպես պոետ, իսկ մարգարեներն էին Եսային, Հուանը, Ամովսը, Օվսեեն: Կուկրը[2] եգիպտացիների համար օրենքներ էր սահմանում, որի ժամանակ գառը խոսեց [մարդկային լեզվով]: Հովնաթանից**** հետո տասնվեց տարի թագավորում է Աքազը. սրա օրոք Փակեեն և Դամասկոսի Հռասոն արքան Երուսաղեմում կոտորեցին տասներկու բյուր մարդու: Աքազը վարձեց Թակղաթփաղսարին և եկավ ու գրավեց Դամասկոսը, սպանեց Դամասկոսի Հռասոն արքային, գերեց Եդոմին: Աքազի երկրորդ տարում Օվսեեն սպանեց Փակեեին և թագավորեց ինը տարի: Աքազի ութերորդ***** տարում ե-

* ՄՕ.-ում Սելում... Մանասե:
** ՄՕ.-ում քսանինը:
*** ՄՕ.-ում երեսուներորդ:
[1] Ոչ մի տեղ Պորփյուրոս անունով պոետ չի հիշատակվում: Ինձ թվում է, որ մեր հեղինակը նրան չփոթում է Որփևսի կամ Եսիոդոսի և կամ մեկ այլ պոետի հետ:
[2] ՕՕ.-ում Կուկը [ՄՕ.-ում Կուկրաքպիս] արքեպիսկոպոսն էր օրենքներ կարգում, իսկ ըստ Եվսեբիոսի՝ «Եգիպտական Բոքորիսն էր օրենքներ կարգում»:
**** ՄՕ.-ում Հովաթամ:
***** ՄՕ.-ում երեսուներորդ:

կավ Սաղմանասարը, հարկ դրեց Իսրայելի վրա և գնաց:

ԺԲ. Աքազից հետո թագավորում է Եզեքիան, որի երրորդ* տարում եկավ Սաղմանասարը, գրավեց Սամարիան, գերեց տասը ցեղերի և տարավ Բաբելոն: Եվ վերացվեց Իսրայելի թագավորությունը՝ գոյատևելով երկու հարյուր հիսուն տարի, որը Ադամից սկսած լինում է չորս հազար երեք հարյուր երեսուն տարի: [Թագավորներն էին] Ռոբովամը, Նաբատը, Բայասը, Ելան**, Զամբրին, Ամրին, Աքաաբը, Ոքոզիան, Հովրամը, Հեուն, որն սպանեց Հովրամին և իր մայր Եզաբելին, Հովաքազը, Հովազը***, Ռոբովամը****, Զաքարիան, Սելլումը*****, Մանասեմը******, Փակեեն, Փակեեն*******, Վերջին Օվսեեն: Եզեկիայի վեցերորդ տարում գերվեց Իսրայելը, որը Հուդայում թագավորեց քսանհինգ տարի: Նրա իններորդ******** տարում Հռոմելոսը շինեց Հռոմը: Մանասեն [թագավորեց] հիսուներեք տարի, Ամոնը՝ տասնյոթ տարի, Օսիան*********երեսունմեկ տարի, Հովաքազը՝ երեք ամիս**********, նրա եղբայր Եղիակիմը՝ տասնմեկ տարի, Հեքոնիան՝ երեք ամիս, Սեդեկիան՝ տասնմեկ տարի, որը գերվեց, և տաճարն էլ ավերվեց: Հուդայի թագավորների ամբողջ ժամանակաշրջանը չորս հարյուր երեսուներկու տարի է, իսկ տաճարի շենքը կանգուն մնաց չորս հարյուր քառասուներկու տարի:

Նաբուգոդոնոսորը իր թագավորության ութերորդ տարում տարավ Հեքոնիային և բանտարկեց՝ [բանտում պահելով] երեսունհինգ*********** տարի, քանզի Նաբուգոդոնոսորը՝ Նաբուպալասարի* որդին, թագավորեց քառասուներկու տարի: Ութերորդ տարում գերեց Հեքոնիային և պահեց բանտում իր թագավորության ամբողջ ժամանակաշրջանում, այն է՝ մնացած երեսունչորս տարին: Իլմարովդակը երեք տարով փոխարինելով իր հորը՝ իր թագավորության առաջին տարում բանտից ազատեց Հեքոնիային, որը [դրանից հետո] ուտում էր արքայի սեղանից: Նրանից հետո մեկ տարի թագավորեց նրա եղբայր Բաղդասարը, որի ժամանակ Դանիելը ընթերցեց քաղդեացիների թագավորության վերացման արձանագրությունը: Այդ թագավորությունը գրավեց մարերի Դարեհ արքան, որը, թվում է, Աժդահակն[1] է, որովհետև նրան կոչում ենք երկու անունով, որը Մարաստանում իր թագավորության երեսունվեցերորդ տարում տիրեց նաև քաղդեացիներին, երկու տարի: Պարսիկ Կյուրոսը սպանեց նրան և երեսուն տարի տիրեց Մարաստանին, Ասորիքին և քաղդեացիներին: Նրա մասին ասում են, որ նա առաջին տարում չարչարեց հրեաներին և սպանեց Անանիաներին: Երազում նրան չարչարեց Տերը, սպառնաց նրան, որից վախենալով՝ նա հրաման տվեց արձակել հրեա գերուն**՝ տաճարի սպասքները տալով Հուդայի հանդերձապետ Սամանասարին, ոսկյա և արծաթյա հազար չորս հարյուր քառասուներեք ամաններ, բայց Երուսաղեմ չբերվեց մինչև Զորաբաբելի գալը: Եվ այստեղ լրացավ Երեմիայի կողմից ասված յոթանասուն տարվա վճիռը, որը հաշվվում է Հովսիա արքայի տասնութերորդ տարուց, ինչպես որ Եզեկիելը երեսուն տարի է ասում Հեքոնիայի գերության հինգերորդ*** տարուց սկսած, երբ [Երեմիան] սկսեց մարգարեանալ, քանզի Հովսիան թագավորեց երեսունմեկ տարի, և տասնութերորդ տարում յոթանասուն տարվա վճիռը կայացվեց: Հովսիայի տասնչորս տարին և Հովակիմի տասնմեկ տարին միասին կազմում է քսանհինգ տարի, գերության հինգ տարին էլ հետը լինում է երեսուն, նաև Նաբուգոդոնոսորի երեսունչորս տարին, մնում է վաթսունչորս տարի, դրանցից բացի, ե-

* ՄՕ.-ում ութերորդ:

** ՄՕ.-ում Էլա:

*** ՄՕ.-ում Հովաս:

**** ՄՕ.-ում Հերոբովամ:

***** ՄՕ.-ում Սելում:

****** ՄՕ.-ում Մանայեմ:

******* ՄՕ.-ում մյուս Փակեեն:

******** ՄՕ.-ում երեսուներորդ:

********* ՄՕ.-ում Հովսիա:

********** ՄՕ.-ում երեք տարի:

********** ՄՕ.-ում երեսունյոթ:

* ՄՕ.-ում Բոպալասար. Մ. Էմինը ծանոթագրում է՝ Նաբոպալասար:

[1] Մարաստանի Դարեհ արքան արդարև Աժդահակն է:

** ՄՕ.-ում գերիներն՝ գերիներին:

*** ՄՕ.-ում յոթերորդ:

ռեքն էլ Իլմարոդայինն են, մեկը՝ Բաղդասարինը, երկուսը՝ Դարեհինը, ամբողջը կազմում է յոթանասուն տարի: Եվ որովհետև լրացել էր յոթանասունը, և Կյուրոսն ուշանում էր, Տերը բարկացավ նրա վրա: Եվ հրեշտակն ասում է Դանիելին. «Պարսից իշխանը կռվում է իմ դեմ՝ թույլ չտալով արձակել զերուն՝ ըստ քո աղոթքի»: Հրեաներն առաջին գալու ժամանակ հինգ* բյուր էին, որոնք կառուցեցին սուրբ պատարագի սեղանը և գցեցին տաճարի հիմքերը, բայց նեղվելով շրջակա ցեղերից, տաճարը մնաց անավարտ մինչև Դարեհ արքան: Կյուրոսից հետո ութ տարի [թագավորում է] նրա որդի Կամբյուսոսը. հրեաները Նաբուգոդոնոսոր սրան են անվանում. Մոգք երկու եղբայրներ՝ յոթ** ամիս: Դարեհ Վշտասպը***՝ երեսունվեց տարի. Դարեհի որդի Քսերքսեսը՝ քսանմեկ**** տարի: Սրա հոր երկրորդ տարում Զորաբաբելը գնաց Երուսաղեմ և չինեց տաճարը, նրա օրոք երկրորդ անգամ լրացավ յոթանասուն տարին, որին պետք է ավելացնել երկու տարի ևս տաճարի ավերումից հետո. Նաբուգոդոնոսորինը և որդիներինը՝ երեսուներկու տարի, Մար Դարեհինը՝ երկու, Կյուրոսինն ու որդունը՝ երեսունութ, և ամբողջը կազմում է յոթանասուներկու տարի: Դրան գումարելով Դարեհ երկրորդի տարիները՝ լինում է յոթանասունչորս տարի: Այդ տարիները ավելացրին հրեաների չարությունն ու ծուլությունը և ոչ Աստծու քաղցրությունը:

ԺԳ. Արտաշես երկայնաբազուկը [թագավորեց] քառասունմեկ տարի. նրա օրոք Եզրասը և Նոյեմի տակառապետը եկան Երուսաղեմ և չինեցին պարիսպը: Նրան հաջորդում են՝ Դարեհը, տասնինը***** տարի, Արտաշեսը, քառասուն տարի, նրա օրոք ապրում էր Իսթերը******. Արտաշես Ոքոսը, չորս տարի: Արշամա******* Դարեհը՝ վեց տարի, որին սպանեց Աղեքսանդրը և գահին ինքը մնաց ևս վեց տարի: Դարեհ Վշտասպի երկրորդ տարուց մինչև Աղեքսանդրի մահը լինում է հարյուր յոթանասունմեկ տարի[1]: Դրանից հետո Եգիպտոսում թագավորեցին՝ Պտղոմեոսը, որը Լագոսյան է կոչվում, քառասուն տարի, Պտղոմեոս Փիլադելփոսը՝ երեսունութ տարի, որի ժամանակ թարգմանվեցին հրեական գրքերը, Պտղոմեոս Եվերգետեսը՝ քսանչորս տարի, Պտղոմեոս Փիլուպատորը՝ քսանմեկ տարի, Պտղոմեոս Եպիփանեսը՝ քսաներկու տարի, Պտղոմեոս Փիլոպատորը՝ երեսուներեք տարի, որի օրոք Անտիոքոս Եպիփանեսը, որը թագավորեց տասնմեկ* տարի, նեղում էր հրեաներին, Անտիոքոս Եվպատորը՝ երկու տարի, նույն այդ և Փիլուպատոր Պտղոմեոսի տասնյոթերորդ տարում [գահին] բարձրացավ Հուդա Մակաբեոսը, երեք տարի: Եվ Զորաբաբելի թագավորությունից մինչև Հուդա Մակաբեոսը լինում է երեք հարյուր երեսուներկու տարի. [թագավորել են]՝ Հուդա Մակաբեոսը՝ երեք տարի, Հովնաթանը՝ տասը տարի, Շմավոնը՝ ինը** տարի, Հյուրկիանոսը, որն անվանվում է նաև Հովհաննես, քսանվեց տարի, Արիստաբուլոսը՝ մեկ տարի, Հաննեոսը, որն անվանվում է նաև Աղեքսանդրոս, քսանութ տարի, Աղեքսանդրոսի կինը՝ ինը տարի, Հյուրկիանոսը՝ երեսունչորս տարի, այլազգի Հերովդեսը՝ երեսունյոթ տարի: Նրա երեսուներկուերորդ տարում ծնվում է Քրիստոս Աստված: Հուդա Մակաբեոսից մինչև Քրիստոսի ծնունդը լինում է հարյուր հիսունմեկ տարի, իսկ Զորաբաբելից մինչև Հերովդեսի երեսուներկուերորդ տարին, երբ ծնվեց Տերը, լինում է չորս հարյուր ութսուներեք տարի: Իսկ ըստ Դանիելի՝ լինում է յոթ յոթներորդ և վաթսուներկու յոթներորդ, որը կազմում է վաթսունինը, ևս մեկ ու կես յոթներորդ. վրան գումարած ևս մեկ յոթներորդ և բազմապատկած մեկ յոթներորդով, լի-

* ՄՕ.-ում յոթ:
** ՄՕ.-ում հինգ:
*** ՄՕ.-ում Վեշտասպ:
**** ՄՕ.-ում քառասունմեկ:
***** ՄՕ.-ում տասնհինգ:
****** ՄՕ.-ում Եսթեր:
******* ՄՕ.-ում Արտամա:

[1] Դարեհ Վշտասպի երկրորդ տարուց սկսած (521 թ. նախքան Քրիստոսը) մինչև մեծն Աղեքսանդրի մահը (324 թ. նախքան Քրիստոսը) լինում է 197 տարի: Բայց մեր հեղինակը այլ տեղերում հիշատակում է թագավորների այնպիսի հաջորդականություն ու տարիներ, որոնցում կան սխալներ: Նկատի ունենալով, որ դրանք հեշտությամբ կարելի է ստուգել ժամանակագրությունների միջոցով, մենք անտեսեցինք դրանց անդրադառնալ այստեղ:

* ՄՕ.-ում հիսունմեկ:
** ՄՕ.-ում հինգ:

նում է յոթանասուն յոթներորդ, ընդամենը լինում է չորս հարյուր ինսուն: Եվ եթե այս թվից հանենք յոթ տարի, որի ընթացքում մոգերը թագավորեցին, կլինի չորս հարյուր ութսուներեք. այդ նշանակում է՝ մեկ յոթներորդը չի հաշվված,- այն դի՛ր չորս հարյուր ութսուներեքի վրա, կլինի չորս հարյուր ինսուն, որովհետև այս յոթնյակը ամիսներով* է, իսկ յոթներորդի կեսը կլինի երեսուներեք տարի ու կես, երբ սպանվեց Օծյալը: Իսկ մյուս յոթ յոթներորդը քառասունին է հաշվված, որը դեռևս լրիվ չէ, այսինքն՝ պակաս է, որովհետև մենք սովոր ենք կես ասել պակասին: Թե կամենում ես, ընդունի՛ր, իսկ եթե ոչ՝ թողութիւն չնորհիր**:

ԺԴ. Բազմազավակ հայր մեծն Աբրահամը մարմնով և հոգով մեր ազգի համար պարծանքի հայր եղավ, քանզի Կենդուրից*** ունեցավ վեց որդի՝ Եմրանին, Եսկանին****, Մադանին, Մադիմանին*****, Եսբոկին և Սովիեին******: Իսկ ավագ որդի Եմրանը սպանեց Եսկանին ու Մադանին: Այդ պատճառով հայրը նրան ուղարկեց արևելք՝ [հեռացնելով] իր որդի Իսահակից, որից սերեց պարթևների ցեղը, որից էլ՝ քաջն Արշակը: Աղեքսանդրի մահվանից վաթսուն տարի անց նրա դեմ ապստամբեցին մակեդոնացիները, և նա թագավորեց քուշանների երկրում, Բահլ մայրաքաղաքում, քսանվեց******* տարի՝ տիրելով ամբողջ արևելքին ու Ասորեստանին, սպանելով Անտիոքոսին, Բաբելոնից ու քաղդեացիների երկրից հալածելով մակեդոնացիներին: Ասում են, թե սա որդին էր Արշավիրի********, որը Մարաստանի արքան էր: Նա կին առավ Մովսեսի որդիների սերնդից, որոնք բնակվում էին Տափնասում: Խնամի դառնալով տաճիկների ցեղի հետ և գալով այնտեղ՝ բնակվեց Մարաց ու Պարսից, Հայոց ու Քուշանաց միջև: Եվ որովհետև դիմացից, թիկունքից, աջից, ձախից շրջապատել էին չորս ազգեր, նրանք պարթևներ կոչվեցին, որոնք իրենց մեջ են առնում չորս ցեղեր: Իսկ արքունական Բահլ քաղաքի անունով էլ պահլավներ կոչվեցին[1]:

Նրան փոխարինում է իր որդի Արշանը, որն անվանվում է նաև Արտաշես՝ մի չքնաղ, մարմնեղ տղամարդ ու զորեղ կռվող: Նա ունենում է Արշակ անունով որդի, որը կոչվեց Մեծ: Նրա մասին ասում են, թե նա տիրել է աշխարհի մեկ երրորդ մասին՝ Ասիային, Լիբիային և Եվրոպայի մեծ մասին: Նա Հայաստանում թագավոր է նշանակում իր եղբայր Վաղարշակին և նրա [տերության] սահմաններ է նշանակում Պաղեստինը, Ասորեստանը, Միջերկրայքը, Թեսալիան[2], այսինքն՝ Պոնտոս ծովից մինչև Կովկասի այն տեղը, որտեղ այն արևմտյան ծովին է խառնվում. նա նաև ասում է. «որքան իմաստությունն ու զենքն է կտրում»: Սպանելով Մար-փիլիկային*, որ տիրել էր Պոնտոսի[3] կողմին, հաստատ հիմքերի վրա հայրենական ցեղապետությամբ բարձրացնում է իր թագավորությունը: Ցեղապետներին կոչում է իրենց աստիճաններով ու գեղեցիկ անուններով, [այսպես]՝ Բագրատունի թագավորներին կոչում է Բագարատ անունից, որը հրեա Սմբատի ազգից էր, Հուդայի ցեղից, իրեն հագցնող Գնթունիներին՝ Քանանի ցեղից, իր թիկնապահ Խոռխոռունիներին**՝ Հայկի ցեղից, իսկ Վարաժունիներին, Արծրունիներին, Գնունիներին, Գաբեղյաններին, Ցյունականներին, Հավունիներին և Սիսակյաններին՝ Սյու-

---

* ՎՕ.-ում ամիս, ՄՕ.-ում **ամաք** է՝ տարիներով է:

** ՄՕ.-ում «Թող ու ապաստան արա ի տէր:- Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն»՝ Թո՛ղ և ապավինի՛ր տիրոջը:- Եւ մեր Քրիստոս Աստծուն փառք հավիտյանս. ամեն:

*** ՄՕ.-ում Քետտուր:

**** ՄՕ.-ում Հեկտան:

***** ՄՕ.-ում Մադիան:

****** ՄՕ.-ում Սովիվե:

******* ՄՕ.-ում վեց:

******** ՄՕ.-ում **որդի Արշաքայ**՝ Արշորի որդին. Մ. Էմինը ծանոթագրում է՝ «Թերևս Արշաւրայ»:

[1] Պարթևների ծագման և թագավորների հաջորդականության մասին բազում տարակարծություններ կան մեր և օտար պատմիչների մոտ, որոնք թույլ չեն տալիս խորամուխ լինելու այդ գործերի մեջ: Իսկ պարթև բառը, ըստ շատերի կարծիքի, նշանակում է փախստական կամ գաղթական:

[2] Թեսալիան, ըստ Եղիշեի, Իտալիան է, այսինքն՝ Թուրքիստանի մի մասը, որն ընկած է Ջահան գետի և պարսկական Խորասանի միջև:

* ՄՕ.-ում Մորփիլիկեն. Մ. Էմինը ծանոթագրում է՝ զմօրն Փիլիկիա:

[3] ՕՕ.-ում Պովտու [ՄՕ.-ում Պոնտոսի]:

** ՄՕ.-ում և Արծրունիս՝ նաև Արծրունիներին:

նյաց տերեր, Մուրացաններին*, որոնց իր երկրորդն է կարգում Մարաց արքա Աժդահակի արյունից. Մուրացանը Տեր է անվանվում, իսկ Աղվանիսին ու Առանիսին[1] նշում է Հայկի թոռներից: Ոմն Առանին[2] կարգում է հյուսիս-արևելքի կողմնապետ, որից սկիզբ առան ուտեցիների, գարդմանացիների, գարգարացիների, ծավդեացիների[3] ցեղերը: Գուշարացիները սերում են Շարայի մնացած որդիներից, որոնց տալիս է Մթին լեռը, Կանգարսը և Ջավախքի մի մասը: Կովկասի հյուսիսային մասի կողմնակալին կոչում է գուգարացիների բդեշխ և նրան կարգում վիրիացիների[4] գերիների վրա, որոնց բերել էր Նաբուգոդոնոսորը Վիրիայից՝ Լիբիայի արևմտյան կողմից, որոնց մի մասին բնակեցնում է Պոնտոս ծովի ափին: Բասենի մեծ նահապետին Դունին[5] է կոչում, որը սերում է Հայկի զավակից: Արևմուտքի կողմնակալին՝ հայկյան Տուրքին*, կոչում է Անգեայս[6], որի մասին ասում են, թե նա հարյուր քսան փղի ուժ ուներ, որձաքարերն իր ուզածի պես ձևում էր ձեռքով և բլրաչափ ժայռերով բազմաթիվ նավեր էր խորտակում Պոնտոս[1] ծովի ափին: Հարավարևելյան կողմի կուսակալ Շարշանին[2], որին Սասանական է կոչում, կարգում է Տիգրիս գետի վրա, նույն գավառից նաև Մոկացուն, Կորդվացուն, Անձևացուն, Ակայեցուն, Տրպատունուն*, Անձտային և նման ուրիշների. այն կորովի ու խոհեմամիտ արքան [կարգում է] նաև դռնապաններ և բարեհիշեցուցիչներ արքայի բարկության պահի համար:

Ժե. Բայց լսեցինք և գրքում տեսանք, որ սա Արշակ մեծի որդին էր և ոչ թե եղբայրը: Եվ բանն այսպիսին էր: Պարսից թագավորը փնտրեց քարե այն սյունը, որ գտնվում էր Մծբինում, Հայոց[3] թագավորության արքունիքում: Եվ առնելու ժամանակ գտավ հունարեն գրություն, որի վրա գրված էր. «Ես՝ Ազաթանգեղոսս, գրեցի, որ մեծն Արշակն ուներ չորս որդի. առաջինին թագավոր նշանակեց թեստալացիների վրա, երկրորդին՝ լյուրիկեցիների, երրորդին՝ պարթևների, չորրորդին՝ հայերի՝ նրան տալով այն սահմանը, որ Հայկն ստացավ իր զավակներով և իր յոթ որդիներով»:

Արդ՝ Վաղարշակը, կարգավորելով իր արքունիքը, իր մոտ է պահում իր որդի Արշակին, նրա որդի Արտաշեսին, իսկ մյուս արքայազուններին ուղարկում է Հաշտյան գավառը: Եվ դա բոլոր թագավորների համար եղավ կարգուկանոն՝ մեկին պահել իրենց մոտ որպես ժառանգ, իսկ մյուսներին ուղարկել Հաշտենք, որպեսզի ապրեն ազատության մեջ: Վաղարշակը, թագավորելով քսանմեկ տարի, մեռնում է Մծբինում, հետո թագավորեց նրա որդի Արշակը**, քսաներեք տարի: Պոնտոս ծովի ափին, որձաքարի մեջ նա կառուցեց նիզակ, որը թաթախեց թունավոր սողունների արյան մեջ, և այն պոնտացիները

---

* ՄՕ.-ում գ... Մուրացանաս՝ Մուրացյաններին:

[1] Առանիս. Առան կոչվում է Սյունիքի հարավարևելյան կողմը, մինչև Կուր գետն ու Երասխը, որտեղ գտնվում են Հայոց Արցախ և Ուտիք աշխարհները, որոնց ե գարում տիրեցին աղվանները: Վաղնջական ժամանակներից Երասխի հարավային կողմը սրանց հետ միասին կոչվում էր Առան կամ Իրան, որն ըստ պարսկական զանդիկ գրքի՝ նույն Էրինե-Վեջո սրբազան ու հին երկիրն է:

[2] Այլ Օ.-ում Առանպատ:

[3] Ծավդեից երկիրը [ՄՕ.-ում Ծոփացուց՝ Ծոփացիների] գտնվում է Կուր գետի արևելյան կողմում Աղվանքում կամ նրան սահմանակից երկրամասում: Իսկ հիշյալ մյուս ցեղերը գտնվում են արևմտյան կողմում, որը Ուտիքի տարածքում է, իսկ գուշարացիները գրավում էին Գուգարքի մի մասը:

[4] Վիրիացիք. Խորենացին (բ., ը.) ըստ Մեգասթենի և Աբյուդենի՝ հիշում է Նաբուգոդոնոսորի կողմից Լիբիայի ու Իբերիայի (Իսպանիայի) ափերից բերված գերիներին և Պոնտոս ծովի աջ կողմում բնակվածներին, որոնցից էլ, ինչպես ասում է Ուխտանես պատմիչը, սերել են վրացիները, բայց այդ տեսակետը հավանության արժանի չէ, և լիբիացիների գերությունն էլ երկբայական է:

[5] Ըստ Խորենացու՝ Որդունին:

* ՄՕ.-ում Տորք:

[6] Ըստ Խորենացու՝ Անգեղյա:

---

[1] Խորենացին (բ., ը.) Ռոստոմ Սագհիկի, այն է՝ Սեճեստանի Ռյուստեմ իշխանի մասին ասում է, որ պարսից բաջաղանքի համառձայն՝ նա մեծ ուժի տեր էր և նրան բաղդատում է հայկազան Անգեղյա Տորքի հետ:

[2] Շարաշանը Սենեքերիմի որդի Սանասարի կամ Սանեսանի սերունդն էր, որի համար այն պետք է կոչել Սանասնահան կամ Սանասական:

* ՄՕ.-ում Տրապատունի:

[3] Սա՝ ըստ մյուս պատմիչների, որոնց պատմությունը կցված է Սեբեոսի՝ Հերակլ կայսեր պատմության սկզբին:

** ՄՕ.-ում Արտաշես:

պաշտում էին իբրև աստծու գործ*: Նրանից հետո, Պարսից արքա Արշականի երրորդ** տարում, թագավորեց նրա որդի Արտաշեսը, քսանչորս տարի, որին իր երկրորդը կարգեց և տիրեց ամբողջ ցամաքին, անցավ օվկիանոսից այն կողմ, հասավ մինչև Իսպանիա ու վերադարձավ՝ ձերբակալելով Լիդիայի Կրյուսոս թագավորին[1]: Նա ուներ անհամար զորք, իսկ երկրորդ անգամ արևմուտք գալու ժամանակ մեռնում է ծովում: Եվ թագն առնում է նրա որդի Տիգրանը, Արշակունի թագավորության քսանյոթերորդ տարում: Նա գրավեց Երուսաղեմը և սպանեց հռոմեացիների Կրասոս[2] զորավարին: Մաժաքում թողնում է Միհրդատին, որի որդին ապստամբելով գնում է հռոմեացիների մոտ, գրավում Պերգյա քաղաքը, ընդարձակում Մաժաքը և այն կոչում է կայսեր անունով: Դրանից հետո Բարզափրանը վերստին գրավում է Երուսաղեմը և գերի վերցնելով Հյուրկիանոս քահանայապետին՝ բնակեցնում է Վանում: Տիգրանը, թագավորելով երեսուներեք տարի, մեռնում է, և թագն առնում է նրա որդի Արտավազդը, որն իր եղբայրներին ու քույրերին բնակեցնում է Աղիովտում և Ադբերանում, ինչպես որ մյուս Արշակունիներին՝ Հաշտենքում: Ինքը շարժվում է դեպի Միջագետք, և Անտոնինոսը լսելով գալիս, կոտորում է նրա զորքը, գերում նրան ու տանում Եգիպտոս՝ Կղեոպատրա թագուհուն նվեր: Եվ թագն առնում է Արտաշեսի որդի, Տիգրանի[3] եղբայր Արշամը: Նա Միջագետքից [հավաքած] հարկերը տալիս է հռոմեացիներին, Հերովդեսի

* ՄՕ.-ում նիզակի կառուցումը վերագրված է Վաղարշակին:

** ՄՕ.-ում երկրորդ:

[1] Ըստ Խորենացու պատմության՝ Արտաշեսի գրավումները Հունաստանից այն կողմ չեն անցնում: Նույնպես և Կրեսոսի խնդիրը, որի անպատեհությունը, հայտնի է, պատմիչների խոսքերի կամ վրիպումների արդյունք է, որը հիշատակում է նաև Խորենացին, տակավին ոչ այնքան հայտնի կերպով:

[2] Կրոտոս:

[3] Տիգրանի հոր՝ Արտաշեսի մահվան և Արշամի թագավորության միջև ընկած է յոթանասուն տարի: Նկատի ունենալով, որ Տիգրանը թագավորեց քսան տարի, ավելի նպատակահարմար է նրան համարել ոչ թե Տիգրանի որդին, այլ եղբորորդին, հակառակ դեպքում նրանից մեծ կլինի ինքը, որին Լուկիանոս սոփեստոսը (մահացած 85 տարեկանում) հիշատակում է երկարակյացների հետ, իսկ ինքը հիշվելու էր իննսունն անց տարիքում:

օրոք, որին Անտոնինոսը կարգեց հրեաների արքա: Պարսից Արշավիր թագավորի ժամանակ, քանի որ նա փոքրահասակ երեխա էր, Արշամին չէր կարող օգնել, որի պատճառով նա հնազանդվեց կայսրին և բանվորներ տվեց Հերովդեսին՝ սալահատակելու Անտիոքի փողոցը: Թագավորելով քսան տարի՝ նա մեռնում է, և թագն առնում է նրա որդի Ավագայրը, որին ասորիները Աբգար են կոչում: Նրա երկրորդ տարում ծնվեց Տերը, և Օգոստոս կայսրը հրաման տվեց մարդահամար անցկացնելու մասին: Նրա պատկերը բերվեց Հայաստան, և բոլոր հայերը հարկատու դարձան, նմանապես նաև Ասորեստանը, Եգիպտոսը և ամբողջ Միջերկրայքը: Եվ [այդ ժամանակ] Ադամի՝ դրախտից դուրս գալու չորս հազար տարին էր՝ ըստ հրեական օրինակի, իսկ ըստ յոթանասնից օրինակի՝ հինգ հազար հարյուր իննսունութ տարին, ըստ Ենանոսի[1]՝ հինգ հազար իննսունմեկ տարին, ըստ ասորիների՝ հինգ հազար քսանվեց: Տարին բաղկացած էր լուսնի տասներկու ամիսներից:

ԺԶ. Օգոստոսը երկրորդ ինքնակալն էր Հուլիոսից հետո, որին փորահան[2] են ասում, որը կայսր կոչվեց և թագավորեց Հռոմի թագավորության խափանումից չորս հարյուր վաթսուներկու տարի հետո: Օգոստոսն է՛լ ավելի հռչակվեց մեծ Աստծու և ամենակալ արքայի ծնվելու ժամանակ: Նրա օրոք տասներկու հազար հեծյալով եկան մոգերը և լսելով, որ սով է Պաղեստինում, զորքը թողեցին Աբգարի մոտ, և պետերը, այն է՝ պարսիկ Մելքոնը, Հնդիկ Գասպարը, արաբ Բաղդասարը, տասներկու իշխաններով ու հազար հեծյալով գնացին՝ իրենց հետ տանելով ոսկի, կնդրուկ, զմուռ [կնքամոմ]: Այս մասին Օգոստոս կայսրին գրել է ոմն Լուկիանոս Ֆռանկ[3], որը գտնվում էր Ասորիքում. «Թող հայտնի լինի քո ինքնակալությանը, որ հարավ-արևելքից եկան մեծաշուք այրեր և երկրպագեցին Պաղեստինում ծնված մի երեխայի՝ հրաման ստա-

[1] Ըստ Միքայել Ասորու՝ Ենանոս պատմիչը աղեքսանդրացի կրոնավոր էր, որը գրեց Ադամից մինչև Կոստանդիանոս ընկած ժամանակաշրջանի պատմությունը:

[2] Հուլիոս Կեսարը փորահան է ասվում նրա համար, որ մոր մեռնելուց հետո նրան հանել են մոր արգանդից [փորից]:

[3] Լուկիանոս Ֆռանկ, այսինքն՝ հռոմեացի:

նալով ի վերուստ, մեծ աստղից, որն առաջնորդում էր նրանց»: Իսկ երբ մոգերն այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը, Հերովդեսը կոտորեց հազար չորս հարյուր վաթսուներկու մանուկների Տիրոջ Եգիպտոս գնալու ժամանակ: Օգոստոսը գնում է Եգիպտոս ու սպանում իր զորավար Անտոնիոսին, որը անկախանալով թագավորում էր: Աբգարը չինեց Ուռհա քաղաքը և Մծբինից այնտեղ տեղափոխեց իր աթոռն ու դիվանը, ինչպես որ Տիգրանը չինեց Տիգրանակերտը, որը Ամիթ է կոչվում: Մեր Տիրոջ ծննդյան երեսուներեքերորդ տարում մեռավ Պարսից Արշավիր թագավորը՝ թողնելով երեք որդի և մեկ դուստր, որոնք վիճում էին միմյանց հետ թագավորության համար: Աբգարը գնաց այնտեղ և հաշտեցրեց նրանց. ավագ որդուն՝ Արտաշեսին, թագավոր կարգեց, իսկ Սուրենին, Կարենին ու նրանց քույր Կոչմին մեծարեց Պահլավ անվամբ: Եվ երբ նա վերադառնում է, հիվանդանում է բոր հիվանդությամբ: Գալով Եդեսիա՝ նա հռոմեական Մառինոս[1] զորավարի մոտ է ուղարկում Աղձնիքի ըռեչխ Մարիահային[2], Ապահունիքի նահապետ Շամշագրամին և իրեն հավատարիմ Անանեին, որպեսզի նրա երթը դեպի արևելք նենգ մտադրություն չկարծեն: Եվ Ելևթերապոլիսում[3] հանդիպելով Մառինոսին՝ լսեցին բարի խոսքեր, գնացին Երուսաղեմ և տեսան Տիրոջը, որը մեծամեծ հրաշքներ էր կատարում ու հավատացին նրան: Բերեցին Աբգարի տեսած հրաշքները և սկսեցին մեծարել, բերեցին նաև պատկերը, որը մնաց Ուռհայում մինչև Հունաստանի Նիկիփոռ թագավորը, որ տարավ Կոստանդնուպոլիս Աբրահամ մետրոպոլիտի միջոցով:

ԺԷ. Նրա մոտ եկավ Թադեոս առաքյալը, մկրտեց նրան ու ամբողջ քաղաքը և գնալով Սանատրուկի մոտ՝ սպանվեց նրա կողմից Արտազում: Նույն բախտին արժանացավ նաև Բարդուղիմեոսը՝ սպանվելով նույն թագավորի կողմից Արաբիոն[1] քաղաքում: Իսկ Աբգարը, թագավորելով երեսունութ տարի, վախճանվում է, և Միջագետքում տիրում է Սանատրուկը ու կառուցում Մծբինը, որը ավերվել էր երկրաշարժից: Նա, թագավորելով քսան տարի, մեռնում է որսի ժամանակ, և թագն առնում է Արշակունի կնոջ որդի Երվանդը, որը կոտորում է Սանատրուկի բոլոր զավակներին, և ազատվում է միայն Արտաշես անունով մի մանուկ, որին վերցնում է Սմբատը ու փախչում Պարսկաստան, վերջին Դարեհ արքայի մոտ: Եր-վանդը Միջագետքը թողնում է Տիտոսին: Վերափոխելով մեծապես ու կառուցելով Երվանդաքարը՝ նա արքունիքը Արմավիրից տեղափոխում է այնտեղ, որից ավելի հեռու, Ախուրյան գետի ափին, չինում է Բագարան կուստունը, ուր քուրմ է նշանակում իր եղբայր Երվազին մինչև [իր թագավորության] քսանմեկերորդ տարին: Այդ ժամանակ Արտաշեսը դառնում է թագավոր և ճակատամարտ է տալիս Մարաց Մարգում, Ախուրյան գետի ափին, Երվանդը փախչում է քար[2], և մեռնում է չարակն այդ մարդը: Թագն առնում է Արտաշեսը, որը չինում է Արտաշատը այն տեղում, որտեղ Մեծամորը խառնվում է Երասխին: Բոլոր կողմերից բերելով գերիներ՝ նա Հայաստանում անմշակ տեղ չի թողնում. չորանկյունի քարերով նշում է սահմանները [կոպար], կարգում է ամսվա, շաբաթվա և տարվա բոլորման օրերը, զարգացնում է նավագնացությունը, ճկնորսության արհեստը[3]: Թագավորելով քառասունմեկ տարի՝ մահանում է, որի հետ մահակից են լինում ոչ քիչ ծառաներ: Եվ թագն առնում է նրա որդի Արտավազդը, որը մի քանի օր անց որսի ժամանակ խեղդվում է գետում, Մեծամորի

---

[1] Այդ Մառինոսը պատմության կամ Աբգարի թղթի մեջ Սաբինոս է կոչվում:

[2] Այդպես է նաև ՕՕ.-ում, բայց հնագույն պատմիչները Մար Իհաք են ասում [այդպես է նաև մոսկովյան օրինակում]:

[3] Ճիշտը՝ Ելևթերապոլիս (Ազատ քաղաք), նույնը՝ Բեթողաբրա, որ նշանակում է հսկաների տուն, որը [գտնվում է] Ասկալոնին մոտիկ, այժմ կոչվում է Բեյթ-Ճեպրին, որը գյուղական է:

[1] Բարդուղիմեոսի նահատակության քաղաքը գրվում է զանազան ձևերով՝ Արեբանոս, Ուրբանոս, Արաբիոն, Արաբիսոն, Բարմա, որոնցից առաջինն ու վերջինը ավելի ստույգ են, քանի որ Բարմը, ըստ Խորենացու, քաղաքի մի նշանավոր մասն էր, որը Մեծն Աղբակն էր Պարսկաստանի սահմանին մոտիկ: Այն այժմ կոչվում է Սեր-Ալպաղ՝ հայկական հին նշանակությամբ, բայց քաղաքն ու Բարդուղիմեոսի նահատակության տեղը այժմ մեզ հայտնի չեն:

[2] Այսինքն՝ այն միջնաբերդը, որ գտնվում է Երվանդաշատ քաղաքի քարքարուրում:

[3] Հին Օ.-ում՝ ձկան որսի [այդպես է նաև ՄՕ.-ում]:

կամուրջի մոտ՝ տանջահար լինելով դևերի կողմից: Եվ Պերոզ առաջինի երրորդ տարում թագն առնում է նրա եղբայր Տիրանը՝ [թագավորելով] քսանմեկ տարի: Նրա մասին ասում են, որ նա երկու արագընթաց ձի ուներ, որոնց թևավորներ էին կոչում: Նա մեռնում է Եկեղյաց ճանապարհին՝ հանդիպելով սաստիկ ձյան[1], և թագավորում է նրա վերջին եղբայր Տիգրանը, քառասուներկու տարի: Նրան փոխարինում է նրա որդի Վաղարշը իր անվանակից Պարսից արքայի երեսուներկուերորդ տարում: Բասենի գավառում նա շինում է Վաղարշավանը, ուր նրան ծնել էր իր մայրը, պարսպում է Քասաղ գետի ափին գտնվող Վարդգեսավանը, որը շինել էր Վարդգեսը՝ սակավակաց Հայկազուն Երվանդի քեռայրը: Պարսպապատելով այն՝ Վաղարշապատ անվանեց, որը կոչվում է նաև Նոր քաղաք[2]:

Նրա օրոք բուլղարներն[3] ու խազիրները[4], միաբանելով միմյանց հետ և թագավոր ունենալով ոմն Սուրհապ Վնասեպին, անթիվ բանակով գալիս են Կուր գետի մոտ: Վաղարշը, նրանց կոտորելով ու հալածելով, անցկացնում է Զորա[5] դռնից ներս, սակայն նա հանկարծակի նետահարվելով՝ մեռնում է քսան տարի թագավորելուց հետո: Եվ թագն առնում է նրա որդի Խոսրովը, Պարսից Արտևան արքայի երկրորդ տարում: Նա իսկույնևեթ անցնում է Կովկասյան լեռներից այն կողմ և առնելով իր հոր վրեժը՝ բնաջնջում է երկու ցեղերին էլ: Եվ ամեն հաղթություն լավ մարդկանցից մեկ պատանդ առնելով՝ վերադառնում է այնտեղից՝ իր տերության նշան-արձանագրությունը

[1] Հին Օ.-ում նետի [այդպես է նաև ՄՕ.-ում]:

[2] Այն քաղաքավանը, որի մոտ այժմյան Էջմիածինն է:

[3] Մեր պատմության սկզբում հիշատակվում է սկյութական բուլղարների ցեղը, որի մի մասը, առանձնանալով ոմն Վունդի գլխավորությամբ, բնակվում էր Կողի և Բասենի սահմաններում:

[4] Խազիրները բուլղարներին ցեղակից ժողովուրդներ էին, որոնք հայտնի են իրենց նշանավոր ասպատակություններով դեպի արևմտյան Ասիա և բյուզանդական կայսրություն. նրանք Ժ դարից հետո այլևս չեն հիշվում:

[5] Զորա կամ Ձորա դուռը կամ հոների Պահակը Դերբենդի դուռն է, Թուրքերի Տեբրենեռը կամ Տեմիր-գափան, որն ընկած է Կովկասի վերջում, Կասպից ծովի ափին:

հաստատելով հելլենական գրով: Նրա օրոք Արտաշիր Ստահրացին սպանում է Արտավանին: Այդ բանը լսելով՝ նա հայտնում է Փիլիպպոս կայսրին և վերցնելով Եգիպտոսի զորքը՝ ավերում է Պարսից աշխարհը տասը տարի շարունակ անապատների մոտից մինչև Պոնտոսի ծովափը՝ Արտաշիրին փախուստի մատնելով Հնդկաստան, մինչև որ եկավ Անակը, նենգությամբ սպանեց քաջին, բայց ինքն էլ մեռավ յուրայինների հետ միասին: Եվ պարսիկ Բունդարը, վերցնելով Անակի որդի Գրիգորին, որ եկել էր Անակի հետևից, գնաց Կեսարիա և կնության առավ Եվթաղի քույր Սուփիին: Մեկ տարի անց, երբ [Բունդարը] ուզում էր գնալ Պարսկաստան, նրա աները, հասնելով նրան, բանտարկում է Վաղարշապատ քաղաքում: Այնտեղ Սուփին դառնում է մանուկ Գրիգորի ստնտուն, որին [Գրիգորին] տալիս է իր ամուսինը՝ նրան խլելով Ոգոհիի գրկից Անակի ցեղի կոտորածի ժամանակ: Եվ տանելով Կեսարիա՝ ընծայում են Քրիստոսին: Այնտեղ նա սովորում է հունարեն ու ասորերեն և երբ լինում է տասներկու տարեկան, ոմն Դավիթ նրան ամուսնացնում է իր դուստր Մարիամի հետ: Երկու որդի ունենալուց հետո նրանք բաժանվում են միմյանցից. Մարիամն իր ավագ որդու հետ գնում է կանանց վանքը, իսկ կրտսերը գնում է ոմն ճգնավոր Նիքոմաքի ետևից: Մայրը Վրթանեսին վերադարձրեց իր դայակին, որը մեծացնելով ամուսնացրեց նրան ևս: Իսկ Խոսրովի մահից հետո Արտաշիրը* կոտորում է նրա հիշատակները, բայց Տրդատ անունով մի փոքրիկ երեխայի Մանդակունի ցեղից Արտավազդ անունով, ոմն նախարար փախցնում է Հունաստան, որը մեծացավ Լիկիանոս իշխանի մոտ:

Եվ Գրիգորը, լսելով իրենց հետ պատահած բոլոր դեպքերը, գնաց Տրդատի մոտ և ծառայում էր նրան: Իսկ Գրիգորի Սուրեն անունով մյուս եղբայրը տարվեց Արտաշիրի մոտ և դաստիարակվեց հորաքրոջ կողմից, որը հեփթաղների[1] արքա

* ՄՕ.-ում Արտաշես:

[1] Հեփթաղներ են կոչվում թետալները կամ թետալացիները, իսկ բյուզանդացիները նրանց կոչում են Սպիտակ հոներ, որոնք ցեղակից էին իրենց և բնակվում էին պարթևների աշխարհի հյուսիսային կողմում: Ինչ-որ մեկի տեսակետով դա Դիպեդաց տոհմն էր:

Զվանչիրի որդու կինն էր*: Նա երբ մեծացավ, գնաց Ճենաց[1] և Դարբանդի երկիրը ու այնտեղ թագավորեց նրանց վրա: Ոմանք էլ ասում են, թե Գրիգորի եղբայրը ոմն Զգոնն էր, որի անունը Հակոբ էր, բայց Հակոբը որդին էր Անակի քրոջ՝ Խոսրովուհու, որը Տիրան արքայի կինն էր, որին սպանեց Լփնաց թագավոր Ադիդեսը: Հակոբը, վերցնելով իր քույր Սակգենին ու նրա որդի Հրաչեին, ծնողների մահից հետո գնաց Գթաց երկիրը, որտեղ Հրաչեն բարեպատեհ առիթով թագավոր դարձավ: Հենց նա ինքն էր, որ գնաց Հունաց արքայի վրա և պահանջեց իր ախոյան Դիոկղետիանոսին: Կայսրը վախեցավ Հրաչեից, և մեկ այլ կտրիճ փնտրվեց, ու գտնվեց Տրդատը: Նրան զգեստավորում են թագավորի նման, և նա գնում, բռնում է Հրաչեին ու բերում է կայսրի մոտ: Դրա համար Տրդատը թագադրվում է և Գրիգորի հետ գալիս է Հայաստան: Տրդատն իր [թագավորության] առաջին տարում չարչարում է Աստծու սրբին և գցում վիրապը: Տրդատի [թագավորության] տասնհինգերորդ տարում սուրբ տիկնայք գալիս են Հայաստան և նահատակվում են: Եվ թագավորի գլխին փորձանք է գալիս: Սուրբ Գրիգորը, դուրս գալով վիրապից, հինգ օր սոված մնալուց և վաթսուն օր վարդապետելուց հետո երկիրն ազատում է դիվապաշտությունից և Տրդատի [թագավորության] տասնյոթերորդ տարում քահանա է դառնում Տիրոջ միջոցով**:

ԺԸ. Հուլիոս կայսրը, թագավորելով չորս տարի յոթ ամիս, գաղտնի կերպով սպանվում է մի ներքինու կողմից, որը հրով այրում է նրան[2]: Նրա հաջողության համար հռոմեական թագավորները նրա անունով կայսր կոչվեցին: [Հետո թագավորեց] Օգոստոսը, հիսունվեց տարի. նա էլ Անտոնիոսին սպանելու և Եգիպտոսն ու Աորիքը գրավելու շնորհիվ կոչվեց Սեբաստոս ու Հոկտավիոս, այսինքն՝ հաղթող ու բախտամեծ:

* ՄՕ.-ում նա Զվանչիրի կինն էր:

1 Ճենները չիները չեն, այլ կովկասյան ժողովուրդներ էին Դարբանդի սահմաններում:

** ՄՕ.-ում տասնհինգերորդ տարում, իսկ Ի Տեր բառաձևին հաջորդում է. «որում փառք յաւիտեանս, ամէն»՝ որին փառք հավիտյանս, ամեն:

2 Հուլիոս Կեսարի սպանության՝ աշխարհում տարածված լուրը պատմիչի կողմից չիմանալը զարմանալի է:

Նրա քառասուներորդ* տարում ծնվեց Տերը: [Այնուհետև թագավորեցին]՝ Տիբերիոսը, քսաներկու տարի: Սրա [թագավորության] տասնհինգերորդ[1] տարում մկրտվեց մեր Տեր Աստված Հիսուսը: Գայիոսը՝ չորս տարի. նա իրեն անվանել տվեց աստված, և Աստված սպանեց նրան: Կղոդիոսը՝ տասներեք տարի ինը ամիս: Նրա կինն ու որդիները հավատացին Քրիստոսին և գտան Տիրոջ խաչը[2]: Ներոնը՝ տասներեք տարի. նա կոտորեց սուրբ առաքյալներին: Վեսպիանոսը՝ տասը տարի: Նրա որդի Տիտոսը՝ երկու տարի, որը գրավեց Երուսաղեմը: Տիտոսի եղբայր Դոմետիանոսը՝ տասնհինգ տարի. նա Հովհաննեսին ուղարկեց Պատմոս: Ներվասը՝ մեկ տարի. նա Հովհաննեսին վերադարձրեց Ասիա: Տրայանոսը՝ տասնինը տարի, որը սպանեց Իգնատիոսին: Ադրիանոսը՝ քսանմեկ տարի. նա շինեց Երուսաղեմն իր աներ Ակյուղասի օգնությամբ: Տիտոս Անտոնինոսը, որը կոչվեց բարեպաշտ, իր որդիների հետ միասին [թագավորեց] քսաներկու* տարի: Ավրելիոսը՝ տասնինը** տարի, Կոմիդոսը՝ տասներեք տարի, Պերտինաքսը՝ վեց տարի, Սեներոսը՝ տասնութ*** տարի, Սեներոսի որդի Անտոնինոսը՝ չորս տարի, Մամեի Աղեքսանդրոսը****՝ տասներեք տարի, Մաքսիմոսը՝ երեք տարի, Գորդիանոսը՝ վեց տարի. նրա մասին ասում են, թե հավատում էր Տիրոջը: Փիլիպպոսը՝ վեց տարի. նա օգնեց մեր Խոսրովին: Դեկոսը՝ մեկ տարի, Գալլոսը՝ երեք տարի, Վալերիոսը՝ տասնյոթ տարի, Կղոդեոսը՝ մեկ տարի, Ավրելիոսը՝ յոթ տարի, Տակիտոսը՝ վեց ամիս. նա վրեժխնդիր եղավ Խոսրովի մահվան համար և սպանվեց: Պռոբոսը՝ վեց տարի. ոմանք ասում են, թե նա թագադրեց Տրդատին[3]:

* ՕՕ.-ում քառասուներեքերորդ:

1 ՕՕ.-ում տասնութերորդ [ՄՕ.-ում տասնվեցերորդ]:

2 Կղոդիոսի կինը Պատրոնիկե է կոչվում խաչի գյուտի պատմության մեջ, որ գտնվում է մեզ մոտ՝ թարգմանված մեր նախնիների կողմից, բայց այնտեղում է անվավեր գործերի շարքը:

* ՄՕ.-ում քանչորս:

** ՄՕ.-ում հիսունինը:

*** ՄՕ.-ում տասնինը:

**** ՄՕ.-ում Աղեքսանդրոս Սեներոսը:

3 Պռոբոսը նախ հաշտության դաշինք կնքեց Պարսկաստանի հետ, ապա մարտնչեց: Այդ ժամանակ Տրդատին պակելը հավատի է, որը կռվում էր հռո-

Կարոան իր որդիների հետ միասին [թագավորեց] երկու տարի: Դիոկղետիանոսն ու Մաքսիմիանոսը՝ տասնինը տարի[1]: Նրա [թագավորության] երրորդ տարում Տրդատը թագադրվելով գալիս է Հայաստան և գտնում է Օտա իշխանին, որը պահել էր արքունի գանձը: Նա Անի ամրոցում գտնում է նաև նրա քույր Խոսրովիդուխտին: Հայոց նախարարներից շատերը գալիս են նրան դիմավորելու: Տրդատի տասնհինգերորդ տարում[2] սուրբ Գրիգորը նստում է սուրբ Թադեոս առաքյալի աթոռին՝ ձեռնադրվելով Կեսարիայի պատրիարք Ղևոնդի կողմից: Նա իր հետ բերեց սուրբ Կարապետ Հովհաննեսի նշխարքները, որոնք Հովհաննեսը Պատմոսից վերադառնալու և Երուսաղեմ գնալու ժամանակ բերել էր Եփեսոս, իսկ Դեկոս Փերմելիանոսի* ժամանակ բերեց Կեսարիա: Սուրբ Գրիգորը խնդրեց նշխարքները, բայց սուրբ Ղևոնդը չէր կամենում տալ, մինչև որ Հրաման չառավ սուրբ հրեշտակից: Հետո տվեց երկու լուսավոր աչքեր, որոնք նրան տվել էր Հռոմի հայրապետը. նա տվեց նաև սուրբ Աթանագինեսի նշխարքները: Նրա մասին ասում էին, թե նա սուրբ Գրիգորի կնոջ՝ Մարիամի եղբայրն էր: Դրանք բերելով՝ նա տարածում է Հայոց երկրում կես մասը պահելով Աշտիշատում՝ երկու հնդիկ եղբայր, իշխաններ Դեմետրեի ու Գիսանեի վիճակներում: Նրանք եկան Վաղարշակ արքայի մոտ և տասնհինգ տարի անց սպանվեցին այդտեղ, իսկ նրանց որդիները ժառանգեցին Տարոնը: Նրանք երկար մազեր ունեին, և ոմանք դեռևս մազ էին պահում, որը ոչ ոք թույլ չէր տալիս[3]: Նրա օրոք Տիրոջը հավատաց մեծն Կոստանդիանոս սպանացին, որը թագավորեց երեսունչորս տարի՝ գրավելով ամբողջ Եվրոպան, Միջերկրայքը և Միջագետքը: Այդ բանը լսելով՝ մեր Տրդատը և սուրբ Գրիգորը յոթանասուն հազար հեծյալով գնացին նրա մոտ և դաշինք կընքեցին միմյանց հետ: Այդ ժամանակ սուրբ Կոստանդիանոսը Գրիգորի բերանից լսեց մարդեղության խորհուրդը Քրիստոսական օգնական զորքի հետ, բայց նրան այդ ժամանակ չի հաջողվում թագավորել:

[1] Կայսրերի կարգից պակասում է երեք բաժին: Բացի դրանից, ճիշտ չեն նշված նաև ոմանց իշխանության տարիները:

[2] Ստույգը՝ տասնյոթերորդ տարում [այդպես է նաև ՄՕ.-ում]:

* ՄՕ.-ում Փերուշիանոս. Մ. Էմինը ծանոթագրում է՝ Թերեա Վալերիանոս:

[3] Զենոբ Գլակն այդ բանն ասում է իր ժամանակի համար:

սի ոճով: Եվ հրաման տվեց ամբողջ Իտալիայում նավակատիք անել նրանց գալստյան առթիվ՝ զոհեր մատուցելով, ասելով, թե թող ուրախակից լինեն երկնային զորքի հետ: Սուրբ Գրիգորը հրամայեց աղ մատուցել, այն օրհնեց և ուղարկեց ամբողջ երկիրը, որպեսզի առանց դրան անասուն չզոհեն, որովհետև, ասում է, ինչին չի խառնվում քահանայական օրհնությունը, այն կռապաշտության է հասցնում[1]: Հրեաները նախ լվանում էին և նոր ուտում: Եվ սուրբ Գրիգորն ասում է, թե նրանց որդիներն են, որ թլպատությունն անթլպատություն են դարձնում: Երկու արքաներն ու երկու պապերը՝ Գրիգորն ու Սեղբեստրոսը, դաշինք կնքեցին՝ ապրել ու մեռնել միմյանց համար: Նաև ասում են, թե դաշնագիրը գրելիս այն թրջեցին ահավոր խորհրդով[2]: Երբ այդ մեծերը արևմուտքից վերադարձան, հյուսիսի բնակիչները Պարսից Շապուհ արքայի դրդմամբ լցրել էին Աղվանքի կողմը: Սղկունյաց ցեղի նահապետը ապստամբելով մտել էր Ուղկան բերդը, ուր գնում է Մամգուն Ճենացին, կտրում է նրա գլուխը և ուղարկում Տրդատին: Վերջինս նրան տալիս է այն գավառը, որը նրա անունով կոչվում է Մամիկոնյան տուն: Հակա Տրդատեսը կոտորում է հյուսիսի բնակիչներին զարգարացիների գավառում, որտեղ սպանում է նաև Բասիլների արքա ճոպանաձիգ Հսկային:

Իր լուսավորչության երեսուներորդ տարում սուրբ Գրիգորը Արիստակեսին ուղարկում է Կեսարիա՝ ձեռնադրվելու, Թադեոս առաքյալի առաջին ձեռնադրությունն այնտեղ անելու և եկեղեցու հիմքերը դցելու համար: Եպիսկոպոսապետի* անունը, որին այնտեղ ձեռնադրեց սուրբ առաքյալը, Թեոփիլոս էր:

Իսկ երբ եղավ Նիկիայի ժողովը, և Արիստակեսը վերադարձավ սահմանված կարգով, սուրբ պատրիարք Գրիգորը գնաց Տարոն և չորս ամիս մնաց Անտոնի և Կրոնիդեսի մոտ, որոնք նրան ասացին. «Քեզ հեռու պահիր առավել փառքից քո ծերության շեմին, ինչպես մեծն Մովսեսը, որպեսզի քո ոսկորնե-

[1] ՕՕ.-ում Համանէ [ՄՕ.-ում հատանէ]:

[2] Մեր բազմերախտ լուսավորիչ հայրերի նկատմամբ ոմանց որդիների կողմից անչափ մեծարանք կա՝ հորինելով այդպիսի պատմություններ, որոնց նախորինակն է Դաշինքի հիշյալ թուղթը, որը ոչ թե դաշինք է, այլ անհեթեթ, երկրային ու անընդունելի մի բան:

* ՄՕ.-ում եպիսկոպոսի:

ը չպաշտի քո նորաղաբաժ ժողովուրդը կամ էլ քո մեռնելու ժամանակ չգայթակղվի տկարամիտ կարծիքներով»: Որը և նա կատարեց, որովհետև նա այնտեղից գնաց Մանյա այրը, ուր վախճանվեց լեռան վրա՝ զավազանին հենված: Նրան գտան հովիվները և թաղեցին, առանց իմանալու նրա ով լինելը, իսկ հետո երբ իմացվեց, մեծարվեց այդ տեղը: Ասում են, թե երբ Զենոն թագավորը փնտրում էր նշխարքները, տեսիլքում [սուրբ Գրիգորը] հայտնվեց ոմն ճգնավորի, որպեսզի վերջինս գաղտնի տանի նրան և թաքցնի Թորդան եկեղեցու հիմքի տակ, «որը, ասում է նա, ես չինեցի»: Եվ նա գտնվում է այնտեղ, թաքստոցում: Կայսրին տվեցին նշխարքը և ասացին, որ դա Գրիգորիս անունով Արշակունյաց եպիսկոպոսն է, չափազանց առաքինի ու բարի մի մարդ: Նշխարքները մեծարվեցին նրա անունով, և այժմ այնտեղ է գտնվում նրանց մի մասը[1]:

ԺԹ. Իսկ սուրբ Կոստանդիանոսը սպանեց ամբարիշտ Մաքսիմիանոսին, Մաքսինտեսին, Մաքսիմոսին և անօրեն Լիկիանոսին: Նա իր հարյուրապետին իր գնդով ուղարկեց Կապոտակեք* զավառը և Թելախունեք, Անատոլիկեք, Խարսանեք, Արամենակք, Դազիմոն Թեմերը՝ չարչարելու այն քրիստոնյաներին, որոնց նա այնտեղ գտնում էր: Քրիստոնյաներից ոմանք, նրանից վախենալով, փախան Սեբաստիայի կողմերը, ոմանք՝ Մելեսիտ, որը լեռնակողմում գտնվող ամրոց է, իսկ ուրիշները՝ Տախալասոն լեռը: Նրանք, բռնությամբ արտաքսվելով, կոտորվեցին Եկեղեցաձոր կոչված տեղում, որը մեծարվում է մինչև օրս: Իսկ նրանցից քառասուն սրբեր գնացին և թաքնվեցին այն քարայրում, որը գտնվում է Ալիս գե-

[1] Լուսավորչի նշխարքների գյուտի ու փոխադրության վերաբերյալ մեծ տարակարծություններ կան պատմիչների երկերում: Նա հիշվում է ավելի առաջ, քան Զենոնի ժամանակը, ապա նրա օրոք եղել է երկրորդ գյուտը, և հավանական է, որ մեծ մասը փոխադրվել է Կոստանդնուպոլիս, որտեղից էլ մի մասը բերվել է Հայաստան, իսկ մի մասն էլ ժամանակ անց տարվել է Իտալիա: Մեր հեղինակի կողմից Գրիգորիս Արշակունյաց եպիսկոպոսին հիշելը անպատշաճ է, որովհետև Արշակունիների ժամանակ Գրիգորիս անունով առաջին եպիսկոպոսը Զենոնից 200 տարով ետ է: Ճիշտ չեն նաև նրանք, ովքեր ասում են, թե Հունաստան են տարվել Լուսավորչի թոռ Գրիգորիսի նշխարքները:

* ՄՕ.-ում Կապուտակք:

տի ափին և այժմ կոչվում է Քաջ Վահանի[1] [քարայրը], որտեղ խաչ կանգնեցրին և քարի վրա գրեցին բոլորի անունները: Այդ բանն իմանալով՝ պատմեցին Լիկիանոսին, և նրա հրամանով եկան ու դուրս հանեցին այդ քարայրից արեգ ամսի տասնհինգին*, և այդ օրը Ուխտանեսը տոն[2] կարգեց. դա նրանց հանդեսի սկիզբն է, իսկ վերջը՝ մարտի ինը:

Դրանից հետո Պարսից Շապուհ արքան, նեղվելով Տրդատ արքայի կողմից, խաղաղություն խնդրեց Կոստանդիանոսից: Նա համաձայնվեց և նրանից ուզեց Դավիթ մարգարեի թագը, որը Հովաբն առավ Ամմոնի որդիներից, Մեղքոմի տնից և դրեց Դավիթ թագավորի գլխին: Թագը նախ անցավ քաղդեացիներին, հետո Կյուրոսին**, և ապա Դարեհից անցավ Աղեքսանդրոսին, որով պսակվեցին մակեդոնացիները մինչև Անտիոքոսը, որին սպանեց պարթև Արշակը, [թագը] խլեց նրանից, և այն հասավ մինչև Շապուհը: Կայսրը այն խնդրեց նրանից, որպեսզի իր թագը պատրաստի նրա նման և հետո այն վերադարձվի: Եվ երբ պատրաստել տվեց, երկուսն էլ դրեց սեղանի վրա և Շապուհի ծառաներին կարգադրեց, որպեսզի վերցնեն իրենցը: Նրանք ուշադիր նայելուց հետո վերցրին նորը և գնացին, քանզի Կոստանդիանոսը Աստծուց խնդրեց, որպեսզի իր մոտ մնա սուրբ Դավթի հիշատակը:

Ի. Իսկ սուրբ Տրդատը, որ մկրտությունից հետո Հովհան-

[1] Կապուտակքը ուղղակիորեն Կապադովկիայի անունն է: Թելախունեքի Թեմը Կապադովկիայի սահմաններում է, որի ճշգրիտ տեղն այժմ հայտնի չէ: Անատոլիկեքը Փոքր Հայքի արևելյան Թեմն է, որի սահմանները ժամանակ առ ժամանակ փոխվել են: Ըստ Բյուզանդացու Թեմագրության՝ Արամենակքը Փոքր Հայքի մի մասն է, որտեղ Հայոց և Հունաց զորավարները վերակացուներ էին կարգվում ինքնակալի արքունիքի կողմից: Խարսանեքը Մելիտենի և Մեծ Հայքի սահմաններում գտնվող Թեմ է: Դազիմոնը կամ Դազիմոնը Եվդոկիայի (Թոքադի) կողմերում է: Տախալասոնը պետք է լինի Մաքալասոնը, որի անունով քաղաք է հիշատակվում Սեբաստիայի հարավային մուտքի մոտ: Քարայրը, որտեղ թաքնվեց քառասուն մարդ, ամուր ու ամայի վայր էր, որը Ուխտանեսի օրոք Քաջ Վահանի ամրոց էր կոչվում:

* ՄՕ.-ում տասնյոթին:

[2] Սա Սեբաստիայի եպիսկոպոսն ու պատմիչն է, որից օգտվել է մեր պատմիչը:

** ՄՕ.-ում Կյուրոսին և Դարեհին:

նես կոչվեց, պարկեշտ կյանքի ու առաքինի բարքի պատճառով անաստված մարդկանց կողմից թունավորվեց և մեռավ՝ թագավորելով հիսունվեց տարի: Իսկ սուրբ Ռստակեսին սպանեց չորրորդ Հայքի իշխան Արքեղայոսը Ծոփքի ճանապարհին՝ իրեն միշտ չար գործերի մեջ հանդիմանալու պատճառով: Եվ աթոռին հաջորդեց նրա եղբայր Վրթանեսը, քանի դեռ կենդանի էր Տրդատը, նրա թագավորության հիսունչորսերորդ տարում, իսկ Ռստակեսին տարան Թորդան ու դրին իր հոր մոտ:

Իսկ Տրդատի մահից հետո Արշակունի երկրորդ Սանատրուկը, որին նշանակել էր Փայտակարանում, թագն ստանալով՝ մտածում էր տիրել ամբողջ Հայաստանին: Նա դրդեց բարբարոս ցեղերին և սպանել տվեց մանուկ Գրիգորիսին Վատնյան դաշտում: Նրա մարմինը բերեցին և թաղեցին Ամարասում: Այդ բանը լսելով՝ Աղձնիքի մեծ իշխան Բակուրն օգնեց Պարսից Որմիզդ արքային և խորհում էր Սանատրուկի մասին: Այդ մասին իմանալով՝ Հայոց նախարարները հավաքվեցին մեծն Վրթանեսի մոտ և զլխավորներից երկուսին ուղարկեցին մեծն Կոստանդիանոսի որդու՝ Կոստանդինի մոտ, որը հոր մահից հետո թագավորեց քսանչորս տարի, որպեսզի նա օգնի Հայաստանին, և թագը դնեն Տրդատի որդի Խոսրովի գլխին: Ընդունելով այդ խնդրանքը՝ Կոստանդինն ուղարկում է Անտիոքոս զորագլխին, և Խոսրովին թագադրելուց հետո նրանք շարժվում են Սանատրուկի վրա: Երբ Սանատրուկը դա լսեց, փախավ Պարսկաստան: Եվ մեր[1] զորքը թալանելով երկիրը՝ վերադարձավ: Մանաճիր Ռշտունին, հարձակվելով Բակուրի վրա, սպանում է նրան և Մծբինի կողմերից վերցնելով բազմաթիվ գերիներ, այդ թվում նաև սուրբ Հակոբի յոթ սարկավագներին, վերադառնում է: Սուրբը գնում է նրա ետևից և խնդրում է տալ, բայց նա չի տալիս: Հակոբը երբ ուզում է գնալ արքայի մոտ, Բակուրը նրան գետն է գցում: Սուրբը, իմանալով այդ մասին, վերադառնում է իր տեղը՝ անիծելով Մանաճիրին և իր աշխարհը: Դրա հետևանքով նա չարաչար սպանվում է, իսկ գավառն անպտուղ է մնում, մինչև որ Մանաճիրի որդին արժանավոր ապաշխարություն* է ցույց տալիս

[1] Հին Օ.-ում Հայոց:

* ՄՕ.-ում [illegible]՝ աշխատանք:

ու սրբի մահից հետո գերեզմանից հող է բերում, և սուրբ Հակոբի բարեխոսությամբ օրհնվում է երկիրը Աստծու հաշտությամբ:

ԻԱ. Մեծն Կոստանդիանոսն ուներ նաև մի եղբայր՝ Դաղմատիոս անունով և երեք որդի: Դաղմատիոսն էլ երկու որդի ուներ՝ Գաղոս և Հուլիանոս անուններով: Կոստանդիանոսի ավագ որդին իր հոր անունով Կոստանդ էր կոչվում, որին նա իր գրած կտակով տվեց Կոստանդնուպոլիսը, միջնեկն իր անունով էր, որին տվեց Անտիոքի* աթոռը, իսկ կրտսերին՝ Հռոմը: Միջնեկը[1] խաբեց կտակապահին և ստացավ Կոստանդնուպոլիսը, խոստանալով պահել նրա աղանդը, որովհետև նա արիոսական էր: Ավագը գրավեց Անտիոքը և հարձակվեց կրտսեր եղբոր վրա, որպեսզի խլի Հռոմը, բայց նրա դեմ ելավ իր հորեղբայր Դաղմատիոսը և սպանեց նրան: Կրտսեր եղբայր Կոստասն իր եղբոր համար սպանեց նրան, իսկ նրա որդիները փախան միջնեկի մոտ: Կոստասի վեցերորդ տարում Մագնիտիոսը հարձակվեց, հափշտակեց Իտալիան ու Ափրիկեն և թագը դրեց Սերմիում[2]: Այն ապաստանում կային չար մարդիկ, որոնք էլ սպանեցին Կոստասին և նրա եղբորորդուն: Այդ մասին լսելով՝ միջնեկ եղբայրը գալիս, սպանում է Մագնիտին և դառնում է ինքնակալ: Նա Գաղոսին կայսր է նշանակում Անտաքում, իսկ Հուլիանոսին ուղարկում է Աթենք՝ ուսում ստանալու: Դրանից հետո ապստամբում է Գաղոսը և սպանվում, իսկ Հուլիանոսը փրկվում է թագուհու աղաչանքով: Հուլիանոսին կայսր է կարգում արևմտյան կողմի վրա՝ նրան կնության տալով իր քույր Ալինեին, իսկ ինքը գնում է Անտիոք: Իսկ Հուլիանոսը հաղթում է բարբարոսներին, դնում է թագը և գալիս է Կոստանդնուպոլիս: Նրա դեմ դուրս է գալիս Կոստանդիոսը և մկրտվելով Զոյիոսի կողմից՝ մեռնում է Կիլիկիայի ու Սորիայի** միջև: Ասում են, թե վախճանվելուն մոտ նա զղջաց և մեռավ ուղղափառ հավատով տիրոջ*** համար: Նրա-

* ՄՕ.-ում Անտաք:

[1] Հին Օ.-ում միջնակ:

[2] Սերմին կամ Սերմիոնը Պաննոնիայի քաղաքն է, Սավա գետի մոտ, որի ավերակներն են միայն պահպանվել Միդրովից ավանի մոտ:

** ՄՕ.-ում Իսորիա, Իսուրիա:

*** ՄՕ.-ում տեր Քրիստոսի համար:

նից հետո [թագավորում են]՝ Հուլիանոսը, երկու տարի ութ* ամիս, նրանից հետո՝ Հուբիանոսը, մեկ տարի, որին գովում է Սոկրատը, բայց ոմանք էլ ասում են, թե նա Արիոսի աղանդի հետևորդ էր և ուղղափառների վրիժառուն: Եվ ասում են, որ նա այդ պատճառով էլ խեղդվեց: Նրանից հետո [թագավորեց] Վաղեսը, տասնչորս տարի. նա արիոսական էր: Քառասուն օր անց նրա եղբայր Վաղենտիանոսը թագավորում է նրա հետ միասին տասներկու տարի և մեռնում է բարբարոսների վրա ուժգին ու զոռոզաբար խոսելու պատճառով: Իսկ Վաղեսը, որ աքսորեց մեր Ներսեսին, շանթահարվելով մեռնում է Ադրիանապոլսում գեհենի հրավերով:

ԻԲ. Իսկ մեր Խոսրովը, Պարսից Որմիզդ արքայի երկրորդ և Կոստանդիոսի ութերորդ տարուց սկսած իր հայրենիքում թագավորելով ինը տարի, չինում է Դվինը, որ նշանակում է բյուր՝ շատ շոգ եղանակի պատճառով այնտեղ տեղափոխելով Արտաշատի բնակիչներին իրենց իսկ կամքով, այնտեղ է տեղափոխում և իր արքունիքը: Նրա օրոք ծմակային[1] կողմի երեք բյուր մարդիկ միաբանվելով ասպատակեցին Այրարատը: Այնտեղ առաքինացավ Վահան Ամատունին՝ սպանելով նրանց զորագլխին, որը հագել էր թաղիքե զգեստ (կճակուռ[2]), իսկ նրա պարտված զորքը փախուստի դիմեց: Բայց երբ Վաչե զորավարն ընկավ պատերազմում, սուրբ Վրթանեսը հրամայեց պատարագի ժամանակ հիշել նրա անունը: Խոսրովը վախճանվելով թաղվում է Կամախում՝ իր հոր մոտ: Եվ ինքնակալ Կոստանդիանոսն իր տասնյոթերորդ տարում թագադրում է նրա որդի Տիրանին և ուղարկում Հայաստան, բայց Տիրանը չէր գնում իր բարեգործ հայրերի հետքերով: Նրա երրորդ տարում վախճանվում է սուրբ պատրիարք Վրթանեսը և թաղվում Թորդանում: Աթոռին նստում է նրա որդի սուրբ Հուսիկը, վեց տարի: Նա խստագույնս հանդիմանում էր թագավորին՝ նրա զազրելի գործերի պատճառով: Նրա օրոք Հուլիանոսի արձանը բերվեց Տիրանի մոտ, և նա կամեցավ այն

* ՄՕ.-ում ինը:

[1] Ծմակայինը հյուսիսային կողմն է՝ կովկասյան ցեղերի երկիրը:

[2] Հին Օ.-ում կճակուռ [այսպես է նաև ՄՕ.-ում]:

դնել Ծոփաց գավառի եկեղեցում, բայց սուրբ Հուսիկն այն տրորեց ու մանրեց չեմքի մոտ: Եվ սրտնեղած թագավորը հրամայեց նրան ծեծել փշոտ գավազանով մինչև հոգին ավանդելը. նրա դիակը տարան և դրին իր հոր մոտ: Եվ երբ եկավ ծերունի քորեպիսկոպոս սուրբ Դանիելը, որ աշակերտել էր սուրբ Գրիգորին, անիծեց Տիրանին: Նրա վրա չարացավ թագավորը և հրամայեց խեղդամահ անել նրան: Նա թաղվեց իր մենախցում, որը կոչվում է Հացյաց գրախտ*, և Աշտիշատում աթոռին չորս տարի նստեց Փառներսեհը: Նրա ժամանակ Պարսից մեծ զորավարը եկավ մեծ ամբոխով, խաբեությամբ իր մոտ կանչեց Տիրանին և կուրացրեց նրա աչքերը Ապահունիք գավառի այն գյուղում, որն այդ գործողության պատճառով Արծուղ** կոչվեց: Եվ Տիրանը Աստծուն պատճառաբանեց՝ ասելով. «Որովհետև երկու աչք խավարեցրի, այդ պատճառով խավարեցին և իմ երկու աչքերը»:

Ասում են, որ սուրբ Հուսիկը մեկ անգամ կենակցում է իր կնոջ հետ, և նրանից ծնվում են երկու երկվորյակ որդի՝ Պապը և Աթանագինեսը, որոնք կոչված էին սարկավագության համար, բայց իրենց տալիս են աղտեղության և մի օրում չանթակեզ են լինում: Աթանագինեսից մնում է Ներսես անունով մի որդի, որին ուսման են տալիս Կեսարիայում: Տիրանի որդի Արշակի թագավորելու ժամանակ նա գալիս է նրա մոտ և դառնում նրա հպատակը***՝ պողպատյա սուրը կրելով նրա առաջ: Նրան շատ թախանձելով՝ համաձայնության են բերում և ուղարկում են Կեսարիա՝ ստանալու սուրբ Թադեոսի և Գրիգորի աթոռը, որը հրաշագործեց սուրբ Հոգին՝ ի զարմանս տեսնողների աղավնու կերպարանքով իջնելով նրա վրա: Ներսեսը գալով բարեկարգում է մեր երկիրը՝ շինելով վանքեր, ծտարանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, բորոտանոցներ, վերացնելով անհաս ամուսնությունը****, ողորմի չտալը, մեռելների վրա ողբալը, ազգականների խնամությունը: Դրանից հետո մեր աշխարհը նման էր վերին Երուսաղեմին՝ լցված ամեն տեսակի բարեկարգությամբ: Այդ բանը տեսնելով թա-

* ՄՕ.-ում Մկրտիչ Էմինը ծանոթագրում է՝ Հացյաց գրախտ:

** ՄՕ.-ում Արծիվ:

*** ՄՕ.-ում հնազանդվում է նրան:

**** ՄՕ.-ում հակառակությունը:

գավորը, նախարարները և եկեղեցու առաջնորդները նրան անվանում են պատրիարք, քանի որ մեզ մոտ, ասում են նրանք, կան անշարժ այուներ Բարդուղիմեոսն ու Թադեոսը և սուրբ Լուսավորիչը, որ Հռոմում պապ կոչվեց՝ հավասար նրան, որ նստում է Պետրոս առաքյալի աթոռին[1]: Որովհետև առաջինը միայն չորսն էին. Անտիոքում Մատթեոսինը, Հռոմում Ղուկասինը, Եփեսոսում Հովհաննեսինը, Աղեքսանդրիայում Մարկոսինը: Եվ մեծն Կոստանդիանոսի որդիների օրոք կոստանդնուպոլսեցիք և երուսաղեմացիք համարձակվելով պատրիարքներ կոչեցին իրենց առաջնորդներին. Կոստանդնուպոլիսը՝ Հովհաննեսի [աթոռը] այնտեղ տեղափոխելու, Երուսաղեմը՝ Աստծու մարդեղության գործի համար, և մենք, ասում են հայրերը, վստահ կլինենք մեր մեծ պատվին ու փառքին: Իսկ Սեբաստիայի, Մելտենիի ու Մարտիրոսաց քաղաքի եպիսկոպոսին մետրոպոլիտ կոչեցին և Հայաստանում հորինեցին ինը դասերի խորհուրդը, այն է՝ պատրիարք, մետրոպոլիտ, եպիսկոպոս, քահանա, սարկավագ, կես սարկավագ, դպրապետ, կրոնավոր[2], ժողովուրդ**:

ԻԴ. Նրա օրոք Արշակը երես թեքեց Վաղենտիանոս կայսրից, և վերջինս բարկանալով սպանեց Արշակի եղբայր Տրդատին, որը պատանդ էր նրա մոտ: Մեծն Ներսեսը գնում է կայսեր մոտ և մեծարվում նրա կողմից, որը շնորհավորում է նրա պատրիարքությունը[3] և նրան տալով սպանվածի որդուն ու բազում պարգևներ՝ վերադարձնում է Հայաստան: Իսկ Վաղենտիանոսի մահից հետո հերետիկոս Վաղեսը, լուծարելով Հայաստանի հետ խաղաղության դաշինքը, Թեոդոս զորավարի միջոցով փնտրում է Արշակին: Եվ սուրբ պատրիարքը, վերցնելով Արշակի որդի Պապին, գնաց Թեոդոսի մոտ և նրա[4] հետ էլ՝ կայսեր դուռը: Ներսեսը, տեսնելով թագավորին, ըս-

[1] Այդ խոսքերը ո՛չ Արշակինն են, ո՛չ նախարարներինը, այլ Դաշանց թուղթ կոչվածի հաճախահներինը, իսկ սուրբ Ներսեսի, մանավանդ մեծն Սահակի վախճանվելուց և Բազկեդոնի ժողովից հետո Հայոց կաթողիկոսներն ինքնուրույն դարձան:

[2] Նոր Օ.-ում կղերիկոս:

** ՄՕ.-ում պրակաչ ժողովուրդն՝ մաքրված ժողովուրդը:

[3] Այդ միտքը հեղինակինն է և ոչ թե կայսրինը:

[4] Նոր Օ.-ում նստեց [ՎՕ.-ում նովաւ, ՄՕ.-ում նովաւ]:

կլսում է ուղղափառություն քարոզել նրան, բայց թագավորը չի հավատում նրան: Այդ պատճառով մեռնում է թագավորի որդին: Թագավորը, բարկանալով նրա վրա, նրան յոթանասուն հոգու հետ միասին ինը ամսով աքսորում է մի անմարդաբնակ կղզի: Նրանք Աստծու շնորհիվ շաբաթ և կիրակի օրերը կերակրվում էին ձկներով, որոնց դուրս էին գցում ջրերի ալիքները փայտի ու կրակի հետ միասին: Եվ ինչպես ասում են, Գեորգիոս վկան սպանում է Վաղեսին ու հրկիզում նրա մարմինը, և թագն առնում է մեծն Թեոդոսը, որը սրբին վերադարձնում է կղզուց և նրա միջոցով հարյուր հիսուն եպիսկոպոսների ժողով է անում ընդդեմ հոգեմարտի՝ նզովելով Մակեդոնին և նրա ամբողջ խմորումները: Նա կրկին վերականգնում է Ներսես պատրիարքին հարյուր հիսուն եպիսկոպոսների վկայությամբ[1], և Ներսեսը վերադառնում է Հայաստան: Երբ Արշակը Տիրիթի քսությամբ սպանում է իր եղբորորդի Գնելին նրա կնոջ՝ Փառանձեմի համար, նրան նզովում է սուրբ Ներսեսը, և ինքը գնում է Հունաստան՝ իրեն փոխանորդ թողնելով Բագրևանդի Խաղ եպիսկոպոսին, որի շտեմարաններն առատացան, ինչպես որ Եղիայի միջոցով՝ այրի կնոջինը:

ԻԴ. Այն ժամանակներում Պարսից Շապուհ արքան գալիս է Ատրպատական, իր մոտ է կանչում Արշակին, կապում է նրան ու տանել է տալիս Անուշ կոչված բերդը, որտեղ մեռնում է [Արշակը]՝ սրով ինքնասպան լինելով: Այդ բանը լսելով՝ սուրբ Ներսեսը կայսրին խնդրում է թագավոր կարգել Արշակի որդի Պապին, որը նա կատարում է: Նա Ներսեսի հետ Հայաստան է ուղարկում շատ զորք, որը գալով տեսնում է, որ երկրի միապետը Մերուժան Արծրունին է՝ Քրիստոսին ուրացողը, որը Հայաստանը լցրել էր պարսկական զորքով, որոնց հետ մարտնչելով՝ նրանք վերջ են տալիս պարսիկներին սրբի աղոթքների միջոցով, իսկ Մերուժանին բռնում է Սմբատ Բագրատունին, չիկացած երկաթով պսակում է նրան՝ նախատինքներով սպանելով: Եվ երկիրն ամրապնդվեց Պապի կողմից, որը [թագավորեց] յոթ տարի: Նրա ժամանակ Հունաստանի զորագլուխ Անատոլիսը կայսեր անունով շինեց Թեոդուպոլի-

[1] Այս գլուխը վերևում ասվածի համաձայն է:

ը[1]: Բայց Պապն իր զզվելի գործերի պատճառով հանդիմանվում է Ներսեսի կողմից, որին [Պապը] Եկեղյաց գավառի Խախ գյուղում գաղտնի կերպով թունավորել է տալիս: Ներսեսը թաղվեց Թիլում. նա աթոռակալեց երեսունչորս տարի[2]: Եվ Պապ թագավորը նրա փոխարեն կարճ ժամանակով նշանակեց Զունակ* անունով մեկին, և ապա առանց Կեսարիայի մետրոպոլիտի, որն ընդունված էր պատրիարքների օրենքով, [նշանակեց] Ապահունիքի գավառից Շահակին**, որն աթոռին ծառայեց չորս տարի:

Իսկ Անատոլիս զորավարը, խաբեությամբ բռնելով Պապին և շղթաներով կապելով նրան, ուղարկում է Թեոդոսի մոտ, որն արժանի չհամարեց նրան տեսնել, այլ հրամայեց նրան գցել ծովը[3]: Եվ Հայաստանում թագավոր է նշանակում ոմն Արշակունի Վարազդատին, որը թագավորում է չորս տարի: Սրա երկրորդ տարում վախճանվում է Շահակը, որին հաջորդում է նրա եղբայր Զավենը՝ աթոռակալելով չորս տարի. նա ևս եղբոր նման բարի մարդ էր: Իսկ Վարազդատը քաջ Մուշեղին բռնելու և սպանելու պատճառով հալածվում է Մամիկոնյան ցեղի կողմից, և Թեոդոսը նրան աքսորում է Թուլիս կղզին: Նա Հայաստանում թագավոր է կարգում Պապի երկու որդիներին՝ Արշակին ու Վաղարշակին: Արշակի [թագավորության] երրորդ տարում վախճանվում է Զավենը, և աթոռը գրավում է նրանց եղբայր ու առաքինակից Ասպուրակեսը՝ [աթոռակալելով] հինգ տարի***:

[Այդ ժամանակ] մեր աշխարհը բաժանում են Պարսից Շապուհը և Թեոդոսի որդի Արկադեոսը՝ բարեկամություն հաստատելով միմյանց հետ: Արշակը ուռանում է Հունաստանի

---

[1] Թեոդուպոլիսի, այն է՝ Կարին քաղաքի շինարարությունը ուշ է եղել, Փաքը Թեոդոսի օրոք:

[2] Թերևս սուրբ Հուսիկի նահատակությունից մինչև մեծն Սահակի աթոռակալությունը երեսունչորս տարի է, բայց սուրբ Ներսեսը տասը տարուց ավելի քահանայապետ չի եղել:

* ՄՕ.-ում Զունակի փոխարեն Շահակ է:

** ՄՕ.-ում Սահակ:

[3] Բայց հնագույն պատմիչներն ասում են, որ Պապին ծովը չեն գցել, այլ կացնով [սակրով] են սպանել:

*** ՄՕ.-ում յոթ տարի:

կողմը հավատակցության պատճառով, իսկ Վաղարշակը, որ տիրում էր Պարսից արևելյան կողմին, մեռնում է: Եվ Շապուհը նրա փոխարեն նշանակում է ոմն Արշակունի Խոսրովին, որը երեք տարի անց զրկվում է տերությունից՝ երկրի իշխանների չարախոսության պատճառով. նա այն [Խոսրովն էր], որ պատրիարքության աթոռին նստեցրեց սուրբ Սահակին՝ մեծն Ներսեսի որդուն, որը սուրբ աթոռին ծառայեց հիսուն տարի: Պարսից թագավորը Խոսրովի փոխարեն նշանակեց նրա եղբայր Վռամշապուհին, որը [թագավորեց] տասնհինգ տարի:

Իե. Նրա հինգերորդ* և Շապուհի որդի Արտաշիրի առաջին տարում սուրբ Մեսրոպը հորինում է հայոց դպրությունը՝ ասորի Դանիելի մոտ գտնելով հին ժամանակներից մնացած քսաներկու տառ, որոնք մեր լեզվի ընդարձակությունը չբացահայտելու պատճառով անտեսվել էին մեր նախնիների կողմից, և նրանք բավարարվել էին հունական, ասորական և պարսկական գրերով: Եվ ոչ էլ Մեսրոպը կարող էր դրանցով Աստվածաշունչը փոխադրել հայերենի: Դրա համար նա իրեն նվիրեց աղոթքի սուրբ Սահակի օգնությամբ, և աստված կատարեց նրա խնդրանքը՝ նրան տալով տասնչորս տառեր, որոնք [Աստված] իր աջով դրոշմում է նրա առաջ այնպես, ինչպես մեծն Մովսեսին Սինա լեռան վրա, իսկ սրան Բալու[1] լեռան վրա, որտեղ տակավին երևում են աստվածագիծ վեմի դրոշմն ու տառերի պատկերները, և այդ տեղը տեղի բնակիչների (տաճիկների ու քրիստոնյաների[2]) կողմից միշտ մեծարվում է խունկով ու ջահերով: Եվ որ մեր նախնիներն ունեցել են հայերեն գրեր, հաստատվեց Լևոն արքայի ժամանակներում, որովհետև Կիլիկիայում գտնվեց դրամ, որի վրա դրոշմ-

---

* ՄՕ.-ում յոթերորդ:

[1] Ս. Մեսրոպի աշակերտներն ասում են, թե հայոց տառերի գյուտը սամոսացիների քաղաքում է եղել, այսինքն՝ Սամոս կղզում, իսկ ոմանք ընթերցում ու կարծում են սամոսատացիների քաղաք: Բալուի գյուտը հարմար չէ, բայցևայնպես ոչ առանց պատճառի է, որովհետև այնտեղ, Բալու լեռան գագաթին են գտնվում ոչ միայն Ս. Մեսրոպի աղոթարանն ու մատուռը, որոնք հիշատակվում են ԺԴ դարից, այլ նաև այդ լեռան անձավում, որտեղ ըստ մեր հեղինակի կա աստվածամերձ վեմը, վերջերս գտնվեց հնում արձանագրված բևեռաքանդակը:

[2] Փակագծերը՝ ըստ Հին օրինակի:

ված են Հայկազյան[1] կառապաշտ թագավորների անուններ հայերեն գրերով, որոնց պակասը նորերս լրացրեց Եզրասը՝ նոր Իսրայելի նորոգիչն ու կարգավորիչը, որ լցված էր աստվածախառն չնորհքով: Աստվածատուր պարգևների միջոցով սուրբ Երրորդության ճառագայթներն առնելով՝ նա մարգարեների, առաքյալների, ավետարանիչների, երկնային դասերի և բոլոր արդարների խմբերի հետ գալիս, մտնում է Հայաստան աշխարհը ու մեր եկեղեցիներում կուտակում անսահման գեղեցկություններ՝ հոգիների, մարմինների զարդարանքի ու հավիտենական փառքի համար, ինչը բոլոր ազգերի համար չարեց բոլորի Տերը: Քանզի ոչ թե հմուտ վարպետների ու միջնորդների միջոցով իմաստնացանք ու առաջնորդվեցինք դեպի նա, այլ երկնահաս ու աշխարհաստեղծ աջով մեզ համար գրվեց ուսման դպրությունը, և մեր տիրոջ ու Աստծու հիշատակը կենդանի է մնացել մեր մատյաններում՝ զորություն ու չնորհներ տալով նրանց, ովքեր մոտենում են հավատով ու գիտակցաբար: Դրա համար էլ տվողին փառք, պատիվ ու գոհություն և Տիրոջից մեզ մոտ բերողին օրհնություն: Եվ կյանքի գրքում մնաց նրա [Մեսրոպի] անվան հիշատակի պայծառությունը, (որ ծլարձակվել է, այսինքն՝ մշտազվարճ ու բերկրալից է[2], և մեր հոր տեղն ու հիշատակն առավելապես սրբերի հետ է, իսկ մեզ՝ նրա աշակերտներին ու հոգևոր որդիներին, նրա աղոթքների միջոցով [հասնում է] Աստծու ողորմությունն ու գթությունը)[3]:

Ապա սուրբ պատրիարք Սահակը, ուրախանալով երկնառաք պարգևներով, ընտրում է առաքինազարդ մանուկներ Հովսեփին, Ղևոնդին, Հովհաննեսին, Աբրահամին, Արձանին, Մուշեղին, Եզնիկին, Կորյունին և այլոց ու ուղարկում ազգերի մեջ՝ բոլոր ազգերից բերելու մատենագրության արվեստը: Որոշ ժամանակ անց նա [ուղարկում է] Մովսեսին, Դավթին, Եղիշեին, Մամբրեին՝ Մովսեսի եղբորը, իսկ նրանցից հետո՝ Արձան Արծրունուն, Խոսրովին, Ղազար պատմիչին: Եվ նրանց միջոցով թարգմանվեցին բոլոր գրքերը սուրբ Ղևոնդի ճշգրիտ օրինակներից: Սուրբ Սահակը նորոգեց սուրբ Հռիփսիմյանց տաճարը, որն ավերել էր Շապուհը: Նա խնդրեց Աստծուն, և անհայտացած նշխարքները հայտնվեցին նրան: Նա տեսավ [Արշակունյաց] թագավորության և քահանայության վերանալը Պահլավունյաց ազգից ու այն կրկին նորոգեց իր կյանքի վերջում: Նա ուներ մինուճար[1] մի դուստր, որին կնության տվեց Մամիկոնյան Համազասպին, որից ծնվեց սուրբ Վարդանը: Աստծու աքանչելի այր Մեսրոպը, անցնելով Վրաստան, գրեր է ստեղծում նաև նրանց համար ոմն Ջաղելի օգնությամբ, որն աշակերտեց նրան: Գնալով Աղվանք՝ Մեսրոպը գրեր է ստեղծում նաև նրանց լեզվի համար Բենիամինի օգնությամբ, որն էլ այնտեղ աշակերտեց նրան:

ԻԶ. Իսկ Վռամշապուհը բարվոք ավարտեց իր կյանքը: Սուրբ Սահակը, գնալով Հազկերտի մոտ, նրանից խնդրում է Խոսրովին, որը գտնվում էր բանտում, և վերստին թագավոր է կարգում նրան, որն ապրելով մեկ տարուց ոչ ավել՝ վախճանվում է: Իսկ երբ մեռնում է Հազկերտը, աթոռին է նստում Վռամ երկրորդը, որը խորհում էր բազում չարիքներ թափել Հայաստանի գլխին: Այդ բանն իմանալով՝ սուրբ Սահակը գնաց հույների մոտ, իսկ սուրբ Մեսրոպին ու իր թոռ Վարդանին ուղարկեց Արկադեոսի որդի Թեոդոսի մոտ, որն ուրախությամբ ընդունելով՝ Վարդանին կոչեց ստրատելատ [սպարապետ], իսկ Մեսրոպին՝ վարդապետաց վարդապետ: Թեոդոսն ու պատրիարք Ատտիկոսը հրամայում են դպրոցներ հիմնել և ռոճիկներ կարգել արքունի տնից: Նրանք վերադարձան, եկան սուրբ Սահակի մոտ և սկսեցին կատարել հրամանը:*

Դրանից հետո Վարդանին ուղարկում է Վռամի մոտ՝ հաշտություն խնդրելու և Վռամշապուհին թագավոր նշանակելու, որը և կատարեց նա: Իսկ Մովսեսն ասում է, թե Խոսրովից հետո Հազկերտը թագավոր է նշանակել իր որդի Շապուհին երեք տարով: Լսելով իր հոր մահվան լուրը՝ նա գնաց և սպան-

---

[1] *Այս գյուտը ցանկալի է ու հետաքրքրության արժանի, բայց նաև երկբայելի, որովհետև այժմ ոչ մի տեղ չկա հայկազյան թագավորների ու Արշակունիների անուններով հայատառ դրամ:*

[2] *Սեմական լեզուներից ստուգաբանելով՝ արաբերեն մեղուր բերկրյալ է հնչում:*

[3] *Փակագծերում Բ. օրինակում ավելի համառոտ է [ՄՕ.-ում այն չի փակագծված]:*

[1] *Նոր օրինակն ավելացնում է՝ Մանուշ անունով, բայց մեր նախնիները նրան Սահականուշ են կոչում:*

* *ՄՕ.-ում՝ մեր հավատի:*

վեց զորքի կողմից: Ասում են, թե երկիրը տասնմեկ տարի մնաց անիշխան ու խառնաշփոթ վիճակում: Դրանից հետո թագավորեց Արտաշիրը, որին ատում էին նախարարները՝ նրա զզվելի գործերի* պատճառով, որի համար խնդրում են մեծն Սահակին՝ նրան գահընկեց անել: Եվ երբ նրանք չեն համաձայնում, իրենք են գնում Վռամի պալատը և կանչել տալիս Արտաշիրին ու ուղարկում են Խուժաստան: Սուրբ Սահակին զրկելով աթոռից՝ նրա փոխարեն նշանակում են իրենց չարախոսակից Սուրմակին, որը մի տարի չլրացած հեռացվում է: Նշանակում են ասորի Բրքիշուին**, մեկ տարի, և ապա Շմուելին նույն ցեղից, որոնք թուլամորթ ու վատ վարքի տեր մարդիկ էին, որոնցից զզվելով՝ Հայոց նախարարները վռնդում են նրանց և աղաչում են սուրբ Սահակին՝ նստել աթոռին: Նրանց հետ չնայած նա չէր համաձայնում, բայց վարդապետությունից երբեք չէր դադարում և զոր ու գիշեր սնում էր հոգևոր գառների երկնավոր աղբյուրը: Ոմանք էլ ասում են, թե Բրքիշուից ու Շմուելից հետո աթոռին տիրանում է Սուրմակը, յոթ տարի: Իսկ սուրբ Սահակը, կարճ ժամանակ մնալով Բագրևանդ գավառի Բլուր գյուղում, վախճանվում և թաղվում է Աշտիշատում, Վռամի մեռնելուց ու նրա որդի Հազկերտի կողմից թագին տիրելուց հետո: Վեց ամիս անց Վաղարշապատում վախճանվում է սուրբ Մեսրոպը և թաղվում Օշական գյուղում, որի դագաղի վրա, մինչև այն գերեզման իջեցնելը, ընկնում է երկնային խաչանման լույս: Բայց աթոռի մասին տեղապահությամբ յոթ տարի հոգ էր տանում Մեսրոպի աշակերտ Հովսեփը, որը Վայոց ձորից էր, Հողոցմանց գյուղից: Նաև ասում են, թե ձեռնադրությունը Սուրմակն է կատարել, քանի դեռ նա կենդանի էր:

Իէ. Իսկ նախարարները, հավաքվելով մի տեղում, թագավորության տեղապահ են նշանակում սուրբ Վարդանին: Այդ ժամանակներում թարգմանությունից վերադարձան Ղևոնդը, Կորյունը, Արծանը, որոնց գալը զուգադիպեց Եփեսոսի ժողովին, որը չար Նեստորի պատճառով անցկացրեց Թեոդոսը իր

* ՄՕ.-ում իգամոլության զզվելի գործի պատճառով:

** ՄՕ.-ում Բրգիշո:

թագավորության տասնմեկերորդ[1] տարում: Եվ նրանք այնտեղից բերեցին [ժողովի] վեց գլուխ կանոնները:

Բայց Հայոց զորքը երբեմն ենթարկվում էր պարսիկներին, իսկ երբեմն էլ կռվում էր ու դիմակայում, երբ հավատքի շնորհիվ նրանց ուժ էր հասնում: Քանզի ավագ նախարարներ Շավասպ Արծրունին և Վնդոն, ուրանալով իրենց հավատքը, Դվինում շինում են Որմզդի մեհյանն ու ատրուշանը և քրմապետ նշանակում Վնդոյի որդի Շերոյին: Այդ բանը լսելով՝ սուրբ Վարդանը գալիս է իր զորքով, սպանում է Շավասպին, փախուստի մատնում մարզպան Մշկանին, պիղծ Վնդոյին գցում է ատրուշանի կրակի մեջ, այրում, Շերոյին կախում է փայտից բագինի վրա, որի տեղում կառուցում է եկեղեցի սուրբ Գրիգորի անվամբ: Եվ սուրբ Հովսեփին ձեռնադրում են կաթողիկոս, որը ժողով արեց Շահապիվանում, ուր տուգանքների կանոններ սահմանեցին: Երկու տարի անց, երբ զորքը եկավ Պարսկաստանից, բռնեցին նրան, Սահակին, Ղևոնդին և այլոց ու բանտ գցեցին, որպես Վարդանի խրատատուների: Նրանք հեռու տեղերում փնտրում ու բռնում էին սրբերին, որոնք ուրախությամբ էին ընդունում կապանքները Հանուն Քրիստոսի և դրանք չէին հանում մինչև վերջ: Այդ դեպքի առթիվ հայ նախարարները, հավաքվելով մի տեղում, Գյուտին նշանակում են պատրիարք և նույն Հովսեփի հրամանով աթոռը տեղափոխում են Դվին: Դրանից հետո սուրբ Վարդանին հնազանդվեցին Հայոց բոլոր նախարարները, որոնց հետ նա պատերազմ էր մղում Պարսկաստանի դեմ տասնինը տարի՝ տանելով քառասուներկու[2] հաղթանակ մինչև նահատակությամբ իր կյանքի ավարտը, սուրբ Սահակի օրհնությամբ, որը նրա մահվան ժամին՝ նավասարդ ամսի երեսունին, իր ծննդյան օրը, օրհնեց նրան և նրա եղբայրներ Հմայակին ու Համազասպյանին: Այդպես վարվեց նաև սուրբ Մեսրոպն իր մահվան ժամանակ, այն է՝ մեհեկան ամսի տասներեքին: Նրանց աղոթքներով ու օրհնությամբ նրանք պարսպվեցին ու պսակվեցին:

Այն ժամանակ քանի որ Հազկերտի հազարապետության պաշտոնում մնաց չարամիտ Ներսեհը, նրա մոտ գնաց Վա-

1 Այդ ժողովը գումարվեց Թեոդոսի ոչ թե տասնմեկերորդ, այլ քսաներեքերորդ տարում:

2 Մեր հնագույն պատմիչների մոտ Վարդանի մասին նման դեպքերի չենք հանդիպում:

բազվաղան* սեպուհը, որը իշխան Վասակ Սյունեցու փեսան էր, նույն տոհմից, որին ատում ու հալածում էր իր անները: Ուրանալով Քրիստոսին՝ նրան այնպիսի գործերի դրդեց, որ նա անցկացրեց Հայաստանում, և սատանայի նույն խորխորատն ընկավ նրա աներ Վասակը: Նրանք պատճառ դարձան անհամար աղետների, որոնք կատարվեցին Հայաստանում, և որոնք կարելի է սովորել** ընդարձակ պատմություններից: Վարդանանք նահատակվեցին հրոտից ամսի երեսունին, Հազկերտի տասնվեցերորդ տարում, ընդամենը հազար երկու հարյուր երեսուներկու[1] մարդ: Երկու տարի անց, հրոտից ամսի յոթին [վախճանվեցին] սուրբ Սամվելը, սուրբ սարկավագ Աբրահամը և Բասենի սուրբ եպիսկոպոս Թաթիկը, որն ավելի առաջ տարվել էր Խուժաստան, և նա [իր կյանքն ավարտեց] դառն տանջանքներով հրոտից ամսի տասին: Սուրբ կաթողիկոս Հովսեփը, տեր Սահակը, սուրբ քահանաներ Ղևոնդը, Մուշեն, Արշեն*** և սուրբ սարկավագ Քաջաջը,- այս վեցն էլ վախճանվեցին ի փառս Աստծու Ապար աշխարհում, հրոտից ամսի քսանհինգին, իսկ երանելի մոգպետը՝ մարգաց ամսի տասին: Ասողիկն ասում է, թե ինքը ստուգել է Հազկերտի տասնվեցերորդ տարին, որը համընկնում է Մարկիանոսի[2] երրորդ տարվան:

ԻԸ. Նրա օրոք սուրբ Մովսեսը, Մամբրեն և Դավիթը, վերադառնալով ուսումնառությունից, հոգ էին տանում կաթողիկոսարանի համար: Եվ թվում է, թե Քաղկեդոնի ժողովի ժամանակ Գյուտը[3] վախճանվել էր և [աթոռին] դեռ չէր նստել Հոհան Մանդակունին: Նրանց մոտ բերեցին դավանագիր, բայց

* ՄՕ.-ում Վարազ վաղյան:

** ՄՕ.-ում տեսանել՝ տեսնել:

[1] Այդ քանակից երկու հարյուրը հետո վախճանվեցին և ոչ թե պատերազմում [ՄՕ.-ում երեսուներկուսի փոխարեն երեսուն է]:

*** ՄՕ.-ում Արսեն:

[2] Վարդանանց նահատակության ստույգ օրը Քրիստոսի 451 թ. հունիսի երկուսն է, որը Մարկիանոսի երկրորդ տարին է:

[3] Քաղկեդոնի ժողովի ժամանակ Գյուտը ոչ միայն վախճանված չէր, այլ նաև կաթողիկոս չէր նստել: Հայաստանում պարսիկների աղմուկի և Վարդանանց պատերազմի ժամանակն էր, այդ պատճառով մերոնցից ոչ ոք չմասնակցեց այդ ժողովին, գոնե որպես մեր հայրապետի փոխանորդ: Որ Մովսեսի, Դավ-

նրանք չընդունեցին, որովհետև սուրբ հայրերի ավանդներից չեղվում էր: Այլ Մովսեսն ու Դավիթը գնացին, որպեսզի, եթե հնար լինի, օգնեն ուղղափառությանը (!), դրա համար մեզանում այսպիսի կարծիք կա, թե Դավիթը երկար խոսել է Հուբնաղի*, արքունի երեց Պողքերի (և կորնթացիների արքեպիսկոպոս Մամբրեի հետ[1]), որոնք կարկամեցին և ամոթով մնացին: Եվ ապա ոտքի կանգնեց մակեդոնացիների մետրոպոլիտ Մելիտոսը և ասաց Մովսեսին. «Գիտեմ քեզ և քո աշակերտներին՝ մանկությունից կրթված ու թեքված դեպի զոռոզ ու հոնքակախ իմաստասերների ճոռում խոսքերը, և ոչ ոք չի կարող հաղթել ձեզ. դուք նաև լցված եք նախանձով, որովհետև չկանչեցինք ձեզ, քանի որ կենդանի չէր ձեր պատրիարքը»: Մովսեսն ասում է. «Իհարկե, ճանաչում ես մեզ, որ մենք եկեղեցու առաջնեկն ենք ու հայրապետանոցի դատավորները. ինչո՞ւ մեզ չկանչեցիք, և մեր բազմահմտությունը նախատինք ես համարում: Բայց ձեր ժողովի պատճառը ոչ մեկից գաղտնի չէ, և մենք չենք թողնի ճշմարտությունը, այսինքն՝ Աստծու մարմնացեալ բանին մի բնություն ենք ասում»: Մելիտոսն ասում է. «Ինչպե՞ս ես ասում մեկը. Որդուն Հորից առանձնացած ես ասում և միացած մարմնում»: Մովսեսն ասում է. «Զբաժանված Հորից և միացած մարմնում»: Եվ նման շատ բան խոսեցին: Ուստի կարծեցինք, որ այդ ժամանակը այսպիսին է եղել. Գյուտը, տասը** տարի նստելով աթոռին, վախճանվում է, և նրան հաջորդում է Հոհան Մանդակունին՝ մի իմաստասեր ու Աստծու հոգով լցված մարդ, որը բարվոք հորինեց ձեռնադրության ու ժամերգության կարգերն ու խրատական ճառերը: Նա թարգմանեց կորնթացիների երկրորդ թուղթը, Հովհանինը և իր կյանքում բազմաթիվ այլ օգ-

թի, Մամբրեի մասին հակաճառություններ են եղել, այժմ էլ իմաստակությամբ ու ճամարտակությամբ լի ամբողջական գրքեր կան, բայց դրանք հորինված են կամ թելադրված ոչ Մովսիսյաններից սկսած, այլ հետո կատարված Եզրի ու Հերակլ կայսեր օրոք, այն է՝ Մայրաքաղաքեցու համախոհների կողմից: Թող այստեղ հիշվի կաթողիկոսների ժամանակը, որովհետև պատմիչների մոտ չփոթություն ու անհամաձայնություն կան. ավելի հները Հովսեփի ու Գյուտի միջև տեղադրում են Մելիտեին ու Մովսեսին, որոնց հետինները չեն հիշում:

* ՄՕ.-ում Հրնաղ:

[1] Բ. Օ.-ում չկա [այն ՄՕ.-ում չի փակագծված]:

** ՄՕ.-ում վեց:

տակաբ գործեր կատարեց: Ոմանք Գյուտ կաթողիկոսին համարում են հույների կողմնակից, իսկ Հովհաննին՝ Պարսկաստանի, միևնույն ժամանակաշրջանում: Սրանց օրոք ապրում էր ճգնավոր Անտոնը, որն անվանվում է նաև Թաթուլ: Նա, Հանուն Քրիստոսի թողնելով ամեն ինչ, իր հարազատ եղբայր Վարազի հետ միասին գնում, կրոնավորում է այն տեղում, որն այժմ կոչվում է սուրբ Թաթուլ:

ԻԹ. Իսկ մեր սուրբ նահատակների վախճանից հետո չար Վասակը Հմայակի կնոջն ու երեք որդիներին տանում է պալատ՝ որպես մահապարտների որդիներ: Վրաց Աշուշա բդեշխը նրանց խնդրեց Հազկերտից, և նա նրան տվեց այդ անակնկալ պարգևը: Նրանցից ավագը՝ Վահանը, Հայաստանի սպարապետ դարձավ, որովհետև երբ սպանվեց Հազկերտը, նրա որդի Պերոզը, սպանելով իր եղբորը, թագավոր է դառնում և հաշտություն է կնքում մեր երկրի հետ ու Վահանին նշանակում է արքունի հարկահան: Վահանը քսու մարդկանց հորդորանքով տկարանում է հավատքի մեջ, բայց հետո խիղճը տանջում է իրեն, և նա զղջում է ու ապաստանելով արքայի դեմ՝ շատ անգամ կոտորում է Պարսից զորքը: Իսկ Վարազվաղանը, ուրացության պատճառով տիրելով Սյունիքին, բազում օրեր նեղվելով դևերի կողմից՝ խեղդվում է առանց զղջալու: Նույն օրը սպանվում է նաև ուրացող Վազգենը, և այդ պատճառով շատ այլ ուրացողներ ընդունում են գեհենի առհավատչյան:

Դրանից հետո Պարսից զորավար Միհրանը մեծ զորքով գալիս է Վրաց Վախթանգ արքայի վրա և աղաչանք հղում Վահանին՝ օգնել իրեն: Նա գնաց հոժարակամ, բայց պատերազմի թեժ պահին վրացական վախկոտ զորքը փախավ թագավորի հետ Հայաստանից եկած վախկոտների հետ միասին: Նահատակվեց սուրբ Վասակը՝ Վահանի եղբայրը, որի դեմքը մարտից առաջ փառավորվելով փայլում էր, ինչպես Մովսեսինը, որին չէին կարողանում նայել ներկաները, և [մարդիկ] իմացան, որ նա այդ օրը մեռնելու է: Նահատակվեց նաև Սյունյաց սուրբ սեպուհ Հազդը Հոռի տասնվեցին Բազման գյուղում, որին բռնելով՝ Միհրանը ստիպում էր[1] ուրանալ հավատը ու ապրել մեծությամբ, բայց հակառակ պատասխան տալով՝ մեռնում է Հանուն Քրիստոսի և [նահատակի] պսակի արժանանում: Նույնպես և քաջ ասպետ Սահակը վախճանվում է պատերազմի ժամանակ կրոնական սուրբ ուխտի համար: Դրանից հետո հեփթաղների կողմից սպանվում է Պերոզը իր յոթ որդիների հետ միասին: Եվ թագավոր են կարգում նրա եղբայր Վաղարշին: Նա կանչեց Վահանին և նրան տվեց Հայոց զորավարությունը, իսկ դրանից հետո էլ՝ մարզպանությունը: Վաղարշից հետո աթոռին նստում է նրա որդի Կավատը, իսկ նրանից հետո՝ Խոսրովը, քառասունութ տարի: Վահանը շինեց Արտաշատի եկեղեցիները, որոնք ավերվել էին պարսիկների կողմից:

Այն ժամանակներում Արշակունիներից նահատակվեց երանելի Տյառնթեզը* Պարսից զորագլուխ Զառնավուխտի կողմից. նրա հետ նահատակվեցին նաև բազում այլ մարդիկ:

Լ. Վեց տարի աթոռին նստեց տեր Հոհանը, նրանից հետո՝ տեր Բաբկենը հինգ** տարի, նրանից հետո՝ տեր Սամվելը, հինգ տարի, նրանից հետո՝ տեր Մուշեն, ութ տարի, նրանից հետո՝ տեր Սահակը, յոթ տարի, նրանից հետո՝ Քրիստափոր փիլիսոփան, յոթ տարի: Իսկ Վահանը բարվոք կյանք վարելուց հետո վախճանվեց, և նրան փոխարինեց իր եղբայր Վարդը, չորս տարի: Ոմանք ասում են, թե Վահանը իշխան մնաց քսան, իսկ ոմանք էլ՝ երեսունմեկ տարի: Տեր Քրիստափորին հաջորդում է տեր Ղևոնդը, երկու տարի, և ապա տեր Ներսեսը՝ ինը տարի: Նրա ժամանակներում Պարսից Խոսրով թագավորը զորք ուղարկեց, որպեսզի բռնեն Վարդին: [Այդ ժամանակ] մեծ պատերազմ եղավ Խազամախ[2] դաշտում, որտեղ կոտորվեց Պարսից զորքը սուրբ հայրապետ Ներսեսի աղոթքներով: Այդ ժամանակներում վախճանվեց սուրբ Հիզբուզիտը, որ նշանակում է Աստծու օգնությամբ ազատված: Նա սպանվեց Դվինում Վահրամ** մարզպանի կողմից, որովհետև Վարդից հետո պարսիկ մարզպաններն էին իշխում: Եվ սուրբ վկայի մարմինը սուրբ Ներսեսն ամփոփեց կաթողիկոսարանին առընթեր՝ նրա վրա շինելով սրբատաշ մի մատուռ:

---

[1] Հին Օ.-ում Հարկանէր և Հարկէր՝ խփում էր և ստիպում:

* ՄՕ.-ում Արշավունիքցի Տանթան:

[1] Թե ինչպես է եղել Տյառնթեզի նահատակությունը, մեզ հայտնի չէ:

** ՄՕ.-ում յոթ:

[2] Խազամախը հավանաբար Խոզոմախոնն է՝ ըստ բյուզանդացիների, հիշատակված Հայաստանում Դ դարում, իսկ այժմ անծանոթ է:

** ՄՕ.-ում Վահան:

Սրա օրոք Եզրաս Անգեղացին ավելացրեց ճարտասանների խմբերը: Ներսեսից հետո [աթոռակալում է] տեր Հովհաննեսը, տասնհինգ տարի, նրանից հետո՝ եղվարդցի տեր Մովսեսը, երեսուն տարի: Նա իր հայրապետության տասներորդ, Կավատի որդի Խոսրովի երեսունմեկերորդ և Հուստինոսի, որը չինեց սուրբ Սոփին, տասնչորսերորդ[1] տարում սահմանեց հայոց թվականն ու տոմարը: Նրա ժամանակ լրացել էր հինգ հարյուր երեսուներկու տարվա շրջանակը, և Հայոց մարզպանն էր Մեժեժ Գնունին, որն իշխեց երեսունմեկ տարի: Այդ ժամանակ տպրում էին Սյունյաց քեռթող Պետրոս եպիսկոպոսը, տարոնցի Ներշապուհը և սասունցի Արդիշոն, որին Մովսեսը եպիսկոպոս ձեռնադրեց, իսկ Կյուրոնին, որն ազգությամբ Վրաստանից* էր, Ջավախք գավառի Սկուտրի գյուղից և գիտեր հայոց ու վրաց դպրությունը, ձեռնադրեց Վրաստանի կաթողիկոս, որը հետո քաղկեդոնիկ[2] դարձավ, որովհետև նա երեխա ժամանակ գնացել էր Հունաստանի Կողոնիա գավառը, բնակվել Գայլ գետի ափին գտնվող Նիկոպոլիս** գյուղում և ստացել հունական կրթություն: Տասնհինգ տարի անց նա եկավ Դվին, Մովսեսի մոտ, և վերջինս նրան նշանակեց սուրբ կաթողիկեի վաներեց, միաժամանակ Արարատյան գավառի քորեպիսկոպոս, յոթ տարի: Իսկ երբ մեռավ Վրաց կաթողիկոսը, երկրի իշխանները Մովսեսի մոտ [պատվիրակ] ուղարկեցին առաջվա նման, որպեսզի Մովսեսն իրենց համար առաջնորդ տա, և նա կամեցավ տալ նրան [Կյուրոնին], որպես իրենն մոտ մարդու: Կյուրոնը գալով նվաճեց ամբողջ երկիրը: Եվ ապա նրա մոտ եկավ խուժաստանցի մի նեստորական, որի անունը Կիս էր, այսինքն՝ խստություն, ինչպիսին որ նա եղավ իրականում: Նա Կողոնիայից էր, Նիկոպոլսի մոտ գտնվող Զուտաուիմա գյուղից. նրանք միմյանց կրոնակից ու աղանդավորակից էին: [Կյուրոնը] նրան ձեռնադրում է եպիսկոպոս, և նրա պատճառով ամբողջ երկիրը կորստյան է մատնվում: Այդ բանն իմանալով՝ Մովսես եպիսկոպոսը, որը գտնվում էր Ծուր-

[1] Ոչ թե տասնչորսերորդ, այլ քսանչորսերորդ տարում:

* ՄՕ.-ում վրացի:

[2] Դրա համար էլ նա դատապարտվում է մեր հեղինակի և նրա համախոհների կողմից:

** ՄՕ.-ում Նիկապոլիս:

տավում, որն այժմ կոչվում է Գանձենք*, հայտնում է Մովսես պատրիարքին: Վերջինս Կյուրոնին գրում է հանդիմանանքի ու սպառնալիքի թուղթ, և նա սրբի երկյուղից ամբողջովին ուրանում է աղանդը: Որոշ ժամանակ անց, իր հայրապետության երեսուներորդ տարում, մեռնում է պատրիարքը, և Կյուրոնն անփութորեն ընդունում է քաղկեդոնականությունը:

ԼԱ. Իսկ Պարսից Խոսրով թագավորը իր մեռնելուն մոտ հավատում է Քրիստոսին և իր մոտ է կանչում Երան կաթողիկոսին, որին այլ եպիսկոպոսների հետ միասին տեր Գյուտն էր ձեռնադրել Պերոզ արքայի մոտ գալու ժամանակ: Երբ կաթողիկոսը հանդիմանեց պարսիկների մոլորությունը, թագավորը մեռնելուց առաջ մկրտվեց Երանի կողմից, հաղորդվեց ու կարճ ժամանակ անց վախճանվեց, և քրիստոնյաները նրան թաղեցին արքունական գերեզմանոցում: Թագն առնում է նրա որդի Որմիզդը, որը գործում է նենգորեն և սպանվում է իր պալատում: Թագը խլում է նրա որդի Խոսրովը, որի վրա հարձակվում է զորագլուխ Վահրամը և նրան փախուստի է մատնում: Նա գնում է Մորիկ կայսեր մոտ և նրանից օգնություն ստանալով՝ վերադառնում է ու տիրում իր հայրենիքին: Նա երախտահատույց է լինում Մորիկին՝ նրան թողնելով Միջագետքը և Հայաստանի այն մասը, որ կոչվում է Տանուտերական գունդ[1], բացի Դվինի ոստանից և երկու գավառներից, որոնք են՝ Ոտն Մասյացը և Արազածի կողմը, Մորիկին թողնում է Ընծաքիսար** կոչվող սարից մինչև Առեստ ավանն ու Հացյունքը: Նա հանդգնելով փոխում է Արայի[2] դրած անունները. նրա կողմից կոչված Արմնին, այն է՝ Առաջին Հայքը, կոչում է Երկրորդ Հայք, որի մայրաքաղաքն էր Սեբաստը, Կապոտիկիան***, որի մայրաքաղաքն էր Կեսարիան, կոչում է Երրորդ Հայք և դարձնում փոխարքայություն, Մելտենին, որն ունի իրեն հոմանուն գավառ, կոչում է Առաջին Հայք, Պոնտո-

* ՄՕ.-ում Գանձեք:

[1] Տանուտերական երկիրը Նախիջևանի կողմում է, բայց այստեղ այն ավելի ընդարձակ է ներկայացված:

** ՄՕ.-ում Ընծակի սար:

[2] Պետք է ասել «Արամայ» Արամից:

*** ՄՕ.-ում Կապադովկիա:

սը, որի մայրաքաղաքը Տրապիզոնն է, կոչում է Հայքի մեծ մաս, Ջորբորդ Հայքը, որի մայրաքաղաքն է Նփրկերտը, որը կոչվում է նաև Մուփարկին*, իսկ արքունի դիվանում այն անվանվում է Հուստիանունիստ, և Կարնո աշխարհը, որի մայրաքաղաքն է Թեոդուպոլիսը, կոչում է Հայքի Մեծ մաս, իսկ նրանց մոտ գտնվող Մեծ Հայքի մասը, Բասենի կողմերից մինչև Ասորեստանի սահմանները, Մեծ Հայք է կոչում, Տայքի կողմերն իր սահմաններով կոչում է Խորագույն Հայք, իսկ Դվինի կողմը՝ Ներքսագույն Հայք: Եվ այս անունները գրում է դիվանում:

Նրա օրոք Սմբատ Բագրատունին, քաջապես կռվելով, Խոսրովին է ենթարկում նրա բոլոր թշնամիներին: Խոսրովը փոխարենը նրան է տալիս Վրկան աշխարհի մարզպանությունը: Այնտեղ գնալով՝ Սմբատը գտնում է Հայոց գերված ազգին՝ բնակեցված Թուրքեստան մեծ անապատում, որը Սազաստան է կոչվում. հայերը մոռացել էին իրենց լեզուն ու դրպրությունը: Տեսնելով Սմբատին՝ նրանք ուրախանում են և նորոգում իրենց լեզուն ու գիրը: Եվ նրանց Հաբել անունով երեցին տալիս է մեծ հայրապետ Մովսեսին՝ նրան եպիսկոպոս ձեռնադրելու համար: Նրանց գնում է սուրբ Գրիգորի վիճակում և արքայից հրաման առնելով՝ գալիս է տեսնելու իր երկիրը: Դվին գալով՝ սկսում է շինել փայտաշեն սուրբ Գրիգոր [եկեղեցին] սուրբ Վարդանի բերդի մոտ, բայց բերդապահը բողոքում է** արքունիքին, թե դա վնասակար է բերդի համար, և հրաման է տրվում՝ քանդել բերդը և ավելի հեռու շինել: Եվ Սմբատն, ուրախանալով ի փառս Քրիստոսի, եկեղեցին շինում է վիմատաշ քարերով և պատրիարք է ձեռնադրել տալիս Ռշտունյաց եպիսկոպոս տեր Աբրահամին, որը թղթով Պետրոսի օգնությամբ ձգտում է Կյուրիոնին դարձնել դեպի ուղղափառություն (!): Այդ պատճառով Դվինում ժողով են անում և անիծում Կյուրիոն հերետիկոսին (!): Մորիկն իր կողմում կաթողիկոս է նշանակում Հոհանին, որը նստում էր Ավան գյուղում[1], և այդ սուրբ մարդն այնտեղ շինում է եկեղեցի, որը բոլորի կողմից համարվում էր ընտիր[1] [եկեղեցի]:

ԼԲ. Այն ժամանակ Մորիկի նախարարները սպանեցին նրան և թագավոր դրին Փոկասին, որը գալով Բասեն[2]՝ ձգտում էր նվաճել Հայաստանը: Խոսրովի հրամանով Աշոտը դուրս է գալիս նրա դեմ, մեծ կոտորած է տալիս և գրավում Կարին քաղաքը, իսկ բնակիչներին տեղափոխում է Ահմատան, հետո տանում է նաև Հոհան կաթողիկոսին, որն այնտեղ գաղթության* մեջ էր: Կաթողիկոսական աթոռին քսանվեց տարի նստելուց հետո նա վախճանվում է այնտեղ, և դին բերվում է Ավան գյուղը: Նրան փոխարինում է սուրբ պատրիարք Աբրահամը՝ աթոռակալելով քսաներեք** տարի, իսկ նրան էլ հաջորդում է տեր Կումիտասը***, որը Աղցք գյուղից էր:

Իսկ Մեժեժից հետո իշխանների կարգում [այսինքն՝ մարզպաններ] նշանակվեցին պարսիկները. նախ՝ Դենշապուհը, որն ուժեղացրեց կռապաշտությունը, նրանից հետո՝ ոմն Վարազդատը, և ապա՝ Խոսրովի ազգական Սուրենը, որը շնանում էր իշխանների կանանց հետ: Այդ պատճառով նրա վրա զայրացավ Վարդանը՝ Վասակ Մամիկոնյանի որդին, սպանեց նրան և վերցնելով ընտանիքը՝ գնաց Կոստանդնուպոլիս: Բայց Հերակլը սպանելով Փոկասին՝ թագավոր է նշանակում իր որդուն, և ինքը շարժվում է դեպի արևելք: Խոսրովի հրամանով Խոռեմն ավերում է Հունաստանը՝ վրեժխնդիր լինելով Մորիկի սպանության համար, գերում է Երուսաղեմը, փրկական փայտը և Երուսաղեմի Զաքարիա պատրիարքին: Այն ժամանակ Կումիտաս պատրիարքն ընդարձակում է սուրբ Հռիփսիմյանց վկայարանը [մատուռը] ու հանդիպում է նրանց սուրբ նշխարքներին, որը պակաս մխիթարություն չի լինում քրիստոնյաների համար: [Այն] կնքված էր սուրբ Գրիգորի և սուրբ Սահակի մատանիներով: Կումիտասը չհամարձակվեց բացել, այլ իր կնիքը դրեց վրան: Հռիփսիմեի հասա-

* ՄՕ.-ում Մուփարին:

** ՄՕ.-ում պահնակք բերդին բողոքէին՝ բերդի պահակները բողոքում էին:

[1] Կոտայքի Ավան գյուղը Երևանի կողմում է: Բայց պատմիչների տարբեր կարծիքների պատճառով Հովհաննեսի և Աբրահամի կաթողիկոսության ժամանակները տարակուսելի են:

[1] Բնագրում այդպես է, իսկ մյուսում տարբեր. «Այր սուրբ և բնով չթեքված դեպի հունաց աղանդը» [այդպես է նաև ՄՕ.-ում]:

[2] Թերևս կայսրի զորավարներից մեկը, որ մարտ էր տալիս պարսիկների դեմ, հանդիպած լինի Բասենում, բայց ոչ ինքը՝ Փոկասը:

* ՄՕ.-ում կայր ի գաղտի՝ թաքնված էր:

** ՄՕ.-ում երեք:

*** ՄՕ.-ում Կոմիտաս:

կը տասը թիզ չորս մատ էր, ասում են, որ սուրբ Գրիգորինը ի-նը թիզ էր, իսկ Տրդատինը՝ տասնմեկ:

ԼԳ. Հերակլը ընծաներով պատվիրակներ է ուղարկում Խոսրովի մոտ՝ խաղաղություն խնդրելու, բայց նա պատասխան չի տալիս: Զայրացած Հերակլը իր հետ վերցնում է իր եղբայր Թեոդոսին և Անտիոքի մատ երկու անգամ կոտորում է Պարսից զորքը ու շարժվում է դեպի Հայաստան, Խոսրովի վրա: Ստանալով Խոսրովի առաջին որդու՝ Կավատի ուժը[1], սպանում է Խոսրովին: Կավատը հաշտություն է խնդրում Հերակլից ու նրան է զիջում Միջագետքը: Հերակլը վերադառնում և գալիս է Կարին քաղաքը: Նրա օրոք Կոմիտասի սուրբ աթոռին հաջորդել էր տեր Քրիստափորը, որին ազատում են, որովհետև խռովություն էր գցում իշխանների մեջ, և գնում են Նիգացի Եզրին: Թագավորը նրան կանչեց Կարին քաղաք, և նա իր տգիտության[2] պատճառով քաղկեդոնիկ դարձավ, որի դիմաց ստացավ Աղցքը և Կողբի[3] երրորդ մասը: Եվ երբ նա վերադարձավ, նրան կչտամբեց կաթողիկոսարանի Հոհան[4] վարդապետը՝ ասելով. «Հիրավի Եզր կոչվեցիր, որովհետև ուղղափառությունից եզր [դուրս] ելար»: Նա գնաց Աղվանք, Գարդման գավառի սահմանը և ճգնեց խիստ վարքով: Նա գրեց երեք գիրք, որոնց վրա չդրեց իր անունը. մեկը կոչեց Խրատավարք, երկրորդը՝ Հավատամարտ*, երրորդը՝ Նոյեմակ: Նա Սարգիս անունով մի աշակերտ ուներ, որը ցանկանում էր [տիրանալ] Սաբելին, որի պատճառով Հոհանը հալածեց նրան և հեռացրեց իր մոտից**: Այդ ժամանակ մեռնում է Կավատ արքան, և թագավոր է դառնում նրա անչափահաս որդին՝ Արտաշիրը: Այդ բանը լսելով՝ Հերակլը դրդում է Խոռեմին՝ խլել թագը, սպանելով այդ երեխային, որը և նա կատարեց և սուրբ խաչը տվեց Հերակլին: Զորքը սպանելով Խոռեմին՝ թագը տալիս է Խոսրովի դուստր Բորին, որից հետո՝

[1] Այսպես է ՕՕ.-ում:

[2] Գոնե այս մասում նա ավելի գիտակցական գտնվեց, քան տվյալ հեղինակը:

[3] Իմա՝ աղահանքի մի մասը:

[4] Մոլորյալ Մայրագոմեցին:

* ՄՕ.-ում Խրատ վարք, Հաւատոյ ապմատ:

** ՄՕ.-ում կա նաև «զոր սմա համբաւեն տգէտք» (որի համբավը տարածում են տգետները) նախադասությունը:

նրա քույր Զամրիկին, իսկ նրանից հետո էլ՝ Խոսրովի թոռ Որմիզդին, որին խեղդամահ են անում և թագավոր նշանակում Խոսրովի թոռ Հազկերտին[1]:

Իսկ Հերակլը խաչը տանում է Երուսաղեմ և գնում է իր տեղում: Այդ ժամանակ [նա] Հայաստանի զորավար է նշանակում Մեժեժին, որին սպանում է Դավիթ Սահառունին, և Հերակլի հրամանով ինքն է իշխում երեք տարի: Նա շինեց Մրեն եկեղեցին[2], բայց հետո անարգվեց իշխանների կողմից և հալածվեց: Հայաստանում մեծ խառնաշփոթություն առաջ եկավ, և ամեն մեկը ձգտում էր հաղթել մյուսին: Նրա օրոք Եզրը ընդարձակեց սուրբ Գայանեի վկայարանը, իսկ տեր Քրիստափորը Մասյացոտնում մենաստան կառուցեց, որտեղ նա առաքինանում էր ջանադիր բազում աղոթքներով երեք հարյուր քրջազգեստ մարդկանց հետ միասին: Նրա օրոք տասներկու հազար հրեա, հավաքվելով Եղեսիայում, ապստամբություն բարձրացրին Հերակլի դեմ, որը գնալով ազատեց Ուռհան, գրավեց այն և հրեաներին ողջ-ողջ արձակեց, որպեսզի ուր կամենան, գնան՝ չլսելով Թեոդորոս եղբորը, որն ուզում էր կոտորել նրանց: Եվ այնտեղից անապատով գնալով Տաճկաստան՝ Իսմայելի որդիների մոտ, որպես իրենց ազգականների մոտ, օգնություն խնդրեցին: Ոմանք համաձայնեցին, իսկ ոմանք՝ ոչ՝ նրանց տարբեր աղանդների պատճառով, ինչպես որ երբեմն եգիպտացիների միջև կային տարաձայնություններ պաշտամունքի տարբերության պատճառով:

ԼԴ. Այն ժամանակ հանդես եկավ Իսմայելի որդիներից մեկը՝ Թանգար [վաճառական] Մահամթը*: Նա ծնվել էր Մաքայից երկու օրվա ճանապարհի վրա գտնվող Մադինա[3] քաղաքում, Կորեշ[4] ցեղին պատկանող Աբդլայից, որը մեռավ՝ նրան թողնելով որբ: Նա գնաց մի վաճառականի մոտ և առաջադեմ դարձավ նրա տանը: Վաճառականը մեռավ, և Մահամթը տի-

[1] Թագավորների շարքից պակասում են նաև ուրիշները: Բորը Բբորն է կամ Բեբորը, նույն ինքը Բորանդուխտը, իսկ Զամրիկը՝ Ազերմիդուխտը:

[2] Մրենը Շիրակի գավառում է. այդ եկեղեցին ցարդ պահպանվել է կիսականգուն վիճակում:

* ՄՕ.-ում Մահամադ:

[3] Մադինան, որ առաջ Հաղրիպ էր կոչվում, Մեդինեն է:

[4] Քորեշ կամ Քուրեյիշ [ՄՕ.-ում՝ Կորեշ]:

բացավ իր տիրոջ տանը՝ ամուսնանալով նրա կնոջ հետ: Նա ուղտերով գնաց Եգիպտոս, և նրան հանդիպեց Սարգիս անունով մի միայնակյաց, որը Արիոսի և Կերինթոսի աղանդից էր: Վերջինս հին գրքերի միջոցով նրան ծանոթացրեց Աստծու հետ և սովորեցրեց իր Տիրոջ մանկության վերաբերյալ գրքերը: Տուն վերադառնալիս նա քարոզեց այն, ինչ որ լսել էր, բայց նրան հալածեց իր ազգը, և նա եկավ Փառան անապատը[1]: Եվ երբ եկան տասներկու հազար հրեաները, նրանցից ոմանք ստանալով՝ նա Իսմայելի որդիներին քարոզեց Աբրահամի Աստծուն և նրանց երաշխավոր դարձավ պայմանով, որ եթե պաշտեն իրեն, ապա կժառանգեն այն երկիրը, որը Աստված տվեց Աբրահամին:

Եվ լսեցին նրան ու հավաքվեցին Եվիլայից մինչև Սուր[2], որն ընկած է Եգիպտոսի դիմաց: Տասներկու հազարն ըստ Իսրայելի ցեղի տասներկու նահապետների թվի հազարական բաժանեցին իրենց մեջ և եղան տասներկու բաժին ու իրենց համար նշանակեցին ազգապետներ, որոնց անուններն են՝ Նաբեովթ, Կեդար, Աբդա, Մարսամ, Մասմա*, Իդումա, Մասե, Ռոդդադ, Թեման, Հետուր, Նաբես, Կեդմա: Բանակները Փառանի անապատից գնացին մինչև Մովաբի Ռաբովթ[3] և անցան Հորդանանից այն կողմ, դեպի Ռուբենի վիճակը: Կոտորեցին Հունաց զորքը, որ գտնվում էր Արաբիայում, և կայսեր եղբայր Թեոդորոսը փախավ մազապուրծ: Իրենք վերադարձան Արաբիա, բնակվեցին ցեղերով, և նրանց շուրջը հավաքվեցին Իսրայելի որդիներից մնացածները ու մեծ զորք կազմեցին: Եվ կայսրին գրություն են հղում, որպեսզի նա թողնի այն երկիրը, որն Աստված տվեց Աբրահամին: Կայսրը նրանց տվեց հակառակ պատասխան և հավաքեց յոթանասուն հազարանոց զորք մի հավատարիմ ներքինու միջոցով ու պատվիրեց գնալ Արաբիա, Իսմայելի վրա, ուր նրանք կոտորվեցին, իսկ Մահ-

[1] Փառան անապատն ընկած է Սինայի և Հրեաստանի միջև:

[2] Սուր անապատն ընկած է Պաղեստինի, Արաբիայի, Կարմիր ծովի և Եգիպտոսի միջև:

* ՄՕ.-ում Մարսմա, Ռոչե, Դադ, մյուսները նույնն են, բայց ՄՕ.-ում տասներեք անուն է:

[3] Մովաբի Ռաբովթը մովաբացիների մայրաքաղաքն է, որը գտնվում է Մեռյալ ծովի արևելյան ափին, ուր ցարդ նշմարվում են նրա սակավ ավերակները:

մեղի բանակը տիրացավ մեծ հարստության:

Մեր թվականության վաթսունյոթ[1] թիվն էր: Եվ քանի որ նրանց օգնեց Մահմեդի խրատը, ժողովուրդը նրանից կրոն է պահանջում: Եվ նա օձերի մեհյանի տեղը, որը պաշտում էին, կոչեց Ալ-քայուբա[2], որ նշանակում է Աստծու դուռ: Նա իր բնակության քաղաքը կոչեց Աբրահամի տուն: Քրիստոնեության հզորացման ժամանակ Դամասկոսի կուռքը՝ Ռեմանան[3], նույն ինքը կաղ Հեփեստոսը, տարան, գցեցին անապատում: Այն գտնելով՝ տաճիկները տարան օձերի մեհյանը, բայց օձերի քրմերը չկամեցան այնտեղ դնել, այլ դուրս հանելով՝ վեմի վրա մի ոտքի տեղ արեցին ու այնտեղ դրեցին: Այդ կուռքը գողացան եթիոպացի վաճառականները ոսկու համար, որը ձուլեցին իսմայելցիները: Եվ դաժան պատերազմ եղավ երկու ազգերի միջև, մինչև որ մոռացան: [Մահմեդը] այդ մասին ասաց, թե դա Աբրահամի ոտնահետքն է, երբ նա եկավ տեսնելու իր որդի Իսմայելին: Եվ քանի որ Իսմայելը որսի էր գնացել, նրա կնոջը հարցնում է, թե որտեղ է նրա ամուսինը, և նա ասում է. «Գնա՛, տանջված ալևոր»: Իսկ Աբրահամն ասում է. «Երբ քո ամուսինը տուն կգա, նրան ասա՝ փոխի՛ր քո տան դուռը»: Երբ տուն եկավ Իսմայելը, առավ իր հոր հոտը, հարցրեց կնոջը, ու կինն ասաց այն, ինչ որ լսել էր: Այդ բանը լսելով՝ Իսմայելը հեռացրեց կնոջը և առավ ուրիշին մինչև յոթերորդ կինը, որը պաղատում է Աբրահամին իջնել էշից, որպեսզի օձի ոտքերը: Ասում է, որ Աբրահամը իջեցրեց մի ոտքը և դրեց վեմի վրա, իսկ վեմը ոտքին տեղ տվեց, բայց մյուս ոտքը չիջեցրեց գրաստի վրայից, որովհետև Սառային երդում էր տվել՝ չիջնել, վախենալով, որ կհանդիպի Հագարի հետ: Այս որպես առասպել* պատմեց Մահմեդը և հրամայեց՝ բոլոր

[1] ԲՕ.-ում վաթսունհինգ [այդպես է նաև ՄՕ.-ում]: Դա Տիրոջ 616 թիվն էր, որը Մահմեդի փախուստից և իշխանանալուց վեց տարի առաջ էր, որն էլ նրա թվարկության սկիզբն է՝ 622-ի հուլիսի 15-ը:

[2] Էլ-Քյաբե:

[3] Ռեմանա կուռքը, որ հիշատակվում է Սուրբ Գրքում, ոմանք համարում են արեգակը, ոմանք՝ Աստղիկը, իսկ շատերին էլ անծանոթ է: Դրա համար մեր հեղինակի կարծիքը պետք է փնտրել հնախույզների մոտ: Բայց չգիտեմ, թե որքանով է հավաստի այդ պատմությունը:

* ՎՕ.-ում առաս... հաց ձևով է, իսկ ՄՕ.-ում [illegible]. մենք թարգմանել ենք վերջին բառաձևը:

կողմերից երկրպագության գալ այնտեղ, մի ոտքով ման գալ վեմի շուրջն ու ասել՝ լբա՛յք, լբա՛յք, և որպես թե մեկը պատասխանում է՝ ա՛յ ա՛յ, աւա՛ս աւա՛ս[1]: Եվ անցնելով ձորը՝ անասուն են մորթում ու գրաստներին նստելով՝ փախչում են մինչև Մաքայի բլուրը: Փախչելիս եթե մեկի հագուստն էր ինչ-որ բանի ընկնում, կամ մեկը գլորվում էր գլխիվայր, ոչ ոք չէր համարձակվում ետ նայել: Եվ ընթանալով երկու վեմերի միջով, որոնց կոչում էին Սաֆա և Եմրա, յոթ անգամ առանց հանգստանալու անցնում են վեմեվեմ, քարեր են գցում և ասում, թե Մահմեդն այդպես է արել ու սովորեցրել: Մի ոտքով վազելը ոտնահետքի պատճառով է, իսկ ձորում անասուն կոտորելն ու փախչելը, ասում են, թե Մահմեդը զոհ արեց ....., որպեսզի տեսիլքներ երևան նրան, և երևալիս** փախավ: Երկու վեմերի միջև շրջելն ու քար գցելը [նշանակում են], որ այդ վեմերը նրանց համար եղել են պաշտելի քարեր նախքան կուռքերը, և ըստ սովորության՝ Մահմեդի պաշտելու ժամանակ նրա դեմ կատաղի շուն է ելել, և նա նրա վրա քարեր է գցել ու հրամայել՝ նույն բանն անել: Նրանք օձերն ու ողողունները չեն սպանում, որովհետև դրանք պաշտելի են նրանց համար, իսկ շուն կոտորելն այն է, որ ասում են, թե երբ մեռավ Մահմեդը, չկամեցան թաղել, ակնկալելով, թե երեք օրից հետո հարություն կառնի .....***, և երբ իմացան, կոտորեցին շներին ու հրամայեցին նույնն անել [ամեն տարվա****] նույն ամսին: Նա սովորեցրեց ասել, թե Աստված մեկն է, և ոչ ոք նրան հավասար չէ, իսկ Մահմեդը նրա ծառան է: Իսկ երբ մի հրեայի խոսքով ասում են, թե մարգարեները գուշակեցին ինչպես Քրիստոսի, այնպես էլ Մահմեդի համար, դրանով այն են ուզում ասել, թե Եսային տեսնում էր երկու հեծյալ՝ էշի և ուղտի վրա նստած: Մի օր հանկարծակի .....**** անհայտացավ Մահմեդը և կարճ ժամանակ անց հայտնվելով ասաց. «Խաղաղությունը, Աստծու շնորհքն ու ո-

[1] «Լէպպէյք լէպպէյք, է՛յ Քէյէաս»՝ Հրամայի՛ր, հրամայի՛ր, ո՛վ Աստված:

** ՄՕ.-ում «երեւեալ նմա դէւք»՝ նրան դևեր երևացին:

*** ՄՕ.-ում կետերի փոխարեն տպված է. «նման Տեառն մերոյ՝ և շունք կերան զերեսսն»՝ մեր Տիրոջ նման, և շները կերան նրա երեսը:

**** ՄՕ.-ում կա ամեն տարի:

**** ՄՕ.-ում կետերի փոխարեն «դիւթութեամբ» (կախարդանքով) բառն է:

ղորմությունը թող լինեն ձեզ հետ»: Իսկ նրանք զարմանալով հարցնում են. «Որտեղի՞ց ես գալիս, ո՞րն է քո նոր ողջույնը, և ո՞ր Աստծու շնորհքն ես բերել մեզ»: Եվ նա պատասխանում է. «Աստված Մաքայում ինձ առավ մեր* հոր՝ Աբրահամի տունը, հայտնեց իր կամքը և վաղը մեզ ուղարկելու է իր կրոնը»: Եվ նա վերցրեց մի ծնած[1] երինջ, ժողովրդի հավաքված տեղում բաժանեց հորթից .....** և հրամայեց հաջորդ օրը բաց թողնել, իսկ ինքն ամբոխին հավաքած սպասեց: Կովը եկավ բառաչելով ու քրտնած և ճեղքելով ամբոխը՝ փնտրում էր հորթին: [Մահմեդը] հրամայեց բռնել նրան, ինքն առավ թուղթը, համբուրեց և ասաց, որ այն Աստծու կողմից է եկել: Դրա համար մինչև օրս Ղուրանի սկզբում գրված է՝ Սուրաթ Ալ-բակարա[2], այսինքն՝ կովի կրոն: Հրամայում է լվացմամբ աղոթքը կատարել հինգ*** անգամ և փոխանակ Իսրայելի եղջերափողերի, բարձունքից կանչել՝ վկա բերելով, թե «Ավետարանիչը բարձրացավ Սիոն լեռան վրա»: Եվ ձայն տվողին կոչում են Մոդին[3], որ նշանակում է հավատադիր, և մատը ականջին դնելով՝ ասում են, թե մեկը կամավոր, մյուսն ակամա լսում է ականջով: Եվ Մահմեդը Քրիստոսին կոչեց Աստծու բան և հոգի: Նաև ասում են, որ նա հրաշագործություններ էր կատարում, օրինակ՝ լուսինը ներքև բերելով՝ չորս մասի էր բաժանում և կրկին ամբողջացնելով՝ երկինք էր առաքում:

Բայց իսմայելցիների իշխանը նախ Քաղրթն[4] էր և ապա գտնելով Մահմեդին՝ նրանք նրան են հավանում ամեն ինչում:

* ՄՕ.-ում իմ և ձեր հոր:

[1] Նոր օրինակում նորածնունդ:

** ՄՕ.-ում կետերի փոխարեն կա «և գրեաց զոր ինչ կամէր, և յեղջիւրս նորա կապէր. և ի ձեռն հաւատարմաց առաքեաց յանապատ»՝ և գրեց, ինչ որ ուզում էր, կապեց եղջյուրներից և հավատարիմ մարդկանց միջոցով ուղարկեց անապատ:

[2] Միւրէթ-իլ-պէքարա՝ Պատճէն կամ յաղագս կովու: Ղուրանի երկրորդ օրինակի կամ գլխի խորագիրը, որը մեկնիչներից ոմանք կարծում են, թե ըստ մովսիսյան ավանդության՝ այն դրված է կովերի զոհաբերության քանակը՝ կգ-կթ [63-69] ցույց տալու համար:

[3] Մոդին. մյունատի [ՄՕ.-ում մուդին]՝ ձայնող:

[4] Ինձ թվում է, որ իսմայելցիների Քաղրթ [ՄՕ.-ում քաղրթ] իշխանի անունը Խալեթ անվան աղավաղումն է, որովհետև այդպես էր կոչվում Մահմեդի զորքի առաջնորդը, որն Ասորիքում կոտորեց հույներին:

ԼԵ. Եվ երբ նրանք [իսմայելցիները] հզորացան, երուսաղեմցիները վախեցան նրանցից և տերունական խաչն ու եկեղեցական բոլոր սպասքները բարձելով նավին՝ տարան Կոստանդնուպոլիս, և իրենք էլ հնազանդվեցին Իսմայելին, որովհետև կայսրն այլևս չկարողացավ զորք հանել նրանց դեմ: Իսմայելցիները բաժանվեցին երեք մասի՝ մեկը գնաց Եգիպտոս, մյուսը՝ Հունաստան, երրորդը՝ Հայաստան, և բոլոր տեղերում հաղթող դարձան: Իսկ ովքեր Ասորեստանի վրայով շարժվեցին Հայաստան, հասան Դվին, գրավեցին այն, կոտորեցին անհամար մարդկանց, գերեցին երեսունհինգ հազար մարդու, որոնցից մի տասը հազար մարդու կոտորեցին Թեոդորոս Ռշտունու իշխանության ժամանակ, որը հաջորդեց Դավթին, պպանեցին նաև Հունաց զորագլուխ Պրոկոպոսին[1], որը վաթսուն հազարանոց զորքով նստում էր Հայոց սահմաններում:

Այդ ժամանակ մեռավ Եզրը, և աթոռին հաջորդեց Տայքի եպիսկոպոս Ներսեսը, Եզրից տասը տարի անց: Բայց անհամար կոտորածների պատճառով հափշտակություն եղավ, և նա որոշեց փախչել՝ իրեն այդ մեծ պատվին արժանի չհամարելու պատճառով: Եվ երբ շատերը նրան աղաչում են, նա կանգ է առնում և հրամայում է հավաքել բազմաթիվ դիակները և թաղել: Եվ սուրբ Սարգսի հրդեհված վկայարանի տեղում շինում է նորը: Սուրբ տաճար է շինում նաև վիրապի [փոսի] վրա և սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով մեծ տաճարի հիմքերն է դնում քարքարոտ տեղում. դրա չորս սյուների տակ դնում է սուրբ Գրիգորի բոլոր նշխարքները, բացի գլխից, որը դնում է գզրոցի մեջ և պահում հիվանդների բժշկության համար, այնտեղ դնում են նաև սուրբ Հիզբուզտի և Դավիթ վկայի[2] նշխարքները: Ասում են, որ սուրբ Գրիգորի մասունքը Հայաստան է բերել Գրիգոր Մամիկոնյանը, երբ նա որպես դեսպան գնացել էր Կոստանդնուպոլիս: Մասունքը նրան տվել էր ազնվական մի կին, որն այն պահում էր իր մոտ: Եվ նա գաղտնի, որին տեղյակ չէր քաղաքը, այդ անանց մեծության գանձը բարձում է նավի վրա և բերում, իսկ ծնոտը

[1] Ըստ պատմիչ Ղևոնդ երեցի՝ Պրոկոպիոսի զորակայանը գտնվում էր Կոգովիտ գավառում:

[2] Նոր օրինակում Դվինի վկան:

Զվանչիրի ու իր քրոջ, որը Գրիգորի[1] կինն էր, խնդրանքով տալիս է Ազվանքին:

ԼԶ. Այն ժամանակ Կոստանդին կայսրին դավում և սպանում է Մարտինի խորթ մայրը* և նրա փոխարեն գնում է իր որդի Հերակլակին: Բայց Վաղենտին զորավարը սպանում է Մարտինին ու Հերակլակին և թագավոր է նշանակում Կոստանդնի որդի Կոստանդին: Եվ քանի որ ապստամբվել էր Վարազտիրոցը, նրա համար աղաչում է Ներսես հայրապետը, և նրան նշանակում է Հայոց կուրապաղատ, բայց նա իշխանությունն առնելու ժամանակ մեռնում է ու թաղվում Դարոնքում, իր հոր՝ քաջ Սմբատի կողքին: Եվ [թագավոր] են նշանակում Սմբատին՝ ի պատիվ իր հոր, իսկ զորավարը Թեոդորոս Ռշտունին էր: Բայց Մահմեդը քսան** տարի տիրելով իշխանությանը՝ .....*** և նրան հաջորդում են Օմարը****, Ամրը[2] և Բուքաքրը[3]: Նրանք սպանեցին Խոսրովի թոռ Հազկերտին և վերցրին Պարսից թագավորությունը, որը տևեց չորս հարյուր ութսունմեկ տարի. նրանցից հետո իշխանությունը գրավում է Մավին: Բայց Հերակլի թոռ Կոստանդիանոսը Թեոդորոսին զրկում է իշխանությունից և Կիլիկիայի զորավարին հրամայում է դուրս գալ Մավիի դեմ: Թեոդորոսի որդի Վարդը նենգորեն գործեց Հունաց զորքերի դեմ. հույների փախուստի ժամանակ նա քանդեց Եփրատի վրայի կամրջի գլուխը: Մավին Հայաստանում իշխան նշանակեց Գրիգոր Մամիկոնյանին և Հայաստանի վրա դրեց հինգ հարյուր դահեկան[4] հարկ: Ոմանք ասում են, թե Գրիգորը Թորդանից բե-

[1] Ըստ հին պատմագրության՝ Լուսավորչի նշխարքները Կոստանդնուպոլսում հայտնվել են դրանից երկու հարյուր տարի հետո:

* ՄՕ.-ում ոչ թե խորթ մայրը, այլ մայրը:

** ՄՕ.-ում քառասուն:

*** ՄՕ.-ում կետերի փոխարեն կա [illegible]՝ մեռնում է բառը:

[2] Նոր օրինակները դնում են Օթման:

**** ՄՕ.-ում Ումար:

[3] [ՄՕ.-ում Աբուբաքր]. ըստ ժամանակագրության՝ Մահմեդի հաջորդներն են Էպուսեքրը, Օմարը, Օթեմանը, Ալին, Միվավիեն:

[4] Հայաստանի հարկը եռ [500] դահեկան էր, որը առաջինը հիշատակում է Ղևոնդ պատմիչը: Եթե ստույգ է այդ թիվը, ապա այնքան էլ շատ չէ, դահեկա-

րեց Լուսավորչի բոլոր նշխարքները, և Աղվանքի իշխան Վարազտրդատի* հրամանով եկավ Իսրայելը և խնդրեց Լուսավորչի ծնոտը, որը տարավ ու դրեց Գլխովանք կոչված տեղում[1]:

Հայերը քանի որ բռնի կերպով հնազանդվեցին հագարացիներին, կայսրը բարկությամբ հարձակվում է Հայաստանի վրա, բայց Ներսես կաթողիկոսը աղերսելով նրան տանում, իջեցնում է Դվին, կաթողիկոսարան: Կայսրն ու կաթողիկոսը միասին հաղորդություն են ընդունում ու ութ օր կատարում են եկեղեցու խորհուրդները՝ ըստ հունական սովորության: Քարոզեցին Քաղկեդոնի ժողովի վարդապետությունը: Եվ մի եպիսկոպոս, բեմից վայր իջնելով, մտավ ամբոխի մեջ: Իսկ երբ կայսրը եպիսկոպոսին հարցրեց, թե «ինչո՞ւ չհաղորդվեցիր քո պատրիարքի հետ», նա պատասխանեց. «Հենց դա եղավ պատճառը, որ երկու տարի առաջ նա ժողով արեց և նզովեց բոլոր հերձվածողներին ու առավելապես Քաղկեդոնի ժողովը»: Թագավորը խիստ մեղադրեց նրան նենգության պատճառով, և ապա հաղորդություն ընդունեց նաև եպիսկոպոսը և օրհնեց թագավորին, իսկ թագավորը՝ նրան: Եվ երբ թագավորը մեկնեց, Ներսեսը վախեցավ Ռշտունյաց տիրոջից ու գնաց Տայք և [այնտեղից] վերադարձավ վեց տարի անց՝ լսելով Թեոդորոսի մահը: Նա մեծ եկեղեցու մոտ շինում է իր կացարանը՝ տնեցիներին** բնակեցնելով առաքինի քաղաքավարության կարգով, Քասախ գետից ջուր է բերում և տնկում անտառներ ու այգիներ: Նա մեծ բազմությամբ կատարում է վարդավառի տոնը: [Նրանք] փոխեցին ութ*** վարդապետների, բայց միմյանց հասկանալ չկարողացան, այնուհետև նա հրամայեց առանձնացնել արժանիին և միայն նրան սովորեցնել: Այդ բանը նա կատարեց սուրբ Բարսեղի ձեռքով, որի մա-

նը ինչքան ուզում է, լինի. թե՛ բյուզանդական ոսկի, թե՛ սասանական և թե՛ արաբական դինար, որը արժեր 12 կամ 13 ֆռանկ, թեև շատերը կարծում են, թե՛ արաբական դրամը առաջինը Աբիմելեք ամիրապետը կտրեց, բայց գտնվեց նաև Միվավեի դրամը:

* ՄՕ.-ում Վարազ Գորգատ:

[1] Տե՛ս ծան. 1, էջ 105 և ծան. 1, էջ 76:

** Վ.Օ.-ում **երդումարգաց**՝ տնեցիների, իսկ ՄՕ.-ում **երկու մարդաց**՝ երկու մարդու:

*** ՄՕ.-ում տասը:

կանունը Ճոն էր, որը Անիի գավառում[1] գտնվող Դպրավանքի սուրբ ուխտի առաջնորդն էր: Նրա մասին ասում են, թե յոթ անգամ տեսել է Քրիստոսին զարմանալի համարձակությամբ, որի համար էլ Ճոնընտիր է կոչվում այն շարականը, որ այժմ կատարվում է մեր եկեղեցիներում:

Եվ քանի դեռ Ներսեսը Տայքում էր, Թեոդորոս Ռշտունին շինեց Աղթամար կղզին: Դպրավանքից տարան այն խաչը, որը կոչվում է սուրբ Վարձիայի[2] [խաչ], [իսկ] այն ժամանակ Ճոնյանց էր կոչվում: Սարգիս Ճոնյանցը այն տեղափոխեց այլազգիների պատճառով: Այնտեղ նա Տիմոթ վարդապետի ձեռքով հրաշքներ գործեց. Վրաց արքա Դեմետրեի կնոջը բժշկեց բորոտությունից[3], որի համար էլ վրացիները խաչը խլեցին հայերից: Նա օրհնված է սուրբ Մեսրոպի կամ սուրբ Բարսեղ Ճոնի կողմից և աջ թևի վրա հայերեն գիր ունի:

Ներսես մեծ պատրիարքը վախճանվելով թաղվում է իր ձեռակերտում[4]: Աթոռը գրավեց Անաստասը՝ Ներսեսի սենեկապետը, որը Ակոռից էր. նա Ներսեսի հրամանով շինում էր սուրբ Գրիգոր [եկեղեցին], քանի դեռ Ներսեսը Տայքում էր: Նրա օրոք Գրիգոր Մամիկոնյանը շինեց Արուճի կաթողիկեն և Եղիվարդի վանքը, Անաստասը շինում է Ակոռի եկեղեցին՝ այնտեղ կառուցելով եղբայրանոց [վանք] և հյուրանոց[5], Գրիգոր իշխանի մոտ եկավ թագավորական ցեղին պատկանող պարսիկ Սուրհանը և խնդրեց դիմել Քրիստոսին ու ցանկացավ, որ իրեն մկրտի Անաստասը: Գրիգորը նրան կնքահայր

[1] Անիի գավառը Շիրակն է:

[2] Վարձիա ավանը այժմյան Ախալքալաքի սահմանում է, որը Գուգարաց Ջավախք գավառի կողմում է, որին այն ժամանակ տիրում էին վրացիները, և դրա համար էլ այդ վայրը կոչվում է Վարձառունիք կամ Վարձառունիք: Այդ աքանչելիների ժամանակը անհայտ է. Բրոսսեն (Վրաց պատմություն, Ա, 259) համարում է Վրաց կուրապաղատ Ստեփանոսի եղբայր Դեմետրեին, որը ժամանակով մոտիկ էր Ներսես կաթողիկոսին: Մեր հեղինակից առաջ, ԺԲ դարում, Դեմետր անունով Վրաց մի թագավոր է եղել: Իսկ Արարածոց գրքի ոմն մեկնիչ՝ Տիմոթեոս անունով վարդապետը, մեզանում հիշատակվում է Ժ դարի վերջին:

[3] Հին Օ.-ում «առողջ արարեալ ամենևին»՝ ամբողջովին առողջացրեց:

[4] Այլ Օ.-ում «ի բերան վիրապին»՝ վիրապի [փոսի] անցքում:

[5] Կաթողիկոսի շինած եկեղեցին ու վանքը ավերվեցին 1840 թ., Մասխանների մեծ փլուզման ժամանակ:

դարձավ, ավազանի անունը Դավիթ դրեց՝ իր հոր անունով և նրան տվեց Կոտայքում գտնվող Զագը:

Այն ժամանակ ապրում էր Անանիա Շիրակացին, որը Անաստասից հրաման ստանալով՝ հորինում է ամենօրյա տոմարը[1], որը պատրիարքը երբ ուզում էր ժողովով հաստատել, վախճանվում է: Նրան հաջորդում է Իսրայելը պաշտելի Անաստասից վեց տարի հետո: Նրա օրոք արաբների զորագլուխ ոմն Բառաբային, որը գտնվում էր Հայաստանում, վռնդելով հալածում է Վրաց Ներսեհ իշխանը: Իսրայելը, աթոռին* մնալով տասը տարի, վախճանվում է, և հայրապետական քոռն ընդունում է սուրբ Սահակը, որը Զորոփորից էր, Արքունիքից**: Նրա յոթերորդ տարում խազիրներն արշավեցին Հայաստան, սպանեցին Գրիգոր իշխանին և գերեցին վարպետին***: Եվ իշխանությունը գրավում է Աշոտ Բագրատունին՝ Սմբատի որդին:

Լէ. Իսկ Իսմայելի Մավի իշխանը որոշեց վերացնել Հունաց թագավորությունը, ինչպես նաև պարսկականը և պատրաստեց հարյուր**** մեծ նավ՝ յուրաքանչյուրի վրա հազար տղամարդ և հազար փոքր նավ՝ յուրաքանչյուրի վրա հարյուր տղամարդ, և նրանց ուղարկեց ծով, իսկ ինքը ցամաքով հասավ Քաղկեդոն: Կործանվեցին բոլոր նավերը, իսկ ինքը գիշերով փախավ, ազատվեց և մեռավ Ասորիքում: Եվ իշխանությունը գրավեց նրա որդի Մրվանը, որը Հայաստան ուղարկեց ոստիկան [կուսակալ] ոմն Մահմեդին, որը ավերեց Սևան կղզին, գերեց նրա բնակիչներին, խաբեությամբ կողոպտեց սուրբ Գրիգոր [եկեղեցին] և իր ծառաներից մեկին սպանեց ու գցեց մի խոր փոս: Հետո երբ փնտրում, գտնում են նրան, վրեժխնդիր են լինում [նրա համար]՝ գլխատելով կրոնավորներին և քառասուն տղամարդու էլ փայտից կախելով: Մահմեդը գնում է, և նրա տեղը Հայաստան է ուղարկվում Աբդլա անունով մի ուրիշ ոստիկան: Վերջինս որոշեց վերացնել Հայոց ազատագունդը և Սահակ կաթողիկոսին կապելով ուղարկեց Դամասկոս, իսկ Հայոց Սմբատ իշխանին ու սուրբ Դավթին էլ խաչեց փայտի վրա: Հայոց մնացած իշխանները՝ Սմբատը, Աշոտը և Վարդը, ուզում էին փախչել Հունաստան, բայց նրանց հետապնդում են հինգ հազար իսմայելցիներ, Վարդանակերտում հասնում են նրանց ու կռվում[1], և բոլոր իսմայելցիները սրախողխող են լինում մեր իշխանների կողմից Աստծու օգնությամբ: Նրանց քթերը կտրելով՝ Սմբատը ուղարկում է կայսրին և ստանում է կուրապաղատության պաշտոնը Աշոտից հետո: Նա շինեց Դարոնք[2] եկեղեցին հանուն փրկչական պատկերի, որի մի մասը նրա որդին բերեց արևմուտքից և նավակատիքի ժամանակ երգեց* «Զորս ըստ պատկերին» [որոնք ըստ պատկերին]: Նրան փոխարինում է Սմբատ Բագրատունին և գնալով Տայք՝ ամրանում է Թուխարքում[3]: Այդ բանը լսելով՝ Աբդիմելիքը իր զորավար Մահմեդին հրամայում է հարձակվել Հայաստանի վրա: Այդ մասին իմանալով՝ շղթայված Սահակը գրում է աղաչանքներ, որպեսզի Մահմեդը թույլ տա իրեն նրա մոտ գնալու: Նա հասնելով Խառան՝ հիվանդանում է և աղաչանքով գրում է նրան, որպեսզի նա ների հայերին: Մահմեդը, ընթերցելով Սահակի գրությունը, իջեցրեց իր բարկությունը և չարությամբ չեկավ մեր աշխարհը[4]: Նրա պատրիարքությունից քսանութ տարի հետո աթոռին** հաջորդում է Եղիան: Մեռավ Աբդիմելիքը, և նրա տե-

---

[1] Այսինքն՝ անշարժ տոմարը՝ հարմարված ամսվա օրերին, որը Հայաստանում երբեք կիրառություն չգտավ:

* ՄՕ.-ում սուրբ աթոռին:

** ՄՕ.-ում արքունիքից:

*** Երկու օրինակում էլ՝ «զհնարաւորն իւրեանց»:

**** ՄՕ.-ում երեք հարյուր:

[1] Վարդանակերտի կռիվը եղել է Երասխ գետի ափին, 702 թ.: Այն հուշակվեց արաբների մեծ կոտորածով, մինչև անգամ տվյալ օրը նրանց անեծքների շարքում դասվեց:

[2] Ոմանց՝ կարծիքով Դարոնից բերդը Բասենում է, հավանաբար այն գտնվում է Կոգովիտում, որն այժմյան Բայազետն է:

* ՄՕ.-ում գրեց:

[3] Թուխարք կամ Թուղարք բերդն այժմ անծանոթ է, և ինձ թվում է, որ այն այժմյան Շավշեթի կողմերում է:

[4] Հին Օ.-ն ավելացնում է. «Ոմանք զՈկբայ ոմն ամիրապետ ասեն, որ չոգաւ առ նա Սահակ և գրեաց նմանակ հաշտութեան. և հանդերձ սուրբ մարմնով նորա առաքեաց յերկիրս» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ Ոմանք Ոկբա ոմն ասիրապետին են ասում, որի մոտ գնաց Սահակը, գրեց հաշտության նամակ և սուրբ մարմնի հետ ուղարկեց մեր երկիրը:

** ՄՕ.-ում սուրբ աթոռին:

ղը գրավեց նրա որդի Վլիթը, որը Մահմեդին հրամայում է վերացնել Հայոց ազնվականներին ումն Կասմի միջոցով, որը Նախճավանի հրամանատարն էր: Նա խաբեությամբ հավաքում է ազնվականներին և նրանց մի մասին այրում է Խրամի[1], մի մասին Նախճավանի եկեղեցում ՃԾԳ [153] թվին*: Գլխավոր նախարարներին փայտից կախելով՝ չարչարում էին, իսկ նրանց կանանց ու որդիներին գերի էին տանում, նրանց հետ էլ Վահանին՝ Գողթան տիրոջ որդուն, որը մարտիրոսացավ:

Վլիթին փոխարինում է նրա եղբայր Սլիմանը, իսկ վերջինիս՝ Ումարը, որը սուրբ Վահանին նահատակեց: Իսկ սրանցից[2] հետո Սմբատ կուրապաղատը և նախարարները գնացին Եզեր, կայսրից առան Փոյթ[3] քաղաքը և բնակվեցին այնտեղ, իսկ հետո թալանեցին քաղաքը, նաև եկեղեցիների սպասքը ու եկան Հայաստան: Հույները բարկացան և նրանց վրա նզովք դրեցին, որը կարդում էին զատկի տոնին:

ԼԸ. Բայց մեծն Եղիան, Աղվանք գնալով, Ումարի միջոցով անարգաբար[4] աքսորում է Ներսես Բակուրին՝ Քաղկեդոնի ժողովի դավանողին, նրա համախոհ տիկնոջը, նրա փոխարեն ձեռնադրում է այլ ուղղափառի (!)**, վերադառնում է Հայաստան և վախճանվում իր աթոռակալության տասնչորսերորդ տարում:

Նրան հաջորդում է մեծ իմաստասեր Հովհաննեսը, որը տակից հագնում էր ցփսի [մազե կոպիտ գործվածք], իսկ վրայից պճնազարդում էր իրեն ու աղացած ոսկու փոշի էր փչում իր վայելուչ ալեխառն մորուքին: Այդ բանը լսելով՝ Ումարը նրան կանչում է իր մոտ, յոթ տակ արքունական ազնիվ զգեստ է հագցնում նրան և առաքում Հայաստան: Գալով [Հայաստան]՝ նա ճգնում է պաս պահելով, աղոթքներ անելով և փայլուն վարդապետությամբ զբաղվելով: Մանազկերտում

[1] Խրամ ավանը գտնվում է Երասխի ափին, որը հայտնի է իրեն մոտիկ գտնվող սուրբ Նախավկայի մենաստանով:

* ՄՕ.-ում հարյուր հիսուն թվին:

[2] Հին Օ.-ում. «Իսկ զկնի այրելոյ իշխանացն» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ Իսկ իշխաններին այրելուց հետո:

[3] Փոյթը Փառիս կամ Ռիոն գետի բերանին գտնվող Փոթի քաղաքն է:

[4] Արդարև անարգալից աքսոր:

** ՄՕ.-ում. «ձեռնադրէ ուղղափառս»՝ ձեռնադրում է ուղղափառների:

նա հայերի և ասորիների հետ ժողով է անում և հավատքը մաքրում մարդադավան* աղանդից՝ Եզրի խոտորումից[1]:

Այն ժամանակ Ումարը Լևոն կայսրին գրեց շատ բաներ, նաև այն մասին, թե ինքը լսել է, որ քրիստոնյաները բաժանվում են յոթանասուներկու մասի: Իսկ նա պատասխան գրեց, թե տասներկուսն են՝ հույներ, հռոմեացիներ, բաբելացիներ, եգիպտացիներ, եթովպացիներ, հնդիկներ, ասորիներ, հայեր, սարակինոսներ [արաբներ], պարսիկներ, աղվաններ, վրացիներ: Իսկ դուք, ասում է, ինչո՞ւ եք կոչվում քուզի, սաբրի, թուռաբի, կնտրի, մուրջի, բասլի, անաստված ջհդի**, որոնք ուրանում են Աստծու էությունն ու հարությունը և քո ասած մարգարե Հարիրիին: Եվ այն երկու [տեսակ է]. մեկը ատում է ձեզ, իսկ մյուսը խռովասեր չէ[2]: Եվ ձեր գրքերը գրեցին Ումարը, Աբութուռաբը և պարսիկ Սուլիմանը, բայց Պարսից Հաջաջ ազգապետը ջանաց խեղաթյուրել ձեր գրքերը: Իսկ մերը նույնն է, որովհետև սուրբ Հոգուց է, և գերության ժամանակ բոլոր գրքերը[3] չկորան, այլ մնացին ցրված տեղերում: Եվ երբ Եզրը գրեց ամբողջը, հնի նման ստացվեց: Այն այբուբենի [տառերի] թվով է, թեև հինգը կրկնվում է, [բայց] ոչ առանց մեծ խորհրդի:

Իսկ սուրբ պատրիարք Հովհաննեսը Ումարի հրամանով Հայաստանից հանեց բոլոր տեղերում տարածված հունարենը: Եվ Վասիդ անունով իշխանին Լևոնի կողմից պատվիրակ ուղարկեց Հոհանի մոտ՝ ասելով, թե ինչո՞ւ է այդ չար բանն անում: Իշխանը հիվանդացավ, բերեցին շատ բժիշկներ, բայց չկարողացան օգնել: Նա մահամերձ էր, և երբ սուրբ Հոհանը ձեռքը դրեց նրա վրա, նա իսկույն առողջացավ: Եվ տեսնելով այդ հրաշագործությունը՝ նա հավատաց մեր ուղղափառու-

* Նշանակում է նեստորական աղանդ, այսինքն՝ Քրիստոսին սոսկ մարդ դավանող աղանդ:

[1] Այդպես Հովհաննես Իմաստասերը չի արել, այլ արել է տիկորեցի ումն Հովհաննեսը:

** ՄՕ.-ում Բասլի՝ անաստված, Ջրդէ:

[2] Հին Օ.-ում «Եւ այն երկոմնատէ զձեզ. և ոչ ումն ոչ է խռովասէր»:

[3] Այսինքն՝ Հին կտակարանը, երբ այն գերվել էր Հրեաների կողմից. գրքերի քանակը ոմանք հասցնում են քսանյոթի, ոմանք՝ քսաներկուսի՝ ըստ եբրայական այբուբենի տառերի տարբեր քանակի:

թյանը և այլևս չվերադարձավ Հունաստան (!), այլ կրոնավոր դարձավ և տասնհինգ* տարի ճգնեց քարայրում, որը նրա անունով Հոռոմ-այր կոչվեց: Եվ այն խաչը, որ կա, իշխանն իր մոտ էր պահում Հունաստանից վերադառնալու ժամանակ, և [խաչը] այնտեղ էլ մնաց[1]: Հոհանը տասնմեկ տարի անց վախճանվում է, և նրան հաջորդում է Դավիթ Կոտայքցին, որը Արամոնից** գյուղից էր: Նա Տրդատի օրերից ի վեր միշտ եղել է կաթողիկոսարանում, ուր եկեղեցի չինեց և այնտեղ անցկացրեց իր կյանքի տասներեք տարին՝ նեղվելով տաճկական ..... ***, որ Դվինում էին: Նրան հաջորդում է Տրդատը, որը Օթմսու գյուղից**** էր, մի պատվավոր ու առաքինի մարդ, որի աղոթքների շնորհիվ քսաներկու տարի խաղաղություն տիրեց:

ԼԹ. Իսկ Ումարին փոխարինեց Իզիտը ..... *****, որը երկրից վերացրեց խաչն ու արձանները և խոզ էր զոհում, մինչև որ խեղդվեց: Նրանից հետո աթոռին նստեց Հեշմը, որն իր եղբայր Մսլիմին յոթ բյուր հեծյալով ուղարկեց մինչև Բյութանիա: Երկրորդ անգամ դարձյալ գնաց և ծովասույզ եղավ Քրիստոսի խաչի զորությամբ, և միայն հիսուն մարդ ազատվեց: Կայսրը բաց թողեց Մսլիմին, որպեսզի նա [գնա] և պատմի Աստծու փառքի մասին:

Հեշմը Հայաստան է ուղարկում Մրվանին՝ Մահմեդի որդուն, որը գալով Աշոտ Բագրատունուն նշանակում է կուրապաղատ կամ պատրիկ [մեծ իշխան], բայց նրան նախանձում են Մամիկոնյան Սմբատը, Դավիթը, Գրիգորը: Մրվանը, գնալով հոների Վարաչան քաղաքը, այնտեղից վերադառնում է հաղթանակով: Հեշմից հետո աթոռին նստեց զազրագործ

---

* ՄՕ.-ում յոթը:

[1] Հին Օ.-ն ավելացնում է. «Այսպէս լուաք, և դու ընկալ՝ թէ կամիս՝ սիրով» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ Այսպես լսեցինք, դու էլ ընդունիր սիրով, եթե կամենում ես: Նույնը պետք է ասել նաև Վասիրի գեպքերի մասին, որոնք ևս այլևայլ տեսակի են:

** ՄՕ.-ում Արամորից:

*** ՄՕ.-ում կետերի փոխարեն՝ «ի զեխն ազգէն»՝ վատնդավոր ցեղից:

**** ՄՕ.-ում Ոթմսո գյուղ:

***** ՄՕ.-ում կետերի փոխարեն՝ «այր չար և այսակիր»՝ չար և դիվահար մարդ:

Վլիթը, որը սպանվեց Ղուրան կարդացողի[1] հրամանով, և նշանակվեց Սուլիմանը*, որին սպանեց Մրվանը և ինքը տիրեց [Թագին]: Հայոց զորքին տարեկան տալիս էին հարյուր հազար դահեկան ռոճիկ [խածիթա][2]: Մրվանը գրավեց Դամասկոսը և բնակիչներին խայտառակեց, որովհետև հրամայում է ամեն մեկին կապել չորս ցցերից և նրանց երեսի կաշին քերթել՝ նրանց ամբարշտության, սպանության, անառակ ցանկության պատճառով, նաև այն պատճառով, որ նրանք Աստծուց պատուհասի ակնկալություն չունեին[3]:

Այն ժամանակ Հայոց իշխանները որոշում են ապստամբվել և չեն ենթարկվում Աշոտ պատրիկին, որին բռնում են Մամիկոնյան Գրիգորն ու Դավիթը և կուրացնում. նա Հայոց և Վրաց Թագավորների նախնի Աշոտն էր: Այնուհետև երկու Աբդլաները՝ Հեշմի որդիները, երկու տարի պատերազմում են Մրվանի դեմ, շատ-շատերին սրի են քաշում: Մի ճակատամարտի ժամանակ զորքից կոտորվում է երեք հարյուր հազար** մարդ, սպանվում է նաև Մրվանը: Գահին տիրում են Աբդլաները[4], որոնք մեռելներից էլ էին հարկ պահանջում: Նրանք Հայաստան են ուղարկում դաժան նեղիչ Իզիտին, հետո Բաքրին և ապա կատաղի Հասանին: Նրանց այդ արարքից զայրանում է Մուշեղ Մամիկոնյանը, ապստամբվում է և իսմա-

---

[1] Կուրան, Քուրան՝ մահմեդական գրքերի ընթերցողները: Սպանվածը Վալիտ Բ-ն է, Տիրոջ 744 թ.:

* ՄՕ.-ում Սուլեյման:

[2] Խածիթա նշանակում է զինվորի ռոճիկ [հոդ], բայց չգիտեմ, թե ինչպես է ստուգաբանվում [ՄՕ.-ում դահեկան արծաթիա՝ արծաթյա դահեկան]:

[3] Հին Օ.-ում «Տաչէր զերեսս նոցա՝ ի վերայ երից և չորից ամբարշտութեանց նոցա, որ է սպանութիւն և ընչից ցանկութիւն և հեշտ ցանկութիւն. և չորրորդն՝ յԱստուծոյ ոչ ունին ակն պատուհասի» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ Տաչում էր նրանց երեսները՝ նրանց երեք ու չորս ամբարշտության պատճառով, այն է՝ սպանության, ընչասիրության, ցանկասիրության և չորրորդ՝ Աստծուց պատուհասի ակնկալություն չունենալու պատճառով:

** ՄՕ.-ում երեսուն հազար:

[4] Ակնարկում է այն մեծ պատերազմը, երբ Ապպասյանները վերացրին Ցումմիատյան խալիֆաներին:

յելցիներից սպանում է երկու հարյուր, և ապա՝ չորս հազար* մարդու: Հայերը, խաբվելով մի մենակյացից, որը սուտ տեսիլներ ու երազներ էր պատմում և ասում, թե Իսմայելի ժամանակները վերջացել են, հավաքվեցին մոտ հինգ հազար մարդ Մուշեղի ու Սմբատի գլխավորությամբ և մարտնչեցին երեսուն հազարի դեմ: Կոտորվեց երեք հազարը, սպանվեցին նաև Մուշեղն ու Սմբատը[1]:

Խ. Իսկ Տրդատից հետո մեկ այլ Տրդատ է հաջորդում սուրբ աթոռին, երեք տարի, այնուհետև Աղձնիքի Սիոն եպիսկոպոսը՝ մի սուրբ ու սքանչելի մարդ, որը Սիմ կոչեցեալ լեռան ստորոտի [երբեմնի] հորդառատ աղբյուրին, որը ցամաքել էր, գավազանով հարվածելով՝ ջուր է բխեցնում: Ութ տարի անց նա վախճանվում է, և աթոռը գրավում է եղիպատրուշցի[2] տեր Եսային, որի մասին ասում են, թե նրա մայրը աղքատության մեջ էր նրան մեծացրել, անօթևան, մուրալով[3], ձմռանը ցրտահարվելով, ամռանը արևահարվելով, և որ հայրապետանոցի դռանը ոմանց կողմից սաստվելու ժամանակ նրա մայրն ասել է. «Դուք չգիտե՞ք, որ ես իմ տղային պատրիարքության համար եմ մեծացնում», այդպես էլ եղավ. նախ՝ եպիսկոպոս և ապա՝ պատրիարք Աստծու շնորհիվ: Տասներեք տարի անց նա վախճանվում է, և նրան հաջորդում է Ստեփանոսը, երկու տարի, և ապա Հոբը, վեց ամիս, որի օրոք Բագրևանդ գյուղում մարդիկ ոստիկանի կողմից զրպարտվում են եկեղեցու ոսկեղեն զարդերը գողանալու մեջ և սպանվում է քառասուն մարդ, իսկ իրենք էլ խլում են** շատ գանձեր: Հոբից հետո աթոռին հաջորդում է Սողոմոնը, որը Գառնիից էր. նա Մաքենոցաց սուրբ ուխտի առաջնորդն էր: Նա գնում է Շիրակի Զրեսկ գյուղը, մտնում է խուցը և երկար ժամանակ ճգնում այնտեղ: Այնտեղից նրան հանում, տանում են աթոռ, և տես-

* ՄՕ.-ում վեց հարյուր:

[1] Հայոց այդ պատերազմն ու կոտորածը եղել են Արճեշի ու Բագրևանդի կողմերում, Տիրոջ 775 թ.:

[2] Եղիպատրուշ [ՄՕ.-ում Եղապատրուշ] գյուղը Նիգ գավառում էր, այժմ Ապարանի գավառում:

[3] Հին Օ.-ում մուրացկանությամբ [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ մուրացկանությամբ:

** ՄՕ.-ում առաս՝ խլեց:

նելով, որ նա շատ է ամաչում ճգնության պատճառով՝ հարցնում են. «Ո՞ւր ես գնում»: Նա պատասխանում է. «Գնում եմ սևերես դառնալու հայրապետների հետ». այդպես էլ եղավ: Մեկ տարի անց նա վախճանվում է, և ուրիշների հետ պատկերվում է և նրա պատկերը: Նրան հաջորդում է Գևորգը, որը Արագածոտնից էր:

Աբդլայից հետո աթոռին նստում է նրա որդի Մահմեդը, որը Լևոնի մոտ է ուղարկում երկու գրիվ մանանեխ, ետևից զորք, բայց չի կարողանում մնաս տալ:

ԽԱ. Մեծ պատերազմում[1] փրկվածները հետևյալներն էին՝ Աշոտի որդի Սմբատի երկու որդիները, որոնց անուններն էին Աշոտ և Շապուհ, Սամվելի Շապուհ անունով եղբայրը, Մուշեղի երկու որդիները և չորս դուստրերը, որոնց անդրանիկի անունը Շապուհ էր: Նրանք [Մուշեղի զավակները] գնացին Վասպուրական երկիրը, որտեղ երկուսին սպանեց Մեհրուժան Արծրունին՝ պատճառ բռնելով, թե իբր մեծ աղետը նրանց հոր պատճառով էր եղել, իսկ քույրերից մեկն ամուսնացավ Իսմայելցի ոմն Ջահապի* հետ, որը նրանց օգնական դարձավ: Իսկ Սմբատի որդիները՝ Աշոտը և Շապուհը, հավասարապես բաժանեցին իրենց հայրական ժառանգությունը: Եվ որովհետև Շապուհը հափշտակել էր Արշարունիքի մի մասը, մտածում էր իր կնոջ միջոցով տիրել ամբողջ երկրին, բայց այն գրավեցին Աշոտն ու Շապուհը: Հասնելով Շիրակի կողմերը՝ նրանք կոտորեցին Իսմայելի զորքը, որն այնտեղ էր, և գրավեցին Շիրակը, Աշոցքը և Տայքի գավառը: Այդպիսի հաջողություն ունենալով՝ քաջ Աշոտը շինում է Կամախը[2], այնտեղ բնակեցնում է իր ընտանիքը: Նա նմանվում է իր նախնի Սմբատին, որը Սմբատավանի իշխան Բյուրատի որդին էր, իսկ Սմբատավանը նույն Բաբերդն[3] էր, որը գտնվում էր Սպեր գավառում: Մի օր, երբ նրան պաշարեցին թշնամիները, նա աղոթք էր անում:

[1] Արճեշի և Բագրևանդի մոտ տեղի ունեցած 775 թ. պատերազմի մասին է:

* ՄՕ.-ում Ջահապ:

[2] Մեր հեղինակը այստեղ և այլուր Շիրակի Անին չփոթում է Դարանաղիի Անիի հետ, որը նաև Կամախ էր կոչվում:

[3] Այն Բաբերդն է կամ Պայպուրդը, որը հետո եղավ Խաղտիքի քաղաքը [ՄՕ.-ում «որ է բերդ ի Սպեր գաւառի»՝ որը բերդ էր Սպեր գավառում]:

Այդ բանը տեսնելով՝ նա չընդհատեց Աստծու հետ խոսելը մինչև վերջացնելը, իսկ հետո դուրս եկավ նրանց դեմ: Նրանց զվխավորին՝ Լիպառոն Աբդային*, նա բաժանեց երկու մասի և կոտորեց մոտավորապես հինգ հարյուր մարդու: Նրան խնդրանքով դիմում է Գնունյաց[1] ցեղը՝ իրեն ազատելու իսմայելցիներից: Աշոտը հազար տղամարդկանցով գնաց Աղիովիտ գավառը և ամբողջ ցեղին իրենց ընտանիքներով հավաքելով իր մոտ՝ տարավ, բնակեցրեց Տայքում:

Այն ժամանակ իսմայելցիները գժտվեցին միմյանց հետ, և մեր երկիրը հանգստացավ, ու սկսեցին հզորանալ մեր իշխանները յուրաքանչյուրն իր տեղում: Եվ Իսմայելի իշխանը Վրաց երկիրը տալիս է Աշոտին՝ Հայոց իշխան Աշոտի որդի Վասակի, նրա որդի Ատրներսեհի որդուն, որը գնալով հնազանդեցնում է իրեն, և կայսրը նրան ուղարկում է կուրապաղատության աստիճան: Իսկ Ջահապը, ապստամբվելով իր իշխանի դեմ, գալիս, բռնությամբ նստում է Դվինում իր որդի Աբդայի հետ: Այդ բանը տեսնելով՝ Աշոտ կուրապաղատը [պատվիրակ] է ուղարկում Լևոն կայսրի մոտ՝ օգնելու իրեն**, բայց նա պարապ չէր, որովհետև ոմն Միքայելը փորձել էր սպանել նրան, բայց չէր հաջողվել: Այդ մասին իմանալով՝ կայսրն ուզում է նրան սպանել, բայց թագուհին կայսրին աղաչում է՝ նրան սպանել զատկից հետո: Այդ պատճառով Միքայելը բանտ է դրվում: Բանտապահը Միքայելի բարեկամն էր, որը կաշառեց թագավորի պաշտոնյաներին՝ արքայի սենեկապաններին ու մերձավորներին: Եվ նրանք եկեղեցում պատարագի ժամանակ սրերով հանկարծակի հարձակվեցին կայսեր վրա: Կայսրը, փախչելով զոհասեղանի մոտ, ձեռք է զցում նրանից, իսկ նրանք անողորմաբար ու գազանաբար սպանում են նրան այդ նույն տեղում: [Հետո] թագավորեց Միքայելը, որը փնտրում էր մեծ զորավար Մանվել Մամիկոնյանին, որը հարյուր հիսուն մարդկանցով շտապում էր հասնել Կամախ, իսկ այնտեղից էլ Իսմայելի իշխան Մամունի մոտ, որը սպանելով իր եղբայր Մահմեդին՝ ինքն էր իշխում տաճիկների վրա: Մա-

* ՄՕ.-ում Լիպավոն Աբդա:

1 Գնունիքը Ամուկի և Բերկրի կողմում է, Վանա երկրի հյուսիսում:

** ՄՕ.-ում «օգնել Հայոց»՝ օգնել Հայաստանին:

մունը մեծ պատվի է արժանացնում նրան՝ օրական նշանակելով հազար երեք հարյուր վեց արծաթյա դրամ և ամեն օր տալով անչափ ու անհամար պարգևներ: Կուրապաղատ Աշոտը տիրեց Կաղարջքից մինչև Տփղիս լեռնային կողմերի հետ միասին: Բայց Ջահապի արքունիքը հզորանալով Դվինում շուրջ հազար մարդով ցանկացավ գնալ Տարոն, Սմբատի որդի Աշոտի իշխանության վրա, իսկ այն քաջ ու ողջախոհ մարդը հավատալով՝ երկու հարյուր հեծյալով ու երեք հարյուր հետևակով գնաց նրանց ընդառաջ՝ չպասելով զորք հավաքելուն: Նրանցից երեք հազարին նա կոտորեց և հասնելով նրանց բանակին՝ խլեց նրանց ամբողջ հարստությունը և ուրախությամբ վերադարձավ՝ փառք տալով Քրիստոսին: Իսկ նրա եղբայր Շապուհը, ասպատակելով Դվինի կողմերը և առնելով մեծ ավար, վերադարձավ: Նրանցից հետո զորքը թողեց քաղաքը, և քաղաքացիները, հարձակվելով Աբդամելիքի[1] վրա, սպանեցին նրան և հանեցին քաղաքից դուրս: Դարձյալ իմանալով կատարվածի մասին՝ զորքը ցրվեց ու անհետացավ:

ԽԲ. Այն ժամանակ Աշոտի մոտ է գալիս Եպիկուռա* անունով մի եպիսկոպոս և ձգտում է նրան դարձնել դեպի Քաղկեդոնի .....**: Միջագետքում ոմն վարդապետ Բուրեռ*** լսելով այդ մասին՝ ուղարկում է Նանա սարկավագին, որը գալով մարտնչում է Ապիկուռայի դեմ և հաղթում նրան ..... **** զորությամբ: Ապիկուռային հալածում է իշխանը ու է՛լ ավելի հաստատվում սուրբ Գրիգորի հավատի[2] մեջ: Դրանից հետո իր մահճում վախճանվում է Աշոտը, և իշխանությունը գրավում է նրա որդի Սմբատը, մեկ տարի: Այնուհետև մարտնչելով չորս հազարի[3] դեմ՝ հինգ հարյուր մարդկանց հետ նահա-

1 Աբդամելիքը, անշուշտ, նույն ինքը Ջահապի որդին է, որին վերևում [հեղինակը] Աբդա էր կոչում:

* Այստեղ Եպիկուռա է, իսկ մյուս տեղերում և ՄՕ.-ում Ապիկուռա է:

** ՄՕ.-ում կետերի փոխարեն՝ յաղանդն՝ դեռի աղանդը:

*** ՄՕ.-ում Բյուրատ:

**** ՄՕ.-ում կետերի փոխարեն՝ սուրբ Հոգւոյն՝ սուրբ Հոգու:

2 Ս. Գրիգորի հավատը Քաղկեդոնի հավատին հակառակ չէ: Բայց այս բանը հիշատակում է նաև Նանայի հայ թարգմանիչը՝ Հովհաննեսի մեկնիչը և Ապիկուռային է համարում հալածվող, բայց դեպքերի պատճառը ինձ լավ հայտնի չէ:

3 Մարտնչելով բռնակալ ոստիկան Հոլի դեմ:

տակվում է* Քրիստոսի համար իսմայելցիների կողմից: Իսկ նրա եղբայրներ Դավիթը, Սահակը, Մուշեղը և Բագարատը, վերցնելով իրենց մորը, գնացին Նփրկերտ, Խալաֆ[1] ամիրայի մոտ և սիրով ընդունվեցին նրա կողմից: Իսկ Ջահապի տնից ոմն Սևադա չորս հազարով կռվում է Աշոտի և նրա եղբայր Շապուհի դեմ, և վերջինս զոհվում է այդ պատերազմում: Երկու տարի անց իր տանը մեռնում է նաև Աշոտը, և իշխանությունը գրավում է նրա որդի Սմբատը, որը խնամում էր մնացած որբերին՝ Շապուհի որդիներին, ապահով կերպով նրանց բնակեցնելով Անիում: Խաղաղություն հաստատելով Սևադայի հետ՝ նրանից առանում է հայրենի սպարապետության պաշտոնը և ամուսնանալով Դավթի քրոջ հետ՝ ունենում է երկու որդի՝ Աշոտին ու Շապուհին, որոնց քրոջը կնության է տալիս Աշոտ կուրապաղատի որդի Բագարատին: Իսկ Սմբատի եղբայր Դավիթը շինում է Օձ բերդը[2]:

Այն ժամանակ պարսից ցեղից Բաբ[3] անունով մի մարդ, դուրս գալով Բաղդադից, Իսմայելի ցեղից շատերին սրի է քաշում, շատերին գերում: Նա իրեն անմահ էր համարում և Իսմայելի դեմ պատերազմելիս մի անգամից կոտորում է երեսուն հազար մարդու: Նա հասավ մինչև Գեղարքունի՝ սրի քաշելով մեծերին ու փոքրերին: Յոթ տարի Հունաց կողմերում էր գտնվում Մամունը, որը գրավում է Լուլուա[4] անառիկ ամրոցը և վերադառնում է Միջագետք, իսկ Մանվելը դարձյալ գնում է Հունաստան: Մեռավ Մամուն, և իշխանությունը գրավեց նրա եղբայր Աբուսահակը[5], որը Ափշինին մեծ ուժով ուղարկում է

* ՄՕ.-ում «մարտուցեալ ընդ չորից հազարաց հինգ հարիւր արամբք՝ պակիր»՝ հինգ հարյուր մարդով մարտնչելով չորս հազարի դեմ նահատակվում է:

[1] Նախ ժ դարի Նփրկերտի իշխողները համանուններ են համարվում, որն է Մուփարդին (ինչպես որ դնում է հին Օ.-ը) [Մուփարդի է նաև ՄՕ.-ում]: Իսկ թե դրանից առաջ Խալաֆ անունով ամիրա եղե՞լ է, թե ոչ, դա մեզ հայտնի չէ:

[2] Ինձ թվում է, որ Օձ բերդը Տարոնի Օձ քաղաքն է:

[3] Նրան անվանում են մոլորեցուցիչ Պապեք, որը ապստամբություն բարձրացրեց խալիֆի դեմ 817 թ. և քսան տարի շարունակ տաղնապի մեջ պահեց ամիրապետի միահեծան պետությունը, մինչև որ 836 թ. նրան բռնեց հայկազուն քաջ Սահակը:

[4] Լուլուան ամրոց է Կիլիկիայում:

[5] Այս խալիֆը Մոդասսեմ էր կոչվում:

Բաբանի* վրա: Ափշինն** ուղևորվում է Հայաստան և կոտորում է Բաբանի զորքը: Սմբատի որդի Սահակը բռնում է Բաբանին և Ափշինից որպես փրկագին ստանում է մեկ միլիոն արծաթյա դրամ, բացի դրանից նրանից առնում է ևս հարյուր հազար, և կտրելով Բաբանի ձեռքերն ու ոտքերը՝ նրան ցցի են բարձրացնում: Եվ Ափշինը գնում է Հունաստան, հաղթում է կայսրին, գրավում է Ամուրիա քաղաքը[1] և գերելով նրան [կայսրին]՝ վերադառնում է խաղաղությամբ: Այդ օրերի ընթացքում Ջահապի ցեղից, ոմն Աբլհերթ[2] չորս հազարով հարձակվում է Սյունիքի վրա. նրա դեմ դուրս է գալիս Բաբկենը երկու հարյուր մարդով և նրան իսպառ բնաջնջում:

ԽԳ. Պատրիարքների շարքում[3] հաջորդը Գևորգ Հովսեփն է, որն [աթոռակալում է] տասնմեկ տարի: Նրան փոխարինում է Դավիթը, տասներեք տարի: Նրա օրոք Հուլ անունով մի ոստիկան հարձակվում է հայերի վրա: Նրա դեմ դուրս են գալիս Սմբատն ու Սյունյաց տեր[4] Սահակը և սպանվում: Իսկ Հովսեփին հաջորդում է Հովհաննեսը՝ մի պարկեշտ ու սուրբ մարդ, որի մասին ութ տարի անց չարախոսում են Տորոս լեռան Բագարատ իշխանի մոտ, որը որոշում է փոխել նրան, բայց չարախոսները պատժվում են Տիրոջ կողմից: Եվ Աբուսեթ անունով մի ոստիկան գալով կապում է Բագարատին և ուղարկում ամիրայի մոտ, իսկ Տորոսի ամբոխը, բարկությունից ոտքի ելնելով, սպանում է Աբուսեթին[5]: Այդ բանը լսելով՝

* Վերևում գրված է Բաբ ձևով, իսկ այստեղ և այլուր Բաբան:

** ՄՕ.-ում «որ և առաքէ զՓափշին ամենայն ուժով ի վերայ Բաբանայ ի Հայս և ինքն կոտորէ զզօրսն Բաբանայ»՝ որ և Ափշինին ամբողջ ուժով ուղարկում է Բաբանի վրա, Հայաստան, և ինքը կոտորում է Բաբանի զորքը:

[1] Ամուրիան [ՄՕ.-ում Ամուրրա] Գաղատիայի կողմերում գտնվող Ամուրիոն ամուր քաղաքն է, բայց բուն տեղը երկրայինի է:

[2] Ասողիկը նրան կոչում է Իբն-Խալիֆ, Աղվանքի պատմիչը՝ Վլիթ կամ Ալթ-Փատդոս. դեպքը հարմար է դալիս Տիրոջ 842-րդ տարվան:

[3] Կաթողիկոսների շարքում չփոթություն կա: Այդ շարքը ըստ այլ ժամանակագիրների այսպես է՝ Գևորգ՝ 3 տարի, Հովսեփ՝ 11, Դավիթ՝ 27, Հովհան՝ 22, Զաքարիա՝ 22 և այլն:

[4] Տե՛ս վերևում, էջ 117, ծան. 3:

[5] Բայց սասունցիների կողմից սպանվածը Աբուսեթի որդին էր՝ Յուսուֆ Իբն-Մուհամեդը, 851 թ.:

ամիրան մեծաքանակ զորք է հավաքում իր ընդդեմ Բուղայի[1] միջոցով և հրամայում է երկրի նախարարներին շղթայակապ հասցնել իր մոտ: Բուղան գալիս, կատարում է այն, ինչ հրամայված էր, քանի որ մտնելով Տարոն՝ բռնում է գերված Բագարատի որդիներին՝ Դավթին, Աշոտին, Արծրունյաց տան մեծ իշխանին՝ Աշոտին, գեղեցկադեմ Ատոմին հարյուր հիսուն մարդկանց հետ և ստիպում է ուրանալ Քրիստոսին: Բայց նրանք չհամաձայնեցին և այդ պատճառով դառն տանջանքներով սրի, հրի ու խաչի բաբձրացան Քրիստոսի կողմից մեհեկան ամսի քսանհինգին, և այդ օրը սուրբ պատրիարք Հովհաննեսը տոն կարգեց: Հովհաննեսը վախճանվեց իր հայրապետության քսաներկուերորդ տարվա վերջում, և աթոռն* առավ Զաքարիան, որը Զագ գյուղից էր: Բուղան, բռնելով Սիսական իշխան Վասակին, նրա եղբայր Աշոտին, Խաչեն գավառի մեծ իշխան Ատրներսեհին, Գարդմանա իշխան Կտրիճին, գնում է Ուտիք և բռնում Ստեփանոս Կոնին, որի ցեղը իր նախնի Սևուկի անունով Սևորդյաց է կոչվում, և Աղվանքի իշխան Եսայուն, բոլորին քշում, տանում է ամիրապետի մոտ, հետո խաբեությամբ կանչում է նաև Սմբատ սպարապետին: Վերջինս երբ գնում է, նրան խառնում են շղթայվածներին և պահանջում են ուրանալ, որը հանձն չառավ նահատակվող Սմբատը, այլ այնտեղ, բանտում, վախճանվեց հանուն Քրիստոսի և թաղվեց Դանիել մարգարեի** գերեզմանոցում: Նրա պաշտոնն առնում է նրա որդի Աշոտը: Նույն տեղում բազում տանջանքների ենթարկվելով՝ նահատակվեց նաև Ստեփանոսը՝ Կոն կոչեցյալը: Գրիգոր Մամիկոնյանը, արիաբար պահպանելով հավատը, դուրս է ելնում բանտից, գալիս, մտնում է իր Բագրևանդ գավառը և ցանկանում է ամրանալ Գաբեղենից գավառի Գազանածակքում, բայց յոթ օր անց մեռնում է: Այդ մասին իմանալով՝ Հայաստանում գտնվող ոստիկան Մահմեդը մարդ է ուղարկում Սմբատի որդի Աշոտի մոտ, որպեսզի նրան, որտեղ ուզում է լինի, բռնեն և տանեն իր մոտ: Աշոտը, կտրելով մեռածի գլուխը, ուղարկում է Մահմեդին, ասելով, «թե նա

[1] Արյունարբու այս ոստիկանը ազգությամբ թուրք էր, և անունն էր Գարբա-Բուղա, Էսշարապի և Ավազ՝ կրտսերից տարբեր, որը նրա քեռորդին էր:

* ՄՕ.-ում սուրբ աթոռը:

** ՄՕ.-ում սուրբ մարգարեի:

կամեցավ անցնել Հունաստան, և եթե մարդ ուղարկեցի նրա ետևից, որոնք նրան սպանեցին*, և ահա նրա գլուխը»: Մահմեդն ուրախացավ, զգացնել տվեց Զափրին[1] ու նրա հրամանով մեծարեց Աշոտին՝ նրան տալով Բագրևանդ գավառը և հինգ բյուր արծաթ: Այնուհետև Հայոց աշխարհից վերացավ Մամիկոնյան ազգը:

ԽԴ. Բայց պետք է ասել, որ այստեղից են սկիզբ առնում Հայոց և Վրաց այն թագավորները, որոնք սերեցին հիշյալ Բագրատունիներից: Քանի որ, ինչպես ասվեց, քաջ Վարդանից հետո Հայոց իշխանները պատահական կերպով միմյանց հաջորդեցին մինչև Սմբատ Բագրատունին, նրանից հետո՝ Վասակի որդի Աշոտը, այն Վասակի, որին կուրացրին Մամիկոնյանները: Աշոտն ունենում է երկու որդի՝ Հայոց թագավորների նախնի Սմբատը և Վասակը՝ Վրաց թագավորների հիմնադիրը: Վերջինիս որդին էր Ատրներսեհը, նրանը՝ Աշոտը, նրանը՝ Բագարատը, որի եղբայրն էր Գորամը[2], նրա հետ՝ Բագարատի որդի Դավիթը, որն սպանվեց իր հորեղբայր Գորամի կողմից, որի որդին էր Ատրներսեհը, նրա որդին՝ Դավիթը, նրա եղբորորդին՝ Գուրգենը, որի որդին էր Բագարատը, որը իրեն կին առավ Վասպուրականի Սենեքերիմ թագավորի դստերը,-այս է վրաց թագավորների կարգը: Իսկ Հայոց նախնի Սմբատի որդին էր Աշոտ Մսակերը, նրա որդին՝ Սմբատ խոստովանողը**, նրա որդին՝ այս Աշոտ բարեպաշտը***, որը Զափրը ամիրապետի հրամանով Վահեի[3] որդի Ալիի կողմից իշխանաց իշխան անվանվեց: Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը երեք հարյուր տասնութ թվականին Աշոտի մոտ ուղարկեց Նիկիայի[4] մետրոպոլիտ Հոհանին, որը տանում էր Զա-

* ՄՕ.-ում սպանվեց:

[1] Ինձ թվում է՝ այս Զափր կոչված ամիրապետը պետք է լինի Մոդավնքելը (847-861 թթ.) կամ նրա հաջորդներից մեկը, որոնք այլոց կողմից չեն ճանաչվում Զափր անվամբ:

[2] Բ. Օ.-ում Գոմար, իսկ վրացիները կոչում են Կուրամ կամ Կուարամ:

** ՄՕ.-ում Խոստովանող:

*** ՄՕ.-ում Բարեպաշտ:

[3] Ըստ արաբացիների՝ Ալի-իբն-Ցահյա էլ-Էրմանի, որը կուսակալ էր Տարոնում:

[4] Հովհաննեսի կամ Նիկիայի Վահան եպիսկոպոսի, Փոտի նամակի և Շի-

քարիային ուղղված նամակը՝ հարցման պատասխանը, թե ի՞նչ նպատակով եղավ չորրորդ ժողովը: Շիրակավանում ժողով արեցին, որտեղ գտնվում էր նաև Ասորիքի Նանա սարկավագը, որը մահվան մոտ մերձեցավ Զափիրին հավատի համար և տեսիլքով ազատվեց արհավիրքից: Եվ գրված էր, որ Քրիստոսի հարությունից հետո, երեք հարյուր տասնհինգ[1] թվին, Նիկիայի՝ երեք հարյուր տասնութի* ժողովը եղավ. պատրիարքներն էին՝ Հռոմից Սեղբեստրոսը, Կոստանդնուպոլսից Աղեքսանդրը, Աղեքսանդրիայից Աղեքսանդրը, Անտիոքից Եվստաթեն, Հայաստանից Արիստակեսը: Յոթանասունչորս[2] տարի անց, Թեոդոսի հինգերորդ տարում, երկրորդ** ժողովը եղավ. պատրիարքներն էին՝ Հռոմից Դամասոսը, Կոստանդնուպոլսից Նեքտարիոսը, Աղեքսանդրիայից Տիմոթեոսը, Անտիոքից Հոհանը, Հայաստանից Ներսեսը: Քառասունյոթ[3] տարի անց, Թեոդոս Փոքրի երկրորդ տարում*** եղավ երրորդ ժողովը. պատրիարքներն էին՝ Հռոմից Կեղեստիանոսը****, Աղեքսանդրիայից Կյուրղոսը*****, Անտիոքից Հոհանը, Երուսաղեմից Հովնաղը, իսկ Հայաստանից էլ [ուղարկված էր] Սահակի թուղթը: Դրանից հետո երևաց Կոստանդնուպոլսի Եվտիքես չամանդրիտը[4], որը չփոթմամբ Քրիստոսին վերագրում էր մեկ բնություն. նրան հալածեց Փլաբիանոս պատրիարքը: Եվ

բակավանի ժողովի մասին հետաքրքրվողները կարող են նայել՝ Զամչյան, Հայոց Պատմություն, Բ. հ., էջ 823:

[1] Նիկիայի ժողովը գումարվեց փրկչի ծննդյան 325 թ., որի ժամանակ և՛ Կոստանդնուպոլսում, և՛ Հայաստանում պատրիարք չկար:

* ՄՕ.-ում 518:

[2] Երկրորդ ժողովը գումարվեց 381 թ., որը առաջինից 56 տարով ետ էր, և մեր Ներսեսն արդեն վախճանվել էր:

** ՄՕ.-ում «Եւ յետ յոթանասուն և երկու ամի երկրորդ ժողով եղև ի քսան և հինգ ամի Թեոդոսի»՝ Եվ յոթանասուներկու տարի անց, Թեոդոսի քսանհինգերորդ տարում երկրորդ ժողովը եղավ:

[3] 50 տարի անց է, այն է՝ 431 թ.:

*** ՄՕ.-ում «Զկնի քառասուն եօթն ամի Թեոդոսի փոքուս»՝ Թեոդոս փոքրից քառասունյոթ տարի հետո:

**** ՄՕ.-ում Կելեստինոս:

***** ՄՕ.-ում Կյուրեղ:

[4] Այսինքն՝ արշիմանդրիտ [ՄՕ.-ում արշամանդրիտ]՝ ավագերեց:

նա աղաչեց Ոսկեան անունով ոմն ներքինապետին՝ նամակ գրել Դիոսկորոսին, որպեսզի նա իրեն ընդունելու հրաման տա, որը և նա կատարեց: Բայց հետո զղջաց և կրկին ժողով արեց Եփեսոսում, Կյուրեղից քսաներկու տարի անց, այնտեղ աքսորեց Փլաբիանոսին*, անտեսեց Լևոնի նամակը, արձակեց Անտիոքի Դոմնասին, որի համար Թեոդոսին մեղադրագիր ու հրաման է գալիս, որպեսզի ժողով անեն և վերստին քննեն: Մեռավ Թեոդորոսը, և ժողովն արեց Մարկիանոսը Քրիստոսի հարությունից չորս հարյուր վաթսուներկու տարի հետո, Սահակի վախճանվելուց տասնհինգ տարի[1] անց: Այդ թվին էլ նահատակվեցին սուրբ Վարդանանք, Հոհան Մանդակունու պատրիարքության ժամանակ: Այդ պատճառով նա ժամանակ չուներ գնալ ժողովի: [Մարկիանոսը] Դիոսկորոսին քշեց ժողովի**, Պետրոսին՝ Անտիոքից, Դիոսկորոսի եղբայր Անատոլիսին՝ նախ Կիզիկոն, ապա Երակլիա, և ապա Պամփլագոնիա: Վեց տարի անց մեռնում է Մարկիանոսը և թագին տիրանում է Լևոնը, տասնինը տարի: Նա Տիմոթեոսին աքսորեց Քերսոն: [Այնուհետև թագավորեցին]՝ Լևոն փոքրը, հինգ տարի, Զենոնը, տասնվեց տարի, որը վերացրեց Քաղկեդոնի ժողովի աղմուկը, բայց Հռոմը պահեց .....***: Անաստասը՝ քսանյոթ տարի****, որն ապրեց նույն բարեպաշտությամբ[2] և Տիմոթեոսին վերադարձրեց Աղեքսանդրիա, Հուստիանոսը ինը տարի. նա կրկին նորոգեց [Քաղկեդոնի] ժողովի աղանդը (!), Հուստիանոսը՝ երեսուներեք տարի, Հուստինոսը՝ ինը տարի. նա ցանկացավ հաստատել ուղղափառությունը, բայց դավադրաբար խեղդվեց, Տիբերը՝ յոթ տարի. նրա ժամանակ Գոս-

* ՄՕ.-ում «և անդ աքսորեաց զթուղթն Լևոնի»՝ և այնտեղ աքսորեց Լևոնի թուղթը:

[1] Հակասական են նշված թվերը. Ս. Սահակը վախճանվեց 439 թ., Քաղկեդոնի ժողովը գումարվեց 451 թ.: Այդ թվին էլ տեղի ունեցավ Վարդանանց նահատակությունը:

** ՄՕ.-ում ի ժողովոյն՝ ժողովից:

*** ՄՕ.-ում կետերի փոխարեն՝ զաղանդն՝ աղանդը:

**** ՄՕ.-ում տասնյոթ տարի:

[2] Սրա բարեպաշտությունը և Հուստինոսի ուղղափառությունը հերետիկի կարծիքով են:

տանդնուպոլսում[1] ժողով եղավ, բայց հայերը չընդունեցին, Մորիկը՝ քսաներեք տարի, Փոկասը՝ ութ տարի, Հերակլը՝ երեսունհինգ տարի*, Կոստանդինը՝ երեք տարի, Հերակլի թոռ Կոստանդինը՝ քսանինը տարի, որի օրոք Մարկիանոսը Հռոմում ժողով արեց և Քրիստոսի մեջ ընդունեց երկու կամք ու երկու զորություն, Կոստանդինը՝ տասներեք տարի. նրա ժամանակ Ագաթոնը ժողով արեց ու Մարտինոսին հաստատեց, Հուստիանոսը՝ երկու տարի, Լևոնը՝ երեք տարի, Ապտիմարոսը՝ յոթ տարի, Հուստիանոսը՝ յոթ տարի, Փիլիպպոս Վարդանը**՝ երկու տարի, Արտեմիսը***՝ երկու տարի, Թեոդորոսը՝ երկու տարի, Լևոնը՝ յոթ տարի, Կոստանդինը՝ տասնհինգ տարի, Ղևոնդը՝ յոթ տարի****, Նիկիփորը՝ վեց տարի, Ստուակոսը՝ մեկ տարի, Միքայելը՝ մեկ տարի, Լևոն Հայը՝ տասը տարի, Միքայելը՝ մեկ տարի, Թեոփիլոսը՝ մեկ տարի, Միքայելը՝ երկու տարի, Վասիլը, որի օրոք Փոտը նամակ գրեց ու ասաց, թե հակասություն չկար մինչև վերջին Ներսեսը, որի օրոք սահմանվեց Հայոց թվականությունը, հարյուր չորս թվին: Այնուհետև նա Դվինում ժողով արեց Բարդիսու Ասորի***** [եպիսկոպոսի] միջոցով, որը եկել էր Սասունից, և նրա ներկայությամբ թարգմանվեցին Նաբուկ քաղաքի Փիլաքսիոս եպիսկոպոսի****** ու Տիմոթեոս Կուզի գրքերը: Տասնվեց թվին վրիժառու Վարդանն սպանեց Պարսից մարզպան Սուրենին և ընտանիքով եկավ Հուստիանոսի մոտ, նրա թագավորության երեսուներորդ տարում: Խաչվերացի տոնի ժամանակ նա չհաղորդվեց հույների հետ՝ ասելով, որ դա արգելվում է իրենց վարդապետների կողմից: Այդ պատճառով թագավորը գումարեց հարյուր հիսուն եպիսկոպոսների ժողով, որը կոչվեց հինգերորդ ժողով: Եվ երբ Մուշեղը Հայոց և Հունաց զորքերով

[1] Դա Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովն է. հեղինակի այս տեսակետին չատերը համակարծիք չեն:

* ՄՕ.-ում երեսունյոթ տարի:

** ՄՕ.-ում Փիլիպպոս Վարդը:

*** ՄՕ.-ում Արտեմիոս:

**** ՄՕ.-ում Լևոնը՝ հինգ:

***** ՄՕ.-ում Բարդիշու Ասորի:

****** ՄՕ.-ում Նաբուն քաղաքի Փիլաքսիոս եպիսկոպոսի:

նվաճեց Խոսրովի թագավորությունը ու վերադարձավ պարգևներով, այդ ժամանակ խոսք բացվեց հավատի վերաբերյալ: Մորիկը հարյուր վաթսուն եպիսկոպոսների ժողով արեց, որին Հայաստանից մասնակցում էին քսանհինգ եպիսկոպոսներ[1]: Հերակլն էլ գումարեց յոթերորդ ժողովը, բայց Հոհան Մայրովանեցին չընդունեց, որին Թեոդորոս Ռշտունին և Ներսեսը հալածեցին դեպի Կովկաս: Այնուհետև նա եկավ Հայաստան և կատարեց, ինչ կամեցավ: Եվ հայերը հույներից հեռու մնացին նզովքի չափ, և դա առավելապես այն ժամանակ, երբ թարգմանեցին Հուլիանոս[2] Աղիկառնացու գրքերը Սարգիսի միջոցով Մանածկերտի[3] ժողովում:

Այս ամենի մասին մի փոքր գրվեց Փոտի թղթում, որին պատասխան գրեց այսպես կոչված Սահակ Մռուտը[4], որը Տայքի Աշունքում եպիսկոպոս էր, և այնտեղից հալածվելով հավատի պատճառով՝ եկավ Հայաստան, Աշոտի մոտ:

Խե. Դարձյալ երեք հարյուր քսանհինգ թվին նույն Վասիլ կայսեր կողմից Նիկիտ անունով մի ներքինի եկավ՝ Աշոտից թագ խնդրելու, իր հետ բերելով շատ նվերներ, քանի որ նրա մասին Տարոնի Վահան անունով մի եպիսկոպոս ասում է, թե նա Արշակունի է, որովհետև մայրը հայուհի էր: Եվ թվում էր, թե կատարվելու էր սուրբ Սահակի երազը՝ ունենալ Արշակունի թագավոր և թագադրվել Բագրատունու կողմից: Դա կատարեց Աշոտը, որը նրա հետ ուղարկեց տասը հազար արծաթ, որպես ընծա նորաշեն եկեղեցու համար, իսկ Մամիկոնյանները՝ արծաթի հինգ գրիվ: Նաև ասում են, թե Հուստիանոսից գնել են սուրբ Սուփիի արևմտյան դուռը, որպես հիշատակ Հայաստանի համար: Եվ Նիկիտը պատմում է, թե աղուհացի ժամանակ գտել են սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարքը հինգերորդ շաբաթվա շաբաթ օրը, և այդ օրը տոն են կարգել:

[1] Մորիկի ժողովի մասին, որ միայն Փոտն է հիշում, տե՛ս Զամչյան, Հայոց պատմություն, հ. Բ, էջ 630:

[2] ՕՕ.-ում Լիլիանեսի:

[3] ՕՕ.-ում Ի Ծոմն՝ ծովը:

[4] Սահակ Մռուտի մականունը Ապիկուրեշ էր: Իսկ Տայքում Աշունք անունով եպիսկոպոսարան մեջ հայտնի չէ, գուցե այժմյան Թորթում գավառում (վիճակ) գտնվող Էոշք ավանը լինի:

Այդ ժամանակ տեր Զաքարիան գնում է տեսնելու Շեխի որդի Հիսեին, և նրա կողմից մեծ պատվի է արժանանում. վերջինս նրան տալիս է շատ պարգևներ, դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար: Զաքարիային հաջորդում է Գևորգը պատրիարքարանի տնից: Նրա ժամանակ մեծն Աշոտը, ընդարձակելով իր տարածքը Վրաստանում ու Աղվանքում և կովկասյան ցեղերին էլ իրեն ենթարկելով, ոչ մի բանից պակաս չի մնում, բացի թագից, որի մասին մտածում էին Հայոց իշխանները: Նրանք այդ մասին Հիսեի միջոցով հայտնում են ամիրապետին, և վերջինս ուրախ սրտով նրանց ուղարկում է թագ, հանդերձանք ու նժույգներ: Թագ է ուղարկում նաև Վասիլ կայսրը, և տեր Գևորգն օրհնում է թագը երեք հարյուր հիսունվեց թվին, իր հայրապետության տասներկուերորդ և Տիրոջ ծննդյան ութ հարյուր ութսունութերորդ տարում: Նա հինգ* տարվա ընթացքում բարեհաջող կերպով կարգավորում է իր թագավորությունը:

Նրա ժամանակ ապրում էր Համամը, որը կատարեց Առակների և Քերականի մեկնությունը, թարգմանեց Հոբի «Ո՞վ է դա» գիրքը, Սաղմոսների գրքի մի գլխի օրհնությունները և անբիծ մի գիրք:

Բայց Աշոտ արքան Վրաստանում իշխան է նշանակում իր քրոջորդուն, և ինքը վախճանվում է յոթանասունմեկ տարեկանում: Թագը գրավում է նրա որդի Սմբատը**, երեք հարյուր քառասունչորս թվին՝ [թագավորելով] քսանչորս տարի կամակցությամբ Վասիլի որդի Լևոնի, որը թագավորեց իր հորից հետո քսանվեց տարի. նա նվերներ տալու մեջ առատաձեռն մի մարդ էր, հոռոմին[1] չնմանվող, որովհետև նա հայի որդի էր և շատ էր սիրում Հայաստանը: Իսկ Սմբատը, գրավելով իշխանությունը, Երազգավորում չինում է սուրբ Փրկիչ եկեղեցին՝ Շիրակավանը, որտեղ էլ ինքն օծվեց, քանի որ դա էր Բագրատունյաց թագավորների թագավորանիստ քաղաքը,

* ՄՕ.-ում յոթ:

** ՄՕ.-ում Գագ:

[1] Հին և նոր օրինակներն ավելացնում են, և հայտնի է, թե դա ո՛ւմ ոգով. «որ ոչ կայ ի լեզու նոցա առատ, և չինին ինքեանք, որպէս ասենն» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ որ [illegible] [ընդգծումը-թարգմանչի] բառը չկա նրանց լեզվում, և իրենք էլ այնպիսին չեն, ինչպես որ ասում են:

քանի դեռ ընդարձակ կերպով չէր կառուցված Անի քաղաքը, որ նշանակում է Խնամք[1], թեպետ ներքին բերդը, որ կառուցված էր հին ժամանակ, այդ անունով էր: Օտա նախարարը այնտեղ ապահով կերպով պահում էր Տրդատի քրոջը, ինչպես նաև Արշակունյաց թագավորների կուռքերն ու գանձերը Խոսրովի մահից հետո: Երբ Հունաստանից վերադարձավ Տրդատը, Եկեղյաց գավառում նրան դիմավորեցին Օտան և նրա աներ Տաճատը՝ Աշոցքի տերը*: Այդ Տաճատն էր, որ թագավորին տեղեկացրեց Գրիգորի մասին, թե նա Անակի որդին է: Ասում են, թե անդամալույծ ոտքերով մի իշխան հայերի հավատքի դարձի ժամանակ չէր ուզում գնալ մկրտության, մինչև որ սուրբ Գրիգորը միջոց է գտնում. նա կերպարանափոխվում և գնում է բերդի դիմաց, զառիթափով թավալգլոր գնալով՝ ընկնում է ջուրը և անմիջապես ոտքի կանգնելով՝ բարձրաձայն փառաբանում է Աստծուն, որպես թե ինքը բորոտած լինելով՝ առողջացավ ջրի զորությամբ: Այդ բանը տեսնելով՝ իշխանը նրան կանչում է իր մոտ, տեղեկանում է, մկրտվում և ոտքերից առողջանում է՝ ի նշան հոգևոր բժշկության[2]:

ԽԶ. Իսկ պատվական Սմբատ թագավորը տաճիկ Հուսիփ ոստիկանի ձեռքով խեղդամահ է լինում Դվինում հանուն Քրիստոսի և նշավակվում է փայտի վրա: Հուսիփի կողմից թունավորվելով՝ մարտիրոսությամբ վախճանվում է նաև Սմբատի որդի Մուշեղը և թաղվում Բագարանում, իր հայրերի մոտ: Եվ երկիրը, յոթ տարի մնալով անիշխան, ուժասպառ եղավ սրով ու գերությամբ:

Իսկ Սմբատի որդի Աշոտը, որ արիության ու քաջության շնորհիվ կոչվել է նաև Երկաթ, գնում է Հունաց Լևոն կայսրի մոտ, որը կոչվում էր նաև Կոստանդին: Նրա օրոք Դվին քաղաքում անօրեն Հուսիփի ձեռքով, մարտիրոսական արյամբ պսակվելով, սպանվեցին Գնունյաց տան փառավոր ու մեծ իշ-

[1] Հին Օ.-ն ավելացնում է. «Կոչի Անի և Կամախն այժմ կոչեցեալ բերդ. բայց ամուրն Անի ներքին բերդն է ամրացեալ»՝ այժմ բերդը կոչվում է Անի և Կամախ, բայց Անի ամրոցը ներքին ամրացված բերդն է:

* ՄՕ.-ում շարունակվում է. «և առնուն շնորհակալութիւն բազում»՝ և ստանում են մեծ շնորհակալություն:

[2] Նման միջոցը պատշաճ չէ Լուսավորչին:

խաններ Դավիթն ու Գրիգորը, որոնց մեծարման օրը մարերի ամսի քսանն էր: Սուրբ Սահակ եպիսկոպոսը երկու հարյուր մարդկանց և յոթ եկեղեցականների հետ վախճանվեց Բյուրականում, ահեկան ամսի տասին, երկու Կիրակոսները՝ նույն ամսի տասնյոթին*, որոնց համար սուրբ պատրիարք Հովհաննեսը գերապայծառ տոն կարգեց: Հովհաննեսն իր աչքով տեսավ խավարաբեր ժամանակը և որպես հիշատակ գրեց ապագա դարերի համար ու [կարգեց] սուրբ Սմբատ թագավորի տոնը: Իսկ Աշոտը, թագադրվելով Լևոնի կողմից, երեք հարյուր յոթանասուն թվին վերադառնում է Հայաստան և տեսնում է թագավոր դարձած իր հոմանուն Աշոտին՝ իր հորեղբոր որդուն, որին հնազանդեցրեց իրեն, ինչպես նաև Արծրունյաց տան Գագիկ թագավորին ու Աղվանքին տիրապետած Մովսեսին[1], որի աչքերը կուրացրեց: Աշոտը նրանց ու Վրաց Ներսեհ թագավորի համեմատ ավելի մեծազոր գտնվեց և նրանց նկատմամբ շահնշահ կոչվեց՝ [թագավորելով] ութ տարի: Նա վախճանվում է, և թագն առնում է նրա եղբայր Աբասը, որը հոր մահից հետո գնալով Վրաստան ու փեսայանալով նրանց հետ՝ վերադառնում է այնտեղից և երեք հարյուր յոթանասունմեկ թվին տիրում է իրենց ամբողջ հայրենիքին ու [թագավորում] քսանինը տարի: Նրա օրոք կրոնավորների մեծ բազմություններ, հալածվելով հռոմեական աշխարհից ուղղափառության պատճառով (!), գալիս են մեր աշխարհը և շինում շատ վանքեր[2]. նախ՝ Կամրջաձորը և ապա՝ Հոռոմոսի կոչված վանքը, որպես թե Հոռոմքի կողմերից եկան, և Դպրավանքը: Ասում են, որ նրանք են շինել նաև Սանահնի սուրբ Աստվածածինը: Աբաս թագավորը Կարսում գեղեցիկ հորինվածքով շինեց կաթողիկեն: Նրա օրոք մեծ զորքով Կուր գետով շարժվեց-եկավ Կովկասի այն կողմում գտնվող սարմատացիների ցեղի Բեր անունով[3] իշխանը և լսելով, որ Հայոց

* ՄՕ.-ում տասնհինգին:

[1] Այդ Մովսեսը Ուտիքի մի մասի իշխանն էր, որ տիրեց Աղվանքի տարածքներին, և հետո այն կոչվեց Աղվանք:

[2] Վանքի շինարարության մասին տե՛ս Չամչյան, Հայոց պատմություն, Բ. հ., էջ 823:

[3] Ըստ այլ պատմիչների՝ Բերը աբխազների թագավորն է և ոչ թե սարմատացիների: Մի քիչ հետո մեր հեղինակը ըստ այլ պատմիչների՝ նրան Թեոդաս է

թագավորը ժամանակ գտնելով, եկեղեցի է շինում, նրա մոտ [պատվիրակ] է ուղարկում և ասում. «Դու նախապես իմացած եղիր, որ եկել եմ օրհնելու քո եկեղեցին ըստ ձեր կրոնի՝ Քաղկեդոնի ժողովի կանոններով»: Իսկ նա [Սմբատը], նրա դեմ դուրս գալով հայկական զորքով, սրի ճարակ է տալիս ամբողջ զորքը և Բերին էլ բռնելով՝ կենդանի բերում է Կարս, թույլ է տալիս մեկ անգամ տեսնելու եկեղեցին և ապա փորելով նրա աչքերը՝ նրան վաճառում է իր ցեղին, երդմնագիր առնելով, որ այլևս չհարձակվեն Հայաստանի վրա:

ԽԷ. Իսկ Հունաց Լևոն կայսրից հետո թագին մեկ տարի տիրում է Աղեքսանդրը, նրանից հետո՝ Ռոմանոսը՝ քսանինը տարի: Նրա և Աբասի օրոք, երեք հարյուր ութսուներեք թվին, տաճիկներից[1] գրավվեց Մելտենին, և երեք հարյուր ութսունութ թվին Համդունը[2] զորքով մտավ Կողոնիա ու այնտեղից վերադարձավ: Այնուհետև, երեք հարյուր իններսուներկու թվից սկսած, տասնվեց տարի թագավորեց Լևոնի որդի Կոստանդինը[3], որը վեցերորդ* տարում, երեք հարյուր իններսունութ թվին, տաճիկներից վերցրեց Մարաշը: Նրա մասին ասում են, թե մեկ օրում հինգ** առյուծ է սպանել: Նա թուրքերի շատ բեռներ թափել տվեց Ալիս գետը, փախուստի մատնեց Իսմայելի զորքը և կոչվեց Թրքաժողով [Թրիք ժողովող, հավաքող]:

Տեր Հովհաննեսից հետո սուրբ աթոռին մեկ տարի նստեց տեր Ստեփանոսը, տեր Թեոդորոսը***՝ տասնմեկ տարի, նրանից հետո նրա եղբայր տեր Եղիսեն՝ հինգ**** տարի, նրանից

կոչում. արդարև հիշատակվում է աբխազների Թեոդաս (Թեոդոս) Կույր կոչեցյալ թագավորը, որը թեև ժամանակով մի փոքր ուշ է:

[1] Հույները Մելտենին գրավեցին տաճիկներից և ավերեցին՝ քաղաքացիների ապստամբությունը մտաբերելու պատճառով:

[2] Համտուն կամ Համատանյան արաբական տոհմը Թ դարավերջին ձեռք դրեց Միջագետքի վրա և տիրապետեց աթոռներ հաստատեց Մոսլում, Մերտինում, Նփրկերտում, Բերիայում:

[3] Կոստանդին Պորփյուռուժեն թագավորել է երկրորդ անգամ Ռոմանոսի մահից հետո:

* ՄՕ.-ում քսանվեցերորդ:

** ՄՕ.-ում յոթ:

*** ՄՕ.-ում Թեոդոս:

**** ՄՕ.-ում քսաներկու:

հետո տեր Անանիա Մոկացին՝ քսաներկու տարի: Նա մեծ չարչարանքով իրեն հնազանդեցրեց Սյունիքը, ուր Աղվանքով էին մտնում[1], և ապստամբ Հակոբից հետո արքեպիսկոպոս ձեռնադրեց (Զվանչիր իշխանի որդի տեր Վահանին, որը Բաղքից էր: Նա շինեց Հովհանի ամենապայծառ վանքը Բաղաց դղյակի անմատույց ստորոտում)[2], ինչպես նաև աղվաններին համոզեց, որպեսզի նրանք իրանց համար կաթողիկոս չձեռնադրեն առանց սուրբ Գրիգորի աթոռի: Նրանից հետո աթոռին մեկ տարի նստում է Վահանը, որը Բաղքից էր: Հետագայում հայտնի դարձավ, որ նա վրացիների դաշնադիրն է և այնտեղից արձաններ[3] է բերել տալիս: Այդ պատճառով նրան փոխում են և երկու տարի աթոռին են նստեցնում սուրբ Մաշտոցի ազգական տեր Ստեփանոսին, որը գտնվում էր Սևանում:

ԽԸ. Իսկ չորս հարյուր թվին վախճանվում է Աբաս սուրբ թագավորը, և թագն առնում է նրա որդի Աշոտը՝ Ողորմած կոչեցյալը: Նա բազմաթիվ ուրկանոցներ [բորոտանոց] շինեց և առատ ուտելիքներով ապաքինում էր հիվանդներին, բաժակի թարախածոր մնացորդները ախորժակով խմում էր, բորոտներին անվանում էր իշխաններ ու կուրապաղատներ, ըստ Հակոբի՝ թե հավատքով մեծատուններ են: Նա չորս հարյուր տասներեք թվին շինեց Անի[4] քաղաքի փոքր պարիսպը և հորինեց եկեղեցիների բոլոր աշտարակները, իսկ նրա բարեպաշտ Խոսրովանույշ կողը[5] շինում է Սանահնի փառազարդ սուրբ վանքը և Հաղպատը: Նրանք վախճանվեցին չորս հարյուր քսանհինգ* թվին, թողնելով երեք որդի՝ Սմբատին, Գագիկին և Գուրգենին: Նույն օրը թագն առնում է ավագ որդի Սմբատը, որը Տիեզերակալ կոչվեց: Նա շինեց Անիի մեծանիստ պարիսպը և հիմնադրեց կաթողիկեն, իսկ նրա կրտսեր եղբայրը ժառանգում է Տաշիրը՝ Զորագետի Սևորդիքի հետ միասին, Կայենը, Կայծոնը*, Խորխոռունիքը, որը Խոռն էր շինել, որը նույն Խոշոռնին է և Խոռակերտը, Բազունիքը, այն է՝ Տաշիրք գավառի Բազկերտը, և անվանի այլ[1] բերդեր հասան Գուրգենին, որին վրացիները Սոմխեթ են կոչում: Նրանից սերեցին Դավիթ, Աբաս և Կյուրիկե թագավորները, որոնցից** էլ կրոնավոր կանայք՝ Մամքանն ու Ռուզուքանը: Գագիկը, կարճ ժամանակ ապրելով եղբոր հետ, հալածանքի է ենթարկվում նրա կողմից ինչ-որ նենգության պատճառով: Իսկ Սմբատը, հասնելով չորս հարյուր քսանութ*** թվին, վախճանվում է, և այդ նույն ժամանակ կանչում են հալածված Գագիկին, թագը տալիս են նրան և նրա համար կին են բերում Կատրամիտեին՝ Սյունյաց Սահակ թագավորի դստերը, որն ավարտեց կաթողիկեի կառուցումը, հորդորվելով Աստծու հրեշտակի կողմից, որը խոստանում էր օգնել նրա գործին և մնալ տաճարում, մինչև որ արարածները կգան և կտեսնեն եկած Քրիստոսին:

Իսկ սուրբ աթոռին հաջորդում է տեր Անանիայի հայրենակից տեր Խաչիկը, տասնինը տարի, որին փոխարինում է տեր Սարգիսը, քսանչորս տարի: Նա շինեց սուրբ Հռիփսիմյանց վկայարանը Անիի կաթողիկեին մոտիկ և այնտեղ տեղափոխեց նրանց նշխարքները՝ բերելով մեծ հանդիսավորությամբ, և կարգեց մեծ տոնի օր:

ԽԹ. Կոստանդին կայսրից[2] հետո թագն առնում է Լևոնը, և

---

[1] Սյունիքի մետրոպոլիտները, մի պահ հալածվելով Հայոց կաթողիկոսների կողմից, ձեռնադրվում էին Աղվանքի կողմից:

[2] Բ. Օ.-ում փակագծված հատված չկա [ՄՕ.-ում կա այն փակագծերի մեջ չի առնված]:

[3] Այդ պատկերների նկատմամբ թշնամանք չկա, այլ դա այդպես է Վրաստանից բերելու պատճառով:

[4] Հայտնի է, որ Անիի փոքր պարիսպը ներքին բարձր և մեծակառույց պարիսպն է, որի աշտարակներում մատուռներ է պատրաստել, և այդպես աճել է Անիի եկեղեցիների քանակը:

[5] Իմա՛ կողակիցը:

* ՄՕ.-ում չորս հարյուր քսանյոթ:

* ՄՕ.-ում՝ Կայան և Կածան:

[1] Այս բոլոր ավաններն ու գավառները գտնվում են Գուգարաց աշխարհի հարավարևելյան մասում, որոնց վրացիները Սոմխեթ են կոչում, ինչպես որ Հայաստանը՝ Սոմախք, այսինքն՝ հարավային: Խոռակերտը կամ Խորխոռունիքը, Բազկերտը կամ Բազունիքը հայտնի են դարձնում Հայկի որդու և Թոռան՝ Տուրուբերան աշխարհում շինարարությունից հետո այստեղ գալն ու բնակությունն հաստատելը:

** ՄՕ.-ում որոց՝ որոնց:

*** ՄՕ.-ում չորս հարյուր երեսունչորս:

[2] Նա կայսրերի կարգը սկսում է Կոստանդին Դ-ից՝ Կոպրոնիմոսից, որը թագավորել է 741-775 թթ. և հասցնում է մինչև Վասիլ Բ-ն, որը թագավորել է

ապա Կոստանդինը և նրա մայր Եռինյան*, որը կուրացրեց որդուն, և հինգ տարի ինքը տիրեց մեծ աթոռին: Նրա օրոք, արբաց ամսի տասնհինգին**, վախճանվեցին ազգությամբ տաճիկ Սահակն ու Հովսեփը: Այնուհետև [թագավորեցին] Միքայելը, Լևոնը, Միքայելը, Թեոփիլոսը, Միքայելը, Վասիլը, Լևոնը, Ալեքսը, Ռոմանոսը, որն ուղղափառ (!) վանականներին քշեց արևելյան երկրներ: Մեծ զորքով Հալեպի կողմերը գնալու ժամանակ նա այդ բանը ցանկացավ կատարել նաև Սև լեռան վանքերում, բայց Տիրոջ բարկությունից հազիվ մազապուրծ՝ հետիոտն փախավ: Նրանից հետո [թագավորեցին] Լևոնի որդի Կոստանդինը, Ռոմանոսը, Նիկիփորը, Կյուռ-Ծանը, և ապա Վասիլը՝ հիսուներկու տարի:

Մ. Իսկ վրաց թագավորների սկզբի մասին, որ կա նրանց գրքերում, հետևյալն է: Մեծ ջրհեղեղից հետո Թորգոմը ութ որդիներով եկավ Այրարատ գավառը, և նրա որդիներից երեքը՝ Հայոսը, Քարթլոսը և Կովկասոսը, եղան առաջին գահակալները և տիրեցին աշխարհների, որոնք իրենց անուններով կոչեցին Հայք, Քարթլ և Կովկաս: Նրանք տիրեցին Պոնտոս ծովից մինչև Կասպից ծովը, մինչև Միհրանը և նրա թոռ Արբակը, որը կին առավ պարթևներից՝ պարտավցի Սահակդուխտ անունով մեկին, որը ամուլ լինելով՝ հավատաց Քրիստոսին, և [վերջինս] նրան տվեց մեկ զավակ՝ Վախթանգին, որը Գորգասար*** կոչվեց, որը պարսկական բառով գայլագլուխ է նշանակում[1], որովհետև սաղավարտի վրա առջևի կողմից ուներ գայլի պատկեր, իսկ ետևի կողմից՝ առյուծի: Նա

1028 թ., բայց Եռինյայից հետո մոռանում է Նիկիփորին, Ալեքսից հետո՝ Կոստանդին Գորփյուրոժենին:

* ՄՕ.-ում Եռինե:

** ՄՕ.-ում արաց ամսի յոթին և տասին:

*** ՄՕ.-ում «և ետ նմա զաւակ զՎախթանգուր, որ Գուրգասլան կոչեցաւ» և նրան զավակ տվեց՝ Վախթանգուրին, որը Գուրգասլան կոչվեց:

1 Վախթանգը Վրաստանի հռչակավոր և դյուցազուն թագավորներից է, որի մասին բազում առասպելներ են պատմում, իսկ նրա ժամանակակից մեր Ղազար պատմիչը նրան անաչառ կերպով նշավակում է որպես Նենգի և Վահան Մամիկոնյանի հետ դաշինքը դրժողի: Վրացիները նրան կոչում են նաև Գուրգասան կամ Գուրտասալ, որ պարսկերեն և թուրքերեն գայլաոյուծ է նշանակում, իսկ Գուրտասարը իրոք գայլագլուխ է:

կնության առավ Լևոն կայսեր դստերը և նրանից սերվեցին թագավորները մինչև Թևտասը, որին կուրացրեց Աբասը: Նրանից հետո աբխազների վրա թագավորեց Բագարատը[1]՝ Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի որդին,- սա ըստ Մխիթար Երեցի պատմության[2]:

ԾԱ. Իսկ Վասպուրականի թագավորները Սենեքերիմի ցեղից են՝ Դերենիկի որդի Գագիկը, որը չինեց Աղթամարը, ապա նրա որդի Դերենիկը, հետո նրա եղբայր Աբուսահլը, նրանից հետո նրա որդի Շահնշահը, հետո նրա եղբայր Գուրգենը, և ապա նրա եղբայր Սենեքերիմը, որը նեղվելով պարսիկների կողմից՝ իր երկիրը տվեց Վասիլին և գնաց նրա մոտ իր չորս որդիներով, որոնց անուններն են՝ Դավիթ, Աբուսահլ, Ատոմ, Կոստանդին, եղբորորդիներինը՝ Դերենիկ, Գագիկ, Աշոտ: Նա փոխարենն ստանում է Սևաստն ու Լառիսը[3] և շատ պրաստիններ[4] [արվարձաններ]: Դավիթը հետո սպանեց Փոկաապստամբին և գրությամբ ստացավ Խավատանքը[5],

ԾԲ. Չորս հարյուր քառասունչորս թվին մեռավ Գագիկը, թագավորությունը տալով իր երեք որդիներին՝ Հովհաննեսին, Աբասին և Աշոտին: Հովհաննեսին տալիս է թագը, Անին, Շիրակը, սուրբ Գրիգոր [եկեղեցին] Աշոցքի ձորի հետ միասին, Անբերդը, Արարատյան դաշտը, Կայանը, Կայծոնը և Սևորդյաց Տավուշ գավառը, իսկ մնացածը բաժանում է Աշոտի և Աբասի միջև: Դրանից հետո, երբ նրանք վիճում են, գալիս է աբխազների թագավոր Գորգին՝ Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի, նրա որդի Բագարատի որդին և օրենքով դատում է

1 Բ. Օ.-ում Աբաս:

2 Մխիթար Երեցը Անեցին է, ԺԲ դարի պատմիչը, որի գրվածքը ցարդ կորածների թվին է դասվում [այդ գրվածքը բաղկացած է եղել երեք մասից, բայց մեզ հասել է միայն մի հատված առաջին մասից, որը հայտնաբերել և հրատարակել է Բ. Պատկանյանը]:

3 Լառիսը, որ հիշատակում են նաև բյուզանդացիք, Սեբաստիայի կողմերում պետք է լինի, բայց բուն տեղը հայտնի չէ:

4 Պրոստինը, որ մեր հեղինակը այլ տեղերում գյուղ է թարգմանում, հունական բրոստգիոնն է, որ նշանակում է արվարձան կամ քաղաքի մերձակայք:

5 Ըստ Հայր Չամչյանի՝ Խավատանքը [ՄՕ.-ում Խավամանքը] Սեբաստիայի հարավ-արևմուտքում գտնվող ամրոց է:

* ՄՕ.-ում Գուրգի:

նրանց ու գնում: Եվ որովհետև իշխաններից ոմանք չեն հնազանդվում, Աշոտ կրտսերը գնում է Վասիլ կայսեր մոտ, նրանից զորք ստանում, գալիս, հնազանդեցնում է բոլորին և թագավոր է նստում Դրուց աշխարհում[1], իսկ Աբասը՝ Կարսում:

Այն ժամանակ վախճանվեց Դավիթ[2] կուրապաղատը: Անժառանգ լինելով՝ նա իր հայրենիքը, Ուխտիքը, Նամրվանը*, Ապահունիքի քաղաք Մանծկերտը և ամբողջ ունեցվածքը անդարձագրով [կտակով] տալիս է Վասիլին: Այդ բանը լսելով՝ Վասիլ կայսրը գալիս, բանակ է դնում Կարնո դաշտում: Այդ մասին իմանալով՝ Հովհաննեսը վախենում է և նվերներով նրա մոտ է ուղարկում Պետրոս պատրիարքին, որին մեծ հանդիսավորությամբ իր ձեռքով օծել էր տեր Սարգիսը իր կենդանության ժամանակ Անի քաղաքում: Բացի դրանից, Հովհաննեսին նեղում էր նաև Վրաց արքան: Այդ պատճառով նա պատրիարքին պատվիրում է իր մահից հետո Անին գրությամբ տալ հույներին, եթե կուրապաղատը այն պահպանի նրան նեղողներից: Այդ լուրը ուրախությամբ լսեց Վասիլը: Եվ նա իր մոտ կանչեց Վրաց Գորգի թագավորին, որը չեկավ նրա կանչով: Այդ պատճառով նա զայրացած գնում է, ավերում նրա տասներկու գավառները, վերադառնում է Խաղտիք ու այնտեղ ձմեռում: Վասիլն իր մոտ է կանչում տեր Պետրոսին՝ իր հետ օրհնելու ջուրը Աստվածահայտնության տոնի ժամանակ: Այդ ժամանակ հրաշք կատարվեց. լույս փայլատակեց հայրապետի աջից ու սուրբ յուղի օծումից՝ զարմացնելով տեսնողներին, և հույժ մեծարվեց Հայոց հավատը[3]: Վասիլը վերադառնում է Կոստանդնուպոլիս և վախճանվում չորս հարյուր յոթանասուներեք թվին: Թագն առնում է Կոստանդինը, երեք տարի, նրանից հետո՝ նրա փեսա Ռոմանոսը, հինգ տարի, որին կնոջ հրամանով խեղդեցին բաղնիքում և նշանակեցին Միքայելին, յոթ տարի:

---

[1] Աշոտի բաժին Դրուց աշխարհը պետք է լինի Շիրակի և Անիի սահմաններից դուրս:

[2] Դավիթը տիրում էր Տայքի և Մեսխիքի կողմերին, Հայոց միջնաշխարհի մի մասին:

* ՄՕ.-ում Մամրվան:

[3] Նոր Օ.-ում Հայրապետը [այդպես է նաև ՄՕ.-ում]:

ԾԳ. Իսկ Ամիրալամումնյաց* շարքը բերելով հասցրինք մինչև Ջափրը և Թողինք, որովհետև նրանց իշխանությունն սկսվեց վաթսուն թվին, դադար առնելով չփոթվեց երեք հարյուր հիսուն թվին, և այստեղ-այնտեղ բռնությամբ տիրելով՝ տկարացան, ու այդ պատճառով հզորացավ թուրքերի ազգը: Խորասանում ապրում էր Մահմուդ անունով մի իսմայելցի, որը Ջահան գետով անցնելով թետալացիների երկիրը[1], բազում գերիներ է բերում Խորասան, որն արևելք[2] է նշանակում, և բնակեցնում է առանձին-առանձին: Աճելով ու բազմանալով՝ նրանք մեկին ամիրա են նշանակում և ապա նրան թագադրում Մահմուդի մեռնելու ժամանակ: Հաջողություն ունենալով՝ նա տիրում է Պարսկաստանին և դառնում սուլթան, որի անունը Դողլա-բաք[3] էր: Դա այդպես է ըստ վիմագիր Տիգրանի[4] որդի Վահրամի, իսկ պատմական երեց Մխիթար Անեցին, որի հիշատակը կա կենաց գրքում, այսպես է ասում. «Շատ չարչարվեցի գտնելու սուլթանների ինչպիսի լինելը իրենց՝ թուրքերի մոտ և Աստծու շնորհիվ գտա այսպես. Մահմուդը, որի մասին ասացինք, թե Սրքթանի[5] որդին է, աննշան վիճակից մեծանալով, ինչպես Սասանյան Արտաշիրը, Մահմեդի ցեղից վերացրեց Մահմադ Մուքթադեի** իշխանությունը Մահմեդի երեսուներեքերորդ և նրանց իշխանության երկու հարյուր քառասունվեցերորդ[6] տարում: Նա հզորացավ քուշանների երկրի Բահլ քաղաքում, նրա մասին մեծ համբավ տարածվեց, մինչև անգամ խալիֆը վախեցավ և նրան ուղարկեց ընծաներ, ալամ, լաղապ ու նրան կոչեց Ամինադդ[7] և սուլ-

---

* ՄՕ.-ում Ամիր Մումնյաց:

[1] Տե՛ս էջ 63, ծան. 2:

[2] Քանի որ խոր պարսկերեն արևելք է նշանակում:

[3] Դողլա-բաք [ՄՕ.-ում Դողլա-բեկ], այսինքն՝ Տողլաբ-բեկ, որը ուրիշների կարծիքով Տուղրիլն է:

[4] Անծանոթ պատմիչ է, որին Մխիթար Այրիվանեցին Տիգրանի որդի չի կոչում, այլ Տիգրանակերտցի:

** ՄՕ.-ում Մահմադ մուքթաֆե:

[5] Սեպեքթեկին կամ Սաբկդ էդ-դին:

[6] Արաբական երկու հարյուր քսանվեց թիվը փրկչի 860 թիվն է, բայց Մահմուդն իր իշխանությունը հաստատեց դար ու կես հետո՝ 997 թ.:

[7] Ալամ, ալամ նշանակում է իշխանության վառ դրոշ, լաղապ, լեղապ՝ պատ-

թան: Այդ պատվին արժանանալով՝ նա էլ ավելի է հզորանում, և նրա համբավը հասնում է Հնդկաստան ու [հավասարվում] Մաթան կուռքի[1] համբավին: Նա կործանում է կուռքը և ավար առնելով վերադառնում է՝ իր որդի Մահմադին* թողնելով այնտեղ: Նա գալիս է Գուրգան[2], որի տիրոջից առնում է չորս հարյուր հազար դահեկան և մի տուն լիքը զենք իրենց չորս հարյուր քսան** թվին ու անցնում, գալիս է Ըռե[3]: Ռեի տեր Մաջա-դոլա Ռոստոմը, որ երեք օր առաջ գրավել էր Դելմիկքը[4], նրան ընդառաջ է գնում և հասնում է Սրավ[5]՝ մեծ ուժով ու երկու հարյուր հիսուն փղով: Եվ տեսնելով Մահմուդին՝ ասում է. «Շա՛հ, նամազ կարդացե՞լ ես»: Նա պատասխանում է՝ այո՛: Նա դարձյալ հարցնում է. «Ճատրակ խաղացե՞լ ես»:- Այո՛: Այնուհետև հարցնում է. «Թագավորը թագավորի տուն մտնո՞ւմ է, թե ոչ», բայց նա լռում է: Եվ իսկույն կապելով նրան՝ ուղարկում է Խորասան և գրավելով նրա ամբողջ ունեցվածքը՝ տիրում է Ռեին ու գալիս է Տափարաստան[6], Տառաբի[7], Սարի[8]: Իր որդի Մասխուտին*** տալիս է

պատվաստիճան, Ամենայն, Էմին տալի՝ արդարության ոստիկան կամ արդար ու հավատարիմ:

[1] Հնդկական Մաթան կուռքը մեզ ծանոթ չէ, եթե այն չլինի Մաղալի հաստվածը՝ Ինդրայի կուռքերը վարողը:

* ՄՕ.-ում Մահմեդ:

[2] Մեր կարծիքով՝ Գուրգանը կամ Ճուրճանը Վրկանն է, որն ընկած է Կասպից ծովի հարավարևելյան կողմում:

** ՄՕ.-ում չորս հարյուր քառասուն:

[3] Ռեն կամ Հրեն այժմյան Ռայն է՝ մարերի հին Ռագավը, որը գտնվում է Թեհրանի մոտ:

[4] Դելմիկքը Տիլեմ նահանգի կամ Դելմաստանի ժողովուրդն է, որ գտնվում է Կասպից ծովի հարավում, Տեմավենա քարձր լեռան սահմաններում:

[5] Սրավը, Սերավը կամ Սեր-Ապը [ՄՕ.-ում Իսրավ] Ատրպատականում գտնվող քաղաք է:

[6] Տափարաստանը կամ Դեպերիստանը Կասպից ծովի հարավային ափերին գտնվող լեռնային նահանգ է:

[7] Ինձ թվում է, որ Տառաբին Տարապն է կամ Տապարկերտը՝ Փարսիստանի վիճակը [նահանգը] կամ քաղաքը:

[8] Սարին [ՄՕ.-ում Սարտա] Դեպերիստանի վիճակն [նահանգ] է ու գլխավոր քաղաքը:

*** ՄՕ.-ում Մասխուտ:

Ռեն, Ղազվինը[1] և ամբողջ Քոհաստանը[2]: Նրան թողնելով Ռեում՝ գալիս է Սրավ, առնում է հարյուր հազար դինար և անցնում է Նաշավուր[3] իրենց չորս հարյուր քսանմեկ թվին: Իսկ Մասխուտն առնում է Համիանը, Ասպահանը, վերադառնում է Ռե և իսկույն լսում, որ Ասպահանում սպանել են իր շահենեերին[4]: Եվ դարձյալ այնտեղ կոտորում է չորս հազար մարդու, վերադառնում է Ռե, և այդ ժամանակ բերում են իր հոր մահվան գույժը ու իր եղբոր՝ Մահմադի* սուլթան դառնալու լուրը: Նա վեր է կենում, գնում, բռնում է եղբորը, կուրացնում և գրավում իշխանությունն ու աթոռը: Իսկ երբ նրա հայրը օգնության էր գնացել այն ցեղին, որի գլխավորը կոչվում էր Խորղան-Պողրդան, ճանապարհին հանդիպում է թուրքերի բանակի ինչ-որ բազմության և նույն ճանապարհով վերադառնալիս մեծ հաղթությամբ գերում է նրանց ամբոխ Ափաղուին, բերում Խորասան ու շղթայում: Իսկ նրա ժողովուրդը գալով խնդրում է հորից և ապա որդուց [տալ Ափաղուին], բայց չեն տալիս: Ժողովուրդը զայրացած իր ամբողջ բանակով անցնում է Ջահան [գետը] ու մահն աչքերն առած կռվում է, հաղթում ու գրավում Նշավուրը և կոտորում սուլթանի զորքը Դաղանղանում[5], Մրմնի[6] մոտ: Սուլթանը փախուստի է դիմում և գնում է Ղազվին, իսկ այնտեղից՝ Հնդկաս-

[1] Ղազվինը կամ Խազվինը, Գազվինը Պարսից աշխարհի սահմանագլխին գտնվող երևելի քաղաքն է:

[2] Քոհաստանը, Քյուհիստանը [ՄՕ.-ում Քրհաստան], այն է՝ Լեռնաստանը, Պարսից տերության մեծամեծ նահանգներից մեկը, որն ընկած է Իրաքի և Խորասանի միջև:

[3] Նաշավուրը Նյուշապուհն է կամ Նիշապուրը՝ Իրաքին մոտ գտնվող Խորասանի քաղաքը:

[4] Շահենե պարսկերեն նշանակում է վերակացու կամ հրամանատար: [Իսկ ըստ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Մի ջին հայերենի բառարանի»՝ «ոստիկան, ոստիկանապետ, վարչական և հարկահավաք պաշտոնյա» (հ. 2, էջ 204)]:

* ՄՕ.-ում Մահմուդ:

[5] Դաղանղանը [ՄՕ.-ում Դաղաղան] պարսիկներն անվանում են Փինար-Տատուն-Խան:

[6] Մրմնը պարսկական Մեր կամ Մրու նշանավոր ու մեծ քաղաքն է, որ գտնվում է Խորասանի և Թուրքեստանի սահմաններում:

տան, բայց ճանապարհին սպանվում է: Ղազվինում թագավոր են նշանակում նրա կույր եղբորը, որը երկար ապրելով՝ ծնում է որդիներ, որոնք մեկը մյուսից առնում են Ղազվինը մինչև օրս:

Իսկ թուրքերից մի առաջադեմ մարդ, որի անունը Մուսեփաղո* էր՝ Սարչուքի[1] որդին, ուներ հինգ եղբորորդի, որոնց անուններն են՝ Աբուսալիմ**, Դավութ, Ջաղրբեկ, Աբուտալիփ, Տողրիլ-բեկ: Վերջինս գրավեց սուլթանական իշխանությունը և տասնհինգ տարի շարունակ ընդարձակելով իր երկրի սահմանները՝ բաժանեց ամբողջ Խորասանի երկիրը: Երբ նա գալիս է Ռե, գտնում է ոսկով լի երկու շտեմարան, տիրում է դրանց, ուղարկում խալիֆին և խնդրում նրա օրհնությունը: Խալիֆը մեծարում է նրան պատվական մարդկանցով[2], նրան տալիս է ալամ [դրոշ], ընծաներ, նրա անունը կանչում է մամբարից[3], նրա մականունը դնում է Ռուքնադվլա[4], և այդ օրվանից նա կոչվում է աշխարհակալ: Նրան փոխարինում է Տուղրիլի հորեղբորորդի*** Արփասլանը, որը ամբողջ երկիրը ներկում է արյամբ: Նա ուներ ութ որդի, որոնցից թագավորական աթոռին է հասնում Մելիք-Շահը՝ բարի ու խաղաղասեր մի մարդ, իսկ հետո՝ Մահմուդ սուլթանը, նրանից հետո՝ նրա ավագ եղբայր Բաքարուխը[5], որը սպանեց նրան և

* ՄՕ.-ում Մուսեփաղու:

[1] Սարչուքը, Սելչյուկը կամ Սելջուկը, ըստ պարսից ավանդության, սերել էր էֆրեսիապ դյուցազնից: Նրա որդիներն էին՝ Միքայելը, Իսրայիլը, Ցունուզը կամ Պիկուն և հեղինակի հիշատակած Մուսան: Միքայելի որդիներն էին Դողրուլը և Ջաղրը, այն է՝ Ճյաֆարը: Սելջուկներից շատավիզեց իշխանության չորս ճյուղ՝ ա. պարսկական. դրանք Ղազնեյանց իշխաններն են, բ. Թուրք Խորազմյանների, գ. Հալեպի և Դամասկոսի, դ. Իկոնիոնի, որը Գոնեիոնն է և Փոքր Ասիայինը. այն հռոմեացիների բառով Ռում կոչվեց:

** ՄՕ.-ում Աբուսալիս:

[2] Բ. Օ.-ում «մեծարէ զնա առ ինքն»՝ նրան մեծարում է իր մոտ:

[3] Մամբարը Միմպերն է՝ աղոթքի բեմը, որտեղից կանչում էին խալիֆի անունը:

[4] Ռյուքնյուլ-դեվլեթ [ՄՕ.-ում Դուքնատ աղա] նշանակում է բախտի սյուն կամ հարստություն:

*** ՄՕ.-ում եղբորորդի:

[5] Պաքքի-արուքը [ՄՕ.-ում Բակիարուխ. այդպես է նաև Վ.Օ.-ի հետագա շարադրանքում] իշխեց մոտավորապես տասներկու տարի:

տիրացավ աթոռին հինգ* տարի: Նրա վրա հարձակվում է Ալփասլանի որդի Դուդուշը, որին նեղելով՝ Բակիարուխը կոտորեց նրա զորքը և սպանեց Դուդուշին: Մահմուդի որդի Մահմուդ սուլթանը երեխա ժամանակ սպանեց Բակիարուխին և տիրացավ սուլթանությանը տասներեք** տարի: Նրան հաջորդեց նրա որդի Մահմուդը, որի դեմ պատերազմեց Սանջար սուլթանը և հաղթեց նրան, վերցրեց Արաղի[1] իշխանությունը և նրան դրեց Բարաղում***: Նրանից հետո սուլթան նստեց նրա որդի Դավութը, որին սպանեցին Մլհետները[2]: Այնուհետև իշխեց Տուղրիլը, նրանից հետո՝ Մասխուտը, հետո՝ նրա որդի Ասլանը, նրանից հետո՝ ուժեղ Տուղրիլը[3], որն ապրում էր մինչև մեր ժամանակները. նա պատիվ էր ստացել տեր Աստծուց:

ԾԴ. Նույն մարդը պատմում է նաև Հովհաննես թագավորի մասին, թե նրա եղբայր Աշոտը Թալինի[4] ստորոտում, ձևացնելով մերձիմահ հիվանդ, թագավորին կանչում է իր մոտ, գլխավերևի կողմում փորելով որոգայթ և դրա միջոցով բռնելով՝ նրան տալիս է Ապիրատ[5] կոչեցեալ մեծ իշխանի ձեռքը՝ նրան սպանելու: Իսկ Ապիրատը, հոժար կամքով նրան

* ՄՕ.-ում քառասուն:

** ՄՕ.-ում տասներկու:

[1] Արաղ, Իրագ. Պարսից նշանավոր աշխարհը, որը հնում Մաքստանի սահմանն էր:

*** ՄՕ.-ում «Եւ առնու Զարաղայ իշխանութիւնն և դնէ զնա իբր աղա»՝ Եվ իշխանությունն առնում է Զարաղան և նրան դնում է իբրև աղա:

[2] Մլհեղները կամ միլահիտեները ըստ արաբների հերձվածողներն էին կամ մոլորվածները, ըստ ասորիների և պարսիկների՝ Հաշիշի, ըստ եվրոպացիների՝ Ասասին, այսինքն՝ ավազակներ: Նրանք հետնորդներն են մոլեռանդ բռնակալ Հասան-Սեպահի, որի ամրոցն ու գաղտնարանը Ալամուդ բերդն էր, որը գրավեց Հուլավու ղանը: Նրանք հաճախ կոչվում են նաև խմաթելցիներ:

[3] Ուժեղ Դողրուլ Բ.-ն տոհմի վերջին սուլթանն է, որ իշխել է 1177-1187 թթ.: Նրա ժամանակակիցն է պատմիչ Մխիթար Երեցը:

[4] Թալինը Արագածոտն հին գավառում է. այժմ նույն գավառում կան Հին և Նոր Թալիններ:

[5] Ասում են, որ Ապիրատն ու Վահրամը Լուսավորչի ցեղից և Պահլավունյաց տոհմից են, և որ Վահրամը հռչակավոր Գրիգոր Մագիստրոսի Հոր՝ Վասակի եղբայրն է:

վերցնելով, տանում, դնում է իր աթոռին Անիում ասելով. «Ինչո՞ւ ձեռք բարձրացնեմ Տիրոջ օծյալի վրա ու նրա փոխարեն մի խելագարի նշանակեմ»: Նրա մասին ասում են, որ խելացի և առատաձեռն լինելու շնորհիվ նա ոչնչությունից մեծացավ և մինչև անգամ տեր դարձավ տասներկու հազար հեծյալի: Նա շինեց Կեչառիսի սուրբ վանքը, ինչպես որ Վահրամ իշխանը՝ Մարմաշենը[1]:

Զորս հարյուր յոթանասուն թվին [Հայաստանի վրա] հարձակվեց Տուղրիլ-Բեկը, և Նախճավանում նրան հանդիպեց Լիպարիտը[2] հինգ հազար հեծյալով ու փախավ մեծ բազմությունից: Թուրքը, երբ եկավ Դվին, ասպատակեց այն, և նրա դեմ դուրս եկավ քաջն Վասակը, որը մեծ քաջագործություն ցուցաբերելով՝ վերադարձավ Սերկևիլ[3]: Եվ այնտեղ երբ նա մի փոքր քնում է, մեկը պատահաբար քարը խփում է նրա գլխին, և նա մեռնում է:

Այդ ժամանակ Պետրոս պատրիարքը Հովհաննես թագավորի վրեժխնդրությամբ գնաց Վասպուրական և աղաչանքով էլ չվերադարձավ: Հետո այդ կողմերի դքսի[4] միջոցով բռնի կերպով բերվեց և բանտարկվեց Բջնիում: Այդ բանը լսելով՝ Աղվանքի Հովսեփ կաթողիկոսը գալիս է, նրան հանում բանտից և տանում, դնում է իր աթոռին՝ հանելով Սանահնի սուրբ վանքի առաջնորդ Դիոսկորոսին*, որին Պետրոսի փոխարեն կաթողիկոս էին նշանակել մեկ տարի: Իսկ Դիոսկորոսը՝ առաքինի և սուրբ այդ մարդը, վերադարձավ իր վանքը:

Այն ժամանակ Վրաց Գեորգի թագավորին փոխարինում է

[1] [ՄՕ.-ում Մարմարաշեն]: Հին Օ.-ն ավելացնում է. «Զի մի՛ յանցաւորիս միայն իցեն ճոխք, այլ և յանմահիցն զաւառ. ուր կանն իսկ զարմիւք իւրեանց ի դամբանի, ակն ունելով վերնոյն» [այդպես է նաև ՄՕ.-ում, միայն իցեն-ի փոխարեն իցեմք է]՝ Որպեսզի միայն հանցավորներիս համար ճոխ չլինի, այլ նաև լինի անմահների զավառ, որտեղի դամբարանում կան հենց իրենց ցեղից և սպասում են վերնայինին:

[2] Լիպարիտը վրացական իշխան էր, Օրբելյան տոհմից:

[3] Սերկևիլ գյուղը, բլուրը և լճակը Արագածոտնի Թալիշի կողմում են:

[4] Այդ հույն դուքսը [տուկ] կայսեր կողմից կուսակալ նշանակվեց նախ Դավիթ կուրապաղատի վիճակում և ապա Վասպուրականի մարզում, որը երկրի թագավորները փոխանակեցին Սերբատիայի հետ:

* ՄՕ.-ում Դեոսկորոս:

իր որդի Բագարատը, բայց իշխան Լիպարիտը ապստամբվելով նրան փախուստի է մատնում Աբխազիայի կողմերը ու իմաստությամբ չեն* է պահում աշխարհը Միքայել կայսրի օգնությամբ: Միքայելը մեռնելիս թագը տալիս է իր քրոջ որդուն՝ Կալափատին, որը կարճ ժամանակ անց կուրացվում է Միքայելի կնոջ՝ Զոյի թագուհու հրամանով: Զարագործության տեղում մի քար է հայտնաբերվում հետևյալ արձանագրությամբ. «Այստեղ կուրացավ թագավորը»: Եվ Զոյին իրեն ամուսին է առնում Մոնամախին** ու նրան թագադրում:

ԾԵ. Նրա մոտ է ուղևորվում տեր Պետրոսը ու վերադառնում Սեբաստ: Սենեքերիմի որդիները նրան տալիս են այն վանքը, որը Վարագա սուրբ նշանի անունով էին շինել՝ իրենց հետ ունենալով նաև խաչը, թեև հետագայում այն վերադարձրին: Մոնամախը երեք արվարձան [պռաստին] տվեց պատրիարքին, որը այնտեղ ապրելով մեկ տարի՝ վախճանվեց: Եվ հայրապետական քողն առավ նրա քրոջորդի Խաչիկը, որին նա իր կենդանության ժամանակ ձեռնադրել էր Անիում: Ապրելով երկու տարի՝ Խաչիկը մեռնում է, և աթոռը հինգ*** տարի թափուր է մնում:

Քանի որ չորս հարյուր իննսուներեք թվին մեռան Հովհաննեսն ու Աշոտը, թագը տվեցին Աշոտի որդի Գագիկին: Հույները հիշեցին Անիի կորստյան կտակը, որովհետև ասում են, որ մահից հետո էլ անփոփոխ ու հաստատուն է կտակը: Եվ երդումով Գագիկին կանչեցին Կոստանդնուպոլիս, որպես թե պարգևներով պիտի նրան այնտեղից վերադարձնեն: Բայց իրենք քաղաքի կառավարիչ [կատապան][1] նշանակեցին և դրանով վերացրին նրա երկու աթոռները՝ հայրապետության ու թագավորության գահերը: Երկուսին էլ բռնությամբ իրենց հետ տարան Կոստանդնուպոլիս, և նրանք այնտեղից այլևս չվերադարձան: Այդ պատճառով հույսը կտրելով՝ Գագիկը

* ՄՕ.-ում չեն բառը չկա:

** ՄՕ.-ում Մոնոմախ:

*** ՄՕ.-ում յոթ:

[1] Ըստ իս՝ կատապանը հունական զաթապանն է, իբր գլխավոր կամ համակարգ իշխան: [Իսկ ըստ «Մինչև հայերենի բառարանի»՝ «կառավարիչ, կուսակալ, իշխան» (հ. 1, էջ 386)]:

փոխարենն առնում է Կալոնպաղատն ու Պիզուն[1] և մեր ժողովրդին ատող ցեղի մեջ ապրում որպես պանդուխտ:

Այդ ժամանակներում քաջ Վասակի որդի Գրիգորը Բջնին, Կայանը, Կայծոնը, որոնք իր ձեռքի տակ էին, տալիս է Մոնոմախին և փոխարենն ստանում է Միջագետքի դքսությունը: Գրիգորն իր հետ վերցնում է Վրաց Ապիրատ իշխանին, նաև երկու մագիստրոսի և գնում է Տուղրիլ-Բեկ սուլթանի Բրեհիմ* զորավարի դեմ: Այնտեղ բռնում են Լիպարիտին և բերում են սուլթանի մոտ, որպեսզի Լիպարիտը դավանի նրա հավատը: Լիպարիտը տվեց [հետևյալ] պատասխանը. «Երբ տեսնեմ քո երեսը, կկատարեմ այն, ինչ կհրամայես»: Իսկ երբ տեսավ, ասաց. «Երբ արժանացա քո տեսությանը, չեմ կատարի քո կամքը և չեմ վախենա մահվանից»: Սուլթանը հարցնում է. «Ի՞նչ ես կամենում»: Եվ նա պատասխանում է. «Եթե դու վաճառական ես, ծախիր ինձ, եթե դահիճ ես, սպանիր ինձ, իսկ եթե թագավոր ես, պարգևներով ազատիր ինձ»: Սուլթանն ասում է. «Քո գնով ես չեմ կարող լինել վաճառական, և ոչ էլ արյան գնով՝ դահիճ, այլ ես թագավոր եմ, գնա, ուր կամենում ես»: Եվ նրան բաց թողեց պարգևներով: Եվ որովհետև կայսրը պահանջում է նրան, նա գնաց նրա մոտ և նրանից զորք առնելով՝ եկավ Վրաստան, բռնեց Բագրատ** թագավորին, ուղարկեց կայսրի մոտ և գրավեց ամբողջ երկիրը:

ԾԶ. Այդ ժամանակ Մամ անունով մի կին իր երեք որդիներով Պարսկաստանից գալիս է Փառիսոսի[2] գավառը, փառավոր Գրիգոր իշխանի մոտ: Եվ որդիները իրենց մորը կայսրին պատանդ են տալիս և դիմացը ստանում Շոթքն ու Շամիրամի բերդը[3]: Այնտեղ նրանք ծանոթանում են Գանձակի ամիրա Խլազիզի[4] հետ, սպանում նրան, գրավում Գանձակը և տիրում

---

[1] Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Կալոնպաղատը կամ Կալոնպեղատը և Պիզուն [ՄՕ.-ում Կալան պաղատ և Կիզու] Կապադովկիայում են, բայց տեղերը հայտնի չեն:

* ՄՕ.-ում Իբրահիմ:

** ՄՕ.-ում Բագարատ:

[2] Փառիսոսը Արցախի արևելքում գտնվող մաս է, որը սահմանակից է Ուտիքին: Ինձ թվում է, որ այն հին Քուստի-Փառնես գավառն է:

[3] Շամիրամաբերդը Փառիսոսում է:

[4] Հին Օ.-ում Ալազիզ [այդպես է նաև ՄՕ.-ում]:

նրան: Ավագ որդին՝ Պարզվանը, շուտ մահացավ, և իշխան դարձավ նրա մյուս եղբայր Լեչքարին*, որը Սալարից խլում է Պարտավն[1] ու Շամքորը[2]: Եվ նրա՝ Փատլուն[3] անունով կրտսեր եղբայրը որսի ժամանակ սպանում է նրան ու խլում իշխանությունը: Բարեկամության պատրվակով նրա մոտ է գնում Գրիգորի որդի Փիլիպպեն, որին հոր մահից հետո կալանում է և նրանից խլում Շաշվաղն ու Շոթքը[4]: Փատլունը իր մոտ է կանչում Տանձիքի[5] տեր՝ Համամի որդի Գագիկին, սպանում է նրան և խլում նրա երկիրը: Այդպես հզորանալով նա տիրում է Խաչենին, Գորոզին[6], Սևորդյաց [գավառին] և կռիվ է սկսում Զորագետի Գագիկ թագավորի, Աղվանից Կյուրիկե թագավորի, Վրաց Բագարատ թագավորի դեմ և նեղում նրանց: Նա տիրում է նաև Դվինին և Հայաստանի վրա երեք հարյուր հազար դրամ հարկ դնում:

Այս ձևով քաղդեացի ինչ-որ մարդիկ, դուրս ելնելով իրենց երկրից, գալիս են Գարդման և ասում Գարդմանի իշխանին. «Տուր մեզ խաչի այն մասը, որ քեզ տվեց Հերակլը, և մենք կդառնանք քրիստոնյա ու քո ծառաները»: Եվ կատարվեցին

---

* ՄՕ.-ում Լեչքարի:

[1] Պարտավը Ուտիքի Առանձնակ քաղաքն է, որը հետո դարձավ Աղվանքի մայրաքաղաքն ու կաթողիկոսարանը:

[2] Շամքոր քաղաքը, որ Շամքորաձորի վիճակում [նահանգ] է, Գանձակի սահմաններում, այժմ ավերակ է:

[3] Փատլուն (Փաղլ) Ա.-ն Դվինի ամիրան է՝ Շեղդատի որդին, որը ԺԱ դարի առաջին քառորդին հասավ իշխանության: Նրա ժամանակ իշխում էին Գրիգորի որդի Փիլիպպեն, որն Արցախին կամ այսպես կոչված Առան-Սյունիքին պատկանող Աղվանքի թագավորն էր, Համամի որդի Գագիկը, Դավիթ Անհողինի որդի Կորիկեն կամ Գուրգենը, որն իշխում էր Տաշիրքի կողմերում, Վրաստանի Բագարատ Գ և Դ թագավորները: Իսկ Զորագետի Գագիկ թագավորը կամ Բագրատունի Ա.-ն է, կամ Կախեթի թագավորը՝ Անհողինի որդին:

[4] Շաշվաղը կամ Շաղվաղը [ՄՕ.-ում Շաշվաշ] և Շոթքը գտնվում են Խաչեն նահանգում, որն այժմ Գյուլիստան և Զլբերդ է կոչվում:

[5] Տանձիքի [ՄՕ.-ում Գանձիք] նահանգը [վիճակ] պետք է լինի Արցախի և Ուտիքի հյուսիսային կողմում:

[6] Գորոզին, որ գրվում է նաև Գորոզու, Արցախի և Ուտիքի սահմաններում գտնվող անվանի լեռը, բերդն ու նահանգն [վիճակ] է, որն այժմ գտնվում է Խոչխարա կամ Խաչքար գավառում:

այդ ասածները: Այդ բանը լսելով՝ Բաղդադի ամիրան խիստ սպառնում է նրանց, որից վախենալով՝ նրանք գնում են Կովկասի ստորոտները և հաջողություն ստանալով Քրիստոսից, որին հավատում են, տիրում են բոլոր գավառներին, մինչև անգամ Դավիթ անունով մեկը թագավոր է դառնում և խնամիանում Զորագետի արքայի հետ: Եվ այդ գավառը կոչեցին Մանարք[1], որովհետև այնտեղ ծանոթացան իրենց բնակության տեղին: Եվ վրացերեն իմանալու շնորհիվ Գարդմանի իշխանը նրանց համար քորեպիսկոպոսներ կանչեց*:

ՄԷ. Անիի Հայոց թագավորության վերացումից հետո Հայաստանի վրա հարձակվեց Տուղրիլի հորեղբորորդի Ալփասանը** և ավերեց քսանչորս գավառ: Նա սուլթանի զորագլուխն էր և նրա մահից հետո սուլթան դարձավ: Նա դարձյալ հարյուր հազարով եկավ և գրավեց Նոր քաղաքը, որը վրացիները Ախալ-քալաք են կոչում, և Սամշուլդեն***: [Ալփասլանը] կնության է առնում Կյուրիկե[2] թագավորի դստերը և Վրաց թագավորի քրոջ դստերը: Նա վերցնում է Անին, մորթում է հազար մարդու, լցնում մի փոսի մեջ և լողանում արյան մեջ՝ իր մեռելների համար զոհ անելով[3]:

[1] Մանարքի անվան ծագումը ծիծաղելի է, քանի որ հնագույն պատմիչներն ու աշխարհագիրները՝ Թովմա Արծրունին Թ դարում, Խորենացին Ե դարում և Գողտնեսը Բ դարում հիշատակում են Մանարքը: Ըստ երևույթին մեր հեղինակի հիշածը գաղթականներն են, որոնք ամիրապետից փախել, եկել են Մանարք: Արաբ պատմիչներն ասում են, որ նրանք ծագել են ոմն Նեզար Ցոմենից, իսկ նրանց երկիրը գտնվում էր Տփղիսի և Ալանաց դռան միջև, և նրանց կաթողիկոսին էլ Սենեքերիպ են կոչում, որին մեր պատմիչը քորեպիսկոպոս է անվանում, ինչպես որ Հովհաննես կաթողիկոսը մեծ քորեպիսկոպոս է կոչում: Նրա երկիրը Գուգարքի մի մասն է, որը Ալանաց դռան մոտ է, իսկ արաբները նրան կոչում են քորիսկոպոս, քորիսկոպոզ, քեռքեսուզ: Ինձ թվում է, որ երկուսն էլ համատեղ վարել են նրանց իշխանությունները՝ հոգևոր և մարմնավոր:

* Բնագրում այսպես է. «և իշխանն Գարդմանայ կոչեաց զնոսա Քորեպիսկոպոս ըստ լեզուին Վրաց»՝ և Գարդմանի իշխանը նրանց կոչեց քորեպիսկոպոսներ՝ ըստ վրաց լեզվի:

** ՄՕ.-ում Ալփասլան:

*** ՄՕ.-ում Աղալ քաղաք և Շամշուլտե:

[2] Կյուրիկե Ա.-ն Դավիթ Անհողինի որդին է:

[3] Հին Օ.-ն ավելացնում է՝ ասեն ոմանք՝ ասում են ոմանք [այդպես է նաև ՄՕ.-ում]:

Այնուհետև խալիֆի կողմից պատգամավոր է գալիս, որը ոսկյա օղ է գցում նրա պարանոցը և տասներկու գավազան իրար կապելով՝ ծեծում է նրան, ծաղրուծանակի [խածեալթ][1] ենթարկում ցույց տալու համար, թե նա որքան հնազանդ է իր առաջնորդին:

Այդ բանը տեղի ունեցավ Հովհաննես թագավորի մահից քսաներեք տարի հետո, հինգ հարյուր տասներեք թվին:

Մոնոմախից հետո թագը խլում է Կիր Թոտորը, ապա՝ Տուկիծը[2], նրանից հետո՝ Դեռժանը*, որը գնում է սուլթանի վրա, սպառնալով հայերին՝ բոլորին հույն դարձնել: Այդ նպատակով նա գալիս է Կարս և այրում է հայկական փայտակերտ եկեղեցին: Այնուհետև նա գնում է Մանծկերտ և գրավում այն: Սուլթանը հարձակվում է նրա վրա և նրան նեղը գցում, մինչև որ բռնում է նրան: Չնայած սուլթանը նրան արձակում է ողորմությամբ, բայց նա չի ընդունվում իր ցեղի կողմից: Եվ թագը տալիս են Տուկիծի որդի Միքայելին, որը բռնում ու կուրացնում է Դեռժանին, որը մեռնում է ցավերից հինգ հարյուր քսանմեկ թվին:

ՄԸ. Իսկ Կարսի թագավոր Աբասի որդի Գագիկը, թուրքերի կողմից նեղվելով, իր հայրենիքը տալիս է Հունաստանին և փոխարենն ստանում է Ծամնդավը[3], Լառիան**, Ամասիան, Կոմանան[4] ու հարյուր արվարձան [պռաստին], որոնք գյուղեր են: Եվ գնալով կայսրի մոտ՝ թույլտվություն է խնդրում Գրիգոր Մագիստրոսի ու իշխանի որդի Վահրամին ձեռնադրելու Հայոց պատրիարք, որը ձեռնադրվելիս կոչվեց Գրիգոր-

[1] Ինձ թվում է, որ դա պետք է լինի ոչ թե խածեալթ արաբերեն, այլ խածեայսն արաբերեն, որ նշանակում է ծանակել կամ արաբերեն՝ խաՀկեթ:

[2] Կայսրերի շարքը պակասավոր է. պետք է լինի Մոնոմախ, Թեոդորա, Միքայել Զ, Իսահակ Կոմնենոս, Կոստանդին Դուկիծ:

* ՄՕ.-ում Դեռժան, այսպես է նաև ՎՕ.-ի հետագա շարադրանքում:

[3] Ծամնդավը, անշուշտ, Զամանդի գետի ափին է. գետը թափվում է Սարոսի (Ճիհուն) մեջ: Ծամնդավը Կեսարիայի հյուսիս-արևելքում գտնվող բերդաքաղաք է, որն այժմ անծանոթ է:

** ՄՕ.-ում Լառիսա:

[4] Կոմանան այժմյան Կյումենեքն է, Եվդոկիային մոտիկ, նրա հյուսիսային կողմում:

բիս*: Եվ մեկ տարի Ծամնդավում աթոռին նստելուց հետո ա-թոռը տալիս է իր վարդապետ լոռեցի Գևորգին և ինքն անցնում, գնում է Կոստանդնուպոլիս՝ թարգմանության համար: Գրքեր առնելով՝ նա կամենում է գնալ Երուսաղեմ, բայց նավը**, նրան վերցնելով, տանում է Մսր, ուր նա մեծարանքի է արժանանում սուլթանի կողմից: Այնտեղ նա շինում է հայկական վանքեր, իր եղբորորդի Գրիգորիսին եպիսկոպոս է ձեռնադրում և գնում ու վախճանվում է Կարմիր վանքում[1], Եփրատ գետի սահմաններում, Տորոս լեռան մոտիկ, պատրիարք տեր Բարսեղի մոտ, որը հաջորդել էր Գևորգին:

Հինգ հարյուր քսանմեկ թվին Անտաքում այրվեց սուրբ Պետրոս [եկեղեցին], երկրաշարժ եղավ, պատռվեց երկիրը, կուլ տվեց հռոմեական պատրիարքին և նրա հետ տասը հազար մարդու, որովհետև նրանք այրել էին ուղղափառ ասորիների ավետարանը, որը չորս անգամ անվնաս կերպով դուրս էր եկել կրակից, մինչև որ հինգերորդ անգամ նրանց կատաղության ժամանակ հանձն առավ այրվել, ինչպես որ Տերը հանձն առավ խաչը հրեաներից (!):

ՃԹ. Հինգ հարյուր քսաներեք թվին Գանձակի Փատլուն ամիրան Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավին Առանի ամբողջ զորքով ուղարկեց Բաղքի ու կապանի [կիրճի] անառիկ ամրոցները: Նրանք խաբեությամբ մուտք գործեցին այնտեղ և սպանեցին հայկազուն Սենեքերիմ արքային, որովհետև այնտեղի թագավորները հայեր էին: Բայց [թագավորությունը] չվերացվեց մինչև երկու անզավակ եղբայրների՝ Սմբատի ու Գրիգորի[2] վերջին օրերի դեպքերը: Նրանք վերցնելով հայազարմ մանուկ Սենեքերիմին՝ կարգեցին իրենց թագաժառանգ, որին հետո սպանեցին Փատլունի հրամանով: Այդպիսով հանգավ այնտեղի ճրագը, և [երկրին] տիրեցին պարսիկները:

Այս Փատլունը Անին առավ Ալփասլանից[1]՝ նրան տալով ոսկեկուռ ծաղկանկար: Ավերված քաղաքի տերը ուղարկեց իր թոռանը՝ փոքրահասակ մանուկ Մանուչեին, որը երբ մեծացավ, ավելացրեց Անիի պարիսպն ու ամրությունները: Նա քաղաք բերեց մնացած բոլոր իշխաններին, ինչպես նաև մեծ հանդիսավորությամբ դիմավորելով՝ ներս բերեց Վասակի որդի, Ապիրատի թոռ Գրիգորին, որի մասին ասում են, թե ազատ կանանց* գլխին ուներ հինգ հարյուր երևելի թագեր, որովհետև նա մեծ զորքի և բազում ազատների տեր էր: Տեր Բարսեղն ուներ մեկ եղբայր, որը Գրիգորի մահից հետո՝ Հաղպատում կաթողիկոս ձեռնադրվեց Մանուչեի հրամանով ու ողջ հայության կամքով: Եվ վերակառուցվեց Անի քաղաքը ոչ պակաս, քան նախկինը:

Իսկ Ալփասլանը, գնալով Ալամուտ[2], պաշարեց մի անառիկ բերդ. բերդատերը իր տանը մեծ ուրախություն էր անում, որը հետո մեծ սգի վերածվեց: Եվ ապա գնալով սուլթանի մոտ որպես թե հնազանդության համար և նրա ոտքերը համբուրելիս սպանեց անմեղների արյամբ արբեցած այդ գազանին, և չարը** մեջտեղից վերացրեց: Եվ թագն առավ նրա որդի Մելիք-Շահը՝ մի ողորմած ու բարեմիտ մարդ, առավելապես մեր ազգի համար: Մինչև անգամ նա թույլ է տալիս Բարսեղ պատրիարքին բարձրացած խաչով իր առաջ բերել, նրան պատվում էր պարգևներով և արքունական նշանագրով [տուղրա][3]: Դրանից օգտվելով՝ Բարսեղը Հոնեցուց[4] առնում

* ՄՕ.-ում «և ոչ կամեցաւ ձեռնադրել զԳրիգորիս»՝ և չկամեցավ ձեռնադրել Գրիգորիսին:

** ՄՕ.-ում Տառոս:

1 Կարմիր վանքը Մարաշի սահմանների մոտ է:

2 Սմբատ և Գրիգոր թագավորները Սյունյաց Վասակ Բ թագավորի քեռորդի՝ Սյունյաց իշխանաց իշխան Աշոտի որդիներն են: Գրիգորը, անզավակ լինելով, որդեգրեց իր կին Շահանդուխտի եղբայր Սենեքերիմին, որը Խաչենի իշխանների ցեղից էր, բայց Սենեքերիմով չվերջացավ Սյունյաց հարստությունը, քանզի նրանից հետո իշխեց նրա որդի Գրիգորը մինչև 1166 թվը, նրանից հետո՝ իր դուստր Կատան՝ Խաչենի Հասանի կինը, երեք տարի, և ապա լուծեց Սյունյաց թագավորությունը:

1 Անիի առումը ավելի առաջ է, քան Սյունյաց թագավորության արկածները, որովհետև Ալփասլանը սպանվեց 1072 թ., իսկ Սենեքերիմը՝ 1094 թ.:

* ՄՕ.-ում՝ ~~ազատաց կանանցն~~ բառակապակցության փոխարեն ~~ազատա-կանացն~~ է, այսինքն՝ ազատների կամ ազնվականների:

2 Ալամուտը Դելմիկքի մշհեղների հզոր բերդավանն է. տե՛ս ծան. Գ, էջ 139:

** ՄՕ.-ում ~~չարը~~ բառը չկա:

3 Տուղրան պարսկերեն թուղրան է, որ նշանակում է արքունի կնիք:

4 Այսինքն՝ Թեոդորոսից, որին Մարաշի երկրի Հոնի քաղաքում հաջորդեց Սարգիսը:

է զավազանն ու անունը, որը անձամբ անօրինաբար խլել էր կաթողիկոսությունը:

Կ. Հինգ հարյուր քսանհինգ թվին հռոմեացիները Անտիոք քաղաքում նենգությամբ սպանում են Վահրամ կաթողիկոսի եղբայր Վասակ իշխանին, որը նույն՝ Անտիոք քաղաքի իշխանն [տուկ] էր: Եվ նրա զորքը, ամբանալով բերդում, քաղաքը հանձնում է ծագումով հայ Փիլարտոսին, որը այն ժամանակ բազմաթիվ զավառների էր տիրացել: Առնելով քաղաքը՝ նա Վասակի արյան համար վրեժ է պահանջում: Այս Փիլարտոսը ձեռնադրել է տալիս Միջագետքի կաթողիկոս տեր Պետրոսի քրոջորդի Սարգսին՝ մի սուրբ ու պարկեշտ մարդու, քանի դեռ կենդանի էին Վահրամն ու Գևորգը, որին աքսորեցին տեր Վահրամն ու տեր Բարսեղը, որոնք գտնվում էին արևելքում: Սարգսին Հաղպատում ձեռնադրում են Աղվանքի կաթողիկոս տեր Ստեփանոսն ու Կյուրիկե թագավորը*: Նրա օրոք Սարգիս ավագերեցին Հաղպատի սուրբ ուխտի երկու կաթողիկոսները արքունի դռան արքեպիսկոպոս են ձեռնադրում՝ նրան տալով վիճակներ երկու կողմից: Իսկ կաթողիկոս տեր Սարգսի մահից հետո նրա տեղը Փիլարտոսը ձեռնադրել է տալիս ոմն Թեոդորոսի:

Այդ օրերի ընթացքում սպանվեց Բեխտը[1]՝ Շիրակունի իշխանը, որը մեծ բարեպաշտության պատճառով, հոժարությամբ նեղվելով կայսեր կողմից, հույն եղավ[2], և նրան տրվեց խոստովանահայր հունական մի աբեղա**: Եվ որովհետև նա չէր պահպանում հունական կրոնը, քնի մեջ նրան խեղդեց պիղծ կրոնավորը՝ նրան գտնելով միայնակ իր Անտիոք բերդում: Այդ բանը լսելով՝ զորքը այդ անօրեն վայրագին գցեց ժայռից ցած: Իսկ Միքայել կայսրին փոխարինեց Վտանիտը,

* ՄՕ.-ում «և ի Հաղբատ ձեռնադրեցին զտէր Ստեփանոս կաթողիկոս Աղուանից Թագաւորն Կիւրիկէ»՝ և Հաղպատում ձեռնադրեցին տեր Ստեփանոսին Աղվանից կաթողիկոսը և Կյուրիկե թագավորը:

1 Բեխտը [ՄՕ.-ում Բեղիդ] պետք է լինի **վեստը** (լատիներեն՝ a veste, զգեստավորող պաշտոնյա). Շիրակունի իշխան, բյուզանդացիներին ծանոթ, իսկական անունը Խաչատուր, բայց նրա Անդրիոն անունով բերդը մեզ ծանոթ չէ, այն պետք է փնտրել Անտիոքի կողմերում:

2 Հին Օ.-ում **կնքեցաւ** [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ կնքվեց:

** ՄՕ.-ում Աբել:

մեկ տարի, հետո՝ Մելեսիանոսը[1], վեց ամիս, և ապա Ալեքսը՝ պիտանի ու խելացի մի մարդ:

Նրա օրոք սոսկալի հրաշք կատարվեց Պիզու* վանքում, որը շինել էր Գագիկ արքան: Երկու ճգնավոր մարդ, երազ տեսնելով, եկան վանք և նախքան հարց տալը ասացին այն, ինչ որ տեսել էին: Մեկն ասաց. «Տեսնում էի, որ եկեղեցու գմբեթի կանթեղն ընկավ եկեղեցու հատակին, և չհանգավ նրա լույսը», իսկ մյուսն ասաց. «Տեսնում էի, որ երկնքից մի աստղ ընկավ, և նրա լույսը է՛լ ավելի էր փայլում եկեղեցում»: Վանահայրն ասաց. «Տեսեք, որ այն ընկել է սուրբ խորհրդից»[2]: Մոմեր վառելով՝ գնացին ու բեմի վրա գտան սուրբ խորհրդից ընկած մասը, որը անզգույշ մարդու պատճառով մնացել էր մինչև սուրբ հոգեգալուստը [պենտեկոստե]: Այն գտնվեց երեք օր հետո, սուրբ հոգեգալստի ժամանակ, և այդ երեք օրերի ընթացքում այն չէր հանդիպել ո՛չ ավելի, ո՛չ ուրքի: Եվ մարդիկ զոհ մնացին Աստծուց:

Իսկ Անիի տեր Գագիկին, որը գնաց Կոստանդնուպոլիս, շատ աղերսեց Թոդորի[3] քույր Զոյին, որպեսզի նա ընդունի հունական կրոնը, դառնա իր ամուսինը և թագավորի Հունաստանում, բայց նա չհամաձայնվեց: Նա իր կրտսեր որդուն փեսա է դարձնում Վասպուրականի իշխաններից մեկի՝ Խաչիկի որդի Ապլղարիբին, որին պատկանում էին Մսիսը**, Աղանան, Պապառոնը, Լամբրոնը, բայց հետո նրան ատեց*** և բանտ գցեց: Այդ բանը լսելով՝ Գագիկը գնաց որդուն բանտից ազատելու, բայց վերադարձի ժամանակ իջևանատանը հույները խեղդեցին նրան: Իսկ պիղծ Ապլղարիբը թունավորեց ու սպանեց փեսային: Իսկ նրա ավագ որդի Հովհաննեսը հույսով փեսա դարձավ Անիի հույն դքսին և գնաց Անի, բայց հանգիստ չգտնելով՝ մեկնեց Վրաստան: Այնտեղից նա վերադարձավ Կոստանդնուպոլիս Աշոտ անունով իր տղայի հետ, որին կայս-

1 Նիկեփոր Վոտոնիատը և Նիկեփոր Բրիեն հիշյալ կայսրերն են:

* ՄՕ.-ում Պիզո:

2 Հին Օ.-ն ավելացնում է՝ «ի փառս անճառ խորհրդոյն» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ անճառ խորհրդի փառքի համար:

3 Թեոդորոսը, որը ինքնակալության գահին նստեց 1054-1056 թթ.:

** ՄՕ.-ում Սիս:

*** ՄՕ.-ում **ատեաց**՝ խաբեց:

թը ուզեց փեսա դարձնել, բայց Հովհաննեսը չհամաձայնվեց: Եվ նա կայսեր հրամանով գնաց սուլթանի մոտ ու Անին տվեց նրան: Մանուչեի ազգական մի ներքինի* թագավորեց ու սպանեց նրան: Նրա մարմինը բերվեց Կոստանդնուպոլիս: Եվ նախքան մեռած որդուն բերելը մեռնում է նաև նրա հայրը, ու այս ձևով վերանում են Անիի թագավորները:

ԿԱ. Հինգ հարյուր երեսունյոթ թվին Պուզան[1] ամիրան Մելիք-Շահի հրամանով Փատնյաններից, որոնց Շատատիկք** են կոչում, խլեց Գանձակը: Իսկ Վրաց թագավոր Բաղարատը կայսրից դարձյալ ետ է վերցնում իր հայրենիքը: Նրանից հետո [թագն] առնում է նրա որդի Գեորգին, որը Կյուրիկեից հետո գնալով Խորասան, Մելիք-Շահի մոտ, այնտեղից վերադառնում է պատվով: Այս Կյուրիկեն Աշոտ Ողորմածի որդի Գուրգենի, նրա որդի Դավթի որդին էր: Նրա համար հայր Դավիթը շինեց Լոռեն և տասներկու այլ բերդեր, որոնք թաղված են Սանահնի մեջ: Նրանց Աբաս և Դավիթ թոռները, նեղվելով վրացիների կողմից, գնում են Ռանի տերերի մոտ, ամեն մեկը մի բերդ է առնում և ապրում տառապանքով[2]: Մելիք-Շահ սուլթանը, որը բարքով խաղաղասեր ու քրիստոնեասեր էր, տիրեց տասներկու թագավորությունների՝ սկսած Կասպից ծովից մինչև Պոնտոս ծովը: Եվ վերցնելով օվկիանոսի ավազը՝ նա տարավ Պարսկաստան, լցրեց իր հոր գերեզմանի վրա և ասաց. «Հայր, ահա քեզ ավետիս, որ քո որդին, որին թողեցիր երեխա ժամանակ, տիրեց մինչև երկրի ծայրերը»: Նրա մոտ է գնում Փիլարտոսը և տկարանում հավատի մեջ: Մեծ ամիրա Պուզան սուլթանի հրամանով գրավում է Ուռհան և քսու մարդկանց մատնությամբ սպանում է հայոց փառավոր իշխաններից շատ ազնիվ մարդկանց:

Այդ օրերին Պեծենեկքի[3] թագավորը վեց հարյուր հազա-

* ՄՕ.-ում կուրա՝ կրտած:

[1] Պուզա [ՄՕ.-ում Պուղա] ամիրան Մելիք-Շահ սուլթանի զորավարն էր, որը հետո ապստամբվեց ու սպանվեց Դուդուչի կողմից:

** ՄՕ.-ում Շատատիք:

[2] Այդ բերդերն են Նորբերդը և Մածնաբերդը, որոնք գտնվում են Ուտիքում կամ հայկական Աղվանքում:

[3] Պեծենակք կամ Բեչենկք. թուրքերը, հալածվելով խազիրների կողմից, վտարվեցին Վոլգայի այս կողմը և արշավելով գրավեցին մինչև Տրանսիլվանիա ու Մոլդավիա՝ անընդհատ պատերազմելով ռուսների և հույների հետ:

ով* եկավ Կոստանդնուպոլիս, Ալեքսի վրա: Ութ օր աղոթելով՝ քրիստոնյաները նրանց բոլորին բնաջնջեցին՝ կրակ գցելով նրանց սայլերի վրա, որոնցով նրանք եկել էին:

Այդ նույն ժամանակ հայտնի դարձավ հունական մի աբեղայի չարությունը, որը շուն էր պաշտում: Նա մոլորեցրեց մոտավորապես մեկ բյուր մարդու և Ալեքսի մորը, որը մինչև անգամ Տիրոջ սուրբ խաչափայտից մի մաս թաքուն դրել էր որդու կոշիկի մեջ, ներքանի տակ: Երբ այդ մասին իմացավ Ալեքսը, բնաջնջեց բոլորին, իսկ մորը զրկեց տիկնությունից (!):

ԿԲ. Հինգ հարյուր քառասուն թվին մեռավ Պողոս կաթողիկոսը, որը նստում էր Մարաշում, որին նշանակել էր Փիլարտոսը: Մեռավ նաև Հայոց սուրբը, մեծ գիտնական Գեորգ վարդապետը և թաղվեց Կամրջաձորում[1], Սամվել վարդապետի կողքին: Եվ պատրիարքության սուրբ աթոռը դարձավ միահեծան, որովհետև տեր Բարսեղը այդ ժամանակ Թեոդորոս կաթողիկոսին գցեց աթոռից և նրանից խլեց տեր Պետրոսի [հայրապետական] քողը, գավազանն ու սուրբ նշանը: Բարսեղը, շրջելով Կեսարիայում, եկավ Անտիոք, իսկ այնտեղից՝ Ուռհա, և ամենուրեք մեծ ուրախությամբ էր ընդունվում:

Բայց խաղաղասեր սուլթանը, թունավորվելով իր կնոջ կողմից, վախճանվում է հինգ հարյուր քսանմեկ թվին: Եվ Պուզան ամիրան, որը գտնվում էր Նիկիայում, լսելով այդ մասին, վերադառնում է Ուռհա, իսկ տեր Բարսեղը գնում է Անի: Մելիք-Շահը թաղվում է Մարանդում, իր հոր՝ Արփասլանի մոտ: Նա ուներ երկու որդի՝ Բակիարուխ և Սափան անուններով: Մելիք-Շահի եղբայրը Դուդուշը[2] սուլթան է դառնում Հունաստանի կողմերում, իսկ Բեկիարուխը՝ Պարսկաստանում և Հայաստանում: Նա սենեկապետ [հեջուբ][3] է դարձնում իր քե-

* ՄՕ.-ում հազար հազարով:

[1] Կամրջաձոր վանքը Երասխաձորում է կամ Արշարունյաց գավառում, ուր ծաղկում էր Սամվել վարդապետը՝ եկեղեցական թղթին պատասխանողը, որը գրեց Խաչիկ կաթողիկոսի հրամանով: Իսկ մեծ գիտնական Գեորգը Մեղրիկը չէ, այլ Ուռհեցին, սակայն նրա գործերը մեզ ծանոթ չեն:

[2] Դուդուշը Հալեպի և Դամասկոսի սուլթանների նահապետն է:

[3] Հեճուպ, Հեճիպ արաբերեն է, որ նշանակում է դռնապան կամ սենեկապետ:

ոի Իսմայիլին: Բակիարուխը հայերի հանդեպ շատ քաղցր ու բարեմիտ մարդ էր: Նրա շնորհիվ հոգ է տարվում մեր ազգի մասին, և բարեկարգվում է մեր աշխարհը: Նա [հարկերից] ազատում է մեր վանքերն ու բոլոր եկեղեցականներին: Իսկ Դուդուշը, տիրելով Միջագետքին, ջարդ է տալիս արաբների թագավոր Բրեհիմին[1] և գերելով նրա ամբողջ ճամբարը՝ հարստանում է: Նրան գրություն է գալիս Բեկիարուխի կնոջից, որպեսզի նա գնա Պարսկաստան, դառնա նրա ամուսինը և ամբողջ երկիրը ենթարկի իրեն: Եվ այդ լուրից ուրախանալով՝ Դուդուշը մեծ բանակով շարժվում, գնում է Ասպահանի դաշտը: Բեկիարուխը* նրան աղաչանք է հղում, որպեսզի նա իրեն տա Ասպահանը, իսկ մնացած ամբողջ երկիրը իրեն վերցնի: Բայց նա չի համաձայնվում, և նրանք հարձակվում են միմյանց վրա: Դուդուշն սպանվում է, իսկ նրա որդի Ը-ռատվանը փախչում է Ուռհա, դառնում է Հալեպի ու նրա սահմանների սուլթանը: Նրա ցեղից Ալփիրակ անունով մեկը սուլթան է դառնում Հունաստանի կողմում և գալով Ուռհա՝ ձգտում է տիրել նրան: Երեսուն օր անց Թորոս կուրապաղատը թունավորելով սպանում է նրան:

Նույն տարում Հոնիում մեռնում է սուրբ կաթողիկոս Թեոդորոսը, որն օժտված էր ամենայն առաքինությամբ, և թաղվում է տեր Սարգսի մոտ:

ԿԳ. Այն ժամանակ մոբեխի և երաշտի պատճառով սաստիկ սով եղավ, և Անիում շատ մեծ նեղություն սկսվեց, ուստի սովից չէին կարողանում մեռածներին թաղել և ոչ էլ օրինական կարգով հաղորդություն տալ: Եվ ասում են, որ Բեխ անունով մի մարդ, ցուցաբերելով քաջություն ու սեր առ Աստված, թաղում է վեց հազար մարդու: Այսպիսի աղետների մասին Պարսկաստանում լսելով մի հարուստ մարդ՝ ուղտերի մի երամակ ցորեն է բարձում և գալիս է Անի ու ասում, որ ոչ ոքի չտան, բացի երեխաներից: Այդ խոսքերը լսելով՝ նրա մոտ են բերում արտասավախեղդ շատ երեխաների, և նա կերակրում ու հագցնում է նրանց: Եվ երբ սպառվում է ցորենը, նա երեխա-

[1] Արաբական թագավոր Հիշյալ Իբրահիմը պետք է լինի Միջագետքի անապատի իշխողներից մեկը և ոչ թե եթովպացիների թագավորը:

* Պատմիչը մեկ Բակիարուխ է գրում, մեկ Բեկիարուխ. մենք թողել ենք անփոփոխ:

ների ծնողներին ձայն է տալիս, որպեսզի գան ու համբուրեն իրենց ուտերերին ու դուստրերին: Եվ երբ լացուկոծ անելով մորմոքվում էին գրկախառնվածները, բարի մարդը քաղցր ձայնով ասում է. «Վերցրեք ձեր երեխաներին և գնացեք ձեր տները՝ փառավորելով բարիքներ տվող Աստծուն իր մեծության մեջ», որը այդպես էլ կատարվեց:

Սովը անցնելուց հետո սկյութական մի ցեղ, որ շատ վաղ ժամանակներից թաքնված ապրում էր Վրկան աշխարհի մոտ, որի առաջնորդի անունը Ելխաղի[1] էր, յոթ հազար մարդով պատերազմելով աշխարհի միջով գալիս է մինչև Անի քաղաքը, որտեղ սպանվում է Ելխաղի եղբայրը, որ նման էր հսկա Գողիաթին՝ ծնված Ապիրատի թոռ Վասակի որդի Գրիգորից, որը օրեր անց նահատակվում է Կաղզվանում մահից փրկելով Անիի ամիրա Մանուչեին: Նրան տանում և թաղում են Կեչառիսում, որի դիակի ետևից գնում էին տեր Բարսեղ կաթողիկոսի եղբայրը, Մանուչեն և Հայոց ամբողջ զորքը: Իսկ Ելխաղին, գնալով Միջագետք, Ֆրանկներից առնում է Երուսաղեմը, Հարությունն [եկեղեցու] տանիքին խփելով մի նետ, որը ցարդ մնում է ի նշան նրա գործի:

Հինգ հարյուր քառասունչորս թվին Արդուխի որդի Սուքմանը և Սամուսատի ամիրա Պալտուխը՝ Ամիր-ղազի* որդին, գալիս են Ուռհայի վրա ու վերադառնում մեծ ամոթով, որովհետև Թեոդորոս կուրապաղատը իմաստությամբ ու քաջությամբ պահում էր քաղաքը, այնպես որ նույնիսկ Ռատվան սուլթանը չի կարողանում հնազանդեցնել նրան: Դարձյալ հինգ հարյուր քառասունյոթ թվին արևմուտքի սուլթան Ղլիճ Ասլանը[2] Դդլմուշի** թոռը, գնում է Մելտենիի վրա, բայց քա-

[1] Ելխաղին [ՄՕ.-ում Էլխաղին] Օրդոք Էլխաղի ամիրան է, որի անունով կոչվում է թուրք Որդոքյան տոհմը. նրան մերոնք Արդուխ են կոչում: Այդ տոհմը տիրեց Խլաթին, Հայաստանի հարավային բազում այլ քաղաքների, Միջագետքին և Երուսաղեմին, բայց խաչակիրների գալուց առաջ և ոչ թե այնպես, ինչպես մեր հեղինակն է ասում, թե Երուսաղեմն առան Ֆրանկների ձեռքից, որովհետև Ֆրանկները սրանցից են սերում, մանավանդ նրանց հաջորդներից ու Եգիպտոսի խալիֆի զորավարներից:

* ՄՕ.-ում ամիր Խազե:

[2] Գլըճ Արսլանը Իկոնիոնի սուլթան Գութուլմուշի, նրա որդի Սուլեյմանի որդին էր:

** ՄՕ.-ում Դդուշ:

զաքի իշխան Ղավրիլը[1]՝ Ուռհայի կուրապաղատի անները, նրան անարգանքով ետ է դարձնում:

ԿԴ. Այդ ժամանակ կատարվեց սուրբ հայրապետ Ներսեսի մարգարեական խոսքը՝ ասված Ֆրանկների հայտնվելու վերաբերյալ: Սկյութացիները քանի որ դեռևս տիրում էին Երուսաղեմին և վարձ էին առնում սուրբ գերեզմանը մտնողներից, խուռն բազմության մեջ նրանց է հանդիպում ազգությամբ Ֆրանկ մի կոմս՝ հրելով՝*, զայրանալով, որի պատճառով նրան այնքան են ծեծում, որ մինչև անգամ ակնաբնից հանում են նրա մի աչքը, որը վայր է ընկնում: Այն վերցնելով՝ կոմսը գնում է գրպանը և տանում Հռոմ, որտեղ ցույց է տալիս ժողովրդին և նախանձից բորբոքում շատերին: Եվ բազում զորքերի գլուխ կանգնում են փառավոր շատ մարդիկ, որոնց անուններն[2] են՝ Կոնդոփր, նրա եղբայր Պաղտուինը, որը թագավորների ցեղից էր, որի մասին ասում են, թե նա տիրում էր Երուսաղեմն ավերող Վեսպասիանոսի թագին, Պայմունդ մեծ կոմսը, նրա քեռորդի Տանկրին, կոմս Զնջիլը, Որմնիքի կոմս Ռոբերտը**, մյուս Պաղտուինը, Զոսլին*** կոմսը,- [այս բոլորն] էլ հաղթող ու մեծաքանակ զորք ունեցող մարդիկ էին: [Նրանք]

---

[1] Ղավրիլը [ՄՕ.-ում Խավրիլ] ոմանց կարծիքով՝ հայ Գաբրիել իշխանն է, ուրիշների կարծիքով՝ հույն է կամ հունահայ, Երուսաղեմի Պոտուեն թագավորի անները:

* Վ.Օ.-ում Հարամարդիլ, ՄՕ.-ում Համարդիլ՝ դժվարանալ: Ըստ «Մինչև հայերենի բառարանի»՝ համարդիլ՝ «նեղվել» (հ. 2, էջ 10):

[2] Առաջին խաչակիրների աշխարհածանոթ առաջնորդներն են Կոտոֆրեն (Կոտրֆրուա դը Պույոն, Godefroy de Bouillon) և նրա եղբայր Պալտինը (Պոտուեն, Baudouin), որոնք համարվում են իրենց պապի՝ ինքնակալ Կարլոս Մեծի սերունդները: Իսկ թագն ու թուրը Վեսպասիանոսինն են՝ ըստ Մատթեոս Ուռհայեցու կարծիքի, որից էլ վերցրել է մեր հեղինակը:- Պեմունդը (Boemond) հրոչակավոր Ռոբերտ Կիշարի որդին է, որը դարձավ Անտիոքի դուքսը,- Տանկրին (Դանգրետ, Tancriede), որը ոչ թե Պեմունդի քրոջորդին էր, այլ հորաքրոջ:- Զնջիլը Ռայմոնդ Սեն-Ժիլն է (Raymond de Saint-Gelle):- Որմնիքի (Ալամանքի) կոմս Ռոբերտը Նորմանդիայի կոմսն է:-Մյուս Պալտինը առաջինի ազգական Պոտուեն դը Պուրկն է (Boudouin de Bourg),- Զոսլինը Ժոսլեն դը Գուրդենեն է (Iosselin de Courtenay), որը հաջորդեց մյուս Պալտինին:

** ՄՕ.-ում «Ռոբերտ, որ մնաց կոմս»՝ Ռոբերտը, որ կոմս մնաց:

*** ՄՕ.-ում Զոչլին:

ճանապարհ ընկնելով՝ գալիս են Բյուզանդիա և խաղաղությամբ մտնելով Նիկիա՝ մեկ-երկու հարված են հասցնում Ղլիճ Ասլանին, գրավում Նիկիան, տալիս Ալեքսին, իսկ իրենք գնում են Կիլիկիա և գրավում Անտիոքը, ամբողջ ծովեզերքը, Երուսաղեմը ու այնտեղ թագավոր են նշանակում. ինչպես որ տեղեկացնում են շատ պատմություններ:

Այդ ժամանակներում Նունեի սուրբ խաչը մտնում է Անի, այն խաչը, որ Վրաց առաջնորդ Վազգենի ուրացման ժամանակ գաղթել էր Պարխար լեռան խորշերը սուրբ Սահակի աշակերտներից մեկի՝ սուրբ վանական Անդրեասի միջոցով: Այնտեղ մնում է յոթ տարի և ապա հայտնի է դառնում Հմայակի որդի Մամիկոնյան Գրիգորին, որը տանում է Կապույտ կոչված բերդը[1], իսկ այնտեղից տեղափոխվում է Վանանդ, որի համար կոչվեց Վանանդի խաչ: Իսկ տեր Բարսեղի հայրապետության ժամանակ, երբ անօրեն Սուքմանը վերացնում է Մամիկոնյան տոհմը, [խաչը] բերվում է Անի, և նրա համար տոն է կարգվում կիրակի օրը, որը տոնվում է Խաչվերացի տոնից ութ օր հետո:

Հինգ հարյուր քառասունյոթ թվին Պաղտուին կոմսն[2] առնում է Թլպաշարն ու Ուռհան: Եվ հաջորդ տարին զորավար Բեկիարուքը գալիս է Անտիոք, Փռանգի վրա, նրանցից կոտորում է մոտավորապես ութ բյուր* մարդու, քանի որ սուրբ Պետրոսի [եկեղեցու] ձախ կողմում գտնում են այն գեղարդը, որով հրեաները կատակով խոցեցին փրկչի արձանը, և այնտեղից դուրս ելավ արյուն ու ջուր, որպես Տիրոջ** կողից: Եվ այդ զենքը պատվի է արժանանում որպես աստվածամուխ [աստծու մեջ մտած] զենք, որը գտնվում է հայերի մոտ: Դրանով հզորանալով՝ Ֆրանկները կոտորում են իրենց թշնամիներին և ապա այն ուղարկում Ալեքսին:

ԿԵ. Հինգ հարյուր քառասունյոթ թվին մեռնում է Հայոց Կոստանդին մեծ իշխանը՝ Ռուբենի որդին, որը Գագիկ արքա-

---

[1] Կապույտ բերդը գտնվում է Աբշարունիքում:

[2] Թլպաշարն առնողը Կոտրֆրուայի եղբայրն է: Թլպաշարը նշանակում և կոչվում է Թիլ Ավետյաց, որը Հռոմկլայի ու Բերիճիկի հարավ-արևմուտքում, Եփրատի աջ կողմում գտնվող բերդաքաղաք է:

* ՄՕ.-ում երեսուն բյուր:

** ՄՕ.-ում տերունի:

յի ազատներից[1] էր, որին ակնհայտորեն երևում է իր մահվան նշանը: Որովհետև այդ նույն օրը երկնքից չանթ ընկնելով՝ խփում է արծաթյա սկուտեղին, որ դրված էր նրա առաջ Վահկա[2] կոչվող բերդում, և իսկույն մեռնում է մի մարդ, իսկ հետո՝ նաև ինքը, որ տիրացել էր Սեավ լեռանը[3]: Նրանից մնաց երկու որդի՝ Թորոսն ու Լևոնը:

Հինգ հարյուր քառասունինը թվին Դանշմանը[4]՝ Սեբաստիայի տերը, որի մասին ասում են, թե հայոց ազգից էր, գալիս է Մելտենիի վրա: Պեմունդն ու Ռաջարդը[5], որոնք գտնվում էին Ուռհայում, դուրս են գալիս նրա դեմ, բայց բռնվում են նրա կողմից և բանտ դրվում:

Հինգ հարյուր հիսուն թվին, շաբաթ օրը, Երուսաղեմում լույսը չի վառվում, այլ վառվում է կիրակի օրը, ժամը իններին, որի վրա զարմանում է ամբողջ երկիրը: Դրա պատճառը ֆրանգների անուղղելի գործերն էին, որովհետև նրանք կանանց աստվածընկալ գերեզմանի* սպասավորության [իրավունք] տվին:

Եվ այդ նույն տարում Պետևան[6] անունով մեծ կոմսը երեսուն բյուրով գալիս է Կոստանդնուպոլիս, ամբարտավան խոսքերով եպարքոս կոչելով նախատում է Ալեքսին, նրանից զորք առնում Թուրքերի երկրով իրեն ուղեկցելու համար: Իսկ նրանք, նենգաբար գործելով իրենց թագավորի հրամանով, նրանց տանում են անջրդի անապատով և նրանց թուլացնելով՝ մատնում Դանշմանին ու Խլիճ Ալանի զորքին, իսկ Պետևանը, միայն երեսուն մարդկանցով ազատվելով, ընկնում է Անտիոք: Նա հասնելով Երուսաղեմ և ուխտ անելով՝ այնտեղից վերադառնում է Հռոմ: Հինգ հարյուր հիսունմեկ թվին քրիստոնեական տասը ցեղեր, բացի Հայաստանից ու Ասորիքից, հենվելով Իռիոնի[1] սխալ կարծիքի վրա, ծառազարդարի ժամանակ թյուր զատիկ են կատարում:

Հինգ հարյուր հիսուներկու թվին Հայոց իշխան Վասիլը[2]՝ Գող մականվամբ, փրկագնով ազատում է Պեմունդին՝ գնի վրա ավելացնելով իր տասը հազար դահեկանը. նա գնվեց հարյուր հազարով: Նույն տարում Ուռհայի կոմս Պաղտուինը գնաց Թուրքի վրա, Մելտենի սահմաններում բռնեց Ուլիսալար[3] ամիրային և բերեց Ուռհա բազմաթիվ գերիների ու հազարավոր ոչխարների հետ: Այդ օրերին Անիից գալիս է Բարսեղ պատրիարքը և հույժ մեծարվում կոմսի կողմից՝ [ստանալով] գյուղեր ու գանձեր:

Հինգ հարյուր հիսուներեք թվին մեռավ Դանշմանը՝ թողնելով տասներկու որդիներ: Իշխանությունը գրավեց նրա ավագ որդին՝ Ղազին*: Նույն տարում մեռավ սուլթան Բեկիարուխը**, և նրա տեղը գրավեց նրա եղբայր Տափարը[4]: Եվ այդ ժամանակամիջոցում Ջոսլինը գրավեց Մարաշը, և այնտեղ գտնվող Հունաց իշխան Թաթուլը Տիրամոր արձանը մեծաքանակ ոսկով ու արծաթով ծախեց Թորոսին, որը Ռուբենի որդի Կոստանդնի որդին էր:

Հինգ հարյուր հիսունչորս թվին, երբ Պարսից իշխանության մեջ իրարանցում էր սկսվել, սկյութացի Ղզիլ անունով մի ամիրա հարձակվում, գրավում է Լոռե ավանը և գնում, զո-

---

1 Հին Օ.-ում [illegible] [այդպես է նաև ՄՕ.-ում]:

2 Վահկա բերդը Սսից հեռու չէ:

3 Սեավ լեռը Կիլիկիայում է, Ամանոս լեռներին կից, Ասորիքի և Ծովի միջև:

4 Դանշմանը Տենիշմենտն է, որ նշանակում է գիտուն, ընթերցող, որովհետև Սեբաստիայի կողմերում մոտավորապես 1084 թ. բռնված ոմն գիտուն Թուրքի որդին էր, և նրա սերունդը գոյություն ունեցավ մի ամբողջ դար: Նա ոչ թե հայոց ազգից է, այլ ծնված պետք է լինի հայոց երկրում:

5 Ռաջարդը Ռիշարն է (Richard du Principat)՝ Պեմունդի ազգականը:

* ՄՕ.-ում սուրբ գերեզմանի:

6 Պետևանդ մեծ կոմսը Բուաղիեի Գուլիելմոս Թ կոմսն է (Guillaume IX conte de Poitiers):

1 Փնտրողները տոմարագիտության մեջ կարող են գտնել սխալ և ճիշտ զատիկների պատճառները, և հեղինակի կողմից դատափետվածները դրանով արդարանում են:

2 Գող Վասիլը Ռուբեն Ա.-ի ժամանակակիցն է, որը տիրում էր Մարաշի կողմերին: Թշնամիների վրա հանկարծակի հանելու պատճառով Գող կոչվեց, որին լատինացի պատմիչները ժամանակին ծռմռելով կոչեցին Govasilius կամ Gorouassilius:

3 Ուլու Սալարը կամ Սաղրը պետք է լինի զորավար կամ իշխան, որը բռնվել էր Մերտինի տեր Որդոբյան էլղազի ձեռքով:

* ՄՕ.-ում Խազի:

** Սա հանդիպում է մի քանի ձևով՝ Բեգիարուխ, Բեկիարուխ, Բակիարուխ, Բեկիարուք:

4 Տափարը Պարսից Մուհամեդ սուլթանն է:

ռով ու բռնությամբ մտնում է Դվին ու սպանում Մանուչեի եղբայր Աբունասրին*: Իսկ Մանուչեն գնում, Պարսից արքունիքից զորք է առնում, վերադառնում ու իր եղբոր գերեզմանի վրա սպանում է Ղզիլին և Դվինը տալիս է Պարսկաստանին:

ԿԶ. Այն ժամանակներում Բարսեղ պատրիարքը, նեղվելով զանազան իրարանցումներից, գնում է Անի, իր աթոռավայրը: Եվ այդ պահին նրան է հանդիպում Պահլավ տեր Գրիգորիսի, նույն ինքը Վահրամի՝ Վկայասեր կոչեցյալի խնդրանքը. «Թե հասել է իմ ժամանակը, ե՛կ, ուղարկի՛ր ինձ Տիրոջ մոտ»: Եվ Բարսեղը չի ուշանում վերջին օրհնության հույսով, բայց ճանապարհին նրան փորձանք է պատահում Մենծկերտի[1] բերդում, Բալուի մոտ, այնտեղ գտնվող հույների կողմից, որոնք կամեցան կողոպտել նրանց: Բայց նա քաջասրտորեն արիանում է և թույլ չի տալիս, որպեսզի նրանք առնեին իրենց ցանկացածը, այլ առնում են այն, ինչ ինքը թույլ տվեց: Թաղևոս առաքյալի պատրաստած երկաթյա խաչը, որ տանում էին առջևից, տանողը գցում է ծովակի մեջ: Այն հետո գտնում են քրիստոնյաները՝ գուշակելով լույսի ճաճանչներից: Այն տանում-դնում են սուրբ Գրիգոր լեռան[2] վրա, որտեղ Գրիգորի գերեզմանն է: Այժմ էլ նա այնտեղ է և կատարում է պեսպես հրաշքներ: Իսկ Բարսեղը, գնալով երկայնաձիգ ճանապարհով, հասնում է Կարմիր անունով վանքը, որտեղ՝ մեծ իշխան Վասիլի մոտ էլ գտնվում էր Աստծու մարդը: Եվ օրհնվելով նրա կողմից՝ մեռնողը նրան է հանձնում իր քրոջորդու ձեռնասուն երեխաներին՝ Գրիգորիսին, որը կաթողիկոս է լինում[3], և նրա եղբայր Ներսեսին, որոնք Ապիրատի որդիներն էին: Իսկ ինքը վախճանվում է տրե ամսին, շաբաթ օրը, ամառվա հինգակի [պասի] ժամանակ, Երեմիա մարգարեի տոնի օրը, և

* ՄՕ.-ում Բունար:

1 Մենծկերտը Շահունյաց Մոփաց գավառում է, այժմյան Ջաբասանճագում: Ինձ թվում է, որը ծովակը Մոփ լիճը (Գյոլճյուկը) չէ, այլ Բալուի մոտ գտնվող մի փոքրիկ լճակ է, որը Աշխարհացույցում չի նշված:

2 Սուրբ Գրիգոր լեռը, որ հիշատակում է հեղինակը նաև ստորև (էջ 169), պետք է լինի Ջահանի և Կիլիկիայի սահմաններում, և որ այն Դարանաղյաց Սեպուհը չէ:

3 Հին Օ.-ում զոր և անուանէր [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ որին և անվանում էր:

թաղվում տեղում: Նրա վրա մեծ լացուկոծ են անում Վասիլն ու Հայոց ամբողջ ազատագունդը:

Նույն տարում վախճանվում է սուրբ ճգնավոր ու մարգարե Մարկոսը Կոկաց գավառում, Կոնկոնաթ լեռան[1] վրա, որը գտնվում է Մարաշի մոտ: Նա վաթսունհինգ տարի հաց ու հացանման որևէ ուտելիք չի ուտում, այլ սնվում է միայն խոտով: Եվ հենց նա ինքն է ասել, «Թե կշատանան մարդկանց չարիքները, աշխարհը կավերվի այլազգիների կողմից, կփակվեն եկեղեցիների դռները, և Երուսաղեմը դարձյալ կգրավեն թուրքերը»: Նա նույն անապատում երկու* տեղից ջուր է հանում և երբ մեռնում է, թաղվում է Կաստաղոն վանքում[2]: Աստվածածնի տոնից հետո՝ հինգշաբթի օրը, նրա տոնն է:

Հինգ հարյուր հիսունյոթ թվին գրավվում է Տրապոլիսը, որը Երուսաղեմի թագավոր և կոմս Պերդրանի[3] կողմից պաշարվել էր տասնմեկ տարի, սակայն քաղաքը հանձնվում է Տանկրիին՝ Անտիոքի տիրոջը: Դրա համար նրա վրա բարկանում են թագավորն ու Պերդրանը, կրկին առնում են քաղաքը, [բնակիչներին] սրի քաշում ու կողոպտում: Եվ այդ տեղը ժառանգում է Պերդրանը:

Հինգ հարյուր հիսունինը թվին Պարսից սպասալար [զորավար] Մամտուտը[4] Ուռհայի ամբողջ երկիրն ավերում է կոտորածով, գերությամբ ու սգի մատնում բոլոր քրիստոնյաներին:

Նույն տարվա ձմռան մի մութ գիշեր վերևից հուր է ընկնում Վասպուրական ծովը[5], և ծովը գոռգոռալով բարձրանում է ցամաքի վրա, արյան գույն ընդունում, և ոչնչանում են ձկ-

1 Կոնկոնաթ կամ Կոնգանակ լեռն ու Կոկաց գավառը, որոնք Մարաշի սահմաններում են, հիշատակվում են միայն Մատթեոս Ուռհայեցու կողմից, որից էլ վերցրել է մեր հեղինակը. ոմանք Մոկաց գավառ են ընթերցում:

* ՄՕ.-ում քսաներկու:

2 Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Կաստաղոն վանքը Վահկա բերդի մոտ է և ոչ թե Տիվրիկի մոտ, ուր և հիշում է մեր Ինճիճյանը՝ Քեստաղոն գալեսի:

3 Պերդրանը [ՄՕ.-ում Բերդրան] Ռայմոնդի՝ Սեն-Ժիլ կոմսի որդին է:

4 Մամտուտը Մանտուտն է՝ Ալթուն-Թեքինի որդին, Տափար սուլթանի զորավարը:

5 Մատթեոս Ուռհայեցին ասում է նաև ծովափին գտնվող երկրի պատրուվածքի մասին և նշում ստորջրյա հրաբխի ժայթքումը, որն ավելի մեծ էր, քան մեծ օղաքարի անկման տեղը:

ները: Առավոտյան [մարդիկ] տեսնում են, որ ափին ձկները կուտակվել են անտառի փայտանյութի նման:

Իսկ հինգ հարյուր վաթսուն թվին Հայոց մեծ իշխանը իր կորովի իմաստությամբ շնորհիվ գրավում է Կինտռոսկավիս բերդը[1], որտեղ սպանել էին Գագիկ Շահնշահին: Եվ քանի որ կենդանի էին թագավորին սպանողները՝ Մանդալիոնի երեք որդիները, [իշխանը] դաժանորեն սպանում է նրանց, վերցնում թագավորի թուրն ու հանդերձանքը, գավառի անառիկ դղյակի պահեստում եղած բոլոր գանձերը և բազում ոսկյա խաչեր ու արձաններ: Եվ այդ բոլորը տանելով Վահկա՝ նա գոհ է մնում Աստծուց և իրենցից պահապան է կարգում բերդի վրա:

Իսկ Բարսեղ պատրիարքը այլևս չի վերադառնում Անի, այլ այնտեղ որոշ ժամանակ ապրելով*՝ որոշում է գնալ Երուսաղեմ: Եվ երկրի եպիսկոպոսներին, վանականներին, իշխաններին հրավիրում է մասնակցել վարդավառի տոնին՝ Գրիգորիսին ձեռնադրելու առաքելական աստիճանով, որպեսզի ինքն առանց երկրայելու ավարտի առաջիկա իր ճանապարհորդությունը: Եվ նրան ինչ-որ փորձանք է պատահում Շուղր[2] անունով վանքում. տուն չինելիս հեծանը վերև տանելու ժամանակ ձեռքերից պոկվում, ընկնում է վրան և նրան մահ պատճառում: Սակայն դրանից հետո ևս ապրում է հինգ* օր և Գրիգորիսին տալիս է աստիճան, ապա վախճանվում ու թաղվում է այնտեղ, հինգ հարյուր վաթսուներկու թվին: Այդ բանը Աղթամար կղզում երբ լսում է ոմն Դավիթը[1]՝ Թոռնիկի որդին, հինգ եպիսկոպոսների ժողով է անում և կաթողիկոս ձեռնադրում՝ պատճառաբանելով, թե Վահանիկ կաթողիկոսը եկել է Զորովանք[2], Գագիկի որդի Աբուսահլի մոտ ու այնտեղ վախճանվել: Եվ այնտեղ էին գտնվում սուրբ Գրիգորիսի պատարագի սեղանը, գավազանը, կաշվե գոտին, սուրբ Հռիփսիմեի հողաթափը, արյամբ ներկված գլխաշորը, շղարշը, այն է՝ թաշկինակը, որոնք այնտեղ էին մնացել ժառանգավորներից: Իսկ [աթոռը] հալածանքների ժամանակ պատսպարվում էր Աղթամար կղզում: Եվ քանի որ ասում են, թե դա Արծրունյաց թագավորների աթոռն էր, [հետևաբար] այնտեղ պետք է եղած լինի նաև պատրիարքության աթոռը: Սակայն Դավիթը չի ընդունվում, թեև շատ ընծաներ ու ազաչանքներ է անում, մանավանդ Անիի գլխավորներից ոմանց, որոնց պատրիարք Գրիգորիսը օրհնությամբ հղում է մեծ շնորհակալություն՝ Սեավ լեռան բոլոր վանականների և շրջակա եպիսկոպոսների ստորագրությամբ:

Բայց քանի դեռ կենդանի էր տեր Բարսեղը, մեռնում է պարոն Վասիլը՝ մեծ իշխանաց իշխանը, որ Աստծու օգնությամբ տիրում էր բազում բերդերի ու գավառների: Բարսեղ պատրիարքը հոգ է տանում նրա տան մասին և իշխանությունը տալիս է երեխա Վասիլին՝ մեծ Վասիլի սանին, որը Կամսարական ցեղից էր, որովհետև Վասիլի տունը այն ժամանակ Հա-

---

[1] Աշխարհագիրը Կինտռոսկավիս բերդը չի հիշատակում, իսկ այլ պատմիչներ ասում են, թե Գագիկն սպանվել է Կիզիստռայում: Կարծում եմ երկուսն էլ կամ նույնն են, կամ առաջինը բուն բերդի անունն է, իսկ երկրորդը՝ ավանի, որը ոմանք նույնացնում են Կյուլիստռայի հետ, որն ընկած է Կիլիկյան դռների և Տիանեսի միջև, այժմյան Գարամանում, իսկ ոմանց կարծիքով էլ դա տարբեր է և մոտ է Մաժակին: Հեթում պատմիչն ասում է, որ բերդը գտնվում է Լյուկանդոն գավառում, որը մերոնց և բյուզանդացիների կողմից հաճախակի հիշատակված Լականիտ հին գավառն է, Կիլիկիայի հյուսիսարևելյան ծայրում և սահմանակից է Կապադովկիային ու Կոմագենին, այսինքն՝ եփրատացիներին: Իմ կարծիքով՝ Կյուզիստռան տարբեր է Կյուլիստռայից և հավասար է առաջինին կամ մերձավոր, եղերական բերդ Տավրոսի լեռնաշահմանում, որը Կապադովկիան բաժանում է Կիլիկիայից ու նայում դեպի Արգեոսի դաշտը: Իսկ մեկ այլ պատմիչ էլ ասում է, թե բերդը ընկած է Արծիաս դաշտի սահմաններում, Ձկնջուր երկրամասին մոտիկ, իսկ այժմ մեզ ծանոթ է Պալրգսու գետի հովիտը, որը գտնվում է Կյուրոնի սահմաններում:

* Վ.-ում կեցեալ, Մ.-ում կացեալ՝ մնալով:

[2] Շուղր վանքը պետք է փնտրել Մարաշի հարավարևմտյան մասում:

---

* Մ.-ում յոթ:

[1] Դավիթը, որ համարվում է Աղթամարի կաթողիկոսների առաջնորդը, Վասպուրականի թագավորների ցեղի սերնդից է, որոնցից էլ հիշյալ Աբուսահլն է, որը ոչ թե սրա որդին է, այլ Գագիկի եղբոր՝ Աշոտ երեցի որդին: Իսկ Աղթամարի կաթողիկոսությունը երկու դար առաջ է ասվածի համեմատ. այն հաստատվել է Գագիկ թագավորի կողմից 921 թ., և սկսած առաջին կաթողիկոսից՝ նույն Գագիկի եղբորորդի տեր Եղիշեից մինչև այժմ Աղթամարի դիվաններում անընդհատ նշվում են կաթողիկոսների շարքերը:

[2] Զորովանքը նույն Սալնապատն է, որ գտնվում է Վան քաղաքի սահմաններում:

յոց թագավորազունների ու ազատների հավաքատեղին ու հայրապետների աթոռավայրն էր:

Նույն տարում մեռնում է Անտիոքի մեծ կոմսը՝ քրիստոսասեր ու արդարադատ Տանկրին, և իշխանությունն առնում է նրա քրոջորդի Ռոճերը:

Կէ. Հինգ հարյուր հիսուներեք* թվին՝ մարերի ամսի տասներկուսին, երկիրը դողում է[1]՝ արձակելով աղեկտուր ձայն, որ գալիս էր լեռներից ու դարափուլ ժայռերից. օրը կիրակի էր, ձայնը՝ պարզ, որի համար կարծում էին, թե աշխարհի վերջն է: Փուլ են գալիս շատ քաղաքներ, և մեռնում է քառասուն հազար մարդ, որոնց որ հնարավոր եղավ հաշվել:

Այդ նույն տարում մեռնում է Գևորգ վարդապետը, որը քաղցրությամբ վարդապետության համար անվանվում էր Մեղրիկ. նա Դրազարկ[2] սուրբ վանքը նորոգողն էր, Վասպուրական գավառի Անալյուր կոչվող գյուղից էր, մի սուրբ, աքանչելի մարդ ու մեծ ճգնավոր: Հաջորդ տարվա սկզբին երկրաշարժից հուր է թափվում Ամիթի ճեմիայի [մզկիթի] վրա, որը մուսուլմանների հավաքման մինարեթն էր: Այրվում է նրա քարաշեն ծածկը, և բոցը հասնում է մինչև երկինք:

Հինգ հարյուր հիսունհինգ[3] թվին Կոստանդնի որդի, Լևոնի եղբայր Թորոսը, բռնելով երեխա Վասիլին, նրան տալիս է Ուռհայի կոմս Պաղտույնին, որը տանջելով նրան՝ գրավում է նրա ամբողջ երկիրը, և այդպիսով այդ երկրամասը անջատվում է Հայաստանից: Իսկ Վասիլը գնում է Կիլիկիա, իր աներ Լևոնի մոտ, այնտեղից՝ Կոստանդնուպոլիս, որտեղ կայսրը պատվի է արժանացնում նրան իր ավագանու հետ միասին: Հետագա տարիներից** մեկում Պաղտույնը գնում է Նզեպ[4]՝

* ՄՕ.-ում հինգ հարյուր վաթսուներեք:

1 Այդ մեծ աղետը՝ երկրաշարժը, եղավ եփրատացիների և Մարաշի կողմերում, ինչպես պատմում է Մատթեոս Ուռհայեցին:

2 Դրազարկը Կիլիկիայի անվանի մենաստանն է և Ռուբինյան թագավորների գերեզմանատունը. այն պետք է փնտրել Սսի արևմտյան կողմում:

3 Հին Օ.-ում հինգ հարյուր հիսունյոթ [ՄՕ.-ում հինգ հարյուր վաթսունհինգ]:

** ՄՕ.-ում ի միում ամին՝ հաջորդ տարում:

4 Նզեպը կամ Նիսիպը Եփրատի աջ ափին գտնվող ամուր ավան է, որն ընկած է Հռոմկլայի, Պիրի, Թլպաշարի և Այնթապի միջև:

Հայոց իշխան Վասակի[1] որդի Ապլղարիբի և նրա եղբայր Լիկոսի վրա, որոնք հազար զինվորների տերեր էին: Նրանք սկզբում տիրում էին Թլպաշարին ու Պիրին, որոնք մեծ քաջությամբ գրավել էին Թուրքերից: Շրջապատելով մեկ տարի՝ Պաղտույնը նրանից խլում է ամբողջը, իսկ Ապլղարիբը գնում է Թորոսի մոտ: Պաղտույնը վերցնում է նաև մյուս իշխանին՝ Բագարատին, որը բնակվում էր Արևընդանում[2], և Կարկառի[3] տեր Կոստանդնին, որին մեռցնում է կիրճում, Սամուսատ բերդում:

Հինգ հարյուր վաթսունյոթ թվին մեռնում է Երուսաղեմի թագավոր Պաղտույնը, և թագն առնում է մյուս Պաղտույնը՝ Ուռհայի կոմսը: Նույն տարում մեռնում է նաև Պարսից սուլթան Տափարը, որը մերձիմահ եղած ժամանակ սպանել է տալիս իր ավագ կնոջը՝ Գոհար խաթունին, որի մասին ասում են, թե իր առաջ ուխտուն[4] սպասավոր կույսեր ուներ՝ գլխներին թագեր: Սուլթանը տեր էր բազում զորքերի, որոնցից գաղտնի մորթել է տալիս իր կնոջը, որպեսզի նա, ասում է, չառնի իր եղբորը, որը տիրում էր Պարսից աշխարհի խորքերին՝ Օզկան[5] քաղաքին, Խզնեին, որը իննսուն* օրվա ճանապարհ հեռու է Ասպահանից: Նա աթոռը տալիս է ավագ որդուն՝ Մահմուդին, իսկ կրտսերին՝ Մելիքին[6], նշանակում է Հայոց Գանձակի տեր: Հաջորդ տարում մեռնում է Ալեքսը, և թագն առնում է նրա որդի Փեռփեռոժենը**, որը Հայաստանի նկատմամբ բարյացակամ էր և մեղադրում էր իր հորը***, որը մոլորվելով խաբեբա առաջնորդների [ասածներից] և կրկին մկրտվելով՝ կրկին

1 Վասակ Պահլավունին սուրբ Ներսես Շնորհալու հորեղբայրն էր:

2 Ըստ հայր Զամչյանի՝ Արևընդանը պետք է լինի Եփրատի աջ կողմում, Այնթապից ու Քիլիսայից դեպի արևմուտք, Կուրիս (Խորոս) քաղաքի մոտ:

3 Կարկառը, որ մինչև օրս հայտնի է նույն անունով, Եփրատի աջ ափին գտնվող ամուր բերդավան է, վերոհիշյալ տեղերից դեպի հյուսիս, ուր գետի հուն կա:

4 Հին Օ.-ում չորս հարյուր [այդպես է նաև ՄՕ.-ում]:

5 Օզկանը Օգբենդ քաղաքն է Սիհուն գետի մոտ, Սամարղանդից հյուսիս:

* ՄՕ.-ում վեց:

6 Մելիք Տողրուլն է, որը հակառակվելով խլեց Պարսից սուլթանության աթոռը եղբոր կենդանության ժամանակ:

** ՄՕ.-ում Փերոժեն:

*** ՄՕ.-ում մորը:

խաչում էր Տիրոջը:

ԿԸ. Այն ժամանակ հզորանում է Վրաց Դավիթ թագավորը՝ Բագարատի որդի Գեորգիի որդին, որը պարսիկներից խլում է Տփղիսը, ծանր հարվածներ է հասցնում Գանձակի սուլթան Մելիքին և հինգ հարյուր մարդու բարձրացնում է ցցերի Տփղիս քաղաքում: Այդ օրը, քանի որ մեռել էր Անիի ամիրա Մանուչեն, քաղաքին տիրում է նրա որդի Ապլսուարը՝ վախկոտ ու կնամոլ մի մարդ, որը ցանկանում էր Անին վաճառել Կարսի ամիրային վաթսուն հազար դինարով: Նա հրամայում է խլաթից բերել ծանր ու բարձր նալ[1] ու դնել կաթողիկեի գմբեթի վրա՝ փոխելով առաջինների դրածը: Քրիստոնյաները դրանից նեղանալով՝ կանչում են Դավթին և նրան հանձնում Անի քաղաքը: Եվ ատելի զենքը գցելով կաթողիկեի պատվական գլխից, որը վաթսուն տարի մնում էր մեր մեղքերի պատճառով, դնում են զարդապսակն ու Հիսուսի թագը՝ Պողոսի պարծանքը, մեր փրկության արեգակը՝ աստվածընկալ խաչը: Եվ խաչին զանգակ ամրացնելով՝ դավանում են խաչված Աստծուն հավատացյալների փրկության համար: Իսկ թագավորը, Աբուլեթին[2] և իր որդի Իվանեին թողնելով Անիում, վերադառնում է իր երկիրը՝ իր հետ տանելով Աբլսուարին և նրա որդիներին, որոնք այլևս չեն վերադառնում, այլ այնտեղ էլ մեռնում են: Դավիթը, ընդարձակելով Վրաստանի սահմանները, գրավելով Ուխտիքն[3] ու նրա սահմանները, Գագը, Տերունականը, Տավուշը, Կայանը, Կայծոնը, Լոռեն, Տաշիրը, Մահկանաբերդը, Կյուրիկեի ու Աբասի հայկական ամբողջ իշխանությունը, իրեն է հնազանդեցնում նաև Կովկասյան լեռը, սոնքերի[4] թագավորությունը, Մրաճուլքը, Ճքեթը,

[1] Նալը թուրքերեն է, որը պայտն է, քանի որ այն լուսնաձև է և մահմեդականության զինանշանին նման: [Ըստ «Մեծին հայերենի բառարանի»՝ արաբ. na'l, պրսկ. nāl և ապա թուրք. nal «պայտ» բառն է (հ. 2, էջ 180)]:

[2] Աբուլեթը Օրբելյան տոհմից էր:

[3] Ուխտիքը այժմյան Օլթին է, որ գտնվում է Տայքում: Իսկ մյուսները Գուգարքի ու Ուխտիքի սահմանում են և Սյունիքի ու Արցախի հյուսիսային կողմում:

[4] Սոնքի թագավորությունը Սվանքն է, Սվանեթը, որ գտնվում է եղերացիների հյուսիս-արևելքում, Մրաճուլքը Ռաճայի մի մասն է, Սվանքի հարավային

Դուալեթը, Հերեթը, մինչև Կասպից ծովը, Հաղբանդն[1] ու Շապուրան[2] քաղաքը: Հոգ տանելով նաև վրաց անբան ազգի մասին՝ ընտրում է քառասուն մանուկներ և ուղարկում Հայաստան՝ լեզու սովորելու, թարգմանություններ կատարելու ու բերելու, որը և նրանք կատարեցին: Նրանցից երեքը ավելի լավ ու խելացի գտնվեցին ու զարդարեցին իրենց անկիրթ ազգը: Դավիթը մեր եկեղեցու և աղոթքների վերաբերյալ երկմտություն չուներ, որի համար իր գլուխը բազմիցս դնում էր մեր ձեռքի տակ[3], խնդրելով օրհնել իրեն: Նա թագավորում է երեսուներեք տարի, մեռնում է Տփղիսում ու թաղվում Գելաթում[4], իր հայրերի գերեզմանոցում: Թագն առնում է նրա որդի Դեմետրեն, որը նույնպես պահում է իր իշխանությունը և ավելացնում Դմանիքն[5] ու Խունանն[6]՝ [դրանք] խլելով Պարսկաստանից:

ԿԹ. Այն ժամանակ Ապլսուարի մի որդին, որ գտնվում էր Խորասանում, երբ լսում է հոր և եղբայրների հետ կատարվածն ու Դավթի մահը, գալիս է ստանալու իր հայրենի Անի քաղաքը և աղերսանքով խնդրում է Աբուլեթից ու քաղաքի ավագներից: Եվ որովհետև քաղաքին մեծ վտանգ էր սպառնում թուրքերի կողմից, Աբուլեթը այն տալիս է նրան՝ խնայելով քրիստոնյաներին, առավել ևս իր որդի Իվանեին, որպեսզի

ծայրում, Ճքեթը կամ Ճիքը [ՄՕ.-ում՝ Կճեթը] Ջերքեզն է, Աբխազիայի հյուսիս-արևմուտքում, Սև ծովի ափին, Դուալեթը կամ Դուալը Ռաճայի արևելքում է, Հերեթը կամ Հերը, որ Հայկի եղբոր անունով է, Կախեթի մի մասն՝ այժմյան Սղնախ կոչվածը, որն ընկած է Վրաստանի, Աղվանքի և Հայաստանի միջև:

[1] Հաղբանդը [ՄՕ.-ում՝ Հաբանդ] Դարբանդն է:

[2] Շապուրան այժմյան Դաղստանն է:

[3] Ակնարկում է թագավորի խոնարհվելը վարդապետ Հովհաննես Սարկավագի ձեռքին:

[4] Վրացական Գելաթի մեծահռչակ մենաստանը Իմերեթում է: Այն կառուցել է նույն ինքը՝ Դավիթ Բ.-ն՝ և մինչև օրս այնտեղ կան նրա տապանն ու պատկերը՝ նկարված եկեղեցու պատին:

[5] Դմանիք քաղաքը գտնվում է Սոմխեթի վիճակի մեջ:

[6] Հայերի կարծիքով Խունանը Հունարակերտն է, Գուգարքի վերջում, Կուր գետի վրա գտնվող վրացական մեծահռչակ Կարմիր կամուրջի մոտ, Վրաստանի, Աղվանքի և Հայաստանի սահմանակցության տեղում:

նա չկորչի հաճախակի մղվող մարտերում, և ինքն անցնում, գնում է իր տունը: Իսկ Աբուլեթի որդի Փատլունը, բարվոք հոգ տանելով քաղաքի ու բոլոր սահմանների համար և արիաբար ջանալով՝ խաղաղություն է հաստատում, գրավում է նաև Դվինն ու Գանձակը և դառնում անվանի մարդ: Եվ որովհետև նա ցանկանում էր ձեռք գցել սուրբ կաթողիկեին, երեք տարի անց փորձանք է պատահում նրա հետ հրակերպ մարդկանց խոցոտումից, որոնք դուրս էին գալիս եկեղեցու բանալիների անցքերից, [այն եկեղեցու], որի բանալիները նա խլել էր սուրբ սպասավոր Գրիգորից: Եվ հաջորդ օրը նա ցանկանում էր կողոպտել եկեղեցին, որին նոր էին հագցրել երկնային առաքաստը վաթսունամյա ազից հետո: Այդ տեսիլքից վախենալով ու հիվանդանալով՝ Փատլունը վերադառնում է Գրիգորի աղոթքներին՝ նրան ազատելով բանտի կապանքներից, որոնց մեջ նա ընկել էր այն ժամանակ, երբ կարճ ժամանակով գնացել էր Վիրապ: Գրիգորը Դվին վերադառնալիս, երբ տեսնում է թուրքերի բազմախուռն բանակի ահագին բազմությունը, բարձրաձայն աղաղակում ու ասում է. «Օրհնյալ է Քրիստոս Աստված՝ Աստծու որդին»: Նա սովոր էր ամեն օր այն կատարել Անիում, քանի որ նրա աղոթակից ընկերը կատակով նրա ականջին ասում էր. «Ահա Քրիստոսին օրհնելու տեղը»: Այդ պատճառով նրան կապում ու տանում են Փատլունի մոտ և բանտ գցում*՝ ցանկանալով սպանել նույն գիշերը, երբ բռնեցին, բայց Տերը նրան պահպանում է, ինչպես արդեն ասվեց:

Հ. Այդ ժամանակ կային հետևյալ վարդապետները՝ Հովհաննեսը, որը նաև Սարկավագ էր, Փառիսոս գավառի քահանայական տոհմից, որի հիշատակի ճառագայթները փայլում են մինչև օրս իր գործերում: Նրա աշակերտներն են Երեմիան, նույն ինքը՝ Անձրևիկը, որը հիսուն տարի չորակերությամբ էր ապրում և այնքան հլու հնազանդ էր իր վարդապետին, որ երբ նա սաստում էր, «թե լուռ եղիր», նա երեք տարի մարդու հետ չի խոսում, բացի անհրաժեշտության** դեպքում իրեն կրող

* ՄՕ.-ում «եղաւ ի գնդան երեկորին»՝ երեկոյան բանտ գրվեց:

** Վ.Օ.-ում ի կարիս՝ կարիքի կամ անհրաժեշտության դեպքում, ՄՕ.-ում ի կարասիս, որը, կարծում ենք, ազավաղված ձև է:

թողների հետ խոսելուց: [Ապրում էր նաև] մեր երկրի[1] Սամվել երեցը՝ Անեցին, որը հորինեց քրոնիկոնի գավազանները [աղյուսակները]: Իսկ նրանցից առաջ ապրում էր Անանիան, այն է՝ Սանահնեցին[2], որը Պետրոս կաթողիկոսի հրամանով կատարում է առաքյալների մեկնությունը: Իսկ Սարկավագ վարդապետը, իր կյանքի ընթացքում ապրելով ժրաջան մշակութային կյանքով, հանդչում է հինգ հարյուր ութսունութ[3] թվին: Մեկ տարի անց [վախճանվում է] իր լծակից Ալավիկի որդի Դավիթը[4], որը դյուրահաս կանոններ գրեց: Նրան հաջորդում են՝ նրա աշակերտը՝ Թոքակերի որդին[5] և Աղվանքում գտնվող այլ ճգնավոր մարդիկ, ինչպես՝ Խոնթիկի որդի Պետրոսը և Հակոբ սքանչելին, որը մի օր տեսել էր սատանային՝ հեծած մի կրոնավորի ուսին, որը գալիս էր նրա մոտ խոստովանության: Եվ երբ մոտենում են [սատանան] մտրակում, խթում է[6] նրան ու այնտեղից ետ դարձնում որպես փախստական: Հակոբը սպասավորին հրամայում է գնալ կրոնավորի հետևից ու բռնությամբ նրան բերել իր մոտ: Հակոբը երբ հարցնում է նրան, նա պատասխանում է. «Զղջալով քեզ մոտ եկա ապաշխարության, բայց հիշելով իմ սովորական գործը՝ քո մոտից ետ դարձա»: Հակոբը նրան պատմում է տեսիլքը, և նա լսելով այդ բանը՝ ընկնում է նրա ոտքերը ու խոստովանելով առնում ապաշխարության լուծը: Քոբայրում[7] կային թա-

[1] Սամվել անվանի ժամանակագիրը, որը Եվսեբիոսի և ուրիշների նման շարակարգում է պատմության դեպքերը:

[2] Անանիա Սանահնեցու ավելի ծանոթ գրվածքն է Պողոսի թղթերի մեկնությունը, հիշատակվում են նաև նրա՝ Մատթեոսի մեկնությունը և պատասխանը հույներին:

[3] Հին Օ.-ում ՇԿԸ, այսինքն՝ հինգ հարյուր վաթսունութ [այդպես է նաև ՄՕ.-ում]: Իսկ այլ ժամանակագիրներ ասում են ՇՀԸ, այսինքն՝ հինգ հարյուր յոթանասունութ, որն ավելի ստույգ է թվում:

[4] Ալավիկի որդի Դավիթ Գանձակեցու խքատական կանոնները ուղղված են ոմն տխմար քահանայի:

[5] Թոքակերի որդու, Խոնթիկի որդի Պետրոսի և Սքանչելատես Հակոբի գրվածքները մեզ ծանոթ չեն:

[6] Այս օրինակում մտրակել, խոթել, հին Օ.-ում խթմոթել [ՄՕ.-ում խոթմոթել]՝ խթել, մշտել, բզել:

[7] Քոբայր կուսանոցը գտնվում է Գուգարքի Ձորափոր գավառում, իսկ թագավորազունները կիլիկյան կամ հայ-աղվանական թագավորների ցեղից են:

զավորազուն կանայք՝ Խորասուն և Մարիամը, որոնք ճգնում էին որպես կույսեր: Նրանց համար սուրբ վարդապետ Սարկավագը գրում է զգուշական խրատներ:

ՀԱ. Հինգ հարյուր յոթանասունինը թվին Խուրթին[1]՝ Կուզնի որդին, գալիս է Դվին և տիրում նրան: Պատերազմում նա վիրավորում է Փատլունին, որին նենգ մարդիկ խեղդում են՝ մահվան պատճառը համարելով ստացած վերքը, որը մահացու չէր: Եվ ամիրայությունն առնում է Փատլունի կրտսեր եղբայր Խուշչերը, իսկ կարճ ժամանակ անց՝ ավագը՝ Մահմուդը, և Անիի երկիրը կրկին ընկնում է թշվառության մեջ:

Այդ դեպքերից ոչ այնքան հեռու ժամանակում Աբուլեթի որդի Իվանեն որոշում է սպանել Դեմետրեին ու իր եղբայր Գորգիին, բայց նրա հայր Աբուլեթը, որդու առաջ պոկելով[2] իր ալեհեր մազերը, արգելում է նրան: Եվ երկուսն էլ փակված էին Դմանիս բերդում եղբայրների մեջ եղած ինչ-որ խաբեության պատճառով, որի մասին հետո իմանալով՝ Դեմետրեն Իվանեին ասում է. «Բռնեցիր ինձ, տատ*»: Եվ նա զղջալով ասում է. «Ոչ, արքա, ես քո եղբորը տվեցի քո ձեռքը, որն ուզում էր խլել քո թագավորությունը»: Եվ նա բռնում, կուրացնում է նրան ու բաց թողնում:

Նրա ժամանակ Գագ դաշտը[3] լցվում է անօրեն ազգերից հավաքված անթիվ, անհամար հեծյալներով, որոնք ուզում էին այրել այն սուրբ խաչը, որը զորավար սուրբ Սարգսի անունով էր: Եվ Տիրոջ բարկությունից խելացնորված**՝ կոտորում են միմյանց: Այդ դեպքից օգտվելով՝ Դեմետրեն գնում ու

---

[1] Խուրթ էմիրը թուրքական Ղոզ կամ Ուզ տոհմից է, այն թուրքերի, որոնք սելջուկների հետ շարժվեցին դեպի արևմուտք:

[2] Այս օրինակում ճոպկով, հին O.-ում փետկով [այդպես է նաև ՄՕ.-ում]:

* Բնագրում մամ:

[3] Գագ դաշտն ու բլուրը Գուգարաց աշխարհի Կողբոփոր գավառում են, Ուտիքի հետ սահմանում, որի կատարին շինված էր սուրբ Մարգիս տաճարը: Ս. Սարգսի մի ատամը դրված էր այնտեղ սուրբ Մեսրոպի ձեռքով. այդ մասին ակնարկում է շարականը. «Առավել պայծառ Գագի կատարներին», այն տեղում, որ օրհնել է սուրբ Մեսրոպը»: Իսկ այդ զորախումբը թուրքական բազմություն էր, որին կոտորեց Դեմետրեն:

** ՄՕ.-ում խելացնորվածք և գիվահարք՝ խելացնորվածներ և գիվահարներ:

հեշտությամբ խլում է նրանց ունեցվածքը: Այդ օրերին Փատլունի եղբայրներից մի պատանի լսելով, որ իր տատը՝ Կատան, Բագրատունի քրիստոնյա թագավորների տնից է, նրա հոգին թունդ է առնում Քրիստոսի սիրով: Եվ նա գնում է սուրբ Գրիգորի լեռը, մկրտվում ու տասնհինգ տարի ճգնում այնտեղ մեծ տառապանքով[1]: Մարդիկ մինչև անգամ տեսնում էին բորբոքված* անճառելի լույսը նրա խցիկի երդիկից: Այնուհետև նա գնում է Դրազարկ [վանքը] և այնտեղ էլ վախճանվում:

Հինգ հարյուր ութսուն թվին Աբուլեթի որդի Իվանեն ասպատակում է Գառնին, բայց նրա զորքը հաղթվում է Խուրթի կողմից, որը հրամայում է նրանց գլուխները կտրել, եփել թանով, իսկ գանգերը դնել բարձր մինարեթի քարորմի շարքերում: Իվանեն հաջորդ տարի գալու ժամանակ նենգությամբ սպանվում է Դեմետրեի կողմից, որի որդի Թիրքաշը գնում է Շահի Արմեն** ամիրապետի մոտ ու նրանից առնելով Արշարունիքը՝ մեծ քաջությամբ ավերում է Վրաստանը:

Հինգ հարյուր ութսունութ թվին Գանձակը կործանվում է երկրաշարժից[2]:

ՀԲ. Դրանից յոթ տարի առաջ Շահի Արմենը, որը Սուքմանի թոռն էր, տիրում է Խլաթի երկրին և բազմաթիվ այլ քաղաքների, սպանում է իր տատին, որը սպանել էր որդիներին, և խլում է նրա իշխանությունը: Եվ երբ նա մեծանում է, տատը ուզում է նրան էլ խեղդել, բայց նա Աստծու օգնությամբ ազատվելով ու տիրելով տասներկու քաղաքների՝ իրեն հռչակում է Շահի Արմեն, որ իրենց լեզվով նշանակում է Հայոց թագավոր: Նա իրեն փեսա է դարձնում Սալտուխին[3] և խորհում է նրա միջոցով բարիք գործել իր երկրի համար: Նրա ժամանակ ապրում էր նույնպես բարյացակամ Ելտկուզ Աթաբե-

---

[1] Հին O.-ն ավելացնում է՝ և հանգամանք գիշերաց [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ և գիշերների հսկմամբ:

* ՄՕ.-ում փայլատակեալ բորբոքեալ՝ փայլատակված, բորբոքված:

** ՄՕ.-ում Շահի արմեն:

[2] Գանձակի մեծ երկրաշարժը եղել է 1139 թ. սեպտեմբերի 30-ին, որի մնասները մանրամասնորեն հիշում են Կիրակոս պատմիչն ու նրա ուսուցիչ Մխիթար Գոշը:

[3] Սալտուխը Կարինի ամիրան էր:

կը[1],- սրանք երեքն էլ Աստծու կողմից եղել են քրիստոնեաներ* և աշխարհաշեն: Այս Շահի Արմենը, գնալով Սասուն, պարծենում էր մի գյուղում: Եվ այդ բանը լսելով՝ երկրի տեր Վիգենը մի գիշեր գնում ու շրջապատում է այն տունը, որտեղ գտնվում էր Շահի Արմենը: Եվ երբ մեկը կատակով հարցնում է. «Ա՛յ Վիգեն, որտե՞ղ ես»: Նա երդիկից պատասխանում է ու ասում. «Ահա այստեղ եմ Աստծու շնորհիվ»: Եվ բռնելով Շահի Արմենին՝ նա տանում է իր ամրոցը և օրեր անց բաց թողնում սիրո երդմամբ ու դաշինքով:

Այդ ժամանակ նրա վրա է հարձակվում Պարսից զորավար Ելտեկիզը, որը պարտվելով վերադառնում է ամոթով: Շահի Արմենը Խետենեկից[2] խլում է Ամուկը, իսկ Վիգենից՝ Սասունը իր բոլոր վանքերի հետ միասին և վաթսուն տարի պահում խոր խաղաղության մեջ:

Նրա օրոք Միջագետքում սաստիկ սով է սկսվում: Այդ ժամանակ ազգությամբ հայ Ավետ անունով** մի քահանա, էշերին ցորեն բարձած տանում էր Ջրաղաց աղալու: Տառապյալների տեսքից սրտակոտոր լինելով՝ նա ամբողջ ցորենը բաշխում է աղքատներին, վաճառում է նաև էշերն ու նույն ձևով վարվում: Նա այլևս չի վերադառնում իր տունը, այլ հագնելով այծամազ [հագուստ]՝ շրջում է քաղաքներն ու գյուղերը՝ քրիստոնեական քարոզ կարդալով, քանի որ հանճարեղ խոսքեր ուներ, և Տերը նրան տվել էր հրաշքներ գործելու շնորհք: Նրա խոսքերի ազդեցությամբ զղջալով՝ շատերը ետ էին կանգնում չար գործերից: Նա խնամք էր տանում որբերի ու այրիների համար՝ իր միջնորդությամբ նրանց կարիքները հոգալու ունևորների հաշվին: Նրա համբավը տարածվում է, և շատ-շատերը գալիս, միանում են նրան: Նա հասնում է մինչև Մանծկերտ, և մեծ հանդիսավորությամբ նրան ընդառաջ է

---

[1] Ելտեկիզը Նախճավանի կողմերին տիրող էր, որն աթաբեկ էր կոչվում Պարսից սուլթանի համար խնամակալ ու հոր տեղ լինելու պատճառով:

* ՄՕ.-ում քրիստոսասեր:

[2] Խեդենեկը [ՄՕ.-ում Հետենեկ] Արծրունյաց թագավորների ցեղից էր, որոնք իրենց երկիրը Հունաստանին վաճառելուց հետո տիրում էին միայն մի մասին մինչև ԺԵ դարը:

** ՄՕ.-ում Ավետ անունով-ի փոխարեն առաքյալ անունը՝ ավետարան ուներ:

գալիս Շահի Արմենը և խնդրում է աղոթել ու նրան պատվով մտցնում է քաղաք: Եվ որովհետև նա հանդիմանում էր անառակ քահանաներին, այդ պատճառով նրան զրպարտում են շահի մոտ, թե նա հռոմեական թագավորի լրտեսն է, ու նրան քարկոծել տալիս, որի [դիակի] վրա երեք ցերեկ ու երեք գիշեր [մարդիկ] երկնային լույս էին տեսնում: Այդ բանը տեսնելով՝ շահը ավաղում է սրբի մահը և հրաման տալիս մեծարել նրա ոսկորները:

ՀԳ. Հինգ հարյուր իննսուն թվին Փերփերոժենը գրավում է Կիլիկիան, տնով ու որդիներով Կոստանդնուպոլիս տանում Թորոսի եղբայր Լևոնին, Տիրամոր արձանը, և այնտեղ էլ մեռնում է Լևոնը՝ Կոստանդնի որդին: Երկու տարի անց մեռնում է Փերոժը, և թագն առնում է նրա որդի Կիր Մանիլը: Նույն տարում մեռնում է Երուսաղեմի թագավորը. այդ երկուսն[1] էլ փորձանքի են գալիս որսի ժամանակ. Հունաց թագավորը՝ խոզի պատճառով, իսկ Երուսաղեմի թագավորը՝ նապաստակի:

Հինգ հարյուր իննսունչորս թվին Զանգի ամիրան[2] առնում է Ուռհան, իսկ երկու տարի անց այն նրանից խլում է Ջոսլինը, որը նրա տերն էր: Յոթանասուն օր անց նա սպանվում է թուրքերի կողմից, որոնք գալիս ու վերստին գրավում են քաղաքը: Մեռնում է քաջն ու հույժ հայասերը, որի վրա ողբում է Գևորգ վարդապետը՝ նրա խոստովանահայրը:

Իսկ երբ հասնում է* մեր թվարկության վեց հարյուր տարին, գալիս են Լևոնի որդիները՝ Թորոսն ու Ստեփանեն և մեծ իմաստությամբ ու քաջությամբ տիրում իրենց հայրենի Կիլիկիային՝ կոտորելով Հունաստանի զորագլուխ Անդրոնիկոսին, որը գտնվում էր այնտեղ տասներկու հազարանոց զորքով: Այդ բանը լսելով՝ Մանիլը մեկ-երկու անգամ վարձում է Մասուտ[3] սուլթանին՝ նրանից վրեժ լուծելու համար: Եվ սուլթանի երկրորդ մուտքի ժամանակ նրանց պատում է Տիրոջ ահը,

---

[1] Փերփերոժանը կամ Փերոժը [ՄՕ.-ում Պերփերուժան] Հովհ. Կոմնենոս կայսրն է, իսկ Երուսաղեմի թագավորը՝ Ֆուլքը, որոնք մեռան 1142 թ.:

[2] Էմատ-էդ-դին Զանգի Ա.- ն Դամասկոսի սուլթանն էր՝ հռչակված Եդեսիայի առմամբ, որը ողբերգեց Ներսես Շնորհալին:

* ՄՕ.-ում է վերջանալ՝ վերջանալիս:

[3] Նա Իկոնիոնի Մասուտ սուլթանն է, որն իշխել է 1117-1155 թթ.:

և [նրանք] փախչում են առհասարակ՝ կոտորելով միմյանց ու այնտեղ թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը: Քանի որ նրանց զորագլուխ Ազուպը* երեք հազարով Անավարզայից ուզում էր գնալ Անտիոքի կողմերը, նրա** վրա է հարձակվում Թորոսի եղբայր Ստեփանեն և կոտորում բոլորին: Եվ այդ գույժի ձայնը բանակում լսելիս [բոլորն] առհասարակ դողում են, և նրանցում չունչ ու զորություն չի մնում: Եվ հազիվ ազատվելով՝ սուլթանն ընկնում է իր որջը և մեռնում՝ թագը տալով իր որդի Խլիճ Ասլանին, վեց հարյուր չորս թվին:

Այդ նույն ժամանակ ֆրանկները գրավում են Ակաղոն քաղաքը: Նույն թվին էլ Մանիլը գալիս է Կիլիկիա, սիրով նվաճում Թորոսին և վերցնելով նրան ու ֆրանկների զորքը՝ գնում է Հալեպի վրա: Եվ ստանալով աթոռի մասին լուրը՝ նա վերադառնում է տուն, բայց ճանապարհին թուրքերը նրանցից տասներկու հազարին գլխատում են:

ՀԴ. Իսկ Վրաց թագավոր Դեմետրեն, թագավորելով երեսուներկու տարի, վախճանվում է, և թագն առնում է նրա որդի Դավիթը՝ կորովամիտ ու բարեսեր [մի մարդ]: Նա բանտից հանում է իր հոր կողմից շղթայված Թիրքաշին, նշանակում զորագլուխ և մեկ ամիս անց մեռնում է: (Ոմանք ասում են, թե նա զոհվում է Սմբատ և Իվանե Օրբելյանների դավելուց՝ նրանց փոխարեն Թիրքաշին նշանակելու պատճառով, նախօրոք պայմանավորվելով Դավթի եղբայր Գևորգի հետ՝ իրենց զորավար դնելու համար)[1]: Եվ թագն առնում է Գևորգը վեց հարյուր հինգ թվին:

Այդ օրերի ընթացքում Շահապիվանում հայտնաբերվում են Գնելին սպանողների մարմինները՝ անփուտ հագուստներով ու արյունաշաղախ մարմնով, ինչպես որ սպանվել էին՝ ըստ Ներսեսի[2] անեծքի:

Վեց հարյուր տասը թվին Վրաց Գեորգի թագավորը Անին խլում է Փատլուն ամիրայից, որը փոխարինել էր Շատտատ ա-

* ՄՕ.-ում Նազուբ՝ Ցաղուբ:

** ՄՕ.-ում որոց՝ որոնց:

[1] Փակագծված հատվածը Բ. Օ.-ում չկա [ՄՕ.-ում այն փակագծված չէ]:

[2] Գնելին սպանվեց Շահապիվանում, նրան սպանողներից մեկը՝ Բասենում, մյուսները՝ այլուր: Իսկ թե դավաճաններից ոմանք նույն օրը սպանվեցի՞ն այնտեղ, հնավանդ պատմությունների մեջ չենք գտնում:

նունով իր եղբորը: Եվ հիսուն օր անց Շահի Արմենը մեծ զորքով գալիս է սոնքերի կողմից պատժված ու վնասված քաղաքի վրա: Այդ բանը լսելով՝ Գեորգին այնտեղից վերադառնում և սրի է քաշում նրանց, որոնց քանակը ոչ ոք չի կարող իմանալ, բայց ձերբակալվածները քսան հազար* էին: Թագավորը Անիում թողնում է Սադուն իշխանին[1], որի մասին կարծիք կար, թե նա ապստամբության [է նախապատրաստվում]՝ քաղաքի պարիսպները խնամքով[2] ամրացնելու պատճառով: Այդ բանն իմանալով՝ թագավորը նրան զրկում է պաշտոնից: Եվ նա, սրբտակոտոր լինելով, գաղթում, գնում է Ելտկուզի մոտ, որին խաբեությամբ բռնելով՝ Շաքեի[3] Էրիսթավը[4] այնտեղից նրան բերում է արքայի մոտ, և նրան սպանում են: Նրա տեղը դնում են իշխան Սարգիս Զաքարյանին: Չնայած Ելտկուզը զայրանում է, բայց ի վիճակի չի լինում ինչ-որ բան անելու, որովհետև չորս հազար պարսիկ էր զոհվել Սադունի հետ միասին:

Իսկ վրաց թագավորը իր մոտ է հավաքում կովկասյան զորքը և գալիս, վերցնում է Դվինը՝ բնակիչներին խոտագույնս կոտորելով սրով ու հրով, բացի այնտեղ եղող քրիստոնյաներից: Հրամայում է մինարեթից իջեցնել թանի մեջ եփած զանգերը, զարդարել ոսկեթել հանդերձանքով, դնել դագաղների մեջ, բարձել մահմեդական կրոնավորների** ուսերին ու բոկոտն տանել մինչև Տփղիս՝ իր հնագույն մայրաքաղաքը, վեց հարյուր տասներկու թվին: Այդ բանը լսելով՝ Ելտկուզը գալիս է այրված ու քանդված Դվին, իսկ այնտեղից խոցոտված ու մորմոքված սրտով, իբրև կատաղի գազան, գնում է Մրեն և այնտեղ այրում է ամրոցը, ուր հանուն Քրիստոսի ողջակիզվում է մոտավորապես չորս հազար հոգի: Նա վերադառնում է Գաղի դաշտը և հրամայում է այրել հաշակավոր

* ՄՕ.-ում քառասունմեկ հազար:

[1] Սադունը հուժկու իշխան էր Արծրունյաց տոհմից:

[2] Հին Օ.-ում ի սրտատրուքութեամբ [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ սրտատրտունջությամբ:

[3] Վրացիների մոտ էրիսթավը նշանակում է նախարար կամ մեծ իշխան:

[4] Շաքե են անվանում Աղվանքի քաղաքն ու գավառը, որոնք այժմ մտնում են Դաղստանի կուսակալության մեջ:

** ՎՕ.-ում մուրի է. «բառնայ ի յուս մուրեցաց», իսկ ՄՕ.-ում մուղրի. «բառնայր ի յուս մուղրեաց»:

խաչը, որի պատճառով Տիրոջ բարկությունից նրանք գիշերցերեկ պատժվում են թունավոր օձերի կողմից: Իսկ հետո ա-հաբեկվելով Վրաց թագավորից՝ նա փախչում է, այնտեղ թողնելով ունեցվածքն ու գերիներին, սակայն գրգռում է Ովվիզ* սուլթանին՝ Մահմուդի որդի Ալանին[1] և բերում է Անի: Նա չորս տարի քաղաքը պահում է տագնապի ու նեղության մեջ, մինչև որ Վրաց թագավոր Գեորգին, ողորմելով բնակիչներին, իր մոտ է կանչում սուլթանին և Անին տալիս է նրան, որովհետև նա այլևս ի վիճակի չէր անօրենների բազմությունից պաշտպանել քաղաքը:

Հե. Այն ժամանակ Հայոց աթոռը, շրջելով բազմաթիվ վայրերում՝ Կարմիր վանքում, Շուղրում, Ովքում, գնում, դադար է առնում այն դղյակում, որ կոչվում է Հռոմկլա[2]՝ հռոմ աբեղայի այնտեղ բնակվելու պատճառով, որից դղյակն առել էին տաճիկները, նրանցից՝ Հայոց Վասիլ իշխանը, իսկ նրանից՝ Ֆրանկները: Որսի ժամանակ հանդիպելով որոգայթի՝ իշխանն ընկնում է տաճիկների ձեռքը: Նրան տանում են Հալեպ, և նա այնտեղ էլ մեռնում է: Իսկ նրա կինը, որ Հռոմկլայում էր, [մարդ] է ուղարկում Ովք, բերել է տալիս պատրիարքին և դղյակը հանձնում է նրան՝ ասելով. «Թե իմ որդին ծովի այն կողմում է, իմ ծնողների մոտ, գնամ, եթե նա կենդանի լինի, կուղարկեմ քեզ մոտ, և դու դղյակը տուր նրան, որպես ճշմարիտ ավանդապահի, իսկ եթե ոչ՝ լավ է դղյակը քոնը լինի, քան օտարներինը»: Եվ գնալով ուղարկում է որդուն, որին շատ ունեցվածք տալով՝ վերադարձնում են այնտեղից, որովհետև նա ինքը չէր համարձակվում մենակ բնակվել այլազգիների մեջ, քանզի թուրքերը տիրել էին շրջակա բոլոր գավառներին: Եվ ժառանգվում է Հայոց պատրիարքության աթոռը, որը Զոչլին իշխանի բարեպաշտ կինը, հոգեպես ազդվելով, տալիս է երկու հարազատ եղբայրների՝ տեր Գրիգորին և Ներսեսին:

Վեց հարյուր տասնհինգ** թվին վախճանվում է տեր Գրիգորը, և նրան հաջորդում է տեր Ներսեսը: Մանիլը նրանց մոտ [մարդ] է ուղարկում հավատի դավանության համար, նրանք գրավոր ձևով տալիս են շատ հաջողակ ու բոլորից հաճելի այն դավանությունը, որ մենք ունենք: Երկու ազգերը կամենում են միաբանություն հաստատել միմյանց հետ, բայց գործը անկատար է մնում, ինչպես որ ընդարձակ կերպով ցույց են տալիս մատենագիրները:

Նույն տարում չափազանց մեծ երկրաշարժ է լինում, և կործանվում է Եղնկան[1]:

Այն ժամանակ Կապանի[2] մնացած դղյակները՝ Գրհամը, Գեղին, Կաքավաբերդը, գրավում են այլազգիները՝ մեր սաստիկ մեղքերի պատճառով:

Այդ օրերի ընթացքում չարչարանքով զոհվում է պատանի Հովսեփը[3]՝ քրիստոնյաների միսիթարության համար հասուն, քաղցրաճաշակ, գեղեցիկ պտուղը, ահեկան ամսի քսանին[4] և թաղվում է Հավուրթառում[5]: Նա ազգությամբ պարսիկ էր, Դվինի կողմերից, Նորաշեն կոչվող գյուղից:

Այդ ժամանակ Ալիկա Գևորգը[6] Հռոմ գնալու ժամանակ մեռելներից հարություն է տալիս իր առաջնորդ Գրիգորին, որին սպանել էին ելուզակները Ունկոաց գավառում: [Գրիգորը] մեղադրում է նրան, «Թե ինչո՞ւ ինձ, որ գտնվում էի ա-

* ՄՕ.-ում Ովվի:

1 Սելջուկ Ալանը Գարսից սուլթան էր:

2 Հռոմկլան կամ Ուռում-գալեն Եփրատի աջ ափին է, Բերիճիկի հյուսիսում: Այդտեղ բնակվելու հետևանքով Ներսես Շնորհալին կոչվեց նաև Կլայեցի:

** ՄՕ.-ում վեց հարյուր տասնյոթ:

1 Հին Օ.-ն ավելացնում է՝ ի գաւառին Եկեղեաց [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ Եկեղյաց գավառում:

2 Կապանը Բաղաց, այն է՝ Սյունյաց թագավորությունն է, և հիշատակված ամուր բերդերը նրան են պատկանում:

3 Այդ Հովսեփը Նոր վկա է կոչվում, որի վարքը գրել է Շնորհալին՝ նրա երբեմնի հյուրընկալն ու խրախուսողը:

4 Հին Օ.-ն ավելացնում է. «վկայեաց Քրիստոսի աստուածութեանն, և վշտակատուտ չարչարանօք և աշխարհալուր մահուամբ կատարեցաւ ի Քրիստոս» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ վկայեց Քրիստոսի աստվածությունը և վշտալից չարչարանքով ու աշխարհալուր մահվամբ վախճանվեց:

5 Կամ Հայոց Թառ, որը Գառնիի մոտ գտնվող հռչակավոր մենաստանն է, Գեղամա ծովի արևմտյան կողմում:

6 Հայսմավուրքում ահեկան ամսի 27-ին պատմվում են աչիկացի, այսինքն՝ կույր Գևորգ Արճիշեցու կյանքի մանրամասն դեպքերը. նա ուխտի գնալիս սրախողխող է լինում ունկարների երկրում և ուխտը կատարելուց հետո բուժվելով՝ վերադառնում ու բնակվում է Անիի եկեղեցիների դռների մոտ:

նասելի բարության մեջ, վերադարձրիր այս աշխարհի թշվառությանը»:

Հռոմայրում հռչակավոր սուրբ նշանի կողմից հրաշք է կատարվում. երբ բերում են ի ծնե կույր մի երեխայի և աստվածամուխ զենքը դնում աչքերի տեղում, իսկույն պատվում են ակնախոռոչները և շատ արյուն հոսելուց հետո կազմավորվում են ամենևին անարատ աչքերը՝ ի փառս խաչված Աստծու: Դա կատարվում է Ուճունում (և վանահոր անունը Պետրոս էր, երբ տեղի է ունենում այդ դեպքը)[1]:

Վեց հարյուր քսանմեկ թվին վախճանվում է Ներսես պատրիարքը՝ յոթ տարի պաշտոնավարելուց և յոթ եպիսկոպոս ձրի ձեռնադրելուց հետո՝ անվանի ու ընտիր մարդիկ, որը վարդապետ, որը փիլիսոփա: Եվ պատրիարքական քոռն առնում է իր եղբորորդի Գրիգորը Նորագնի[2] օգնությամբ: Իսկ մյուս եղբորորդի Գրիգորեսը, որը նաև Ապիրատ էր կոչվում, գնում է Լամբրոն և ղեկավարում Տարսոնի վիճակը [թեմը]:

ՀԶ. Վեց հարյուր քսաներեք թվին Գևորգը Իվանե ամիր սպասալարի հորդորանքով Անին գրավում է երկրորդ անգամ, որպեսզի ինքը նստի Անիում և քրիստոնյաներին գերությունից ազատի: Շահնշահ[3] ամիրային արքան տանում է իր հետ, և նա այլևս չի վերադառնում այնտեղից: Եվ այդ բանը լսելով՝ ի մի են հավաքվում բոլոր թուրքաստանցիները և իրենց հետ վերցնելով Ալփասլան[4] կոչեցեալ սուլթանին՝ գալիս են Անի ու ավերում Շիրակի տունը: Իսկ Իվանեն ուզում էր քաղաքը տալ թուրքերին, բայց դա նրան չի հաջողվում, որովհետև քաղաքացիները [նախօրոք] իմանում են և զգուշանում: Սուլթանն ու աթաբեկը [թագավորահայրը] սրտակոտոր վերադառնում են, և երկուսն էլ մեռնում են մի տարում:

Այդ նույն ժամանակ Կարսի բանտից դուրս է ելնում մեծ իշխան Ապիրատը և գալիս է Անի: Նա քաղաքի եպիսկոպոսի՝ տեր Բարսեղի եղբայրն էր, որի աղաչանքով Վրաց թագավորը ազատում է նրան և փոխարենը ամիրային տալիս է տասնյոթ հազար դահեկան: Այդ պահին Իվանեն գրսևորում է իր չարությունը. իրենց թագավորի եղբորորդի Դեմներին և ազատներից շատերին իր կողմը գրավելով՝ որոշում է սպանել թագավորին, որը Սախատայում[1] գտնվում էր ապահովության մեջ: Մի մարդուց այդ մասին իմանալով՝ թագավորը փախչում է Տփղիս, որովհետև քիչ մարդիկ ուներ: Այնտեղ* նրա շուրջը հավաքվում են շատերը՝ թողնելով իրենց չար մտադրությունը: Եվ երբ հզորանում է թագավորի կողմը, նա ցանկանում է գնալ այն ապստամբների վրա, որոնք Սախատայից էին ու փախել էին իրենց ամրոցները և ապա մտել Լոռե, բացի Լիպարիտից, որն իր երկու որդիների հետ մեկնել էր Պարսկաստանի կողմը: Թագավորը խլում է Օրբելյանների ամբողջ գանձը, և բոլորն ընկնում են թագավորի ոտքերը՝ իր եղբորորդին, նաև ուրիշները, մինչև անգամ ինքը՝ Իվանեն, որի աչքերը նա կուրացրել էր և սպանել նրա կրտսեր որդուն՝ Քավթարին ու Լիպարիտի որդի Ինեին: Եվ այդպիսով չքանում են բոլոր չար խորհուրդները վեց հարյուր քսանվեց թվին:

Իսկ Արփասլան սուլթանին փոխարինում է Տուղրիլը, Ելտկուզին՝ Փալհավանը[2], որը տիրում է խորին աշխարհին, իսկ Խզլասլանը՝ վերին աշխարհին[3], որոնք նրա որդիներն էին: Այդ օրերի ընթացքում Կեչրորի Ղարաչա ամիրայի հրամանով ավազակներից առնվում է Ծառաքարը[4], որը նա վաճառում է Խզլասլանին մեծաքանակ ոսկով: Նա այնտեղ բնակեցնում է վնասակար մարդկանց, որոնք գիշեր-ցերեկ չէին դադարեցնում արյունահեղությունը, մինչև անգամ քրիստոնյաներին գցում էին խավար անդունդը և մեռցնում սովով ու առաջուց մեռածների զարշահոտությամբ, իսկ հինգ անվանի

---

[1] Բ. Օ.-ում այս փակագծվածը չկա [ՄՕ.-ում այն փակագծված չէ]:

[2] Նուր-էդ-դին Մահմուդը Զենկիի որդին ու հաջորդն է:

[3] ԻՆԾ թվում է՝ այս Շահնշահը Անիի Փատլուն ամիրայի որդին է, Շաղգայան տոհմից:

[4] Ալփ Արսլանը Պարսից սելջուկյան Ասլան շահն է:

[1] Սախատան հիշում է նաև Ստեփանոս Օրբելյանը՝ մանրամասնորեն պատմելով այնտեղի անցքերի մասին և տեղը կոչում է նաև Դարպաս-ազարակ, որը գյուղ է Գուգարքի Մոբոփոր գավառում, այժմյան Սոմխեթի վիճակի մեջ մտնող Նուլավերը կամ Բորչալուն:

* ՄՕ.-ում ավելացնում է **Աստուծոյ խնամուքն**՝ Աստծու հոգածությամբ:

[2] Փալհավանն ու Գրզրլ Արսլանը Ելտկուզ աթաբեկի որդիներն են:

[3] Խորին աշխարհը Պարսից կողմերում է, վերինը՝ մեր կողմերում:

[4] Ծառաքար վանքը և Կեչրոր քաղաքավանը Այրարատի Աբեղյան գավառում են, Բասենի կողմերում, Երասխաձորին մոտիկ:

կրոնավորների դառնակսկիծ վերքերով ծաղրի ենթարկելով և դանակները խաչանիշ խփելով՝ սպանում են*:

ՀԷ. Վեց հարյուր քսանութ** թվին Երուսաղեմի թագավորը երեք հարյուր հեծյալով սուրբ խաչի զորությամբ Երուսաղեմի դռանը ջարդ է տալիս Սալահադինին[1], որը հարյուր քառասուն հազարով, վաթսուն հազար ուղտերի ջուր բարձած (որոնք միշտ կրում էին գետերից ու աղբյուրներից)[2], եկել էր գրավելու Երուսաղեմը: Առաջ նրա անունը Ցուսուֆ էր, որը Էուբի որդին էր՝ Դվնացի*** տոհմից: Նա մեծանալով կոչվեց Սալահադին, որ նշանակում է հավատի խաղաղություն[3]:

Վեց հարյուր քսանինը թվին Գեորգին երկրից վերացնում է գող ու ավազակ, որովհետև ամբողջ զորքի համար կարգ է սահմանում մեծ ու փոքր հանցանքների համար բոլոր մարդկանց անողորմաբար կախել փայտից. կախեցին նաև պատվավոր մարդկանցից շատերին: Գտնելով նրանց ունեցվածքները՝ տանում, կախում էին նրանց պատժափայտերից, կախում էին նույնիսկ անասուն, շուն, մուկ, և բոլորին ահ է պատում, ու տիրում մեծ խաղաղություն:

Այն ժամանակ մեռնում է Մանիլը, և նրա կինը, որը Անտաքի բրնձի [իշխանի] դուստրն էր, ցանկանում է ֆրանկ ամուսին առնել և սպանել իր որդի Ալեքսին, որին տվել էին թագը: Տղան փախչում է եկեղեցի: Այդ մասին հայտնում են Մանիլի ազգական Անդրոնիկոսին, որը գալիս, սպանում է կայսրին****, որ ցանկանում էր առնել թագուհուն: Նա կոտորում է

* ՄՕ.-ն ավելացնում է. «որոց պատիւ տօնին խառնեսցի ի տօն մեր Լուսաւորչին Գրիգորի»՝ որոնց պատվին կատարվող տոնը խառնվում է մեր Գրիգոր Լուսավորչի տոնին:

** ՄՕ.-ում վեց հարյուր քսանյոթ:

1 Սալահ-էդ-դինը կամ Սալադինը Էյուբյան Քուրդ տոհմից է, որը հայտնի է իր ազնվահակալությամբ: Նա 1187 թ. նվաճեց Դամասկոսը, Հալեպը, Երուսաղեմը: Նրա հորը Դունեցի կոչող որևէ երաշխավոր չգիտեմ:

2 Փակագծված է հին Օ.-ում, իսկ նոր Օ.-ում ո՛չ [փակագծված չէ նաև ՄՕ.-ում]:

*** ՄՕ.-ում Ցուսուֆի փոխարեն Ռուսյֆ է, Դվնացի-ի փոխարեն՝ Դանացի:

3 Բ. Օ.-ում խաղաղության հավատ:

**** ՎՕ.-ում զսանտասան, ՄՕ.-ում զՍանտասան: Դա սանդասան է, որ նշանակում է կայսր, կայսրուհի, փառավոր իշխան:

նաև այն ֆրանկներին, որոնք գտնվում էին քաղաքում: Նավ բարձրանալով՝ նրանք փախչում էին, իսկ նա, նավթ լցնելով նավերի վրա, այրում է երեսուն հազար մարդու, սպանում է նաև տղային և խլում թագը: Նա ուղարկում և կանչում է Փիսիկ անունով թագավորազն մի մարդու, որպեսզի նրան էլ սպանի, իսկ նա խրոխտանալով սպանում է կանչողին և բարձրաձայն գոռալով՝ գնում է սուրբ Սոփի: Քաղաքը ոտքի է ելնում և չարաչար մահով սպանում է Անդրոնիկոսին ու նրա երկու փոքրահասակ անմեղ երեխաներին ծովում խեղդում:

Վեց հարյուր երեսունմեկ թվին Խարաչան, որը գրավել էր Մառաքարը, կռանով ջարդում է այսպես կոչված Գորոզո խաչը: Դրանից նրա սիրտը ահ է ընկնում, և նա հանկարծակի թողնում է իր տունը, Կեչրորը, Ուխտիքը, Երասխի ամբողջ ձորը և կնոջ ու որդիների հետ գնում Դվին: Նա տեսնում է մի ահավոր մարդու, որը նրան ասում էր. «Ես եմ Գորոզո խաչը, որ դու ջարդեցիր, և ահա ես քեզ սպանում եմ քո սիրելի Շահ Արմենի ձեռքով»: Նա պատմում է տեսիլքը և հաջորդ օրը բրոնությամբ ազատվելով՝ գնում է, թեև նրան արգելում էին գնալ տեսիլքի երկյուղի պատճառով, մինչև անգամ փակում են դարպասները, բայց պարսպից իջնելով՝ երկու ձիով[1] նա գնում է Մանծկերտ ու կանգնում Շահի* առաջ, որը նույն պահին վեր կենալով՝ դանակը խփում է նրա սրտին ու սպանում:

Նույն տարում Սարգիս անունով ոմն խաչենցի[2] կար Գանձակում և հարկ [խարաճ][3] էր հավաքում, իսկ մի պարսիկ ավազ ուրբաթ օրը խաչում է նրան պարսպի վրա՝ ասելով. «Խաչակից եղիր քո Քրիստոսի հետ», որը լսելով՝ նրա իշխանները պարսիկին իրենց մոտ են տանում և չարաչար մահով սպանում:

Այդ օրերին տաճիկ տոհմից Հորդանան անունով մեկը մեծ հանդիսավորությամբ նահատակվում է Կարին քաղաքում:

1 Ջնիբա [ՄՕ.-ում ջնիփա], արաբերեն ճենիբա, ճենիբա, որ երկրորդաբար նշանակում է նժույգ: [Իսկ ըստ «Միջին հայերենի բառարանի»՝ «եղակի ձի» (հ. 2, էջ 295)]:

* ՄՕ.-ում շահի:

2 Նա Գանձակի ամիրայի հարկահանն էր:

3 Խարաճ արաբերեն նշանակում է հարկ, մարդահարկ: [Ըստ «Միջին հայերենի բառարանի»՝ արաբ., պրսկ. xarj՝ «ծախս, ծախքի փող» (հ. Ա, էջ 332)]:

Եվ նրա նշխարքները դրվում են իր ազգական[1] Հովսեփի ու Սահակի նշխարքների հետ:

ՀԸ. Վեց հարյուր երեսուներեք թվին մեռնում է Վրաց Գեորգի թագավորը, որը որդի չուներ, իսկ Դավթի որդի Դեմետրեն քանի որ կույր էր և ամորձատված, թագն առնում է Գեորգիի դուստր Թամարը, որի համար ամուսին են բերում Ռզոց թագավորի որդուն՝ Սոսլանին, որն առնում է Դվին քաղաքը: Հաջորդ տարում անզավակ մեռնում է Շահի Արմենը, և նրա երկրում շատանում են ավերածությունը, կոտորածն ու գերությունը շրջակա ցեղերի կողմից: Եվ որովհետև Վիգենի թոռ Շահնշահը՝ կաթողիկոս տեր Գրիգորի քրոջորդին, շահի մահվան ժամանակ նրա մոտ էր գտնվում, վերցնելով իր մարդկանց՝ գալիս*, հասնում է Սասուն, որտեղ նրա ձեռքն է ընկնում Բեկթամուրը, որը շահի ամբողջ տան իշխանն էր: Նրանից վերցնում է այն բերդը, որ Թառձյան[2] էր կոչվում և ուխտով նրան բաց է թողնում: Բայց Բեկթամուրը շահի աթոռին տիրելուց հետո դրժում է ուխտը և նրանից խլում է ինչպես Թառձյանը, այնպես էլ ամբողջ Սասունը ու հարկ է դնում վանքերի ու եկեղեցիների վրա:

Վեց հարյուր երեսունչորս թվին բրինձը [իշխանը] բռնում է Ռուբենին, որին ազատում է իր եղբայր Լևոնը՝ Ռուբենի որդի Կոստանդնի, նրա որդի Լևոնի, նրա որդի Ստեփանոսի որդին, որը տիրելով յոթանասուներկու բերդերի, հզորանում է Հունաստանի ու Պարսկաստանի նկատմամբ և հարկի տակ է դնում միջերկրայքի սուլթան Ղլիճ Ալանին[3]:

Վեց հարյուր երեսունհինգ թվին անեցիները վերցնում են Մառաքարը՝ տեր Բարսեղի հայրենիքը, անխնա կոտորելով այնտեղ եղողներին, բացի կանանցից ու մանուկներից: Այդ բանը լսելով՝ Դվինի** Ալիշեր ամիրան փետում է մորուքը և սև հագնում այնտեղ գտնվող իր կնոջ, որդիների և կոտորված

[1] Այսինքն՝ ազգակիցներ [ՄՕ.-ում ազգականներ] և ոչ թե ազգական, ինչպես որ 146-րդ էջում է:

* ՎՕ.-ում գալիս բառաձևը չկա, իսկ ՄՕ.-ում կա:

[2] Թառձյանը կամ Հովյանը հիշատակվում է Տարոնում, որը այս պատմության ժամանակաշրջանում իշխանությամբ հավասարազոր էր Սասունին:

[3] Ղլիճ Ալանը Իկոնիոնի սուլթանն էր:

** ՄՕ.-ում Դունայ:

զորքի համար, իսկ քրիստոնյաները փառավորում էին սուրբ Երրորդությունը*:

ՀԹ. Իսկ Հունաստանում թագավորում էր Փիսիկը՝ նույն ինքը Սահակը, և սկսում է հայադավան ազգերի հալածանքներն ու չարչարանքները, որպեսզի նրանք դառնան դեպի իրենց կրոնը: Դրա համար պատրիարք Գրիգորը** նրան աղերսագիր է հղում, որպեսզի նա խաղաղվի Աստծու ժողովրդի հետ: Բայց թագավորը չի լսում նրան, այլ շատերին դարձնում է դեպի իր կրոնը, իսկ ուրիշներին էլ հալածում է, ուր կային երեք եպիսկոպոսների աթոռներ և հազար վեց հարյուր քահանաներ, որոնց հավաքելով մի տեղում նեղում է նրանց, որոնցից քչերը անձեռնմխելի պահեցին իրենց հավատը: Այսպիսի աղետների մասին տեր Գրիգորը գրում է դեպի արևելք, բայց խոժոռված[1] սրտով ոչինչ չեն կարողանում անել: Նույն պատրիարքը Գրիգոր անունով մի եպիսկոպոս է ուղարկում Հռոմի պապի մոտ այն վտանգի պատճառով, որ հայերը կրում էին հույների կողմից, որպեսզի խնդրեն աղոթքներ ու օրհնություն, ինչպես իր նախնիները: Նրան շատ է մեծարում պապը, թույլ է տալիս պատարագ անել, ինքը հաղորդվում է (!) ու նրան հագցնում քահանայապետական*** հանդերձ: Եվ նա իր մոտ է հավաքում բոլոր պատվավոր մարդկանց՝ Ալամանների կայսրին, Անկլիզների թագավորին, Փռանցեզների թագավորին՝ իրենց ընտանիքներով, Ալամանքի պատրիարքին, որն ուներ քսանհինգ հազար ձիավոր, Սպանիայի գլխավոր եպիսկոպոսին, որն ուներ քսան հազար ձիավոր, սուրբ Հակոբի արքեպիսկոպոսին, որը տիրում էր հինգ հազար ձիավորի, Միլան մեծ քաղաքի մեծ արքեպիսկոպոսին, որը տիրում էր երեսունվեց հազար ձիավորի, իսկ այս կողմից՝ Երուսաղեմի պատրիարքին: Եվ նրանց հետ խորհուրդ անելով՝ սուրբ առաքյալների հրամանով նրանց անունից գիր է գրում, «թե Հայոց պատրիարքը ծովի այն կողմում իշխանություն ունի Հայոց,

* ՄՕ.-ն ավելացնում է՝ *ի փառս իւր*՝ իր փառքի համար:

** ՄՕ.-ն ավելացնում է. «եղբորորդի տեառն Ներսեսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց»՝ Հայոց կաթողիկոսներ տեր Ներսեսի և Գրիգորի եղբորորդին:

[1] Բոլոր օրինակներում *խաշոքեալ* [բայց ՄՕ.-ում այդպես չէ, այլ *խոժոռեալ*]:

*** ՄՕ.-ում քահանայական իշխանություն:

հունաց և քրիստոնյա մյուս բոլոր ազգերի վրա, ինչպես որ մենք տիրում ենք այս կողմին՝ նրա երկնավոր ու երկրավոր բանալիներով: Եվ քանի որ երկար ճանապարհ կա իմ և իմ եղբոր՝ Հայոց պատրիարքի միջև, նրան ուղարկեցի իմ վակասը, պսակը, կոշիկը, որպեսզի նա դրանք հագնի և պատարագ անի մատանով հանդերձ»: Իսկ Գիգոր եպիսկոպոսին ասում է. «Տար ու հազցրու պատրիարքին, և այսուհետև թող նա ունենա իշխանություն* հավիտյանս հավիտենից»[1]:

Զ. Վեց հարյուր երեսունվեց թվին, երբ Սալահադինի վաճառականները, ընտիր ապրանքը բարձած չորս հարյուր ուղտերի, անցնում էին Պաղեստինով, Տրապոլիսի կոմսը այդ մասին հայտնում է Երուսաղեմի թագավորին և նրանից թալանելու հրաման ստանում: Այդ բանը լսելով՝ Սալահադինը մեկերկու անգամ սուրհանդակ է ուղարկում և խնդրում գոնե տալ միայն իր ծառաներին, հիշեցնելով երդման ուխտը, որ կար միմյանց միջև, բայց նա չի լսում**: Այդ պատճառով Սալահադինը զայրացած գնում է նրա վրա: Եվ Հերմոն դաշտում երեսունվեց հազար մարդով նրա դեմ դուրս է գալիս Երուսաղեմի թագավորը և Տրապոլսի կոմսի նենգության պատճառով, դաղար առնելով մի անջուր բլուրի վրա, շրջապատվում է թուրքերի կողմից և գերվում դաժան պարտությունից հետո: [Նրանք] գրավում են ծովեզրյա բոլոր քաղաքները և ապա Երուսաղեմը, որի բնակիչներին չի թողնում կոտորել, այլ [հրամայում է] վաճառել՝ տղամարդկանց համար գին նշանակելով տասը դահեկան, կանանց համար՝ հինգ: Իսկ հետո նրանք թող վերցնեն իրենց ամբողջ ունեցվածքը և գնան, ուր որ կկամենան. Նրանք այդպես էլ անում են: Իսկ անօրեն կոմսը, որ գաղտնի կերպով միաբանվել էր Սալահադինի հետ, Տիրոջ կողմից խփվելով, մեռնում է: Եվ Սալահադինը, հարձակվելով նրա բերդի վրա, պահանջում է նրա կնոջն ու բերդը: Կինը երևելի մարդկանցից պատանդներ է պահանջում, որպեսզի գնա նրա մոտ և դառնա նրա կինը: Վերջինս, նրանց ներս առ-

* ՄՕ.-ում պատիվ իշխանության:

[1] Այս մեծաբանությունները նման են դաշնագրի ոճին, բայց իրականում ստույգ են միայն մեր հայրապետի հետ թղթակցությունն ու ընծաների առաքումը:

** ՄՕ.-ում չլսեցին:

նելով, կտրում է նրանց գլուխները և դուրս գցում, որից վախենալով՝ նրանք հեռանում են: Լսելով Ալամանքի մեծ թագավորի գալստյան համբավը, որ գալիս էր սուրբ գերեզմանի ու բոլոր քրիստոնյաների սգո գույժով, դեպի ծովն է ուղարկում հարյուր հիսուն հազար հեծյալի, որոնք գալով պաշարում են Աքա քաղաքը, իսկ ինքը մեծ բանակով գնում է Հունաց աշխարհը ու նրանցից գրավում Վեռիա* քաղաքը, Փիլիպուպոլիսը[1], Անդրիանուպոլիսը և բազում այլ բերդեր ու ավաններ: Նախապես իր որդուն ուղարկում է Կոստանդնուպոլսի վրա, իսկ մերոնք խառնվում են կիռ** Սահակի կողմից հալածվածներին և նախանձից բորբոքվելով՝ նրանց մեծ ավերածություններ են պատճառում:

Իսկ կոստանդնուպոլսեցիները գթություն են հայցում և տալիս են ոսկու հարյուր, արծաթի երկու հարյուր կենդինար ու ձրի անցկացնում են զորքի ամբողջ բազմությունը, որ վերցրել էին Բլախքից2 ու բուլղարներից շատ գանձերի հետ միասին նրանց երկրներով անցնելու ժամանակ: Իսկ Խլիճ-Ասլանի որդիները, չլսելով իրենց հորը, Ուճին*** Թուրքի օգնությամբ պատերազմում են նրանց դեմ, երեսուներեք օր չհեռանալով նրանցից, մինչև որ կոտորվում են իրենց թշնամիների կողմից: Նրանք այնքան սոված են մնում, որ տասնութ օր հողի բերքից բերանները բան չեն դնում, Կոնում**** մինչև անգամ վաթսուն հազար ձի են ուտում, և գրավելով Կոնը՝ կոտորում է բոլորին ու այնտեղ նստում*****: Եվ երեք անգամ սուրհանդակ է ուղարկում Լևոնի մոտ, բայց չի հասնում****** նրան: Իսկ երբ հասնում է Կոն[1], գրություն է գալիս Գրիգոր

* ՄՕ.-ում Վեռոն:

[1] Թրակիայի (Ռումելի) Վերիա և Փիլիպպուպոլիս քաղաքները այժմ կոչվում են Գարավերիա և Ֆիլիփփի:

** ՎՕ.-ում կիռ՝ տեր, իսկ ՄՕ.-ում [illegible]:

[2] Բլախքը Վլահքն է կամ Ռլահքը:

*** ՄՕ.-ում ուժին՝ զորեղ:

**** ՄՕ.-ում Իկոն:

***** ՄՕ.-ում կոտորեցին և նստան անդ՝ կոտորեցին և նստեցին այնտեղ:

****** ՄՕ.-ում հասան առ նա՝ դաղար առավ նրա մոտ:

[3] Կոնը Իկոնիոնն է, Գոնյան [ՄՕ.-ում իբրև եկ յԻկոնէն՝ երբ դուրս եկավ Իկոնից]:

պատրիարքից, «թե մենք եկանք մինչև Սիս քաղաքը և այստեղ սպասում ենք քեզ»: Հավաքելով իր բոլոր մեծամեծներին՝ Թագավորը կարդալ է տալիս [գրությունը], և բոլորը ուրախությունից լաց են լինում: Նա պատասխան է գրում, «թե այստեղ հինգ* տարով քո հրամանով ուզում եմ մշակել հայոց հողերը և հետո գնալ իմ երկիրը: Ահավասիկ ունեմ թագ ու զգեստ, որպեսզի Հայաստանի թագավոր օծես նրան, ում ընտրես»: Եվ բոլորի համար լսելի կերպով ասում էր, «թե մինչև չտեսնեմ իմ պարոնին և սուրբ Պետրոսին՝ Գրիգոր պատրիարքին, չեմ ասի, թե ինչ կա իմ սրտում»: Եվ գալով Սելևկիա[1] և ծանծաղ հուն գտնելով՝ ամբողջ զորքն անցկացնում է գետով, բայց Թագավորը չի անցնում, այլ ասում է, որ մի փոքր քնելու է գետի այն կողմում: Երբ խաղաղվում են նրա մեծամեծները, նա վեր է կենում և երկու տղամարդկանց հետ մտնում գետը: Նրանցից մեկին ջուրը խլում ու տանում է, Թագավորը օգնում է նրան, բայց չի կարողանում պահել և կորցնում է քրիստոնյաներին, իսկ ինքն էլ խեղդվում է գետում: Նրա մարմինը հանում, տանում են Սիս: Եվ զորքից շատերը նավերով գնում են իրենց երկիրը, իսկ Թագավորի կրտսեր որդին էլ մեռնում է Աքա գնալու ժամանակ: Բայց քանի որ Անկլիզաց Թագավորը և նրա հետ մյուս եկողները այդ օրերին գալիս են Կիպրոս և լսելով անգլուխ մնացած զորքի մասին, որ պաշարել էր Աքան, նրան օգնության են հասնում: Եվ գրավելով քաղաքը՝ Սալահադինի զորքից կոտորում են տասը հազար ընտիր մարդու, իսկ անձամբ նրան էլ, որ յուրայիններին այցելության էր եկել, առաջ են գցում և կոտորելով տանում մինչև Ասխալան[2], ամիրաներից շատերի ձեռքերը կապելով՝ տանում են ծովի այն կողմը և Թուրքերից կըրկին առնում են նրանց ամբողջ գրավածը, բացի Երուսաղեմից, որի մասին ասում էին, թե դեռ չի եկել նրա այցելության օրը:

ՁԱ. Այդ ժամանակ Սալահադինի գլխավոր անձանցից մեկը գալիս է Մանծկերտի վրա և պաշարում այն, բայց ոչ մի բան

* ՄՕ.-ում քանյոթ:

[1] Սելևկյան Կիլիկիայի արևմտյան սահմանի վերջում է, այժմյա Իչելին, իսկ հիշյալ գետը Կայսուվաղնոսն է, այժմյան Գյոքսուն:

[2] Ասկալան Պաղեստինի սահմաններում գտնվող Ասկաղոն [ՄՕ.-ում Ասխալոն] քաղաքն է:

չի կարողանում անել, որովհետև նրանց վրա ամառվա մեջ անտանելի ձյուն է տեղում, և նա վերադառնում ու մեռնում է ճանապարհին: Իսկ Բեկթեմուրը*, չնորհակալ լինելով քրիստոնյաներից, դրանից հետո սիրում ու պատվում է քրիստոնյաներին:

Այդ ժամանակներում կաթողիկեցի պատվելի քահանա Մխիթարը[1], [օգտվելով] Ոճիե անունով ոմն պարսիկի ստեղծագործությունից, բացատրում է արեգակի և լուսնի խավարման պատճառները: Այդ ստեղծագործության մասին ասում են, որ այն հունարենից է պարսկերեն թարգմանվել, իսկ հույները վերցրել են Ենովքի մարգարեությունից, որն ասում էր, թե արեգակը բնությամբ երբեք չի խավարում, այլ նրա խավարման պատճառը լուսնից է, երբ մի կենդանակերպում են հանդիպում արեգակն ու լուսինը: Իսկ դա լինում է լուսնի նորելու պահին, երբ այնտեղ հանդիպում են ռաստ կոչվող թանձր ամպերը կամ զանապը[2]: Եթե սրանք իրար մոտիկ չեն լինում, ապա դա խավարման պահը չէ, թեպետև դա լինի լուսնի նորելու պահը, եթե դրանք ամբողջությամբ իրար դիմաց են լինում, ապա լրիվ խավարում է տեղի ունենում, իսկ եթե մասամբ, ապա խավարում է միայն չեղ մասը: Իսկ այն մասը, որը մեզ է երևում, լուսնի պատյանն է և ոչ թե արեգակի ամանը, ինչպես որ եղավ վեց հարյուր քսանհինգ թվի մեծ խավարումը: Իսկ լուսնի խավարումը լինում է [այն ժամանակ], երբ [լուսինը] վեց կենդանակերպներով հեռու է լինում արեգակից, իսկ զանապն ու ռաստը [լինում՝են] նույն կենդանակերպում, և մութ ամպերը թույլ չեն տալիս արեգակից լույս ստանալ, ու երկրի թանձր ստվերն ընկնում է լուսնի շուրջը, և լուսինը խավարում է: Եթե հավասարապես գալիս են իրար դիմաց, լրիվ խավարում է լինում, իսկ եթե չեղ մասն է լինում, արեգակից լուսավորվում է թաքնված մասը: Այս բանը մշակելով՝ Մխիթարը գծագրերով այն փոխադրում է հայերեն:

ՁԲ. Այդ ժամանակներում ապրում էին քուրդ ազգի [ներ-

* ՄՕ.-ում Բեկթամուր:

[1] Սույն Մխիթարը վերոհիշյալ պատմիչն է, տե՛ս էջ 135:

[2] Զանապը և ռաստը լուսնի հանգույցներն են խավարման ծիրի վրա, իսկ կետն այն է, ուր հանդիպում է ռաստը: [Ըստ «Մի ջին հայերենի բառարանի»՝ զանապը վիշապ համաստեղության պոչն է, իսկ ռաստը՝ գլուխը (հ. 1, էջ 207, հ. 2, էջ 302)]:

կայսցուցիչ] Սարգսի որդի Զաքարեի, նրա որդի Վահրամի, նրա որդի Սարգսի որդիները՝ Զաքարե և Իվանե իշխանները, որոնք գաղթել էին Զորոգետի թագավորների մոտ, որոնք Բագրատունյաց ազգից էին: Նրանք հավատում են Քրիստոսին և պատվի արժանանում: Նրանց բնակության տուն է տրվում Խոշորնին, և որովհետև նրանք քաջ մարդիկ էին, օրեցօր աճում էր նրանց պատիվն ու աստիճանը: Թամարի օրոք [նրանք] է՛լ ավելի փառավորվեցին, [Թամարը] նրանց տվեց Լոռեն*, և կարճ ժամանակամիջոցում նրանք թուրքերից խլեցին շատ բերդեր ու գավառներ. այսպես, վեց հարյուր քառասուն թվին [նրանք] գրավեցին Շիրակի երկիրը, վեց հարյուր քառասունհինգ թվին՝ Անբերդը[1], վեց հարյուր քառասունութ թվին՝ Անին, վեց հարյուր հիսուն թվին՝ Բջնին, վեց հարյուր հիսուներկու թվին՝ Դվինը, վեց հարյուր հիսունհինգ թվին՝ թագավորի[2] Կարսը, այնուհետև Գետաբակը ու Զարեքը[3], և նրանց անունը տարածվում է ամբողջ երկրում: Բայց Իվանեն, խաբվելով Թամար թագուհուց, տկարանում է հավատի[4] մեջ և անհաջողության մատնվելով՝ գերի է ընկնում Խլաթում, բայց եղբոր արիական անվամբ դարձյալ ազատվում է՝ իր դստերը կնության տալով Խլաթի տիրոջը՝ Մելիք Աշրաֆին: Իսկ Իվանեի եղբայր Զաքարեն չնայած մնում է իր սեփական հավատի մեջ, սակայն ցանկանում էր Տիրամոր և խաչի տոնը ամսվա կամ շաբաթվա օրը կատարել, ճրագալույցը չհանգցնել, կրոնավորներին [պատվիրում է] միս չուտել, ողջ [անձանց][5] պատարագ մատուցել և վրանով բացօթյա պատարագել դպիրների ու սարկավագների միջոցով: Այդ նպատակով Լևոնի մոտ է ուղարկում նրան, ով Ֆռանկների ու հույների կողմից օծվել էր թագավոր՝ նրան առաքելով թագ, վեց հարյուր քառասունվեց

* ՄՕ.-ում Լոռի:

[1] Անբերդի վիճակը (գավառը) գրավում է Արագածոտնի մի մասը:

[2] Այսպես է ՕՕ.-ում [նաև ՄՕ.-ում]. ինձ թվում է՝ դա թագավորանիստ պետք է լինի:

[3] Գետաբակը և Զարեքը բերդերը գտնվում են Արցախի հյուսիսային և արևելյան կողմերում:

[4] Իվանեն դավանանքով միաբանեց վրացիների և հույների հետ:

[5] Ինչպես որ ննջեցյալների հիշատակի համար է, այդպես էլ բարեպաշտ ողջ մարդկանց հոգևոր օգուտի համար է:

թվին: [Նա] շրջակա բոլոր ցեղերի համեմատ զորեղ էր, հաղթող, բռնաղաղտող, նեղություն տվող ու տանջող: Իսկ նրանք ուշացնում են պատասխանը, քանի որ տեր Գրիգորի վախճանվելուց հետո աթոռն առնում է Գրիգորիսը, որը Տղա[1] էր կոչվում, որին մեկ տարի անց բռնում է Լևոնը և բանտ գցում: Պարանով իջնելով՝ նա փորձում է բանտից դուրս ելնել, բայց պարանը կտրվում է, և նա [ընկնում] ու մեռնում է: Եվ հինգ տարի աթոռին նստում է Ապիրատը, և ապա տեր Հովհաննեսը, որն ապստամբվել էր Լևոնի դեմ: Դրանից վշտանալով՝ Լևոն թագավորը կաթողիկոս է նշանակում տեր Դավթին Արքակաղնում[2]: Եվ այդ երկպառակությունից հետո հազիվ համաձայնության գալով՝ բոլորը միաձայն պատասխան են տալիս Զաքարիային, ըստ որի նա կարող էր կատարել այն, ինչ որ ուզում էր, «քանի որ, ասում են, ինչ որ հակառակ չէ [սուրբ] գրքին, մերն է, և այդ հայրենի սահմանը եկեղեցու ավերումից է խանգարվել»: Եվ արևելքում՝ Լոռեում և Անիում, մեկ-երկու անգամ չափահաս մարդկանց ժողով է անում, բայց չի ընդունվում. «գուցե, ասում են, ամեն ինչով հարկադրված լինենք հետևելու հունական և վրացական աղանդին»:

Իսկ Վրաց Թամար թագուհու ժամանակ հզորանում են քրիստոնյաները, թեպետ [նա] գահընկեց է անում իր ռուս ամուսնուն և առնում է օս Սոսլանին*, որը Վրաստանը լցնում է թուրքերից խլած գերությամբ ու թալանով: Նրանից ծնվում է մինուճար մի զավակ, որին կոչում են Լաշա, իսկ ինքը քսաներեք տարի թագը կրելուց հետո վախճանվում է: Վեց հարյուր հիսունյոթ թվին[3] աթոռին նստում է Լաշան, որին զորքը անվանեց Գեորգի:

ՁԳ. Վեց հարյուր հիսունինը թվին մորեխը ավերում է բազում գավառներ: Այդ ժամանակ մեծն Զաքարեն ավերում էր Պարսկաստանը՝ հասնելով մինչև Արտավիլ քաղաքը՝ նրանցից

[1] Նա ոչ թե Դ մականվանված Գրիգոր Տղան է, այլ Գրիգոր Ե.-ն, որը իրոք երեխա էր և՛ տարիքով, և՛ մտքով: Նա կոչվեց նաև Գարավեժ:

[2] Արքակաղնի վանքը, որ շինել է Լևոն Ա թագավորը, պետք է փնտրել Սսի սահմաններում:

* ՄՕ.-ում Ասան:

[3] Թամար թագուհու, որին մերոնք թագավոր են անվանում, ժահվան տարին ստույգ կերպով չի նշված Վրաց պատմության մեջ:

առնելով քրիստոնյաների արյան վրեժը: Ըստ որում նրանց աղոթատները լցնելով տղամարդկանցով՝ հրամայում է այրել և նրանց զոհել այն իշխանների համար, որոնք գտնվում էին Նախճավանի եկեղեցիներում, իսկ զուրան կարդացողներին ու մահմեդական կրոնավորներին [զոհել] այն սուրբ քահանաների համար, որոնք մորթվեցին Բագավանում, և նրանց արյամբ ներկվեց եկեղեցու պարիսպը: Եվ այդ կոտորածից վերադառնալով՝ վախճանվում է [Զաքարեն]՝ [ապրելով] ուղղափառ ու անբիծ հավատով, և թաղվում է Սանահին սուրբ վանքում, վեց հարյուր վաթսունմեկ թվին, թողնելով հնգամյա մի տղա՝ Շահնշահ անունով (Անի կոչված տերության ղեկավարության համար)[1], որին խոշաքը՝ Իվանեի կինը, շուռ է տալիս դեպի Քաղկեդոնի աղանդը (!):

Եվ մեկ տարի անց վախճանվում է սուրբ ու աքանչելի վարդապետ Մխիթարը՝ մականվամբ Գոչ Գանձակեցին ու թաղվում իր Գետիկ ձեռակերտում, որ չինել էր Քուրդ մեծ իշխանի քրոջորդու՝ Իվանեի հրամանով: Նրա հրամանով էլ եկել էր Կայենի երկիրը, այսպես կոչված Հին Գետիկը[2], որովհետև նա այն ժամանակ տիրում էր Կայենին՝ բերդը չինողի՝ Հասան Կայենացու հայրենիքի հետ միասին:

Վեց հարյուր վաթսուներեք թվին Հաթերքը[3] նրա տերերը տալիս են Իվանեին, որովհետև մեռնում է նրա իսկական տերը՝ Վախթանգը. անժամանակ մեռել էին նաև նրա որդիները, իսկ մյուս Վախթանգ Սակոյանցը՝ Իվանեի փեսան, Ներքին Խաչենի տերը, թողնում է երկու տղա՝ Հասանին, որը փաղաքշաբար Ջալալ-Դոլա էր կոչվում և Զաքարեին՝ նույն ինքը Նասրա-Դոլային, որոնց խնամակալում էր Իվանեն նրանց մոր՝ Խորիշահի հետ միասին: Վերջինս հետո Երուսաղեմ գնալով ու այնտեղ մնալով՝ մեռնում է մեծ չարչարանքով՝ բազում գովեստներ [հղելով] Տիրոջը: Եվ մեծն Իվանեն, աչքի ընկնելով արիությամբ, գրավում է Զարեքն ու նրա ամբողջ շրջակայքը և ապա օգնելով իր ազգական Վահրամին՝ Զաքարեի որդուն,

[1] Փակագծերը ըստ հին Օ.-ի [ՄՕ.-ում այն փակագծված չէ]:

[2] Հին Գետիկը Միափոր գավառում է, Սևանա լճի վերջում, որն ավերվել է կործանիչ երկրաշարժից, իսկ Մխիթարը չինել է Նոր Գետիկը հնից ոչ հեռու:

[3] Հաթերքը կամ Հայթերքը Արցախ աշխարհում գտնվող բերդավան է, Սյունիքի կողմում, այսինքն՝ արևմուտքում:

գրավում է Շամքորը: Իսկ վեց հարյուր վաթսունութ թվին Իվանեն գրավում է նաև Որոտն[1] ու մերձակա դղյակները, թեև ոչ ամբողջը, քանի որ երբ նրան տիրում էին Հայկազունները[2], նշանավոր բերդերը քառասուներեքն* էին, գյուղերը՝ հազար չորս հարյուրը, վանքերը՝ քառասունութը**, որոնց ավերման սկիզբը դրվեց հինգ հարյուր հիսուներկու թվին՝ Մելիք-Շահ սուլթանի՝ մի երիտասարդ մատուվակի պատճառով: Հայկազուն թագակալի[3]՝ սուլթանի մոտ հնազանդության գնալու ժամանակ [մատուվակը] նրան խստագույնս նեղում էր գինով, մինչև որ նա խոստանում է իր դստերը կնության տալ նրան, նա էլ, ըստ իրենց սովորության, գոտին հանգույց անելով[4], ցույց է տալիս սուլթանին: Եվ մի քանի օր անց նա պահանջում է խոստացածը և երբ նախատինք է ստանում, նախանձաբեկ է լինում ու վերցնելով մեծ զորք՝ ավերում է երկիրը, մինչև որ ամբողջովին քանդվում ու բնաջնջվում է այն, որին հետո տիրեց հզոր Իվանեն:

ՁԴ. Այդ նույն թվականին վախճանվում է մեր պատվավոր Լևոնը, և թագին երկու տարի տիրում է նրա միածին դուստրը՝ Եղիսաբեթը, որին ֆրանկները Զաբել*** էին կոչում: Նրա համար ամուսին են բերում Անտաքի տիրոջ որդուն՝ Ֆիլիպպին: Եվ որովհետև նրա համար ատելի էր հայոց ազգը և ավելի շատ մեծարում էր իրենը՝ ֆռանկներին, երդմնազանց է լինում ու դրժում է հայադավան ու հայասեր իր ուխտը և պատվական թագը, արքունական զանձերն ու պալատը[5] ուղարկում է իր հոր տուն: Այդ բանի հետ չեն կարողանում հաշտվել [հայոց] իշխանները և նրան բանտ են գցում, մինչև

[1] Որոտը Սյունյաց Ծղուկ գավառի հռչակավոր բերդն ու ավանն է:

[2] Հայկազունները Սյունյաց ազնվագույն իշխաններն են՝ սերված Հայկի ցեղից:

* ՄՕ.-ում քսաներեք:

** ՄՕ.-ում քսանութ:

[3] Ստեփանոս Օրբելյանը (գլ. ԿԱ) ծանուցում է, որ Մելիքշահի մոտ Սենեքերիմ թագավորն էր, իսկ մատուվակը՝ ոմն Զորթանը, իսկ Սյունիքի ավերածության սկիզբը դնում է 1103 թ.:

[4] Այսինքն՝ գոտու վրա հանգույց անելով:

*** ՄՕ.-ում Զաբել խաթուն:

[5] Իմա՛ արքունի պալատի սպասքներն ու զանձերը:

որ նա այնտեղ մեռնում է: Եվ Հեթումի աղջկան տալիս են Կոստանդնի որդուն՝ մեծահոգի ու հանճարեղ պատանյակին, մարմնեղ, թիկնավետ ու գեղեցկատես պատանուն: Նրանց պսակում է Կոստանդին պատրիարքը, որը սուրբ աթոռը ժառանգել էր տեր Հովհաննեսի մահից հետո, վեց հարյուր վաթսունինը թվին: Նա պատրիարքությանը կոչված էր ոչ թե արյամբ, պատվով կամ հարստությամբ, այլ Հոգու շնորհներով, որի մասին վկայում են բոլոր լեզուներով:

Նրան ձեռնադրելուց մեկ տարի առաջ՝ հունվարի տասնըմեկին, ճաշի ժամին, մեծ երկրաշարժ եղավ, և փուլ եկավ գեղեցկազարդ եկեղեցին, որը գտնվում էր Մշակավանքում[1], ու չորս պատարագիչ զոհ գնացին այդ մեծ աղետին: Բոլորը ամեն գիշեր երկնքում տեսնում էին նիզակաձև մի աստղ, որը նշանակում էր երկրի խաղաղության խախտումը, ինչպես որ եղավ հաջորդ՝ վեց հարյուր վաթսունինը թվին: Մոտ քսան հազարանոց այլազգի ու այլալեզու մի զորք, կոչված Մուղալ և Թաթար անունով, շարժվեց Չին ու Մաչին[2] երկրից: Աղվանքի կողմերից դաշտավայրերով եկավ, մտավ Գուգարաց երկիրը, կոտորեց բոլորին, ինչ որ կենդանի գտավ և փութով վերադարձավ: Մեծ զորքով նրանց հետևից ընկնելով՝ Լաշան նրանց հասնում է Կոտման գետի մոտ և պարտվելով նրանց կողմից՝ փրկվում ու փախչում է Իվանեի հետ միասին, որի երիվարի ջիլը կտրում է ինչ-որ իշխան և նրան զրկում երիվարից: Բայց երկրի տեր Վահրամը մեծ քաջությամբ սաստիկ կոտորածով գնում է իր երեսը դարձրած կողմը և [հասնում է] մինչև Գարդման՝ չիմանալով ուրիշների փախուստի մասին:

Վեց հարյուր յոթանասունմեկ թվին նրանք ցանկանում էին այնտեղից վերադառնալ, բայց որովհետև նրանց սուրհանդակները Հայաստանն ու Վրաստանը գտան կազմ ու պատրաստ և այդ լուրը տեղ հասցրին, նրանք չհամարձակվեցին գալ, այլ այնտեղից դարձան ու գնացին, ուր որ գնացին: Նույն տարում մեծաքանակ մի զորք, անջատվելով հոներից,

[1] Մշակավանքը [ՄՕ.-ում Մշկավանք] գտնվում է Գուգարքի Կողբոփոր գավառում:

[2] Մոնգոլ կամ Մուղալ տոհմի բնակավայրերը բուն Չինաստանում չեն, բայց նրանից էլ շատ հեռու չեն: Խառնվելով թաթարների հետ՝ այդ երկու ցեղերը մի անունով են կոչվում:

որոնք Խվչաղ[1] են կոչում, գալով Գանձակ՝ միացավ նրանց [թաթարների] հետ: Եվ երբ մերոնք համարձակ ու անզգույշ կերպով գնացին նրանց վրա, անջատվելով* փախուստի մատնվեցին, որոնցից շատերին սրի քաշեցին, փառավոր ազատներից շատերին բռնեցին ու բանտ գցեցին, նրանց հետ էլ Գրիգոր[2] իշխանին**՝ Խաղբակի որդուն և նրա եղբորորդուն՝ արի ու քաջ Պապաք անունով նահատակին, որի վրեժը հաջորդ տարի առավ մեր զորքը՝ բնաջնջելով Խվչաղի մեծ մասը նրանց՝ Վարդանաշատի երկիր[3] վերադառնալու ժամանակ:

Զե. Իսկ մեր թվականության վեց հարյուր յոթանասունչորս թվի վերջում Խորազմ[4] շահի երկու որդիները, պարտվելով*** ու նեղվելով թաթարների[5] կողմից, ինչպես ասում են, երկու հազար մարդով Ադզպարական երկրի վրայով գալիս են Հայոց Ոստանը, գրավում այն և լայնատարած դաշտը լցնում են վրաններով: Նրանց վրա հարձակվելով՝ մերոնք պարտվում են, և շատերը կորչում են Գառնի գյուղաքաղաքի մոտ, մեծ մասն էլ գլորվում է խորխորատները՝ Իվանեի դեմ աստվածային բարկությունից՝ Իվանեի նոր ու անծանոթ չարությունների պատճառով, որ գործեց նրա կինը****: Քանզի հրամայեց

[1] Խվչաղը, ղփչաղը կամ խփչաղը, քափչաքը խազիր-թաթարական տոհմ էր:

* ՎՕ.-ում **հաստվածեալք**՝ անջատվածները, բաժանվածները, իսկ ՄՕ.-ում **հարվածեալք**՝ խփվածները:

[2] Սույն Գրիգորը Խաչենի իշխանն էր, իսկ նրա եղբայրը՝ Պապաքի հայրը, Վասակն էր:

** ՄՕ.-ում Իշխան:

[3] Վարդանաշատի երկիրը Կուր և Երասխ գետերի խառնարանի միջև ընկած անկյունն էր:

[4] Խորազմ շահը Մուհամեդն է, իսկ նրա որդին՝ Մուհամեդ Ճելալ-յուտդինը, որը Ատրպատականի (Ադզպարական) վրայով եկավ Այրարատ և գրավեց Դվինը (Հայոց Ոստանը): Նրա վրա հարձակվեց Իվանեն Վրաց և Հայոց զորքով, որը իրեն ուղղված խրախուսական ձայնը խուճապի տեղ ընդունելով՝ փախուստի դիմեց և զորքի ահից շատերը գլորվեցին Գառնի ձորի անդունդները ու կործանվեցին:

*** ՄՕ.-ում **պատեալ**՝ շրջապատելով:

[5] Հին Օ.-ն ավելացնում է՝ **արևելից զօրացն Հիւսիսայնոյ** [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ հյուսիս-արևելքի զորքերի կողմից:

**** ՄՕ.-ում **զոր գործեաց նա**՝ որ գործեց նա:

Զարկեշտ անունով մեռած մի երեցի հանել գերեզմանից, այրել ու այդ տեղում շուն մորթել՝ շատ ուխտավորների այնտեղ գնալու[1] պատճառով: Սակայն այդ տեղը մեծարեց Աստված՝ նրա վրա լույս իջեցնելով Բջնի հայտնի բերդաքաղաքում, որտեղ որ եկեղեցու հիմքերը գցեցին[2], ելնելով մի բանասարկու մարդու խուզբերից, որին շանթակեզ արեց Տերը այն գիշերը, որի ցերեկը նման դեպքեր տեղի ունեցան:

Իսկ սուլթանը, իր հաղթական փառքից ոգևորված, ոտքի տակ է տալիս շատ տեղեր և ետ դառնալով դեպի Դավրեժ՝ մեկ տարի անց գալիս է Գագ դաշտավայրերի կողմը, դեպի Տփղիս և բազում ոճիրներ գործելով՝ հարձակվում Խլաթի վրա: Գրավելով այն և հարստանալով՝ նա գնում է հռոմեական Ալաղին սուլթանի և Մելիք Աշրաֆի վրա: Այդտեղ նրա զորքը մեծ կոտաստ է կրում, և նա քիչ մարդկանցով փախչում է Մուղան՝ մարդկանց և անասունների բոլոր կարիքների համար ամենահարուստ դաշտը: Այդ ժամանակ նրա վրա է հարձակվում Թաթարը, որը նրան դրանից առաջ հեռացրել էր իր երկրից, և այնտեղից նրան փախուստի է մատնում դեպի Ամիթ: Փախչելիս [նա] մեռնում է պատահաբար. Թաթարի սրո՞վ, թե՞, ինչպես ասում են, յուրայիններից մեկի ձեռքով, որի մերձավորներից մեկին նա սպանել էր երիտասարդ տարիքում, և նա նեղացել էր այդ բանի համար, կամ էլ նրա անվերջ արշավանքների՞ պատճառով,- [հայտնի չէ]. և այդ ձևով անմեղ մարդկանց արյան վրեժը լուծվեց: Իսկ Թաթար կոչեցյալը, որ վեց հարյուր վաթսունինը թվին եկել էր քիչ մարդկանցով, ցանկացավ վերադառնալ վեց հարյուր յոթանասունմեկ թվին, բայց չհամարձակվեց: Եվ իրեն միացնելով զորքի մեծ բազմություններ և առաջնորդ ունենալով Զարմաղան անունով զորապետին՝ վեց հարյուր յոթանասունչորս* թվին նա գալիս է շահաստան Գանձակ քաղաքը, պաշարում է այն մի քանի օր, գրավում ու անողորմաբար կոտորում բոլորին, բացի մատ-

[1] Հին Օ.-ն ավելացնում է՝ ի նշխարս ոսկերաց նորա [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ նրա ոսկորների նշխարքներին:

[2] Հին Օ.-ն ավելացնում է՝ զոր չկարաց տանել զպատիւ հայ քահանային [ՄՕ.-ում զոր ոչ կարաց տանել զպատիւ հայազգաւան քահանային]՝ որը չկարողացավ տանել հայ քահանայի պատիվը:

* ՄՕ.-ում վեց հարյուր ութսունչորս:

ղաշ տղաներից և այն կանանցից, որոնց հավանում էին: Եվ դրանից հզորանալով՝ մտնում են Վրաց թագավորությունը, գավառների անվանի տեղերն ու ամուր բերդերը բաժանում են մեծամեծ իշխաններին, որոնց նոյինք[1] էին կոչում: Նրանցից յուրաքանչյուրը, գնալով իրեն ընկած գավառների դղյակները, խուզն տիրում էր դրանց որպես մեր մեղքերի* պատուհաս: Զաղաթա նոյինն առնում է Լոռե քաղաքը և այդ կողմերում եղած գավառները, Դոլաթա** նոյինը՝ Կայեն բերդը***, որտեղից քշեցին երկրի տեր Ավագին[2], մեծն Զարմաղանը****՝ Անին, Կարսն ու նրանց մերձակայքը, Ղատաթա նոյինը՝ Զարեքի*****, Գետաբակի, Վարդանաշատի կողմերը: Իսկ Մոլար նոյինն, իր բաժնի մեջ առնելով մեծ իշխան Վահրամի[3] գավառների բերդերը, նախ հնարամտությամբ գրավում է Շամքորը: Վահրամը իր Աղբուղա որդու հետ փախչում է տեղից տեղ, մինչև որ լսում է, թե կամավոր հնազանդվողներին նրանք ներում են: Այնուհետև գալով գրավում է նրանց առած դղյակներն ու գավառները, որոնք իրենց հայրենի սեփականությունն էին: Թաթարները գրավել էին այդ բոլորը՝ Տավուշը[4], Կածարեթը[5], Տերունականը[6], Երգևանքը[7],

[1] Նոյինը, ավելի ճիշտ նոյանը [ՄՕ.-ում նուին] մոնղոլերեն նշանակում է բյուրապետ: [Ըստ «Մինչին հայերենի բառարան»-ի՝ մոնղ. noyan, nuyun, պրակ. nuyan՝ «իշխան, զորապետ» (հ. 2, էջ 196)]:

* ՄՕ.-ում «ի պատուհաս մեղաց մերոց անչափից»՝ որպես մեր անասահման մեղքերի պատուհաս:

** ՄՕ.-ում Դուղաղա:

*** ՄՕ.-ում Կայան ամրագույն բերդը:

[2] Ավագը մեծն Զաքարիայի եղբոր՝ Իվանեի որդին էր:

**** ՄՕ.-ում Զարմղան:

***** ՄՕ.-ում զկազմանս չարքեանն՝ չորս կողմերը:

[3] Վահրամը Գագիկ ու Տավուշի տիրոջ՝ Զաքարիայի որդին էր, Խաչենի իշխանների խնամին, Աղվանից Կյուրիկյան թագավորների ժառանգը, որոնց կալվածքները ստորև հիշվածներն էին:

[4] Տավուշը, Տայուշը կամ Տաուշը Մուտիք աշխարհի հյուսիսային կողմում էր, հին Տուչքատակ գավառն է:

[5] Կածարեթը նույն Տավուշ գավառում է, բայց բուն տեղը հայտնի չէ:

[6] Տերունական բերդը Կոտման դաշտում է, Ուտիքի Աղստև գավառին մոտիկ, այն վիճակի մեջ է, որն այժմ գետակի անունով կոչվում է Հասան-ձոր:

[7] Երգևանքը կամ Երգեվանքը [ՄՕ.-ում Երգեվանք] Տավուշ գավառում գտնվող բերդ է:

Մածնաբերդը[1], որը Կյուրիկյանց Ախարթանն էր, Նոր բերդը[2], որը Թագավորազն Վասակինն էր, Քավազին[3] անառիկ ամրոցը, Գագ անվանի բերդը և Գագիկ[4] թագավորի բարեկարգած գավառը, որտեղ գտնվում են հռչակավոր սուրբ խաչ վանքը և սուրբ Սարգիս զորավարի անունով եկեղեցին՝ օրհնված սուրբ վարդապետ ու Հայոց թարգմանիչ Մեսրոպի կողմից. այն գտնվում է Գագ [գավառի] սկզբում և նայում է լայնանիստ ու լայնատարած դաշտին: Թաթարները գրավել էին և այլ ամրոցներ[5], գյուղեր, ագարակներ, և այդ բոլորը նրանց ձեռքն էր անցել նեղ ժամանակ առանց աշխատանքի ու չարչարանքի, որպեսզի մենք իմանանք, որ Տիրոջ ձեռքն էր, որ մեր աշխարհը մեր աչքերի առաջ տվեց օտարներին որպես կերակուր[6]:

ԶԶ. Եվ սկսելով իրենց սրբություններից ու սրբերից և նեղվելով պիտույքների, առավելապես ջրի պակասությունից՝ հանձնվում է սրբազան, համբավավոր, արդյունավետ Վանական[7] անունով վարդապետի քարայրը, որտեղ ամրացել էր նա

[1] Մածնաբերդը Տավուշում է, որը Կյուրիկյան արքայազունների աթոռավայրն էր ԺԲ դարում:

[2] Նորբերդը արքայազունների մյուս աթոռավայրն էր, որը գտնվում էր Հասան-ձորի կողմերում:

[3] Քավազինը կամ Գավազինը Թուրքերը կոչում էին Կեվերջին գազ, որը միակուռ քարաբլուր էր, գազաթին՝ բերդ:

[4] Ինձ թվում է, որ այս Գագիկը Բագրատունյաց և Կյուրիկյանց բոլոր ծանոթ թագավորներից ավելի առաջ է եղել:

[5] Հին Օ.-ն ավելացնում է. «և զայլ ամրոցս, և զայրն վիմափոր՝ որ կային ի մայրիս և ծործորս և ի ձորակս գաւառաց, գեղից և ագարակաց» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ և այլ ամրոցներ, վիմափոր քարայրը, որոնք գտնվում էին գավառների, գյուղերի ու ագարակների անտառներում, ձորերում ու ձորակներում:

[6] Հին Օ.-ն ավելացնում է. «ընդ որս և զաղիտաւորն զայն և զգայթակղեցուցիչն տիրագունից, նախ քան զասացեալսդ» [այդպես է նաև ՄՕ.-ում]՝ նրանց հետ նաև այն ցավալին ու տիրագույն գայթակղեցուցիչը, նախքան այդ ասվածները:

[7] Վանական Հովհաննես վարդապետը վարքով ու գիտությամբ առաքինի հռչակավոր հեղինակն է ԺԴ դարում, որը եղել է մեր հեղինակի և Կիրակոս պատմիչի ուսուցիչը:

ինքը յուրայինների, իր աշակերտների և շատ այլ գաղթականների հետ, որոնք ապավինել էին նրան, որոնց համար քրիստոսաբար նվիրելով իր անձը, գերի է գնում ու նրանց ազատում: Եվ ինչ-որ ժամանակ շրջելով բարբարոս ազգերի բանակի հետ՝ նա վաճառվում է այն քրիստոնյաներին, որոնք գտնվում էին Գագ բերդում: Նրանք նրան չգնեցին հրեաների նման խայտառակ մահվան համար, այլ տիրանման փառքի ազատության համար (հիսուն դահեկանով, այսինքն՝ Տիրոջ համար տրվածից ավելի: Տիրոջ վաճառողն այնքան ժլատ էր, այնքան էժան ու թեթև, որին ինքն էր արժանի)[1]: Դրանից հետո ապրելով ևս տասնհինգ տարի՝ ի փառս Աստծու և հօգուտ շատերի, բազմաչարչար ճգնություններից հետո [Վանական վարդապետը] վախճանվում է աշխարհի լուսավորիչների խորանում, յոթ հարյուր թվի մարտի տասնութին, հին տոմարով զույգ արեգ ամսի տասին, մեծ պասի շաբաթ օրը, ըստ կարգի՝ Օվրենդի ու նրա եղբայրների հիշատակի ժամանակ, իսկ ըստ մեզ՝ Երուսաղեմի Կյուրեղ հայրապետի հիշատակի ժամանակ: Վերին Երուսաղեմում կատարվում է նրա տոնը, որը [վերին Երուսաղեմը] այդտեղից սկսած նրա զավակների՝ լույսի որդիների տոնը կատարողն ու փայփայողն էր՝ ի փառս նրա փեսայի՝ Հիսուս անմահ թագավորի, նրա Հոր և սուրբ Հոգու: Նա իր քաջ անվան հարյուրապատիկը թողեց այստեղ՝ իր աշակերտների մեջ և եկեղեցու գանձերի գրքերում, որոնք ամբարեց Աստծու շնորհներից ու իր հստակ մտքից:

ԶԷ. Արդ՝ հայոց վեց հարյուր ութսունհինգ թվից սկսած մինչև յոթ հարյուր տասնչորս թիվը, որի մեջ գտնվում ենք մենք, թաթարների ցեղը ինչ որ արեց պետությունների ու իշխանությունների հետ, որոնք մեծ ծովի այս կողմում են [այն է]՝ Պարսկաստանի, Աղվանքի, Հայաստանի, Վրաստանի, այսպես կոչված Հռոմեական կայսրության հետ, ուր բնակված էին հայեր, ասորիներ, հույներ, տաճիկներ և թուրքմաններ,- [այդ ամեն միասին] մանրամասնորեն գրել են մեր փառաբանված հայր Վանական վարդապետն ու մեր հայրապետ, հորը համանման Կիրակոս վարդապետը: Մենք չհամարձակվեցինք այդ դեպքերը երրորդել կամ ավելի ծավալել, այլ համառոտ կերպով հիշատակեցինք նշանավոր դեպքերի ու գործերի կա-

[1] Փակագծերը ըստ հին Օ.-ի [ՄՕ.-ում փակագծեր չկան]:

տարման տարեթվերը՝ ի լրումն մեր աշխատանքի, իսկ շատ ժամանակների դեպքեր սկսեցինք ու անկատար թողեցինք՝ պատկառելով այն գրողների պատվից, որոնց վերևում հիշատակեցինք, քանի որ մարդկային խոսքն ու միտքը չեն կարող պեղել հիշելու համար մեր հանցանքների, անզգամությունների ու բազում մեղքերի առատությունը, ինչպես նաև Աստծու արդար դատաստանի վրեժի հատուցումը, մանավանդ եթե հնարավոր լինի թվել հատուցումները, մեր չարիքների քանակը ոչ ամբողջությամբ, որոնց հաղթեցին և միշտ հաղթում են Աստվածային գթության խորքերի խորքը, անդունդների անդունդը և անբավությունները: Աստծուն շնորհք ու զորություն, փառք ու պատիվ, օրհնություն ու գոհություն անհամար ու անսահման հավիտենականությամբ բոլորի ու յուրաքանչյուրի, տեսանելի ու անտեսանելի արարածների կողմից, որոնցից յուրաքանչյուրին կասվի **ամեն՝** անսպառ, անեզր ու անվախճան Աստծու միջոցով[1]:

ՁԸ. Արդ՝ հայոց վեց հարյուր իննսունմեկ թվին Բաչավ* նոյինը[2] փոխարինեց Զարմաղանին և գրավեց Կարին քաղաքը՝ այնտեղից քշելով մեծատուն ու աստվածապաշտ երևելի մարդուն՝ Ումեկին, նրա ազգականներին՝ պարոն Հովհաննեսի որդիներին, Ստեփանոսին ու նրա հինգ եղբայրներին: Իսկ վեց հարյուր իննսուներկու թվին [գրավեց] Հռոմեական կոչված ամբողջ աշխարհը, անվանի քաղաքները՝ նախ Կեսարիան, ապա Սեբաստը, որոնց բնակիչներին չկոտորեցին, որովհետև նրանք շուտ հնազանդվեցին, այնուհետև՝ Եզնկան, որի բնակիչներին անխնա կոտորեցին ու գերեցին, որովհետև նրանք դիմադրեցին: [Ավերեցին] և այլ աշխարհներ ու գավառներ, որտեղ ավելի շատ բնակված էր հայոց վշտատեսիլ ազգը: Այդ ժամանակ հայոց թվականության ՈՂԲ (վեց հարյուր իննսուներկու) թվին էր, երբ ըստ այդ գործերի էլ [եղան] արդյունքները, որոնք արժանի են ողբերի ու արտասուքների ոչ միայն բանականների, այլև ոչ բանականների, լեռների ու դաշտերի կողմից, որոնք ոռոգվեցին արյամբ ու արտասուքով: Նման ողբը կրկնվեց նաև վեց հարյուր իննսունութ թվին, երբ Բաչուն և ավագանին իմացան Վրաց թագավորի և իշխանների ամբարտավանության ու ապստամբության մասին, բռնեցին Դավիթ թագավորին ու այլ մեծամեծների և մահվան վճիռ կտրեցին, բայց վերին նախախնամության շնորհիվ նրանք մահից ազատվեցին: Սակայն շատերին կոտորեցին և գերեցին անթիվ գյուղեր ու ագարակներ, հայ կանանց խայտառակեցին Հայաստանում, բայց ավելի շատ Վրաստանում:

Վեց հարյուր իննսունինը թվին մեռավ Ավագը՝ Իվանեի որդին, և թաղվեց Պղնձահանքում[1], իր հոր մոտ. նա պարկեշտ, կորիճ և աղոթասեր մարդ էր:

ՁԹ. Յոթ հարյուր թվին հարց բարձրացվեց Հռոմի մեծ պապի կողմից, որը գրեց բոլոր քրիստոնյա ազգերին, թե պետք է ամենասուրբ Հոգի Աստվածը խոստովանել Հորից ու Որդուց բխած: Դա հաճո չեղավ ասորիներին, հույներին և վրացիներին, բացի հայերից, որոնք աստվածամերձ Վանական վարդապետի միջոցով քննեցին առաջին սրբերի դավանությունը՝ գտան իրենց համախոհ երևելի ու փառավոր մարդկանց՝ Աթանասին, Գրիգոր Աստվածաբանին, Գրիգոր Նյուսացուն, Գրիգոր Լուսավորչին և այլ սրբերի:

Ղ. Յոթ հարյուր մեկ թվին մորեխ եկավ Հայոց վերին աշխարհը և մնաց տվեց շատ գավառների:

Յոթ հարյուր երեք* թվին Մանգու ղանը հրաման տվեց Արղոն** անունով երևելի մարդու միջոցով իր իշխանության տակ համարել հնազանդված երկրները և հարկեր գնել ըստ մարդկանց գլխաքանակի, բացի կանանցից, զառամյալ ծերունիներից ու մատղաշ երեխաներից:

Յոթ հարյուր երեք թվին Հայոց Հեթում քրիստոնյաներ արքան գնաց Զանգղ ղանի համազգի, Հյուսիսի մեծ թագավոր

---

[1] Այստեղ մեր ընտիր օրինակի բնագրում պատմությունը վերջանում է, շարունակությունը [որը կա նաև ՄՕ.-ում] հնագիր օրինակից է:

* ՄՕ.-ում Բաչու:

[2] Ումեկի սերունդները հիշատակվում են Զորոպետի վանքերի արձանագրություններում. նրա որդու անունը Ճար Մանազկերտցի էր, որը հարուստ վաճառական էր Կարինում:

[1] Այդ Պղնձահանքը [ՄՕ.-ում Պղնձավանք] գտնվում է Սոմխեթի Լալվար լեռան վրա, Տաշիրքի ու Ծորոփորի միջև, ուր եկեղեցի ու վանք էին գտնվում Զաքարիայի ու Իվանեի իշխանության ժամանակ:

* ՄՕ.-ում յոթ հարյուր երկու:

** ՄՕ.-ում Արղուն:

Բաթուի[1] մոտ, իսկ այնտեղից՝ Մանգու ղանի մոտ, նրա կողմից մեծարվեց ըստ արժանվույն և մեկ տարի անց խաղաղությամբ վերադարձավ իր արքունիքը:

Ցոթ հարյուր չորս թվին Հուլավուն՝ Մանգու ղանի եղբայրը, անթիվ զորքով ու մեծասաստ իշխանությամբ եկավ Պարսկաստանի, Ասորեստանի, Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի վրա: Նախ եկած զորքին հրաման տվեց՝ իր ամբողջ բազմությամբ գնալ հռոմեական աշխարհը, որի ահից [հույները] թողեցին վերին աշխարհը[2], ստիպված գնացին և գրավեցին ամբողջ միջերկրայքը, մինչև ծովը՝ տիրելով այն երկրներին, որոնք հռոմեական կոչեցյալ սուլթանների իշխանության տակ էին:

Իսկ մեծն Հուլավուն իր գալստյան նույն տարում, յոթ հարյուր չորս թվին, գնաց Մլհեղքի Ալամուդ կոչված երկիրը, գրավեց այն, հեռացրեց գլխավորին, որովհետև նրա գալուց առաջ նրանց զորքը պաշարվել ու նեղ վիճակի մեջ էր ընկել. նրանց գլխավորի անունն էր Իսավուր նոյին: Եվ Հուլավուն երբ այնտեղից վերադարձավ, իր մոտ կանչեց Վրաց Դավիթ թագավորին ու աշխարհի մեծամեծներին և սիրով ու պատվով ընդունեց բոլորին, մանավանդ քրիստոնյաներին, որովհետև իր առաջին կինը՝ Տողուզ խաթունը[3], քրիստոնյա էր՝ ըստ ասորական կրոնի, որոնք նեստորականներ են կոչվում, սակայն [Տողուզ խաթունը] տեղյակ չէր նրանց աղանդին, այլ մաքուր սիրով մեծարում էր քրիստոնյա ամբողջ ժողովրդին և պահանջում էր աղոթել, ինչպես անում էր հենց ինքը՝ Հուլավու էլչանը[4]: Եկեղեցաձև կտավե վրան էին ման ածում նրանց հետ, և ժամհարի ձայնով, պատշաճ աղոթքներով պատարագ մատուցելով՝ անընդհատ պաշտամունք էին կատարում քահանաներն ու սարկավագները, և ազատ կերպով գործում էին դպրոցներ մանուկների ուսման համար: Եվ այնտեղ հանդիպանում էին այն եկեղեցականները, որոնք բոլոր կողմերից գնում էին քրիստոնյաների լեզուներով խաղաղություն փնտրելու, որը գտնում էին և ուրախությամբ ու պարգևներով վերադառնում:

Ցոթ հարյուր հինգ թվին մեռավ հյուսիսի մեծ կուսակալ Բաթուն: Եվ նույն տարում նրա որդի Սարդախը թունավորվեց իր եղբայրների կողմից նախանձի պատճառով, որովհետև հոր կողմից և Մանգու ղանի հավելագրով իշխանությունը նրան էր հանձնվել: Նրա մահը մեծ սուգ պատճառեց քրիստոնյաներին, որովհետև [նա] կատարյալ քրիստոնյա էր և դարձավ շատերի փրկության պատճառը՝ յուրայիններից ու օտարներից [շատերին] բերելով հավատքի:

ՂԱ. Ցոթ հարյուր յոթ թվին քաջն Հուլավուն գրավեց Բաղդադը, այն Ջափր Իսմայելացու* կողմից կառուցվելուց հինգ հարյուր տասնյոթ[1] տարի անց, Հայոց թվականության հարյուր իննսունչորս թվին: [Բաղդադը] Տիգրիս գետի ափին է, ինչպես ասում են, հին Բաբելոնից յոթ օրվա ճանապարհ հեռու: Հուլավուն իր ձեռքով սպանեց նաև խալիֆին, որի անունը Մուսթասար** էր, և փրկվեցին այն քրիստոնյաները, որոնք Տողուզ մեծ թագուհու ցանկությամբ ու բարեխոսությամբ ապրում էին այնտեղ:

Եվ որ խալիֆը Մահմեդի ցեղի հաջորդն է համարվում, դա երևաց Հայոց վաթսուն թվին, և հետևորդն ապրեց մինչև յոթ հարյուր յոթ թիվը: Երբ էլչան Հուլավուն վերադարձավ Բաղդադի ավերումից, նույն թվից սկսած երկու տարի պաշարվեց Մուփարկինը***՝ Մարտիրոսաց քաղաքը, որովհետև նշված սուլթանը, որ այնտեղ էր, հակառակվեց Հուլավուի որդի Իսմուդին[2], փակեց քաղաքը և մարտնչեց նրա դեմ, որը էդիլների ցեղից էր, որը դրանով դարձավ Աստծու բարկության նյութ:

[1] Բաթու խանը Ջինգիզխանի առաջնեկ Ջուչի որդին էր, Հոնաց կողմերի իշխողը:

[2] Այսինքն՝ Մեծ Հայքը:

[3] Ըստ Ռաշիդ-էդ-դինի՝ Տողուզ խաթունը Թաթարական Քերայիզ տոհմից էր, Ծնկ խանի որդի Իքուչայի դուստրը:

[4] Իլ-խան Թաթարերեն նշանակում է որևէ երկրի կամ գավառի թագավոր, հպատակ Թաթարական մեծ խանին, որին Խաքան էին կոչում: Հուլավուի համար Իլ-խանը դարձավ սեփական անուն:

* ՄՕ.-ում Ջափրի ու Իսմայելցիների կողմից:

[1] Բաղդադը շինել է Ջաֆար էլ Մանսուրը, Տիրոջ 762 թվին, որից հետո մինչև Հուլավու խանի կողմից գրավվելը լինում է 496 տարի [ՄՕ.-ում հինգ հարյուր տասնհինգ տարի], այսինքն՝ 1258 թ., վերջին խալիֆն էր Մուսթաշեմը, որը խեղդամահ արվեց խանի հրամանով և ոչ թե ձեռքով:

** ՄՕ.-ում Մուսթասար:

*** ՄՕ.-ում Մուփարդին:

[2] Ըստ Կիրակոս պատմիչի՝ Ջիասմութ, ըստ մոնղոլների՝ Իշմութ:

թը, որովհետև պաշարման [սղար][1] ժամանակ կերան սուրբ և անսուրբ անասուն, ապա աղքատ մարդկանց, և ապա իրենցից ծնվածների ու միմյանց, ում կարողանում էին: Մինչև անգամ երեցների ավագն ու գլխավորը, որ այնտեղ էր, կատաղի որկրատապից գազանացած կերավ յուրայիններին և խոստովանություն գրեց թղթի վրա ու հույս հայտնեց, որ մենք կտեսնենք գիրը ու ողորմություն կգտնենք ողորմածից, այսինքն՝ այս մեր բնությունն ստեղծողից: Եվ ինքը, իրեն ենթարկելով տանջանքների ու լացուկոծի և անդադար հառաչանք ու վայնասուն անելով, շունչը փչեց: Նրա խոստովանագիրը, ինչպես որ ինքը հույս ուներ, տեսանք մենք և սպասում ենք, որ նա գիտեցողից ու այս բնությունն ստեղծողից ողորմություն կգտնի, որ իր մահով էլ կարեկցեց մեզ. գթած հայրը, ողորմության խորքը, սիրո անդունդը նույն կամքով ու ողորմությամբ կողորմի նրան, սուրբ եկեղեցու խորհրդով կքավի [մեղքերը] և բոլորին էլ կողորմի, ովքեր զղջմամբ հույս դրին և կդնեն մեր Քրիստոս Աստծու ողորմության վրա: Դուք՝ հանդիպողներդ, սրտի մտոք հայցեք՝ **ամեն** ասելով:

ՂԲ. Ցոթ հարյուր ութ թվին Հուլավուն գնաց Մինջագետք և գրավեց այն քաղաքներն ու գավառները, որոնց մասին մանրամասնորեն գրում են պատմիչները: Նրա մոտ եկավ Հայոց պատրիարքը՝ կաթողիկոսը, օրհնեց նրան և սիրվեց նրա կողմից: Շամի ամբողջ աշխարհը գրավելու ժամանակ նրա հետ էր նաև մեր փառավոր Հեթումը, որը լինելով ամեն տեղ՝ մահից փրկում էր քրիստոնյա եկեղեցականներին ու աշխարհականներին: Տերը նրան հատուցում է հազարավոր մեղքերի թողությամբ, կյանքի երկարատևությամբ՝ ըստ իրենց կամքի, որդդ-որդի:

Հուլավուն վերադարձավ Մուղանի դաշտը[2], այսպես կոչված Դաուին գավառում կամ, ոմանց կարծիքով, Դարան-դաշտում[3] գտնվող իր ձմեռանոցներն ու ամառանոցները, որով-

[1] Արաբերեն՝ հիսար, որ նշանակում է քաղաքի պաշարում:

[2] Մուղան կամ Մուկան դաշտը Հայկի հարավյան Մոկաստանի անունով է: Այն Երասխի վերջին երկու ափերին ընկած խոպան ու անապատ մի ընդարձակ դաշտ է:

[3] Այն գտնվում է Այրարատ աշխարհի հարավային և Վասպուրականի հյուսիսային կողմում:

հետև այնտեղի լեռների շրջակայքում քարայրեր ու դերբուկներ կան, և ինչ որ նա սիրեց, այնտեղ կառուցեց իր սրտի ուզածով: Նա որոշեց քաղաք չինել, որի պատճառով շատ տառապեցին երկիրը, մարդիկ ու անասունները՝ հեռվից ծանր փայտեր տեղափոխելով:

Ցոթ հարյուր ինը թվին գրավվեց Մարտիրոսաց քաղաքը բազում աղետներ ու մնասներ կրելուց հետո, որոնք [կրեց] ոչ միայն պաշարված քաղաքը, այլև քաղաքը պաշարող թաթարական զորքը, ինչպես նաև այն քրիստոնյաները, որոնք նրանց հետ էին և կռվում էին միմյանց հետ և՛ ներքուստ, և՛ արտաքուստ, որտեղ սպանվեց գեղեցիկ երիտասարդ Սևադա Խաչենցին՝ մեծ իշխան Գրիգորի որդին՝ քաջաբար կռվելով ու նահատակվելով, պահպանելով Աստծու ու Էլղանի հավատն ու երկյուղը, որին բաժին է հասնում Քրիստոսի նահատակների արյամբ, ովքեր պահում են նրա հավատն ու երկյուղը. ամեն:

Նույն թվին կոտորվեց այն զորքը, որը թողել էր Շամ երկրի կողմնապահ Էլղան Հուլավուն, մոտավորապես քսան հազար, իրենց մեծ զորագլուխ, հավատով քրիստոնյա Քիթբուղայի հետ, որի հետ մարտնչեց Մսրա սուլթանը թաթարական լեռան ստորոտում անթիվ բազմությամբ: Եվ որովհետև սակավաթիվ էր Բուղայի զորքը, նրանք կոտորվեցին ու գերվեցին, բայց մարդիկ էլ կային, որոնք ցրվելով թաքնվեցին, ազատվեցին և եկան Հայոց թագավորի մոտ: Եվ նրա կողմից արժանացան մեծ մարդասիրության, հանդերձանքի, երիվարների ու ռոճիկի, և թաթարներն ու քրիստոնյաները զոհունակությամբ եկան իրենց տիրոջ մոտ: Եվ դրանից ավելի շատ փառավորվեց Քրիստոսի անունը Հեթում արքայի միջոցով օտարների ու հայրենակիցների կողմից:

ՂԳ. Ցոթ հարյուր* թվին իշխանաց իշխան, արքայաշուք Ջալալը[1] դաուն չարչարանքներով կցորդակից դարձավ Քրիստոսի և նրա նահատակների մահվանը՝ դատարկախոս տաճիկների կողմից իզուր դատապարտվելով և հանձնվելով Արղունին: [Նրան] տանելով Տաճկաստան, Խազվինի մոտ և այնտեղ գիշերով հողակոտոր անելով՝ սպանեցին, պատճառ բռնելով միայն նրա քրիստոսասիրությունը: Նա իր ամբողջ ժամա-

* ՄՕ.-ում յոթ հարյուր տասը:

[1] Խաչենի տերը:

նակը մինչև ծերություն անցկացրել էր պաս պահելով, աղոթք անելով, ողորմածությամբ, իսկ կիրակի օրերը՝ ոտքի կանգնած վիճակում: Դրա համար էլ Աստված բարձունքներից լույսով մեծարեց նրան՝ իջնելով նրա հոշոտված մարմնի մասերի վրա, պսակելով ու վկա լինելով նրա անմեղ մարտիրոսական մահվանը: Այն տեսնելով՝ նրան սպանողները սոսկացին և [դիակը] գցեցին ցամաք ջրհոր, մինչև որ եկան յուրայինները, տարան և թաղեցին իր սեփական Գանձասար[1] կոչվող վանքում, իր հայրենի տան գերեզմանոցում, որի վրա բերողները տեսան լույսի նույն ճառագայթները: Հայոց թվականության նույն՝ յոթ հարյուր* թվին Ելդան Հուլավուի դուռը սպանեցին Վրաց Զաքարե զորապետին՝ Շահնշահի որդուն, բոլորին հայտնի և ծանոթ [մարդուն], երիտասարդ ու ծաղկագեղ հասակում, իր առաջադիմության ու հաջողության ժամանակ՝ ինչ-որ մեղադրանք բարդելով նրա վրա, նաև այն, թե խափանվել է իր ժամանակին արքունիք գնացող հարկի կարգը: Նրա մահը ողորմագին վայնասունով սգաց Վրաց ամբողջ ազգը Հայաստանի՝ նրանց մերձավորների հետ միասին. որքա՜ն ավելի դառնակսկիծ ու մարմնատանջ ողբով էին սգում նրա ծնողները: Այդ պատճառով նույն օրը, այդ նույն սև օգի ժամանակ սրտակոտոր լինելով մեռավ նրա հայրը՝ Շահնշահը, տերը Անի մայրաքաղաքի, որը երբեմն արքայանիստ քաղաք էր՝ Բագրատունյաց թագավորների և այլևայլ աշխարհների ավագ քաղաքը, իսկ Անիի տիրոջ անունը Շահնշահ էր կոչվում, այսինքն՝ արքայից արքա:

Ղե. Յոթ հարյուր տասնմեկ թվին վախճանվեց Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը ջրգողության դառն ցավերից՝ դեղ չգտնելով բժիշկներից, բացի միակ Հիսուս Աստծուց, որը կյանքի անմահության դեղ է, որի մոտ փոխադրվեց մեծ հույսով, խոստովանությամբ, արժանավոր կտակով՝ իր կյանքն ապրելով հեզությամբ ու ողորմածությամբ:

Յոթ հարյուր տասներկու թվին վախճանվեց անվանի ճրագնավոր, պատվավոր աստիճանների ու կոչումների արժանի, երկրի երևելի ու անվանի մարդը՝ Տուեցի կոչված տեր Հովհաննեսը, որի կոչումը Աստծու շնորհիվ Գարդմանա տան և այլ բերդերի ու գավառների քահանայությունը, վարդապետությունն ու արքեպիսկոպոսությունն էին: Նա երեք հինգշաբթի պասը կատարում էր անհաց ու անջուր, նույնը կրկնում էր նաև ուրբաթ ու չորեքշաբթի օրերը, բոկոտն Երուսաղեմ էր գնում, մեծ պասի օրերին ոտքի վրա էր մնում, իսկ սուրբ Հարության ժամանակ՝ անհաց: Նա զարմացրեց Փռանգների ազգին, որն այնտեղ էր գտնվում, որովհետև ապրում էր ոչ միայն հոտնկայս ու անկերակուր, այլև լուռ կերպով: Նա Աստծուց խնդրում էր հայտնի համբավավոր հավատը, որը գալիս էր դեպի ազգը, թե երբ լույսն իջել է, Հայոց կանթեղն է վառվել, ինչպես հենց ինքը պատմեց, թե ով պահում էր սուրբ գերեզմանի կամարակապ մատուռը [կուբան][1], սիրում ու փարվում էր մեզ, իսկ մենք նրանից խնդրեցինք դեպքերի հավաստիքը: Եվ նա ասաց. «Դու գնիր կանթեղներ և բեր, կախիր քո ձեռքով»: Ես այդպես էլ արեցի. գնեցի երեք կանթեղ և կախեցի սուրբ գերեզմանի վրա. աջ կողմում՝ Ֆրանկների անունով, ձախ կողմում՝ հույների, իսկ միջին մասում՝ հայերի, ինչպես իրենք սովոր էին: Մենք նույնիսկ փակեցինք դուռն ու կնքեցինք, և պահապանն ինձ տվեց կնիքն ու բանալին ավագ ուրբաթ օրը: Ավագ շաբաթ օրը, ժամը իններին, քանի դեռ մենք աղոթում էինք, մեզ հետ [աղոթում էին] նաև ամբողջ քաղաքն ու հեռաստաններից եկած աղոթողներն առհասարակ, կամարակապ մատուռի պահապանն ինձ ասաց. «Տե՛ր, հրամայիր և բա՛ց արա, որովհետև լույսն իջավ»: Ես գնացի, բացեցի դուռը՝ հեռացնելով կնիքը, և ճշմարիտ, առանց կասկածի ներսում կանթեղը վառվում էր բորբոքված կերպով, անասելի* գեղեցկությամբ: Եվ այդ հրաշքի[2] միջոցով փառավորվեց ու հռչակվեց այն մարդը՝ տեր Հովհաննեսը: Եվ նա ասաց այս խոսքը, «Թե գնացի սուրբ Բեթղեհեմ, այնտեղ տեսա սուրբ առաքյալների նկարները՝ նկարված եկեղեցու պարսպի վրա, և տաճիկները անարգելու համար փորել էին աչքերը: Այդ դեպքից

---

[1] Գանձասարը անվանի մենաստանն է և Աղվանքի կաթողիկոսների առաջին ու վերջին աթոռավայրը, որը գտնվում է Արցախի Մեծիրանք գավառում:

* ՄՕ.-ում յոթ հարյուր տասը:

[1] Կուբա, قبة, նշանակում է կամար կամ կամարակապ մատուռ: [Իսկ ըստ «Միջին հայերենի բառարանի»՝ արաբ. gubba «գմբեթ» (հ. 1, էջ 411)]:

* ՄՕ.-ում անասելի՝ անսպառ:

[2] Ըստ հեղինակի հավատի՝ Հովհաննեսի այս և հետագա հրաշագործությունները կատարվել են Երուսաղեմում:

տրտմեցի ու աղոթեցի սուրբ առաքյալներին՝ աղաչելով հայտնել ինձ, թե հաճելի՞ է նրանց, որ ամենուրեք նկարեն իրենց: Եվ երբ վերադարձա Երուսաղեմ, այն գիշերը երազում տեսա երկու փառավոր մարդու, որոնք գալիս էին ինձ մոտ: Ես նրանց ընդառաջ գնացի և ասացի. «Ովքե՞ր եք դուք՝ Աստծու սրբերդ»: Նրանք պատասխանեցին. «Պետրոսն ու Հովհաննեսը, որոնց աղաչեցիր պարզաբանել քրիստոնյաների կողմից մեզ նկարելը, որը ամենևին հաճելի չէ մեզ, և մենք ճանձրացել ենք ու տեղ-տեղ հայտնում ենք, բայց մեզ չեն լսում»[1]: Ասում է նրան Երուսաղեմ ուղեկցող աբեղան, «թե Հովհաննեսը բոկոտն եկավ, մինչև նշված տեղը և ապա մի օր ինձ կանչեց ու ասաց. «Տես, որ իմ ոտքը ցավում ու նեղում է ինձ»: Եվ երբ տեսա ու ասեղով ուռուցքը փորփրեցի, գտա փշի սրածայր ու հաստ մի կտոր, որի հետ քիչ թարախ դուրս չելավ. զարմանքը պատեց մեզ, որովհետև մինչև տեղ հասնելը նա մեզ ոչինչ չհայտնեց՝ հանուն Աստծու և սուրբ տեղերի սիրո արհամարհելով կսկիծը: Այսպիսի զառիվեր ու նեղ ճանապարհով հասնելով մինչև խոր ծերություն՝ վախճանվեց Անապատ անունով Նոր բերդ հռչակավոր վանքում, թաղվեց եկեղեցու դռանը, որը հենց ինքն էր շինել, կառուցելով նաև բազում այլ շենքեր ու [կատարելով] արդյունավետ [այլ] գործեր՝ թագավորազն Վասակ Բագրատունու հրամանով, կամքով ու օգնությամբ: Նրա հիշատակը օրհնությամբ հավիտյանս կրմնա կաթողիկե եկեղեցում, Աստծու առջև անչիջանելի անուշահոտությամբ:

ՂԶ. Ցոթ հարյուր տասներեք թվին մեզ կանչեց Հուլավու Էլղանը Շնորհավոր[2] անունով մարդու միջոցով, որն այն ժամանակ մեծարվում էր բոլորի կողմից, առավել ևս աշխարհակալների, հյուսիսի կուսակալ Բաթուի, որի մոտ գնաց ու նախ

[1] Առաքյալների նկարները կային նաև հայկական եկեղեցիներում, ուր աղոթեցին հեղինակն ու տեսնողները, բայց դրանք ճանձրույթ պատճառելու աստիճան շատ չէին:

[2] Շնորհավորը այն վաճառականն էր, որը Ռամկի հետ գտնվեց Կարին քաղաքում թաթարների կողմից քաղաքի գրավման ժամանակ: Բայց ոմն ժամանակագիր ասում է. «Սարվանին՝ Շահբատինի որդին, Վարդան վարդապետին տարավ Հուլավուի մոտ, որին մեծ վիրով պատվեց խանը և բազմաթիվ խմաստուն հարցեր քննեց սուրբ վարդապետի հետ»: Տե՛ս նաև էջ 208:

պատվի արժանացավ նրա, և ապա Հուլավու Էլղանի կողմից: Վերջինս իր ծախսով ու գրաստներով տարավ մեզ ու մեզ հետ եղող վարդապետներին՝ մեր եղբայրներ Սարգսին, Գրիգորին և Տփղիսի ավագերեց տերտերին: Եվ այդ մեծ մարդուն մենք տեսանք ամսամուտի ու իրենց տարեմուտի ավագ օրերին, ըստ հռոմեացիների՝ հուլիս, իսկ ըստ մեզ՝ արաց[1] ամսին: Դրանք նրանց ուրախության օրերն էին, մոտավորապես մեկ ամիս, որը կոչում էին խուռուլթա[2], այսինքն՝ խորհրդատոն: Այդ ժամանակ այլ խաները, այսինքն՝ Զինգիզ խանի ազգականները, գալով մեծ խանի մոտ, ամբողջ ավագանու հետ միասին հոգ էին տանում այն ամենի մասին, ինչ որ պատշաճն էր: Նրանք բոլորը նոր շորեր էին հագնում և ամեն օր տարբեր գույնի շորեր փոխում: Այնտեղ լինում էին նաև իրենց բոլոր հպատակները շատ ընտիր նվերներով, [լինում էին] թագավորներ, սուլթաններ, ինչպես նաև մեր տեսած Հայոց Հեթում թագավորը, Վրաց Դավիթ թագավորը, Անտաքի բրինձը[3] և Պարսից կողմերի շատ սուլթաններ: Եվ մեզ ընդունելիս չթողեցին խոնարհվել կամ ծնկի չոքել[4] ըստ իրենց սովորության, որովհետև քրիստոնյաները[5] միայն Աստծուն են երկրպագում: Գինին մեզ օրհնել տվեցին և մեր ձեռքից առան: Եվ առաջին խոսքը, որ ինձ ասաց, այս էր. «Քեզ կանչել եմ, որպեսզի դու ինձ տեսնես, ճանաչես և սրտանց աղոթես ինձ համար»: Թերևս ավելորդ է ամբողջը գրել, [նա] շատ խոսեց, և մենք պատասխան տվեցինք, հետո մեզ նստեցրին, գինի տվեցին, և մեր այն եղբայրները, որ մեզ հետ էին, շարականներ կատարեցին, իսկ վրացիները, ասորիները և հույները կատարեցին իրենց պաշտամունքը: Այն օրը, երբ բոլորը տեսան տարբեր կողմե-

[1] Ըստ հայոց չարժական տոմարի՝ նավասարդը [ամանորը] այդ տարում ՉԺԳ 1264 թվին, սկսվում էր հունվարի 14-ին, իսկ թաթարների տարեմուտը հուլիսի սկիզբն էր:

[2] Թաթարները **զուրլթաք** [ՄՕ.-ում խուռուլթա] էին կոչում իրենց տիեզերական ժողովները կամ տոները, երբ ընտրում էին խաքաններ [խաներ] կամ քննարկում այլ կարևոր հարցեր:

[3] Prince, այսինքն՝ Անտիոքի Ֆոանգ իշխանը:

[4] **Զյուքմեք** թուրքերեն է, որ նշանակում է **ի զուտ տնկանել**՝ ծունկ չոքել:

[5] [ՎՕ.-ում արքաունք, ՄՕ.-ում արքայունք]. Թաթարները այդպես էին կոչում քրիստոնյաներին:

րից եկողներին, Էլղանն ասաց. «Թե ես միայն քեզ եմ կանչել, իսկ այս ի՞նչ է նշանակում, որ ոչ առաջ և ոչ հետո, այլ մի օրում բոլոր կողմերից եկան քեզ հետ՝ տեսնելու և օրհնելու ինձ»: Եվ այդ հարցին ինքը տվեց պատասխան. «Ինձ թվում է, թե դա նշան է այն բանի, որ Աստծու սիրտը լավ է ինձ վրա»: Մենք ասացինք. «Մեզ էլ մեծ զարմանք պատեց, և մենք ցանկացանք իմանալ պատճառը, որը դուք նշեցիք»: Այնուհետև նա ավելացրեց, «Թե գաղտնի խոսակցություն ունեմ քեզ հետ»: Եվ մեկ օրում շատ պատմություններ արեց, հեռու կանգնեցնելով ամբողջ բանակը՝ միայն երկու մարդկանցով երկար խոսեց մեզ հետ, իր ծննդից սկսած և մորից հետո, որ քրիստոնյա էր, ասում է. «Թեպետ դայակն է մեծացնում երեխային, բայց երբ նա հասակ է առնում, իր մորն է սիրում: Մենք քրիստոնյաների հանդեպ սիրուց զուրկ չենք, ինչ որ ասելու ես, ասա»: Նա բռնել էր իմ ձեռքը, և մենք ասացինք այն, ինչ Աստված թույլ տվեց ասել. «Թե դու որքան բարձր ես մյուս մարդկանցից, այնքան մոտ ես Աստծուն: Աստծու աթոռը արդար դատաստանով է հաստատուն: Աստված ամեն ազգի տվել է աշխարհին տիրելու իշխանություն*: Մինչև ձեզ հասնելը [ձեր նախորդները] աշխարհավեր են եղել և անգթորեն ծանր բեռ դրել աղքատների վրա, նրանք[1] հոգոց են հանել ու լաց եղել Աստծու առաջ: Աստված վերցրել է իշխանությունը և ուրիշ ժողովրդի տվել: Եթե դուք աշխարհաշեն լինեք և աղքատներին ողորմացող, Աստված ձեզնից չի առնի, այլ ինչ որ տվել է, կթողնի ձեզ և կտա այն, ինչ ուզում է տալ: Քո դռանը այնպիսի[2] մարդ դիր, որ երկնչում է Աստծուց ու սիրում ձեզ և լալով իր դուռը եկած տառապյալին առանց աղերսանքի ու կաշառքի ուրախ տուն է ուղարկում[3] և սիրով քեզ է հիշեցնում: Եվ մեր աշխարհը տուր** այնպիսի մարդու, որը տեսնում է հստակորեն, կաշառքից չի կուրանում և քեզ ասում է ճշմարտությունը»:

---

* ՄՕ.-ն ավելացնում է՝ և փոքձեալ՝ և փորձել:

1 [ՎՕ.-ում նոքան, ՄՕ.-ում նոքա]՝ նրանք:

2 [ՎՕ.-ում հէնց, ՄՕ.-ում հանց]՝ այնպիսի:

3 [ՎՕ.-ում ազարկէ, ՄՕ.-ում յուղարկէ]՝ ուղարկում է:

** ՎՕ.-ում զաշխարհս տեսանել տուր, ՄՕ.-ում զաշխարհս տուր՝ այս աշխարհը տուր:

Այս կարգի բաների մասին շատ խոսեցինք: Նա ասաց. «Իմ սրտում դրեցի քո խոսքերը: Ինչպե՞ս[1] դու արտահայտեցիր այն ամենը, ինչ որ արդեն կար իմ սրտում: Աստված երբևէ խոսե՞լ է քեզ հետ, երևացել է քեզ»: Մենք պատասխանեցինք. «Չէ, մենք մեղավոր մարդ ենք, սակայն[2] աստվածախոս մարդկանց գիրքը կարդացել ենք: Թագավորների սրտերը Աստծու ձեռքում են, Աստված հայտնվել է քեզ առանց գրքի»: Հետո մենք ասացինք. «Աստծու առաջ մի խոսք եմ ասելու, որը նախ Աստված լսի, հետո դու, և որ այդ խոսքում սուտ չկա»: Նա հրամայեց՝ ասա: Ասացի. «Ծովում, ցամաքում, ինչքան քրիստոնյա կա, բոլորի սիրտը քեզ հետ լավ է, և նրանք քեզ համար են աղոթում»: Նա խոսեց և ասաց. «Հավատում եմ, որ այդպես է, իսկ եթե քրիստոնյաները Աստծու ճանապարհի վրա չեն, ինչի՞ է պետք նրանց աղոթքը, իսկ եթե աղոթում են, Աստված ե՞րբ է լսում նրանց: Թշվառ [մեշում][3] քրիստոնյան Աստծուն երկնքից երկիր է բերո՞ւմ.- չի կարող բերել: Մենք ասացինք՝ լավ է, եթե Աստծու ճանապարհին մնան ու աղոթեն մեզ համար: Մեր եղբայրները[4] մեզ հետ այն պատճառով են կռվում, որ մենք քրիստոնեասեր ենք, և մեր տանը քրիստոնեություն կա, իսկ նրանք տաճկասեր են, և նրանց տանը տաճիկի կրոնն է»:

Հետո մեզ ասում է. «Ինչո՞ւ ես ոչխարենի հագել և ոչ թե ոսկի»: Եվ իմանալով*, որ մենք մեծ մարդ և բարձր աստիճանի տեր չենք, սոսկ [լուր][5] մի աբեղա ենք, նա ասաց. «Քեզ մեծարում եմ ոսկյա զգեստով և շատ ոսկի եմ տալիս»: Իսկ մենք ասացինք. «Մեզ համար ոսկին ու հողը մեկ են, մենք ուրիշ մեծ բան ենք ուզում, որ վայել է քո մեծությանը և քո ողորմությանը աշխարհի վրա»: Եվ նա ասաց. «Խիստ վատ,

---

1 Հին Օ.-ում ուստի՞ է այս, զի...՝ որտեղի՞ց է այս, որ ...:

2 [Վենետիկյան և մոսկովյան օրինակներում ապա. հրատարակիչը ծանոթագրում է]՝ սակայն:

3 Մշշում արաբերեն է, որ նշանակում է թշվառ: [Ըստ «Մինչին հայերենի բառարանի»՝ «վատ, վատթար» (հ. 2, էջ 131)]:

4 Ակնարկում է Պերքայի պատերազմը, որը հետո հիշում է մեր հեղինակը:

* ՄՕ.-ում իմ ասացեալ՝ ես ասացի:

5 [ՎՕ.-ում լուր, ՄՕ.-ում լուի. հրատարակիչը ծանոթագրում է]՝ սակ:

խղճուկ քուրձ [մեշում քթեթ][1] եմ կարում քեզ համար և շատ քիչ բան[2] եմ տալիս, միայն այնքան, որ եկեղեցու համար խունկ գնես, թե չէ ժողովուրդը* ի՞նչ կասի, թե Էլղանը նրան ինչպե՞ս տեսավ: Եվ այն, ինչ ասացիր, կկատարեմ և մարդիկ կուղարկեմ, որպեսզի կառավարեն երկիրը»:

Իսկ երբ մենք գնալու հրաման խնդրեցինք, էլի կանչեց մեզ և խոսեց: Ձեռքում բռնել էր ոսկյա, թե արծաթյա դրամ [բալիշ][3] և կարել էր տվել երկու [ձեռք] հագուստ: Հիշեցրինք. «Էլղան, քո այդ դրամը կհատվի, իսկ հագուստը կմաշվի, մենք քեզանից անհատնելի ու անմատչելի պարգևներ ենք խնդրում»: Եվ նա ասաց. «Դեռևս առաջին օրը քո խոսքը լիովին կատարեցի [լմնեցի][4], հրովարտակ [առլեխ][5] եմ գրել տվել, կարդալ տուր, և ինչ որ քո սրտին ավելի մոտ է, այն արտագրել տուր: Եվ քո երկիրն ու քեզ հանձնել եմ Սախալթուին ու՝ Շահաբատինին**, որպեսզի ինչ որ ասես, նրանք կատարեն»: Մենք շնորհակալ եղանք և վեր կացանք: Թերևս ավելորդ է այս մասին գրելը, բայց գրեցինք հօգուտ բարեսեր ու քաղցրաբարո մեծն Հուլավուի հիշատակի կամ որպես օրինակ ուրիշների համար, ովքեր գալու են մեզնից հետո, ո՞վ գիտե:

Ղէ. Քանզի հայոց թվականության յոթ հարյուր տասնըչորս թվի սկզբին, երբ այդ մեծ [մարդու] մոտ հասավ մեծագույն մի հրավիրակ, և նրա զորեղ զավազանը խփեց կտրիճ ու քաջ Հուլավուին, և նրան հասավ նախահոր վճիռը, քանի որ նա ևս Աղամի որդին էր և խմեց այն բաժակից, որից բոլորը ճաշակեցին ու ճաշակում են: Թեև այն դառն էր նրա համար, և նա խմեց մահվան դառնությունը, բայց ոչ ուրախությամբ, ինչպես Տերն ու նրա վրա հույս դնողները, որովհետև խաբում

1 Քաթանե գծուծ զգեստիկ:

2 Իմա՝ և յոթ ոսկու ինչ դրամ ասաց՝ և շատ քիչ դրամ կտամ:

* ՎՕ.-ում երկիր, ՄՕ.-ում եկիր՝ եկար:

3 Բալիշը ոսկյա կամ արծաթյա տախտակաձև կտրված դրամ է. ոսկին երբեմն արժեր արաբական 2000, իսկ արծաթը՝ 200 դինար:

4 Լիովին կատարեցի:

5 Առլեխ, յարլիգ նշանակում է հրամանի հրովարտակ: [Ըստ «Մինչև հայերենի բառարանի»՝ պրսկ. yarlig՝ «Հրամանագիր, հրաման» (Հ. 1, էջ 186)]:

** ՄՕ.-ում տախալթու ու շահաբատին:

էին նրան ատողագետները ու այսպես կոչված Շակմոնիա[1] արձանների քուրմերը: Ասում են, թե [Շակմոնիան] երեք հազար քառասուն տարվա Աստված է, որը գոյություն է ունենալու ևս երեսունհինգ դուման*, իսկ դումանը[2] տասը հազար է: Նաև ասում են, թե նրան փոխարինելու է մյուս [աստվածը]՝ Մոնդրին[3] անունով մեկը: Տոյինք[4] էին կոչում այն քուրմերին, որոնց նա հավատում էր ու նրանց հրամանով դուրս էր գալիս պատերազմի կամ ոչ: Նրանք նրան ասում էին, որ նա երկար է մնալու իր այդ մարմնի մեջ, իսկ երբ շատ ծերանա, նոր մարմին կստանա: Եվ նրան այդ արձանների համար մեհյան կառուցել տվեցին: Եվ երբ նա գնում էր այնտեղ աղոթելու, կախարդում էին նրան, ինչպես կամենում էին:

Եվ մինչդեռ մենք սպասում էինք այլ ժամանակի և առավելագույնի երկրորդ տեսությանն ու ծանոթությանը՝ նրան արժանին ասելու համար և քանի դեռ մենք սպասում էինք նրան ցույց տալու բարեսեր ու քրիստոնեասեր բարքից [ծնված] ու քրիստոնյաներին ձեռնտու Աստծու հրաշքը՝ վստահությամբ նրան ինչ-որ բան ասելու համար, քանզի նա կրթվել էր քուրմերի խոսքերով, նա հիվանդացել էր: Այն ժամանակ քուրմերը թաղիքե պատկերներին ու ձիերին խոսել էին տալիս, որովհետև նրանցում խաբեության ու հմայության մեծ արվեստ կար: [Քուրմերը] պարկեշտ էին կերակուրների, հագուստների, կուսության, չափավոր ամուսնության և զուգավորության մեջ: Ասում են, որ նրանք ամուսնացել են քսան տարեկանում, մինչև երեսուն տարեկանը շաբաթական կենակցել են երեք անգամ, մինչև քառասուն տարեկանը՝ ամիսը երեք անգամ, մինչև հիսուն տարեկանը՝ տարին երեք անգամ, իսկ հիսունն անց, ասում են, որ բնավ չեն կենակցել, բայց կարող է

1 Հնդկերեն Շաքյա-մունի, որը Շաքյան տոհմի թագավորի կողմից մարմնացած մի Բուդդա ասածու անուն էր, իսկ Մունի նշանակում է նրանց մոտ նպաստավոր սրբազան:

* ՄՕ.-ում երեսունյոթ թուման:

2 Ըստ պարսկերեն լեզվի:

3 Ըստ Կիրակոսի և Ստեփանոս Օրբելյանի՝ Մադրին, իսկ ըստ հնդիկների՝ Մահդրեյա. այդպես են կոչում Բուդդային մինչև վարմանապն ու մարգկանց փրկության համար աշխարհ գալը:

4 Թաթարերեն՝ թուքն:

պատահել, որ այդ տարիքում նրանք կարող էին նաև խաբել: Եվ այսպիսով գալիս, հասնում է օրհասը. մահը իր լայն ոտքերով տրորում է այն բարձր բլուրը, փլցնում և նրան հավասարեցնում է իր նախնիներին. «քանզի այն լեռը, որը փուլ է գալու, փուլ կգա»,- ասում է [Սուրբը] գիրքը: Եվ իրականանում էր մարգարեի հաստատուն խոսքը, որ մարդու ամբողջ փառքը բույսի ծաղկի նման է: Բայց հավատարիմ է Տերը և արդար՝ նրան հատուցելու բարի բաժնի համար, որ նա ստացել էր բնության օրենքով և իր հայրերի[1] ավանդույթը պահպանելով, որովհետև Զինգիզ խանի սահմանած կարգը, ինչպես իրենք էին ասում, ասախը[2], [այն է]՝ սուտ չխոսել, չգողանալ, ուրիշի կնոջ հետ չկենակցել, ուրիշին սիրել իր անձին հավասար, չհայհոյել ու բնավ հայհոյանք չիմանալ, կամավոր հնազանդվողներին՝ երկիր, քաղաք, խնայել, Աստծու տները [եկեղեցիները] ու նրանց սպասավորներին, ինչպիսին որ լինեն նրանք, հարկերից ազատ թողնել ու նրանց պատիվ տալ,- այս բոլորը պահպանում էր ինքը [Հուլավուն] և ուրիշներին էլ հրամայում էր պահպանել: Բացի դրանից, մենք հիշում ենք նաև նրա հետևյալ ասածը. «Մենք, որ պատվիրում ենք աղոթել մեզ համար, դա ոչ թե մահից ազատվելու համար է, այն մենք չգիտենք, այլ Աստծուց խնդրում ենք, որ որ մեր թշնամիների ձեռքով չմեռնենք»: Դուցե նրա այդ կանխազուշակումը կատարվեց. դա միայն Աստված գիտե, որովհետև նախ հայտնեցին, թե դեղով ու հնարքով սպանեցին, իսկ հետո թաքցրին այդ զրույցը: Սակայն Տողուզ խաթուն անունով մեծ տիկինը նախքան մահվան մասին հայտնելը գաղտնի մեզ մոտ ուղարկեց [սուրհանդակ] և [հայտնեց], «թե Աստված սիրեց էլղանին ու նրան տարավ այստեղից: Նա, որ էլղանին տվել էր այս աշխարհը և այն ամենը, ինչ նա սիրում էր, այժմ էլ նրան տվեց այն աշխարհը. պատարագ լինի՞, թե ոչ»: Եվ մենք պատասխանեցինք. «Պետք չի պատարագ անել, այլ ողորմություն ու հարկերի թեթևություն արեք», իսկ ասորիներն ասել էին, թե հարմար է պատարագ անել: [Տողուզ խաթունը] հարցրել էր նաև Ապաղայի մասին, որը Հուլավուի ավագ որդին էր,

[1] Զինգիզ Հայրենի օրենքն պահելով՝ իրենց հայրենի օրենքը պահելով:

[2] Ասասդ, ասախ նշանակում է հրամանի արգելում: [Ըստ «Մինչին հայերենի բառարանի»՝ պրսկ. yasag «օրենք. արգելում, արգելելը» (հ. Ա, էջ 80)]:

թե պե՞տք է նրան դնել, որովհետև կտակով նրան էր նշանակել: Մենք պատվիրեցինք, որ [Սուրբը]՝ գրքով [է նախատեսված] «ավագին դնել, իսկ կտակն էլ իր ստուգությամբ անպայման պետք է կատարվի», ինչպես որ իրականում եղավ: Եվ իրենց ազգական էլղան Տակութարը գնում ու Ապաղային նստեցնում է թախտին՝ նրա հոր գահին: Այդ արարքին հավանություն է տալիս ամբողջ զորքը և հնազանդվում է: Սակայն քանի որ մեր մեղքերը անչափ էին, չափավոր չեղավ և մեր սուգը, որովհետև նույն թվին, երեք ամսից հետո, վախճանվեց քրիստոնասեր թագուհի Տողուզ խաթունը, և քրիստոնյա ժողովուրդները սրտաբեկ լինելով [ողբում էին] բազմապատիկ սգով ու տրտմությամբ: Նրա կյանքի ընթացքում անմիջապես սկսեց վերակենդանանալ էլղանի խոցը, և մենք ակնկալում էինք քրիստոնեության է՛լ ավելի պայծառանալուն, քանի որ մեր կարծիքով՝ պայծառանալու պատճառը ստույգ նա էր: Բայց քանի որ Աստված է ամեն մի բարիքի պատճառը, մենք չպետք է մեր հույսը կտրենք, քանի որ նա իր փոխարեն նշանակեց մեկ այլ հավատացյալ կնոջ՝ իր ազգական, բարեպաշտոն Թուխթանին: Եվ Հունաստանից Ապաղայի համար Դեսպինա[1] անունով կին բերվեց, որը այն թագավորի դուստրն էր, որին Վատած էին կոչում, [բերվեց] նաև պատվեր, ըստ որի Ապաղան նախ պետք է մկրտվեր և ապա ամուսնանար: Եվ լուր տարածվեց, թե նա իսկապես մկրտվեց և առավ նրան՝ ի փառս Քրիստոսի:

Այդ օրերի ընթացքում իմ մեղքերի պատճառով գրքույկս իմ սպասավորների հետ միասին ընկավ հարամիների[2] ձեռքը, բայց Հիսուսի ողորմությամբ իմ սպասավորները անմիջապես ազատվեցին: Եվ մեկ ու կես տարի անց գիրքս վաճառքի է բերվում Տփղիս, և այն գնում է իմ եղբոր տնից Մելեր անունով մեկը: Դրա համար Տիրոջ ողորմության փառքը բոլոր սրբերի ու արարածների վրա է, իսկ գիրքը գնողին թող հասնի Քրիստոսի գթությունը:

[1] Դեսպինա, հունարեն, Decnoiva, նշանակում է տիկին կամ տիրուհի, որը Տիրովադացի տոհմից էր, կայսր Միքայել Պալեոլոգի ապօրինի դուստրը՝ Մարիամը:

[2] Հարամի բառը թաթարների ավազակն է կամ ինքնագլուխ զինվորը: [Ըստ «Մինչին հայերենի բառարանի»՝ արաբ. harami «ավազակ» (հ. 2, էջ 24)]:

ՂԸ. Յոթ հարյուր տասնհինգ թվականի սկզբին Հյուսիսի կուսակալ Բարքա[1] կոչեցյալը, որ տիրում էր Բաթուի ու Սարդախի տարածքներին և հավանել էր տաճիկների կրոնը, լսելով մեծն Հուլավուի մահվան մասին, զորքերի մեծ բազմությամբ գալիս է Կուր գետի մոտ և իրեն ցույց է տալիս [գետի] այս կողմում կանգնած Ապաղայի զորքին ու իր եղբայր Իսմուդին, որպեսզի նրանք իմանան, որ ինքը կենդանի է իր հոր մահից հետ: Նա գալիս, ոտնատակ է տալիս նրանց, անփութությամբ հասնում է մինչև Հեճ[2] և այնտեղ աղոթում է հուրախություն բոլոր տաճիկների: Վախենալով այս կողմերում մնացողներից՝ այս կողմից ցանկապատում են այն գետը, որը Շիբար[3] էին կոչում, և ամբողջ պատրաստությամբ պաշտպանում էին ձմռան օրերին: Իսկ Բարքան, հույսը կըտրելով, վերադառնում է իր տեղը և ամռանը վախճանվում: Նրա մասին ասում են, որ վարքով խռովարար չէր, այլ արյունահեղությունն ատեցող էր:

ՂԹ. Նույն թվի աշնանը մեզ՝ հայերիս համար բացվեցին քաջախի դառն ամանն ու Աստծու բարկության մրուրը, քանզի Փնտխտար[4] անունով Մսրա սուլթանը պահանջում էր այն բերդերը, որոնք թաթարների օգնությամբ գրավել էր Հայոց Հեթում թագավորը: Եվ երբ [հայերը] չեն տալիս, ավելի շատ թաթարի երկյուղից խիստ բարկանում է, հավաքում է մեծաքանակ զորք և ոմն Սմլմոթ[5] անունով զորագլխի միջոցով ուղարկում է Կիլիկիա: Հանկարծակիորեն մտնելով երկիրը՝ նա գրավում է արքայանիստ Սիս մայրաքաղաքը, այրում է այն՝ նրանում եղած եկեղեցիների հետ միասին: Նա գտնում է գետնափոր գանձարանը և ամբողջությամբ թալանում: Ասում են, որ այնտեղ ամեն մի ամանի մեջ կար վեց հարյուր հազար ոսկեդրամ [կարմիր][1]: Երկիրն ավերելով՝ նա հասնում է մինչև Աղանա և ապա լսելով տաճկապալի լուրը՝ վերադառնում է ավարով ու քառասուն հազար գերիներով, չհաշված կոտորածները: Վերջիններիս մեջ գլխավոր ու անբուժելի խոցը Թորոս արքայազն էր, որը գեղեցիկ ծաղիկ էր: Նա [զոհվեց] մատաղ հասակում, մորուքը ծլելու ժամանակ, և ինչպես վկայում են բոլոր բերանները, նա ամեն մի բարիքից անպակաս էր ու կուսությամբ իր մեջ էր շտեմարանել Աստծու շնորհները: Նա հոժարությամբ գնում է նահատակման*, իսկ երբ հարցնում են նրա ով լինելը, հոր անունն էլ չի տալիս, որպեսզի կյանքով գերվելով՝ իր հոր ու երկրի համար ավելորդ բեռ չլինի իր ավագ եղբոր՝ Լևոնի հետ միասին, որը հոր կենդանության ժամանակ հրավիրված ու թագադրված էր թագավորական աթոռի համար: Քանզի Լևոնը եղավ մեր գերիների գլխավորն ու մեր աշխարհի, ազգի աղեկեզ, լերդաչարչար, սրտակոտոր հուրը, երբ մենք գտնվում էինք շնչարգելության ու երերման մեջ: [Օգնության] է հասնում վերնայրի ձեռքը. ով խփեց ցասմամբ, նույնը բուժում է ողորմությամբ՝ փակելով** մեծաբաց խոցը և գերեղարձ անելով նրան, ում տարան ուրիշների հետ՝ տասնհինգ օր ուշացնելով հայրենիք վերադառնալը: Այդ օրերի ընթացքում շատ աղետներ են թափվում նրանց գլխին, իսկ մեզ խոցոտում էր նրանց մասին ստացած լուրը:

Ճ. Իսկ մեր թվականության յոթ հարյուր տասնվեց թվի վերջում աղուհացքի [մեծ պասի] քառասուներորդ, Ղազարի հարության վեցերորդ շաբաթը լրանալու օրը, սահմի ամսի քսանվեցին վախճանվում է Հայոց պատրիարք տեր Կոստանդինը՝ Աստծու ցանկությամբ մարմնով և առավել ևս հոգով ծերացած հասակում: Նա մորուք ազնիվ էր, և բոլոր աստիճաններով անցնելիս արդար էր ու ամեն ինչով հաճելի, որոնց մասին վկայում են բոլոր ազգերն ու լեզուները: Հաստնացած

---

[1] Բարքան Պերքեն կամ Պերքայի խանն է՝ Բաթու խանի եղբայրը:

[2] Ինձ թվում է, որ Հեճը [ՄՕ.-ում ի հաճն] Շրվան նահանգի Լեհիճ գավառն է, որովհետև պատերազմը այնտեղ տեղի ունեցավ:

[3] Ինձ թվում է՝ Շիբարը [ՄՕ.-ում չիբար] Ազսու գետն է, Կուր գետի վտակը Շրվան նահանգում: Պատմիչները չեն հիշում այդ գետակը, բայց ասում են, որ Թշնամին բանակ էր դրել Կուր գետի երկու ափերին:

[4] Այդ Պիյաբը Ալի Ֆունտուզտարն էր:

[5] Սիմ-էլ-մոդ [ՄՕ.-ում Մալմոթ]:

[1] Կարմիրը նշանակում է ոսկի դրամ կամ գահեկան. ՕՕ.-ում չափը նշանակված է կՃՌ, որը հավասար է վեց միլիոնի: Բայց դա մենք համարում ենք պատրաստություն՝ ՉՃՌ-ի փոխարեն [ՄՕ.-ում վաթսուն հազար]:

* ՎՕ.-ում գլխիկոր ի գրանն տրման, ՄՕ.-ում գլխիկոր ի գրանն տրման Քրիստոսի:

** ՎՕ.-ում ասելով գլխիկոր խոցն՝ փակելով մեծաբաց խոցը, իսկ ՄՕ.-ում ասելով գլխիկոր խոցն՝ հոգ տանելով մեծաբաց խոցերի մասին:

և զգայուն տարիքում կուսությամբ մաքուր մնալով զգացողությամբ, զգայարաններով ու մարմնի բոլոր մասերով, մեր ազգի համար լինելով սրտակից, վշտակից ու սգակից այս մեղսաբեր ու ցաստմնակոծ գարերում, ցավալի ու կսկծալի ժամանակներում, բոլորն իր մեջ ամփոփելով և ըստ կարելվույն թեթևացնելով [մեր հոգսերը], նա առատորեն ու անխնա շռայլում էր սիրտ, խոսք, գանձ: Դրա համար նրան հարմար է գալիս իր Տիրոջն ասելու. «Մենք անցանք հրով ու ջրով՝ ենթարկվելով զանազան փորձություններին, այրող ու խեղդող որոգայթների»: Եվ Տիրոջ նման նա էլ ճաշակեց թանձրացած ու զմռսած վերջին լեղին իր կյանքի վախճանին մոտ, այն է՝ մեր թագավորության սասանումը, սուրն ու գերությունը, որ հատուկ են հարազատ երկրի ծննդին ու սննդին, մտնելով ձեռնասուն արքայազների կորստյան դժոխային, բորբոքված հնոցի կրակի փորձության մեջ,- դրանք է՛լ ավելի մոտեցրին նրա օրհասը և արագացրին [ստիպեան][1] հոգու տագնապը՝ բորբոքելով նրա՝ այս հոգնաթախիծ կյանքից բաժանվելու ծարավը, որը տեսնելով ինքը՝ Հիսուսը և Աստված, նրան Ղազարի հետ ազատում է այսքան դժնդակ ու անասելի տանջանքներից:

[1] Այսպես OO.-ում. ինձ թվում է, որ պետք է լինի տագնապի տարման չքնչյան՝ հոգու անհանգիստ տագնապերը [տագնապը]:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս (Աշոտ Երկաթի եղբայրը) - 128-130
Աբաս (Արծրունի թագավոր) - 131-134
Աբաս (Կարսի թագավոր) - 145
Աբաս (կյուրիկյան թագավոր) - 150, 164
Աբգար (Ավագայր) - 67-69
Աբդիշո - 94
Աբղա - 99, 100, 108, 113, 115, 116
Աբղմելիք - 109, 117
Աբդումանոս - 55
Աբեղդար - 54
Աբել - 34, 46
Աբելուհի - 34
Աբիա - 55
Աբիահար - 54
Աբիմելեք - 46
Աբիմելիք - 52
Աբրահամ (թարգմանիչ) - 86
Աբրահամ նահապետ - 43, 46-48, 50, 100, 101, 103
Աբրահամ մետրոպոլիտ - 68
Աբրահամ պատրիարք - 97
Աբրահամ - (Ռշտունյաց եպիսկոպոս) - 96
Աբրահամ սարկավագ - 90
Աբութուռաբ - 111
Աբուլեթ - 164-166, 169
Աբունասր - 158
Աբուսալիմ - 138
Աբուսահակ - 118
Աբուսահլ - 133, 161
Աբուսեթ ոստիկան - 119
Աբուտալիփ - 138
Ագաթանգեղոս - 65
Ագաթոն - 124
Ադամ - 27, 34-39, 52, 58, 62, 67, 208
Ադդով - 56
Ադրիանոս - 73
Ազարիա - 56
Աթանագինես - 74, 81
Աթանաս - 25, 197
Աժդահակ - 45, 59, 64
Ալադին սուլթան - 192
Ալամաններ - 181
Ալավիկ - 167, 168
Ալեքսանդրոս - 53
Ալեքսանդր (Կոստանդնուպոլսի պատրիարք) - 122
Ալեքսանդր (Հունաց թագավոր) - 129
Ալեքսանդր Մակեդոնացի - 46, 60-62
Ալեքսանդրոս Մամեի - 73
Ալեքս կայսր - 132, 149, 151, 155, 156, 163, 178
Ալի - 121
Ալինե - 79
Ալիշան Ղևոնդ - 6, 13, 14
Ալիշեր ամիրա - 180
Ալփասլան (Տուղրիլի հորեղբորորդին) - 144, 147
Ալփասլան Բ սուլթան - 176
Ալփիրակ սուլթան - 152
Ակայեցի - 65
Ակինյան Ն. - 6
Ակյուղաս - 73
Աղբուղա - 193
Աղեքսանդրոս - 61, 77

Աղորոս - 36
Աղվանից Վարդան - 5
Աղուպ - 172
Աճառյան Հ. - 6
Ամաղեկ - 51
Ամասիա (Արամայիսի որդին) - 44
Ամասիա (Հրեական թագավոր) - 56, 57
Ամիրալամուամնիք - 135
Ամիր-ղազե - 153
Ամմոն - 77
Ամոն - 58
Ամր - 105
Ամրամ - 49
Ամրի - 56, 58
Անակ - 71, 127
Անանե - 68
Անանիա մարգարե - 56
Անանիա Մոկացի - 130, 131
Անանիաններ - 59
Անանիա Շիրակացի - 108
Անանիա Սանահնեցի - 167
Անապյան Հ. - 6
Անաստաս կաթողիկոս - 107, 108
Անաստաս թագավոր - 123
Անատոլիս - 123
Անատոլիս զորավար - 83, 84
Անդրեաս վանական - 155
Անդրոնիկոս (հուն. զորագլուխ) - 171, 178, 179
Աներիս - 46
Անթապյան Փ. - 6, 7, 9
Անիաս - 53
Անկլիզներ - 181
Անձտա - 65
Անձևացի - 65
Անտեոս - 53
Անտիոքոս Եպիփանես - 61
Անտիոքոս Եվպատոր - 61
Անտիոքոս զորագլուխ - 78
Անտիոքոս (պարթև Արշակի սպանածը) - 62, 77
Անտոն (ճգնավոր) - 92
Անտոն (տարոնցի) - 77
Անտոնինոս զորավար - 66-68, 72
Անտոնինոս կայսր - 73
Անուշավան - 45
Աշոտ Արծրունի - 120
Աշոտ (Բագարատի որդին) - 120
Աշոտ Բագրատունի թագավոր - 121, 126
Աշոտ Բագրատունի պատրիկ - 112, 113, 115, 116
Աշոտ Բագրատունի (Սմբատի որդին) - 108, 109, 115, 117, 118
Աշոտ Երկաթ - 127, 128
Աշոտ (Խոսրովի մոտինը) - 97
Աշոտ կրտսեր - 134
Աշոտ (Հովհաննես թագավորի եղբայրը) - 139, 141
Աշոտ (Հովհաննեսի որդին) - 149
Աշոտ Մսակեր - 121, 125
Աշոտ Ողորմած - 130, 133, 150
Աշոտ (Սմբատի որդին) - 120, 121
Աշոտ (Վասակի եղբայրը) - 120
Աշոտ (Վասակի որդին) - 121
Աշոտ Վասպուրականցի - 133
Աշոտ (վրաց կուրապաղատ) - 116, 117
Ապաղա ղան - 210-212
Ապիկուռ - 117
Ապիս - 48
Ապիրատ (Բարսեղ եպիսկոպոսի եղբայրը) - 176, 187

Ապիրատ Պահլավունի - 139, 147, 153, 158
Ապիրատ (վրաց իշխան) - 142
Ապլղարիբ իշխան - 149, 163
Ապլսուար - 164, 165
Ապոլիմոս - 51
Ապողինար - 25
Ապտիմարոս - 124
Առան - 47, 64, 146
Առավան - 45
Առավեղյաններ - 46
Առաքել Սյունեցի - 21
Առիդես - 72
Առնակ - 71
Ասա - 55, 56
Ասափ - 54
Ասլան սուլթան - 174
Ասխարթան - 194
Ասողիկ - 90
Ասպուրակես - 84
Ասողիկ - 38, 39
Ասքանազ - 44
Ավագ - 193, 197
Ավետ քահանա - 170
Ավոդ - 52
Ավրելիոս - 73
Ատոմ Արծրունի - 133
Ատոմ (գեղեցկադեմ) - 120
Ատտիկոս պատրիարք - 87
Ատրներսեհ (Խաչենի իշխան) - 120, 121
Ատրներսեհ (վրաց թագավոր) - 116
Արա - 95
Արա Գեղեցիկ - 45
Արամ - 44
Արամ Հիթացի - 46
Արամայիս - 44
Արամանյակ - 44
Արբակ - 45
Արբակ (վրաց թագավոր) - 132
Արբել - 46
Արբուն - 45
Արդուխ - 153
Արիոն - 25
Արիոս - 80, 100
Արիստաբուլոս - 61
Արիստակես - 75, 122
Արիստոտել - 32
Արծրունիներ - 63
Արկադեոս կայսր - 84, 87
Արման թարգմանիչ - 86-88
Արղոն (Արղուն) - 197, 201
Արմեն - 44
Արմոդ - 46
Արշակ Պարթև - 62
Արշակ (Հայոց թագավոր)- 63, 65
Արշակ Մեծ - 63, 65
Արշակ (Պապի որդին) - 84
Արշակ (Տիրանի որդին) - 81-83
Արշական - 66
Արշակունի (ք) - 66, 69, 75, 78, 93, 125
Արշամ - 66, 67
Արշան (Արտաշես) - 63
Արշավիր (Մարաց թագավոր) - 62
Արշավիր (պարսկ. թագավոր) - 67, 68
Արշե - 90
Արտաշես Երկայնաբազուկ - 60
Արտաշես (Հայոց թագավոր) - 65
Արտաշես Ոքոս - 60
Արտաշես (պարսկ. թագավոր) - 66, 68
Արտաշես (Սանատրուկի որդին) - 69

Արտաշիր (Կավատի որդին) - 98
Արտաշիր (Հայոց Թագավոր) - 88
Արտաշիր (Շապուհի որդին) - 85
Արտաշիր Սասանյան - 135
Արտաշիր Ստահրացի - 71
Արտավազդ (Տիգրանի որդին) - 66
Արտավազդ (Արտաշեսի որդին) - 69
Արտավազդ Մանդակունի - 71
Արտեմիս - 124
Արտևան (Արտավան) - 70, 71
Արփասլան (Ալփասլան) - 138, 139, 151
Արփաքսադ - 40
Արփիազատ - 46
Արքեղայոս - 78
Ափաղա - 137
Ափշին - 118, 119
Աքսաբ - 56, 58
Աքազ - 57, 58
Աքիա - 56
Աքիաս - 55
Աֆրիկանոս - 51, 53

Բասաս (Բայաս) - 56, 58
Բաբ - 45, 46, 118
Բաբան - 119
Բաբկեն - 93, 119
Բագարատ (աբխազների թագավոր) - 133
Բագարատ (Աշոտ կուրապաղատի որդին) - 118
Բագարատ Արևընդացի - 163
Բագարատ իշխան - 119, 120, 121
Բագարատ (հրեական ցեղից) - 63
Բագարատ (վրաց թագավոր) - 141-143, 150, 163
Բագրատունի - 63, 169
Բագրատունիներ - 8, 10, 11, 45, 121, 186, 202
Բաթուխան - 198, 199, 204, 212
Բակիարուխ (Բաքարուխ, Բեկիարախ) - 138, 139, 151, 152, 155, 157
Բակուր - 78
Բաղդասար - 59, 60, 67
Բաչավ Նոյին - 196
Բառաբա - 108
Բասիլներ - 75
Բարակ - 52
Բարդիսու (Ասորի եպիսկոպոս) - 124
Բարդուղիմեոս առաքյալ - 68, 82
Բարզափրան - 66
Բարսեղ ճոն - 107
Բարսեղ կաթողիկոս - 146-148, 151, 153, 155, 157, 158, 160, 161, 180
Բարքա կուսակալ - 212
Բաքր - 113
Բել - 43, 46
Բեխ - 152
Բեխտ - 148
Բեկթամուր (Բեկթեմուր) - 180, 185
Բենիամին - 87
Բեր իշխան - 128, 129
Բոր - 98
Բրեհիմ զորավար - 142
Բրեհիմ թագավոր - 152
Բրոսսե Մ. - 14
Բրքիշու - 88
Բուբաքր - 105
Բուղա - 120, 201

Բունդար - 71
Բուրեթ վարդապետ - 117
Գաբեղյաններ - 63
Գագիկ Արծրունի - 128, 130, 131
Գագիկ թագավոր (Աշոտի որդին) - 141, 155, 160
Գագիկ թագավոր (Գագի բարեկարգողը) - 194
Գագիկ (Կարսի թագավոր) - 145, 149
Գագիկ (Համամի որդին) - 143
Գագիկ (Զորագետի թագավոր) - 143
Գագիկ (Վասպուրականի թագավոր) - 133
Գադ - 54
Գալանոս - 26
Գալլոս - 73
Գաղոս - 79
Գայերիդադ - 34
Գայիոս - 73
Գամիր - 43, 44
Գասպար - 67
Գեղեոն - 52
Գեղամ - 44
Գեորգի (Լաշա) - 187
Գեորգի (վրաց թագավոր) - 150, 164
Գեորգիոս վկա - 83
Գևորգ Ալիկա - 175
Գևորգ Արագածոտնեցի - 115
Գևորգ (Դավթի եղբայրը) - 172, 173, 176
Գևորգ կաթողիկոս - 126
Գևորգ Հովսեփ - 119
Գևորգ Սկևռացի - 7
Գևորգ վարդապետ - 146, 148, 151, 162, 171
Գիսանե - 74
Գյուտ - 89-92, 95
Գնել - 83, 172
Գնթունիներ - 63
Գնունիներ - 63
Գոդոզիա - 56
Գոթոնիել - 51, 52
Գողիաթ - 54, 153
Գող Վասիլ - 157
Գոհար խաթուն - 163
Գորամ - 121
Գորգի (աբխազների թագավոր) - 133
Գորգի թագավոր (Դեմետրեի եղբայրը) - 168, 172, 174
Գորգի (վրաց թագավոր) - 134, 140
Գորդիանոս - 73
Գռակ - 45
Գրիգոր Աստվածաբան - 25, 197
Գրիգոր Բզնեցի - 7
Գրիգոր (Գևորգ Ալիկայի առաջնորդը) - 175
Գրիգոր Գնունի - 128
Գրիգոր եպիսկոպոս - 181, 182
Գրիգոր Լուսավորիչ - 71, 72, 74-76, 81, 82, 96-98, 104-106, 117, 125, 127, 130, 158, 197
Գրիգոր (Խաղբակի որդին) - 191
Գրիգոր Մագիստրոս - 145
Գրիգոր Մամիկոնյան - 104, 105, 107, 108, 112, 113, 120, 155
Գրիգոր (Ներսեսի եղբորորդին) - 176, 180, 181, 183
Գրիգոր Նյուսացի - 197
Գրիգոր պատրիարք - 184
Գրիգոր (Սևադա Խաչենցու Հայրը) - 201

Գրիգոր (Սյունյաց թագավոր) - 146, 147
Գրիգոր վարդապետ - 205
Գրիգոր (Փառիսոսի իշխան) - 143
Գրիգոր (քաջ Վասակի որդին) - 142, 153
Գրիգորեսս Ապիրատ - 176, 187
Գրիգորիս - 21, 78
Գրիգորիս (Ապիրատի որդին) - 158, 174
Գրիգորիս կաթողիկոս - 160, 161, 166
Գրիգորիս Պահլավ - 158
Գրիգորիս պատրիարք - 145, 146
Գրիգորիս Տղա - 187
Գուրգեն (Աշոտ Ողորմածի որդին) - 130, 131, 133, 150
Գուրգեն (վրաց թագավոր) - 121

Դաղան - 50
Դաղմատիոս - 79
Դամասոս - 122
Դանիել (ասորի եպիսկոպոս) - 25
Դանիել մարգարե - 20, 59-61, 120
Դանիել քորեպիսկոպոս - 81
Դանշման - 156, 157
Դավիթ (Ալավիկի որդին) - 167
Դավիթ (Աղթամարի կաթողիկոս) - 161
Դավիթ Անհաղթ - 86, 90, 91
Դավիթ Արծրունի - 131, 133
Դավիթ արքա - 45, 77
Դավիթ (Բագարատի որդին) - 120, 121
Դավիթ Գնունի - 128
Դավիթ Դվնեցի - 104, 109
Դավիթ թագավոր (Դեմետրեի որդին) - 172, 180, 197, 198, 205
Դավիթ (Լուսավորչի աները) - 71
Դավիթ (Մանարքի թագավոր) - 144
Դավիթ կաթողիկոս - 187
Դավիթ (կյուրիկյան թագավոր) - 150
Դավիթ Կոտայքցի - 112
Դավիթ կուրապաղատ - 134
Դավիթ Մամիկոնյան - 112, 113, 118
Դավիթ մարգարե - 21, 54, 55
Դավիթ Շինարար (վրաց թագավոր) - 11
Դավիթ պատրիարք - 119
Դավիթ (պարսիկ Սուրհան) - 108
Դավիթ Սահառունի - 99
Դավիթ վկա - 104
Դավիթ (վրաց թագավոր) - 164, 165
Դավուիթ - 138, 139
Դարեհ Արշամի - 60
Դարեհ արքա (վերջին) - 69
Դարեհ երկրորդ - 60
Դարեհ Մար - 59, 60
Դարեհ Վշտասպ - 60, 77
Դղմուշ - 153
Դեղաղոս - 52
Դեկոս կայսր - 73, 74
Դեմետրեի կուռք - 74
Դեմետրե (վրաց թագավոր) - 107, 165, 169, 172
Դեմնե (թագավորի եղբորորդին) - 177, 180
Դենչապուհ - 97
Դեպրովա - 52
Դեսպինա - 211
Դերենիկ (Վասպուրականի թագավոր) - 133
Դերենիկ (Վասպուրականի իշխան) - 133
Դեուժան (Դեոժան) - 145
Դիա - 53
Դիմանջ (Նվիրակ) - 26
Դիոկղետիանոս - 72, 73
Դիոսկորոս (Անատոլիսի եղբայրը) - 123
Դիոսկորոս կաթողիկոս - 140
Դյուլորիե Է. - 14
Դոլաթա նոյին - 193
Դողլա-բակ - 135
Դոմետիանոս - 73
Դոմնաս Անտիոքացի - 123
Դուդուշ սուլթան - 139, 151, 152
Դունին - 64
Դևկալիոն - 50

Եբեր - 40, 42
Եդղոմ - 52
Եդոմ - 57
Եզաբել - 56, 58
Եզեկիա - 58
Եզեկիել - 59
Եզնիկ - 86
Եզրաս (Երուսաղեմի պարիսպը շինողը) - 60
Եզրաս Անգեղացի - 94
Եզրաս (Իսրայելի նորոգիչը) - 86
Եզր Նիզացի - 98, 99, 104, 111
Ելա - 58
Ելաս - 56
Ելենա - 53
Ելխաղի - 153
Ելոն - 53
Ելտկուզ Աթաբեկ - 169, 170, 173, 177
Եղիա - 56
Եղիա (Հայոց կաթողիկոս) - 109, 110
Եղիա մարգարե - 83
Եղիակիմ - 58
Եղիշե - 8, 15, 20, 26, 42, 86
Եղիսաբեթ (Զաբել) - 189
Եղիսե - 56
Եղիսե (Հայոց կաթողիկոս) - 129
Եմագոր - 53
Եմրան - 62
Ենանոս - 67
Ենովս - 35, 36, 38
Ենովք - 34-36, 185
Եպիկուռա - 117
Եպիփան - 56
Եռինյա - 132
Եսայի (Աղվանքի իշխան) - 120
Եսայի եղիպատրուշի - 144
Եսայի մարգարե - 20, 57, 102
Եսայի Նչեցի - 7
Եսավ - 46
Եսբոկ - 62
Եսեբոն - 53
Եսկան - 62
Եվա - 34
Եվթաղ - 71
Եվիլա - 39, 43, 100
Եվսեբիոս Կեսարացի - 9-11
Եվստաթե պատրիարք - 122
Եվստիքես չամանդրիտ - 122
Եվտիքոս - 25
Երան կաթողիկոս - 95
Երեմիա Անձրևիկ - 166
Երեմիա մարգարե - 20, 59, 158
Երկրորդ Վարդան - 10
Երվազ - 69

Երվանդ - 45, 69, 70
Եփրեմ - 36, 55
Զաքել (Եղիսաբեթ) - 189
Զաքել Թագուհի - 19
Զամրի - 56, 58
Զամրիկ - 98
Զանգի ամիրա - 171
Զառնավուխտ - 93
Զավան - 45
Զավեն - 83
Զարբհանալյան Գ. - 6
Զարեհ - 46
Զարմայր - 45
Զաքարե (Իվանեի եղբայրը) - 186-188
Զաքարե Նասրա-Դոլա - 188
Զաքարե (Շահնշահի որդին) - 202
Զաքարիա (Երուսաղեմի պատրիարք) - 97
Զաքարիա Թագավոր - 56-58
Զաքարիա կաթողիկոս - 120, 121, 126, 187
Զաքարիա մարգարե - 56
Զաքարյաններ - 8, 11
Զգոն - 72
Զենոն Թագավոր - 75, 123
Զմրուխ - 46
Զնջիլ կոմս - 154
Զոյի Թագուհի - 141, 149
Զոյիոս - 79
Զորաբաբել - 59, 60, 61
Զևս - 53

Էդիլների ցեղ - 199
Էլղազի (տե՛ս Հուլավու դան) - 206, 208, 210
Էուբ - 178

Ընձակ - 45
Ըռատվան (Ռատվան) սուլթան - 152, 153

Թադեոս առաքյալ - 68, 74, 75, 81, 82, 158
Թաթար - 192
Թաթիկ եպիսկոպոս - 90
Թաթուլ (Հունաց իշխան) - 157
Թակղաթփաղասար - 57
Թամար (քահանայապետ) - 55
Թամար Թագուհի - 11, 180, 186, 187
Թարա - 43, 46, 47
Թարշիշ - 44
Թեման - 100
Թեոդոս (Արկադեոսի որդին) - 87, 88
Թեոդոս զորավար - 82-84
Թեոդոս կայսր - 122, 123
Թեոդոս կամ Թեոդորոս (Հերակլի եղբայրը) - 98-100
Թեոդոս Փոքր - 122
Թեոդոս կաթողիկոս Հոնեցի - 149, 152
Թեոդորոս (Հայոց կաթողիկոս) - 129, 151, 152
Թեոդորոս Ռշտունի - 104-107, 124, 125
Թեոփիլոս կայսր - 124, 132
Թեոփիլոս պատրիարք - 75
Թեսբաս - 49
Թիրաս - 43, 44
Թիրոս - 46
Թիրքաշ - 169, 172
Թոբել կամ Թովբել - 35, 44
Թոդոր կայսրուհի - 149

Թոմա Վանանդեցի - 22
Թովղա - 53
Թոռնիկ - 161
Թորգոմ - 43-46, 131
Թորոս - 19
Թորոս արքայազն - 213
Թորոս (Լևոնի որդին) - 171, 172
Թորոս (Կոստանդին իշխանի որդին) - 156, 157, 162, 163, 171
Թորոս (Թեոդորոս) կուրապաղատ - 152, 153
Թոքակերի որդի - 167
Թուխթանի Թագուհի - 211
Թևտաս (վրաց Թագավոր) - 133

Իգնատիոս - 73
Իդումա - 100
Իզիտ - 112, 113
Իլմարովդակ (Իլմարովդա) - 59, 60
Ինե - 177
Իշոխ (ասորի երեց) - 19
Իոիոն - 157
Իսավուր Նոյին - 198
Իսթեր - 60
Իսմայել - 99-101, 104, 108, 114, 115, 118, 129
Իսմայիլ սենեկապետ - 152
Իսմուդ - 199, 212
Իսրայել եպիսկոպոս - 106, 108
Իվանե (Աբուլեթի որդին) - 164, 165, 168, 169, 172, 176, 177
Իվանե Մեծն - 186, 188
Իվանե (Քուրդ իշխանի որդին) - 188-191, 197
Իուդ - 56
Իքթիլ Թագավոր - 56

Լաբան - 48
Լարդոն - 53
Լազոսյան - 61
Լաչա - 187, 190
Լեշքար - 143
Լևոն արքա - 85
Լևոն (Թորոսի եղբայրը) - 213
Լևոն կայսր - 111, 115, 116, 123, 131
Լևոն (Կոստանդին իշխանի որդին) - 156, 162, 171, 180
Լևոն Հայ - 124
Լևոն (Ստեփանոսի որդին) - 180, 183, 186, 187, 189
Լևոն (Վասիլի որդին) - 126, 127-129, 132, 133
Լևոն Փոքր - 123, 124
Լիա - 48
Լիկիանես - 71
Լիկոս - 163
Լինգոս - 51
Լիպառոն Աբղա - 116
Լիպարիտ - 140-142
Լիպարիտ Օրբելյան - 177
Լուկիանոս Ֆռանկ - 67, 76, 77
Լուսավորիչ (Գրիգոր) - 12, 21, 24
Լփինք - 72

Խաղ եպիսկոպոս - 83
Խազդին - 201
Խալաֆ ամիրա - 118
Խաղբակ իշխան - 191
Խաչիկ Ա կաթողիկոս - 131
Խաչիկ Բ կաթողիկոս - 141
Խաչիկ իշխան - 149
Խաչիկյան Լ. - 6
Խարաչա (Ղարաչա) - 179

Խետենեկ - 170
Խզլասլան - 177
Խլավիզ ամիրա - 142
Խլիճ Ասլան (սուլթանի որդին) - 172, 183
Խոնթիկ - 167
Խոշաք - 188
Խոռ - 131
Խոռեմ - 97, 98
Խոռխոռունիներ - 63
Խոսրով Ա (Հայոց թագավոր) - 70-73, 78, 80, 127
Խոսրով Արշակունի - 85, 87, 98
Խոսրով (թարգմանիչ) - 87
Խոսրով (պարսկ. թագավոր) - 93-95, 105, 125
Խոսրով (Որմզդի որդին) - 95-97, 99
Խոսրովանույշ - 130
Խոսրովիդուխտ - 74
Խոսրովուհի - 72
Խորազմ շահ - 191
Խորասու կույս - 168
Խորիշահ - 188
Խվչաղներ - 91
Խտրղան-Պողրղան - 137
Խուշչեր ամիրա - 168
Խուրթ - 168, 169

Ծովիզ սուլթան (տե՛ս Ասլան Սուլթան) - 174

Կադմոս - 51
Կալափատ - 141
Կահաթ - 49
Կամբյուսոս - 60
Կայեն - 34-36, 42
Կայինակ - 45
Կայնան - 40
Կայպակ - 45
Կասմ - 110
Կավատ - 92, 94, 98
Կատա - 169
Կատրամիտե - 131
Կար - 15
Կարեն - 68
Կարոս - 74
Կեղար - 100
Կեղմա - 100
Կեղեստիանոս պատրիարք - 122
Կենտուր (Կենդուր) - 48, 50, 62
Կերինթոս - 100
Կիկրոփս - 51
Կիր Թոտոր - 145
Կիր Մանիլ (Մանիլ) - 171, 172, 175, 178
Կիս - 94
Կիրակոս Գանձակեցի (Կիրակոս) - 5, 9, 10, 18, 20, 22, 27
Կիրակոսներ (երկու) - 128
Կիրակոս վարդապետ - 195
Կլիմաս - 34
Կղոդիոս - 25, 73
Կղեոպատրա - 66
Կյուռ-Ժան - 132
Կյուրեղ - 25, 123
Կյուրեղ (Երուսաղեմի հայրապետ) - 195
Կյուրիկե - 131, 164
Կյուրիկե (Աղվանքի թագավոր) - 143, 148
Կյուրիկե թագավոր (Անհողինի որդին) - 144, 150
Կյուրղոս - 122
Կյուրոն - 94-96
Կյուրոս - 59, 60, 77

Կոմիդոս - 73
Կոմիտաս (Կումիտաս) - 97, 98
Կոնդոփր - 154
Կոչմ - 68
Կոստանդ - 79
Կոստանդիանոս (Կոստանդիոս) - 74, 76-80, 82, 105
Կոստանդին - 78
Կոստանդին (արքայազն) - 190
Կոստանդին Բարձրբերդցի (Հայոց կաթողիկոս) - 7, 8, 18, 27
Կոստանդին (Լևոն) - 127
Կոստանդին (Լևոնի որդին) - 129, 131, 132
Կոստանդին կաթողիկոս - 190, 213
Կոստանդին կայսր - 105
Կոստանդին (Կարկառի տերը) - 163, 171
Կոստանդին (Կոստանդնի որդին) - 105
Կոստանդին Հերակլ կայսր - 124
Կոստանդին (Ռուբենի որդին) - 55, 157, 162, 180
Կոստանդին (Վասիլի որդին) - 134
Կոստաս - 79
Կովկաս (Թորգոմի որդին) - 44, 132
Կորդվացի - 65
Կորեչ - 99
Կորյուն - 9, 86, 88
Կտրիճ - 120
Կրասոս - 66
Կրիսոս - 45
Կրյուսոս - 66
Կրոնիդես - 75
Կուզն - 168
Կուկր - 57

Հաբեթ - 38, 39, 43, 44
Հաբել - 96
Հագար - 101
Հազդ - 92
Հազկերտ (Վռամ երկրորդի նախորդը) - 87, 88
Հազկերտ (Վռամի որդին) - 89, 90, 92
Հազկերտ (Խոսրովի թոռը) - 99, 105
Հակոբ - 42, 48-50
Հակոբ Զգոն - 72, 78, 79
Հակոբ Սքանչելի - 130, 167
Համազասպ - 20, 21
Համազասպ Մամիկոնյան - 87
Համազասպյան - 89
Համամ վարդապետ - 126
Համամ (Տանձիքի տերը) - 143
Համբակ - 45
Համդուն - 129
Համրես - 49
Հայկ - 43, 44, 46, 63-65
Հայկազուններ - 189
Հայկակ - 45
Հայոս - 132
Հանեռ - 49
Հաննեռոս - 61
Հաղբատ - 111
Հասան - 113
Հասան Կայենացի - 188
Հասան Ջալալ-Դոլա - 188
Հավան - 44, 45
Հավնունիներ - 63
Հարեդ - 36, 38
Հարիր - 111
Հարմա - 45

Հեթացի (տե՛ս Արամ)
Հեթում Թագավոր (արքա) - 18, 19, 25, 27, 190, 197, 200, 201, 205, 212
Հեկսան - 50
Հեկտան - 43
Հեղի - 53
Հեշմ - 112, 113
Հեսու - 20, 45, 51, 53, 54, 56
Հետուր - 100
Հերակլակ - 105
Հերակլես - 53
Հերակլ կայսր - 97-99, 105, 123, 125, 143
Հերովդես - 61, 67, 68
Հեու - 58
Հեփեստոս - 101
Հեփթացի - 53
Հեքոնիա - 58, 59
Հիզբուզիտ - 93, 104
Հիսե - 126
Հիսուս (Յիսուս) - 9, 73, 164, 194, 202, 211, 214
Հմայակ - 89, 92, 155
Հյուրկանոս - 61
Հյուրկիանոս - 61, 66
Հոբ - 46
Հոլ ոստիկան - 119
Հոկտավիոս - 72
Հոհան - 93, 96
Հոհանես - 53
Հոհան Մայրովանեցի - 125
Հոհան Մանդակունի - 90-92, 123
Հոհան մետրոպոլիտ - 121, 122
Հոհան վարդապետ - 98
Հոմերոս - 55
Հոնակ - 45
Հոնեցի - 147
Հովաբ - 77
Հովակիմ - 59
Հովաղ - 58
Հովան - 56
Հովաս - 56
Հովաքազ - 56, 58
Հովբ կաթողիկոս - 114
Հովել - 56
Հովիդյա - 56
Հովհաննես - 61
Հովհաննես առաքյալ - 204
Հովհաննես ավետարանիչ - 73, 82
Հովհաննես (Գագիկի որդին) - 133, 134
Հովհաննես Երզնկացի (Պլուզ) - 7
Հովհաննես Թագավոր - 139-141, 145
Հովհաննես Թարգմանիչ - 86
Հովհաննես խմաստասեր - 110-112
Հովհաննես (իշխան Խաչիկի որդին) - 149-151
Հովհաննես Ա կաթողիկոս - 94, 97
Հովհաննես Բ կաթողիկոս - 187, 190
Հովհաննես Կարապետ - 74
Հովհաննես (Հաղպատի վանքի առաջնորդ) - 20
Հովհաննես պատրիարք - 119, 120, 122, 128, 129
Հովհաննես պարոն - 196
Հովհաննես Սարկավագ - 166
Հովհաննես Վանական - 7
Հովհաննես Տրդատ - 77
Հովհաննես Տուեցի - 202, 203
Հումն - 52

Հովնաթան - 57, 59
Հովսափատ - 56
Հովսեփ - 48, 49
Հովսեփ (Աղվանքի կաթողիկոս) - 140, 180
Հովսեփ արքեպիսկոպոս - 18
Հովսեփ (թարգմանիչ) - 86
Հովսեփ (կաթողիկոս) - 88-90
Հովսեփ (պատանի) - 175
Հովսեփ (տաճիկ) - 132
Հովսեփյան Գ. - 6
Հովսիա - 59
Հովրամ - 56, 58
Հորդանան (նահատակ) - 179
Հռասոն - 57
Հռիփսիմե - 97, 161
Հռոմելոս - 58
Հռութ - 53
Հրաչե - 45, 72
Հուան - 45
Հուբաղ - 35
Հուբիանոս - 80
Հուբնաղ (Հոբնաղ) - 91, 122
Հուլավու դան (խան) - 8, 12, 22, 27, 198-202, 204, 205, 208, 210
Հուլիանոս (զղջացողը) - 79, 80
Հուլիանոս Աղիկառնացի - 125
Հուլիոս կայսր - 67, 72
Հույն - 45
Հունան - 57
Հուսակ - 45
Հուսիկ - 80, 81
Հուսիփ ոստիկան - 127
Հուստիանոս Ա կայսր - 94
Հուստիանոս Բ կայսր - 123-125
Հուստինոս կայսր - 123

Ցյունականներ - 63
Ղազար - 213, 214
Ղազար Ջահկեցի - 6, 14, 18
Ղազար Փարպեցի - 8, 10, 15, 87
Ղազի - 157
Ղամեք - 35, 36, 38
Ղավրիլ (Մելտենիի իշխանը) - 154
Ղատաղա նոյին - 193
Ղարաչա (Խարաչա) ամիրա - 177
Ղզիլ ամիրա - 157, 158
Ղլիճ (Խլիճ) Ասլան սուլթան - 153, 155, 156, 180
Ղուկաս ավետարանիչ - 82
Ղևի - 48, 49
Ղևոնդ երեց - 86-90, 93
Ղևոնդ կաթողիկոս - 93
Ղևոնդ կայսր - 124
Ղևոնդ (Կեսարիայի պատրիարք) - 74

Մաղնիտիս - 79
Մագոգ - 44
Մադան - 62
Մադիան - 62
Մաթան - 136
Մաթուսաղա - 35-38
Մալքաթու - 46
Մակաբեոս - 61
Մակեդոն - 83
Մահամթ (Մահմեդ) - 99-103, 105, 199
Մահմադ (Մահմուդի որդին) - 136, 137
Մահմադ Մութադե - 135, 136, 138
Մահմեդ (Աբդլայի որդին) - 115, 116
Մահմեդ ոստիկան - 108-110, 112, 120, 121

Մահմուդ իսմայելցի - 135
Մահմուդ (Տափարի որդին) - 163
Մահմուդ (Փատլունի եղբայրը) - 168, 174
Մաղաղիել - 36
Մամ - 142
Մամբրե արքեպիսկոպոս - 91
Մամբրե (Խորենացու եղբայրը) - 87, 90
Մամգուն Ճենացի - 75
Մամիկոնյան ցեղ - 84, 121, 125, 155
Մամտուտ զորավար - 159
Մամուն - 116, 118
Մամքան - 131
Մայայել - 34
Մանահիր Ռշտունի - 78
Մանասեմ - 57, 58
Մանգու ղան - 197-199
Մանդալիոն - 160
Մանդակունի - 71
Մանիտոն - 38, 39
Մանվել Մամիկոնյան - 116, 118
Մանուչե - 147, 150, 153, 158, 164
Մաշտոց - 130
Մաջա-դոլա Ռոստոմ - 136
Մառ Ն. - 6
Մառինոս - 68
Մառիս - 49
Մասե - 100
Մասխուտ սուլթան - 136, 137
Մասխուտ սուլթան (սելջուկ.) - 139
Մասմա - 100
Մասուտ սուլթան - 171
Մավի - 105, 108
Մատթեոս ավետարանիչ - 82
Մատթեոս Ուռհայեցի - 9, 24
Մարիահա - 68
Մարիամ (Գր. Լուսավորչի կինը) - 71, 74
Մարիամ (Քոբայրի կույսերից) - 168
Մարիես Լ. - 14
Մարկիանոս - 123, 124
Մարկոս ավետարանիչ - 82
Մարկոս ճգնավոր - 159
Մարսամ - 100
Մարտին - 105
Մարտինոս - 124
Մար-փիլիկա - 63
Մաքսիմիանոս - 74, 76, 90
Մաքսիմոս - 73, 76
Մաքսինտես - 76
Մեղա - 44
Մեժեժ Գնունի - 94, 97, 98
Մելեսիանոս կայսր - 149
Մելեր - 9, 211
Մելիտոս մետրոպոլիտ - 91
Մելիք Աշրաֆ - 186, 192
Մելիք-Շահ - 138, 147, 150, 151, 189
Մելիք (Տափարի որդին) - 163, 164
Մելքիսեդեկ - 47, 48
Մելքոն - 67
Մեղքոմ - 77
Մենադրոս - 46
Մենափտիս - 49
Մեստրիմ - 46
Մեսրոպ (Մաշտոց) - 85-89, 107, 194
Մերհուժան Արծրունի - 83, 115
Միխայել պատրիարք - 19
Միխայիլ Ասորի - 9-11, 15, 24

Միհրան (պարսկ. զորավար) - 92
Միհրան (վրաց թագավոր) - 132
Միհրդատ - 66
Միքայել կայսր - 132, 134
Միքայել Բ կայսր - 124
Միքայել (ոմն) - 116
Միքայել կայսր - 141
Միքայել (Տուկիծի որդին) - 145, 148
Մլհետներ - 139, 198
Մխիթար Անեցի - 9, 24, 133, 135, 185
Մխիթար Գոշ - 7, 10, 188
Մկրտիչ Էմին - 6, 21
Մյուլդերման - 14
Մշկան - 89
Մոլար Նոյին - 193
Մոկացի - 65
Մոնամախ - 141, 142, 145
Մոնդրին - 209
Մոսոք - 44
Մովսես (Աղվանքի տեր) - 128
Մովսես Խորենացի - 8-11, 15, 20, 86, 87, 90
Մովսես կաթողիկոս - 94, 96
Մովսես մարգարե - 20, 29, 30, 38, 49-51, 54, 56, 62, 75, 85, 92
Մորիկ կայսր - 95-97, 124, 125
Մսլիմ - 112
Մրվան - 108, 112, 113
Մուղալ Թաթար - 190
Մուչե - 90
Մուչե (կաթողիկոս) - 93
Մուչեղ (Աշոտ կուրապաղատի որդին) - 118
Մուչեղ (թարգմանիչ) - 86
Մուչեղ Մամիկոնյան - 113-115, 124
Մուչեղ (Սմբատ թագավորի որդին) - 127
Մուչեղ (քաջն) - 84
Մուսեփաղո - 138
Մուսթասր - 199
Մուրացան - 64
Մուրացաններ - 64

Ցայիր Գաղատացի - 53
Ցուսուֆ (Սալահադին) - 178

Նաբատ - 55, 58
Նաբեռվթ - 100
Նաբես - 100
Նաբուգոդոնոսոր - 45, 58, 59, 64
Նաբուպալասար - 58, 60
Նաթան - 54
Նամա - 54
Նանա սարկավագ - 117, 122
Նասրա-Դոլա - տե՛ս Զաքարե Նասրա-Դոլա
Նաքովի - 43, 46
Ներբովթ - 41, 46
Նեստոր - 88
Ներշապուհ - 94
Ներոն - 73
Ներսեհ Հայկազն - 46
Ներսեհ (Միհր-Ներսեհ) - 89
Ներսեհ (վրաց թագավոր) - 128
Ներսեհ (վրաց իշխանի) - 108
Ներսես (Աղվանքի կաթողիկոս) - 202
Ներսես (Ապիրատի որդին) - 158, 174-176
Ներսես Բակուր - 110
Ներսես Բ կաթողիկոս - 93, 94
Ներսես եպիսկոպոս - 104-107

Ներսես Լամբրոնացի - 20
Ներսես Մշեցի - 7
Ներսես Մեծ (Հայոց կաթողիկոս) - 80-85, 122, 154, 172
Ներսես Շնորհալի - 22
Ներսես վերջինը - 124, 125
Ներվաս - 73
Նեկտարիոս - 122
Նիկիտ ներքինի - 125
Նիկիփոր կայսր - 68, 124
Նիկիփոր (Փոկաս) - 132
Նինոս - 46, 47
Նիքոմաք - 71
Նոյ - 36-40, 43
Նոյոմ - 35
Նոյոմի - 60
Նորադին - 176
Նորայր - 45
Նունե - 155

Շանդաղյան ամիրայություն - 10
Շակմոնիա - 209
Շահակ կաթողիկոս - 84
Շահաբատին - 208
Շահի Արմեն - 169-171, 179, 180
Շահնշահ (Անիի տերը) - 176, 202
Շահնշահ (Մեծն Զաքարեի որդին) - 188, 202
Շահնշահ (Վասպուրականի թագավոր) - 133
Շահնշահ (Վիգենի թոռը) - 180
Շամբատ - 45
Շամիրամ - 45, 46
Շամշադրամ - 68
Շապուհ (Հազկերտի որդին) - 87
Շապուհ (պարսկ. արքա) - 75, 77, 83-85, 87
Շապուհ (Սմբատի որդին) - 115, 117, 118
Շավասպ Արծրունի - 89
Շավուղ - 54
Շատատ - 172
Շատատիկք - 150
Շարա - 64
Շարշան (Սասանական) - 65
Շեխի (Հիսեի հայրը) - 126
Շերո - 89
Շմավոն - 61
Շմուել կաթողիկոս - 88
Շմուել մարգարե - 54
Շնորհավոր - 204

Ոգոհի - 71
Ոզիա - 57
Ոճիե - 185
Ոսկեան ներքինապետ - 123
Ոսկյան Հ. - 5
Որմիզդ (Խոսրովի թոռը) - 99
Որմիզդ (պարսկ. արքա) - 78, 80, 89
Որմիզդ (Պերոզի որդին) - 95
Ոքոզիա - 56, 58

Զաղաթա նոյին - 193
Զաղր բեկ - 138
Զամչյան Մ. - 6, 21
Զանգզ ղան (խան) - 197, 205, 210
Զարմաղան - 192, 193, 196
Զունակ - 84

Պալտուխ ամիրա - 153
Պահլավ - 68
Պահլավունյաց ազգ - 87
Պաղտույն - 154, 157, 162, 163
Պաղտույն (մյուս) - 154, 163
Պաճույճ - 45
Պայգամ - 46
Պայմունդ կոմս - 154, 155
Պապաք (նահատակ) - 191
Պապ (Հայոց թագավոր) - 82- 84
Պապ (Հուսիկի որդին) - 81
Պատկանյան Ք. - 6
Պարետ - 45
Պարզվան - 143
Պարկեշտ երեց - 192
Պարույր - 45
Պելապոս - 51
Պեմունդ - 156, 157
Պետրոս առաքյալ - 12, 82, 204
Պետրոս (Գրիգոր պատրիարք) - 184
Պետրոս եպիսկոպոս - 94, 123
Պետրոս (Խոնթիկի որդին) - 167
Պետրոս պատրիարք - 134, 140, 141, 148, 151, 167
Պետրոս վանահայր - 176
Պետևան կոմս - 156
Պերդրան կոմս - 159
Պերճ - 45
Պերոզ Ա - 70, 92, 93, 95
Պերտինաքս - 73
Պլատոն - 50
Պողոս կաթողիկոս - 151, 164
Պողքեր - 91
Պորփյորոս - 57
Պոռոս - 73
Պտղոմեոս Եպիփանես - 61
Պտղոմեոս Եվերգետես - 61
Պտղոմեոս Լագոսյան - 61
Պտղոմեոս Փիլադելփոս - 61
Պտղոմեոս Փիլոպատոր - 61
Պտղոմեոս Փիլուպատոր - 61
Պուզան ամիրա - 150, 151
Զալալ-Դոլա - տե՛ս Հասան Զալալ-Դոլա
Զալալ իշխան - 201
Զահապ - 115-119
Զաղել - 87
Զափր - 121, 122, 135, 199
Զոսլին (Զոչլին) կոմս - 154, 157, 171, 174
Զվանչիր - 72, 104, 130

Ռագավ - 40, 41, 43
Ռագուել - 46, 50
Ռամանոս - 129
Ռաջարդ - 155
Ռեբեկա - 48
Ռոբերտ կոմս - 154
Ռոբովամ - 54-56, 58
Ռոճեր - 162
Ռոմանոս (Կոստանդնի փեսան) - 134
Ռոմանոս (ուղղափառներին քշողը) - 132
Ռստակես - 78
Ռուբեն Ա - 100
Ռուբեն Բ - 155, 157, 180
Ռուզուքան - 131
Ռուքնուդդովլա - 138

Սաբա - 39, 43
Սաբիլե - 52
Սադովկ - 55
Սադուն իշխան - 173
Սալահադին - 178, 181, 184
Սալար իշխան - 143
Սալտուխ - 169
Սախալթու - 208
Սակդեն - 72
Սահակ Ա կաթողիկոս - 85-90,

97, 122, 123, 125, 155
Սահակ (Աշոտ կուրապաղատի որդին) - 118
Սահակ ասպետ - 93
Սահակ Բ կաթողիկոս - 93
Սահակ (Բյուրականի եպիսկոպոս) - 128
Սահակ (Իսահակ) - 48, 62
Սահակ Զորափորցի (Հայոց կաթողիկոս) - 108, 109
Սահակ Մոուտ - 125
Սահակ (Սյունիքի տերը) - 119
Սահակ (Սյունյաց թագավոր) - 131
Սահակ (տաճիկ) - 132
Սահակ (Փիսիկ կայսր) - 180, 181, 183
Սահակդուխտ - 132
Սահերոն - 46
Սահլ (Սմբատի որդին) - 119
Սաղա - 40
Սաղմանասար - 58, 59
Սամեգար - 52
Սամիրոս - 36, 46
Սամյա - 55, 56
Սամսոն - 53
Սամվել Անեցի - 10, 167
Սամվել երեց - 90, 93
Սամվել մարգարե - 24, 53, 54
Սամվել վարդապետ - 151
Սանատրուկ - 68, 69, 77, 78
Սանջար սուլթան - 139
Սառա - 46, 101
Սավուղ - 53
Սարապիս - 48
Սարգիս Ավագ - 173, 186
Սարգիս ավագերեց - 148
Սարգիս (Զաքարյանների նախահայրը) - 186
Սարգիս զորավար - 104, 168
Սարգիս (Թարգմանիչ) - 125
Սարգիս Խաչենցի - 179
Սարգիս կաթողիկոս - 131, 133
Սարգիս Բ կաթողիկոս - 148, 152
Սարգիս (Հոհանի աշակերտը) - 98
Սարգիս Ճոնյանց - 107
Սարգիս (միայնակյաց) - 100
Սարգիս վարդապետ - 205
Սարդախ խան - 199, 212
Սարդանապալլե - 45
Սարկավագ (տե՛ս Հովհաննես Սարկավագ) - 167, 168
Սարչուք - 138
Սափան - 151
Սբքթան - 135
Սեբաստոս - 72
Սեղեկիա - 58
Սեթ - 35, 36, 38, 42
Սեղբեստրոս - 75, 122
Սեմ - 38-40, 43, 46
Սենայար - 40
Սենեքերիմ - 45
Սենեքերիմ (Սյունյաց թագավոր) - 146, 147
Սենեքերիմ (Վասպուրականի թագավոր) - 121, 133, 141
Սերուք - 43, 46
Սեփովրա - 50
Սիդոս - 55
Սիոն եպիսկոպոս - 114
Սիսակ - 44
Սիսակյաններ - 63
Սլիման - 110
Սղկունյաց ցեղ - 75
Սմբատ (Շամբատ) - 63
Սմբատ (Աշոտի որդին) - 115, 117-119, 121
Սմբատ (Աշոտ Ողորմածի որդին) - 130, 131
Սմբատ Բագրատունի - 83, 96, 105, 109, 121
Սմբատ (Բագրատունի թագավոր) - 126, 128, 129
Սմբատ (գայլակ) - 69
Սմբատ խոստովանող - 121
Սմբատ կուրապաղատ - 110
Սմբատ Մամիկոնյան - 112, 114
Սմբատ (Սմբատի որդին) - 105, 108, 109
Սմբատ (Սյունյաց թագավոր) - 146
Սմբատ Սպարապետ - 10, 120
Սմբատ Օրդեկան - 172
Սմբատ գորգաբերդ - 212
Սոկրատ - [illegible]
Սոսոն - 54, 55, 126
Սոսոն կաթողիկոս - 114
Սանքեր - 154, 173
Սոսանա - 55
Սոսան - 186, 187
Սոֆիա - [illegible]
Սոֆի - 71, 94
Սոֆիան Հանի որդին - 171, 172
Սոֆիանու Աղվանքի եպիսկոպոս - [illegible]
Սոֆիանու [illegible] - [illegible]
Սոֆիանու գանձապետ - 114, 124, 131
Սոֆիանու [illegible] - [illegible]
Սոֆիանու [illegible] որդին - [illegible]
Սոֆիանու [illegible] - [illegible]
Սոսանա [illegible] - [illegible]
Սուլիման - 111, 113
Սուր - 45
Սուրեն (Լուսավորչի եղբայրը) - 71
Սուրեն (մարզպան) - 97, 124
Սուրեն Գահլավունի - 68
Սուրհան պարսիկ - 107
Սուրմակ - 88
Սուքման - 153, 155, 169
Սևադա Խաչենցի - 201
Սևադա Զահապի - 118
Սեբեոս - 73
Սեռուկ Սեռբրյաց - 120

Վարդան - 92, 155
Վարդանոց (Հաթերքի տերը) - 155
Վարդանոց Սանդրանց - 188
Վարդանոց (Գրաց ազգ) - 92, 132
Վասակ - 45
Վասակ Սանատրուկ - 50
Վասակ Գարդմանի - 110
Վասակ (Զաքարյանի որդին) - 130
Վասակ (Վասակիկ) կաթողիկոս - 123, 161
Վասակ - [illegible]
Վասակ կուսակալ - 121
Վարազ - [illegible]
Վարազ Զաքարիի որդին - 188, 190
Վարազ գրիգորյան - [illegible]
Վարազ բդեշխ - 140
Վարազ նարդուկյան - 92
Վարազ պատրիարք - 192, 194
Վարազ նարդուկյան - 196, 197
Վարազ (Աթաբեգի Զաքարյանի որդին) - 202

[illegible]

Վահրամ Վկայասեր - 158, 159
Վաղարշ (Հայոց թագավոր) - 70
Վաղարշ (պարսկ. թագավոր) - 93
Վաղարշակ - 63, 65, 74
Վաղարշակ (Պապի որդին) - 84, 85
Վաղես - 80, 82, 83
Վաղենտիանոս - 80, 82
Վաղերիոս - 73
Վան - 46
Վանական վարդապետ - 18, 194, 195, 197
Վաչե զորավար - 80
Վասակ (Աշոտի որդին) - 116, 121
Վասակ Կամսարական - 161, 162
Վասակ Կյուրիկյան - 194, 204
Վասակ Մամիկոնյան - 97
Վասակ Պահլավ - 146-148, 153, 163
Վասակ Սիսական - 120, 121
Վասակ Սյունեցի - 90, 92
Վասակ (Վահանի եղբայրը) - 92
Վասակ (քաջ) - 140, 142
Վասիդ - 111
Վասիլ Ա կայսր - 124-126
Վասիլ Բ կայսր - 132-134
Վասիլ Իշխան - 158, 161, 174
Վատած թագավոր - 211
Վարազդատ թագավոր - 84
Վարազդատ մարզպան - 97
Վարազվաղան - 89, 92
Վարազտիրոց - 105
Վարազտրդատ - 106
Վարաժունիներ - 63
Վարբակես մար - 45
Վարդ (Թեոդորոսի որդին) - 105, 109
Վարդ (Վահանի եղբայրը) - 93
Վարդան Այգեկցի - 5
Վարդան Արևելցի (Արևելցի) - 5-16, 20, 21, 23
Վարդան Բարձրբերդցի - 5, 13, 14, 18
Վարդան Գանձակեցի - 5
Վարդան Կիլիկեցի - 5
Վարդան Հաղպատեցի - 5
Վարդան Մամիկոնյան - 87, 88, 89, 121
Վարդան Մեծ - 5, 17
Վարդան Պատմիչ - 5, 17, 28
Վարդան Վանական - 5, 9, 14, 27
Վարդան (Վասակի որդին) - 97
Վարդան վարդապետ - 124
Վարդան վրիժառու - 124
Վարդանանք - 90, 123
Վարդգես - 70
Վարոս - 92
Վեսպիանոս - 73, 154
Վիգեն - 170, 180
Վիլոս թագավոր - 46, 47
Վլիթ - 110, 113
Վնդո - 89
Վռամ երկրորդ - 87, 88
Վռամշապուհ - 85, 87
Վստամ - 45
Վտանիոտ կայսր - 148
Վրթանես - 71, 78, 80

Տակիտոս - 73
Տակութար Էլղան - 211
Տաճատ (Աշոցքի տերը) - 127
Տանկրի - 154, 159, 162
Տափար - 157, 163
Տիբեր կայսր - 123
Տիբերիոս - 73

Տիգրան Արշակունի - 66
Տիգրան Մեծ - 45, 68
Տիգրան (վերջին) - 70
Տիգրան վիմագիր - 135
Տիմոթ (վարդապետ) - 107
Տիմոթեոս Կուզ - 124
Տիմոթեոս պատրիարք - 122, 123
Տիտոս - 69, 73
Տիտոս կայսր - 73
Տիրան Ա - 45
Տիրան Բ - 70, 80, 81
Տիրան (Ճենաց արքա) - 72
Տիրիթ - 83
Տյառնթագ - 93
Տողրիլ բեկ - 138-140, 142, 144
Տողրիլ սուլթան - 177
Տողրուլ (ուժեղ) - 139
Տողուզ խաթուն - 12, 198, 199, 210, 211
Տոյինք - 209
Տրայանոս - 73
Տրդատ - 71-75, 77, 78, 98, 112, 127
Տրդատ (Արշակի եղբայրը) - 82
Տրդատ (մեկ ուրիշ) - 114
Տրդատ Օթմսեցի - 112, 114
Տրպատունի - 65
Տուկիծ - 145
Տուրք Անգյա - 64

Ուլիսալար - 157
Ուիտանես - 77
Ուճին Թուրք - 183
Ումար - 110-112
Ումեկ - 195
Ուտիր - 43

Փալհավան սուլթան - 177

Փակեե - 57, 58
Փաղեկ - 40
Փայետոն - 50
Փառան (Փառնակ) - 45
Փառանձեմ - 83
Փառնավազ - 45
Փառներսեհ - 81
Փատլնյաններ - 150
Փատլուն (Գանձակի ամիրա) - 166, 168, 169, 172
Փատլուն (Դվինի ամիրա) - 143, 146, 147
Փարավոն - 48
Փեռփեռոժեն կամ Փերփերոժեն (Ալեքսի որդին) - 163, 171
Փերոժ - 171
Փիլարտոս - 148, 150, 151
Փիլաքսիոս եպիսկոպոս - 124
Փիլիպպե (Գրիգորի որդին) - 143
Փիլիպպոս կայսր - 71, 73
Փիլիպպոս Վարդան - 124
Փիլսդոս - 51
Փիսիկ (Սահակ կայսր) - 179, 181
Փլաբիանոս - 122, 123
Փյունիկս - 51
Փնտխտար սուլթան - 212
Փոկաս կայսր - 124
Փովա - 45
Փովկաս - 97
Փոտ պատրիարք - 121, 124, 125
Փորոն - 48
Փռանգ - 155
Փռանցեզներ - 181
Փուա - 57

Քաղրթ - 103
Քամ - 38, 39, 43, 46
Քանդար - 49

Քայաղ - 46
Քանան - 63
Քաղաղ սարկավագ - 90
Քավթար Օրբելյան - 177
Քարթլոս - 44
Քիթբուղա զորավար - 201
Քիրամ - 55
Քողղադ - 100
Քսանտիս - 49
Քսարոս - 46
Քսերքսես - 60
Քրիստոս - 9, 24, 25, 52, 61, 71, 73, 74, 83, 89, 90, 92, 95, 96, 102, 103, 107, 112, 117, 118, 120, 122-124, 127, 131, 132, 144, 166, 169, 173, 179, 186, 200, 201, 211
Քրիստոսափոր - 93, 98
Քուշ - 46
Քուս - 51
Քուրդ մեծ իշխան - 188

Օգոստոս - 67, 68, 72
Օմար - 105
Օվգեսիս - 48
Օվսեե - 57, 58
Օվսիա - 58
Օվրենդ - 195
Օվրեստես - 48
Օտա իշխան - 74, 127
Օրմանյան Մ. - 6

Ֆիլիպ - 189

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա - 141
Աղանա - 149, 213
Աղիպարական (Ատրպատական) - 191
Ադրիանապոլիս - 80, 183
Աթենք- 51, 79
Աթուրիա - 46
Ալամանք - 181, 183
Ալամուդ - 147, 198
Ալեքսանդրիա - 82, 122, 123
Ալիոն - 44
Ալիս գետ - 76, 129
Ալ-քայուբա - 101
Ախալքալաք - 144
Ախուրյան գետ - 69
Ակոռի - 107
Ահերմոն լեռ - 35
Ահմատան - 97
Աղթամար - 107, 133, 161
Աղիովիտ - 66, 116
Աղջոց Ս. Ստեփանոս վանք - 7
Աղվանք - 18, 23, 75, 87, 98, 105, 106, 110, 120, 126, 128, 130, 140, 148, 167, 190, 195, 198, 202
Աղցք գյուղ - 97, 98
Ամարաս - 78
Ամիթ - 68, 162, 192
Ամուկ - 170
Ամուրիա քաղաք - 119, 145
Այրարատ - 80, 132
Անապյուր գյուղ - 162
Անապատ վանք - 204
Անավարզա - 172
Անատոլիկեք - 76
Անբերդ - 133, 186
Անի - 74, 107, 118, 127, 131, 133, 134, 140, 141, 144, 147, 149-153, 155, 157, 158, 160, 161, 164-166, 168, 172-174, 176, 186-188, 193
Անտաք - (տե՛ս Անտիոք) - 79, 146, 178, 189, 205
Անտիոք - 67, 79, 82, 98, 122, 148, 151, 155, 156, 159, 162, 172
Անուշ բերդ - 83
Աշոցք - 115, 125, 127, 133
Աշտիշատ - 74, 81, 88
Ապահունիք - 68
Ապահունիքի գավառ - 81, 84, 134
Ապար աշխարհ - 90
Առանիս - 64
Առաջին Հայք - 45, 95
Առբերան - 66
Առեստավան - 95
Ասիա - 22, 39, 63, 73
Ասխալա (տե՛ս Ասկալոն) - 184
Ասկալոն - 172
Ասորեստան - 45, 62, 63, 67, 96, 104, 198
Ասորիք - 39, 51, 59, 67, 72, 108, 121, 157
Ասպահան - 46, 137, 152, 163
Ավան գյուղ - 96
Ատտիկե - 48
Ատրպատական (տե՛ս Աղիպարական) - 83

Արաբիա - 100
Արաբիա (Երջանիկ) - 39
Արաբիոն - 69
Արագած - 44, 95
Արաղ - 139
Արամանյակ - 45
Արամոնից գյուղ - 112
Արամենակք - 76
Արարատյան գավառ - 94
Արարատյան դաշտ - 133
Արծուղ - 81
Արմավիր - 44, 69
Արմնի - 95
Արշարունիք - 115, 169
Արտազ - 68
Արտաշատ - 69, 80, 93
Արտավիլ քաղաք - 187
Արուճ - 107
Արքակաղին - 187
Ավիրիկե - 79
Աքա քաղաք - 183, 184
Արևելյան Հայաստան - 7
Արևընդան - 163
Արևմտյան Հայաստան - 19

Բաբելոն - 46, 58, 62, 199
Բաքերդ - 115
Բազարան (կուստուն) - 69, 127
Բազվան (Բազավան) - 92, 188
Բազրևանդ - 83, 88, 114, 120, 121
Բազկերտ - 131
Բազունիք - 131
Բալու լեռ - 85
Բահլ - 62, 63, 135
Բաղդադ - 118, 114, 199
Բաղք - 130, 146
Բասեն - 64, 70, 90, 96, 97
Բարաղ - 139
Բարձրբերդ - 5, 13, 18
Բեթղեհեմ - 39, 203
Բենիամեն - 55
Բլախք - 183
Բլուր գյուղ - 88
Բյուզանդիա - 155
Բյութանիա - 112
Բյուրական - 128
Բզնի - 140, 142, 186, 192

Գաբեղենից գավառ - 120
Գագ - 164, 168, 173, 192, 194, 195
Գազանաձակք - 120
Գայանեի վկայական - 99
Գայլ գետ - 94
Գանձակ - 7, 142, 146, 150, 163, 164, 166, 169, 179, 191, 192
Գանձասար - 202
Գանչեկք - 95
Գառնի - 114, 169, 191
Գարդման - 7, 98, 120, 143, 144, 190, 203
Գեղաթ - 165
Գեղարքունի - 44, 118
Գեղի - 175
Գետաբակք - 186, 193
Գետիկ ձեռակերտ - 188
Գթաց երկիր - 72
Գլխովանք - 106
Գողգոթա - 39
Գորոզի - 143
Գրիգոր լեռ - 158, 169
Գրիգոր Ս. եկեղեցի - 89, 96, 107, 108, 133
Գրհամ - 175
Գուգարաց երկիր -190
Գուրգան - 136

Դանդանդան - 137
Դաղիվանք - 21
Դազիմոն - 76
Դամասկոս - 46, 57, 101, 109, 113
Դաոին գավառ - 200
Դավրեժ - 192
Դարան դաշտ - 200
Դարբանդի երկիր - 72
Դարոնք - 105, 109
Դեմիկք - 136
Դմանիք (Դմանիս) - 165, 168
Դյուբինգեն - 13
Դպրավանք - 107, 128
Դվին - 80, 89, 93–96, 106, 112, 116, 117, 124, 127, 140, 143, 158, 166, 168, 173, 175, 179, 180, 186
Դրազարկ վանք - 162, 169
Դրուց աշխարհ - 134
Դուալեթ - 165

Եգեր - 110
Եգիպտոս - 39, 48–51, 54, 61, 66–68, 71, 72, 100, 104
Եդեսիա - 68, 99
Եզնկա - 175, 196
Եթովպիա - 39, 50
Ելևթերոպոլիս - 68
Ելևինեյա - 48
Եկեղեցաձոր - 76
Եկեղյաց գավառ - 70, 84, 127
Եղիվարդ - 107
Եմավոն սար - 39
Եմրա - 102
Եվիլատ - 39
Եվրոպա - 39, 63, 74
Երազգավոր - 126
Երակլիա - 123
Երասխ - 69, 179
Երգեվանք - 193
Երկրորդ Հայք - 45, 95
Երվանդաքար - 69
Երուսաղեմ - 7, 18, 45, 47, 55, 57, 59, 60, 66, 68, 73, 74, 81, 82, 97, 99, 122, 146, 153–156, 159, 160, 163, 171, 178, 181, 182, 184, 188, 195, 203, 204
Երևան - 13
Եփեսոս - 74, 82, 88, 123
Եփրատ - 105

Զրեակ գյուղ - 114
Զուտարխնա գյուղ 94

Ընծաքիսար - 95
Ըռե (Ռե) - 136

Թաբորական լեռ - 201
Թաղեի վանք - 18
Թալին - 139
Թառձյան բերդ - 180
Թավրիզ - 8
Թեղենիս (Թեղենիք) - 7, 21
Թեոդուպոլիս - 83, 96
Թեսալիա - 50
Թերմուպոլիս - 49
Թիլ ավան - 84
Թլպաշար - 155, 163
Թորոսան եկեղեցի - 76, 78, 80, 105
Թուլիս կղզի - 84
Թուխարք - 109
Թուրքեստան - 96
Թևպախունք - 76

Իլիոն - 53
Իսպանիա - 66
Իսրայել - 49, 50, 52, 56-58, 85, 100

Իտալիա - 75, 79

Լամբրոն - 149, 176
Լատիա - 145
Լատիա - 133
Լիբիա - 39, 63, 64
Լիդիա (Լիդիա) - 66
Լյուբիկիա - 44
Լոռե - 150, 157, 164, 164, 177, 186, 187, 193
Լուլուա ամրոց - 118

Խազամախ դաշտ - 93
Խախ գյուղ - 84
Խաղտիք - 134
Խաչեն գավառ - 120, 143
Խաչեն (Ներքին) - 188
Խատան - 46-48, 109
Խավատանեք - 133
Խարտանեք - 76
Խզնե - 163
Խլաթ - 164, 169, 186, 192
Խոշորնի - 131, 186
Խոտակերտ - 131
Խորագույն Հայք - 96
Խորակերտի վանք - 7, 20
Խորասան - 135–138, 150, 165
Խորխոռունիք - 131
Խոր Վիրապի վանք - 7–9, 21
Խրամ - 110
Խուժաստան - 88, 90
Խունան - 165

Մամոռավ - 145, 146
Մանարք - 144
Մատաքար - 177, 179, 180
Մովք - 174
Մոփաց գավառ - 45, 78, 81

Կալոնպաղատ - 142
Կածարեթ - 193
Կաղարջք - 117
Կաղզվան -153
Կամախ - 80, 115, 116
Կամրջաձոր վանք - 128, 151
Կայենաբերդի Ս. Անդրեի վանք - 9, 19
Կայեն (Կայեան) - 131, 133, 142, 164, 188, 193
Կայծոն - 131, 133, 142, 164
Կայնան կուռք - 46
Կանգարս - 64
Կապան - 175
Կապուտակեք գավառ - 76
Կապուտիկա - 95
Կապույտ բերդ - 155
Կասպից ծով - 39, 132, 150, 165
Կաստողան վանք - 159
Կարին քաղաք - 97, 98, 179, 196
Կարկառ - 163
Կարմիր ծով - 39
Կարմիր վանք - 146, 158, 174
Կարնո աշխարհ - 96
Կարնո դաշտ - 134
Կարս - 128, 129, 134, 145, 164, 176, 186, 193
Կարքեղոն քաղաք - 55
Կաքավաբերդ - 175
Կեչառիսի վանք - 140, 153
Կեչրոր - 177, 179
Կեսարիա - 71, 74, 75, 81, 84, 95, 151, 196
Կիզիկոն - 123
Կիլիկիա - 5, 7, 18, 19, 21, 27, 79, 85, 105, 155, 162, 171, 172, 212
Կիլիկյան Հայաստան - 5, 11
Կինտոտակավիս բերդ - 160

Կիպրոս - 184
Կոկաց գավառ - 159
Կողբ - 98
Կողոնիա գավառ - 94, 129
Կոմանա - 145
Կոն - 183
Կոնկոնաթ լեռ - 159
Կոստանդնուպոլիս - 68, 79, 82, 97, 104, 121-123, 134, 141, 146, 149-151, 156, 162, 171, 183
Կովկաս - 63, 64, 125, 128, 144
Կովկասյան լեռներ - 39, 70, 164
Կոտայք - 108
Կուման գետ - 190
Կրետե - 53
Կուր գետ - 70, 128, 212

Հաթերք - 188
Հալեպ - 132, 152, 172, 174
Հակոբ (Ս. վանք) - 181
Հաղբանդ - 165
Հաղպատի վանք - 7, 9, 22, 23, 130, 147, 148
Համիան - 137
Հայաստան - 10-12, 18, 45, 63, 67, 69, 72, 74, 78, 82-84, 86, 87, 90, 92, 95–99, 104–106, 108–110, 112, 113, 119, 120, 122, 125, 126, 128, 129, 140, 143, 144, 151, 157, 162, 163, 165, 184, 190, 197, 198, 202
Հաշտյան գավառ - 65
Հաշտենք - 65, 66
Հավութաստ - 175
Հարություն (եկեղեցի Երուսաղեմում) - 153
Հացյաց դրախտ - 81
Հացյունք - 95
Հեռ - 212
Հերեթ - 165
Հերմոն դաշտ - 182
Հնդկաստան - 32, 39, 71, 136, 137
Հողոցմանց գյուղ - 88
Հոն - 152
Հոռոմայր - 111, 175
Հոռոմոսի վանք - 128
Հովհանի վանք - 130
Հորդանան - 43, 100
Հոխիսիմյանց տաճար - 87, 97, 131
Հռոմ - 12, 24, 26, 58, 67, 74, 79, 82, 122–124, 154, 157, 181, 197
Հռոմկլայ - 13, 18, 174
Հուդա - 55–59, 63
Հունաստան - 68, 71, 83, 84, 94, 97, 104, 109, 112, 118, 119, 121, 127, 145, 152, 171, 180, 181, 211
Հուստինանուպիս - 96

Ձագ - 108, 120
Ձագավան - 7
Ձորագետի գավառ - 143, 144, 186
Ձորագետի վանք - 23, 231
Ձորավանք - 161
Ձորափոր - 108

Ղազվին - 137, 138

Ճենաց երկիր - 72
Ճքեթ - 164

Մաղիամ - 49
Մաղինա - 99
Մաժաք - 66
Մածնաբերդ - 194
Մահկանաբերդ - 164
Մամիկոնյան տուն - 75

Մամլուզ - 56
Մանազկերտ, Ման(ա)ծկերտ - 110, 125, 134, 145, 170, 179, 184
Մանյա այր - 76
Մասիս լեռ - 44
Մասյացոտն - 95, 99
Մարանդ - 151
Մարաշ - 129, 151, 157, 159
Մարաստան - 59, 62
Մարաց Մարդ - 69
Մարմաշենի վանք - 140
Մարտիրոսաց քաղաք (տե՛ս Մուփարկին) - 45, 62, 199, 201
Մարք - 44, 63, 64
Մաքա - 99, 102, 103
Մաքենոցաց վանք - 114
Մելեփտ - 76
Մելտենի - 45, 82, 95, 129, 153, 156, 157
Մեծամոր - 69
Մեծ Հայք - 14, 18, 45, 96
Մեմփիս - 49, 51
Մենծկերտի բերդ - 158
Մթին լեռ - 64
Միլան քաղաք - 181
Միջագետք - 66, 69, 74, 95, 98, 118, 142, 148, 152, 153, 170, 200
Միջերկրայք - 63, 67, 74
Մծբին - 65, 68, 69, 78
Մշակավանք - 190
Մուսկվա - 13, 14
Մովաբ - 52
Մովաբի Ռաբովթ - 100
Մսիս - 149
Մտր - 146, 201, 212
Մրաճուք - 164
Մրեն եկեղեցի - 99, 173
Մրոն - 137
Մուղան - 192, 200
Մուփարկին - 96, 199
Նաբուկ քաղաք - 124
Նախճավան - 134
Նամրվան - 194
Նաչավուտ (Նշավուտ) - 137
Ներքսագույն Հայք - 96
Նզեպ - 162
Նիկիա - 75, 121, 122, 151, 155
Նիկոպոլիս գյուղ - 94
Նինվե - 45–47
Նորաշեն գյուղ - 175
Նոր բերդ - 193, 204
Նոր Գետիկ - 7
Նոր քաղաք (Ախալքալաք) - 144
Նոր քաղաք (տե՛ս Վաղարշապատ) - 70
Նիրկերտ - 96, 118

Շահապիվանք - 89, 172
Շամի աշխարհ - 200, 201
Շամիրամի բերդ - 142
Շավքոր - 143, 189, 193
Շաչվաղ - 143
Շապուրան քաղաք - 165
Շաքե - 173
Շիրաբ գետ - 212
Շիրակ - 114, 115, 133, 176, 186
Շիրակավան - 122, 126
Շիրակունի - 148
Շոթք - 142, 143
Շոշ - 46
Շուղր վանք - 160, 174

Ոստան Հայոց - 191
Որմիզդ - 154
Որոտ դղյակ - 189

Զարեք - 186, 188, 193
Զին ու մաշին - 190
Զորա (Ձորա) դուռ - 70
Զուրբորդ Հայք - 45, 78, 96

Պաղեստին - 39, 43, 48, 63, 67, 182
Պամփիլագոնիա - 123
Պապատոն - 149
Պատմոս կղզի - 73, 74
Պարթևստան - 39
Պարիսար լեռ - 155
Պարսկաստան - 69, 71, 78, 89, 92, 135, 142, 150–152, 158, 165, 177, 180, 187, 195, 198
Պարտավ - 143
Պեծենեկք - 150
Պետրոս (Ս. եկեղեցի) - 146, 155
Պերգյա - 66
Պիզա - 142, 149
Պիր - 163
Պղնձահանք - 197
Պոնտոս - 45, 63–65, 71, 95, 132, 150
Պոտոն - 45
Պրոկոպոս - 104

Ջահան գետ - 135, 137
Ջավախք - 64, 94

Ռան - 150
Ռե - 137, 138

Սաբա - 43
Սագաստան - 96
Սախատա - 177
Սաղմոսավանք - 7, 21
Սամարիա - 56, 58
Սամշուլդե - 114
Սամուսատ - 153, 163
Սանահնի վանք - 23, 128, 130, 140, 150, 188
Սատուն - 124, 170, 180
Սարգիս (Ս. եկեղեցի) - 194
Սարի - 136
Սաֆա - 101
Սեբաստիա - 56, 76, 82, 156
Սելևկիա - 184
Սերկևիլ - 140
Սերմի - 79
Սիմ լեռ - 114
Սինա լեռ - 51, 85
Սիոն (Սիօն) - 15, 103
Սիս - 7, 18, 184, 212
Սկուտրի գյուղ - 94
Սմբատավան - 115
Սյունիք - 44, 63, 92, 119, 130
Սորիա - 79
Սուփի (Սուրբ) - 125, 179
Սպանիա - 181
Սպեր - 115
Սրավ - 136, 137
Սրուճ - 43
Սուր - 100
Սևան - 108, 130
Սևաստ - 95, 133, 141, 196
Սև (Սեռվ) լեռ - 132, 156, 161
Սևորդիքի վանք - 131
Սևորդյաց գավառ - 143

Վահկա բերդ - 155, 160
Վաղարշապատ - 70, 71, 88
Վաղարշավան - 70
Վայոց ձոր - 88
Վան - 66
Վանանդ - 155
Վասպուրական - 115, 121, 133, 149, 149, 159, 162

Վասիլիան - 13
Վասնյան դաշտ - 78
Վարագա վանք - 141
Վարաչան քաղաք - 112
Վարդանակերտ - 109
Վարդանաշատ - 191, 193
Վարդգեսավան - 70
Վարձիա - 107
Վենետիկ - 13
Վեռիավ քաղաք - 183
Վիեննա - 13
Վիրապ (տե՛ս նոր Վիրապ) - 166
Վիրիա - 64
Վրաստան - 12, 87, 94, 126, 128, 142, 149, 164, 169, 187, 190, 195, 197, 198
Վրկան - 39, 96, 153

Տախալասոն լեռ - 76
Տաճկաստան - 99, 201
Տայք - 96, 104, 106, 107, 109, 115, 116, 125
Տանձիք - 143
Տանուտերական գավառ - 95
Տարիր - 131, 164
Տատաբի - 136
Տավուշ - 7, 133, 164, 193
Տարոն - 74, 75, 117, 120, 125
Տարսոն - 176
Տարբարատան - 136
Տարինաս - 63
Տերունական - 164, 193
Տիգրանակերտ - 68
Տիգրիս գետ - 65, 199
Տյուրոս - 55
Տորոս լեռ - 119, 146
Տրապիզոն - 96
Տրապոլիս - 159, 182

Տիղրիս (Տիգրիս) - 9, 117, 164, 165, 173, 177, 192, 205, 211
Ցուրտավ - 95

Ուղկան բերդ - 75
Ուխտիք - 134, 164, 179
Ուռուն - 176
Ունկուաց գավառ - 175
Ուռհա - 68, 99, 150–157, 159, 162, 163, 171
Ուտիք - 120

Փայտակարան - 78
Փառան անապատ - 100
Փառիսոս - 7, 10, 142, 166
Փարիզ - 13
Փիլիպուպոլիս - 183
Փյունիկե - 51
Փոյթ - 110

Քաղանե (դաշտ) - 40
Քաղկեդոն - 24, 25, 90, 106, 108, 110, 117, 123, 129, 188
Քաջ Վահանի քարայր - 77
Քասախ գետ - 106
Քավազին - 194
Քերսոն - 123
Քոբայր - 167
Քոհաստան - 137
Քուշանաց երկիր - 63

Օզկան քաղաք - 163
Օթմտու գյուղ - 112
Օձ բերդ - 118
Օշական գյուղ - 88

ՀԱՅԱՔՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1862

ԾԱՌԱՉԱԲԱՆ

Թախանձեալք 'ի բազմաց յառտնին և յօտարազգի բանասիրաց՝ շարայարել տպագրութեամբ զկարգ պատմագրաց մերոց, անտես առնելով առ վայր մի զընտրութեամբ ոճոյ և բանակարգութեան հայերէն խօսիցն, ուշ ունել ծանօթութեան անցից և դիպաց, մանաւանդ միջին անուանեալ դարուց ժամանակաց, յոր առաւել իմն սերտիւ պնդութեամբ դեգերին այժմուս պատմաբանք և հնախօսք, ձեռն արկաք նախ յ'առ'ի բազմաց ըղձացեալն և 'ի չև ևս տպագրեալ[1], 'ի Վարդան պատմիչ, որոյ համբաւ մեծ հռչակի յազգիս, որպէս գերազանցելոյ առ ժամանակակցօքն և անհաւասար մնացելոյ առ 'ի յետնոցն: Ցոր սակս, միանգամայն և յորոշումն յայլոց համանուանցն մերձաւորաց ժամանակաւ, Մեծ կոչի Վարդանս այս վարդապետ, և ամենապատիւ մականական անուամբք մեծարի յամենայն յիշատակագրաց. որպէս, Ամենազով արքիւնական, պանծապայծառ, հոգիապայծառ, մեծիմաստ, իմաստախոհ, եռամեծ, պիտանական, տրամաբան, ասասուածաբան, մեծ ասպետասա, աշխարհալուր, աշխարհաքարոզ, տիեզերաբոյս, տուրբ և այլն: Բայց այս ամենայն կոչմունք պատուական չեղեն բաւական առ անխառն պահել զգործս և զքզրուածս նորին ընդ այլոցն. և յոլովից յարանուանց վաստակք պիտանի և անպէտ՝ միոյս այսմ վերընծայեցան: Եւ ոչ միայն յիրս և 'ի գիրս, այլ ինձ թուի և 'ի հայրենեացն կոչումն սխալեալ, որոց Բարձրբերդցի զսա ասեն. քանզի ոչ ոք 'ի նախնեաց անտի կոչէ զնա այսպէս, այլ մանաւանդ բանք նոցին ցուցանեն յարևելից Մեծաց Հայոց լինել զնա, և ամս ինչ պանդխտութեամբ կեցեալ 'ի Հռոմկլայ և ոչ 'ի Բարձրբերդ. զայլ ոմն Վարդան Բարձրբերդցի ցուցանելով ժամանակակից նորին կրսեր, որպէս յիշէ մատենագիր ոմն յամի 1286, որ է իբր վեշտասան ամաւ յետոյ քան զմահ մեծիս այսորիկ Վարդանայ: Իսկ զմիւսն զայն զկրսեր՝ Երկրորդ Վարդան կոչէ Ղազար Ջահկեցի կաթուղիկոս, և նմա ընծայէ զՀամառօտ մեկնու-

[1] Մինչ 'ի գրաբարակեր էաք զգործս զայսմ լուսոյ զի 'ի Մոսկով քաղաքի տպագրեալ է պատմիչս, այլ չև ևս հանդիպեցաք մատենին:

թիւն չորից աւետարանաց, զԱռակն, զՀամառօտ աշխարհագրութիւնն, զՄեկնութիւն քերականի,. որոց յետինքդ կարծին երրորդի ուրումն Վարդանայ գործք:

Արդ մերս այս պատմագիր թուի հայրենեօք յարևելեայ Հայոց 'ի սահմանակցութենէ Աղուանից տան, ուր և աշակերտեցաւն Վանականայ վարդապետի, և նախապատիւ ծանուցաւ քան զերեսին ևս աշակերտակիցս իւր ձեռասունս հռչակելոյ վարժապետին, (յորոց մի պատմիչն Կիրակոս, և միւս՝ Յովսէփ արքեպիսկոպոս, առաջնորդ Թադէի վանաց), և առ կենդանեաւ իսկ նորուն համբաւեցաւ զգօնութեամբն և հըմտութեամբ. որպէս զի յերթն յԵրուսաղէմ ուխտագնացութեան աղագաւ հանդիպելով 'ի Կիլիկիա, բազում մեծարանօք ոչ միայն ընկալեալ եղև 'ի Հեթում թագաւորէ և 'ի Կոստանդեայ կաթուղիկոսէ, այլ և զամս և աւելի բռնադատեալ ասպնջականեցաւ 'ի յետնոյս, յօժանդակութիւն կարևոր գործոց հայրապետանոցին. որպէս և խոստովանի գովութեամբ կաթուղիկոսն 'ի շրջաբերականի թղթին՝ զոր առաքեացն առ արևելեայս 'ի ձեռն նորին ինքեան Վարդանայ. «Առաքեցի առ ձեզ զարդիւնական վարդապետն զՎարդան՝ փոխանակ անձին իմոյ, զոր ետ նախախնամութիւնն Աստուծոյ ձգելով առ իս 'ի կողմանց ձերոց, 'ի հինգ ամաց հետէ. զոր իբրև տեսի՝ ճանաչելով ըստ կարի՝ կապեցի զդա միջնորդութեամբ Աստուծոյ ընդ անձին իմոյ կենաց և մահուամբ, մեծաւ հարկիւ և սիրով բևեռեալ ընդ իս յաւիտեան... որ ունի զիմ սիրտ և զքան յամենայն իրս»: Ընդ թղթոյն տարաւ յարևելս և զկանոնս ժողովոյն Սսոյ՝ գումարելոյ յամի 1243, յորում բազմէր և ինքն ընդ եպիսկոպոսունս և ընդ վանահարս Կիլիկիոյ, և թուի 'ի նշանակեալ թուականէդ յետս երթալով հասանել 'ի սկիզբն հնգամեայ բնակութեանն յարևմտեան Հայս, 'ի թագաւորութեան Հեթմոյ. յորոյ խնդրոյ արար մեկնութիւնս և լուծմունս, որպէս և գրէն առ նա ինքն. «Ցիշեա՛ զոր 'ի ձեռն Թորոսի հրամայեցիք, վասն Եղաբերիցն կանանցն գրել ձեզ, և 'ի խորհուրդ պատարագին, և ապա երեսօք յանդուլն հրամայեցիք, որ գրեաք ձեզ ժղլանք 'ի մեկնութենէն քերականին. և ես այլ աւելի սիրով՝ գրել ձեզ ձեռամբ լուծմունս յաւետարանէն և յարարածոցն». այսպիսի պարզ և ռամկական ոճով գրեալ են լուծմունքդ և ժղլանքդ (գրոյցք) իբր վաթսուն և վեց թուով. և մեծաւ համարձակութեամբ իբրև ընտանի առ ընտանի, կամ

դաստիարակ առ արքայ մանուկ, որում ասէ. «Աստուծով տղայահասակ և մտօք և աչօք զօրաւոր էք», առ 'ի կարող լինել ընթեռնուլ զիւր իսկագիր անսեթևեթ գրածն. զոր և աղերսէ մնալ առ դշխոյին Զապելեայ յիւր յիշատակ. «Թող թագուհի պահէ, և 'ի պիտոյ ժամս առնոյք 'ի նմանէ»:

Զգիր կաթուղիկոսին և զկանոնս ժողովոյն բերեալ յարևելս յամի 1246, և ընկալեալ զձեռնագիր հաւանութեան առաջնորդաց տեղւոյն՝ դարձաւ երեր առ հոգևոր տէրն, և այլ ևս ժամանակս ինչ յամեալ առ նմա, յայսմ նուագի յամի 1248 թարգմանեաց կամ յերիւրեաց 'ի հայ զփոխեալն յասորւոյն զընդհանուր Պատմութիւն Միխայէլի պատրիարքի, 'ի ձեռն Իշոխայ ուրումն երիցուի Ասորւոյ[1]: Յետ երկրորդ անգամ դարձին 'ի Կիլիկիոյ՝ եկեալ յարևելս դաղարեաց յԱնդրէի վանս 'ի Զորն Կայենոյ. և անդ, կամ այնուհետև յօրինեաց զգլխաւորս 'ի մատենագրութեանցն զոր արդ 'ի ձեռին ունիմք. և զի յառաջ քան զայն հռչակեալ էր անուն նորա, հարկ է թէ և յառաջագոյն հրատարակեալ էր այլ գիրս և ճառս, որք կամ չհասին առ մեզ կամ ոչ անուամբ նորին: Կարևոր վաստակք Վարդանայ են մեկնութիւնք սուրբ գրոց, հաւաքեալք յառաջնոց մեկնչաց, յորս ժամանակի երիցութեամբ, թուի Ա. Դանիէլի մեկնութիւնն համառօտ, 'ի խնդրոյ եղբարց միաբանից. Բ. Սաղմոսաց մեկնութիւն, համառօտ քան զԼամբրոնացւոյն, 'ի խնդրոյ առաջնորդին Հաղբատայ՝ տեառն Յովհաննու, որ ոմանց նախորդն Համազասպայ կարծի, և ինձ յայնոյդ նորուն, որ նայնպէս Յովհաննէս կոչիւր. Գ. Մեկնութիւն Հնգամատեանին Մովսիսի, 'ի խնդրոյ տեառն Համազասպայ, աւարտեալ յամի 1261. Դ. Մեկնութիւն Եղբաց երգոյն, 'ի խնդրոյ աշակերտակցին իւրոյ Կիրակոսի վարդապետի պատմչի, գրեալ յամի 1265, եօթն ամաւ յառաջ քան զմահ իւրեանց, յորոյ վերջաբանին մտերիմ խանդաղատանօք խօսի ընդ ուսմնակցին և ծերակցին. «Իսկ դու մշակդ մորենեաց և աղտաղտ անբուսաբեր վայրաց, անոյշ մեզ ճաշակ յարտաժամ և յոյս յԱստուած, վարդապետ Կիրակոս, որ հարկեցուցիչ հրամանաւ և գուժիւն մահու քեզ՝ ասել զմերն մերձակայ, մուծեր զմեզ 'ի տուն գինւոյ և իւղոյ, խնձորոյ և նռնենեաց, շղթայից արժանաւոր ո-

[1] 'Ի գիշատակարանի թարգմանութեանն՝ զոր 'ի ձեռին ունիմք, չիք անուն Վարդանայ. բայց վասն Ղազար կաթուղիկոս, և բազում հետևողութիւն իսկ հեղինակիս պատմչին 'ի Մխիթարէ:

տիւք, հայել լսել և խօսել, հոտոտել և շօշափել զկեանս և զանմահութիւն»: Առ այսոսիկ որք ծանօթք են մեզ և բազմաց, յաւելոյր ոմն և զմեկնութիւնս Դատաւորաց և Ցեսուայ, և զմարգարէիցն Եսայեայ և Երեմիայ. զոր այլուստ չէ մեր լուեալ յանուն Վարդանայ: Կրկնակի պատուական են մեզ գրուածքդ. մի, զհարց նախնեաց, զորոց զոմանց չունիմք արդ լիովին զգործս, ի սմա գտանելով զէթ զհատուկտիրս բանից, յորս սիրելագոյն մեզ Եղիշեայ բանքն ի մեկնութեան գրոց Մովսիսի. և միւս՝ չափ և կուռ համառօտութիւն իմաստից և լուծմանց յորում ոչ սակաւ զգօնութիւն և ճարտարութիւն երևի հաւաքողին. և յառաջաբանք և վերջաբանք գրոցն. որպէս և պատմագրութեանն, խոհականք են և գրոցովականք, և ախորժագոյնք յընթերցումն. յորոց և քաջիկ մարթ է ի վերայ կալ հանճարոյ և ոճոյ արձակ գրութեան հեղինակին, քան ի սեղմ և ի համառօտ մեկնողական բանիցն, որպիսիք են վերոյիշեալքդ, և **Մեկնութիւն ուէրոնական աղօթիցն, Հաւաքածոյ ի Հարանց վարուց.** և այլն: Իսկ ճառիցն և խրատական բանից՝ յորոց մարթ էր լիովին դատել զնա, ընդ երկբայութեամբ է հարազատութիւնն. վասն որոյ և զանց առնեմք զնոքօք առ ներեալս, բայց ի **Ներբողէ Լուսաւորչին,** զոր գրեալ է՝ ի խնդրոյ նախանշանակեալ տեառն Համազասպայ, որ և չափաւոր ճաշակօքն ի գովութիւն կրթի նորա: Զնոյն առաւելութեամբ հաստատեն և շարականք նորին, **Որ նախիմացն. ի յանուանմանն առաքելոցն, Թարգմանչացն և Ս. Սարգսին**[1]. չորեքին ևս յառաջին կողմանէ ձայնի (Ա4), դանդաղագնացք յերգ և յ՝եղանակ, թերևս հանդարտ բարուց երգողին ցոյցք. նմա ընծայեն ոմանք և **զԱնթառամ ծաղիկ** երեք տուն շարական պերճաբան, իսկ այլք զմեկնութիւն նորին: Վասն սոցին Առաքէլ Սիւնեցի ի չափաբանեալ անուանակարգութեան յօբինողաց շարականի՝ կոչէ,

Սուրբքն Վարդան յաւուրս տեղին:

[1] Ոմանք ոչ համարին Վարդանայ զԱմենասուրբն Ս. Սարգսի, այլ հաւատի նորա լինել եղանակաւն և վերջին տամքդ, յորս յիշի Գագ լեառնաբլուր, և իշխող կողմանցն, զոր **իշխան մեր կոչէ,** և է Վահրամն յիշեալ ի պատմութեանն (յէջ 144) և յայտ է թէ յայն կողմանս յօրինեաց զերգն. որպէս և զնախիմացն ի Կիւլիկիա, մաղթելով ի նմին **զկենդանութիւն մերոյ թագաւորին,** Հեթմոյ, և **զբաւական Իշխանութեան մերոյ Հայրապետին,** Կոստանդնի:

Այսոքիկ հաւաստի երկասիրութիւնք Վարդանայ. իսկ գործք և անցք կենաց նորին յետ դարձին ի Կիւլիկիոյ, չեն նշանակեալք ըստ բաւականին. յիշատակի գովութեամբ յամի 1255 մեծ վարդապետ և աստուածազգեաց այրն Վարդան, նախ ի Վիրապին վանս նստեալ ուսուցչապետ, ապա ի Սաղմոսավանս և ի Թեղենիս, այլ ոչ ունիմք հաստատել՝ թէ սոյն իսկ մերս իցէ: Նոյնպէս և Վարդանն վարդապետ որ ընդ տեառն Գրիգորիսի Դաղիվանից առաջնորդի գնաց ի հերքումն և ի յանդիմանութիւն Դաւթի դիւապատիր մոլորեցուցչի, ոչ է մերս այս, որպէս համարի նոր պատմահայրս Զամչեան[1], զի Կիրակոս պատմիչ իրացն՝ զՎարդանդ զայդ և զԳրիգորիս զոյգ **Ծոժորորդիս** ասէ մականուանեալ: Քաջանչան և սխրալի դէպք կենացն այն է՝ զոր ինքնին պատմէ մերձ յաւարտ գրոցն, որ և վկայ է մեծի Համբաւոյ նորա առ իւրսն և առ օտարս, մինչև ի դուռն աշխարհակալին արևմտից Ասիոյ՝ Հուլաղու ղանի, յորմէ և կոչեցաւ ընդ թագաւորս և ընդ աւագ իշխանս. և համարձակագոյն քան զամենայն ոք, ըստ շնորհաց իմաստութեանն և ալևոր հասակին՝ խօսեցաւ ընդ ահեղին այնմիկ, լուաւ զգաղտնիս նորա և թելադիր եղև խորհրդակցութեամբ: Բազում ինչ կարևոր և հետաքննելի իրք են յայս դէպս, որ և քան զամենայն մասունս պատմութեանն հանդուցագոյն գտանի դեգերելոցն ի քննութիւն արևելեան անցից այն ժամանակի[2]: Ի դարձի անդ իւրում ի դրանէ ղանին՝ թուի հանդիպել աւազակաց Հարամեաց, և անկանել գրենոյն ի ձեռս նոցա և յաջողութեամբ թափել, զնոսին[3]: Զետին ամս կենացն՝ հաւանօրէն՝ եկեաց ի Հաղբատ, ուր և գրեացն ի խնդրոյ Կիրակոսի զմեկնութիւն Երգոց երգոյն, յամի մահուան Հուլաղուի, յետ երկուց ամաց վախճան արար պատ-

[1] Պատմութիւն Հայոց. Գ. 233:

[2] Ցորոց մի և հմուտն արևելագէտ Պ. Եդուարդ Տիլորիէ, այժմս վարժապետ Հայերէն խօսից ի կայսերական մատենադարանի Փռանկաց, ի Բարիզ. թարգմանեալ է յիւր լեզու և հրատարակեալ զայս դէպս, որպէս և այլ հատուածս բանից ի պատմչէս յայլ ինչ գիրս իւր: Նոյնպէս և համազգի նորին՝ Պ. Միքայէլ Պրոսէ պարագլուխ գիտնոց վրացի դպրութեան, բազում բանս ի հեղինակէս թարգմանեալ և յետեալ է ի յաւելուածս հռչակելոյ իւրոյ Պատմութեանն Վրաց: Մանօթ է պանդիչս մեր և այլոց արևելագիտաց ոչ սակաւուց ոգիսեալ ի Սէն Մարդէնայ և ի Գաղրիմէրէ:

[3] Տե՛ս յէջ 164:

մագրութեանն, և յետ չորից ամաց, այն է Տեառն 1271, յորում ամի և ամոլակիցն իւր Կիւրակոս, վախճանեալ Թաղեցաւ 'ի Հաղբատ, և զգերեզման սորա համարիմ իբրև ուխտատեղի կամ պատուելի յիշել Թոմայի Վանանդեցւոյ ընդ այլոց հոյակապ արանց անդ Թաղելոց,

Վարդան մեկնիչին քաջաբան,

քանզի անդէն Թացեալ է և այլ ոմն Վարդան վարդապետ նշանաւոր՝ երիցագոյն ժամանակաւ, այն՝ յորոյ խնդրոյ Ներսէս Շնորհալի գրեաց զմեկնութիւն բարձրացուցեաց ճառի:

Պատմագրութիւնս այս Վարդանայ, յետին գրաւոր վաստակ նորա, և գլուխ գործոց հեղինակին համարեալ 'ի յոլովից, Թերևս 'ի նախահոչակ համբաւոյն ստացեալ է զայդ վարկ, քան յիւր ուրոյն արժանեաց. զի ոչ գեղեցկաբան ինչ շարամանութեամբ լեզուին և ոչ մանրապատում ծանօթութեամբք կամ նկարագրութեամբք ախորժական ընծայի. զի թէպէտ և 'ի հասարակի չափաւոր, այլ և ուրեք ռամկօրէն վարի ոճով, որպէս 'ի պատմութեան անդ տեսաւորութեանն ընդ Հուլաղուի, Թերևս 'ի հասկացումն ծանօթից իւրոց աշխարհիկ իշխանաց գրեալ: Դարձեալ և ըստ քանակի գրոցն, զվեցհազար ամաց պատմութիւն ամփոփել կամելով յերկվեցեակ Թերթս, հարկաւորէր իմն կարգել ցամաք քանս և ուրեք լոկ շարս անուանց և Թուոց. և զի այս ոճ պահանջէ աչալուրջ քննութիւն և ճշդութիւն ժամանակագիր Թուոցն և կարգաց յաջորդութեան աթոռոց և գաւազանաց, ոչ անվրէպ և յայսմ գտանի հեղինակս, կամ առ ծերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել 'ի ստոյգ պատմչաց, կամ առաջնոց ընդ օրինակողաց գրոցն զնոյն սխալեալ. որով բազում ուրեք պակասաւորք են կարգք օտար և հեռաւոր Թագաւորաց և սխալ ամք իշխանութեան նոցին. զոր և ուրեք ազդ առնելով ծանօթութեամբք՝ զայլովքն զանց արարաք զի ոչ համարիմք 'ի հեղինակէ աստի ուսանել զայնոցիկ կարգս, մինչդեռ առձեռն պատրաստ գտանին խնդրողաց՝ այժմու ստուգաքնին ժամանակագիրք: Բայց ստուգագոյն է 'ի յիշատակս ազգայնոց իրաց և դրացեաց մերոց, յորս են արդարև և 'ի համառօտութեան անդ ոչ սակաւ կարևոր գիտելիք, և դէպք աննշանակք առ 'ի յայլոց, արգասիք մեծի մատենայած հմտութեան հեղինակին և ծանօթութեան գիտնոց աթանց ժամանակին, առ որս ընտանութիւն և մուտ և ել ունէր. և դարանք հռչակեալ դիւանաց Հաղբատայ և Սանահնի և այլոց վանորէից Զորոյգետոյ և Աղուանից և տան կաթուղիկոսարանին՝ օժանդակք աննախանձք կային նմա. և ըստ այսմ երախտապարտ գտանիմք Վարդանայ, որ տայ մեզ ծանօթս և զոմանց կորուսելոց արդ պատմագրաց մերոց՝ յանուանէ կամ անանուն. յակն արկեալ իւր գրեթէ զամենայն երիցագոյն պատմիչս մեր, զերկուց նախ քան զիւրն դարուց դէպս առնու. յոլովակի 'ի Սամուէլէ և 'ի Մխիթարաց Անեցեաց, յՈւռհայեցւոյն Մատթէէ, յԱսորւոյն Միխայելէ, և 'ի Վրաց պատմութենէ և այլուստ. իսկ զիւրոյ՝ զ' ԺԴ դարու դէպքն՝ 'ի լրոյ և 'ի տեսութենէ: Այդքան բազումս ունելով օրինակագիրս և առաջնորդս, մեծարէ յաճախ անխտրապէս և զկարծիս նոցին. մանաւանդ ուր ազգին և նշանաւոր կամ սրբազան անձանց շքոյ և պատուոյ և կրօնից վարդապետութեան իրք կայցեն, դիւրահաւան գտանի առ հաճոյն և պանծալին և առ հրաշանշան երևոյթս. զնոյն և յայլ գիրս նորին է տեսանել. իսկ 'ի պատմագրութեանս յայդպիսեաց սակի են պատմեալքն ինչ զԼուսաւորչէն և զդաշնակցութեանց կամ թղթակցութեանց ընդ գերագոյն գահու Հռովմայ, և տեսիլք վարդապետաց ոմանց[1]. առ որովք հարկ համարեցաք ազդ ինչ առնել կամ ծանօթաբանել: Զնոյն յայտ արարաք և երբեմն լոկով նշանակաւս (!), ուր զժողովոյն կամ զհաւատոց Քաղկեդոնի բանք էին, և սպրդեալ ինչ էր անճահ 'ի լուր՝ ոչ միայն մերումս ողջմտութեան, այլ և ոչ ինքեան՝ յայլսն զգուշաւոր և բարեպաշտ հեղինակին, եթէ յետնոցս հասեալ էր ժամանակաց, յորս պարզագոյն ևս բացատրի և ճանաչի դաւանութիւն սրբոյն ժողովոյն, համաձայն նախագումար երիցն ժողովոց և մերոց երիցագոյն Հարց եկեղեցւոյ: և եթէ կամեցեալ էր կամ կարող լեալ՝ առաւել անաչառապէս քան կանխակալ մեծարանօք զյառաջ քան զինքն կացեալ վարդապետսն քննել, յորոց ոչ սակաւք նովին թերուղիղ այլ անչար մտօք խաբեալք կամ անհասք նրբութեան խնդրոյն՝ խորշէին 'ի քաղկեդոնականաց, քստմնելով 'ի կարծեցեալ նեստորական բաժանմանց՝ որ յանձն և 'ի բնութիւնս աստուածայրական Քրիստոսի: Բայց և զայս արժան է ազդել զարբեսէր հեղինակէս, զի թէպէտ և

[1] Տե՛ս յէջս 51, 56, 59, 64, 86, 94, 108, 118, 138, 157, 158:

իւր հարազատ բանս համարեսցուք զգրեալսն զքաղկեդոնականաց, տակաւին հեղազոյն և հանդարտ գտանի քան զյոլովս յայլախոհիցն, և ոչ թերանայ 'ի մեծարելոյ զհարս ժողովոյն և զայլս նոցին հետևողս արժանաւոր անձինս: Գրելով զայսմ խնդրոյ առ Հեթում արքայ, յառաջաբերեալ զբանս Աթանասի և Կիւրղի և զԳրիգորի Աստուածաբանի, որք երկուս ասեն բնութիւնս, և ընդունելով զնոյնս՝ ասէ. «Ամէն բան տեղի և պատճառ ունի. զի որպէս լսողին և ժամանակին և կարեացն պէտք եղեալ՝ խօսեցեալ են. զի այլ է կուսոյ բանն, և այլ է ճըշմարիտ խոստովանութիւնն 'ի խաղաղ ժամու. զի Աթանաս ասացեալ է ընդդէմ Արիոսի երկու բնութիւն... իսկ Աստուածաբանին՝ որ ասէ 'ի ճառին որ առ Կղաւդոնիոս, Բնութիւնք երկու, քանզի Աստուած և մարդ, բայց որդիք ոչ երկու. և այս վէճ է ընդդէմ Ապողինարի, որ մի բնութիւն ասէր զՔրիստոս...: Իսկ Կիւրեղ ընդդէմ Եւտիքի դիւաբերանի, որ առաչօք ասէր և կերպարանօք զտեառն երևումն և մի բնութիւն, այսինքն ոչինչ առեալ 'ի մէնջ, ասաց. Երկուք և ոչ մի»: Արդ որպէս Կիւրղիդ՝ նոյնպէս և ժողովակցացն 'ի Քաղկեդոնի՝ են բանքն, ո՛վ վարդապետ. և թէ նոքին իսկ Հարքն որք յառաջ և որք յետոյ ժողովոյդ՝ զանազանելով մի կամ երկուս ասեն բնութիւնս, ըստ քո իսկ վկայելոց՝ «Ամէն բան տեղի և պատճառ ունի» և որ կամի ոք քննել՝ իբրև զհաւատոյ սրբազան իրս, որպէս և էնն իսկ ամենայն իրօք պարտի քննել, յստակ և անկիր մտօք, և մի՛ ընդ եկեղեցւոյ վարդապետութեան խառնել զազգային խտիրս և խնդիրս, կամ ընդ Հոգւոյ Աստուծոյ՝ զհոգի մարդոյս, հակառակորդի ընդ մարդոյ, որով և աստուածամարտ գտանի բազում անգամ:

Զայսոսիկ առ յուշ ինչ արժան համարեցաք ազդել աստանօր, որպէս զի եթէ և յետ այսորիկ առ պատմական և ուսումնական օգտի հրատարակիցեմք և զայլս 'ի պատմչաց կամ 'ի գրչաց, առ որս շատ կամ սակաւ խծբիծք գտանիցին զայսմ աստուածաբանական խնդրոյ, ծանիցեն քաջ հանդիպողք մատենիցն՝ զմերս տեսութիւն. որոց՝ սիրելի է նախնեացս մատենագրութիւն և մատենագիրք՝ բարեկամք, այլ բուն սէր և բարի՝ ճշմարիտն միայն, որ է ուղիղ վարդապետութիւն. զոր և ցանկամք և խնդրեմք ուխտիւք նոյնպէս լինել ամենեցուն, և առաւել մերոցս համազգեաց, որպէս և զիարդ ընկալցին զմեր իղձ: - Եւ զի վերագոյնդ իբր երկբայութեամբ իմն ասէաք թէ

արդարև հարազատ բանք հեղինակիդ իցեն ասացեալքն, և մի իբրու այլայլեալք յիրահամարձակ և 'ի կողմնասէր գրչաց, ոչ եթէ իսպառ օտար 'ի կարծեաց նորին համարիմք զայնս, մանաւանդ զի և օրինակք գրոցն հնագոյնք են, այլ զի և 'ի հինս անդ օրինակս մատենից հեղինակին՝ գոն խարդախեալ բանք: Օրինակի աղագաւ, յԱրարածոց մեկնութեանն, ուր զՀոգւոյն սրբոյ ելումն և բղխումն յիշէ ըստ Եղիշեայ բանից ուղղափառ դաւանութեան, որում և ինքն հաւանի յիւրումն պատմութեան[1], և մատենագիր ոմն 'ի յաջորդ դարու սաստիկ նախանձայոյզ հռոմէական՝ բերէ գովութեամբ զնոյն վկայութիւն յրմբերանումն ոմանց հակառակողաց յիւրումն ժամանակի, զնոյն վկայութիւն գտանեմք ակնարև և անհեղեղ այլայլեալ յօրինակս ինչ գրոցն, որք սակաւ ամօք զկնի մահուան հեղինակին են գրեալք[2]: Զայսոր կողմնատար և թիւրեալ հոգւոյ առհաւատչեայ ընծայէին ուրեք և օրինակք պատմագրութեանս, ըստ իւրաքանչիւր կրից ընդարձակելով կամ սաստկացուցանելով զբանս հեղինակին. զոր արդարև ոչ է դիւրին ընտրել և ջոկել՝ որոյ այլուստ չիցեն հաւաստի վարք և միտք հեղինակացն. և յայսմանէ խաբին ոմանք թանձրապէս (ընդ Գալանոսի), մինչև մերոյս Վարդանայ վերագրել զանալի և զլուտական թուղթ համանուանն Սեալեռնցոյ, որ և յաւէտ Վահրամ կոչի, զգրեալն առ Հեթում, պարսաւանս Լատինաց, իբրև 'ի պատասխանի թղթոյ քահանայապետին Հռոմայ, զոր երեր առ արքայն Հայոց՝ սպանիացի նուիրակն Տիմանջ, յամի 1247:

Արդ այսոքիկ բաւ, թէ շատ և թէ սակաւ՝ առ տեղեաւս. դարձցուք անդրէն առ պատմագիր մեր. և յաւելցուք ընդ թերութեանցն՝ 'ի գովութիւն, զնոյն ինքն իսկ զհամառօտութիւնն. այսինքն զճարտարութիւն՝ զայնքան հարուստ ամաց և զզանազան ազգաց և յեղանակաց դէպս գլխաւորս՝ յեռուլ և 'ի շար արկանել, որով յիրաւի յայս ոճ վիպասանից մերոց նախամեծար գտանի. զի և ոչ մի ոք 'ի սոցանէ յետ Ժ դարու՝ այսքան ճոխ և 'ի համառօտութեանն՝ հաւաքեաց զընդհանուր պատմութիւն. քաջ 'ի ճահ գործոյն յարմարի վերնագիրն, զոր

[1] Տե՛ս յէջ 152:

[2] Զբանն՝ «երեք են. առաջինն չէ ծնեալ յումեքէ. երկրորդն՝ ծնունդ է առաջնոյն. երրորդն՝ երկրորդին և առաջնոյն ելումն և բղխումն». խարդաւանաց՝ մատունք փոխեն, «Երրորդն ոչ երկրորդին՝ այլ առաջնոյն ելումն և բղխումն»:

ընտիր Բ օրինակս մեր ունէր. Հաւաքումն պատմութեան մեկնողքէն համառօտ և բովանդակ, գիւրահաս ընթերցողաց. յԱզամայ հետէ թուելով ժամանակն. պատմելով զկիրս նոցին որ 'ի նմա. նա և զ'ի բազմաց տարակոյսն 'ի բազում տեղիս լուծեալ խորհրդով և քննիմաց իմաստութեամբ, որոց պատահիս յանձնիւրսն: Ոչ է յայտ երբ սկսեալ իցէ հաւաքել զհամառօտս զայս, այլ աւարտեալ է յամի 1265, որպէս և ասէն իսկ, յետոյ քան զերթն առ Հուլաղու ղան և զառաջնոց քան զայն երեանից ամաց ղէպս (1235-1265) համառօտիւ յոյժ նշանակեալ կամ 'ի բաց թողեալ, վասն ոճով գրելոյ զայնս Վանականայ և Կիրակոսի յիւրեանց պատմագիրսն. սակայն յետ դարձին 'ի ճամբարէ Թաթարաց, վերստին ձեռն արկեալ է՝ զնշանաւորն զայն տեսութիւն և զրուցատրութիւն ընդ աշխարհակալին՝ յերիւրել՝ 'ի կարգս բանիցն առաջնոցն, շաղկապ ընդ երկուան արկանելով և զայլ հանդիպեալսն 'ի միջոց ժամանակին: Յետ այնորիկ դարձեալ յիշատակէ զմահ ղանին, և զհարուածս Կիւլիկիոյ յԵգիպտացւոց, և զմահ ասպընջականին իւրոյ մեծարողի՝ զԿոստանդեայ կաթողիկոսի, և սրտառուչ ողբովք 'ի նոյն՝ կնքէ զգիրս. ոչ ժամանեալ նշանակել, թերևս և ոչ իսկ լսել՝ և զմահ մտերիմ մեկենասի իւրոյ՝ թագաւորին Հեթմոյ, որ մեռաւ յելս Հոկտեմբերի 1270 ամին, իսկ պատմիչս 'ի յետագայ տարւոջ՝ յառաջ քան զհասարակել նորին, որպէս մեզ թուի:

Սուղ ինչ և զգրչագիր օրինակաց մատենի պատմագրութեանս ասասցուք, յորոց զտպագիրս ընծայեմք, զանց արարեալ զնորագիծ գաղափարօք՝ յերկուց հնագրաց ևեթ արարաք զընտրութիւն ընթերցուածոցն. յորոց մին՝ Ա. կամ Հ. և յոլովակի Հին Օ. (օրինակ) նշանակեալ 'ի ծանօթութիւնս, է արդարև հնագիր և հնատառ, և հնացեալ յրստէպ կիրառութենէ, որպէս երևի, այլոյ նշանաւոր պատմչի, Ստեփանոսի Ուռպելեան, վասն որոյ իսկ գրեալ է, իբր քսան ամօք աւելի կամ պակաս՝ յետ մահուան հեղինակին. որ և անթերի և բովանդակ ունի զպատմութիւնն. բայց յուղղագրութեանն և 'ի հարազատութեան ստորև գտանի քան զ՝ Բ Օ. այսինքն Բնագիր օրինակն կամ Երկրորդ. զի զսա յաւէտ կալաք մեզ առաջնորդ, վասն ճարտար և անսխալ գրչութեան և ուղղութեան թւոց, և գլխովին իսկ չարաբանութեանն. և սա իսկ հին է, գրեալ յամի 1307, որ է երեսուն և վեց ամ յետ մահու հեղի-

նակին. և զի դագաղէ սա, ուր նախ աւարտեալ էր Վարդանայ զպատմութիւնն[1], թուի թէ յիսկագրէ անտի յօրինողին կամ յայլմէ կանուխ ուրեմն գաղափարելոյ՝ առեալ է հաւասար: Իսկ ՕՕ. նշանակէ զի երկոքին ևս կամ ամենայն օրինակք այնպէս ունէին զընթերցուածն:

[1] Տե՛ս յէջ 150:

ՎԱՐԴԱՆԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱԻԱՔՈՒՄ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Նախ քան զամենայն խնդիրս հայցեսցուք եղեալքս զէն, և սկսեալքս զանսկիզբն, և ստորնայինքս զվերնայինն. ոչ զորքանն զամէնն, որ ինքեան միայնոյն է, այլ յանհասական փառացն փայլակն ինչ երևման՝ որով ուղղեսցուք զբաղձանս մեր, և այն միջնորդիւ և ոչ անձամբ իշխեցեալ. և է նա բարեկամն Աստուծոյ մեծն Մովսէս: Եւ զի հեզ է քան զամենայն մարդիկ, մի գարշեսցի 'ի մէնջ տալ մեզ զձեռն, և զգաւազանն որ Աստուծոյ, յորմէ բուռն հարեալ իմաստնասցուք: Որպէս նա 'ի հարցանել զանուն Տեառն լուաւ եթէ նա է Որ էնն, յորմէ բացան խորք իմաստից նորա, և անտի վստահացեալ կոչեաց զնա Աստուած և տէր, արարիչ և ստեղծող ամենայնի. զի թէպէտ և լուաւ 'ի նմանէ զիւրաքանչիւրն, այլ էիւն հասկացեալ հաւատաց զի Աստուած է նա, որով է՛ է, զի աստ ածող է. և անուն նորա տէր է, զի յիւրմէ եղելոցն իշխան և դատաւոր է: Եւ զի միշտ է՛ է, ոչ է եղեալ. քանզի զգոյութիւնն յայտնէ էն, և Աստուածն՝ զարարչութիւնն. որպէս և զանուն գրոյն առաջին՝ Արարածք և Ծնունդք կոչեաց, զի առինչք են սոքա, որպէս յայտնիչք և քարոզք, արարածք՝ արարչին, և ծնունդք՝ ծնողին: Եւ գիտաց թէ մի և միակ է էն, քանզի եղեալքս բազում են, և ոչ է բազմութիւն առանց միոյն, բայց մինն է առանց բազմութեան. և ոչ թաքեաւ 'ի նմանէ իմաստք Երրորդութեանն, քանզի ծանեաւ եթէ էն երեք է, որպէս և յառնելն զմարդն և 'ի բաժանել լեզուացն և յայլսն՝ խոստովանի զերեքն: Եւ այլ եղեալքս կամ 'ի վեր են քան զմինն և կամ աւելի են քան զերեքն, զի անկատարք են: Իսկ էն երեք է, սկիզբն ունելով և միջոց և կատարումն. քանզի նա է Աստուած՝ առաջին, միջին, և վերջին. և թէ այլ ինչ գտանին այսպիսիք՝ նմանութիւնք են, և ոչ իւիք հաւաստիք: Իմացաւ իսկ զէն սկիզբն ամենայնի. քանզի ամենայն ինչ որ եղեալ է և լինի. նախ էութիւնն է սկիզբն և յէէն էանայ: Այլ և գիտաց եթէ պարզ է էն. որովհետև զեղեալքս պատմեաց, թանձր և մարմնական ծանեաւ: Իսկ եթէ բարի է էն, և անփոփոխ և անվախճան, և անորակ և անքանակ, և անորպիսութիւն. քանզի էն բարի ոչ կամեցաւ միայն ունել զբարին, այլ արար բարի արարածս,

վայելել յանծախելի բարիս արարչին: Զոր սկսանի այսպէս:

Ա. Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Ոչ պատմելով սոցա նիւթ, զի անկարօտ է արուեստաւորն, սակայն արար չորս սկզբունս. ջերմ և թեթև, զհուր և զօդ. ցուրտ և ծանր, զջուր և զերկիր, ունելով ցամաքութիւն և գիջութիւն: Եւ իսկզբանէ ասաց, զի անժամանակ ցուցցէ զառնելն. քանզի երեք իրօք պատկերացոյց ինքեան զեղեալն, անժամանակութեամբն և անբաւութեամբն և անտեղութեամբն: Զի իսկզբանէն ոչ ունի ժամանակ, ոչ տարի և ոչ օր և ոչ ժամ և ոչ մասն հատածի, և ոչ ոք է բաւական գիտել զեղեալքս ամենայն. և ոչ է 'ի տեղւոջ վերայ. որպէս ինքն Աստուած է: Իսկ փոփոխմամբ և շարժմամբ և քանակաւ և որակութեամբ և եղելութեամբն, զատչին 'ի բնութենէ արարչին: Արդ իմաստութիւնն Աստուածոյ՝ արուեստ, և զօրութիւնն՝ առնող, և բարութիւնն՝ նիւթ անմարմին, զոր նիւթացոյց և տեսակացոյց կամքն առատ և հնարաւոր, և յոչէից ընչացոյց զձև երկնի և երկրի յանպատրաստ հիման վերայ եդեալ: Քանզի երեք կամարք են մի քան զմի վերագոյն, հրեղէն, և ջրեղէն 'ի վայր քան զնա, և օդեղէն՝ որ է հաստատութիւնդ: Որք երեքեան հողմով խառնեալ շուրջ զան բոլորեալ զերկրաւս, և երկիր 'ի վերայ ինքեան ունի զջուր՝ հաստատունն, հողմով անդուստ 'ի վեր փչեցեալ. զոր իւր բնական ծանրութիւնն 'ի վեր չթողու թռչել, և յանդնդոց ի վեր 'ի փչումն 'ի վայր չթողու անկանել, և Բանն Աստուծոյ բարձեալ կրէ թեթևութեամբ զբոլորն: Եւ ընդ լինել երկնի, կենդանածնեցաւ հրեշտակօք հրեղինօք, որպէս և զաւառն է նոցա հրեղէն. տասնեակ դասուք զետեղեալք. տեղեաւ և փառօք և զօրութեամբ զանազանեալք, արտաքոյ չորիցս տարերց, ըստ որում անայլայլականք են, և անմահք, և է երկինն վերին վարագոյր ընդ մէջ նոցա և Աստուծոյ, որ է անասելի օրինակն:

Եւ ասեն իմաստունք՝ եթէ յառաջին շուրջն երկնից գոյացաւ Բնութիւնն, որ է արուեստն Աստուծոյ, արարող զօրութիւն յետ Աստուծոյ. թերևս ներգործութիւն տարերացս չորից:

Եւ երկրորդ շուրջ՝ կառոյց զհաստատութիւնն, և վերացոյց զկէս ջրոյն առ երկու իրս պիտանացու, զի բարձցէ զծանրութիւն երկրի զառաւելն, և զի արգելցէ զկիզողութիւն հրեղէն երկնիցն 'ի մարմնաւորացս:

Եւ երրորդ շուրջն՝ ակնարկելով կամացն Աստուծոյ՝ չար-

ժեաց զբոյսս և զբանջարս, որոյ սկիզբն բորբոս հողոյն, և կատարումն սերմն որ 'ի նմա, և զծառս՝ որոյ սկիզբն մամուռն մատ 'ի բոյսս, և կատարումն արմաւենին մերձ 'ի կենդանիս՝ յորս արու և էգ է:

Եւ 'ի չորրորդ շրջմանն եղև հրաման Տեառն 'ի վերայ լուսոյն, որ խզածն է յարփւոյն. և եհատ զնա յերիս մասունս, և յամենս բազումս, յարեգակն, և 'ի լուսին, և 'ի բազմութիւն աստեղաց. և երկոտասան կենդանատեսակք եղեն ճանապարհ արեգական և լուսնի, և եօթն այլևս աստեղաց. երիւքն առնէ արեգակն զարուն, և յայլ ևս յերիսն բարձրացեալ՝ առնէ ամառն, և 'ի կշիռն ելեալ ցածնու. և երիւքն գործէ աշուն. և ևս ցածեալ ընդ հարաւ կազմէ ձմեռն: Եւ յաղագս կարի բարձրութեան և ցածութեան աշխարհաց՝ անէ տիւն մինչև 'ի քսաներորդ ժամն, և պակասի մինչև 'ի չորրորդն: Եւ որպէս ասեն իմաստունքն չորեքտասան կլիմ է աշխարհս, այսինքն բաժինս. և եօթն կլիմն անբնակ է մարդկան. զի վասն յոյժ ցածութեան երկրին՝ ցուրտ է և խաւար. զի միշտ վեց ամիսն տիւ է 'ի խոյէն մինչև 'ի կշիռն, և վեց ամիսն գիշեր 'ի կշռէն մինչ 'ի ձուկն: Իսկ խորին Հնդիկք[1] միշտ հասարակ է, ոչ աճեն ժամքն, և ոչ պակասեն, այլ մնան երկոտասանք:

Իսկ 'ի հինգ շուրջն և 'ի վեցն, ել հրաման 'ի ջուր և յերկիր վասն կենդանեաց, ակսեալ 'ի կառաքոյսս և 'ի սպունգս, և կատարեալ 'ի մարդն 'ի կատարեալ կենդանին բանաւորութեամբ. 'ի հազար ազգս, զլիաւորքն իւրեանց լևիթանաւ[2] որ 'ի ջուրս, և բեհեմովթեան որ 'ի ցամաքային անապատս. և այս է ըստ Արիստոտելի հոգի ընդհանուր տուող գոյութեան ամենայնի:

Եւ արդ բնութիւնն շարժէ զգունդն երկնից, և նա զժամանակն, և նա զտարին, և նա զտունկս և զկենդանիս. և զհալաքան նիւթս, զտակի և զաքծաթ, և զակն, և զայլսն զոր գործէ բնութիւնն ծծմբով, և ժիպակաւ՝ որպէս ասեն գիտոդք[1]:

Իսկ 'ի զլուխն հասուցեալ զանդամոցն յօրինուած, որպէս քաջ պատկերագիրքն՝ զի յոտիցն սկսանին, հրաչագործել իմն նոր յօրինելով բնութիւնս յերկնէ և յերկրէ, և որ 'ի մէջս են, վեցից ձեռաց խոնարհելոց 'ի միոյ պատկերի շինուած, զի մինն նման իցէ երիցն, որովք մի հաւատացեալ ստեղծողին բնութիւն և էութիւն և աստուածութիւն. գիտելով որ ինչ լինելոցն էր զմեզանն, այլ ոչ կարէր արգելուլ նախագիտութիւնն զշարժումն յորդառատ բարերարութեանն. այլ և 'ի նոյն իսկ բարերարութենէն ոչ հրաժարէր ոտիւք գալ հիւանդատեսս այնմ զոր եռաքն ստեղծ, և տուեալ զնա երկրի, մատնել դահճին մահու կարճել զմեզն, և հանել զչարութիւնն 'ի նմանէ, և ցուցանել նմա զմնաս օձին և զնենգութիւն չարին, զի այլ մի լուիցէ նմա, գիտելով զոր ինչ առնելոցս էր՝ զվնասին նորոգումն. այլ և ոչ ետ նմա զութն իւր կատարել զմեզիս մահուն՝ զոր եհատ նմա, զի ահա ոչ մեռաւ հոգին, այլ հոգն հոգ եղն, և բնակիչն մնաց: Եւ արուեստաւորն կարող է և զքնած, և նիւթն 'ի ձեռին նորա, և ժամանակ յարութեանն անմոռաց 'ի նմա[2]:

Բ. Արդ զարդիւք բազմազան արարեալ Աստուծոյ զոր բարեխնամ զոր ինչ ընդ արևելս, յերկրի արմատացեալ 'ի կատարս [illegible] զոր հաստատ է զնոցին լուսեալ, անծորեալ պատկերով և անթառամ ստորութիւք, ուր ոչ ներգործէ, արևակայն տիս և գիշերս ոչ յարփւոյն զարթեալանայ, և կամ ներգործ փառացն Աստուծոյ, զարդս զանազան գործ նորա, և հրաշալի ուրեմն ոչ հաստատեցաս զարմանալի զանազանութեան անդամ, ոչ բանեանցն կարգեալ գեղեցիկ գեղեցիկ [illegible] զի [illegible] զարդ [illegible] զանազանութեան [illegible] զի [illegible] զանազանութեան [illegible] զի [illegible] զանազանութեան [illegible] զի

որպէս ասեն քժիշկք, քերբ միով Կլիմաս կոչեցեալ. և զկնի ե-
ռեսուն ամաց ծնան զԱբէլ, և զԱբելուհի, քոյր նորա[1]:

Եւ զկնի այլեւս երեսուն ամի սպան Կայէն զԱբէլ. քանզի ու-
սեալ 'ի ծնողացն պատուել զԱստուած պատարագօք պա-
տուականաց և առաջնովք, և վասն սիրելոյն զմիմեանս՝ ընդ
անձին և ընդ եղբօրն մատուցանել: Իսկ Աբելի ածեալ յանդ-
րանկաց գառանց և 'ի պարարտաց գիւր և զեղբօրն, վասն ո-
րոյ հայեցաւ Աստուած նախ 'ի Հաբէլ և 'ի պատարագս նորա,
և 'ի Կայէն ոչ նայեցաւ, զի զյոռին երեր, ընդ անձին միայն, և
ոչ զմասն եղբօրն. և ոչ եղև ընկալեալ 'ի վերուստ հրով, որպէս
զՀաբելին. վասն որոյ 'ի կարծիս եղեալ Կայէն վասն Աբելի, թէ
առնու զնա 'ի դրախտն Աստուած վասն ընդունելի պատարա-
գին, և նախանձու վառեալ՝ սպան զնա: Եւ իմացեալ Աղամայ
և Եւայի, սգացին զնա ամս հարիւր և քառասուն: Եւ 'ի կոչելն
Աստուծոյ զԿային ողորմութեամբ յապաշաւանս, ստեաց և
յաւել մեղս 'ի վերայ մեղաց, և սուռեալ պիսակ 'ի ճակատն[2], որ-
պէս ասեն, և դողդոջումն յամենայն անդամսն, և ծնեալ որդիս
և թոռունս, յերկարակեաց եղեալ՝ տանջանօք և նախատանօք
մեռանի: Եւ զի որդիք նորա Ենովք և Գայերիդադ և Մայաէլ և
Մաթուսաղա և Ղամէք նման հօրն չարք էին. որպէս Ղամէք
խոստովանի կանանցն, այր և երիտասարդ սպանեալ, զոր ա-
սեն եղբարք արդարոյն Ենովքայ, զոր սպան և առ զկանայս
նոցա, և ոչ թէ զԿային և զորդի նորա, որ նման հօրն ասեն,
զոր Աստուած ասաց ոչ ումեք սպանանել զնա: Այս Ղամեքայ
որդիք, Թովբէլ և Ցուբաղ, և քոյր Նոյոմի, արարին քնարս և
երգս, և սնգոյրս, և զտաւ 'ի Նոցանէ դարբնութիւն պղնձոյ և
երկաթոյ:

Գ. Իսկ զկնի երկերիւր և երեսուն ամաց ելիցն 'ի դրախտէն,
եղև որդի մխիթարութեան Աղամայ Սէթ, որ յետ երկերիւր և
հինգ ամին՝ ծնանի զԵնովս, որ և վարս ուղիղս ցուցեալ յուսա-
ցաւ յԱստուած հատուցանել նմա, և կոչեաց զանուն տեառն
Աստուծոյ յօգնութիւն. և արար գիր, և գրեաց յերկուս տախ-

[1] Քերց-կանանց Կայէնի և Աբելի պէսպէս անուանս ընծայեն հնախօս պատմիչք, ըստ Հրէից աւանդութեանց և ըստ Ասորւոց:

[2] Պիսակն Կայէնի ըստ ոմանց եղջիւր է բուսեալ 'ի ճակատ եղբայրասպանին, ըստ այլոց կեղ կամ խայծ իմն. և ըստ բազմաց՝ երնջեն և տատանելն իսկ է նշան անիծից նորին:

տակս պղնձիս և խեցիս[1], և մարգարէացաւ եթէ երկու անգամ
անցանի աշխարհ, ջրով և հրով, և դրեաց զայս, և զանուանս
ամենայն իրաց, զորս եղեալ էր Ադամ զի պահեսցին 'ի պնա-
կիտսն, 'ի ջրոյն՝ 'ի պղինձն մնայցէ ասէ, և 'ի հրոյն թրծեալ ա-
ղիւսն խեցեայ. և վասն այսորիկ աստուած կոչեցաւ, և որդիք
նորա՝ որդիք աստուծոյ: Այլք ասեն՝ յորդւոց նորա երկերիւր
անձինք յիշեցին զկեանս դրախտին, և ելին 'ի լերինս պահել
կուսութիւն, և աստի կոչեցան որդիք Աստուծոյ. և ապա
ձանձրացեալք իջին 'ի լեռնէն Ահերմոնի[2]. և հալածեցին զնո-
սա եղբարք իւրեանց: Եւ որդիքն Կայենի և դստերքն 'ի քնարս
և 'ի սնգոյրս պատրեալ զնոսա՝ առ ինքնեանս դարձուցին, առ-
նուլ կանայս զորս ընտրեսցեն. և արարին այնպէս, անցեալք
զուիտուն Աստուծոյ, որ եղեալ էր նոցա մի՛ առնել խնամու-
թիւն ընդ նոսա:

Դ. Եւ ասեն զկնի հազար ամին ելիցն 'ի դրախտէն, որդիքն
Կայենի եղին իւրեանց թագաւոր, Սամիրոս անուն[3], նոյնպէս
և որդիքն Սեթայ՝ Աղորոս անուն, որ եգիտ զթիւ կենդանա-
կերպիցդ և զմոլորակացդ, և 'ի նմանէ անուանեցաւ քաղդէու-
թիւնն, որ է հմայութիւն աստեղաց. և անտի թուեն տասն թա-
գաւոր, և ժամանակ նոցա հազար հարիւր և ութսուն ամ: Ե-
նովս հարիւր և իններսուն ամաց ծնանի զԿայնան. Կայնան հա-
րիւր և եօթանասուն ամաց ծնանի զՄաղաղիէլ. Մաղաղիէլ
հարիւր վաթսուն և հինգ ամաց՝ ծնանի զՑարեդ. Ցարեդ հա-
րիւր վաթսուն և երկու ամաց՝ ծնանի զԵնովք: Ենովք հարիւր
վաթսուն և հինգ ամաց՝ ծնաւ զՄաթուսաղա: Մաթուսաղա
հարիւր վաթսուն և հինգ ամաց՝ ծնաւ զՂամէք. Ղամէք հա-
րիւր ութսուն և ութ ամաց՝ ծնաւ զՆոյ. և լեալ եօթն հարիւր
եօթանասուն և երեք ամաց՝ մեռաւ նախ քան զհայրն
քսանեւինն ամօք: Ի հազար վեցհարիւր վաթսուն և վեց ամի

[1] Երկու արձանքն Ենովսայ ըստ Յովսեպոսի և բազումական աւանդութեանց, զոր ընկալեալ է և Հարց:

[2] Մենակեցութիւն նահապետացս յԱհերմոն լերին պատմի յենովքայն անուանեալ անվաւեր գիրս:

[3] Զայսպիսի աւանդութիւնս 'ի Միքայելէ Ասորւոյ պատմչէ առնու հեղինակս: Սամիրոսի յաջորդութիւն ոչ ուրեք յիշի, զԱղորոսին թուեն Քաղդէացիք մինչև 'ի ջրհեղեղն ազգս տասն, վասն այսորիկ և բազումք նոյն համարին ընդ նահապետսն յԱդամայ ցնոյ. որպէս և մերս Խորենացի. Ա. գ:

եղիցն Ադամայ ծնաւ Նոյ. յորում ժամանակի բազմացան չարիք, և յաճախեաց անիրաւութիւնն:

Զի նախ եգիտ սատանայ իւր զէն զորկոծամոլութիւնն, ապա զկնասիրութիւնն, ապա զսպանութիւնն. և արար զայս սատանայ, զի 'ի շատ խառնիցն լինին կանայք անծնունդք և կենդանիքն տպանանեն զմիմեանս, և բառնայ մարդկութիւն: Քանզի քառասուն այր մեռանէր վասն միոյ կնոջ, և ընդ կանայսն միայն ունէին խաղաղութիւն, ասէ սուրբ Հայրն Եփրեմ: Իսկ խնամք Տեառն ընդդէմ չարին՝ զբազում խառնսն առնէր պատճառս ծնանելոյ հակայիցն անճոռնեաց. և զի 'ի կանանցն եղև կամաց ախտն, 'ի ծնանել զպազթանդամ կորիւնսն՝ մեռանէին մարքն, և ապրէին ծնեալքն. որ և աճեցեալք, և 'ի կոյտս իւրեանց հասակին հայեցեալք, հպարտացեալք՝ յաւիտենից արք անուանէին զինքեանս: Վասն որոյ զի Աստուած բազմակեաց արար զնոսա, զի փոխանակ գրոյ լինիցին զաւակացն, և շատս ծնանիցին, նոքա վիսացեալք բնաւակն ոչ ունէին մահու, զոր կարճեալ արարչին, և առեալ յաղտեղեալ անձանց նոցա զհոգւոյն չնորհն, ասաց՝ եղիցին տարիք դոցա հարիւր և քսան, և հոգի իմ մի՛ մնասցէ 'ի դոսա. և հարիւր և քսան ամ՝ ոչ հաստարակաց մարդկան յայնմհետէ, այլ արանց ժամանակին ներումն ապաշաւանաց: Եւ եղեալ Նոյի հինգ հարիւր ամաց անբասիրաս կենաց յանապատի բնակելով կուսութեամբ, հրամայէ Աստուած կին առնուլ, և որդիս ծնանել, և արկղ շինել՝ որ վերաբերի ջուրց: Եւ եղեն իրքն. զհարիւր ամն ապաշխարութեան տուեալ ժամանակին[1]. և զի ոչ ապաշաւեցին՝ կարճեաց զքսան ամն. զոր ասեն յինն հարիւր վաթսուն և երկու ամացն Մաթուսաղայի յաւելեալ և անցեալ 'ի ներքոյ ջրոյն[2]. վասն որոյ 'ի վեցհարիւրորդի ամին Նոյի եղև ջրհեղեղն, և կորոյս զամենայն կենդանիս, բայց յայնմանէ՝ որ ընդ Նոյի կային 'ի տապանին, ընդ ութ բանականսն:

Ե. Այլ զթիւ յամելոյն Ադամայ 'ի դրախտին ոչ ոք կարէ ասել. մի՝ զի ժամանակագործ արեգակնս այս ոչ սպասաւորէ դրախտին, և երկրորդ՝ զի որքան անմեղ էր Ադամ ընդ ան-

[1] Հին O. Եւ եղև ինքն վեց հարիւր ամաց:

[2] Ըստ օրինակաց ոմանց թարգմանութեանն եօթանասնից ջրհեղեղին թուական կանիւղ 14 կամ եօթն ամաւ քան զմահ Մաթուսաղայի. բայց ըստ այլոց և ըստ բնագրին 'ի նմին իսկ ամի ջրոյն հանդիպի մահ նորա:

մահան էր նորա վիճակն, որք չեն ընդ տարեօք: Իսկ զգնի յանցմանն՝ ոչ յամեաց 'ի դրախտին. զի ընդ մահու վճռաւ եմուտ, և Աստուծոյ մեռաւ, և գերեզմանի պէտք էին, և դրախտն անմահից էր տեղի, վասն որոյ յերկիր Հանեալ՝ մտանէ ընդ ժամանակաւ: Եւ անտի համարէ Հոգին զտարիսն 'ի ձեռն Մովսիսի[1]. որ լինի ըստ եօթանասնից թարգմանութեանն յելիցն 'ի դրախտէն մինչև ցջրհեղեղն՝ երկու հազար երկու հարիւր քառասուն և երկու ամք. և ըստ եբրայեցւոցն՝ հազար վեց հարիւր յիսուն և վեց ամք, պակաս հինգ հարիւր ութսուն և վեց ամօք. և զպատճառն ասեն թէ կնատէրք էին Հրեայքն, կարճեցին զտարիս ամուսանալոյ առաջնոցն, զի մի՛ ոք արգելցէ զնոսա 'ի տղայութեանն առնուլ կանայս. քանզի անմիաբանութիւն նոցա նախ քան զամուսնանալն է: Զի զԱդամ հարիւր և երեսուն ամաց ասեն ծնանել զՍեթ, և Սեթայ հարիւր և հինգ ամաց ծնանել զԵնովս. իսկ զյետ ամուսնութեան ժամանակն զոյգ բերեն եօթանասնից. և 'ի Յարեդին և 'ի Մաթուսաղային և 'ի Ղամեքային միաբանին դարձեալ. որ առաւել յանդիմանէ զնոցա ստութիւնն, զի թէ կրտսերքն շատ պահեցին զողջախոհութիւնն, քանի՛ առաւել աւագքն և լաւքն: Արդ Նոյ լեալ ամաց հինգ հարիւր՝ ծնաւ զՍեմ, զԽամ և զՅաբեթ, որոյք ապրեցաւ 'ի ջրոյն, որ եղև 'ի վեց հարիւրերորդի ամին իւրոյ, և զկնի ելիցն 'ի տապանէն եկաց այլ ևս երեքհարիւր և յիսուն ամ. և ծնաւ ասեն որդի մի այլ Մանիքեոն անուն[2], և զաւասար մի Աստղիկ անուն, որոց և բաժանեաց զամենայն աշխարհս. նախ յերիս հատեալ բաժինս՝ ըստ երից որդւոցն որք եղին 'ի տապանէն, յԵւրոպիա, 'ի Լիբիա, յԱսիա: Եւրոպիա՝ մատնեալ տոքմ, քանզի մատնեաց Նոյ զարեմտեան կողմն 'ի նա յարեւելից յԵմաւոն լեռնէ, և նա գնաց Յաբեթի, որ ձգեցան ևս մինչև ցկերկինս Կասպից և Կովկասու և ցլեռն Տաւրոս. և մատն ինչ յարեւմտից հատեալ՝ ետ Մանիքեոսի, որ ասեն թագաւորաց յաստիրացն Ադամայ, զոր ունէր Նոյ 'ի տապանն.

[1] Այդպէս հարկ է զպատմութիւն ժամանակի սեփական ոչ զբաղդեանն Ադամայ առնուլ, և ոչ իսկ մեղքն 'ի դրախտն կարելի, զորմէ բաւական խոսեալ և ապաշաւանութիւնն Ա. Գրոց:

[2] Ղամեքիսն յիրեն պատմիչք մեր և Բարսեղաւորք, և Մաթուսաղա 'ի գրքի կոչման քանան երկրագրեալ: Լսեալ հեղինակիս քանան գրքս կոչեցեալ Ման կրկի Ենոքիոյ: Այլք ոմանք 'ի Քրոնոսն որդւոյ Նոյի ասեն կոչեցեալ Բրիսոնիա:

և. ետ նմա զլուռնս ծնգացն, և գնաց. որ և եգիտ զհաւահմայութիւնն. և նա է հայր բնակչաց Բիւրիտոնացւոց: Եւ Լիբիա ըիաբաժին ասի, որ է մեծասահման կողմն հարաւոյ, Եգիպտոս, և ամենայն Հնդկաստան և Եթէովպիա, զոր ետ Քամայ. և զերկիրն խնկաբեր, որ կոչեցաւ Երջանիկ Արաբիա, ետ Աստղկայ դստեր իւրոյ, ուստի եկն տիկինն Սաբայ, զի յայնմհետէ կանայք ժառանգեն զնա: Իսկ Ասիա աստուածային ասի[1], որ է արևելք. տայ զնա Սեմայ, 'ի Կարմիր ծովէն և յԵւփլայ[2] և 'ի Պաղեստինայ և յԱսորեաց մինչև ցՊարթևս և ցՎրկան, և ցելն արևու: Տայ նմա և զոսկերս նախաստեղծիցն արկեղբ, զոր 'ի բռնանալն Քամայ 'ի վերայ նորա, թաղէ 'ի Գողգոթա և 'ի Բեթղեհէմ. և եղ նզովս զի մի՛ յափշտակեսցեն զմիմեանց:

Յետ աշխարհաւեր ջրոյն յերկրորդում ամին ծնաւ Սեմ զԱրփաքսադ 'ի հարիւրերորդի երկրորդի ամին իւրոյ[3]. Արփաքսադ 'ի հարիւրերորդի երեսներորդի և հինգերորդի ամին ծնաւ զԿայնան. սա բազմացոյց զքաղդէութիւն և եգիտ զկախարգելն աստեղօք, վասն օրոյ որդիք իւր աստուած համարեցան զնա, և արարին նմա պատկեր 'ի կենդանութեանն և պաշտեցին զնա: Կայնան հարիւր և քսան ամաց ծնաւ զՍաղա. Սաղա հարիւր և երեսուն ամաց ծնաւ զԵբեր. Եբեր հարիւր երեսուն և չորս ամաց ծնաւ զՓաղէկ, որ է բաժանումն, քանզի անհաւան լեալ վիճակացն տուելոցն 'ի Նոյէ, վիճէին մինչև դարձեալ բաժանեցին, ըստ բազմին և ըստ սակաւին աճման ազգի մարդկան. և ապա միաբանեալք ընդ միմեանս սիրով խորհեցան գնալ յարևելս, տեսանել զդրախտն՝ զոր լուեալ էին եթէ անտի ելին նախաստեղծքն: Եւ իբրև չոգան զշատ աւուրս, և ահա ծով լայնանիստ անջրպետեալ էր զնա յերկրէ. և դարձան անտի խորհելով 'ի սնոտիս, եթէ վասն մեղաց ջուր աւերեաց զերկիր, և՝ անց ծով ընդ մէջ դրախտին, և մեղքն այն զտանի այսօր առ մեզ և ոչ պակասի յաշխարհէ. և արդ եկայք շինեսցուք մեզ աշտարակ պահել զմեզ 'ի գալ պատուհասի մեղաց ջրոյ: Եւ էր Փաղէկ ամաց հարիւր երեսուն և երից և ծնաւ

[1] Ա՝ աստուած լսի 'ի լեզու հիւսիսային ազանց Եւրոպիոյ, որպէս և Ա՝ կոչեա աստուածակերտ կամ աստուածաքաղաք, արքայութիւն գեց նոցին:

[2] Եւփլա արևմտեան կողմանք Արաբիոյ են յեղերս Կարմիր ծովու հանդէպ Եթէովպիոյ և Եգիպտոսի:

[3] Ս. Գիրք հարիւրամեան ասեն զՍեմ 'ի ծննդեան Արփաքսադայ:

նմա Ռագաւ. և եկեալ իշխանաց աշխարհի յերկիրն Սենայար. 'ի դաշտն Քաղանէ[1], արկին հիմն քաղաքի, և շինեցին զնա վաղվաղակի, և սկսան ապա զաշտարակն յառաջին ամին Ռագաւու. ասեն ոսկեղէն և արծաթեղէն սարսխօք շուրջ դնելով աղիւս, խորովեալ հրով, զանգեալ բռով, կրով և կպերբ, արճակահիմն, խորամէջ, լայնափողոց, բացեալ պատուհանօք լուսաբերօք. ասեն և ակունս լուսարձակս դնել առ պատուհանօքն: Անխոնջ վաստակօք զամառն և զձեմռն գործէին, և հող տեղւոյն ձեռն տայր. շար իմն մրջմանց յամենայն կողմանց եկողաց և իջողաց, այր զայր գրգռէր, և կին զընկեր իւր: Եւ ոչ ոք ասէր եթէ ես շատ գործեցի քան զքեզ, այլ եթէ դու շատ գործեցեր քան զիս. զի դեռ անախտ և անցաւ ունէին բնութիւնս. և մինչև ցքառասներորդ ամն Ռագաւու՝ ոչ առին պարապ գործոյն, մինչև հասուցին յօդն անտես, յորձուտն և 'ի մղձկուտն և 'ի սատակողն, յոր թռչուն ոչ վերանայ, և թէ ձրկտի՝ թևակիզեալ անկանի. և ասեն թէ զոսկին յատակացն ըակըսեալ տարան ընդ մէջն մինչ 'ի վեր, և հալէր 'ի ջերմութենէն, և մարդիկն ջանային ևս հնարիւք անկէզ մնալ, և ոչ կասել 'ի գործոյն, մինչ ինքն Տէր ողորմեալ դադար տայր առնուլ յանօգուտ ջանիցն. և գտանին զրոյցք 'ի տանն Ներբովթայ[2], եթէ նախ հրեշտակ եկն առ Ներբովթ, որ իշխան էր, և որսայր[3] շինողացն կերակուր, և ասէ ցնա. Ես եմ հրեշտակ Աստուծոյ, կողմնապետ արևելից. այսպէս ասէ տէր Աստուած երկնի և երկրի, լռեցէք դադարեցէք 'ի գալոյդ առ իս, զի ոչ կարէք. այլ ես եկից առ ձեզ 'ի ժամանակի, և տաց ձեզ սանդուխս որով կարէք և դուք գալ առ իս: Եւ ոչ լուան հրեշտակին. ապա ինքն ասաց ցէակիցսն իւր. Եկայք մեք իջցուք և բաժանեսցուք զլեզուս նոցա. և զի ստեղծուածք ձեռաց նորա 'ի ցաստանէ զարհուրեալք փախչէին առ նա, ոչ պատժեաց զնոսա, այլ հոտով դրախտին արբեցոյց զնոսա. զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն: Եւ այսպէս միխիթարեալք զմայրմամբ յանճառելի բուրմանէ հոգւոյն, մոռացան զառաջին լեզուն. և չարար

[1] Սենայար և Քաղանէ ստորին կողմն են Միջագետաց ըստ արևելից կուռէ, որ յետոյ Բաբելոն կոչեցաւ և այժմ Իրագ-Արէպի:

[2] Զրոյցք տանն Ներբովթայ թէին առասպելաւանդ զիրք պատմութեան Ներբովթայ, զոր յիշէ և Վրացն պատմիչ:

[3] 'Ի հին Օ. յետոյ փոխեալ է զ առայ:

զնոսա վաստակ միւսանգամ քակելով, այլ հողմոյ հրամայեաց գրթ, և ոչ զոք սպան 'ի նոցանէ. զի ոչ շրջեաց՝ այլ հոսեաց: Եւ շատ ինչ բարի եղև. մի զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւնն. և դարձեալ պատճառք իմաստից և գեղեցկաբանութեան, 'ի խոշոր լեզուէն առաջնոյ և 'ի կոպտաձև. փափկագոյնն Ելլենացւոց, և սաստկագինն Հռովմայեցւոց, Հոնն սպառնական, և Ասորին աղաչական, Պարսիկն պերճական, և Ալանն գեղեցկաձև, Գուդն ծաղրական, Եգիպտացին խարափաձայն, և Հնդիկն ճճուող, Հայն համեղ և ամենազարդ և համեմական. և որպէս ազգի ազգի գոյնք գեղեցկութիւն առնեն, և զանազանութիւնք հասակաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք: Եւ առաջին լեզուն մնաց առ Եբերայ, որ ոչ միաբանեաց ընդ այլսն, և որպէս մեղքն բաժանեաց յերկու տուն զմարդիկ, 'ի Կայենին և 'ի Սեթայն, նոյնպէս և աստ, յերկու եղեն ազգ մարդկան, յԵբեր, և յեօթանասուն և երկու տանուտէրսն. որպէս մի Աստուած միազօր, համակ քաղցրն 'ի մէնջ հարկեալ և տանջէ ևս, և կոչի Աստուած և տէր: Եւ եթէ 'ի յարութեանն հասարակի յԵբերայն խօսին, բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ և բազմակարօտ մեր բնութիւնս և յոգնանուն, երբ մաքրի և պարզի՝ անկարօտ լինի. զլեզուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Եղիշէ, որով ընդ Աստուած և ընդ միմեանս խօսին: Այլ Տէրն ելից զկարօտութիւն մարդկան, զխաչն տուեալ աշտարակ յերկինս ելից, և զաստիճանս առաքինութեան զօրինակն Յակոբայ ցուցեալ, և անդ իսկ կոչեաց Հռգին որ փոխեաց զլեզուս նոցա, հրեշտակս Աստուծոյ փոխանակ մարդկան, զի յօժարեսցին առ հրեշտակս ելանել: Կացոյց ասէ զսահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ, թուեաց 'ի հրեշտակս և յայլ ամենայն լեզուաց կացոյց վերակացուս 'ի հրեշտակաց Աստուծոյ, զի մի օտարասցին ամենեքին յԱստուծոյ հեթանոսք:

Զ. Բայց Բէլ հպարտացեալ յանճռոնի հասակն վաթսուն կանգուն[1], հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխանսն որպէս աստուծոյ, և ապա արձակեաց, բաց 'ի Հայկայ՝ որ էր որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի, որ ոչ պաշտեաց զնա աստուած, այլ և չուն կոչեաց զնա. և զի եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիս, եսպան զնա Հայկն նետիւ հարեալ զսիրտն՝ պղնձեօք տախտակեալ:

Իսկ որդիքն Քամայ 'ի գնալն յերկիրն կալուածոց իւրեանց, տեսին զՊաղեստինեայ և զկողմանսն Յորդանանու զի պտղարար և յուրթի էր. բնակեցան անդ ուժովն Բելայ ազգականին իւրեանց և զրկեցին զորդիսն Սեմայ, և եղև պատերազմ սաստիկ: Այլ և որդիքն Յեկտանայ, Սաբա և Եւիլա և Ուփիր, իմացան զկազմած զինուց, և խնդրէին իւրեանց տեղի ընդարձակ, զի աճեցին 'ի բազմութիւն: Եւ յերեսաց նոցա գաղթէին մարդիկ յամրոցս ինքնագործս, և ապա սկսան շինել բերդս, և պատերազմողքն գտին զմեքենայս առման ամրոցացն, մինչ ձանձրացեալ ազգացն յընտիր առնեն նոցա զերկիր զոր և կամեցին. և առ Սաբայն զինկաբեր երկիրն, զոր Սաբա կոչեաց, և Ուփիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Հնդիկք. և Եւիլա՝ զերկիրն պատուական ականց և անուամբն իւր կոչեաց Եւիլատ:

Այլ Ռաքաւ հարիւր երեսուն և երկու ամաց ծնաւ զՍերուք. Սերուք հարիւր և երեսուն ամաց ծնաւ զՆաքովր, և չինեաց Սերուք զՍրուճ. Նաքովր ամաց եօթանասուն և ինունց ծնաւ զԹարա. Թարա եօթանասուն ամաց ծնաւ զԱբրահամ: Յայնմ ժամանակի ասեն լեալ զԱմազոնս[1], որ է կանանց զինուորութիւն. քանզի զկին ումն ասեն յազգէն Թորգոմայ ժառանգ մնացեալ թագաւորութեանն ազգին, հատեալ զաջս զաւակացն, և էր քաջասիրտ և արի, և աւերէր զազգս բազումս, և եղև գժտութիւն 'ի զորացն, և կոտորեաց զնոսա, և ստացաւ զօրս 'ի կանանց, և նոյնպէս առնէր եղեալ զաթոռ թագաւորութեան իւր յԱլիոն[2] քաղաքի:

Է. Յիշեսցուք համառօտիւք և զմերն նախնին Յաբեթ, որ զկնի ջրոյն ծնաւ զԳամիր, ուստի Գամիրք, և զՄագոգ, յորմէ կեղտք և Գաղատացիք, և զՄեղա, որ զՄարս չինեաց, և զԹուբէլ, յորմէ Թետալք, և զՄոսոք որ առ զԼիւրիկիա. և զԹիրաս՝ յորմէ մերն Ասքանազ և Թորգոմ. և Յաւանայ՝ Յոյնք, և 'ի Թարշշայ՝ Վիրք և Տիւրենացիք. և 'ի Կիտիմայ Հռովմայեցիք և

[1] Թուի 'ի պատկերէն կանգնելոյ 'ի Նաբուգոդոնոսորայ համեմատեալ զբարձրութիւն Բելայ 60 կանգուն: Յայլ ինչ գիրս իւր հեղինակս ժե կանգնեայս ասէ զհսկայսն, և վասն այնորիկ նոքին չափով ամբարձեալ ջուրց հեղեղին 'ի վերոյ քան զլերինս 'ի սպառապուռ ընդումն նոցին:

[1] Ամազոնաց (միաստին կանանց) զորոց պէսպէս առասպելք և թուիք, երկիր հաւանելի է զԹերմոդոն գետով Պոնտոսի, Թէրմէ-չայ յայժմուս. ուր լսի ցարդ Մազոն-տազ լեռն:

[2] Ալիոն քաղաքաւ նշանակէ զԻլիոն, այսինքն զՏրոյս:

Լատինացիք: Եւ Թորգոմ[1] ծնաւ զՀայկն, և զեօթն եղբարս նորա, զԲարթլոմ, զԿովկաս և զայլսն, որք ժառանգեցին զհիւսիսի: Եւ 'ի Հայկայ Արամանեակ, յորմէ կոչեցաւ լեառն Արարատ, և յԱրամանեկայ Արամայիս, որ շինեաց զԱրմաւիր: Եւ Արամայիս ծնաւ զԱմասիա, յորմէ կոչեցաւ Մասիս լեառն. և Ամասիա ծնաւ զԳեղամ, որ շինեաց զԳեղարքունի. Գեղամ ծնաւ զՍիսակ, յորմէ Սիւնիք, և զՀարմա, որ ծնաւ զԱրամ, յորմէ ամենայն ազգ կոչէ զմեզ Արմէն: Զի սա ընդարձակեաց զսահմանս Հայոց, որ զԿապադովկացիս և զՊոնտոն[2] և զկիմայն ընդ իւրև նուաճեալ, Արմանեակ կոչէր: Եւ յԱրմանեկայ և 'ի Պոնտոս Առաջին Հայք. և 'ի Պոնտոսէ 'ի քաղաքն Մելտենի՝ Երկրորդ Հայք. և անտի 'ի Մոփաց գաւառն՝ Երրորդ Հայք. և անտի 'ի քաղաքն Մարտիրոսաց և յԱղձնիս՝ Չորրորդ Հայք. և զսեփական աշխարհն իւր կոչէ Մեծ Հայք: Սա ծնաւ զԱրայն գեղեցիկ, որ մեռաւ 'ի Շամիրամայ, թողլով որդի զԱնուշաւան. որոց կարգի ազգն այսպէս:

Պարէտ, Արբակ, Զաւան, Փառան[3], Սուր յաւուրս Ցեսուայ, Ցոնակ, Համբակ, Առնակ, Նորայր, Վստամ, Կար, Գռակ[4], Հուան, Ընձակ, Գռակ[5], Հաւան, Զարմայր, որ յիլիական պատերազմին ընդ Եթովպացւոց զօրուն մեռանի: Պերճ յաւուրս Դաւթի արքային. Արբուն, Հոյն, Ցուսակ, Կայպակ, զոր պսակէ Վարբակէս Մար, որ հանեալ զթագ 'ի Սարդանապալեայ, տիրէ Ասորեստանի և Նինուէի: Առ սա եկին որդիքն Սենեքե-

[1] Ըստ Ս. Գրոց Թորգոմ որդի է Գամերայ որդւոյն Յաբեթի. ըստ Խորենացւոյ (որ ըստ Աբիդենայ և Մար Իբասայ) Թորգոմ հայր Հայկայ որդի է Թիրասայ որդւոյ Գամերի. թէպէտ և 'ի մերում թարգմանութեան Ս. Գրոց ասէ ոչ գտանի այս, նաև ոչ յայլսն: Նոյնպէս և զԱսքանազ Ս. Գիրք Գոմերայ որդի ասեն, պատմիչք մեր՝ Թիրասայ. չփոթութեամբ և կամ մանրագոյն՝ կարգելով զազգաբանութիւն Գոմերայ և զհամանուանսն եղբօրորդիս, զորոկք զանց առնեն Ս. Գիրք, որպէս և զայլովք բազմօք:

[2] Ակնարկէ 'ի բան Խորենացւոյ. Ա. Ժդ. «Զկիլիկայն զայն Պոնտոն (Բրոդին) Արմենիան կոչեն (Ցոյնք) որ թարգմանի Ա Հայք»: Հեղինակս զԱ Հայս կամ զգաւառն Կեսարիոյ համարի Արմանեակ կոչեցեալ. նոյն ինքն այլուր և այլ ոք՝ Արմանեակ գաւառ ցուցանեն զկողմանս այժմեան Ազչէհրովայի, զոր Հայք կոչեն Աշխարհաբերդ:

[3] Օ. Փառնան:

[4] ՕՕ. Կարգռակ կամ Կարգրռակ:

[5] Հինն Ցուակ.. Գռակ:

րիմայ և պատուեցան ևս 'ի Պարոյրայ: Զոր յաջորդի Հրաչէ՝ որդի իւր, որ էր ընդ Նաբուգոդոնոսորայ յԵրուսաղէմ, և ած զՇամբատ ընդ իւր 'ի Հայս, յորմէ ազգ Բագրատունեաց: Եւ ետ Հրաչէի Փառնաւազ, Պաճոյճ, Կայինակ, Փուվա, Հայկակ, Երուանդ, որ ծնաւ զմեծն Տիգրան, որ սպան զԱժդահակ, և զԿրիսոս ըմբռնեաց և արձակեաց. Բաբ, Տիրան, Վահագն, Առաւան, յորմէ Առաւեղեանք, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Պայգամ, Վան, Վահէ, զոր սպան Աղեքսանդր Մակեդոնացին:

Իսկ 'ի Քամայ որ մնաց մեզ ասել, Քուշ, Մեսորիմ, Ներբովթ, որ է Բէլ, Բաբ, Անեբիս, Արբէլ, Քայաղ, միւս Արբէլ, Նինոս այրն Շամիրամայ:

Ը. Ասասցուք և զկարգ թագաւորացն: Առաջին թագաւորեաց Ներբովթ 'ի Բաբելոն հիւսածոյ թագաւ պսակեալ և ոչ կռածու, 'ի յիսուն և վեց ամին Սերուքայ. սա չինեաց զՇոշ քաղաք, որ ասեն Ասպահան, և սա սպանաւ 'ի Հայկայ, որդւոյ Թորգոմայ: Եւ թագաւորեաց Թիրոս քաղդէացի. յաւուրս սորա գտաւ արուեստ ոսկեհանութեան և արծաթագործութեան: Եւ յետ նորա թագաւորեաց Սամիրոս յազգէն Սեմայ ամս եօթանասուն և երկու. սա սկսաւ դահեկան և դրամ գործել անուամբ գրոյ, և առ սովաւ գտաւ քանդուած նկարու, և կազագործութիւն և չափ և կշիռ, և ամենայն բարեկարգութիւն: Զսմանէ ասէ Մենադրոս մոգ եթէ երիս աչս ունէր: Ի քսան և հինգ ամին Նաքովրայ էր ճգնութիւնն Ցորայ որդւոյ Զարեհի, որդւոյ Ռազուելի, որդւոյ Եսաւայ, որ զամս երեսուն և ութ պատերազմեալ ընդ սատանայի, յաղթեաց համբերութեամբ և փառաւորեցաւ: Ցեօթներորդ ամին Թարայի թագաւորեաց Արփիազատ ամս ութսուն. և զկնի նորա Վիլսս Աթուրացի ամս վաթսուն և երկու, հանեալ զպատիւն 'ի Բաբելոնէ յԱթուրիայ, որ Նինուէ. բայց Քսարոս ոմն թագաւորեաց 'ի Բաբելոն: Եւ Սահերոն եղբայր Թարայի սպան զնա, վասն հանելոյ 'ի նմանէ զԿայնան կուռքն, զի էր քրմապետ: Աստ չինեցաւ Դամասկոս յԱրամայ Հիթացւոյն: Աբրահամու մօրն Մալքաթու էր անունն. և յետ տասն ամի ծնանելոյն Աբրահամու, ծնաւ Թարա զՍառա 'ի Զմրութայ կնոջէ իւրմէ, և ոչ 'ի մօրէն Աբրահամու, որպէս ինքն ասաց ցԱբիմելէք. Քոյր իմ է, ասէ, 'ի հօրէ և ոչ 'ի մօրէ: Եւ լեալ Աբրահամ հնգետասան ամաց, սկսաւ խնդրել զԱստուած, մինչև ցեօթանասուն ամն. քանզի պարարտ և բազմաշահ երկիրն Քաղդէացւոց գրգռեաց

զնոսա յամենայն չարիս, յորում այց արար Աստուած, և արարեալ հրամայեաց ճայիցն բազմաց զանդս և զայգիս նոցա բարձում ժամանակս, և իւրաքանչիւր ոք սակաւ ինչ վաստակէր և պահէր իբրև զտարածոցս, և անկան յաղքատութիւն: Եւ Աբրահամ էր պահապան 'ի հայրենիս իւր և ուսանէր 'ի գիշերի զաստեղագիտութիւն, և զտիւն վաստակէր 'ի պահել զանդս. և զամենայն զոհս և զուխտս և զաղօթս կատարելով պաշտեցեալ դիցն իւրեանց, և ոչ լինէր դիւրութիւն. զնոյն և Աբրահամ առնէր, և մտախոհ լինէր ապա յինքեան թէ չէ պատուհասս 'ի մերոցս պաշտելեաց, վասն զի ոչ կարեն բառնալ. այլ և յարուեստէ աստի յաստեղացս պարտ է ճանաչել՝ զի 'ի շարժման կան միշտ, և 'ի ներքոյ հարկի, և յայտ է թէ գոյ ոմն կառավար սոցա մեզ անծանօթ: Եւ ապա սկսաւ պաղատանօք ասել. Անծանօթ Աստուած ամենայնի արարիչ, և այս թուչնոցս, դու հայածեա՛ զսոսա. և նոյն ժամայն անյայտ եղեն: Եւ ասաց Աբրամ. Ահա զտաք զԱստուած. օրհնեալ է տէրութիւն քո և փառք քո լցցէ զամենայն երկիր. և պատմեաց 'ի տան հօր իւրոյ, և անփոյթ եղև նոցա զիրացն: Ցայնմ ժամանակի մեռաւ Վիլոս թագաւոր և առ զթագն Նինոս որդի նորա, որ շինեաց զկուռա հօր իւրոյ ոսկեղէն, և ընդարձակեաց զԱթուր քաղաք, և յանուն իւր կոչեաց Նինուէ:

Ի սորա ժամանակս շինեաց Մելքիսեդեկ[1] զԵրուսաղէմ, և Աբրամ ոչ դադարէր 'ի խնդրելոյ զերեւումն Աստուծոյ. և լուաւ նմա, և ըստ տանելոյ նորա յայտնեցաւ նմա, և ասէ. Ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ և տարայց զքեզ 'ի զրկեալ վիճակն ձեր, և քեզ և զաւակի քում տաց զնա. և ասաց զբանն հօր իւրում: Եւ ել ընդ նմա, և եկին մինչև ցԽառան, և ստացան անդ տուն. և շինեաց անդ Թարա մեհեան կռոց, և այրեաց զնա Աբրամ, և Առան եղբայր նորա կամեցաւ շիջուցանել, և այրեցաւ անդէն. ոմանք ասեն թէ զիշակէսն նա հնարեցաւ, և մեռաւ 'ի Տեառնէ:

Եւ դարձեալ լինի առ Աբրամ ձայն Աստուծոյ ելանել 'ի Խառանէ, և ել ըստ բանի Տեառն. ասեն այլ կին ունել Աբրամ, և որդի Ովրեստէս անուն, զորս թողեալ զամենեսեան գնաց 'ի Պաղեստինեայ եօթանասուն և հինգ ամաց, և ութսուն և եօթնամեայ էջ յԵգիպտոս. և ել անտի անմոռաց 'ի Տեառնէ. և հարիւր եօթնեւտասն ամաց լեալ՝ ած զորդին 'ի զենումն. և հարիւր քառասուն և ութ ամաց առ զԿենտուր, և վեց որդիս ստացաւ 'ի նմանէ. 'ի հարիւր եօթանասուն և հինգերորդին վախճանեցաւ, յերեսներորդի եօթներորդի ամին Ցակոբայ: Ի քառասուն ամին առ Իսահակ զՌեբեկա, և 'ի վաթսուն ամին յղացաւ և գնաց հարցանել 'ի Մելքիսեդեկայ, և նա ասէ. Երկու ազգ է յարգանդի քում, և երկու ժողովուրդք: Ցեօթանասներորդի երկրորդի ամին Սահակայ՝ հնգետասաներորդ հարըստութիւն իշխանացաւ յԵգիպտոս Ապիս, և աստուած կարծեցաւ. զնա Սարապիս ոմանք ասացին: Ի հարիւր երեսուն և եօթն ամին Սահակայ գնաց Ցակոբ 'ի Խառան առ Լաբան, և ութսուն ամաց առ զԼիա դուստրն Լաբանայ: Ցաւուրս Ցակոբայ Փորոն թագաւոր Եգիպտոսի օրէնս և դատաւորս եդ, և Ովզեգիս շինեաց զԵլևանեա յԱտտիկէ: Ցակոբ 'ի հարիւր ամին ել առ Իսահակ հայր իւր, մետասան ամաց էր Ղևի. զի յութսուն և իններորդի ամին ծնաւ զնա: Ցեօթնեւտասներորդի ամին վաճառեցաւ Ցովսէփ, յերեսներորդի ամին եկաց առաջի Փարաւոնի: Ի հարիւրերորդի երեսներորդի ամին էջ Ցակոբ յԵգիպտոս. հարիւր քառասուն և եօթն ամաց մեռաւ: Ղևի քառասուն և վեց ամաց ծնաւ զԿահաթ: Ոմանք զփորձանքն Ցոբայ աստ ասեն: Կահաթ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ: Ամրամ եօթանասուն ամաց ծնաւ զՄովսէս: Ցովսէփ հարիւր տասն ամաց վճարեցաւ 'ի վեցերորդի ամին Ամրամայ, և աւետեացն Աստուծոյ երկուհարիւր վաթսուն և վեց. յորում ամի թագաւորեաց յԵգիպտոս Քեբրոն ամս երեքտասան, և յետ նորա Մենափթիս ամս քառասուն և երեք. սա առնէր զետասոյզ զազգայն Իսրայելի. յորմէ ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Թերմոթեայ դստեր նորին թագաւորին, որ եղև կին Քանդարայ թագաւորին Մեմփիս քաղաքի. և երեքհարիւրերորդ յիսներորդ ամ էր աւետեացն Աստուծոյ. և տասնամեայ լեալ Մովսէս՝ տուաւ յուսումն Ցանէսն և Ցամրէս: Ի քսաներորդի երկրորդի ամին Մովսեսի սկսան զկաւակոխութիւնն որդիքն Իսրայելի. 'ի քսաներորդի ութերորդի ամին՝ Մովսէս իշխան եղև, և շինեաց զքաղաքն Թերմուպոլիս, անուամբն Թերմօթեայ, զոր և Մառիս կոչէին:

Թ. Իսկ Եթէովպացւոցն՝ որ էին հարկատուք Եգիպտացւոցն՝ ապստամբեալ ասպատակեցին և գերեցին զԵգիպտոս, և զմայրաքաղաքն Մովսէսի. և գնացեալ Մովսէս պատերազմեցաւ

[1] Ըստ աւանդութեան՝ Մելքիսեդեկ որդի է Մելքեայ որդւոյ Արփաքսադայ որդւոյ Սեմայ:

տասն ամ. և առ զթագուհի նոցա զԹեսբաս, և զմայր իւր, և դարձաւ յԵգիպտոս. և նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ, որ է Թերմոթիս. և 'ի մեռանելն Մառեաց, թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այր նորա զԲասանթիս չարչարիչն Իսրայելի սպանանել զՄովսէս. և սպան զնա Մովսէս և փախեաւ 'ի Մադիամ. և Ցանէսն և Ցամբրէս առին զորդիսն Իսրայելի և տարան զնոսա հնգետասան աւուր ճանապարհ ընդ անապատն, և չինեցին զդրախտն իւրեանց, զհնգետասան տարի, և 'ի կատարման չինուածին՝ յորդւոցն Իսրայելի առին տղայս ինն հարիւր և ութսուն, և զոհեցին դիւաց. և հաւաքեցան առ նոսա, և եդին պահապանս դրախտին. և յայնմհետէ առաւել հնազանդեցան դևք կախարդաց. և չորեքհարիւր դևք, ասեն, ոչ հնազանդեցան, մինչև կրկին զոհեցին յանուն նոցա, և ապա եկեալ առին հաւանութիւն. բայց զչուստ ամիսն անհնազանդեալ գործեն զկամս իւրեանց տանելով զոմանս 'ի մարդկանէ:

Իսկ Մովսէս առ 'ի կնութիւն զՍեփովրա դուստր Ռագուելի, որդւոյ Դաղանայ, որդւոյ Ցեկսանայ, յորդւոց անտի Կենդուրայ, և ծնաւ 'ի նմանէ երկու որդիս: Եւ աստ ասեն լեալ առ Դեկալիոնիս[1] ջրհեղեղ 'ի Թեսաղիա, և առ Փայեթոնիս յԵթէովպիա հրայրեայցք, և այլ բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս, որպէս պատմէ Պղատոն: Իսկ Դեկալիոն Պառնասացւոց կողմանցն թագաւորէր: Մովսէս լեալ եօթանասուն ամաց՝ արժանի եղև երևմանն Աստուծոյ, և հրամայէր զնալ յԵգիպտոս և հանել զԻսրայէլ. և նա յապաղէր զտասն ամ. և եղեալ ութանամեայ, գնաց յԵգիպտոս, 'ի չորեքհարիւրերորդի երեսներորդի ամի աւետեացն Աստուծոյ: Ցեօթանասներորդէ հինգերորդէ ամէն Աբրահամու՝ երկերիւր և հինգ ամ մինչ 'ի մտանելն Ցակոբայ յԵգիպտոս, և երկերիւր քսան և եօթն ամ կացին յԵգիպտոս. և տասն հարուածովք հարեալ Եգիպտացիքն, ստիպով հանին զորդիսն Իսրայելի յերեք հազար ութհարիւր քառասուն և երկու ամի ելին 'ի դրախտէն. և ելին 'ի հինգշաբաթոջ, և 'ի կիրակէի անցին ընդ ծովն Կարմիր, և աս-

[1] Դեկալիոն թագաւոր Թեսաղիոյ կացեալ 'ի ԺԶ դարու յառաջ քան զթուականութիւն փրկչին. առ որով անուանի ջրհեղեղն զոր յիշէ Պղատոն 'ի ճառելն զԱտլանդն կղզւոյ կամ աշխարհէ: Իսկ Փայեթոնն արեգական որդի, ըստ առասպելեաց, զորոյ զկառս ախմարաբար վարեալ և չեղեալ հրկիզէր զերկիր, վասն որոյ շանթահարեալ յԱրամազդայ՝ անկաւ 'ի Պադոս (Բոյ) գետ Իտալիոյ:

տի կոչեցան Եբրայեցիք. զի Եբրայն անցիկ թարգմանի. և առին նոր լեզու պարգևօք, և այնու երգէին զօր հնեսցուքն, և էր նման հայրենի լեզուին: Եւ եօթն ամիս շարժեցաւ Եգիպտոս, և տապալեցան յոլով չինուածք և ելին արտաքս 'ի չինուածոցն բնակիչքն: Ի նմին ամի պարտեցաւ Ամաղէկ 'ի Ցեսուայ, և 'ի նոյն ամի՝ յամսեանն երրորդի՝ ել 'ի լեառն Սինա Մովսէս: Ապոլիմոս իմաստասէրն եբրայեցի ասէ, եթէ նախ Մովսէս յԱստուծոյ իմաստնացեալ զքր արար քսան և երկու, և այնու գրեաց Աստուած զտասն պատգամն, և ետ ցՄովսէս, և նովիմբ գրեաց Մովսէս նախ զԵլից գիրսն, և ապա զքսան և երկու արարածն 'ի Ծննդոց գիրս և զայլ երիս գիրսն. և զօրինակ արարածոցս զգալի խորանաւն եցոյց, որ գործեցաւ եօթն ամիս ընդ եօթնօրեայ արարածոցս: Եւ ունին հինգ գիրք Մովսէսի զրոյցս երեք հազարաց և եօթն հարիւր և երեսուն ամաց ըստ Եւսեբեայ:

Ժ. Աստուածածանօթն Մովսէս կատարեցաւ հարիւր և քսան ամաց, և առ զգաւազան նորա Ցեսու Նաւեայ ամս քսան և եօթն: Ի վեցերորդի ամին Ցեսուայ Դանաւոս եղբայր Եգիպտոսի թագաւորի Եգիպտացւոց յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց, և Լինդոս զերծեալ թագաւորեաց, զոր ասեն ամենայն ուստեք աչացեալ, զի իմաստուն էր: Ցութեւտասն ամին Ցեսուայ Փիւնիկս և Կադմոս 'ի Թեբացւոց յԱսորիս եկեալ թագաւորեցին, և աշխարհն կոչեցաւ Փիւնիկէ, և տուն Կադմեայ: Եւ սոքա բերին անդ զիմաստութիւն, որպէս Կիկրոպիս էած 'ի Մեմփիս քաղաքէ բնակիչս Աթենայ և եղև տուն իմաստից, և Կիկրոպիս արար գիր Ցունաց, զոր այժ զԿադմոս ասեն: Կատարեցաւ Ցեսու հարիւր եօթն ամաց, և դատաւոր եղև Գոթոնիէլ ամս քառասուն: Ափրիկանոս երեսուն ամ ղնէ 'ի մէջ Ցեսուայ և Գոթոնիէլի, և Ցոյնք յիսուն ամ ասեն Գոթոնիէլի. զի ութ ամ ծառայեցին Քուսայ, զոր սմա հաշուին: Աստ թագաւորեաց Արգիացւոցն Պելապս, ուստի Փիլոդոսն էր, բարոյախօսն ամենայն կենդանեաց[1]: Զկնի Գոթոնիէլի ծառայեցին Իսրայելացիքն Եղդոմայ արքային Մովաբու ամս ութեւտասն, զոր կցեն յամսն Աւոդայ, որ դատեաց զԻս-

[1] Փիլիսոդոս անուն պատմագիր մի ճանաչի կացեալ 'ի Դ դարու նախ քան զՔրիստոս, յաւուրս Դիոնիսեայ Կրսերոյ 'ի Սիրակուսա, իսկ առակախօսն կենդանեաց հետևող կամ նախօրինակ Եզովբոսի, անծանօթ է ինձ:

ըայէլ ամս ութսուն: Աստ լցաւ չորեքհազար ամն յԱդամայ:

Յետ Աւուղայ ծառայեցին այլազգեացն ամս քսան. և զօրացաւ Սամեգար, և սպան 'ի Փղշտացւոց վեցհարիւր այր մահով արօրոյն: Եւ դատեաց զԻսրայէլ Բարակ Դեբորայիւ ամս քառասուն, յարելով զծառայութիւն այլազգեացն: Յաւուրս սորա Յոմն կացեալ սպարապետ Աթենացւոցն, Յոյնք անուանեցան և նոքա[1]: Յաւուրս սորա հարիւր իմաստասէրք[2] տեսին զմի տեսիլ 'ի միում գիշերի, եօթն արեգակն. զոր Սաբիլէ կին մեկնեաց 'ի վերայ եօթն դարուց, և զվեցերորդն 'ի Քրիստոս մեկնեաց, որոյ ճառագայթն թագուցանէր զայլսն: Զկնի Բարակայ իշխեցին Մադիանացիքն ամս եօթն, և դատեաց զԻսրայէլ Գեդէոն ամս քառասուն յարելով զայլազգեացն: Դեղաղոս[3] հիւսն և նկարիչ աստ երևեցաւ, որ ասեն թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցուցեալ: Զգեդէոնի զեօթանասուն որդիսն կոտորեաց Աբիմելէք և դատեաց զԻսրայէլ ամս երեք. և զկնի նորա Թովղա ամս քսան և երկու: Եւ Հերակլէս ասեն զԻլիոն աւար հարկանէր, սպանանելով զԱնտէոս[4], զոր երկրածին համարէին: Յայիր Գաղադացի, ամս քսան և երկու. յետ նորա ծառայեցին այլազգեացն ամս ութ, ոմանք ութևտասն ասեն, և յայլս յարեն: Յեփթայի, ամս վեց: Աղեքսանդրոս զԵլենէ առևանկեաց, և տասն ամ պատերազմ Վասն այնր, և առնուլն զԻլիոն. և Հերակլէս խոցեալ՝ ընկեաց զինքն 'ի հուր: Եսեբոն ամս եօթն: Եւ յետ նորա Ելոն տասն ամս, որ չկայ յեօթանասնից, այլ յեբրայեցին. Լաբդոն, ամս ութ: Եւ թագաւորեցին Հռոմայեցիքն. առաջին թագաւոր Անիսս անուն: Զկնի Լաբդոնի ծառայեցին Փղշտացւոցն ամ քառասուն. և ապա յարեաւ Սամփսոն փրկեալ զնոսա, ամս քսան: Ի հինգերորդի ամին սորա եղեն իրքն Հռութայ: Յաւուրս սորա մեռաւ Զևս և թաղեցաւ 'ի Կրետէ, զոր ասեն կեցեալ ամս ութհարիւր և յիսուն, զի յաղագս բազմակեցութեանն Զևս կոչեցաւ, որ 'ի ծննդենէ Դիա ասիւր: Եւ Եբրայեցիքն քառասուն ամ ասեն զՍամփսոնի դատաւորութեանն: Յոհանէս յետ Սամփսոնի կարգէ զոմն դատաւոր Եմագոր անուն քառասուն ամաւ: Բայց Ափրիկանոս ասէ՝ թէ զքառասուն ամ ոչ զոյր դատաւոր. և էր խաղաղութիւն: Հեղի ամս քսան ըստ եօթանասնիցն, և ըստ Ասորւոց՝ քառասուն: Բայց գիտասցես, զի սուրբ առաքեալն չորեքհարիւր և յիսուն ամ կարգէ մինչև 'ի Սամուէլ, և այն լինի յորժամ զՅեսուայ ամքն և զՍամուէլին ոչ առնուս 'ի համարս. քանզի դատեաց զԻսրայէլ Սամուէլ ամս քառասուն ըստ եբրայեցւոցն, և ըստ եօթանասնիցն քսան. զի 'ի քսաներորդի ամին նորա խնդրեցին թագաւոր. և յայնմհետէ կարգին ժամանակք թագաւորացն: Բայց Սաւուղայն՝ որչափ կենդանի էր Սամուէլ՝ նմա է համարեալ 'ի կենացն Սաւուղայ, որ չէր հաճոյ Աստուծոյ, բայց յերկու ամացն, Սաւուղ թագաւորեաց ամս քառասուն: Ի տասներորդ ամի թագաւորութեան Սաւուղի ծնաւ Դաւիթ. և 'ի քսաներորդ երրորդն՝ օծաւ, և քսանևութ ամաց էր 'ի սպանանելն զԳողիաթ: Յերեսներորդ ամի ծննդեանն Դաւթի մեռաւ Սամուէլ. և զկնի հինգ ամի մահուանն Սամուէլի սպանաւ Սաւուղ, և Յովնաթան. և թագաւորեաց Դաւիթ ամս քառասուն: Ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ՝ եհան զտապանակն 'ի տանէն Աբեդդարայ, և էր քահանայապետ Աբիաթար, և մարգարէք՝ Գադ և Ասապ և Նաթան, որ յանդիմանէր զԴաւիթ: Յերեսներորդի ութերորդի ամի թագաւորութեանն իւրոյ՝ ընտրեաց Դաւիթ հարիւր ութսուն և ութ անձինս 'ի Ղևտացւոց անտի, և արար քսան և չորս դաս, երկոտասան այր 'ի դաս մի սաղմոսասացս, և սպասաւորս տապանակին Տեառն:

Եւ կեցեալ ամս եօթանասուն վախճանի, տուեալ զթագն Սողոմոնի, ամս քառասուն, և էր երկոտասան ամաց, և յառաջին ամին եղև նմա Ռոբովամ, 'ի Նամայէ կնոջէ յամանացւոյն: Ի չորրորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ շինել զտաճարն, 'ի չորեքհարիւրերորդի ութսներորդի ամի ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացւոց, ըստ թագաւորութեան գրոց եօթանասնիցն ասացեալ, զոր Եբրայեցին չորեքհարիւր քառասուն ասէ. բայց անսխալ այսպէս է. քառասուն ամ Մովսեսին, քսան

---

[1] Ըստ Եւսեբի. բայց զՅոյնս զիտոնք 'ի Յաւանայ որդւոյ Յաբեթի. իսկ Յոմնդ զօրավար էր Աթենացւոց որ մարտեաւ ընդ Եւմոլպեայ Թրակացւոյ փախստեայ եկելոյ յԱտտիկէ:

[2] Հարիւր իմաստասէրքն անծանօթք. իսկ Սաբիլէ կինն է Սիբիլլա մարգարէուհի 'ի հեթանոսս, որ եօթն կամ ինն ճանաչին. մատեանն որ յանուն նոցին զտանի՝ աղանդաւորաց քրիստոնէից գործ է:

[3] Դեղալ հիւսն և նկարիչ աթենացի, որ զբաւիղն (լաբիւրինթոս) շինեաց Մինովայ արքայի 'ի Կրետէ:

[4] Անտէոս հակայ Լիբիացի, երկրի և ծովու (Պիսիդոնի) ծնունդ, խեղդամահ լեալ 'ի Հերակլեայ, ըստ առասպելաց:

և եօթն ամ Յեսուայն, որ է վաթսուն և եօթն ամ. և չորեքարիւր և յիսուն ամ դատաւորացն, ծառայութեամբ այլազգեաց՝ որ է հինգհարիւր և եօթնեւտասն. յետ որոյ Շմուէլ և Շաւուղ քառասուն ամ, և քառասուն ամ Դաւթի, լինի իննսուն և եօթն, և չորս ամ Սողոմոնին, և լինին միանգամայն ամք վեցհարիւր և մի: Եւ չափ տաճարին վաթսուն կանգուն, և քսան լայն, և հարիւր և քսան բարձր: Եւ չինեաց քաղաքս եօթն. և առ սա եկն դշխոյն Հարաւոյ, և գովեաց զպաշտօնեայս տաճարին. զքսան և չորս դասն զԴաւթի կարգեալն, զոր Սողոմոն երկոտասան դաս յօրինեաց, քսան և չորս հազար այր 'ի դաս մի, և զվեց հազար դատաւորսն, և չորս հազար քնարերգակսն, և զչորս հազար դռնապանսն, և զայլ ամենայն յօրինուածսն. և գնաց 'ի նմանէ տիկինն: Եւ մեղաւ Սողոմոն յերեսուն և եօթն ամի թագաւորութեանն իւրոյ, և մեռաւ յիսուն և երկու ամաց: Եւ էին մարգարէք Սադովկ, և Աքիաս և Սամեա: Եւ իմաստասէրք՝ Հոմերոս, և Սիդոս. և քահանայապետ՝ Սադովկ 'ի ցեղէն Եղիազարու, կէաք 'ի Թամարայ ասեն, որպէս կայ 'ի գիրս թագաւորութեանցն: Կայ 'ի գիրս Փիւնիկեցւոցն, եթէ տաճարն յԵրուսաղէմ չինեցաւ հարիւր քառասուն և երեք ամօք յառաջ քան զչինելն Տիւրացւոցն զԿարքեդոն. և գրեն առակս ինչ առ միմեանս Սողոմոն և Քիրամ, և ոչ կարէր Քիրամ լուծանել զՍողոմոնին. բայց գտաւ այր ոմն, Աբդամանոս անուն 'ի Տիւրոս՝ որ կարողանայր առեղծուլ, այլ և գրէր առ Սողոմոն, և տարակուսէր Սողոմոն:

ԺԱ. Ռոբովամ որդի Սողոմոնի թագաւորեաց զկնի հօրն ամս եօթնեւտասն 'ի վերայ Յուդայ և Բենիամենի, և այլ տասն ցեղքն թագաւորեցուցին յինքեանց զՌոբովամ որդի Նաբատայ՝ յազգէն Եփրեմի: Յաւուրս սորա՝ ել Սաւսակիմ արքայ Եգիպտացւոց և կողոպտեաց զտաճարն Տեառն և գնաց: Զկնի Ռոբովամայ թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երեք. և յետ նորա Ասա որդի նորա ամս քառասուն և մի: Իսկ զկնի Ռոբովամու, թագաւորեաց Իսրայելի Նաբատ որդի նորա ամս երկու. և յետ նորա Բաաս ամս քսան և չորս. յաւուրս սոցա մարգարէք՝ Աքիա, Սամեա, Յովէլ, Ազարիա, որ և Աղդով, և Անանիա. Յովան, զոր այլք Զաքարիա ասեն, և Եպիփան Իուդ ասէ, զայն զոր սպան առիւծն: Ի քսան և իններորդ ամին Ասայ թագաւորեաց 'ի վերայ Իսրայելի Ելաս ամս երկու. և Զամբրի

ծառայ նորա սպան զնա, և թագաւորեաց աւուրս եօթն. և առ զթագն Ամրի, ամս երկոտասան. որ չինեաց զՍամարիա, որ կոչեցաւ նա Սեբաստիա, և արդ ասի Մամլուզ. իսկ զկնի Ասայ թագաւորեաց Յովսափատ, ամս քսան և ինն. և զկնի երկու ամաց թագաւորեաց Իսրայելի Աքաաբ որդի Ամրեայ ամս քսան և երեք, որ էառ կին զԵզաբէլ, դուստր Իթթիլ թագաւորի Սիդոնի: Ի քսան և ութերորդ ամին Յովսափատու թագաւորեաց Իսրայելի Ոքոզիա ամ մի, և զկնի նորա եղբայր նորա Յովրամ ամս երկոտասան, և զկնի նորա Յէհու ամս քսան ու ութ, և յետ նորա Յովաքազ ամս եօթն և տասն: Եւ թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Յովրամ ամս ութ. և զկնի նորա Ոքոզիա ամ մի. յեօթներորդ ամին Յովրամայ վերացաւ Եղիա: Զկնի Ոքոզիայ՝ մայր նորա Գոդողիա, որ էր դուստր Եզաբելի, և ապա թագաւորեցոյց Յովիդեա քահանայապետ զՅովաս որդի Ոքոզիայ եօթնամեայ 'ի վերայ Յուդայ, և եկեաց Յովիդեա միայն զկնի Մովսեսի, ամս հարիւր և երեսուն. որոյ որդին Ազարիա մարգարէանայր, և եղև քահանայապետ զկնի հօրն, և սպան զնա Յովաս յերեսներորդ ամի թագաւորութեան իւրոյ. և յերեսուն և եօթներորդ ամին մեռաւ Եղիսէ. և 'ի քառասներորդ ամի թագաւորութեան իւրում, սպանաւ Յովաս 'ի ծառայից իւրոց, և թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Ամասիա քսան և ինն ամ: Ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Իսրայելի Յովաս ամս վեցտասան. և զկնի նորա Ռոբովամ՝ ամս քառասուն. ոմանք ասեն թէ սպան զԱմասիա, և քակեաց 'ի պարսպէն Երուսաղեմի չորեքհարիւր գիրկ. և թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Ոզիա ամս յիսուն և երկու: Ի քսան և իններորդ ամին նորա թագաւորէ Իսրայելի Զաքարիա ամս վեց. և զկնի նորա Սելլում ամիս մի, և զկնի նորա Մանասեմ ամս տասն: Ի քսաներորդ չորրորդ ամին բորոտեցաւ Ոզիա, և լռեաց Եսայի մինչև ցմահ նորա քսան և ութ ամ, և վերստին մարգարէացաւ Եսայի վաթսուն և մի ամ. և նախ քան զլռութիւնն քսան և չորս ամ: Յերեսներորդ չորրորդ ամին Ոզիայ եկն Փուա, և ա՛ռ 'ի Մանասեմայ հազար քանքար ոսկւոյ. և 'ի քառասներորդ ամին Ոզիայ, թագաւորէ Իսրայելի Փակէէ միւս ամս տասն: Ի քառասուն և ութերորդ ամին Ոզիայ ել Թակղաթփաղասար, և գե-

րեաց զմեծ մասն տասն ցեղիցն: Զկնի Ոզիայ թագաւորէ Յովնաթան որդի նորա ամս տասն: Պորփիւրոս[1] պուտէս ճանաչիւր, և մարգարէք՝ Եսայի, Յունան, Ամովս, Ովսէէ. և Կուկր[2] եգիպտացւոց օրէնս դնէր. առ որով զառն խօսեցաւ: Եւ յետ Յովնաթանու թագաւորէ Աքազ ամս վեցտասան. յաւուրս սորա Փակէէ և Հռասոն արքայ Դամասկոսի կոտորեցին յԵրուսաղէմ երկոտասան բիւր. և Աքազ վարձեաց զթակղաթփազսար, և եկեալ առ զԴամասկոս, և սպան զՀռասոն արքայ Դամասկոսի, և գերեաց զԵդոմ: Յերկրորդ ամին Աքազու Ովսէէ սպան զՓակէէ, և թագաւորեաց ամս ինն: Յութերորդ ամին Աքազու ել Սաղմանասար, և հարկ եդ Իսրայելի և գնաց:

ԺԲ. Յետ Աքազու թագաւորէ Եզեկիա. յերրորդ ամին սորա՝ եկն Սաղմանասար, և ա՛ռ զՍամարիա, և գերեաց զտասն ցեղսն, և տարաւ 'ի Բաբելոն, և բարձաւ թագաւորութիւնն Իսրայելի, տեսեալ ամս երկերիւր և յիսուն. լինին յԱդամայ չորեք հազար երեքհարիւր և երեսուն ամք: Ռոբովամ, Նաբատ, Բայաս, Եղա, Զամբրի, Ամրի, Աքաաբ, Ոքոզիա, Յովրամ, Յեհու՝ որ սպան զՈվրամ և զԵզաբէլ մայր իւր, Յովաքազ, Յովազ, Ռոբովամ, Զաքարիա, Սելլում, Մանասեմ, Փակէէ, Փակէէ, Ովսէէ վերջին: Ի վեցերորդ ամին Եզեկիայ գերեցաւ Իսրայէլ. որ թագաւորեաց 'ի վերայ Յուդայ ամս քսան և ինն: Յիններորդ ամին սորա Հռոմելոս չինեաց զՀռոմ: Մանասէ ամս յիսուն և հինգ, Ամոն՝ ամս եօթն և տասն: Ովսիա՝ ամս երեսուն և մի. Յովաքազ՝ ամիսս երեք. Եղիակիմ եղբայր նորա ամս մետասան: Յեքոնիա՝ ամիսս երեք. Սեդեկիա՝ ամս մետասան, որ գերեցաւ, և աւերեցաւ տաճարն: Ամենայն ժամանակ թագաւորացն Յուդայ են չորեքհարիւր երեսուն և երկու ամ. և տեսեաց տաճարին չէն չորեքհարիւր քառասուն և երկու ամք:

Յութերորդ ամի թագաւորութեան իւրոյ՝ Նաբուզոդոնոսոր տարաւ զՅեքոնիա և եդ 'ի բանտի, երեսուն և հինգ ամ.

[1] Պորփիւրոս պուէտ ոչ ուրեք լսի. ընդ Որփևսի կամ Եսիոդեայ կամ այլում Թուի չփոթել հեղինակս:

[2] OO. Կուկր արքեպիսկոպոս օրէնս դնէր. ուղղագրելի է ըստ Եւսեբեայ «Բոկքորիս Եգիպտացւոց օրէնս դնէր»:

քանզի Նաբուզոդոնոսոր որդի Նաբուպալասարայ՝ թագաւորեաց ամս քառասուն և երկու. յութերորդ ամին գերեաց զՅեքոնիա, և եդ 'ի բանտի զամենայն ժամանակս իւր, որ է երեսուն և չորս ամ մնացեալն, զոր փոխեալ Իլմարովդակ զաթոռ հօր իւրոյ ամս երեք, և յառաջին ամին իւրոյ թագաւորութեանն եհան զՅեքոնիաս 'ի բանտէ, և ուտէր 'ի սեղան արքայի: Յետ որոյ եղբայր նորա Բաղտասար ամ մի, առ որով Դանիէլ զգիր բառնալոյ թագաւորութեանն Քաղդէացւոց ընթերցաւ, զոր էառ Դարեհ արքայն Մարաց, որ թուի թէ Աժդահակն է[1], զի երկանուն ասեմք զնա, որ յերեսներորդ վեցերորդ ամի թագաւորութեանն իւրում 'ի վերայ Մարաց, առ և զՔաղդէացւոցն ամս երկու. և Կիւրոս պարսիկ սպան զնա, և տիրեաց Մարաց և Պարսից և Քաղդէացւոց և Ասորւոց ամս երեսուն: Զոր ասեն թէ յառաջին ամին չարչարեաց զՀրեայսն և սպան զԱնանիանսն, և չարչարեաց զնա Տէր 'ի տեսլականն, և սպառնացաւ նմա. յորմէ զարհուրեալ՝ ետ հրաման արձակել զգերին Հրէից, տալով զսպասս տաճարին զՍամանասար հանդերձապետ Յուդայ արծաթի և ոսկի ամանս հազար չորեքհարիւր քառասուն և երեք. բայց ոչ բերաւ յԵրուսաղէմ, մինչև ցԶօրաբաբելի դալն: Եւ աստ լցաւ եօթանասուն ամացն վճիռն, յԵրեմիայէ ասացեալն, որ հաշուեալ լինի յութեւտասներորդ ամէն Ովսիայ արքայի, որպէս Եզեկիէլ երեսուն ամ ասէ 'ի հինգերորդ ամի գերութեանն Յեքոնիայ, յորում սկսաւ մարգարէանալ. քանզի Յովսիա երեսուն և մի ամ թագաւորեաց, և յութեւտասներորդ ամին վճիռն հատաւ եօթանասուն ամին, չորեքտասան Ովսիայն, և մետասան Յովակիմայն՝ լինի քսան և հինգ, և հինգ գերութեանն՝ լինի երեսուն. և երեսուն և չորս ամ Նաբուզոդոնոսորայն, մնացեալն լինի վաթսուն և չորս. երեք՝ Իլմարոդայն. մի Բաղդասարայն, և երկու Դարեհին, լինի եօթանասուն. և զի լցեալ էր եօթանասունն, և Կիւրոս յապաղէր, բարկացաւ նմա Տէր. և Դանիելի ասէր հրեշտակն թէ իշխանն Պարսից կուռի ընդ իս, չտալով թույլ արձա-

[1] Դարեհ արքայ Մարաց արդարև Աժդահակն է:

կել զգերին ըստ աղօթից քոց: Եւ յառաջին գալն էին Հրեայքն հինգ բիւրք, որք կանգնեցին սեղան, և արկին հիմն տաճարին, և նեղեալ 'ի շրջակայ ազգացն, մնաց անկատար մինչև ցԴարեհ արքայ: Յետ Կիւրոսի Կամբիւսոս որդի նորա ամս ութ. Հրեայք Նաբուգոդոնոսոր զսա կոչեն. Մոգքն երկու եղբարք, սմիսս եօթն. Դարեհ Վշտասպ ամս երեսուն և վեց. Քսերքսէս Դարեհի որդի, ամս քսան և մի. 'ի սորա հօրն յերկրորդ ամն Զօրաբաբէլ ել յԵրուսաղէմ, և շինեաց զտաճարն. առ օրով լցաւ երկրորդ անգամ եօթանասունն յաւերմանէ տաճարին, երկու ամ աւելի. Նաբուգոդոնոսորի և որդւոցն՝ երեսուն և երկու, և երկու Դարեհ մարին, և երեսուն և ութ Կիւրոսին և որդւոյն, լինի եօթանասուն և երկու. և զԴարեհին երկրորդն եղեալ՝ լինի եօթանասուն և չորս. որ լինի աւելիքն չարութեանն և ծուլութեանն Հրէից, և ոչ աստուծոյ քաղցրութեանն:

ԺԴ. Արտաշէս երկայնաբազուկ քառասուն և մի ամ. առ սովաւ Եզրաս և Նոյեմի տակառապետ եկին յԵրուսաղէմ և շինեցին զպարիսպն: Դարեհ Հարճորդի ամս իննսատասն. Արտաշես, ամս քառասուն, առ սովաւ Իսթեր: Արտաշես Ոքոս, ամս չորս: Դարեհ Արշամայ, ամս վեց. զոր սպան Աղեքսանդր, և եկեաց ինքն այլ ևս ամս վեց. յերկրորդ ամէն Դարեհի Վշտասպեայ մինչ 'ի մահն Աղեքսանդրի՝ լինին ամք հարիւր եօթանասուն և մի[1]: Զկնի որոյ թագաւորեաց Պտղոմէոս յԵգիպտոս, որ Լագոսեանն կոչի, ամս քառասուն: Պտղոմէոս Փիլադելփոս, ամս երեսուն և ութ. առ որով թարգմանեցան Հրէից գրեանն: Պտղոմէոս Եւերգետէս, ամս քսան և չորս. Պտղոմէոս Փիլուպատոր, ամս քսան և մի. Պտղոմէոս Եպիփանէս, ամս քսան և երկու. Պտղոմէոս Փիլոպատովր, ամս երեսուն և երեք, առ որով Անտիոքոս Եպիփանէս նեղէր զՀրեայսն, որ թագաւորեաց ամս մետասան: Անտիոքոս Եւպատոր ամս երկու. 'ի սոյն ամի և 'ի Փիլոպատոր Պտղոմեայ եօթնևտասներորդն,

[1] Յերկրորդ ամէ Դարեհի Վշտասպեայ (521 նախ քան զՔրիստոս) ցմահ Աղեքսանդրի Մեծի (324 Ն. Քրիստոս) լինին ամք 197: Գոանին և այլուր վրիպակք յամս և 'ի կարգս թագաւորաց յիշեալս 'ի հեղինակէդ, զոր դիւրին է ստուգել 'ի ժամանակագրական գրոց. վասն այսորիկ և զանց արարաք առ տեղեան յիշատակել:

ամբարձաւ Յուդա Մակաբեայ ամս երեք. և լինի 'ի թագաւորութենէն Զօրաբաբելի մինչև ցՅուդա Մակաբեայ՝ ամք երեք-հարիւր երեսուն և երկու: Յուդա Մակաբեայ, ամս երեք. Յովնաթանէս, ամս տասն. Շմաւոն, ամս ինն: Հիւրկիանոս՝ որ և Յոհաննէս, ամս քսան և վեց. Արիստաբուլոս, ամ մի. Յանէոս, որ և Աղեքսանդրոս, ամս քսան և եօթն. Աղեքսանդրիա կինն, ամս ինն. Հիւրկանոս, ամս երեսուն և չորս. Հերովդէս այլազգի, ամս երեսուն և եօթն: Յերեսներորդ երկրորդ ամի սորա ծնանի Քրիստոս Աստուած: Լինի 'ի Յուդայէ Մակաբեայ մինչև 'ի ծնունդն Քրիստոսի հարիւր յիսուն և մի ամք. և 'ի Զօրաբաբելէ մինչև ցՀերովդէի յերեսներորդ երկրորդ ամն, յորում Տէրն ծնաւ, չորեքհարիւր ութսուն և երեք ամք: Իսկ ըստ Դանիէլի եօթներորդացն, որ ասէ եօթներորդք եօթն և եօթներորդք վաթսուն և երկու, որ լինի վաթսուն և ինն. և եօթներորդ մի, և կէս եօթներորդի. զմի եօթներորդն 'ի վերայ հաշուեալ, եօթանասուն եօթներորդք է, որ լինի չորեքհարիւր իննսուն. և զի յայս թուոյս, որ չորեքհարիւր ութսուն և երեք է, մոգքն եօթն ամիս կացին թագաւորք, այն մի եօթներորդն եօթն ժամանակ է, այն չէ հաշուած, զայն 'ի վերայ չորեքհարիւր ութսուն և երիցդ դիր, և լինի չորեքհարիւր իննսուն. զի այս միաւոր եօթնս՝ ամսօք է, իսկ կէս եօթներորդի՝ երեսուն և երեք տարի և կէսն է, յորում սպանաւ Օծեալն: Զի այլ եօթներորդքն քառասուն և ինն, քառասուն և ինն է հաշուած, և այս կէս է, զի դեռ չէ 'ի լիսն. քառասուն և ինն այլ կէս է, այսինքն պակաս է. զի սովոր եմք կէս առել թերոյն: Թէ կամիս ընկալ, թէ ոչ՝ թողութիւն չնորհեա:

ԺԴ. Հայրն բազմորդի մեծն Աբրահամ եղև ազգիս մերոյ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ հայր պարծանաց, քանզի վեց որդիս ստացաւ 'ի Կենդուրայ, զԵմրան, և զԵկսան, զՄադան, զՄադիման, զԵսբոկ և զՍուվիէ: Իսկ երէց որդին Եմրան՝ սպան զԵկսան և զՄադան. և վասն այսորիկ արձակեաց զնա հայր իւր յարևելս, յիսահակայ որդւոյն իւրմէ. յորմէ սերեցան ազգն Պարթևաց, ուստի քաջն Արշակ. որ զկնի վաթսուն ամաց մահուանն Աղեքսանդրի, ապստամբեալ 'ի Մակեդոնացւոցն՝ թագաւորեաց յերկրին Քուշանաց, 'ի Բահլ շահաստանի ամս քսան և վեց, տիրեալ ամենայն արևելից և Ասորեստանեայց, սպանանելով զԱնտիոքոս, հալածէ 'ի Բաբելոնէ և 'ի Քաղդէացւոց երկրէն զՄակեդոնացիս: Ասեն թէ սա էր որդի Ար-

չաւրայ, որ էր Մարաց արքայ: Սա էառ կին յազգէ որդւոցն Մոլսիսի՝ որ բնակեալ էին 'ի Տափնաս, և խնամացեալ ցեղին Տաճկաց, և եկեալ բնակեցաւ 'ի մէջ Մարաց և Պարսից, Հայոց և Քուշանաց: Եւ զի 'ի դիմաց և 'ի թիկանց, յաջմէ և 'ի ձախմէ թեւեալ էին չորք ազգք, Պարթևք կոչեցան, պարունակեալք 'ի չորից ազգաց, և վասն Բահլ քաղաքին արքունական՝ Պահլաւք կոչեցան[1]:

Զսա փոխէ Արշան որդի իւր, որ և Արտաշէս ասի, չքնաղ այր և անձնեայ և զոռ պատերազմող. սմա լինի որդի Արշակ, որ կոչեցան Մեծ. զորմէ ասեն տիրել երրորդ մասին աշխարհիս, Ասիոյ, Լիբիոյ և մեծ բաժնի Եւրոպայ: Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ Հայոց, և սահման հաստանէ նմա զՊաղեստին, և զԱտրեստան և զՄէջերկրեայս, և զթեռապիա[2] 'ի ծովէն Պոնտոսի մինչև ցուրանօր Կովկասս յարևմտեան ծովն իսառնի, և այլ ևս, ասէ, որչափ իմաստութիւն քո և զէն հաստանէ: Սորա տպանեալ զՄարն-փիրիկա, որ բռնացեալ ունէր զկողմն Պոնտու[3] և հաստատեալ կապմէ զթագաւորութիւնն տանուտէրական ցեղապետութեամբ՝ զորս կոչէ յաստիճանս նոցա անուն պերճանաց. Բազրատունիս զթագաւորիսն՝ յանուանէն Բազրատաց, որ 'ի յազգէն Սմպատայ հրէէ, 'ի ցեղէն Ցուդայ. և Քնթունիս զգետտողն իւր, յազգէն Քանանու. և Խորխոռունիս, զթիկնապահն իւր 'ի ցեղէն Հայկայ. և Վարաժունիս և Արծրունիս և Գնունիս և Գայքեղեանս և Զիմնականս և Հաւունիս, և Սիսակեանս՝ զտեսարսն Սիւնեաց, և Մուրացանս՝ զոր երկրորդ իւր կարգէ, յարենէն Աժդահակայ Մարաց արքայի. և Մուրացանն Տէր ասի. և Աղուանիս, և Առանիս[4] 'ի թոռանցն Հայկայ: ԶԱռան[5] ոմն

[1] Վասն ծագման և կարգի թագաւորաց Պարթևաց բազում և տարաձայն բանք են առ մեզան և առ օտար պատմիչս, յորս ոչ ներէ մեզ միթէ գործս այս: Իսկ Պարթևք անուն փախստեայ և գաղթ նշանակէ, ըստ բազմաց:

[2] Թեռապիա, Իտազակսն՝ աշխարհ՝ առ Եղիշեայ, է մասն Թուրքաստանի, ընդ մէջ ԶաՀան գետոյ և Խորասանայ Պարսից աշխարհի:

[3] ՕՕ. Պոնտու.:

[4] Առանիս. Առան կոչի արևելակողմն և հարաւակողմն Սիւնեաց մինչև 'ի Կուր գետ և յԵրասխ, յորում Հայոց աշխարհք Արցախ և Ուտի, որոց տիրեցին Աղուանք 'ի Ե դարու.: Ի վաղնջուց ժամանակաց ընդ սմին և հարաւակողմն Երասխայ կոչէր Առան կամ Իրան. և նոյն ինքն Համարի Էրիէնէ-Վէջոյ արքաղաքն և հին երկիր մարգիկն, ըստ զանազանի գրոց:

[5] Այլ Օ. զԱռանիսս:

կողմնապետ արևելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտիացւոց և Գարդմանացւոց և Գարգարացւոց և Մոդացւոց[1]. և Գուշարացիս՝ յորդւոցն Շարայի մնացելոց, որոց տայ զլեառն Մթին, զԿանկարս, և զկէս մասինն Զաւախայ: Եւ զկողմնակալն հիւսիսոյ Կովկասու բդեաշխ կոչէ Գուգարացւոց, և կարգէ զնա 'ի վերայ զերւոցն Վիրացւոց[2], զոր ած Նաբուգոդոնոսոր 'ի Վիրիոյ յարևմտից Լիբիացւոց, յորոց մասն ինչ առ ծովուն Պոնտոսի բնակեցուցանէ: Եւ Դունին[3] կոչէ զմեծ նահապետն Բասենոյ 'ի զաւակէն Հայկայ. և Անգեայս[4] կոչէ զկողմնակալն արևմտից զՏուրքն Հայկացի, զոր Հարիւր քսան փղի ոյժ ասեն ունել, և զորձաքարս ձեռամբն ձևել ըստ կամաց, և բլրաձև վիմաս կորուսանել բազում եաս յեզի ծովուն Պոնտոսի[5]: Եւ կուսակալին արևելից Հարաւոյ Շարշանայ[6], Սասանական կոչէ, զոր կացուցանէ 'ի վերայ Տիգրիս գետոյ. և զՄոկացին 'ի նմին զաւառէ, և զԿորդուացին, և զԱնձևացին, և զԱկայեցին, և զՏրպատունին, և զԱնձտայն. և այլ այսպիսիս. կորովին այն և խոհեմամիտ արքայն, դպիրս և դոնապանս, և բարեյիշեցուցիչս արքայի 'ի բարկութեան ժամու.:

ԺԵ. Բայց լուաք և տեսաք զրով, եթէ որդի էր սա Արշակայ մեծի, և ոչ եղբայր: Եւ էր բանն այսպիսի, եթէ թագաւորն Պարսից խնդրեաց զսիւնն կճեայ՝ որ 'ի Մծբին յապարանս արքայու-

[1] Մաւդէից երկիր յարևելից Կուր գետոյ, յաշխարհին Աղուանից կամ սահմանակից նմին: Իսկ այլք յազգացդ յիշելոց յարևմտից գետոյն կան, և վիճակք են Ուտիոյ, բայց Գուշարացիք մասն են Գուգարաց:

[2] Վերիացիք. Խորենեցի (Բ. ը) ըստ Մեղասթենեայ և Աբիդենեայ յիշէ Նաբուգոդոնոսորի վարեալ զերի յափանց Լիբիոյ և Իբերիոյ (Սպանիոյ) և բնակեցուցեալ յաջմէ Պոնտոս ծովու. յորմէ ասէ Ուխտանէս պատմիչ, և մերս ըստ սմանէ, սերեալ զՎիրս. բայց ոչ է հաւանելի. և զերութիւնն իսկ Լիբէացւոց ընդ երկրայութեամբ է:

[3] Ըստ Խորն. Որդունին:

[4] Անգեգեայս ըստ Խորն:

[5] Խորենեցի (Բ. ը) վասն Ռոստոմայ Սաղեկի, այն է Ռիւստէմ իշխան Սէգէստանայ, ասէ ունել զոյժդ, ըստ բանչաղանաց Պարսից, և բաղդատէ ընդ անգիտելոյ Հայկազիին Տորքայ:

[6] Շարաշան սերունդ Սանասարայ կամ Սանեսարայ որդւոյ Սենեքերիմայ. վասն որոյ Սանասարեան կամ Սասանական կոչելի էր:

թեանն Հայոց[1] և 'ի յառնուլն զտաւ զիր յունարէն, եթէ Եա գրեցի Ագաթանգեղոս. զի մեծն Արշակ ունէր չորս որդիս. զառաջինն թագաւորեցուցոյց Թետալացւոց, և զերկրորդն Լիւրիկեցւոց, և զերրորդն Պարթևաց. զչորրորդն Հայոց, տալով նմա զսահմանն՝ զոր Հայկն ստացաւ զաւակօքն իւրովք, և որդւովք եօթն դստերաց իւրոց:

Արդ կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ, պահէ առ ինքն զԱրշակ զորդի իւր, և զԱրտաշէս որդի նորա, և զայլ արքայազունսն առաքէ 'ի Հաշտեան զաւառն: Եւ եղև այս 'ի կրօնս ամենայն թագաւորաց, զմի ոք ունել ընդ ինքեանս ժառանգ և զայլսն 'ի Հաշտնէս առաքել, զի կայցեն յազատութեան: Թագաւորեալ Վաղարշակայ ամս քսան և երկու, մեռանի 'ի Մծբին. և թագաւորեաց Արշակ որդի նորա ամս քսան և երեք: Սա կառոյց զնիզակն յորձաքարի յեզերս ծովուն Պոնտոսի, միսեալ արեամբ թիւնաւոր սողնոց, զոր պաշտեցին Պոնտացիք իբրև զգործ աստուծոյ: Զկնի նորա թագաւորեաց Արտաշէս որդի նորա ամս քսան և չորս, յերրորդ ամի Արշականայ Պարսից արքայի. զոր իւր երկրորդ կացոյց և տիրեաց բոլոր ցամաքի, և անց յայնկոյս ովկիանու, և եհաս մինչև 'ի Սպանիա, և դարձաւ ձերբակալ արարեալ զԿրիւսոս Լիդայ թագաւորն[2]. առանց թուոյ ունելով զօրս. և 'ի յերկրորդ անգամ գնալն յարևմուտս, մեռանի 'ի ծովուն: Եւ առնու զթագն Տիգրան որդի նորա, 'ի քսաներորդ և եօթներորդ ամի թագաւորութեանն Արշականայ. սա գերեաց զԵրուսաղէմ, և սատակեաց զԿրասոս[3] զօրավարն Հռովմայեցւոց, և կացուցանէ զՄիրդատ 'ի Մաժաք. որոյ որդին ապստամբեալ երթայ առ Հռովմայեցիս, առեալ զՊերգեա քաղաք, և զՄաժակ ընդարձակեալ կոչ է յանուն Կայսեր. և զկնի Բարզափրան վերստին գերէ զԵրուսաղէմ, ածեալ գերի զՀիւրկանոս քահանայապետ՝ բնակեցուցանէ 'ի Վան: Այլ Տիգրան թագաւորեալ ամս երեսուն և երեք, մեռանի. և առնու զթագն Արտաւազդ որդի նորա, և բնակեցուցանէ զեղբարս և զքորս իւր յԱղիովիտ և յԱռբերանի, որպէս զայլ Արշակունիս՝ 'ի Հաշտէնս. ինքն խաղայ 'ի Միջագետս, և Անտոնինոսի յուեալ գայ կոտորէ զզօրս նորա, և զնա գերեալ տանի յԵգիպտոս՝ պարգև Կղէոպատրայ դշխոյի: Եւ առնու զթագն Արշամ որդի Արտաշիսի, եղբայր Տիգրանայ[1], և տայ հարկս 'ի Միջագետաց Հռովմայեցւոցն, յաւուրս Հերովդի, զոր կացոյց Անտոնինոս արքայ Հրէից, և յաւուրս Արշաւրայ Պարսից թագաւորի յոյժ տղայոյ, որ չկարէր օգնել Արշամայ. վասն որոյ հնազանդեցաւ կայսեր, և գործաւորս տայր Հերովդի, սալակապ առնել զփողոցն Անտիոքայ: Սա թագաւորեալ ամս քսան՝ մեռանի, և առնու զթագն որդի նորա Աւազայրն, զոր Ասորիք Արգար կոչեն: Ի սորա երկրորդ ամին ծնաւ Տէրն, և ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագրութեան, և բերաւ պատկեր նորա 'ի Հայս, և ամենայն Հայք մտին ընդ հարկաւ. սայապէս և Ասորեստան և Եգիպտոս և ամենայն Մէջերկրայք: Եւ էր յելիցն Ադամայ, ըստ Հրէիցն՝ չորեք հազար, և ըստ եօթանասնիցն՝ հինգ հազար հարիւր իննսուն և ութ. ըստ Ենանոսի[2] հինգ հազար իննսուն և մի. ըստ Ասորւոյ՝ հինգ հազար քսան և վեց. և տարին երկոտասանալուսնեայ:

ԺԶ. Եւ Օգոստոս երկրորդ ինքնակալ զկնի Յուլիոսի զոր ասեն Փորահան[3], որ և Կայսր կոչեցաւ, և թագաւորեաց զկնի չորս հարիւր վաթսուն և երկու ամի խափանելոյ արքայութեանն Հռոմայ. և Օգոստոս ևս մեծացաւ 'ի ծնանել մեծին Աստուծոյ և ամենակալ արքային. յորում աւուրս եկին մոգքն երկոտասան հազար հեծելովք, և լուեալ եթէ սով է 'ի Պաղեստին, թողին զզօրսն առ Արգար, և ինքեանք որ մեծք էին գնացին երկոտասան իշխանօք, և հազար հեծելօք: Մեքսն

[1] Այս ըստ մնացորդաց պատմչացն որ յարեալ են 'ի սկզբան պատմութեանն Հերակլեայ կայսեր 'ի Սեբէոսէ:

[2] Շահատակութիւնքդ Արտաշիսի ըստ Խորենացւոյ պատմութեան, այլ ոչ ամենք քան զՈնիսատան ձգէ սա. նոյնպէս և խնդիր Կրեսոսի, որոյ անպատշաճութիւն յայտնի է, այլ պատճառ վրիպանացն և բանից պատմչաց զորս յիշէ Խորենացին, տակաւին ոչ քաջայայտ:

[3] ՕՕ. Կրաւոսս:

[1] Ընդ մահ Արտաշիսի հօր Տիգրանայ և ընդ թագաւորութիւնն Արշամայ 70 ամք են, և զի սա թագաւորեաց 20 ամ, 'ի զէպ գայ եղբօրորդի ասել զնա և ոչ եղբայր Տիգրանայ. ապա թէ ոչ՝ առաւել քան զնա ինքն որ ընդ երկարակեացս յիշի 'ի Լուկիանոսէ սոփեստէ (85 ամաց մեռեալ), յիշելի էր ինքն՝ անցեալ զինանամենիւք:

[2] Ենանոս պատմիչ ըստ Միքայելի Ասորւոյ, կրօնաւոր էր Ալեքսանդրացի, որ գրեաց զպատմութիւնն յԱդամայ ցԿոստանդիանոս:

[3] Յուլիոս կեսար Փորահան ասի, զի յետ մօրն մեռանելոյ Հանաւ յաջողանէն:

Պարսիկ, Գասպար Հնդիկ, Բաղտասար Արաբ. ոսկի, կնդրուկ, զմուռ ընդ ինքեանս ունելով: Զայս գրեաց Լուկիանոս ոմն Փռանկ[1], որ կայր յԱսորիս, առ կայսր Օգոստոս. Գիտասցէ ինքնակալութիւնդ քո, զի եկին 'ի հարաւոյ արևելից արք մեծաշուք և երկրպագեցին տղայոյ միոյ ծնելոյ 'ի Պաղեստին, հրաման առեալ 'ի վերուստ յայտեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա: Իսկ 'ի գնալ մոգուցն ընդ այլ ճանապարհս յաշխարհն իւրեանց, կոտորեաց Հերովդէս հազար չորեք հարիւր վաթսուն և երկու մանկունս յերթալն Տեառն յԵգիպտոս: Եւ Օգոստոս երթայ յԵգիպտոս, և սատակէ զԱնտոնինոս զօրավարն իւր, որ ապստամբեալ 'ի նմանէ թագաւորեաց: Եւ Աբգար չինեաց զՈւռհա, և անդ փոխեաց զաթոռն իւր և զդիւանն 'ի Մծբնայ, որպէս Տիգրան չինեաց զՏիգրանակերտ, որ ասի Ամիթ: Յերեսներորդ երրորդ ամի Տեառն մերոյ ծննդեանն, մեռաւ Արշաւիր թագաւորն Պարսից, թողեալ երեք որդի և դուստր մի, որք վիճէին 'ի վերայ թագաւորութեանն, զորս խաղաղացոյց հաշտութեամբ Աբգար, անդ գնալով. զաւագ որդին Արտաշէս՝ թագաւորեցուցանէ, և զՍուրէն և զԿարէն և զԿոշմ քոյր նոցա՝ պատուէ Պալհաւ անուամբ, և 'ի դառնալն պատահէ նմա ցաւ ուրկութեան: Եւ եկեալ յԵդեսիա՝ առաքէ առ Մառինոս[2] զօրավարն Հռովմայ զՄարիահա[3] բդեշխն Աղձնեաց, և զՇամշագրամ նահապետն Ապահունեաց, և զԱնանէ հաւատարիմ իւր, զի մի՛ խորհուրդ նենգութեան կարծեսցեն զերթն նորա յարևելս: Եւ պատահեալ Մառինեայ յԵլևթրապոլիս[4], լուան բանս բարիս և ելին յԵրուսաղէմ. և տեսին զՏէրն զի առնէր նշանս մեծամեծս, և հաւատացին 'ի նա, և բերին զտեսեալ նշանսն Աբգարու, և դարձան մեծարել զնա և բերին զպատկերն, և եկաց յՈւռհա, մինչ 'ի Նիկիփոր թագաւորն Ցունաց, որ տարաւ 'ի Կոստանդնուպոլիս 'ի ձեռն Աբրահամու մետրապոլտի:

Ժէ. Առ սա եկն Թադէոս առաքեալ և մկրտեաց զսա և զամենայն քաղաքն, և գնացեալ առ Սանատրուկ կայսրի 'ի

[1] Լուկիանոս Փռանկ, այսինքն Հռովմայեցի:

[2] Մառինոսդ՝ Սաբինոս կոչի 'ի պատմութեան կամ ի Թղթին Աբգարու:

[3] Այսպէս ՕՕ. բայց հնագոյն պատմիչք Մար Իհաբ ասեն:

[4] Ուղիղն ելևթերոպոլիս (Ազատ-քաղաք) որ և Բեթոգաբրա, որ նշանակէ տուն հովայից, մերձ յԱսկալոն. այժմ կոչի Պէյթ-Ճէպրին, և է գեղաւան:

նմանէ յԱրտազ: Ի նոյն վիճակեալ և Բաքղողիմէի, վճարի 'ի նոյն թագաւորէ յԱրաբիոն[1] քաղաքի: Իսկ Աբգարու թագաւորեալ ամս երեսուն և ութ կատարի 'ի Տէր. և Սանատրուկ տիրէ Միջագետաց. և չինէ զՄծբին, որ 'ի շարժմանէ փլեալ էր, և մեռանի յորսի թագաւորեալ ամս քսան, և առնու զթագն Երուանդ որդի կնոջ արշակունւոյ, և կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ, զերծեալ մանուկ մի Արտաշէս անուն, զոր առեալ Սմբատայ՝ անկանի 'ի Պարսս, առ Դարեհ արքայ վերջին: Եւ Երուանդ թողու զՄիջագետս 'ի Տիտոս, և առնէ զնա յոյժ. և չինեալ զԵրուանդաքար, անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ, և 'ի նմանէ հեռագոյն չինէ զԲագարան տուն կռոց 'ի վերայ Ախուրանայ գետոյ, և քուրմն դնէ զԵրուազ եղբայր իւր. մինչև 'ի յամն քսան և մի, յորում դառնայ Արտաշէս թագաւորեալ. և տուեալ ճակատ 'ի Մարաց-Մարդ յԱխուրեան գետ, փախչի Երուանդ 'ի քարն[2] և սատակի չարակնն այն: Եւ առնու զթագն Արտաշէս. սա չինէ զԱրտաշատ 'ի տեղւոջ ուր խառնի Մեծամօր յԵրասխ: Սա գերի ածեալ յամենայն կողմանց՝ չեթող տեղի անգործ 'ի Հայս. և չորեքանկիւնի քարիւ նշանակէ զկոպարսն. և կարգէ աւուրս շաբաթուց և ամսոց և բոլորման տարեաց, և կազմուած նաւագնացութեան, և արուեստ ձկնորսաց[3]: Թագաւորեալ սորա ամս քառասուն և մի մեռանի. որում մահակից լինին ոչ սակաւ ծառայք: Եւ առնու զթագն Արտաւազդ որդի նորա, որ զկնի աւուրց ինչ 'ի յորսս գետամոյն լինի, առ կամրջովն Մեծամօրի, լլկեալ յայսոց: Եւ առնու զթագն եղբայր նորա Տիրան, յերրորդ ամի առաջնոյ Պերոզի, ամս քսան և մի. որում ձիք ասեն երկու երագունս զոր թևաւորս կոչէին: Սա մեռանի 'ի ճանապարհին Եկեղեաց, պատահեալ ձեան[4] սաստկագունի. և առնու զթագն Տիգրան վերջին եղբայր նորա ամս քառասուն և երկու: Զնա փոխէ Վաղարշ

[1] Բաղաք նահատակութեան Բարթուղիմեայ պէսպէս գրի, Արևքանոս, Ուրբանոս, Արաբիոն, Արաբիսոն, Բարմ. առաջինն և վերջինն ստուգագոյնք են, զի Բարմ ըստ Խորենեցւոյ նշանաւոր ինչ մասն էր քաղաքին, որ և էր 'ի Մեծն Աղբակ 'ի սահմանակցութեան Պարսկահայոց, որ այժմս կոչի Սէր-Ալպաղ՝ նովին հին հայկական նշանակութեամբ. բայց և քաղաքն և տեղի նահատակութեանն անծանօթք մնան այժմ:

[2] Այսինքն միջնաբերդն 'ի քարաբերդ Երուանդաշատ քաղաքի:

[3] Հին Օ. **որսոյ ձկանց:**

[4] Հին Օ. **նեաղի:**

որդի նորա, յամի երեսներորդի երկրորդի հոմանուանն իւրոյ Պարսից արքայի: Սա չինէ զՎաղարշաւան 'ի գաւառին Բասենոյ, ուր ծնաւ զնա մայրն իւր, և պատեաց զՎարդգէս աւանն 'ի վերայ Քասաղ գետոյ. և Վարդգէս քեռայրն Երուանդայ Հայկազնոյ սակաւակեացն չինեալ էր զնա. զոր սա պատեալ պարսպով Վաղարշապատ կոչեաց, որ և Նոր-քաղաք[1]:

Յաւուրս սորա միաբանեալ ազգն Բուլղարաց[2] և Խազրաց[3], թագաւոր ունելով զՎնասեպ ոմն Սուրհապ զան առ Կուր գետով անհոլն բանակօք, զոր տարեալ Վաղարշու կոտորմամբ անցուցանէ ընդ դուռն Զորայ[4]. սակայն 'ի նետէ հարեալ յանկարծս մեռանի, թագաւորեալ ամս քսան: Եւ առնու զթագն Խոսրով որդի նորա, յերկրորդում ամի Արտևանայ Պարսից արքայի. և նոյնժամայն անցանէ ընդ լեառն Կովկաս յառնուլ զվրէժ հօրն, և մաչէ սրով զերկոսին ազգսն. և 'ի լաւացն պատանդս առեալ մի 'ի հարիւրոցն, դառնայ այսրէն, զիւրոյ տէրութեանն նշան արձան հաստատեալ հելլենացի գրով: Յորում ժամանակի սպան զԱրտաւան Արտաշիր Ստահրացի. և լուեալ Խոսրովու ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր, և առեալ զզօրս Եգիպտոսի, և առ անապատօք մինչև ցծովեզրն Պոնտոսի, աւերէ զաշխարհն Պարսից ամս տասն, փախուցեալ զԱրտաշիր 'ի Հնդիկս: մինչև եկն Անակ, և նենգութեամբ սպան զքաջն, և մեռաւ ինքն և իւրք: Եւ զորդին Անակայ զԳրիգոր առեալ Բունդարայ պարսկի որ եկեալ էր զկնի Անակայ, և գնացեալ 'ի Կեսարիա. և առեալ կին զքոյրն Եւթաղեայ զՍոփի. և զկնի ամի միոյ դարձաւ գնալ 'ի Պարսս, և հասեալ աներոյն արգելու 'ի Վաղարշապատ քաղաքի. ուր մտանէ Սոփի ստնտու մանկանն Գրիգորի, ցնա տուեալ այր իւր, 'ի գրկացն

[1] Քաղաքաւանն՝ առ որում այժմ էջմիածին:

[2] Բուլղարաց ազգ սկիւթացի յառաջ քան զամենայն 'ի մերում պատմութեան յիշի, հատուածաւ բնակութեամբն Վունդայ ուրումն 'ի սահմանս Կողայ և Բասենոյ:

[3] Խազիրք ցեղակիցք Բուլղարաց, նշանաւորք ասպատակութեամբ իւրեանց յարևմտեան Ասիա և 'ի Բիւզանդեան ինքնակալութիւն. յետ Ժ դարու անյիշատակ լինին:

[4] Դուռն Զորայ կամ Ճորայ, որ և Պահակն Հոնաց, Դարբանտայ դուռն է. Տէրբենտ կամ Տէմիր-Գապու Թուրքաց, մերձ 'ի սպառուածն Կովկասու յեղր ծովուն Կազբից:

Ոգոհեայ առեալ 'ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ: Եւ տարեալ 'ի Կեսարիա ընծայեն Քրիստոսի. և վարժեալ անդ յոյն և ասորի գրով, և եղեալ երկոտասան ամաց: Դաւիթ ոմն ամուսնացուցանէ զնա 'ի դուստր իւր Մարիամ. և եղեալ երկուց որդւոց, մեկնին 'ի միմեանց. Մարիամ 'ի կանանց վանս գնաց երէց որդւովն, և կրտսերն գնաց զկնի ճգնաւորի ումեմն Նիկոմաքեայ. և դարձոյց մայրն զՎրթանէս առ դայեակն իւր, որ և սնուցեալ ամուսնացոյց և զնա ևս: Իսկ զկնի մահուանն Խոսրովու՝ կոտորէ Արտաշիր զյիշատակս նորա, բայց զմանուկ մի փոքրիկ Տրդատ անուն, Արտաւազդ անուն ոմն նախարար յազգէ Մանդակունի, փախուցանէ 'ի Յոյնս, որ և սնաւ առ Լիկիանեայ իշխանի:

Եւ լուեալ Գրիգորի զամենայն պատահումն ինքեանց, գնաց առ Տրդատ, և ծառայէր զնա: Իսկ միւս եղբայր Գրիգորի Սուրէն անուն, տարեալ եղև առ Արտաշիր, և սնաւ առ հօրաքեռն որ էր կին որդւոյն Զուանշիրի, արքային Հեփթաղաց[1]. որ և զարգացեալ՝ չոգաւ յերկիրն Ճենաց[2] և Դարբանդայ, և թագաւորեաց 'ի վերայ նոցա: Բայց ոմանք ասեն Զգօն ոմն անուն կոչեցեալ Յակոբ, թէ նա է եղբայր Գրիգորի. բայց Յակոբ որդի է քեռն Անակայ Խոսրովուհեայ, որ էր կին Տիրանայ արքայի, զոր սպան թագաւորն Լփնաց Ադիզէս. և Յակոբայ առեալ զքոյր իւր զՍակղէն որդւովն իւրով Հրաչէիւ, զկնի մահուան ծնողացն՝ գնաց յերկիրն Դթաց. ուր և թագաւորեաց Հրաչէն 'ի բարի պատահմանէ. և նա է որ եկն 'ի վերայ արքային Յունաց, և խնդրէր ախոյեան իւր զկայսրն Դիոկղետիանոս. և յերկնչելն նորա 'ի Հրաչէէ՝ խնդրեցաւ այլ ոք զօրաւոր. և գտեալ եղև Տրդատ, և կազմեալ կայսերակերպ՝ ըմբռնէր զՀրաչէ և ածէր առ կայսր: Վասն որոյ և թագաւորեալ զայ 'ի Հայս, Գրիգորիւ. որ և յառաջին ամին իւրոյ չարչարէ զսուրբն Աստուծոյ, և արկանէ 'ի վիրապն: Եւ 'ի հնգետասաներորդ ամին Տրդատայ՝ զան սուրբ տիկնայքն 'ի Հայս և մարտիրոսանան. և պատահարքն հասին 'ի վերայ թագաւորին. և եղեալ սուրբն Գրիգոր զհինգ օր անսուաղ պահելով, և այլ ևս վաթսուն օր

[1] Հեփթաղք կոչին և Թետալք կամ Թետաղացիք, և 'ի Բիւզանդացւոց՝ Սպիտակ Հունք, ազգակից սոցին գոլով, բնակեալք 'ի Հիւսիսակողմն աշխարհին Պարթևաց. բայց քննութեան ուրումն Դիպեղաց են տոհմն:

[2] Ճենքս ոչ են Զինք, այլ տոհմ կովկասեան 'ի սահմանս Դարբանտայ:

վարդապետելով, ազատէ զաշխարհս 'ի դիւապաշտութենէ. և յեօթնեւտասներորդ ամին Տրդատայ քահանայանայ 'ի Տէր:

ԺԸ. Ցուլիոս կայսր թագաւորեալ ամս չորս և ամիսս եօթն, սպանանէ զնա ներքինի մի ծածուկ, և այրեաց հրով[1]. 'ի սմանէ կոչեցան Կայսերք՝ Հռոմայ թագաւորքն, վասն յաջողելոյն սմա: Աւգոստոս՝ ամս յիսուն և վեց. սա 'ի սպանանելն զԱնտոնինոս և յառնուլն զԵգիպտոս և զԱսորիա, Սեբաստոս կոչեցաւ, և Հոկտաւիոս՝ որ է յաղթող և բախտամեծ: Ի սորա քառասներորդ ամին ծնաւ Տէրն: Տիբերիոս, ամս քսան և երկու: Ի սորա հնգետասներորդ[2] ամին տէրն մեր Աստուածն Յիսուս մկրտեցաւ: Գայիոս ամս չորս. սա աստուած ետ անուանել զինքն, և սպան զնա Աստուած: Կղոդիոս, ամս երեքտասան և ամիսս ինն: Սորա կինն և որդիքն հաւատացին 'ի Քրիստոս, և զտին զիաչն Տեառն[3]: Ներոն, ամս երեքտասան. սա կոտորեաց զտուրբ առաքեալսն: Վեսպիանոս, ամս տասն: Տիտոս որդի նորա, ամս երկու. որ առ զԵրուսաղէմ: Դոմետիանոս, եղբայր Տիտոսի, ամս հնգետասան. սա առաքեաց զՅովհաննէս 'ի Պատմոս: Ներուաս, ամ մի. սա դարձոյց զՅովհաննէս յԱսիա: Տրայինոս, ամս իններեւտասն, որ սպան զԻգնատիոս: Ադրիանոս, ամս քսան և մի. սա շինեաց յԵրուսաղէմ 'ի ձեռն Ակիւղասայ աներոյ իւրոյ: Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւն Բարեպաշտ՝ որդւովքն, ամս քսան և երկու: Աւրեղիոս, ամս իններեւտասն. Կոմիդոս, ամս երեքտասան. Պերտինաքս, ամս վեց. Սեվերոս, ամս ութեւտասն. Անտոնինոս որդի Սեվերեայ, ամս չորս. Աղեքսանդրոս Մամէի, ամս երեքտասան. Մաքսիմոս, ամս երեք. Գորդիանոս՝ ամս վեց. զսմանէ ասեն հաւատացեալ 'ի Տէր: Փիլիպպոս ամս վեց. սա աջակցեաց մերում Խոսրովու. Դեկոս, ամ մի. Գալլոս, ամս երիս. Վալերիոս, ամս եօթնեւտասն. Կղոդէոս, ամ մի: Աւրեղիոս, ամս եօթն: Տակիտոս, ամիսս վեց. սա վրէժխնդիր եղև մահուանն Խոսրովու և սպանաւ: Պոռբաս, ամս վեց. ոմանք ասեն թէ սա պա-

[1] Զարմանք են աշխարհալուր սպանման Ց. Կեսարու անծանօթանալ 'ի պատմչէն:

[2] ՕՕ. յեօթեւտասներորդ:

[3] Կղոդեայ կինն Պատրոնիկէ կոչի 'ի պատմութեան զիւտի խաչին, որ զտանի առ մեզ թարգմանեալ 'ի նախնեաց, այլ ընդ անվաւերս դասի:

կեաց զՏրդատ[1]: Կարոս հանդերձ որդւովքն, ամս երկու: Դիոկղետիանոս, և Մաքսիմիանոս, ամս իններեւտասն[2]:

Յերրորդ ամին սորա պսակեալ Տրդատայ զայ 'ի Հայս, և զտանէ զիշխանն Օտա զի պահեալ էր զզանձն արքունի, և զքոյր նորա Խոսրովիդուխտ յամուրն յԱնի. և յոլովք 'ի նախարարացն Հայոց ընդ առաջ գային նմա: Ի հնգետասներորդ[3] ամին Տրդատայ՝ սուրբն Գրիգոր նստի յաթոռ սրբոյն Թադէոսի առաքելոյն, 'ի Ղևոնդէ 'ի Կեսարիոյ պատրիարքէն ձեռնադրեալ. բերելով ընդ իւր զնշխարս սուրբ Կարապետին Յովհաննու, զոր Յովհաննէս 'ի դառնալն 'ի Պատմայ և 'ի գնալ յԵրուսաղէմ ած յԵփեսոս, և յաւուրս Դեկոսի Փերմելիանոս երեր 'ի Կեսարիա. և հայցեաց սուրբն Գրիգոր, և ոչ կամէր տալ, մինչև ա՛ռ հրաման 'ի հրեշտակէն օրբոյ սուրբն Ղևոնդ, որ և ետ ապա երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա հայրապետն Հռոմայ, և զնշխարս սրբոյն Աթանագինեայ, զոր ասեն թէ եղբայր էր Մարիամու ամուսնոյ սրբոյն Գրիգորի: Զոր բերեալ սերմանէր յերկիրս Հայոց, զհասարակն յԱչտիշատ պահելով, 'ի տեղիս Դեմեթրեայ և Գիսանեայ, երկուց եղբարց Հնդկաց իշխանաց, որք եկին առ Վաղարշակ արքայ, և զկնի հնգետասան ամի սպանան 'ի տեղւոջն, որոց որդիքն ժառանգեցին զՏարօն. և էին զիսաւորք և զեռ ևս կերպարանին ոմանք՝ ծամս պահելով. զոր մի՛ ոք տացէ թոյլ[4]: Յորում աւուրս հաւատաց 'ի Տէր մեծն Կոստանդիանոս սպանիացի, որ թագաւորեաց ամս երեսուն և չորս, կալեալ զամենայն Եւրոպիա և զՄիջերկրայս, և զՄիջագետս. զոր լուեալ մերն Տրդատ և սուրբն Գրիգոր, չոգան առ նա եօթանասուն հազար հեծելօք, և եղեն դաշնադիրք միմեանց. և լուաւ սուրբն Կոստանդիանոս 'ի բերանոյն Գրիգորի զանօրէնութիւնն Քրիստոսի ոճով. և հրաման եհան ընդ ամենայն Իտալիա՝ նաւակատիս առնել զալաստեան նոցա զենլեօք, ասելով՝ եթէ լիցուք խնդակից երկ-

[1] Պոռբոս նախ դաշն հաշտութեան եդ ընդ Պարսք, ապա մարտ, և յայնժամ հաւաստի պսակիլն Տրդատայ՝ որ ընդ օգնական զնդին Հոռոմոց զինուորէր, այլ ոչ յաջողէ նմա թագաւորել զայն նուազ:

[2] Պակասեն 'ի կարգէ կայսերացդ երիր մասամբ, և թիւ ամաց իշխանութեան ոմանց ոչ է ուղիղ:

[3] Ստուգիւ յեօթնեւտասներորդում ամին:

[4] Զայս բան ասէ Զենոբ Գլակ վասն իւրոյ ժամանակին:

նային զօրացն։ Եւ Հրամայեաց սուրբն Գրիգոր աղ մատուցանել, օրհնեաց և առաքեաց յաշխարհն ամենայն, զի առանց այնր մի՛ զենցեն անասուն. զի յինչ որ ոչ խառնի, ասէ, քահանայական օրհնութիւնն՝ 'ի կռապաշտութիւն հասանէ[1]. զոր Հրեայքն լուանային և ապա ուտէին. և ասէ սուրբն Գրիգոր, եթէ որոքիք են նոցա՝ որ զթլփատութիւնն յանթլփատութիւն դարձուցանէին։ Եղին երկու արքայքն և երկու պապքն՝ Գրիգոր և Սեղբեստրոս, դաշն ուխտի կեալ և մեռանել 'ի միմեանց վերայ. զգիր ուխտին, ասեն, 'ի գրելն թացին յահաւոր խորհուրդն[2]։ Եւ 'ի դառնալն յարևմտից մեծացն այնոցիկ, լցեալ էին հիւսիսականքն զկոզմն Աղուանից, 'ի բանս Շապհոյ Պարսից արքայի. և նահապետ ազգին Սզկունեաց ապստամբեալ՝ մտեալ էր յամուրն Ուղկան, զոր երթեալ Մամգունայ ճենացւոյ՝ կտրեալ զգլուխն առաքէր առ Տրդատ, և նա տայր նմա զգաւառն, և յանուն իւր կոչէր տուն Մամիկոնեան։ Եւ հակայն Տրդատէս հարկանէր զհիւսիսականսն 'ի Գարգարացւոց գաւառին, ուր և սպան իսկ զԲասլացն արքայ զճոպանաձիգ հսկայն։

Յերեսներորդ ամի լուսաւորչութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ 'ի Կեսարիա ձեռնադրել, վասն զառաջին ձեռնադրութիւնն անդ առնելոյ Թադէոսի առաքելոյն և արկանելոյն հիմունս եկեղեցւոյ. և անուն եպիսկոպոսապետին՝ զոր արար անդ սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչիւր։

Եւ յորժամ եղև Նիկիոյ սինհոդոսն, և Արիստակէս դառնայր կանոնական սահմանաւ, սուրբ պատրիարքն Գրիգոր երթեալ 'ի Տարօն, առնէր չորս ամիս առ Անտոն և Կրօնիդէս։ Որք և ասացին ցնա, եթէ ծածկեա զքեզ յառաւել փառացդ՝ մօտ 'ի ծերութիւնդ, որպէս զմեծն Մովսէս, զի մի պաշտեսցեն զոսկերս քո նորադարձ ժողովուրդդ, և կամ գայթակղեսցին 'ի մեռանելն քո տկարամիտ կարծեօք։ Զոր և արար իսկ. զի գնաց անտի յայրն Մանեայ. և կատարեցաւ 'ի լեառնն, յեցեալ 'ի գաւազանն. զոր գտեալ հովուաց թաղեցին, ոչ գիտելով զոմն. զոր յետոյ իմացեալ մեծարեցաւ տեղին։ Ասեն թէ յոր-

[1] 00. Համանէ։

[2] Առ բազմերախտ հայրս մեր Լուսաւորիչ՝ տարապայման մեծարանք ոմանց յորդւոցն՝ զայսպիսի բարրեցին բանս, որոց նախ. օրինակ է Դաշանցն անուանեալ թուղթ. ոչ եթէ Դաշինքն՝ այլ բանքն անհեղեղք երկայնականք են և անընդունակք։

ժամ թագաւորն Զենոն խնդրէր զնչխարն, 'ի տեղեան յայտնեցաւ ճգնաւորի ումեմն, զի տարցէ զնա գաղտ և ծածկեսցէ 'ի ներքոյ հիման եկեղեցւոյն Թորդանայ, զոր ես, ասէ, շինեցի. և կայ անդէն անյայտ. և զոր ետուն կայսերն՝ ասեն, Արշարունեաց եպիսկոպոս էր Գրիգորիս անուն, և յանուն նորա մեծարեցաւ, ուր և գտանի մասն ինչ. այլ և նա այր առաքինի էր յոյժ և բարի[1]։

ԺԹ. Իսկ սուրբն Կոստանդիանոս եբարձ զՄաքսիմիանոս ամպարիշտն և զՄաքսինտէս, և զՄաքսիմոս, և զԼիկիանոս առնօրէն. որ եհան հարիւրապետ զոմն իւրով գնդաւն 'ի գաւառն Կապուտակէք, և 'ի թեմն Թեպախունէք և Անատոլիկեայք, և Խարսանէք և Արամենակք և Դաշիմոն, չարչարել զորս գտցէ քրիստոնեայս։ Յորմէ խրտուցեալք փախեան 'ի կողմանս Սեբաստիոյ, ոմանք 'ի Մելեսիտն, որ է ամրոց 'ի լեռնակողմն, և այլք 'ի Տախարատն լեառնն. որք բռնութեամբ արտաքս ածեալ կոտորեցան յԵկեղեցաձորն կոչեցեալ, որ և պատուի մինչև ցայսօր։ Իսկ սուրբ քառասունքն երթեալ թաքեան յայրին՝ որ կայ 'ի վերայ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քաջ Վահանայ[2]. ուր կառուցին խաչ, և գրեցին զիւրաքանչիւր անուանս 'ի քարին. զոր գիտեցեալ պատմեցին Լիկիանեայ. և հրամա-

[1] Տարաձայնութիւն մեծ է առ պատմիչս վասն գիւտի և փոխադրութեան նշխարաց Լուսաւորչին. որ զի յիշի և յառաջ քան զաւուրս Զենոնի, ապա երկրորդ գիւտ է առ Նոսան, և հաւանելի է փոխադրութիւն մեծի մասին 'ի Կոստանդնուպօլիս, ուստի դարձեալ մասն մի բերաւ 'ի Հայս, և մասն մի յետ ժամանակաց յԻտալիա. իսկ զոր հեղինակդ յիշէ Գրիգորիս Արշարունեաց եպիսկոպոս՝ այդ անճահ է, զի առաջին եպիսկոպոս Գրիգորիս անուն յԱրշարունին՝ 200 ամաւ կրտեր է քան զԶենոն։ Անհաւատի է և այլոց զրուցածն թէ Գրիգորիսի թոռին Լուսաւորչին էին տարեալ նշխարքն 'ի Յոյնս։

[2] Կապուտակէք ուղղագոյն ևս կոչումն է Կապպադովկիոյ։- Թեպախունեաց թեմն 'ի սահմանս Կապպադովկիոյ, ճշգրտիւ ոչ է յայտնի յայժմուս։- Անատոլիկէք նշանակէ զԱրևելեան թեմն 'ի Փոքր Հայս, որոյ սահմանք փոփոխեցան ըստ ժամանակս ժամանակս։- Արամենակք ըստ Բիւզանդացւոց թեմագրութեան մասն Փոքր Հայոց՝ որում զօրավարք Հայք կամ Յոյնք 'ի գրանէ ինքնակալին վերակացուք կային։- Խարսանէք թեմ 'ի սահմանս Մելիտինոյ և Հայոց Մեծաց։- Դաշիմոն կամ Դաշիմոն կողմանք Եւդոկիոյ (Թոքատ)։- Տախարատուս, պարտի լինել Մաքալատուս, յոր անուն քաղաք յիշի 'ի հարաւոյ մտից Սեբաստիոյ։- Վիմամէջք ուր թաքեան Քառասունքն՝ ամուր և ամայի վայրք էին և Քաջ Վահանայ ամրոց կոչէին յաւուրս Ուխտանիսի։

նաև նորա եկեալ Հանին յայրէ անտի, 'ի Հնդեստասան արեգ ամսոյ. զոր Ուխթանէս[1] ասէն կարգեաց՝ որ է սկիզբն Հանդիսի նոցա. և կատարումն 'ի մարտի ինն:

Յետ այսորիկ խաղաղութիւն խնդրեաց Շապուհ արքայ Պարսից 'ի Կոստանդեայ, նեղեալ 'ի Տրդատայ արքայէն. նորա հաւանեալ խնդրեաց 'ի նմանէ զթագն Դաւթի մարգարէին, զոր առ Յովաբ յորդւոցն Ամմոնայ, 'ի տանէ Մեղքոմայ, և եդ 'ի գլուխն թագաւորին Դաւթի. որ անկաւ 'ի Քաղդէացիսն, և ապա 'ի Կիւրոս, և 'ի Դարեհէ յԱղեքսանդրոս, որով պսակեցան Մակեդոնացիք մինչև ցԱնտիոքոս՝ զոր սպան պարթևն Արշակ և էառ 'ի նմանէ. և եկն մինչև ցՇապուհ. յորմէ խնդրեաց կայսրն, զի օրինակաւն արասցէ իւր թագ, և զնորայն առ նա դարձուցէ: Եւ յորժամ ետ կազմել, եդ զերկոսին 'ի վերայ սեղանոյ, և ասաց ծառայիցն Շապհոյ առնուլ զիւրեանցն. և նուցա աչք կալեալ՝ առին զնորն և գնացին, քանզի խնդրեաց յԱստուծոյ Կոստանդիանոս զի առ նա մնասցէ սրբոյն Դաւթի յիշատակն:

Ի. Իսկ սուրբն Տրդատ կոչեցեալն յաւազանէն Յովհաննէս, յաղագս պարկեշտ կենացն և չաբատեաց բարուցն՝ դեղակուր եղեալ մեռանի յանաստուածից ոմանց, թագաւորեալ ամս յիսուն և վեց: Իսկ զսուրբն Հռիստակէս սպան Արքեղայոս իշխանն չորրորդ Հայոց 'ի ճանապարհին Մոփաց, յաղագս միշտ յանդիմանելոյն զնա 'ի գործս իւր չարս: Եւ յաջորդէ զաթոռն Վրթանէս եղբայր նորա, մինչ կենդանին էր Տրդատ 'ի յիսներորդ չորրորդ ամի արքայութեան նորա. և զՀրիստակէս տարեալ եդին 'ի Թորդան առ Հօրն:

Իսկ զկնի մահուանն Տրդատայ՝ երկրորդ Սանատրուկ արշակունին, զոր կացուցեալ էր 'ի Փայտակարան, թագ եդեալ՝ խաբէէր տիրել բոլոր Հայոց. որ և սպանանել ետ զմանուկն Գրիգորիս բարբարոս ազգին 'ի Վատնեան դաշտին, զորոյ զմարմինն քերեալ յԱմաբաս Հանգուցին: Լուեալ զայս մեծ իշխանն Աղձնեաց Բակուր, ձեռն ետ յՈրմիզդ Պարսից արքայ, և խորհէր զԱնանատրկոյն. զոր իմացեալ նախարարքն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս, և առաքեցին երկուս 'ի գլխաւորացն առ Կոստանդին որդի մեծին Կոստանդիանոսի, որ զկնի

[1] Այս է՝ եպիսկոպոսն Մծբնայոյ և պատմիչն, յորմէ առնու մեր և յիշէ զդէպքս:

մահուան Հօրն թագաւորեաց ամս քսան և չորս, զի օգնեսցէ Հայոց, և թագ դիցեն Խոսրովու որդւոյն Տրդատայ: Զոր ընկալեալ զխնդիրն առաքէ զԱնտիոքոս զօրագլուխն. և թագ եդեալ Խոսրովու, խաղան 'ի վերայ Սանատրկոյ. որ իբրև լուաւ, փախեաւ 'ի Պարսս. և յաւարի առեալ զաշխարհն զօրացն մերոց[1] դարձան: Եւ Մանաճիր Ռշտունի գնացեալ 'ի վերայ Բակուրայ՝ սատակէ զնա, և առեալ գերի բազում 'ի կողմանցն Մծբնայ՝ դառնայ. ընդ որս և զեօթն սարկաւագունս սրբոյն Յակոբայ. և զհետ եկեալ սրբոյն և խնդրեալ. ոչ տայր, և նորա կամեցեալ գնալ առ արքայ, գետընկէց առնէր. և սրբոյն իմացեալ դառնայր 'ի տեղի իւր՝ անիծանելով զՄանաճիր, և զաշխարհն իւր. յորմէ չարաչար մահուամբ տատակի, և զաւառն անպտուղ լինի՝ մինչև որդի Մանաճրի արժանաւոր ապաշխարութիւն ցուցեալ, և բերեալ հող զկնի մահուանն 'ի գերեզմանէ սրբոյն, օրհնի երկիրն հաշտութեամբն Աստուծոյ, բարեխոսութեամբ սրբոյն Յակոբայ:

ԻԱ. Իսկ մեծն Կոստանդիանոս ունէր և եղբայր մի Դաղմատիոս կոչեցեալ, որոյ էին երկու որդիք, Գալոս և Յուլիանոս, և երեք որդիս, աւագն Կոստանդ՝ անուամբ իւրոյ Հօրն, որում ետ զԿոստանդնուպոլիս 'ի կտակն՝ զոր գրեաց. և միջինն իւր անուամբն, որում ետ զԱնտիոք աթոռ, և կրտսերոյն զՀռոմ. և խաբեաց միջնեկն[2] զկտակապահն, և առ զԿոստանդնուպոլիս, խոստովանելով պահել զաղանդն նորա, զի արիոսեան էր. և կալաւ աւագն զԱնտիոք, և չոգաւ 'ի վերայ կրտսերոյն վասն Հռոմայ. և ել ընդդէմ նորա հօրեղբայրն Դաղմատիոս, և սպան զնա: Եւ կրտսերն Կոստաս սպան զնա վասն եղբօրն, և որդիքն փախեան առ միջինն. և 'ի վեցերորդ ամին Կոստասայ բռնացաւ Մագնիտիս, յափշտակեաց զԻտալիա և զԱֆրիկէ, և թագ եդ 'ի Սերմի[3] և յայն ապաստան չարք ոմանք, սպանին զԿոստաս և զեղբօրորդի նորա: Եւ լուեալ միջին եղբայրն զայ սպանանէ զՄագնիտ և լինի ինքնակալ, և կարգէ զԳալոս կեսար յԱնտիոք, և զՅուլիանոս յուսումն առաքէ յԱթէնս. և զկնի այնորիկ ապստամբէ Գալոս և մեռանի, և Յուլիանոս ապրի ա-

[1] Հին Օ. Հայոց:

[2] Հինն միջնակն:

[3] Սերմի, Սիրմիոն քաղաք Պաննոնիոյ, առ Սաւա գետով, որոյ աւերակք միայն մնան առ Միդրովից ասանաւ:

զաչանօք թագուհւոյն. զոր կեսար կարգէ յարևմտեայ կողմանն, տալով նմա զքոյր իւր զԱլինէ 'ի կնութիւն, և ինքն չոգաւ յԱնտիոք: Իսկ Ցուլիանոս յաղթեալ բարբարոսացն, և թագ եդեալ գայ 'ի Կոստանդնուպօլիս. և ելանէ ընդդէմ նորա Կոստանդիոս, առեալ մկրտութիւն 'ի Զոյիոսէ, և մեռանի 'ի մէջ Կիւլիկիոյ և Սորիայ. ասեն զդՋացաւ մօտ 'ի վախճանն, և ուղղափառ հաւատով կատարեցաւ 'ի տէր: Զկնի նորա Ցուլիանոս, ամս երկու և ամիսս ութ. և յետ նորա Ցուլիանոս, ամ մի. զոր զովէ Սոկրատ, բայց ոմանք ասեն զնա աղանդոմն Արիոսի, և վրիժառու ուղղափառաց. վասն որոյ և խեղդացաւն ասեն: Յետ որոյ Վաղէս, ամս չորեքտասան, որ է արիանոս: Եւ զկնի քառասուն աւուր, եղբայր Վաղենտիանոս կցորդէ նմա ամս երկոտասան, և մեռանի վասն ուժգին բարբառելոյն խրոխտանօք 'ի վերայ բարբարոսացն: Իսկ Վաղէս՝ որ աքսորեաց զմերն Ներսէս, շանթահար եղեալ սատակի յԱդրիանուպօլիս հրաւիրանաւ գեհենոյն:

ԻԲ. Իսկ մերն Խոսրով յերկրորդ ամի Որմզդի Պարսից արքային, և յութերորդ ամին Կոստանդեայ թագաւորեալ 'ի վերայ հայրենեացն ամս ինն, շինէ զԴուին, որ ասի քլուր. անդ ածելով զքնակիչսն Արտաշատու, իւրեանց իսկ կամօք, վասն հրախառն օդոյն. դնէ զարքունիսսն իւր անդ: Յաւուրս սորա միաբանեալ կողմն ծմակային[1], բիւրք երեք, ասպատակեցին յԱյրարատ. ուր և առաքինացաւ Վահան ամատունի, սատակելով զզօրապետն նոցա, զվառեալն կճաակուռ[2] թաղեաւ, և յաղթահարեալ զօրքն դարձան 'ի փախուստ: Բայց զօրավարն Վաչէ անկեալ 'ի պատերազմին, յիշել հրամայեաց զանուն նորա 'ի պատարագին սուրբն Վրթանէս: Կատարեալ զկեանս Խոսրովու, թաղի առ հօր իւրում 'ի Կամախ: Եւ ինքնակալն Կոստանդիոս յեօթնևտասներորդ ամին իւրում դնէ թագ Տիրանայ որդւոյ նորա, և առաքէ 'ի Հայս. որ ոչ գնայր ընդ շաւիղս հարց իւրոց բարեգործաց: Ի յերրորդ ամին սորա փոխի յաշխարհէն սուրբ պատրիարքն Վրթանէս, և դնի 'ի Թորդան. և առնու զաթոռն սուրբն Ցուսիկ որդի նորա, ամս վեց. որ և սաստիկ յանդիմանէր զթագաւորն վասն զազիր գործոց նորա: Յորում աւուր բերաւ պատկերն Ցուլիանոսի առ Տիրան. և նա

[1] Կողմն ծմակային՝ հիւսիսականք է, Կովկասային ազգաց երկիր:
[2] Հինն կճակուռ:

գնել կամեցաւ յեկեղեցւոջն 'ի գաւառին Ծոփաց. և նուիրն Ցուսիկ կոխեաց և մանրեաց զնա առ սեմօքն: Եւ սրտառեալ թագաւորն, հրամայեաց հարկանել զնա ջլատեօք մինչև յանդումն հոգւոյն. զոր տարեալ եդին առ հօր իւրում: Եւ եկեալ սուրբն Դանիէլ ծերունի քորեպիսկոպոս, որ լեալ էր աշակերտ սրբոյն Գրիգորի, անէծ զՏիրան. ընդ որ զչարեալ թագաւորն, խեղդամահ ետ առնել զնա, որ թագեցաւ յիւր մենարանին, որ ասի Հացեաց դրախտ. և առնու զաթոռն Փառներսեհ յԱշտիշատու, այր լաւ, ամս չորս: Ցորում ժամանակի եկն զօրավարն Պարսից մեծ ամբոխիւ, և խաբկանօք առ ինքն կոչեաց զՏիրան, և խաւարեցոյց զաչս նորա 'ի գաւառին Ապահունեաց 'ի գեօղն՝ որ Արծուղն կոչեցաւ 'ի պատահմանէ գործոյն: Եւ ետ իրաւունս Աստուծոյ, ասելով. Զի զերկու լուսաւորս խաւարեցուցի, վասն այնորիկ խաւարեցան երկու աչքս իմ:

Զսուրբն Ցուսիկ միանգամ ասեն գիտացեալ զկին իւր, և յայնմանէ ծնեալ նորա երկու որդիս երկուորեակս, այսինքն 'ի միում յարգանդի, Պապ և Աթանագինէս. որք 'ի սարկաւագութիւն կոչեցեալք, և նոցա աղտեղութեան տուեալ զանձինս, շանթակէզք եղեն 'ի միում աւուր. մնացեալ որդի մի Աթանագինէի Ներսէս անուն, ետուն յուսումն 'ի Կեսարիա: Իսկ 'ի թագաւորելն Արշակայ, որդւոյն Տիրանայ, եկն առ նա, և կայր նմա 'ի հպատակութեան, կրելով զսուսերն պողոմատիկ առաջի նորա. զոր յոլով թախանձանօք ածեալ 'ի հաւանութիւն, և առաքեն 'ի Կեսարիա՝ առնուլ զաթոռ սրբոյն Թադէի և Գրիգորի. զոր սուրբ Հոգին հրաշագործեաց իմաստնակերպ 'ի վերայ նորա 'ի զարմացումն տեսողացն: Եւ եկեալ բարիոք կարգաւորէր զաշխարհս մեր, շինելով վանորեայս և օտարանոցս և հիւրանոցս և հիւանդանոցն և տունս ուրկաց. բառնալով զխակութիւն և զանողորմութիւն, և զկոծս 'ի վերայ մեռելոց, և զազգակցացն խնամութիւնս. և էր տեսանել այնուհետև զաշխարհս մեր իբրև զվերինն Երուսաղէմ լի ամենայն բարեձևութեամբ: Զոր տեսեալ թագաւորին և նախարարացն, և իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ, անուանեն զնա պատրիարգ. զի առ մեզ կան, ասեն, սիւնքն անշարժեալք՝ Բարդուղիմէոս և Թադէոս, և սուրբ Լուսաւորիչն՝ որ պապն կոչեցաւ 'ի Հռոմ, հաւասար այնմ որ նստի յաթոռն Պետրոսի առաքե-

լոյն[1]: Զի զառաջինն չորս միայն էին, յԱնտիոք՝ Մատթէոսին, 'ի Հռոմ՝ Ղուկայն, յԵփեսոս՝ Յովհաննուն, յԱղեքսանդր՝ Մարկոսին. և յաւուրս որդւոցն մեծին Կոստանդիանոսի, Կոստանդնուպոլսացիք և Երուսաղեմացիք համարձակեալ՝ պատրիարգունք կոչեցին զառաջնորդս իւրեանց, զԿոստանդնուպոլիս՝ վասն զՅոհաննուն անդ փոխելոյն, և զԵրուսաղէմ վասն անօրինականացն. և մեք, ասեն, վստահասցուք 'ի մեծ պարծանս մեր: Իսկ զՍեբաստիայ, և զՄելտենոյ, և զՄարտիրոսաց քաղաքի զեպիսկոպոսն՝ մետրապոլիտս կոչեցին. և յօրինեցին զինն դասուցն երկնից զիսորհուրդն 'ի Հայս. այսինքն պատրիարգ, մետրապոլիտ, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէս սարկաւագ, դպրապետ, կրօնաւոր[2], ժողովուրդք:

ԻԴ. Յորում աւուրս նշկահեալ Արշակայ զՎաղենտիանոս կայսր, և նորա բարկացեալ սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր 'ի պատանդի: Եւ գնացեալ մեծին Ներսեսի, պատուի 'ի կայսերէ, շնորհաւորեալ նմա զանուն պատրիարգութեանն[3], և տուեալ ցնա զորդի սպանելոյն, և պարգևս բազումս՝ դարձուցանէ 'ի Հայս: Իսկ զկնի մահուանն Վաղենտիանու, չարափառն Վաղէս լուծեալ զխաղաղութիւնն ընդ Հայս՝ խնդրէ զանձն Արշակայ 'ի ձեռն զօրավարին Թէոդոսի: Եւ սուրբ պատրիարքն առեալ զՊապ որդի Արշակայ գնաց առ Թէոդոս, և նովաւ[4] 'ի դուռ կայսեր. և տեսեալ զթագաւորն, քարոզէ նմա ուղղափառութիւն, և 'ի չհաւանեալն՝ մեռանէր որդի նորա: Եւ բարկացեալ աքսորէ զնա 'ի կղզի անբնակ եօթանասուն ոգւով զինն ամիս. որք չնորհօքն Աստուծոյ կերակրեալ լինէին 'ի շաբաթն և 'ի կիւրակէսն ձկամբք, զորս ընկենոյր ալիք ջուրցն հանդերձ փայտիւ և հրով: Եւ որպէս ասեն՝ սպանեալ զՎաղէս Գէորգիոս վկայն, և հրկէզ լեալ մարմինն. և առնու զթագն մեծն Թէոդոս. և նա դարձուցանէ զսուրբն 'ի

[1] Ոչ Արշակայ և ոչ նախարարաց նորին են բանքդ, այլ համախոհից առնուանեալ Դաշանց Թղթոյն. իսկ ինքնագլխութիւն կաթուղիկոսաց Հայոց յետ մահուան Ս. Ներսիսի, մանաւանդ յետ փոխման մեծին Սահակայ և ժողովոյն Բաղկեղոնի եղև:

[2] Նոր Օ. [illegible]:

[3] Հեղինակիդ է խմբագրած և ոչ կայսերն:

[4] Նոր Օ. [illegible]:

կղզւոյն. և առնէ նովաւ ժողով ընդդէմ հոգեմարտին հարիւր և յիսուն եպիսկոպոսաց՝ նզովելով զՄակեդոն, և զամենայն խմորեալս 'ի նմանէ. ևս հաստատեալ պատրիարգն Ներսէս վկայութեամբ հարիւր և յիսուն եպիսկոպոսացն[1], դառնայ 'ի Հայս: Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբօրորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա 'ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, և ինքն գնաց 'ի Յոյնս, փոխանորդ իւր թողեալ զԽադ եպիսկոպոս Բագրևանդայ, որոյ շտեմարանքն աղբերացան, որպէս Եղիայիւ կնոջն այրոյ:

ԻԴ. Ընդ այն ժամանակս Շապուհ արքայն Պարսից զայ յԱտրպատական, և առ ինքն կոչէ զԱրշակ, կապէ զնա և տայ տանել յԱնուշն կոչեցեալ դղեակ, ուր և մեռաւ իսկ անձին արարեալ սրով: Իսկ սուրբն Ներսէս լուեալ զայս՝ խնդրէ 'ի կայսէրէ թագաւորեցուցանել զՊապ որդի Արշակայ, զոր և արար իսկ. առաքէ զօրու ծանու 'ի Հայս պատրիարգաւն Ներսիսիւ որք եկեալ զտին զաշխարհս միապետեալ Մեհրուժանայ արծրունւոյ ուրացողին զԲրիստոս, պարսկական զօրօք լցեալ. ընդ որս մարտուցեալ սպառեն զՊարսիկսն աղօթիւք սրբոյն, և զՄեհրուժան կալեալ Սմբատայ բագրատունւոյ, հրացեալ շանթիւք պսակէ զնա, նախատանօք սատակեալ. և հաստատեցաւ երկիրս ընդ ձեռամբ Պապայ ամս եօթն: Յորում ժամանակի չինեաց Անատոլիս զօրագլուխն Յունաց յանուն կայսերն զԹէոդուպօլիս[2]: Բայց Պապ յանդիմանեալ 'ի Ներսիսէ յաղագս զազիր գործոցն, տայ նմա դեղ մահու 'ի գեօղն Խախ յԵկեղեաց գաւառին զանիլաբար, և թաղեցաւ 'ի Թիլն, որ կայաւ զաթոռն ամս երեսուն և չորս[3]: Եւ կացոյց Պապ 'ի տեղի նորա զՀունակ ոմն սակաւ աւուրս, և ապա զՇահակ 'ի գաւառէն Ապահունեաց, առանց մետրապոլտին Կեսարու, ըստ օրինի պատրիարգաց, որ պաշտեաց զաթոռն ամս չորս:

Իսկ զօրավարին Անատոլեայ կալեալ զՊապ խաբանօք և կապեալ զնա յերկաթս, առաքէ առ Թէոդոս, որ չարար զնա

[1] Եւ այս գիւտ ըստ վերնոյդ:

[2] Շինութիւն Թէոդուպօլսեայ, որ է Կարնոյ քաղաք, անագան եղև յաւուրս Փոքուն Թէոդոսի:

[3] Թերևս 'ի նահատակութենէն սրբոյ Յուսկան մինչև ցաթոռակալութիւն մեծին Սահակայ հաշուիցին երեսուն և չորք ամքդ. բայց սուրբն Ներսէս ոչ աւելի քան զտասն ամ եկաց քահանայապետ:

արժանի տեսանելոյ, այլ հրամայեաց զնա ընկենուլ 'ի ծովն[1]: Եւ Թագաւորեցուցանէ Հայոց զՎարազդատ ոմն արշակունի ամս չորս: Յերկրորդ ամին սորա ննջէ Շահակ, և յաջորդէ զնա Զաւէն եղբայր նորա, լաւ, իբրև զնա, զամս չորս: Իսկ Վարազդատ որսացեալ վասն սպանանելոյն զքաջն Մուշեղ, հալածի յազգէն Մամիկոնէից, և Թէոդոս ազգարէ զնա 'ի Թուլիս կղզի: Եւ Թագաւորեցուցանէ Հայոց զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ: Ի յերրորդ ամին Արշակայ ննջէ Զաւէն. և առնու զաթոռն Ասպուրակէս եղբայր նոցունց և առաքինակեաց, ամս հինգ:

Եւ բաժանեն զաշխարհս Շապուհ Պարսից և Արկադէոս որդին Թէոդոսի, սէր արարեալ ընդ միմեանս. Արշակ առնու յանձն զկողմն Ցունաց վասն հաւատակցութեանն. իսկ Վաղարշակ՝ որ ունէր զմասն Պարսից զարևելակողմն՝ մեռանի. և դնէ 'ի տեղի նորա Շապուհ զԽոսրով ոմն արշակունի, որ զկնի երից ամաց մերժի 'ի տէրութենէն 'ի քսութենէ գործակալաց աշխարհիս. այն որ նստոյց յաթոռ պատրիարգութեան զսուրբն Սահակ, որդի մեծին Ներսիսի, որ պաշտեաց զսուրբ աթոռն ամս յիսուն: Իսկ Թագաւորն Պարսից կացոյց 'ի տեղին Խոսրովու զՎռամշապուհ եղբայր նորին, ամս հնգետասան:

Իե. Ի հինգերորդ ամին սորա և յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու գիր առ Դանիելի Ասորւոյ գտեալ 'ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյս և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս 'ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զինդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա որպէս մեծին Մովսեսի 'ի լեառն Սինայ, և ասա 'ի լեառն Բալուայ[2], որպէս տակաւին ցուցանի դրոշմն

[1] Ոչ 'ի ծով ընկեցեալ այլ սակրով սպանեալ ասեն զՊապ հնագոյն պատմիչք:

[2] Աշակերտք Ս. Մեսրովպայ 'ի Սամոսացւոց քաղաքի, այսինքն 'ի Սամոս կղզւոջ ասեն լեալ զգիւտ հայկական տառիցս, զոր ոմանք Սոմոստացւոց քաղաք ընթեռնուն և կարծեն: Բալուայ գիւտդ անճահ է այլ թերևս ոչ անպատճառ, զի ոչ միայն աղօթարան և մատուռն Ս. Մեսրովպայ պատուի անդ 'ի գլուխ

աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիւք միշտ 'ի (Տաճկաց և քրիստոնէից[1]) բնակչաց տեղւոյն: Եւ զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ 'ի ժամանակս Լևոնի արքայի, զի գտաւ դրամ 'ի Կիլիկիա, հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ Թագաւորացն Հայկազանց[2]. զորոյ զթերութիւնն եղից նորս մեր Եզրաս, աստուածախառն շնորհօք լցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի և կարգաւորիչ: Որ և 'ի ձեռն աստուածատուր պարգևացն զճառագայթս սրբոյ Երրորդութեանն առեալ, մարգարէիւք և առաքելովք և աւետարանչօք և երկնային դասուք և ամենայն արդարոցն խմբիւք, գայր մտանէր 'ի Հայաստան աշխարհս, և զանձէր յեկեղեցիս մեր զանասելի գեղեցկութիւնս 'ի զարդ հոգւոց և մարմնոց, և 'ի պարծանս յաւիտենից, զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից: Քանզի ոչ ճարտարօք և ոչ միջնորդովք իմաստնացաք, և առաջնորդեցաք առ նա, այլ 'ի յերկնապարզ և յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման. և տեառն. և տեառն մերոյ և Աստուծոյ յիշատակն կենդանի է 'ի մատեանս մեր, զօրութիւն տալով և շնորհս, որք հաւատովն մատչին բանականապէս: Վասն որոյ փառք պատիւ և գոհութիւն տուողին և օրհնութիւն 'ի Տեառնէ ածողին առ մեզ, և պայծառութիւն յիշատակի անուան նորա 'ի գիրն կենաց, (Մեսրոպայ, որ է կանաչացեալ, այսինքն յարազուարճ և բերկրեալ[3], հօր մերում տեղի և յիշատակ ընդառաւել սուրբան, և մեզ աղօթիւք նորա ողորմութիւն և զթութիւն յԱստուծոյ 'ի համար աշակերտաց նորա, և հոգևոր որդւոց[4]):

Զուարճացեալ ապա սուրբ պատրիարքն Սահակ երկնառաք պարգևօքն, ընտրէ մանկունս առաքինազարդս, և առաքէ յազգս, բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից. զՅովսէփ և զՂևոնդ, զՅովհաննէս, զԱբրահամ, զԱրճան, զՄուշէ,

լերին՝ յորում բերդն Բալուայ, և յիշատակի անդաւին 'ի ԺԴ դարէ, այլ զի և անձաւի անդ լերինն՝ ուր հեղինակս ասէ զաստուածագիծ վէմն, գտաւ 'ի նորումս բևեռաքանդակ արձանագիր հին:

[1] () ըստ Հ. օրինակին:

[2] Ցանկալի գիւտ և հեռաքննելի, այլ և երկայնելի, զի աքդ ոչ ուրեք ճանաչի Հայաստան դրամ Թագաւորաց մերոց Հայկազանց և Արշակունեաց:

[3] Ի սեմական լեզուաց ստուգաբանելով, մեկնաբ բերկրեալ լսի յարաբացին:

[4] () Այսչափս չիք 'ի Բ. Ծ:

զԵզնիկ, զԿորիւն, և զայլս. ապա և զկնի սակաւուց զՄովսէս և զԴաւիթ և զԵղիշէ և զՄամբրէ՝ զեղբայր Մովսիսի: Զկնի ասցա և զԱրձան արծրունի և զԽոսրով և զՂազար պատմագիր. սոքօք թարգմանեցին զամենայն մատեանս 'ի ստոյգ օրինակաց սրբոյն Ղևոնդի: Նորոգեաց սուրբն Սահակ և զտաճար սրբոց Հռիփսիմեանցն, զաւերեալն 'ի Շապհոյ, և անյայտ եղեալ նշխարացն՝ խնդրեալ յԱստուծոյ՝ յայտնեցաւ նմա: Սա ետես զքառնալ թագաւորութեանն և զքահանայապետութեան յազգէն Պահլաւունեաց, և վերստին անդրէն նորոգել 'ի լրման աւուրց: Սորա էր դուստր միամօր[1], զոր տայ յամուսնութիւն Համազասպայ մամիկոնենոյ, յորմէ ծնաւ սուրբն Վարդան: Այլ աքանչելի այրն Աստուծոյ Մեսրոպ անցեալ 'ի Վիրս, առնէ և նոցա գիրս, 'ի ձեռն Ջաղելի ումեմն, որ աշակերտեցաւ նմա. և գնացեալ յԱղուանս, ստեղծու և նոցա գիր ըստ նոցա լեզուին, ձեռօք Բենիամինի՝ որ անտի աշակերտեցաւ նմա:

Ի2. Իսկ Վռամշապուհ բարիոք կատարեալ զկեանս իւր. և գնացեալ սուրբն Սահակ առ Յազկերտ, խնդրէ զնոսրով՝ որ կայր 'ի բանտի, և վերստին թագաւորեցուցանէ զնա, որ ոչ աւելի կացեալ քան զտարի մի՝ վախճանի: Եւ 'ի մեռանելն Յազկերտի, նստի յաթոռն Վռամ երկրորդն. որ և բազում չարիս խորհէր ածել 'ի վերայ Հայոց: Զոր իմացեալ սուրբն Սահակ՝ գնաց առ Յունօք, և առաքէ զսուրբն Մեսրոպ և զՎարդան թոռն իւր առ Թէոդոս որդի Արկադեայ. զոր խնդութեամբ ընկալեալ, կոչեն զՎարդան ստրատելատ, և զՄեսրովբ վարդապետաց վարդապետ, և դպրոցս հրամայեն կարգել Թէոդոս և պատրիարքն Ատտիկոս, և ոտիկս յարքունի տանէ կարգեն: Եւ դարձան եկին առ սուրբն Սահակ, և կատարեն զհրամանն:

Յետ այսորիկ առաքէ զՎարդան առ Վռամ խնդրել զհաշտութիւն, և թագաւորեցուցանել զԱրտաշիր, որդի Վռամշապհոյ, զոր և արարն իսկ: Իսկ Մովսէս ասէ թէ զկնի Խոսրովու թագաւորեցոյց Յազկերտ զՇապուհ զորդին իւր, ամս երեք. որ և 'ի համբաւ մահու հօրն գնացեալ, մեռաւ 'ի զօրացն. և ասեն, մնաց երկիրս անիշխան և չփոթ ամս մետասան. և ապա թագաւորեաց Արտաշիր, որ և ատեցեալ եղև 'ի նախարարացն վասն զազիր գործոցն. վասն որոյ աղաչեն զմեծն Սահակ ընկենուլ զնա. և 'ի չհաւանել նոցա՝ ինքեանք երթան 'ի դուռն

[1] Նոր Օ. մի յաւելու Մանաշ անուն, բայց նախնիք Սահականոյշ կոչեն զնա:

Վռամայ, կոչել տան զԱրտաշիր և յղել 'ի Խուժաստան: Եւ ընկեցեալ զսուրբն Սահակ, կարգեն 'ի տեղի նորա զՍուրմակ չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՝ հալածի. և դնեն զԲրքիշու ասորի, ամ մի. և ապա զՇմուէլ 'ի նոյն ցեղէ, ախցիփեխցք և վատավարք, յորոց տաղտկացեալ նախարարացն Հայոց՝ հալածեն, և աղաչեն Սահակ առնուլ զաթոռն. որոց ոչ հաւանէր, բայց 'ի վարդապետութենէ ոչ բնաւ դադարէր, այլ դիմեցուցանէր հոգևոր զառանցն զերկնաւոր աղբիւրն 'ի տուէ և 'ի գիշերի: Ոմանք զկնի Բրքիշոյ և Շմուելի ասեն առեալ Սուրմակայ յաթոռն ամս եօթն: Այլ սրբոյն Սահակայ արարեալ դոյզն ժամանակս 'ի զաւառին Բագրևանդայ, 'ի գեօղն Բլուր, կատարի առ Քրիստոս, և ամփոփի յԱշտիշատ, զկնի սատակմանն Վռամայ և տիրելոյն Յազկերտի որդւոյ նորա: Զկնի ապա վեցից ամսոց կատարի սուրբն Մեսրոպ 'ի Վաղարշապատ, և դնի 'ի յՕշական գեօղն, խաչանման լոյս երկնաւոր կալով 'ի վերայ դագաղացն, մինչև եղաւ 'ի գերեզմանի: Բայց զաթոռն տեղապահութեամբ խնամէր Յովսէփ աշակերտ Մեսրոբայ, 'ի Վայոց ձորոյ, 'ի գեղջէն Հողոցմանց. և ասեն Սուրմակն կատարէր զձեռնադրութիւն, մինչ կենդանին էր, զամս եօթն:

Ի3. Իսկ նախարարացն 'ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վարդան: Զայսու ժամանակօք դարձան 'ի թարգմանութենէ Ղևոնդ, Կորիւն և Արձան, որ դիպեցան 'ի ժողովն Եփեսոսի, զոր արար Թէոդոս 'ի մետասաներորդ[1] ամի թագաւորութեանն իւրում վասն Նեստորի չարի, և բերին անտի կանոնս գլուխս վեց:

Բայց գունդն Հայոց՝ էր զի հնազանդէին Պարսից, և էր զի դիմանային պատերազմաւ, յորժամ, վասն հաւատոց ոյժ հասանէր: Քանզի Շաւասպ արծրունի և Վնդոյ աւագ նախարարք ուրացեալք զհաւատս՝ չինեն 'ի Դուին մեհեան Որմզդի և տուն կրակի, և քրմապետ դնեն զԵրոյ զորդին Վնդոյի. զոր լուեալ սուրբն Վարդան, գայր իւրով գնդաւն, և սատակէր զՇաւասպ և զմարզպանն Մշկան փախստական առնէր, և զպիղծն Վնդոյ յատրուշանն հրոյ արկեալ այրէր, և զԵրոյ 'ի վերայ բազնին կախէր զփայտէ, և զտեղին չինէր եկեղեցի ա-

[1] Ոչ 'ի մետասաներորդի ամի այլ 'ի քսանևերեքն Թէոդոսի գումարեցաւ ժողովդ:

նուամբ սրբոյն Գրիգորի: Եւ զսուրբն Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն 'ի Շահապիվանս, ուր զտուգանաց կանոնն կարգեցին: Որ զկնի երկու ամաց եկեալ գունդ 'ի Պարսից, և ըմբռնեալ զնա և զՍահակ և զՂևոնդ և զայլսն, եղին 'ի բանտի, որպէս զիսրատտուա Վարդանայ, հեռագոյն որսացեալ 'ի յըմբռնել զսուրբսն. զոր և խնդութեամբ ընկալան զկապանսն վասն Քրիստոսի, և ոչ յօժարեցին հանել զնոսա մինչ ցժամանակն: Վասն որոյ 'ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց, դնեն զԳիւտ պատրիարք, և 'ի Դուին փոխեն զաթոռն, հրամանաւ նորին Յովսեփայ. յորմէ մանաւանդ հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց, որովք տայր պատերազմ ընդ Պարսս զամս իննսնտասն, յաղթեալ քառասուն և երկու[1] պատերազմաց, մինչև ցկատարումն իւր մարտիւրոսութեամբ, օրհնութեամբ սրբոյն Սահակայ. որ 'ի ժամ վախճանի իւրոյ յամսեանն նաւասարդի յերեսունն, յաւուր ծննդեանն իւրոյ, օրհնեաց զնա և զեղբարս իւր զՀմայեակ և զՀամազասպեան. նոյնպէս և սուրբն Մեսրոպ յիւրում կատարմանն յերեքտասան մեհեկի ամսոյ. որոց աղօթիւք և օրհնութեամբ պարսպեցան և պսակեցան:

Քանզի ընդ այն ժամանակս եկաց 'ի գործ հազարապետութեան Յազկերտի չարամիտն Ներսեհ, և չոգաւ առ նա սեպուհն Վարազվաղան, որ էր փեսայ Վասակայ Սիւնեաց իշխանի, 'ի նոյն ազգէ, ատեցեալ և հալածեալ յաներոյն իւրոյ. որ և ուրացեալ զՔրիստոս, գրգռեաց զնա 'ի յանցսն զոր անցոյց ընդ Հայս. որ և 'ի նոյն խորխորատն սատանայի անկանէր աներ նորին Վասակ. և եղեն պատճառք այնքան աղետից, որ էանց ընդ Հայս, զոր յընդարձակ պատմութիւնսն է ուսանել: Եւ վկայեցին Վարդանանքն, հազար երկերիւր երեսուն և երկու[2] 'ի հրոտից երեսունն, 'ի վեշտասանն Յազկերտի. և զկընի երկուց ամաց սուրբ երէցն Սամուէլ և սուրբ սարկաւագն Աբրահամ, 'ի հրոտից եօթն. և սուրբ եպիսկոպոսն Բասենոյ Թաթիկ, որ յառաջագոյն տարեալ էր 'ի Խուժաստան, դառն տանջանօք 'ի տասն հրոտից. և սուրբ կաթուղիկոսն Յովսէփ և տէրն Սահակ և սուրբ քահանայքն Ղևոնդ և Մուշէ և Արշէն,

[1] Զայսպիսի դէպս գործոց արտոյն Վարդանայ ոչ գտանեմք առ հնագոյնս ի պատմչաց:

[2] Ի թուոյ այսր երկերիւրքն յետոյ ուրեմն կատարեցան, և ոչ 'ի պատերազմին:

և սուրբ սարկաւագն Քաջաջ, վեցեքեան սոքա կատարեցան 'ի քսան և հինգ հրոտից, յԱպար աշխարհի 'ի փառս աստուծոյ, եւ երանելի մոգպետն 'ի մարգաց տասն: Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք զվեշտասաներորդն Յազկերտի՝ երրորդ ամ Մարկիանոսի[1]:

ԻԸ. Յորում աւուր սուրբն Մովսէս և Մամբրէ և Դաւիթ եկեալ յումանէ, հոգային զտուն կաթուղիկոսարանին: Եւ թուի թէ ի լինել ժողովոյն Քաղկեդոնի, վախճանեալ էր Գիւտ[2], և չէ էր նստեալ Յոհան Մանդակունի. և բերեալ առ սոսա թուղթ դաւանութեան, ոչ ընկալան, զի արտաքոյ էր սուրբ հարցն աւանդից: Այլ չոգան Մովսէս և Դաւիթ, թէ հնար իցէ օգնել ուղղափառութեանն (!). վասն զի գտանին այսպիսի բանք առ մեզ, թէ Դաւիթ խօսեցաւ յերկար ընդ Յուբնաղայ, և ընդ դրան երէցն Պողքերայ (և ընդ Մամբրէի արքեպիսկոպոսն Կորնթացւոց[3]), և կարկեցան և յամօթ եղեն: Եւ ապա յոտն եկաց Մելիտոս մետրապօլիտն Մակեդոնացւոց, և ասէ ցՄովսէս. Գիտեմ զքեզ և զաշակերտդ քո 'ի մանկութենէ կրթեալ, և թեքեալ 'ի ճոռոմ բանս կոկոզաբանիցն և կկզայօնից փիլիսոփայից, և ոչ ոք կարէ յաղթել ձեզ. այլ և նախանձու վառեալ էք զի ոչ կոչեցաք զձեզ, զի չէր կենդանի պատրիարգն ձեր: Եւ ասէ Մովսէս. Ապաքէն ճանաչես զմեզ, զի անդրանիկ էաք եկեղեցւոյն, և դատաւորք հայրապետանոցին, և ընդէ՞ր ոչ կոչեցիք զմեզ, և զբազմահմտութիւնս մեր նախատինս ասես: Բայց պատճառ ժողովոյն ձեր՝ չէ ծածկեալ յումեքէ այլ մեք զճշմարտութիւնն ոչ թողումք, մի բնութիւն ասել

[1] Ստոյգ օր նահատակութեան Վարդանանց է երկուքն յունիսի, 451 ամին Քրիստոսի. որ է երկրորդ ամ Մարկիանու:

[2] Ի լինել ժողովոյն Քաղկեդոնի՝ ոչ միայն թէ վախճանեալ չէր Գիւտ, այլ և ոչ նստեալ կաթուղիկոս. աղմկին Պարսից և պատերազմին Վարդանանց ժամանակ էր 'ի Հայս, վասն այնորիկ և չգտաւ ոք 'ի մերոցս յայնմ ժողովի, զանեալ իբրև երեսփոխան մերոյ հայրապետի: Իսկ որ զՄովսէսէ և զԴաւիթայ և զՄամբրեայ բանք և հակաճառութիւնք, գտանին և այժմ իմաստակեալ և ճամարտակեալ բանքդ և ողոյն իսկ գիրք. բայց ոչ 'ի Մովսէսեանց յօրինեալք կամ թեկուզդրանք, այլ զկնի ուրեմն կարկատեալք յաւուրս Եզրայ և Հերակլի փայտեր՝ 'ի համախուհից Մայրագոմեցւոյն:-Յուշ լիցի աստանօր և վասն ժամանակի կաթողիկոսացդ, զի անհամաձայնութիւն և չփոթութիւն է առ պատմիչս. հնագոյնքն ընդ մէջ Յովսեփայ և Գիւտայ կարգեն զՄելիտէ և զՄովսէս, զոր յետինք ոչ յիշեն:

[3] Զիք 'ի Բ. Օ.:

մարմնացելոյ բանին Աստուծոյ: Ասէ Մելիտոս. Ո՞րպէս ասես զմինն, յատկացեա՞լ ասես զՈրդի 'ի Հօրէ, և միացեալ 'ի մարմնի: Մովսէս ասէ. Ոչ բաժանեալ 'ի Հօրէ, և միացեալ 'ի մարմնի: Եւ այլ այսպիսի բազում բանս խօսեցան: Ուստի կարծեցաք այսպիսի գոլ զժամանակն, զի զտասն ամ կալեալ Գիւտայ զաթոռն՝ կաւտարի, և յաջորդէ զնա Յոհան Մանդակունի, իմաստնագոյն և լի հոգւով Աստուծոյ, որ բարիոք յօրինեաց զկարգս ձեռնադրութեան և ժամակարգութեան, և զճառս խրատուց: Եւ սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացւոց թուղթն, զՅոհանն, և այլ բազում օգուտս գործեաց 'ի կեանս իւր: Կէաք 'ի կողմն Յունաց ասեն զԳիւտ կաթուղիկոս, և զՅովհան 'ի Պարսից 'ի միում ժամանակի: Առ սոքօք էր ճգնաւորն Անտոն, որ և Թաթուլ, թողեալ զամենայն ինչ վասն Քրիստոսի Վարոսիւ հարազատաւն երթեալ կրօնաւորէր 'ի տեղւոջն՝ որ այժմ ասի սուրբ Թաթուլ:

Իթ. իսկ զկնի վճարման սուրբ նահատակացն մեր, չարն Վասակ՝ զկին և զերեսին որդիս Հմայեկայ 'ի դուռն տանէր զորդիս մահապարտաց. զոր խնդրեալ Աշուշայի Վրաց բդեշխին 'ի Յազկերտէ, տայ նմա զանակնունելի պարգևն. որ և առաքն 'ի նոցանէ Վահան՝ սպարապետ եղև Հայոց. քանզի սատակեալ Յազկերտի, Պերոզ որդի նորա սպանեալ զեղբայր իւր՝ Թագաւորէ, և հաշտութիւն առնէ աշխարհիս, և զՎահան կացուցանէ հարկահան արքունի, և 'ի քսու արանց նեղեալ՝ տկարանայր 'ի հաւատոցն. և զկնի հարեալ զնա սիրտն իւր զղջանայ, և ապատամբեալ յարքայէ հարկանէ զզօրսն Պարսից յոլով անգամ: Եւ Վարազվաղան տիրեալ Սիւնեաց վասն ուրացութեանն, 'ի բազում աւուրս նեղեալ 'ի դիւաց՝ խեղդի անզեղջ: Յորում աւուրս սպանաւ ուրացողն Վազգէն, և այլ բազում ուրացողք ընկալան ատէն զառհաւատչեայ գեհենոյն:

Յետ այսորիկ զօրավարն Պարսից Միհրան գայ բազում զօրաք 'ի Վերայ Վախտանգայ Վրաց արքայի. և յղէ աղաչանս առ Վահան օգնել նմա, և գնաց յօժարութեամբ. և 'ի խմբել պատերազմին՝ վատ զօրն Վրաց փախեան Թագաւորաւն հանդերձ, այլ և վատօք 'ի Հայոց, և նահատակեցաւ սուրբն Վասակ եղբայրն Վահանայ, որոյ երեսքն փառաւորեալ փայլէին որպէս զՄովսիսին՝ 'ի ժամ կազմելոյն, յորս ոչ կարէին հայել տեսողքն, և խմացան թէ մեռանելոց է յայնմ աւուր. պսակեցաւ և սուրբ սեպուհն Սիւնեաց Յազդ, յամսեանն Հոռի 'ի վեչտասանն, 'ի գեօղն Բագուան. զոր ըմբռնեալ Միհրան հարկէր[1] ուրանալ զհաւատն և կեալ մեծութեամբ. և տուեալ ընդդէմ պատասխանի, մեռանի վասն Քրիստոսի, և պսակի: Նոյնպէս և քաջ ասպետն Սահակ կատարի 'ի ժամ պատերազմին 'ի վերայ սուրբ ուխտին օրինաց: Զկնի այսորիկ սպանաւ Պերոզ 'ի Հեփթաղաց եօթն որդւովք. և Թագաւորեցուցին զՎաղարշ եղբայր նորա. և կոչեաց զՎահան, և ետ նմա զզօրավարութիւնն Հայոց, և յետ այնորիկ եթող 'ի նա և զմարզպանութիւնն: Զկնի Վաղարշու՝ նստի Կաւատ որդի նորա. և յետ նորա Խոսրով ամս քառասուն և ութ: Իսկ Վահան չինեաց զեկեղեցիսն Արտաշատու՝ զաւերեալսն 'ի Պարսից:

Յորում ժամանակս երանելին Տեառնթագ յԱրշարունեաց պատկեցաւ 'ի Զառնաւուխտայ[2] զօրազլխէն Պարսից, և այլ ևս բազումք ընդ նմա:

Լ. Իսկ տէր Յոհան կալեալ զաթոռն ամս վեց. և զկնի նորա տէր Բաբգէն զամս հինգ. և յետ նորա տէր Սամուէլ ամս հինգ. և զկնի նորա տէր Մուշէ ամս ութ. և յետ նորա տէր Սահակ ամս եօթն. և յետ նորա տէր Քրիստափոր փիլիսոփայ ամս եօթն: Իսկ Վահանայ բարիոք Վախճանեալ, փոխէ զիշխանութիւն նորա եղբայր իւր Վարդ, ամս չորս. զՎահան կէաք քսան ամ, և կէաք երեսուն և մի ասեն կացեալ իշխան: Այլ զտէր Քրիստափոր յաջորդէ տէր Ղևոնդ ամս երկու. և ապա տէր Ներսէս ամս ինն: Ի ժամանակս նորա առաքեաց Խոսրով թագաւորն Պարսից հրոսակս, զի կալցեն զՎարդ. և եղև մեծ պատերազմ 'ի դաշտին Խազամախայ[3], և կոտորեն զզօրսն Պարսից ազօթիւք սուրբ հայրապետին Ներսիսի: Եւ յայն ժամանակս կատարեցաւ սուրբն Յիզտբուզիտ, որ է աստուածապրեցոյց. կատարեցաւ 'ի Դուին՝ 'ի մարզպանէն Վարհամայ. զի զկնի Վարդայ՝ պարսիկք իշխէին մարզպանք. և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ հայրապետին Ներսիսի առընթեր կաթուղիկոսարանին, չինեալ վկայարան կոփածոյ 'ի վերայ նորա:

Ի սոյն աւուրս Եղրաս Անգեղացի զդասս ճարտասանաց բազմացոյց: Զկնի Ներսիսի՝ տէր Յոհանէս ամս հնգետասան.

[1] Հին O. հարկանէր և հարկէր:

[2] Տեառնթագայ նահատակութեան որպէսն անծանօթ է մեզ:

[3] Խազամախ հաւանօրէն է [illegible] ըստ Բիւզանդացւոց, 'ի Դ Հայս, այժմ անծանօթ:

և յետ նորա տէր Մովսէս յԾղիվարդայ ամս երեսուն: Սա 'ի տասներորդ ամի հայրապետութեանն իւրոյ, և յերեսներորդ առաջներորդ ամին Խոսրովու, որդւոյ Կաւատայ, և 'ի չորեքտասաներորդն[1] Յուստիանոսի, որ զսուրբն Սուքի չինեաց, եղիր թուականն Հայոց և տոմար. յորում ժամանակի լցեալ էր չրջանն հինգհարիւր երեսուն և երկուց. և մարզպան Հայոց Մեժէժ գնունի, որ կալաւ զիշխանութիւնն ամս երեսուն և մի: Եւ 'ի դիր թուականին էին Պետրոս եպիսկոպոս քերթողն Սիւնեաց, և Ներշապուհ 'ի Տարօնոյ, և Արդիշոյ 'ի Սասնայ, զոր եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս. որ և զԿիւրիոն, որ էր ազգաւ 'ի Վրաց, 'ի գաւառէն Ջաւախաց 'ի գեղջէ Սկուտրի, և գիտէր դպրութիւն հայ և վրացի, ձեռնադրեաց Վրաց կաթուղիկոս, որ եղև յետոյ քաղկեդոնիկ[2]: Քանզի 'ի տղայութեանն գնացեալ էր 'ի Յոյնս, 'ի Կողոնիա գաւառ, և բնակեալ 'ի գեօղն Նիկոպոլիս յեզր Գայլ գետոյ, որ և վարժեցաւ յոյն դպրութեամբ. և յետ հնգետասան ամին, եկն առ Մովսէս 'ի Դուին, և կացոյց զնա վանաց երէց սրբոյ Կաթողիկէին, այլ և քորեպիսկոպոս Այրարատեան գաւառին, ամս եօթն. և յորժամ մեռաւ կաթողիկոսն Վրաց, առաքեցին իշխանք աշխարհին առ տէր Մովսէս, ըստ առաջին կարգին, զի տացէ նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս 'ի տանէ իւրմէ. և երթեալ նուաճեաց զամենայն երկիրն. և ապա եկն առ նա խուժիկ մի նեստորական, որ Կիս կոչիւր, այսինքն խստութիւն, որպէս եղևն, որ էր 'ի Կողոնիոյ, 'ի գեղջէն Զուտառիմայ, մօտ Նիկոպոլսի. որ լեալ էին միմեանց ուսումնակիցք և աղանդակիցք. զնա ձեռնադրէ եպիսկոպոս, և կորնչի նովաւ, և ամենայն աշխարհաւն: Զոր իմացեալ Մովսիսի եպիսկոպոսի՝ որ 'ի Յուրտաւ՝ որ այժմ ասի Գանձէնք, ծանուցանէ պատրիարգին Մովսիսի, և նա գրէ առ նա թուղթ յանդիմանութեան և սպառնալեաց, և նա բնաւ ուրանայ յերկեղէ սրբոյն զաղանդն: Եւ զկնի սակաւ ժամանակաց մեռաւ պատրիարգն յերեսներորդ ամի հայրապետութեան իւրոյ, և Կիւրիոն յանհոգս եղեալ ընդունի զժողովն Քաղկեդոնի:

ԼԱ. Իսկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ 'ի վախճանն հաւատայ 'ի Քրիստոս, և կոչեցեալ առ ինքն զԵրան կաթողի-

[1] Ոչ 'ի չորեքտասաներորդի այլ 'ի քսաներորդի չորրորդի ամին:

[2] Յայն սակս և դատափետեալ 'ի հեղինակէդ և 'ի համակարծեացն:

կոսն՝ զոր տէր Գիւտ էր ձեռնադրեալ հանդերձ այլօք եպիսկոպոսօք, 'ի գնալն իւրում առ Պերոզ արքայ՝ ուր յանդիմանեաց զմոլորութիւնն Պարսից, ցանկալով մահու, մկրտեցաւ յԵրանայ և հաղորդեցաւ. և զկնի սակաւուց կատարեցաւ, և թաղեցին զնա քրիստոնեայքն յարքունական գերեզմանս: Եւ առ զթագ նորա որդի նորա Որմիզդ. որոյ նենգ գործեալ սպանին զնա յիւրում դահլճի, և առնու զթագն որդի նորա Խոսրով. յորոյ վերայ յառնէ Վահրամ գլուխ զօրացն և առնէ զնա փախստական: Եւ նա գնաց առ Մօրիկ կայսր և գտեալ 'ի նմանէ օգնութիւն դառնայ և տիրէ հայրենեացն, և լինի երախտագիտոյց, թողլով 'ի Մօրիկ զՄիջագետս, և 'ի Հայոց զաշխարհն՝ որ Տանուտերական գունդն կոչի[1]. բաց յոստանէն Դունայ, և յերկուց գաւառացն՝ որ է Ոտն Մասեաց և կողմն Արագածու, թողու 'ի Մօրիկ 'ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար, մինչև ցԱռեստան աւան և ցՀացիւն: Որ յանդգնեալ զեղեալ անուանսն յԱրայէն՝[2] փոխէ. զԱրմենի կոչեցեալ 'ի նմանէ՝ որ է Առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Սեբաստ. և զԿապոտկիա, յորում մայրաքաղաքն Կեսարիա՝ Երրորդ կոչէ Հայք, և առնէ զնա եպարքի. և զՄելտենի՝ որ ունի զհոմանուն գաւառն իւր, կոչէ զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքաղաքն Տրապիզոն, Մեծ մասն Հայոց կոչէ զնա. և զՋորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Նիքերտ որ ասեն Մուփարկին, Յուստիանուսիստ գրէ զնա 'ի դիւան արքունի. և զաշխարհն Կարնայ՝ յորում քաղաքն Թէոդուպոլիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. և որ 'ի Մեծ Հայոց մասն էր առ նոսա, 'ի կողմանց Բասենոյ մինչև ցսահմանս Ասորեստանի, Մեծ Հայք անուանէ. և զկողմանս Տայոց սահմանօքն իւրովք՝ Խորազոյն Հայք կոչէ. և զկողմն Դունայ՝ Ներքսագոյն Հայք կոչէ: Զայս անուանս գրէ 'ի դիւանի:

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն թշնամիս նորա. և նորա պատուասիրեալ նմա տայ զմարզպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ, և բնակեալ 'ի Թուրքաստան անապատին մեծի՝ որ Սագաստանն կո-

[1] Տանուտերական երկիր՝ կողմն Նախիջևանայ է, այլ աստանօր ընդարձակագոյն իմանի:

[2] Պարտ է ասել յԱրամայ:

չի, մոռացեալ զլեզու և զդպրութիւն. որք տեսեալ զՍմբատ խրախ լինէին, և նորոգէին զլեզու և զգիր. և զերէց մի նոցա Հաբէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի Հայրապետին Մովսիսի. հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, և առեալ հրաման յարքայէ՝ գայ տեսանել զերկիր իւր: Եւ եկեալ 'ի Դուին՝ սկսաւ շինել զփայտաշէն սուրբ Գրիգորն 'ի Վարդանայ սրբոյ. և պահնակ բերդն բողոքէ 'ի դուռն, թէ մնասակար է բերդիս. և ելանէ հրաման քակել զբերդն, և հեռագոյն շինել. և խնդացեալ Սմբատ 'ի փառս Քրիստոսի, շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, և տայ ձեռնադրել պատրիարգ զտէր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց, որ շատ ջանացեալ թղթով 'ի ձեռն Պետրոսի՝ ոչ կարաց դարձուցանել զԿիւրիոն յուղղափառութիւն (!). վասն որոյ արարեալ ժողով 'ի Դուին, անիծին զԿիւրիոն հերետիկոսեալ (!): Եւ Մօրիկ կացոյց յիւր կողմանն կաթողիկոս զՅոհան որ նստէր 'ի գեղջն Աւան[1], շինեալ անդ եկեղեցի, այր սուրբ, և ընտրեալ յամենեցունց[2]:

ԼԲ. Յայնմ ժամանակի նախարարքն Մօրկայ սպանին զնա, և եդին թագաւոր զՓովկաս, որ և եկեալ 'ի Բասեն[3] ջանայր նուաճել զՀայս. և ընդ առաջ երթեալ Աշոտ, հարկանէ անչափ կոտորմամբ հրամանաւ Խոսրովու, և առնու զԿարնոյ քաղաք, և փոխէ զընակիչսն յԱհմատան, տարեալ զՅոհան կաթողիկոս զկնի, որ կայր 'ի գաղթի անդ. որ և անդէն վախճանեալ, բերաւ զին 'ի գեղջն Աւան, որ կալաւ զկաթողիկոսութիւնն ամս քսան և վեց. և սուրբ պատրիարգն Աբրահամ փոխի զկնի քսան և երեք ամի աթոռակալութեանն. և յաջորդէ զնա տէր Կումիտաս, 'ի գեղջէ Աղցից:

Իսկ յիշխանաց կարգի զկնի Մեժեժայ պարսիկք կացին. նախ Դենշապուհ, որ զշնամոլութիւնսն շատացոյց, և յետ նորա Վարազդատ ոմն, և ապա Սուրէն ազգական Խոսրովու, որ շնայր ընդ կանայս իշխանացն. ընդ որ զայրացեալ Վարդա-

[1] Աւան գիւղ Կոտայից 'ի կողմն Երևանու:-Տարակուսական են ժամանակք կաթուղիկոսութեան Յովհաննու և Աբրահամու, ըստ այլակարծի դրութեան պատմչաց:

[2] Այսպէս 'ի բնագրիս. իսկ միւսն կամակորէ. Այր սուրբ, և բնաւ չիտարեալ յաղանդն Յունաց:

[3] Թերևս մի 'ի զօրավարաց կայսերն՝ որ տայր մարտ ընդ Պարսից, հանդիպեալ իցէ 'ի Բասեն, այլ ոչ ինքն Փովկաս:

նայ՝ որդւոյ Վասակայ մամիկոնենոյ՝ սպան զնա, և առեալ զընտանիս իւր գնաց 'ի Կոստանդնուպօլիս: Բայց Հերակլ սպանեալ զՓովկաս, թագաւորեցուցանէ զորդի իւր, և ինքն խաղայ յարևելս. և Խոռեմ աւերէ զՅոյնս հրամանաւ Խոսրովու, քինախնդիր մահուանն Մօրկայ, և գերէ զԵրուսաղէմ և զփայտն փրկական, և զԶաքարիա պատրիարգն Երուսաղեմի: Յայնմ ժամանակի պատրիարգն Կումիտաս ընդարձակէ սրբոց Հռիփսիմեանցն, և պատահէ սուրբ Նշխարաց նոցա. և լինի ոչ սակաւ մխիթարութիւն քրիստոնէից, և էր կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի, և սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեաց բանալ, այլ և զիւրն եդ 'ի վերայ. և չափ հասակին Հռիփսիմեայ՝ տասն թիզ և չորս մատն, և զսուրբն Գրիգոր ասեն ինն թիզ, և զՏրդատ՝ մետասան թիզ:

ԼԳ. Առաքեաց Հերակլ դեսպանս պատարագօք առ Խոսրով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի. և բարկացեալ Հերակլի, առնու ընդ իւր զեղբայր իւր զԹէոդոս, երկիցս հարկանէ զզօրսն Պարսից առ Անտիոքաւ, և երթայ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու. և զնա ոյժ առեալ[1] Կաւատայ որդւոյ առաջնոյ Խոսրովու, սպանանէ զնոսրով, և խնդրեալ տէր 'ի Հերակլէ՝ թողու նա զՄիջագետս. և դառնայ Հերակլ և գայ 'ի Կարնոյ քաղաք: Յորում յաւուրս յաջորդեալ էր զսուրբ աթոռն Կոմիտասայ տէր Քրիստափոր, և հանեալ զնա զի առնէր խռովութիւն 'ի մէջ իշխանացն, դնեն զեզր Նիգացի, զոր կոչեաց թագաւորն 'ի Կարնոյ քաղաք, որ վասն տգիտութեանն[2] իւրոյ քաղկեդոնիկ եղև, առեալ զԱղցք, և զերրորդ մասն Կողբայ[3] գին հաւատոյն: Եւ 'ի դառնալ նորա կշտամբեաց զնա Յոհան[4] վարդապետ կաթուղիկոսարանին, ասելով: Յիրաւի եզր կոչեցար, զի յեզր ելեր յուղղափառութենէ. և ինքն չոգաւ յԱղուանս, 'ի գլուխ Գարդման գաւառի, և ճգնեցաւ խիստ վարիւք: Սա գրեաց երիս գիրս, զանուն իւր չդնելով 'ի նոսա. զմինն կոչեաց Խրատավարք, զմինն Հաւատարմատ, և զմինն Նոյեմակ: Էր սորա աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍաբելին ախտանայր. զոր հալածեալ մերժեաց յինքենէ: Յաւուրս յայսոսիկ մեռանի Կաւատ արքայ, և թագաւո-

[1] Այսպէս յՕՕ:

[2] Գէթ յայսմ մասին գիտնագոյն գտաւ քան զհեղինակդ:

[3] Իմա՛ զմասն աղահանից տեղեացն:

[4] Մայրագոմեցին մոլորեալ:

ըէ տղայ որդի նորա Արտաշիր. և լուեալ Հերակլ, յորդորէ զԽոռեմ առնուլ զԹագն, սպանանելով զտղայն: Զոր և արար իսկ. և ետ զիաչն տուրբ 'ի Հերակլ: Եւ սպանեալ զօրացն զԽոռեմ տան զԹագն 'ի Բորն դուստր Խոսրովու, և զկնի նորա ի Զամրիկ քոյր նորա. և յետ նորա, զՈրմիզդ թոռն Խոսրովու, զոր խեղդամահ արարին, և եղին զՇազկերտ թոռն Խոսրովու[1]:

Իսկ Հերակլ զիաչն տարեալ յԵրուսաղէմ, կանգնէ 'ի տեղւոջ իւրում. յորում ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄեժեժ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի, ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի, զամս երեք, որ չինեաց զեկեղեցին Մրենոյ[2]. և ապա անարգեալ յիշխանացն Հալածեցաւ, և անկաւ չփոթ մեծ 'ի Հայս, զմիմեանսքզ ելանելով. յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ. և տէր Քրիստափոր շինեաց միայնարան 'ի յՈտն Մասեաց, և առաքինանայր բազում ջանացող աղօթիւք, երեքհարիւր խարազնազգեստ արամբք: Ցորում աւուր ժողովեալ յԵղեսիա երկոտասան հազար Հրեայ՝ ապստամբեցին 'ի Հերակլեայ, և նա երթեալ պաշարեաց զՈւռհա, և առ զնա և արձակեաց զՀրեայսն կենդանի, յո և կամիցին երթիցեն, ոչ լսելով Թէոդորոսի եղբօրն՝ որ կամեցաւ սատակել զնոսա: Եւ գնացեալ անտի ընդ անապատ չոգան 'ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի, որպէս առ ազգայինս, և կոչէին յօգնութիւն. և կէաք ախորժէին, և ոմանք ոչ, վասն այլ և այլ աղանդոյ նոցա, որպէս երբեմն Եգիպտացւոցն, ըստ զանազան պաշտամանց նոցա:

ԼԴ. Ցայնժամ ապա այր մի յորդւոցն Իսմայելի, որում անուն էր Մահամէթ թանդար, որ էր ծնեալ 'ի քաղաքին Մաղինա[3], մերձ 'ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ[4], որդի Աբդլայ, որ մեռաւ որբ թողեալ զնա. որ և յարեցաւ 'ի վաճառական մի, և եղև 'ի տան նորա յառաջադէմ. մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ, առեալ զկին նորա. և երթայր ուղտօք յԵգիպտոս, և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն յաղանդոյն Արիոսի և Կերինթոսի, որ և ուսոյց նմա 'ի հին մատենիցն զԱստուած, և զգիրս

[1] Ի կարգի Թագաւորացդ պակասեն և այլք: Բոր է Բրոր կամ Բերոր, որ Բորանդուխտ. իսկ Զամրիկն՝ Ազէրմիդուխտ:

[2] Մրէն 'ի Շիրակ գաւառի. կիսականգուն կայ ցարդ եկեղեցին այն:

[3] Մաղինա որ յառաջն Յաղրիպ կոչէր՝ է Մէդինէ:

[4] Քօրէշ՝ Քուրէյշ:

տղայութեան Տեառն մերոյ. և 'ի դառնալն 'ի տուն քարոզեաց զոր լուաւն. և հալածեցին զնա ազգն իւր. և եկն յանապատն Փառանու[1]. և յորժամ եկին երկոտասան հազար Հրեայքն, առեալ պատճառս 'ի նոցանէ, քարոզեաց որդւոցն Իսմայելի զԱստուածն Աբրահամու, և եղև երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու:

Եւ լուան նմա, և ժողովեցան յԵփրայ մինչև ցՍուր[2], որ է հանդէպ Եգիպտոսի, և զերկոտասան հազարսն ըստ ցեղիցն Իսրայելի երկոտասանից նահապետացն, հազար հազար արկին յինքեանս, և եղեն երկոտասան բաժին, ազգապետ դնելով ինքեանց, յորոց անուն կոչեցան իսկ՝ Նաբէովթ, Կեդար, Աբդէլ, Մաբսամ, Մասմա, Իդումա, Մասէ, Քողդադ, Թեման, Յետուր, Նաբէս, Կեդմա: Եւ գնացին բանակս բանակս յանապատն Փառանու ցՈտրովթ Մովաբու[3], և անցին յայնկոսս Յորդանանու 'ի վիճակն Ռուբինի: Եւ զօրն Յունաց էր յԱրաբիա. հարին զնոսա, և փախեաւ Թէոդորոս եղբայր կայսերն մատնագրեալ: Եւ դարձան ինքեանք յԱրաբիա, բնակեցան ըստ ցեղից ցեղից. և ժողովեցան առ նոսա ամենայն մնացեալքն յորդւոցն Իսրայելի, և եղեն զօր մեծ: Եւ յոմն բանս առ կայսր, թողուլ զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու. և արար նոցա ընդդէմ պատասխանի, և գումարեաց զօրս ՃԾԹանասուն հազար 'ի ձեռն ներքինւոյ մի հաւատարմի, և պատուիրեաց երթալ յԱրաբիա 'ի վերայ Իսրայելի, ուր և սատակեցան իսկ. և լցան մեծութեամբ բանսիքն Մահմեդի:

Եւ էր թիւս մեր փոխանն և ՃԾԹ[4]. և զի յաջողեաց նոցա խրատն Մահմեդի, խնդրեն 'ի նմանէ օրէնս, և նա զտեղի մի հենից օձիցն՝ զոր պաշտէին, կոչեաց Ալ-քայրուան[5], որ է դրուն Աստուծոյ. և կոչեաց զքաղաքն Մէքքէ՝ ըստ անուանն Աբ-

[1] Փառանու անապատն լինի մեջ Սինեայ և Հրէստանեաց է:

[2] Սուր անապատ ընդ մեջ Պաղեստինեայ, Ազարատն Ցիրտիոյ, Կարմիր ծովու և Եգիպտոսի:

[3] Ռաբաթթ Մովաբու մայրաքաղաք Մովաբացւոց՝ յարևելեան ափն Մեռեալ ծովու, ուր ցարդ նշմարին ահագին նորին սակաւք:

[4] Բ. Օ. վաթսուն և հինգ. 616 ամ Տեառն, որ յառաջէ վեց ամօք քան զփոխառան և զիշխանանալն Մահմէտի, յորմէ թուականին նորա սկիզբն, 'ի 15 յուլիսի 622 ամին:

[5] Էլ-Քեաբէ:

բահամու: Եւ քանզի 'ի զօրանալ քրիստոնէութեանն, զկուռս Դամասկոսի, զՌեմանա[1]՝ որ նա ինքն է Հեփեստոս կաղ, տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ Տաճիկք տարան 'ի մեհեանս օձիցն, և քուրմք օձիցն ոչ կամեցան անդ դնել, այլ հանեալ արտաքոյ արարին տեղի միոյ ուտից 'ի վերայ վիմի, և անդ եդին. զոր գողացան եթէովպացի վաճառականք վասն ոսկւոյն, զոր ձուլեցին Իսմայելացիքն. և եղև պատերազմ սաստիկ 'ի մէջ երկուց ազգացն, մինչև մոռացան: Զայնմանէ ասաց, թէ Աբրահամու ոտնահետն է, յորժամ եկն տեսանել զԻսմայէլ զորդի իւր. և քանզի յորս էր Իսմայէլ, հարցանէ ցկին նորա թէ Ո՞ւր է այր քո. և նա ասէ. Գնա՛, աղճատեալ ալևոր. և ասէ Աբրահամ. Յորժամ գայ 'ի տուն, ասա ցայր քո, փոխեա՛ զդուռն տան քո: Իսկ յորժամ եկն Իսմայէլ և էառ զհոտ հօրն, եհարց ցկինն. և ասաց զոր լուաւն. և իմացեալ Իսմայելի՝ եհան զկինն, և այլ էառ մինչև ցեօթներորդ կինն, որ մաղթեաց զԱբրահամ իջանել յիշէն, և օծցէ զոտսն. և իջոյց ասէ զմի ոտն, և եդ 'ի վերայ վիմին, և տեղի ետ վէմն ոտիցն. և զմի ոտնն ոչ իջոյց 'ի գրաստէն. զի երդումն տուեալ էր Սառայի՝ թէ մի՛ իջաներ, երկուցեալ թէ լինի ընդ Հագարու: Զայս առաս...եաց Մահմէտ: Եւ Հրամայեաց յամենայն կողմանց անդ առնել զերկրպագութիւնն, և զվիմովն ասաց շուրջ զալ միոտանի, և ասել Լբա՛յք, լբա՛յք. և որպէս թէ պատասխանի ումեք առնել, Ա՛յ ա՛յ, աւա՛ء աւա՛ء[2]. և անցեալ 'ի ձորն անասուն սպանանեն, և ելեալ 'ի գրաստ փախչին մինչև 'ի բլուրն Մաքայ, և թէ 'ի փախչելն հանդերձ անկանի կամ զուլամբի, ոչ ոք իշխէ յետս հայել. և 'ի մէջ երկուց վիմացն ընթանալով, զոր կոչեն Սաֆա և Եմրա, վիմէ 'ի վէմ երթան եօթն անգամ անհանգիստ և քարինս ձգեն. և Մահմէտ ասեն այսպէս արար և ուսոյց: Այլ միոտանի վազելն՝ վասն ոտնահետին է, և 'ի ձորն անասուն կոտորելն և փախչելն, ասեն թէ զոհ արար Մահմէտ....., լի տեսիլս ցուցցեն նմա, և երեւեալ նմա՝ փախաւ: Եւ յերկու վիմամիջին շրջելն և քար ձգելն, լեալ են վէմք նոցա պաշտելիք, նախ քան զկուռսն, և 'ի պաշտելն Մահմետի ըստ

[1] Ռեմանայ Դիք որ 'ի Ս. Գիրս յիշին՝ յոմանց արեգակն համարին, յայլոց Աստղիկ, և 'ի բազմաց անծանօթ. վասն որոյ կարծիս հեղինակիդ նշանակելի է առ հնախոյզս: Իսկ պատմութիւնդ ոչ գիտեմ քանի հաւաստիս ունիցի:

[2] Լէպպէյք Լէպպէյք, Է՛յ Թէյեաս, Հրամայեա՛ հրամայեա՛ ով Աստուած:

սովորութեանն, շուն կատաղի ել ընդդէմ նորա, և նա ձգեաց նմա քարինս. և զնոյն հրամայեաց առնել: Եւ օձք և սողունք՝ զի ոչ սպանանին, զի պաշտելիք լեալ են նոցա, և շուն կոտորելն այն է, որ ասեն թէ 'ի մեռանելն Մահմետի չկամեցան թաղել, ակն ունելով թէ յառնէ երեքօրեայ,..... և յորժամ իմացան՝ կոտորեցին զշունսն, և 'ի նոյն ամսեան հրամայեցին զնոյն առնել: Նա ուսոյց ասել մի է Աստուած, և ոչ ոք է նմա ընկեր, և Մահմէտ ծառայ նորա: Եւ որ ասեն հրէի միոյ բանիւ, թէ մարգարէքն խօսեցան որպէս վասն Քրիստոսի՝ և վասն Մահմետայ, զայն ասեն որ Եսայի տեսանէր երկու հեծեալս իշոյ և ուղտու: Եւ յաւուր միում յանկարծակի .... անյայտ եղև Մահմէտ. և յետ սակաւու երևեալ, ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն Աստուծոյ և շնորհք: Եւ նոցա զարմացեալ ասեն. Ուստի՞ գաս, և զի՞նչ է նոր ողջոյնդ, և զո՞ր Աստուծոյ շնորհք բերեք մեզ: Եւ նա ասէ. Էառ զիս Աստուած 'ի Մաքա, 'ի տուն հօր մերում Աբրահամու, և պատմեաց զկամս իւր, և 'ի վաղիւն առաքելոց է մեզ օրէնս: Եւ առեալ երինջ մի ծնեալ[1], և 'ի տեղի ժողովոյն մեկնեաց յորթոյն ..... և 'ի վաղիւն հրամայեաց արձակել, և ինքն հաւաքեալ զամբոխն՝ մնայր. և եկն կովն բջելով և քրտալով, և հերձեալ զամբոխն խնդէր զորթն. և հրամայեաց ունել զնա, և առեալ զթուղթն համբուրեաց և ասաց յԱստուծոյ եկեալ. վասն որոյ ցայսօր գրեալ են 'ի սկիզբն ղուրանին՝ Սուրաթ Ալ-բակարա[2], որ է կովու օրէնք: Եւ հրամայէ հինգ անգամ կատարել աղօթս լուացմամբ, և փոխանակ փողոցն Իսրայելի՝ 'ի բարձուէ կանչել, վկայ առեալ՝ թէ Ել 'ի վերայ լերինդ Սիոնի, աւետարանիչդ և Մողին[3] կոչեն զձայնողն, որ է հաւատաղիր, և զմատն յականջն ածել, ասեն. թէ որ կամաւ և որ ակամայ՝ լսէ ականջովն: Եւ զՔրիստոս բան Աստուծոյ, և հոգի կոչեաց: Եւ աքանչելիք զոր ասեն թէ առնէր, զլուսինն բերեալ՝ 'ի վայր, ասեն, չորս կտոր առնէր, և դարձեալ բոլորեալ յերկինս առաքէր:

[1] Նոր օր. [illegible]:

[2] Սուրաթ Ալ-պէքարա, Գլուխն կամ Յաղագս կովու. խորագիր երկրորդ գլուխն կամ գլխոյ կուրանին, զոր ոմանք 'ի մեկնչաց Համարին եդեալ վասն ճառելոյ 'ի համարս կգ-կթ զկովուն զոհագործութենէն ըստ մովսիսական աւանդից:

[3] Մողին, [illegible], Ձայնող:

Բայց նախ Քաղրթ[1] էր իշխան Իսմայելի, և ապա գտեալ զՄահմէտ՝ հաւանի նմա յամենայն բանս:

ԼԵ. Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ Երուսաղէմացւոցն, զխաչն տէրունի և զամենայն սպասս եկեղեցեացն հանեալ ի նաւ, տարան 'ի Կոստանդնուպօլիս, և ինքեանք հնազանդեցան Իսմայելի, զի կայսրն այլ ոչ կարաց զօր գումարել 'ի վերայ նոցա: Եւ նոքա բաժանեալ յերիս մասունս, մին յԵգիպտոս, և մին 'ի Ցոյնս, և միւսն 'ի Հայս և եղև ամենեցուն յաղթել. և որք ելին 'ի Հայս ընդ Ասորեստան, և հասեալ 'ի Դուին առին զնա, և սպանին անթիւ. և գերեցին երեսուն և հինգ հազար անձինս 'ի ժամանակս իշխանութեան Թէոդորոսի ուշտունւոյ, որ զկնի Դաւթի. և բիւր մի 'ի նոցանէ հարին զՊոռկոպոս[2] զօրագլուխն Ցունաց, որ նստէր 'ի սահմանս Հայոց վեց բիւրու:

Ցորում յաւուրս մեռաւ Եզր, և յաջորդեաց զաթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց, զկնի տասն ամին Եզրի. բայց յափշտակութիւն եղեալ վասն անհնարին կոտորելոցն, խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին: Եւ աղաչեցեալ 'ի բազմաց դադարէ. և հաւաքեալ զբազմութիւն դիականցն թաղէր, և 'ի նմին տեղւոջ չինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի: Շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վիրապին, և արկանէ հիմն տաճարին մեծի յառապարի յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, և դնէ 'ի ներքոյ չորից սեանցն զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի, և զգլուխն 'ի գզրոցի եդեալ՝ պահէ 'ի պէտս բժշկութեան ախտաժետաց. անդ դնեն և զնշխարս սրբոյն Ցիզտբուզտեայ, և զԴաւթի վկային[3]: Եւ զսուրբ Գրիգորի նշխարն ասեն 'ի Հայս բերել Գրիգորոյ մամիկոնոյ, 'ի գնալ նորա դեսպան 'ի Կոստանդնուպօլիս, տուեալ ցնա կին ումն յաւագաց՝ որ ունէր առ իւր. և նորա զաղտ հանեալ 'ի ծով և անցեալ զայ բերէ անգիտելի քաղաքին՝ զգանձն անանց մեծութեան. և զծնօտն տայ Աղուանից 'ի խնդրոյ Ջուանշիրի և

[1] Քաղրթ իշխան Իսմայելացւոց Թուի անհեղեղ կոչումն Խալէթ անուան, զի այսպէս կոչէր առաջնորդ զօրուն Մահմետի՝ որ եհար զՑոյնս յԱսորիս:

[2] Պոռկոպիոս ըստ Ղևոնդեայ երիցու պատմչի, որոյ զօրահանգիստ էր 'ի Կոգովիտ գաւառի:

[3] Նոր Օ. վկայն Դանայ:

քեռ իւրոյ՝ որ էր կին Գրիգորի[1]:

ԼԶ. Ցայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դառեալ 'ի մօրուէն Մարտինեայ սպանանի, կացուցեալ զորդի իւր Հերակլակ. և Վաղենտին զօրավարն սպանեալ զՄարտին և զՀերակլակ, թագաւորեցուցանէ զԿոստանդ՝ որդի Կոստանդեայ. և զի ապստամբեալ էր Վարազտիրոց, աղաչէ վասն նորա Հայրապետն Ներսէս, և դնէ զնա կիւրապաղատ Հայոց. որ և յառնուլ զիշխանութիւնն մեռաւ, և թաղեցաւ 'ի Դարօնս առ հօր իւրում քաջին Սմբատայ: Եւ դնեն զՍմբատ 'ի պատիւ հօրն. և Թէոդորոս ուշտունի էր զօրավար: Բայց Մահմէտ քսան ամ կալեալ զիշխանութիւնն..... և զկնի նորա առին զիշխանութիւնն Օմար և Ամր[2] և Բուբաքր[3], և սպանին զՑազկերտ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւնն Պարսից, որ տևեաց ամս չորեքհարիւր ութսուն և մի. և զկնի նոցա առ զիշխանութիւնն Մաւի: Այլ Կոստանդինոս թոռն Հերակլայ, ընկենու զԹէոդորոս յիշխանութենէ, և հրամայէ զօրավարին Կիլիկիոյ ելանել ընդդէմ Մաւեայ. և Վարդ որդի Թէոդորոսի նենգ գործեաց զօրացն Ցունաց՝ կտրելով զխելս կամրջացն 'ի վերայ Եփրատու 'ի փախչելն Ցունաց: Եւ կացոյց Մաւի իշխան Հայոց զԳրիգոր Մամիկոնեան, և եդ հարկս Հայոց հինգ հարիւր դահեկան[4]: Ոմանք ասեն 'ի Թորդանայ բերեալ Գրիգորի զբովանդակ նշխարս Լուսաւորչին. և եկեալ Իսրայէլ հրամանաւ Վարազտրդատայ Աղուանից իշխանի, և խնդրեալ զծնօտ Լուսաւորչին, տարեալ եդ 'ի Գլխոյ վանս կոչեցեալ տեղւոջ[5]:

Այլ զի 'ի հարկէ հնազանդեցան Հայք Հագարացւոց, ելանէ բարկութեամբ կայսրն 'ի Հայս, և Ներսէս կաթողիկոս աղերսե-

[1] Ըստ հին պատմագրութեան յայտնութիւն նշխարաց Լուսաւորչի 'ի Կոստանդնուպօլիս երկերիւր ամաւ յետոյ եղև:

[2] Նոր օրինակք դնեն Օթման:

[3] Ըստ կարգի յաջորդք Մահմետի են Էպուպէքր, Օմար, Օթման, Ալի, Մուավիէ:

[4] Հարկդ Հայոց եճ դահեկան, զոր նախ յիշէ Ղևոնդ պատմիչ, եթէ ստոյգ է թիւդ, թեթև ինչ է, որպիսի և իցէ դահեկանն, եթէ բիւզանդեան ոսկի, եթէ սասանեան, և եթէ արաբիկ դինար՝ որ արժէր 12 կամ 13 ֆրանգ. թէպէտ և բազմաց կարծիք են թէ Աբդմէլիք ամիրապետ նախ եհատ դրամ արաբացի, այլ գտաւ և Միւավեայ դրամ:

[5] Տե՛ս Ծան 1. յէջ 77. և յէջ 53. Ծան 1:

լով տանի իջուցանէ 'ի Դուին 'ի կաթողիկոսարանին, և հաղորդին 'ի միասին կայսրն և կաթողիկոսն, և կան ութ օր 'ի խորհրդեանն ըստ Ցունաց սովորութեան, և քարոզեցին զժողովն Քաղկեդոնի. և ոմն եպիսկոպոս 'ի վայր իջեալ 'ի բեմէն՝ եմուտ 'ի մէջ ամբոխին. և զկնի հարցեալ կայսերն ցեպիսկոպոսն, թէ Ընդէ՞ր ոչ հաղորդեցար ընդ քում պատրիարգին, նա ասէ. Դա իսկ եղև պատճառ զի յառաջ քան զերկուս ամս ժողով արար, և նզովեաց զամենայն հերձուածողս, և առաւել ևս զժողովն Քաղկեդոնի: Եւ մեղադրեաց յոյժ թագաւորն վասն նենգութեան նորա, և ապա հաղորդեցաւ և եպիսկոպոսն, և օրհնեաց զթագաւորն և թագաւորն զնա: Եւ 'ի գնալ թագաւորին երկուցեալ Ներսէս յՌշտունեաց տեառնէն, գնայ 'ի Տայս. և զկնի վեց ամի դարձաւ լուեալ զմահն Թէոդորոսի. և չինէ իւր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն, և կացուցանէ ամբոխութիւնս երդումարդոց, ըստ օրինի քաղաքականութեան, և ածէ ջուր 'ի Քասախ գետոյ, և տնկէ անտառս և այգիս: Սա մեծ ժողովով առնէր զտօն վարդավառին, և ութ հարց փոխեցին, և ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ուսանել, զոր և արար 'ի ձեռն սրբոյն Բարսղի, մականուն Ճոն կոչեցելոյ. որ էր առաջնորդ տուրբ ուխտին՝ որ Դպրավանքն կոչի, 'ի գաւառին Անոյ[1]. որում ասեն թէ եօթն անգամ ետես զՔրիստոս աքանչելի համարձակութեամբ. վասն որոյ Ճոնընտիր կոչի շարականս՝ որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր:

Եւ մինչ էր Ներսէս 'ի Տայս, Թէոդորոս ռշտունի չինեաց զկղզին Աղթամարու: Դպրավանից տարան զնաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ[2] կոչի. յայնժամ Ճոնեանց կոչիւր. և տարաւ զնա Սարգիս Ճոնեանց 'ի գաղութ՝ յերեսաց այլազգեաց, ուր արար աքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետի, զկինն Դեմետրեայ արքայի Վրաց՝ յուրկութենէ

[1] Անւոյ գաւառ Շիրակ է:

[2] Վարձիա աւան 'ի սահմանս այժմեան Ախալքալաքի, որ են կողմանք Ջաւախաց գաւառի Գուգարաց, զոր Վիրք ունէին յայնմ ժամանակի, և յանուն նորին կոչի վիճակն Վարձունիք կամ Վարձառունիք: Ժամանակ աքանչելեացդ անյայտ է. Ցրոսէ (ի Վրաց պատմութեան. Ա. 259) համարի զԴեմետրդ եղբայր Ստեփանոսի Վրաց կիւրապաղատի մերձաւորի ժամանակաւ Ներսիսի կաթուղիկոսի: Ցառաջ քան զհեղինակս մեր թագաւոր Վրաց Դեմետր անուն մի ոք եկաց 'ի ԺԲ դարու: Իսկ Տիմոթէոս անուն վարդապետ ոմն մեկնիչ Արարածոց գրոց յիշի առ մեզ յելս Ժ դարու:

բժշկեալ[1], վասն որոյ և առին 'ի Հայոց. և է սրբոյն Մեսրոբայ օրհնեալ, և կամ Բարսղի սրբոյ Ճոնին, և ունի զիր հայերէն յաջ թևն:

Վախճանեալ Ներսիսի մեծի պատրիարգի, թաղի յիւրում ձեռակերտին[2], և առնու զաթոռն Անաստաս, սենեկապետն Ներսիսի որ էր յԱկոռոյ, որ նորին հրամանաւ չինէր զսուրբ Գրիգորն, մինչ էր նա 'ի Տայս: Ցաւուրս սորա չինեաց Գրիգոր Մամիկոնեան զկաթուղիկէն Արճոյ, և զվանքն Եղիվարդայ. և Անաստաս չինէ զեկեղեցին Ակոռոյ, եղբայրանոց յօրինեալ և հիւրանոց[3]: Առ Գրիգոր իշխանն եկն Սուրհանն պարսիկ յազգէ թագաւորաց, և խնդրեաց զՔրիստոս, և ետ զինքն մկրտել Անաստասայ, եղեալ ինքն նմա կնքահայր. և կոչեաց զնա յաւազանէն Դաւիթ յանուն հօր իւրոյ[4], և ետ նմա զՁագ 'ի Կոտայս:

Ցայնմ ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրաման յԱնաստասայ՝ յօրինէ տոմար հանապազորդ[5]. որ մինչ խորհէր պատրիարգն. ժողովով հաստատել՝ կատարի, և յաջորդէ զնա Իսրայէլ՝ զկնի վեց ամ պաշտելոյն Անաստասայ: Ցաւուրս սորա զԲառաբա ոմն զօրագլուխ Տաճկաց՝ որ 'ի Հայս, վանեալ հալածէ Ներսեհ իշխանն Վրաց: Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն վախճանի, և առնու զքօղն սուրբն Սահակ, որ 'ի Զորոփոր յԱրքունեացն: Ի յեօթն ամին սորա՝ արշաւեցին Խազիրք 'ի Հայս, և սպանին զԳրիգոր իշխանն. և գերեցին զհնարաւորն իւրեանց: Եւ առնու զիշխանութիւնն Աշոտ Բագրատունի՝ որդի Սմբատայ:

Լէ. Իսկ Մուսի իշխանն Իսմայելի խորհեցաւ բառնալ զթագաւորութիւնն Ցունաց, որպէս և զՊարսիցն, և կազմեաց երեք հարիւր նաւ մեծ, և յամէն նաւ հազար այր. և հազար նաւ փոքր, և յամէն նաւ հարիւր այր. և արձակեաց զնոսա ընդ ծովն. և ինքն ընդ ցամաքն հասանէ 'ի Քաղկեդոն. և կորեան ամենայն նաւքն, և ինքն փախեաւ 'ի գիշերի և զերծաւ, և մե-

[1] Հին Օ. առաջ արարեալ ամենեին:

[2] Այլ օր. 'ի բերան վիրապին:

[3] Ակոռւոյ եկեղեցիդ և վանք չինեալ 'ի կաթողիկոսէդ, կործանեցաւ 'ի մեծի փլածին Մասեաց յամի 1840:

[4] Դաւիթդ նահատակեալ 'ի Դուին կոչեցաւ Ս. Դաւիթ Դունեցի:

[5] Այսինքն տոմար անշարժ ըստ աւուրց ամսոց յարմարեալ, որ չէառ երբէք հաստատութիւն 'ի Հայս քաղաքօրէն վարմամբ:

ռաւ յԱսորիս: Եւ առ զիշխանութիւնն Մրուան որդի իւր, և առաքեաց ոստիկան 'ի Հայս զՄահմէտ ոմն, որ աւերեաց զՍևան կղզի, և գերեաց զորս 'ի նմա. և խաբէութեամբ կողոպտեաց զսուրբ Գրիգոր, ծառայ մի սպանեալ և ընկեցեալ 'ի խորափիտ մի. և ապա խնդրեալ և գտեալ՝ վրէժխնդիրք լինէին, ծայրակոտոր արարեալ զկրօնաւորսն, և քառասուն այր զփայտէ կախեալ: Եւ գնացեալ Մահմետի, այլ ոստիկան առաքէ 'ի Հայս Աբդլա անուն, որ կամեցաւ բառնալ զազատազունդն Հայոց, և զՍահակ կաթուղիկոս կապեալ առաքէ 'ի Դամասկոս, և զիշխանն Հայոց զՍմբատ. և զսուրբն Դաւիթ խաչէ 'ի փայտի. և մնացեալ իշխանքն Հայոց, Սմբատ և Աշոտ և Վարդ, կամեցան փախչել 'ի Ցոյնս. որոց հետամուտ եղեալ Իսմայելացիք հինգ հազար, հասին 'ի Վարդանակերտ և կռուեցան[1] և սրախողխող եղին առ հասարակ յիշխանացն մերոց, օգնութեամբն Աստուծոյ, զորոց զունչսն հատեալ առաքէ առ կայսր, և առնու զկիւրապաղատութիւնն զկնի Աշոտոյ, որ չինեաց զԴարօնից[2] եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա յարևմտից, մասամբ. և 'ի նաւակատիսն երգեաց Զորս ըստ պատկերին: Եւ գնա փոխէ Սմբատ Բագրատունի, և գնացեալ 'ի Տայս ամրանայ 'ի Թուխարս[3]: Եւ լուեալ զայս Աբդլմէլիք, հրամայէ Մահմետի ելանել 'ի Հայս, որ էր զօրավար նորա. զոր լուեալ Սահակայ 'ի կապանսն՝ գրէ աղաչանս, զի հրամայեսցէ նմա Մահմէտ առ ինքն գնալ. որ և հասեալ 'ի Խառան և հիւանդացեալ, գրէ առ նա աղաչանօք թողուլ զոր արարին ընդ նոսա Հայք. զոր ընթերցեալ Մահմէտ զգիրն Սահակայ, չիշոյց զբարկութիւնն իւր, և ոչ եկն չարութեամբ յաշխարհս[4]: Զկնի քսան և եօթն ամի պատրիարգութեան նորա յաջորդէ Եղիա զաթոռն: Մեռաւ Աբդլմէլիք, և առ զտեղին Վլիթ որդի նորա,

[1] Վարդանակերտի կռիւն յեղր Երասխայ եղև յամի 702, և հուչակեցաւ յոյժ կոտորածիւ Արաբացւոց, մինչև յառակ և յանէծս կարգել նոցա զօրն զայն:

[2] Դարօնից բերդ ըստ ոմանց 'ի Բասեն, հաւանագոյն է լինել 'ի Կոգովիտ, յայժմեանս Գայէզիտ:

[3] Թուխարք կամ Թուղարք բերդ, այժմ անեանօթ, Թուի 'ի կողմանս այժմեան Շաւշէթի:

[4] Հին Օ. յաւելու. Ոմանք զՍկայոյ ոմն ամիրապէտ ասեն, որ լուաւ առ նա Սահակ և գրեաց նմանակ հաշտութեան. ևս հանդերձ սուրբ մարմնով նորա առաքեաց յերկիրս:

որ հրամայէ Մահմետի բառնալ զազատան, Հայոց, 'ի Կասմայ ումեմնէ, որ էր հրամատար Նախճաւանի, որ խաբէութեամբ հաւաքեալ զնոսա, զոմանս յեկեղեցին Խրամայ[1], և զկէսն յեկեղեցին Նախճաւանի, այրէ զնոսա 'ի ՃԾԳ թուականին. և զգլխաւոր նախարարսն զփայտէ կախեալ չարչարէին. և զկանայս և զորդիս նոցա՝ 'ի գերութիւն վարեցին, ընդ որս և զՎահան՝ որդի Գողթան տեառն, որ և մարտիրոսացաւ:

Զվլիթ փոխէ Սլիման եղբայր նորա, և գնա Ումար՝ որ զսուրբն Վահան նահատակեաց: Իսկ զկնի այսորիկ[2] Սմբատ կիւրապաղատն և ընդ նմա նախարարքն գնացեալ յեգեր, առին 'ի կայսերէն զքաղաքն Փոյթ[3] և բնակեցան անդ. և զկնի յաւարի առեալ գնա, և զսպաս եկեղեցեացն, և եկին 'ի Հայս. և բարկացեալ Ցունաց նզովս, կարգեցին նոցա գրով, և 'ի զատկի տօնին կարդան:

ԼԸ. Բայց մեծն Եղիա երթեալ յԱղուանս, զՆերսէս Բակուր, զղաւանողն ժողովոյն Քաղկեդոնի, և զտիկինն որ համախոհ էր նմա, 'ի ձեռն Ումարայ աքսորէ անարգանօք[4], և ձեռնադրէ այլ ուղղափառ (!) 'ի տեղի նորա. և ինքն դառնայ 'ի Հայս, և կատարի զկնի չորեքտասան ամի աստիճանին:

Եւ յաջորդէ գնա Ցովհաննէս իմաստասէրն մեծ, որ 'ի ներքոյ ազանէր այծեայս ցփսիս և 'ի վերոյ պճնազարդեալ պատուճէր զանձն, և ոսկի մանր աղացեալ փչէր ընդ ծաղկեալ ալեօք մօրուան. զոր լուեալ Ումարայ կոչէ առ ինքն, և եօթն անգամ արքունական զգեստիւք խիլայէ զնա, և առաքէ 'ի Հայս, որոյ եկեալ ճգնէր 'ի պահս և յաղօթս, և 'ի լուսաւոր վարդապետութիւնս: Որ և արար ժողով 'ի Մանազկերտ Հայօք և Ասորւօք, և սրբեաց զհաւատս 'ի մարդաւաւան աղանդոյն՝ յեզրի խոտորմանէն[5]:

Ցայնմ ժամանակի գրեաց Ումար առ Լևոն կայսր շատ ինչ բանս, և զայն ևս, թէ լուեալ է մեր թէ եօթանասուն և երկու

[1] Խրամ աւան յեզր Երասխայ, ծանօթ մերձաւոր մենաստանաւ սրբոյ Նախավկային:

[2] Հին Օ. Իսկ զկնի այսրեալ իշխանացն:

[3] Փոյթ է Փոթի քաղաք առ բերանով Փասիս կամ Ռիոն գետոյ:

[4] Արդարև անարգիմաց աքսորանք:

[5] Ոչ է Ցովհաննու Իմաստասիրի արարեալ, այլ Տիկորեցւոյ ուրումն Ցովհաննու այդպիսի ինչ:

բաժին են քրիստոնեայք: Նա գրեաց պատասխանի թէ երկոտասան են. Յոյնք, Հոռոմք, Բաբելացիք, Եգիպտացիք, Եթէովպացիք, Հնդիկք, Ասորիք, Հայք, Սարակինոսք, Պարսք, Աղուանք, Վիրք: Իսկ դուք, ասէ, ընդէ՞ր կոչիք Քուզի, Սաբրի, Թուռաբի, Կնտրի, Մուրջի, Բասլի, անաստուած Ջհդի, որ ուրանան զէութիւնն Աստուծոյ և զյարութիւնն, և զասացեալ քո մարգարէն Հարիրի. և այն երկու. ոմն ատէ զձեզ, և ոմն ոչ է խռովասէր[1]. և զձեր գրեանն գրեցին Ումար և Աբուբուռաբ և Սուլիման պարսիկ, զոր Հաջաջ ազգապետն Պարսից շրջել ջանաց: Բայց մերս նոյն է, զի 'ի սուրբ Հոգւոյն է. և 'ի գերութեանն ամենայն գրեանն[2] ոչ կորեան, այլ մնացին առ ցրուեալսն, և յորժամ Եզր գրեաց զբովանդակն, միաբան զոսան հնոյն, և է ըստ ալփավիտացն համարոյ, թէպէտ հինգն կրկնի, ոչ առանց մեծի խորհրդոյ:

Իսկ սուրբ պատրիարգն Յոհաննէս՝ եհան յաշխարհէս Հայոց զտարածեալ Յոյնն յամենայն տեղիս, հրամանաւ Ումարայ, և զիշխանն դեսպան արձակեալ 'ի Լևոնէ Վասիդ անուն առ Յոհան, ասելով, թէ ընդէ՞ր առնես զչար բանդ զայդ. և հիւանդացաւ իշխանն և ածեալ յոլով բժիշկս՝ չկարացին օգնել և մերձեցաւ 'ի մահ. և ձեռն եդեալ սուրբն Յոհան՝ առժամայն ողջացաւ. և տեսեալ զսքանչելիսն հաւատաց 'ի մեր ուղղափառութիւնն, և ոչ ևս դարձաւ 'ի Յոյնս (!). եղև կրօնաւոր և ճրագնեցաւ ամս հնգետասան յայրին, որ Հոռոմ-այրն կոչեցաւ անուամբ նորա. և զիսաչն որ կայ՝ իշխանն առ ինքն ունէր 'ի գալն 'ի Հոռոմոց, և անդ մնաց[3]: Յոհան զկնի մետասան ամաց կատարի, և յաջորդէ զաթոռն Դաւիթ Կոտայեցի յԱրամօնից գեղջէ, որ լեալ էր միշտ 'ի տան կաթողիկոսարանին յաւուրց անտի Տրդատայ. ուր չինեաց եկեղեցի, անդ առնելով զաւուրս կենաց իւրոց զամս երեքտասան, նեղեալ 'ի ... Տաճկաց որ 'ի Դուին: Եւ զսա յաջորդէ Տրդատ՝ յՕթմանու գեղջէն, այր լաւ և առաքինի. որ եղև 'ի սադրելոյ աղօթից նորա խաղաղութիւն, զամս քսան և երկու:

[1] Հին Օ. Եւ այն երկոտասան զձեզ. և ոչ ոմն ոչ է խռովասէր:

[2] Այսինքն հին կտակարանքն առ գերութեամբն Հրէից. զորս ոմանք քսանևեօթն հաշուեն, այլք քսան և երկու, ըստ այլ և այլ կարծեաց Թուոյ ալփաբետաց Եբրայեցւոց:

[3] Հին Օ. յաւելու. Այսպէս լուաք, և զու ընկալ՝ թէ կամիս՝ սիրով: Զնոյն ասելի է և վասն Վասիդայ իրացն, ըստ լրոյ լինել, այլայլեալ:

Լթ. Իսկ զՈւմար փոխէ Իզիտ.., որ զիսաչ և զպատկեր եբարձ յերկրէ. և զիսոցն սպանանէր, մինչ խեղդեցաւ. և եկաց յետ նորա Հէշմ, որ առաքեաց զեղբայր իւր զՄալիմ մինչև ցԲիւթանիա եօթն բիւր հեծելով, և միւսանգամ դարձեալ գնայ և ծովասոյզ լինի 'ի զօրութենէ Քրիստոսի խաչին. բայց միայն յիսուն այր մնաց. և կայսր արձակեաց զՄալիմ, պատմել զփառս Աստուծոյ:

Արձակէ Հէշմ զՄրուան որդի Մահմետի 'ի Հայս, որ եկեալ կացոյց զԱշոտ Բագրատունի կիւրապաղատ, և կամ պատրիկ ասել. և մախային նմա Սմբատ և Դաւիթ և Գրիգոր մամիկոնեանք: Եւ գնացեալ Մրուանայ 'ի Վարաչան քաղաքն Հոնաց, և դարձաւ յաղթութեամբ: Զկնի Հէշմայ նստաւ Վլիթ զազրագործ, որ և հրամանաւ կուռայիցն[1] սպանաւ, և եղաւ Սուլիման, և սպան զնա Մրուան, և ինքն տիրեաց. և տային Հայոց զօրուն ամի ամի հարիւր հազար դահեկան խածիթայս[2]: Եւ էառ Մրուան զԴամասկոս. և խայտառակեաց զնոսա, զի կապէր զմարդ 'ի չորս ցիցս և զերեսին կաշին հանել տայր. 'ի վերայ ամբարշտութեան նոցա և սպանութեան և ցանկութեան անառակութեան. յԱստուծոյ ակն ոչ ունէին պատուհասի[3]:

Զայսու ժամանակաւ ապստամբութիւն խորհեցան իշխանքն Հայոց. և ոչ կամեցաւ պատրիկն Աշոտ. և կալեալ կուրացուցին զնա մամիկոնեանքն Գրիգոր և Դաւիթ. սա է նախնի թագաւորացն Հայոց և Վրաց՝ Աշոտն: Ելանեն ապա երկու Աբղայքն, որդիք Հէշմայ, և երկու ամ պատերազմին ընդ Մրուանայ կոտորմամբ սրոյ յոյժ յոյժ. որ 'ի միում նուազի անկան 'ի զօրուէն երեք հարիւր հազար, և սպանաւ Մրուան, և տիրեցին Աբղայքն[4], որ և 'ի մեռելոցն պահանջէին հարկս. և առաքեցին 'ի Հայս զԻզիտ՝ զառն նեղիչ, և ապա զԲաքր, և ապա զՀասան կատաղի. ընդ որ դառնացեալ Մուշեղ Մամիկո-

[1] Կուռա, Քուռաս, ընթերցողք մահմետական օրինաց: Սպանեալդ է Վալիտ Բ, յամի Տեառն 744:

[2] Խածիթա նշանակէ զհոգ զօրականին, այլ ոչ գիտեմ ո՞րպէս ստուգաբանի:

[3] Հին. Տուչէր զերեսս նոցա, 'ի վերայ երեց և չորից ամբարշտութեանց նոցա, որ է սպանութիւն և ընչից ցանկութիւն և հեշտ ցանկութիւն. և չորրորդն յԱստուծոյ ոչ ունէին ակն պատուհասի:

[4] Ակնարկէ 'ի մեծ պատերազմն՝ որով Ապպասեանք բարձին զԻմմիայեան խալիփայս:

նեան՝ ապստամբեալ՝ սպան յԻսմայելէ երկերիւր այր, և ապա չորեք հազար. և ապա խաբեալք 'ի մոնոզոնէ միոջէ, որ տեսիլս և երազս սուտս պատմէր, և ասէր թէ կատարեալ են ժամանակքն Իսմայելի, ժողովեցան հինգ հազարք, որոց գլխաւորքն՝ Մուշեղ և Սմբատ, որք մարտեան ընդ երեսուն հազարաց, և մեռան երեք հազարքն և Մուշեղ և Սմբատ[1]:

Խ. Իսկ զկնի Տրդատայ միւս այլ Տրդատ յաջորդէ զսուրբ աթոռն՝ ամս երիս. ապա Սիոն եպիսկոպոս Աղձնեաց, այր սուրբ և աքանչելի, որ զյորդառատ աղբիւրն ցամաքեալ առ ստորոտով Սիմն կոչեցեալ լերինն զաւազանաւ հարեալ բխեցոյց. որ և զկնի ութ ամի կատարի, և առնու զաթոռն տէր Եսայի յԵղիպատրուշոյ[2]. զոր ասեն թէ մայրն աղքատութեամբ էր սնուցեալ, բացօթեայ, մուրով[3], ցրտահար 'ի ձմերանի և արևակէզ յամարանի. զոր ասեն թէ 'ի սառտելն ոմանց 'ի դրան հայրապետանոցին, ասաց մայրն. Ո՞չ գիտէք թէ պատրիարգ սնուցանեմ զտղայս իմ. որպէս և եղևն իսկ, նախ եպիսկոպոս և ապա պատրիարգ, 'ի շնորհացն Աստուծոյ. որ զկնի երեքտասան ամի կատարի. և յաջորդէ զաթոռն Ստեփանոս ամս երկու: Եւ ապա Յոբ ամիսս վեց. յորում աւուրս 'ի գեօղն Բագրևանդ վասն ոսկեղէն զարդուց եկեղեցւոյն զրպարտեալ յոստիկանէն սպանան քառասուն այր. և առին յոլով գանձ: Իսկ զկնի Յոբայ Սողոմոն յաջորդէ զաթոռն, որ էր 'ի Գառնոյ, առաջնորդ սուրբ ուխտին Մաքենոցաց. որոյ երթեալ 'ի գաւառն Շիրակայ 'ի գեօղն Զրեսկ, մտեալ 'ի խուց ճգնի յոյժ, ուստի հանեալ տանէին յաթոռն. զոր տեսեալ յոյժ ներգնեալ 'ի ճգնութեանցն՝ ասեն. Յո՞ երթաս. ասէ. Սևել զերեսս դեղով ընդ այլ հայրապետն. որպէս և եղևն. զկնի ամի միոյ վախճանեալ՝ նկարի ընդ այլսն: Եւ յաջորդէ զնա Գէորգ յԱրագածայ ոտանէ:

Իսկ յետ Աբդլայի Մահմէտ որդի նորա. և առաքէ առ Լևոն երկու գրիւ մանանեխ, և զօր զկնի, և չկարաց վնասել:

ԽԱ. Բայց անկելոցն 'ի մեծ պատերազմին[4] մնացորդք՝ էին այսոքիկ. երկու որդիք Սմբատայ որդւոյ Աշոտի, որոց անունքն՝ Աշոտ և Շապուհ. և Սամուելի եղբայր մի Շապուհ անուն. իսկ Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք. անդրանիկն Շապուհ անուն: Որք անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թէ 'ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ. և մի 'ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա: Իսկ որդիքն Սմբատայ Աշոտ և Շապուհ, հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց. և զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին յինքեանս Աշոտ և Շապուհ. և ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զզօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ չինէ զԿամախ[1], և բնակեցուցանէ 'ի նմա զընտանիս իւր. և ինքն նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդւոյ Բիւրատայ իշխանի Սմբատաւանայ, որ է Բեբերդ[2] 'ի Սպեր գաւառի: Քանզի յաւուր միում պաշարեցին զնա Թշնամիքն՝ մինչ կայր յաղօթս, և տեսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչև ցկատարումն, և ապա ելեալ ընդդէմ նոցա, կտրէր յերկուս զգլխաւորն, որում անուն էր Լիպատոն Աբդլա, և հարկանէր իբրև արս հինգ հարիւր: Առ սա բոլոր կալեալ ազգին Գնունեաց[3] թափել զնասս յԻսմայելացւոցն, որոյ երթեալ հազար ազգաւ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն զումարեալ զամենայն ազգն տիրեան իւրեանց, ասանկ բնակեցուցանէ ի Տայս:

Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, համարձակէր երկիրս Հայոց, և սրեան զրաւեալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս: Եւ ասաւր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապատութեան. Իսկ Ջահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն, զայ նստի 'ի Դուին բռնութեամբ, որդւոյով իւրով Աբդլայով: Եւ իբրև լուաս զայն կիւրապատն Աշոտ, առաքէր առ կայսրն Լևոն օգնել նմա, և նա չէր պարապ. զի Միքայէլ ոմն

---

[1] Պատերազմս և կոտորած Հայոց եղև 'ի կողմանս Արճիշու և Բագրևանդայ, յամի Տեառն 775:

[2] Եղիպատրուշ գեօղ Նիգ գաւառի, այժմ վիճակ Ապարանու:

[3] Հինն. մուրականութեամբ:

[4] Պատերազմին Բագրևանդայ. տես յէջ 83:

[1] Հնգենարդ ասա և սրբոց չիրթէ զմնի Շիրակայ ընդ Անուն Դարանաղեաց՝ որ կոչէր և Կամախ:

[2] Այն է Բաղբերդ, կամ Պարպերդ, յեռոյ Եռաբանոց լեալ քարոք:

[3] Գնունիք կոչեն Ամիոյ և Բերկրոյ է, 'ի Հիւսիսոյ երկրին Վանայ:

Ջանացեալ սպանանել զնա, և ոչ յաջողեալ գործոյն, այլ իմացեալ կայսերն՝ կամեցաւ սպանանել զնա, և աղաչեցեալ 'ի թագուհւոյն՝ մինչև անցցէ զատկին օր, վասն որոյ եղաւ 'ի բանտի. և էր բանտապահն բարեկամ Միքայելի, որ կաշառեաց զմանկլաւիկքն, որք են սենեկապանք արքայի և մօտակայք. և սոքա յանկարծակի որովք դիմեցին 'ի վերայ կայսերն յեկեղեցին 'ի ժամ պատարագին, և նորա փախուցեալ առ սեղանն բուռն եհար զնմանէ. իսկ նոքա անողորմ գազանաբար սպանին 'զնա 'ի տեղւոջն: Եւ թագաւորեաց Միքայէլն. ելանէր 'ի խնդիր մեծ զօրավարին Մանուելի մամիկոնենոյ. և նորա աճապարեալ հարիւր և յիսուն արամբք անկանի 'ի Կամախ, և անտի առ Մամուն իշխանն Իսմայելի, որ սպանեալ զեղբայրն Մահմէտ՝ ինքն տիրէր Տաճկաց. և նորա յոյժ պատուեալ զնա, կտրեաց ոտճիկս աւուրն հազար երեքհարիւր և վեց կշիռ արծաթոյ, և զայլ օր ըստ օրէ պարգևս անչափ և անկշիռ: Բայց կիւրապաղատն Աշոտ տիրեաց 'ի Կաղրջաց մինչև 'ի Տփխիս, լեռնակողմամբն Հանդերձ: Բայց տունն Ջահապայ զօրացեալ 'ի Դուին, իբրև հինգ հազարաւ կաւեցան գնալ 'ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդւոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն և քաջն հնարատացեալ՝ երկերիւր հեծելօք և երեքհարիւր հետևակօք ել ընդդէմ նոցա չմնացեալ հաւաքման զօրացն, և կոտորեաց 'ի նոցանէ զերեք հազարսն, և հասեալ 'ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա, և դարձան խնդութեամբ փառաւորելով զՔրիստոս: Եւ Շապուհ եղբայր նորա ասպատակեալ 'ի կողմանս Դւնայ, և առեալ աւար բազում դառնայր. և թափեցաւ զօրն 'ի քաղաքէն զհետ նորա, և քաղաքացիքն դիմեալք 'ի վերայ Արդմէլքի[1], սպանին զնա, և ածին զդուռն քաղաքին. և դարձեալ զօրացն և իմացեալ զեղեալն, չքոտեցան և կորեան 'ի միջոյ:

ԽԲ. Յաւուրսն յայնոսիկ դայր եպիսկոպոս մի Եպիկուռա անուն առ Աշոտ, և ջանայր դարձուցանել զնա... Քաղկեդոնի. զոր լուեալ Թուրեան ոմն վարդապետ 'ի Միջագետս, առաքէ զսարկաւագն Նանուս, որոյ եկեալ մարտնչի ընդ Այիկուռայ, և յաղթէ նմա զօրութեամբ... և հալածէ զնոս իշխանն, և հաստատի ևս առաւել 'ի հաւատս սրբոյն Գրիգորի[2]:

[1] Արդմէլիքդ նոյն ինքն է անչուշտ որդին Ջահապայ, զոր վերագոյն Արդլա կոչեաց:

[2] Հաւատք Ս. Գրիգորի ոչ են անմիաբան հաւատոց Քաղկեդոնի: Բայց զիրս զայսոսիկ յիշատակէ և հայ թարգմանիչ Նանայի, մեկնչին Յովհաննու, և

Յետ այսորիկ վախճանի Աշոտ 'ի մահիճս, և առնու զիշխանութիւնն Սմբատ որդի նորա ամ մի. և ապա մարտուցեալ ընդ չորից հազարաց[1], հինգ հարիւր արամբ պսակի 'ի Քրիստոս յիսմայելականացն: Եւ եղբարք նորա Դաւիթ և Սահակ և Մուշեղ և Բագարատ, առեալ զմայրն իւրեանց չոգան 'ի Նփրկերտ, առ Խալքաֆն[2] ամիրայ, սիրով ընկալեալք 'ի նմանէ: Իսկ Սևադա ոմն 'ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կռուեալ ընդ Աշոտոյ և ընդ եղբօր իւրում Շապհոյ, մեռաւ Շապուհ 'ի պատերազմին. և զկնի երկու ամաց մեռաւ Աշոտ 'ի տան իւրում և առ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա, և խնամէր զմնացեալ որբսն, զորդին Շապհոյ, բնակեցուցեալ զնոսա յԱնի Յապահովս. խաղաղութիւն արարեալ ընդ Սևադայի, առնու 'ի նմանէ զպատիւն հայրենի ասպարապետութեան. և ամուսնացեալ ընդ քեռն Դաւթի՝ ծնանի երկու որդիս, զԱշոտ և զՇապուհ, որոց քոյրն տուաւ յամուսնութիւն Բագարատայ որդւոյ Աշոտի կիւրապաղատի. և Դաւիթ եղբայրն Սմբատայ չինէ զՕձ բերդ[3]:

Յաւուրսն յայնոսիկ այր մի յազգէն Պարսից Բաբ[4] անուն ելեալ 'ի Բաղտատայ, արկանէր զբազումս 'ի սուր սուսերի յազգէն Իսմայելի, զբազումս գերելով. և ասէր զինքն անմահ. և 'ի միում նուազի սատակէր երեսուն հազար 'ի պատերազմելն իւրում ընդ Իսմայելի: Եւ եկն մինչև ցԳեղարքունի, և մաշէր սրով զմեծ և զփոքր. և Մամուն էր 'ի կողմանս Յունաց զամս եօթն, և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ[5], և դառնայ 'ի Միջագետս: և Մանուիլ երթայր դարձեալ 'ի Յոյնս: Մեռաւ Մամուն. և առ զիշխանութիւնն Աբուսահակ[6] եղբայր նորա. և նա առաքէ զԱփշինն ամենայն ուժով իւրով 'ի վերայ Բաբանայ: Եւ Ափշինն առաքէ 'ի Հայս, և ինքն կոտորէ զզօրսն Բա-

զԱպիկուռ ասէ հալածեալ. այլ պատճառք իրացն ոչ են քաջայայտք:

[1] Մարտուցեալ ընդ Հոլայ ոստիկանի բռնաւորի:

[2] Նախ Հաստատնեանք ճանաչին տիրապետք Նփրկերտոյ 'ի Ժ դարու, որ է Մուսարդն (որպէս դնէ Հին Օ): Իսկ որ յառաջ քան զդուռս ամիրայդ Խալիֆ՝ անծանօթ է մեզ:

[3] Օձ բերդ Թուի Օձ քաղաք Տարօնոյ:

[4] Անուանին Պապէք մոլորեցուցիչ, ապստամբեալ 'ի խալիֆայէն յամի 817, որ զամս քսան 'ի տաղնապի կացոյց զմիահեծան պետութիւն ամիրապետաց, և ձերբակալ եղև 'ի քաջէ հայկազնոյն Սահկայ, յամի 836:

[5] Լուլուա ամրոց 'ի Կիլիկիա:

[6] Մոդասէմ կոչի այս խալիֆա:

բանայ: Եւ Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան, և առնու յԱփշնէն պարգևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ, և այլ ևս հարիւր հազար առնու ի նմանէ, և զԲաբանայ կտրեալ զձեռս և զոտս՝ հանեն զնա ի փայտ: Եւ երթայ Ափշինն յերկիրն Ցունաց, և յաղթէ կայսերն. և առնու զԱմուրիա քաղաք[1], և գերեալ զնա դառնայ խաղաղութեամբ: Ցաւուրսն յայնոսիկ Աբըլհերթ[2] ոմն ի տանէն Զահապայ, ել չորիւք հազարօք յերկիրն Սիւնեաց, և ել Բարգէն ընդդէմ նորա երկերիւրօք, և ջնջեաց զնա իսպառ:

ԽԴ. Իսկ ի կարգի պատրիարգացն[3], յաջորդէ զԳէորգ՝ Ցովսէփ, ամս մետասան. և զնա Դաւիթ, ամս երեքտասան: Ցորում աւուրս ոստիկան ոմն ել ի Հայս՝ Հալ անուն, որում ընդդէմ դարձան և մեռան Սմբատ և Սահակ Սիւնեաց տէրն[4]: Իսկ զՑովսէփ յաջորդէ Ցովհաննէս, այր սուրբ և պարկեշտ, որ ըզկնի ութ ամի չարախօսեալ զնա առ Բագարատ իշխան Տօրոս լերինն, խորհի ընկենուլ զնա, և պատուհասին ի Տեառնէ չարաչօսքն: Եւ ոստիկան ոմն եկեալ Աբուսէթ անուն, կապեալ առաքէ զԲագարատ առ ամիրայն. իսկ ամբոխն Տօրոսի շարժեալք ի բարկութիւն սպանին զԱբուսէթ[5]. զոր լուեալ ամիրայն՝ գումարէ զօր բազում ի ձեռն ընդոծնոյ իւրոյ Բուղայի[6], տուեալ պատուէր զնախարարս աշխարհիս կապանօք առ նա հասուցանել. որոյ եկեալ կատարէր զհրամայեալն: Քանզի մտեալ ի Տարօն ըմբռնէր զորդիսն Բագարատայ գերելոյ՝ զԴաւիթ և զԱշոտ, և զմեծ իշխանն տանն Արծրունեաց զԱշոտ. և զգեղեցկադիտակն Ատոմ հարիւր յիսուն արամբ՝ բռնադատէր ուրանալ զՔրիստոս. որում ոչ հաւանեալք, դառն

[1] Ամուրիա է Ամուրիոն քաղաք ամուր ի կողմանս Գաղատիոյ. բնիկ տեղին ընդ երկայութեամբ է:

[2] Իպն-Խալիթ կոչի յԱսողկայ, և Վլիթ կամ Ալթ-Փատգոս ի պատմչէն Աղուանից. դէպքն պատշաճին 842 ամի Տեառն:

[3] Շփոթութիւն է ի կարգի կաթողիկոսացդ, որ ըստ այլոց ժամանակագրաց այսպէս է. Գէորգ 3 ամ, Ցովսէփ, 11. Դաւիթ, 27. Ցովհան, 22. Զաքարիա, 22. և այլն:

[4] Տե՛ս ի վերդ, էջ 87, Ծ. 1:

[5] Սպանեալն ի Սանեցւոց է Եուսուֆ Իպն-Մուհամէտ, որդին Աբուսէթայ, յամի 851:

[6] Արիւնախանձս այս ոստիկան՝ Թուրք էր ազգաւ, և կոչէր Գարա-Բուղա և Էշարապի, և Աւագ՝ յորոշումն ի կրսերոյն, որ է քեռորդի նորին:

տանջանօք սրոյ և հրոյ և խաչի պսակեցան ի Քրիստոսէ, որ օր քսան և հինգ էր մեհեկի ամսոյ, զոր տօն կարգեաց սուրբ պատրիարգն Ցովհաննէս: Եւ ինքն վախճանեցաւ զկնի քսան և երկու ամի հայրապետութեանն իւրոյ. և առնու զաթոռն Զաքարիաս ի գեղջէ Զագայ: Եւ Բուղայի կալեալ զիշխանն Սիսական զՎասակ և զեղբայր նորա զԱշոտ, և զմեծ իշխանն Ատրներսեհ ի գաւառին Խաչենոյ, և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն, և յՈւտի երթեալ՝ ըմբռնէ զՍտեփանոս Կոնն, որ ի նախնոյն իւրմէ Սևկոյ՝ Սեւորդիք ազգն անուանին, և զիշխանն Աղուանից զԵսայի. զամենեսեան խաղացուցեալ տանի առ ամիրապետն. կոչելով զկնի և զսպարապետն Սմբատ խաբէութեամբ, զոր իբրև չոգաւ՝ ընդ կապեալսն խառնէին, և պահանջէին ուրացութիւն. զոր ոչ կալաւ յանձին քաջ խոստովանողն Սմբատ, այլ անդէն ի բանտին կատարի ի Քրիստոն, և թաղի ի գերեզմանի Դանիէլի մարգարէի. և զպատիւ նորա առնու Աշոտ որդի նորա: Վկայեաց և Ստեփանոս բազում տանջանօք ի նմին տեղւոջ, Կոնն կոչեցեալ: Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն ելանէ ի բանտէն, և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրևանդ, և կամէր ամրանալ ի գաւառն Գարբեղինից ի Գաղանածական. որ և զկնի եօթն աւուրց մեռանի: Եւ իմացեալ ոստիկանին Մահմետի որ ի Հայս, առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր և իցէ ըմբռնեալ առ նա տարցի, և նորա հատեալ զգլուխ մեռելոյն առաքէ առ նա, ասելով թէ Կամեցաւ անցանել առ Ցոյնս, և իմ զկնի առաքեալ՝ սպանի, և ահա գլուխ նորա: Եւ խնդաց Մահմէտ, և զգացուցանէ Զափրի[1], և նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրևանդ, և արծաթ բիւրս հինգ. և յայնմհետէ բարձաւ ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից:

ԽԵ. Բայց ասելի է ասա զսկիզբն թագաւորացն Հայոց և Վրաց, որք ի Բագրատունեաց անտի սերեցան: Քանզի որպէս ասացաւն՝ զկնի քաջին Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ, մինչև ի Սմբատ Բագրատունի, և զկնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք: Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց, և Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրներսեհ, սորա՝

[1] Ամիրապետս Զափր կոչեցեալ թուի լինել Մոդավէքէլ (յամս 847-861), կամ մի ի յաջորդաց նորա՝ որք ոչ ճանաչին յայլոց Զափր անուամբ:

Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գորամ[1], հետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ ապանաւ 'ի Գորամայ հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդի Դաւիթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն: Իսկ Հայոց Նախնոյն Սմբատայ որդի Աշոտ Մսակեր, որոյ որդին Սմբատ խոստովանողն, որոյ որդին այս Աշոտ բարեպաշտ, որ անուանեցաւ իշխանաց իշխան 'ի յԱլեայ որդւոյ Վահէի[2] հրամանաւ ամիրապետին Ջափրայ: Առ սա առաքեաց Փոտ պատրիարգն Կոստանդնուպօլսի յերեքհարիւր ութեւտասն թուականին զՅոհան մետրապօլիտն Նիկիոյ[3], որ ունէր թուղթ առ Զաքարիա պատասխանի հարցմանն, թէ վասն է՞ր եղև չորրորդ ժողովն: Եւ արարին ժողով 'ի Շիրակաւանն. էր անդ և սարկաւագն Ասորւոց Նանա, որ 'ի մահ մերձեցաւ 'ի Ջափրայ վասն հաւատոյ, և տեսլեամբ արհաւրաց արձակեցաւ: Եւ էր գրեալ, թէ զկնի յարութեանն Քրիստոսի՝ երեքհարիւր հնգետասան[4] ամի եղև ժողովն Նիկիոյ երեքհարիւր ութեւտասնից. և պատրիարգունք էին, Սեղբեստրոս՝ Հռոմայ, Աղեքսանդր՝ Կուստանդնուպօլսի, Աղեքսանդր՝ Աղեքսանդրի, Եւստաթէ՝ Անտիոքու, Արիստակէս՝ Հայոց: Եւ յետ եօթանասուն և չորս[5] ամի երկրորդ ժողով եղև 'ի հինգերորդ ամի Թէոդոսի. և պատրիարգունք, Դամասոս՝ Հռոմայ, Նեքտարիոս՝ Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Ներսէս՝ Հայոց: Զկնի քառասուն և եօթն[6] ամի յերկրորդ ամի Թէոդոսի փոքու՝ եղև ժողովն երրորդ, և պատրիարգքն այս էին. Կեղեստիանոս՝ Հռոմայ, Կիւրղոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Յոբնաղ՝ Երուսաղէմի. և թուղթ Սահակայ Հայոց: Զհետ որոյ երևեցաւ Եւտիքէս չամանդրիտ՝[1] Կոստանդնուպօլսի, որ չփոթմամբ մի բնութիւն ասէր Քրիստոսի. զոր հալածեաց Փլաբիանոս պատրիարգն, և նա աղաչեաց զներքինապետ ոմն Ոսկեան կոչեցեալ գրել առ Դիոսկորոս, տալ հրաման ընդունել զնա, զոր և արար. բայց յետոյ զբղջացաւ և արար կրկին ժողով յԵփեսոս, քսան և երկու ամօք զկնի Կիւրղին, և անդ աքսորեաց զՓլաբիանոս, և խոտեաց զթուղթն Լևոնի, և ելոյծ զՌոմնաս Անտիոքու. վասն որոյ գայ գիր մեղադրանաց առ Թէոդոս, և հրաման զի ժողով արարեալ վերստին տեսցեն. և նա կատարեալ 'ի Տէր, արար Մարկիանոս յետ չորեքհարիւր վաթսուն և երկու ամաց յարութեանն Քրիստոսի, զկնի հնգետասան ամի[2] ննջմանն Սահակայ սրբոյ. յորում ամի կատարեցան սուրբ Վարդանանքն, 'ի պատրիարգութեանն Յովհաննու Մանդակունւոյ, որ չէր պարապ գալ 'ի ժողովն: Եւ աքսորեաց զԴիոսկորոս 'ի ժողովն. և զՊետրոս յԱնտիոքայ և զԱնատոլիս եղբայր Դիոսկորեայ, նախ 'ի Կիզիկոն, ապա յԵրակլիա, և ապա 'ի Պամփլագոնիա: Մարկիանոս մեռեալ զկնի վեց ամի, առնու Լևոն զթագն ամս ինն և տասն, յորմէ աքսորեցաւ Տիմոթէոս 'ի Քերսոն: Լևոն փոքր՝ ամս հինգ. Զենոն ամս վեշտասան. սա եբարձ զաղմուկ ժողովոյն Քաղկեդոնի, բայց Հռոմ պահեաց...: Անաստաս, ամս քսան և եօթն, որ եկաց 'ի նմին բարեպաշտութեան[3], և դարձոյց զՏիմոթէոս յԱղեքսանդր: Յուստիանոս՝ ամս ինն. սա դարձեալ նորոգեաց զաղանդ ժողովոյն (!). Յուստինոս՝ ամս երեսուն և երեք. Յուստիանոս՝ ամս ինն: Սա կամեցաւ հաստատել զուղղափառութիւնն, և դաւով խեղդեցաւ: Տիբեր՝ ամս եօթն. առ սովաւ եղև ժողով 'ի Կոստանդնուպօլիս[4], և Հայք ոչ ընկալան: Մօրիկ՝ ամս քսան և երեք. Փոկաս՝ ամս ութ. Հերակլ՝ ամս երեսուն և հինգ. Կոստանդին՝ ամս երեք. Կոստանդին

[1] Բ. Օր. Գոռաբ. վիրք Կուրամ կամ Կուրամամ կոչեն:

[2] Ալի-իպն-Եահեա էլ-էրմանի, ըստ Արաբացւոց, որ 'ի Տաբսոն առաքեալ էր կուսակալ:

[3] ԶՅովհաննէ կամ Վահանայ եպիսկոպոսէ Նիկիոյ, զթղթոյն Փոտայ և զժողովոյն Շիրակաւանի՝ գտցեն ստուգասէր խնդրողք ծանօթս 'ի Պատմութեան Հայոց, հատ. Բ. 825:

[4] Նիկիոյ ժողով գումարեցաւ յ' 325 ամի ծննդեան փրկչին. յորում ժամանակի ոչ 'ի Կոստանդնուպօլիս և ոչ 'ի Հայս դեռ ոչ ճանաչիւր պատրիարք:

[5] Բ. ժողովն գումարեցաւ յամին 381, որ 56 ամաւ յետոյ է քան զառաջինն. և մերս Ներսէս. փոխեալ էր յաստուեացս:

[6] Զկնի 50 ամի. այն է 431 ամն:

[1] Այսինքն Արշիմանտրիտ, աւագերէց:

[2] Անմիաբան են թուականքդ նշանակեալք. Ս. Սահակ ննջեաց յամի 439. ժողովն Քաղկեդոնի գումարեցաւ յամի 451, յորում և նահատակութիւն Վարդանանց:

[3] Բարեպաշտութիւն սորա և ուղղափառութի Յուստինոսի ըստ մտաց հեղինակին:

[4] Ստիեզերական ժողով, որ է Բ Կոստանդնուպօլսոյ, զոր չընկալան համակարծիք հեղինակիդ:

թոռն Հերակլի՝ ամս քսան և ինն. առ որով Մարտինոս արարեալ ժողով 'ի Հռոմ, և երկու կամս և երկու ներգործութիւնս ասաց Քրիստոսի: Կոստանդին՝ ամս երեքտասան. առ սովաւ Ագաթոն արար ժողով և զՄարտինոսին հաստատեաց: Յուստինոս՝ ամս երկու. Լևոն՝ ամս երեք. Ապտիմարոս՝ ամս եօթն. Յուստինոս՝ ամս եօթն. Փիլիպպոս Վարդան՝ ամս երկու. Արտեմիս՝ ամս երկու. Թէոդոս՝ ամս երկու. Լևոն՝ ամս եօթն. Կոստանդին՝ ամս հնգետասան. Ղևոնդ՝ ամս հինգ. Նիկիփոր՝ ամս վեց. Ստռակոս՝ ամ մի. Միքայէլ՝ ամ մի. Լևոն Հայ՝ ամս տասն. Միքայէլ՝ ամ մի. Թէոփիլոս՝ ամ մի. Միքայէլ՝ ամս երկու. Վասիլ, առ որով Փոտ որ զԹուղթն գրեաց, և ասաց թէ չկայր հակառակութիւն մինչ 'ի վերջին Ներսէս, առ որով եղաւ Թուականն Հայոց, զամս հարիւր և չորս. որ նա ապա արար ժողով 'ի Դուին 'ի ձեռն Բարդիսոյ Ասորւոյ, որ եկեալ էր 'ի Սասնոյ. և զՓիլաքսիոսի եպիսկոպոսի Նաբուկ քաղաքի և զՏիմոթէի Կզուն գրեանն թարգմանեցին. և 'ի վեշտասան թուին սպան հեռն Վարդան զՍուրէն մարզպան Պարսից, և ինքն ընտանեօք եկն առ Յուստինոս յերեսներորդ ամի թագաւորութեան նորա, և 'ի տօնի խաչավերացին չհաղորդեցաւ ընդ մեզ, ասելով թէ մեր վարդապետքն չհրամայեն մեզ: Վասն որոյ արար ժողով թագաւորն հարիւր և յիսուն եպիսկոպոսաց, որ ասի հինգերորդ ժողով: Եւ յորժամ Մուշեղ Հայոց և Յունաց զօրքն նուաճեաց զմնոսրովու թագաւորութիւնն, և դարձաւ պարգևաք, բան անկաւ վասն հաւատոց, և արար Մորիկ ժողով հարիւր և վաթսուն եպիսկոպոսաց. քսան և հինգ եպիսկոպոսքն 'ի Հայոց էր[1]: Արար և Հերակլ եօթներորդ ժողով. իսկ Մայրովանեցին Յոհան ոչ ընկալաւ զոր Թէոդոս Ռըշտունի և Ներսէս Հալածեցին 'ի Կովկաս, և յետոյ եկն 'ի Հայս և արար զոր ինչ կամեցաւն. և 'ի Յունաց 'ի բաց կացին Հայք նզովիւք չափ, և առաւել յորժամ թարգմանեցին ըստ գրեանն Յուլիանեայ[2] Աղիկառնեցւոյն 'ի ձեռն Սարգսի 'ի ժողովն Մանծկերտոյ[3]:

Այսոքիկ 'ի թղթոյն Փոտայ սակաւ ինչ գրեցաւ որոյ գրեաց

[1] Վասն ժողովոյն Մորիայ՝ զոր Փոտ միայն յիշէ, տես 'ի Պատմ. Հայ. Բ. 630:

[2] 00. Լիկիանեայ:

[3] 00. Դ Ծանն:

պատասխանի Սահակ Մռուտն[1] կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց 'ի յԱշունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց, եկն 'ի Հայս առ Աշոտ:

ԽԵ. Դարձեալ նոյն կայսերէ Վասլէ եկն ներքինի մի Դիկիտ կոչեցեալ յերեքհարիւր քսան և հինգ թուին, ինդրել 'ի յԱշոտոյ թագ, բերեալ շատ պարգևս. քանզի Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա թէ արշակունի իցէ. դի մայրն Հայ էր, և կաստարել թուէր տեսլեանն Սահակայ որոյ նատել թագաւոր արշակունի. և կամէր պսակել 'ի բաղդատութիւն: Զոր կատարէ Աշոտ, ընդ նմին առաքէ և տասն հազար արծաթ ընծայ նորաշէն եկեղեցւոյն, որպէս Մամիկոնեանքն՝ հինգ գրիւ արծաթոյ, ասեն գնել զդուռն արևմտեան սրբոյն Գրիգորի 'ի Յուստինոսէ. յիշատակ Հայոց: Եւ պատմեաց Նիկիտն թէ զառաջ նշեալս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին 'ի յոգու Հաղբատ 'ի հինգերորդ շաբաթուն շաբաթ օրն, զոր ասն կարգեցին:

Յաւուրս յետոյսիկ ասէր Զաքարիա երթայ տեսանել զթիւրք զոր Շերամ, և յոյժ մեծարի 'ի նմանէ, առեալ նմա չատ թանկ պարգևս. և զբաշ՝ բառնալ խաչ 'ի վերայ նորա, և մոտանել առաջի նորա միշտ: Ձայս յանդգնէ Գէորգ 'ի տանէ պատարագանին: Յորում առուրս ընդարձակեալ մեծին Աշոտի 'ի Վիրս և Աղուանս. և զԽաչատարին Հնազանդեալ. և չէր ինչ ոչ կամ՝ բայց 'ի թագէ. զոր խորհին թշնամանքն Հայոց, և 'ի Հեռն Յիսէի ապէ առնեն ամիրասպարին, և նորա զոր ասէր որոյ առաքէ թագս և Հանդերձս և երիվարս: Զնոյն և յայտնի զատանէ. և ոչինչ զիրաքն տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն և վեց թուին. և յետոյ տասանեարորդ տարի Հայրապետութեան իւր ամ մի, և յամենայնի ուրեմն և ոչի տան մեծանան Հեռն. Որ բարիոք կարգաւորեալ պարտիմատ թագաւորութեանն ուս Հրոց:

Յաւուրս ատուս էր Հաճատն. որ գրեաց մեծին Գրիգորի Նոտարի և Գեղարքունեաց. և 'ի Տարաբ գիրս զ դարձ թարգմանութեան, և զարհնութիւնս. որ 'ի Զուրխա Պարսկաստանի ասացեալ գիրս մի, և զմեկնութեան գիրս մի:

Ալ Լուսոյ ասքայ դնէ յիշիսան 'ի քաղ գրեաց որոյ իւր և ինքն կատարէ 'ի Գրիգորոս եպիսկոպոսն և մի տանց. և տանու գիրքն Հանդերձ որոյ նորա յերեքհարիւր քառասուն և չորս

[1] Սահակ Մռուտ [illegible]

թուականին, ամս քսան և չորս, կամակցութեամբ Լևոնի որդւոյ Վասլի, որ թագաւորեաց յետ հօր իւրոյ ամս քսան և վեց, այր առատ 'ի տուրս և ոչ նման Հոռոմի[1], զի նա որդի Հայի էր և յոյժ սիրէր զՀայս: Իսկ Սմբատ առեալ զպատիւն, զինէ զսուրբ Փրկիչն յԵրազգաւորն, որ է Շիրակաւանն. ուր և օծաւն իսկ. զի նա էր նախագահ թագաւորացն Բագրատունեաց, մինչդեռ չև էր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի Խնամք[2], թէպէտ ներքին բերդն ընդ այս անուամբ էր, և հին ժամանակաւ շինեալ. ուր Օտա նախարարն ամրացեալ պահէր զքոյրն Տրդատայ, և զկուռս և զգանձս թագաւորացն Արշակունեաց զկնի մահուանն Խոսրովու. և 'ի դառնալ Տրդատայ 'ի Ցունաց աշխարհէն, ընդ առաջ նորա ելանեն յԵկեղեաց գաւառն Օտայն և Տաճատ աներ իւր, Աշոցաց տէր, և այս Տաճատս էր որ տեղեկացոյց զթագաւորն վասն Գրիգորի թէ որդի է սա Անակայ: Ասեն թէ իշխան մի լուծեալ ոտիւք՝ 'ի ներքին բերդն ամրացեալ ոչ հաւանէր գալ 'ի մկրտութիւն, 'ի դառնալն Հայոց 'ի հաւատս. մինչ հնարս իմացեալ սրբոյն Գրիգորի, այլափոխէ զինքն և երթայ հանդէպ բերդին, և ընդ զառ 'ի վայրն թաւալգլոր գնայ անկանի 'ի ջուրն, և վաղվաղակի կանգնեալ յոտիցն փառաւորէ 'ի ձայն բարձր զԱստուած. որպէս թէ գօս գոլով ոտիցն առողջացաւ 'ի ջրոյն զօրութենէ. զոր տեսեալ և լուեալ իշխանին՝ առ ինքն կոչէ, և տեղեկացեալ մկրտի և ողջանայ ոտիւք 'ի նշան հոգևոր բժշկութեանն[3]:

ԽԶ. Իսկ պատուական թագաւորն Սմբատ 'ի Ցուսիփայ ոստիկանէն Տաճկաց խեղդամահ լեալ 'ի Դուին վասն Քրիստոսի, նշաւակի 'ի փայտի. յորմէ և որդի նորա Մուշեղ դեղակուր եղեալ կատարի 'ի Տէր վկայութեամբ, և թաղի 'ի Բագարան ընդ հարս իւր: Եւ զամս եօթն անիշխան լեալ երկիրս, սպասեցաւ սրով և գերութեամբ:

Իսկ Աշոտ որդի Սմբատայ, որ և Երկաթն կոչեցեալ վասն արիական քաջութեանն, անկանի առ Լևոն կայսրն Ցունաց,

[1] Հինն և նորք յաւելուն, յայտ է զրով ոգւով, զի ոչ կայ 'ի լեզու նոցա առատ, և չինին ինքեանք, զպէս ասեն:

[2] Հինն յաւելու. Կոչի Անի և Կումանին այժմ. կոչեցեալ բերդ. բայց ամենայն Անի ներքին բերդն է ամրացեալ:

[3] Ոչ պատշաճին Լուսաւորչի այդպիսի հնարք:

կոչեցեալն Կոստանդին: Ցորում աւուրս կատարեցան 'ի Քրիստոս փառաւոր և մեծ իշխանք Դաւիթ և Գուրգէն 'ի տանէն Գնունեաց 'ի Դուին քաղաքի, յանօրինէն Ցուսիփայ, վկայական արեամբ պսակեալ. որոց պատուի օր կատարմանն 'ի մարերի ամսեան քսան. և սուրբն Սահակ եպիսկոպոս երկերիւր ոգւով և եօթն եկեղեցականօք կատարեցաւ 'ի Բիւրական, յահկի 'ի տասն. և երկու Կիրակոսքն 'ի նոյն ամսեան յեօթնևտասն. որոց տօն զերապայծառ կարգեաց սուրբ պատրիարքն Ցոհաննէս, որ ետես աչօք զիսաւարաբեր ժամանակն, և գրեաց 'ի յիշատակ ապագայից դարուց. և տօն սուրբ թագաւորին Սմբատայ: Իսկ Աշոտ պսակեալ ի Լևոնէ դառնայ 'ի Հայս յերեքհարիւր եօթանասուն թուին. և գտանէ թագաւորեալ զՀոմանունն իւր Աշոտ որդի Հօրեղբօր իւրոյ. զոր հնազանդեաց 'ի ներքոյ իւր. որպէս և զԳագիկ թագաւոր տանն Արծրունեաց, և զՄովսէս[1] բռնացեալն յԱղուանս, զորոյ խաւարեցոյց զաչսն. և մեծազօր գտեալ քան զնոսա, և քան զթագաւորն Վրաց Ներսեհ, կոչեցաւ 'ի վերայ նոցա Շահնշահ, զամս ութ. կատարի, և առնու զթագն Աբաս եղբայր նորա: Որ զկնի մահուան հօրն գնացեալ 'ի Վիրս, և փեսայացեալ նոցին՝ դառնայ այսրէն և տիրէ ամենայն հայրենեաց իւրոց ամս քսան և ինն, յերեքհարիւր եօթանասուն և մի թուին: Ի սորա աւուրս յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք 'ի Հոռոմոց աշխարհէն սակս ուղղափառութեան (!), եկեալ յաշխարհս մեր շինեցին յոլով վանորայս[2]: Նախ զԿամրջաձոր, և ապա զՀոռոմոսին կոչեցեալ վանք, որպէս թէ 'ի Հոռոմոց կողմանցն եկին, և զԴպրավանքն. 'ի նոցանէ ասեն շինեալ զՍանահնին սուրբ Աստուածածինն: Շինեաց և թագաւորն Աբաս զկաթուղիկէն 'ի Կարս գեղեցիկ յօրինուածով: Ցորում աւուրս ել իշխանն Սարմատացւոց, որ յայնկոյս Կովկասայ, Բեր անուն[3], բազում զօրօք առ Կուր գետով. և լուեալ եթէ թագաւորն Հա-

[1] Մովսէսդ իշխան էր մասին մեծ Ուտեոյ, որ յԱղուանից տիրապետելոյ կոչեցաւ Աղուանք:

[2] Վասն վանորայիցդ շինութեան տես 'ի Պատմ. Հայ. Բ. 823:

[3] Բեր՝ Ափխազաց թագաւոր է ըստ այլոց պատմչաց և ոչ Սարմատացւոց. սուղ ինչ զկնի Թէոդոս կոչէ զնա հեղինակդ ըստ այլոց պատմչի. և արդարև յիշատակի Թէոդոս (Թէոդոս) Կոյր կոչեցեալ թագաւոր Ափխազաց, թէ և փոքր մի կրսեր ժամանակաւ:

յոց պարապով չինէ եկեղեցի, յղեաց առ նա և ասէ. Գիտեա զու կանխագոյն, զի եկեալ եմ յօրհնել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Քաղկեդոնի ժողովոյն սահմանադրութեամբ. իսկ նորա ընդդէմ նորա ելեալ Հայաստանեայցս զօրօք, սրոյ ճարակ տայ առ հասարակ զզօրսն, և զԲերն 'ի բուն ածեալ բերէ զնա կենդանի 'ի Կարս, և միանգամ տայ տեսանել զեկեղեցին, և ապա բրեալ զտեսանելիսն, վաճառէ զնա ազգին իւրում, գիր երդման առեալ, զի յաւիտեան այլ ոչ ևս ելցեն 'ի Հայս:

ԽԷ. Իսկ զկնի կայսերն Յունաց Լևոնի առնու զԹագն Աղեքսանդր ամ մի. և յետ նորա Ռոմանոս՝ ամս քսան և ինն. ԾԱբասայ և 'ի սորա աւուրս առաւ Մելտենի 'ի Տաճկաց[1] յերեքհարիւր ութսուն և երեք թուին, և յերեքհարիւր ութսուն և ութ՝ Համդուն[2] 'ի Կողոնիա եմուտ զօրօք և անդրէն դարձաւ: Եւ ապա թագաւորեաց Կոստանդին[3] որդի Լևոնի յերեքհարիւր իննսուն և երկու թուին, ամս վեշտասան. որ և 'ի վեցերորդ ամին էառ զՄարաշ 'ի Տաճկաց, յերեքհարիւր իննսուն և ութ թուին: Զսմանէ ասեն 'ի միում աւուր հինգ առիւծ ապանեալ: Սա ետ արկանել 'ի յԱլիս գետ յոլով բեռինս Թրքաց, և փախոյց զզօրսն Իսմայելի, և կոչեցաւ Թրքաժողով:

Իսկ 'ի սուրբ աթոռն զկնի տէր Յովհաննիսի եկաց տէր Ստեփանոս ամ մի: Տէր Թէոդորոս ամս մետասան. և յետ նորա տէր Եղիսէ եղբայր նորին՝ ամս հինգ. և զկնի նորա տէր Անանիա Մոկացի՝ ամս քսան և երկու: Սա բազում աշխատութեամբ հնազանդեաց զՍիւնիք, որ Աղուանիք թեակոխէին[4], և ձեռնադրեաց արքեպիսկոպոս զկնի Յակոբայ ապստամբի[5], (զտէր Վահան 'ի Բաղաց, որդի Զուանշէրի իշխանին, որ չինեաց զամենաւպայծառ ուխտն Յովհաննու վանս, առ ստորոտս, անմատոյց դղեկին Բաղաց). այլ և զԱղուանս ածեալ 'ի հաւան չձեռնադրել իւրեանց կաթուղիկոս առանց աթոռոյ սրբոյն Գրիգորի: Զկնի սորա էառ զաթոռն Վահան 'ի Բաղաց, ամ մի. որ և ապա կարծիս առեալ, եթէ դաշնադիր է Վրաց, և պատկերս ետ ածել[1], վասն որոյ փոխեն զնա, և դնեն յաթոռն զտէր Ստեփանոս ազգական սրբոյն Մաշտոցի, որ 'ի Սևան, ամս երկու:

ԽԸ. Իսկ 'ի չորեքհարիւր թուին փոխի սուրբ թագաւորն Աբաս. և առնու զԹագն Աշոտ որդի նորա, Ողորմածն կոչեցեալ. որ բազում ուրկանոցս չինեաց, և առատ ոռճկօք դարմանէր զնոսա, յոլով անգամ և անձամբ սպասաւորելով նոցա, և զթարախածոր մնացորդս բաժակին ախորժանօք ըմպէր, կոչելով անուանս գոդեացն իշխանս և կիւրապաղատս, ըստ Յակոբայ՝ եթէ մեծատունք են հաւատովք: Սա զփոքր պարիսպ քաղաքին Անւոյ[2] չինեաց. և զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց, 'ի չորեքհարիւր երեքտասան թուին. և բարեպարիշտ կողն իւր[3], Խոսրովանոյշ, չինէ զփառազարդ սուրբ ուխտսն զՍանահին և զՀաղբատ: Հանգեան 'ի Քրիստոս 'ի չորեքհարիւր քսան և հինգ թուին, թողլով երիս որդիս, զՍմբատ, զԳագիկ և զԳուրգէն. որ և 'ի նմին աւուր առնու զթագն երէց որդին Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անւոյ չինեաց, և զկաթուղիկէն հիմնարկէ. և կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սևորդովքն Զորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զԽորխորունիք՝ որ 'ի Խոռայ չինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զԲազունիք՝ որ է Բազկերտ 'ի գաւառն Տաշրայ. և այլ[4] բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխէթ կոչեն: Եւ 'ի նմանէ սեռեցան թագաւորքն Դա-

[1] Յոյնք առին զՄելտենի 'ի Տաճկաց, և կործանեցին, վասն յապստամբութիւն մտաբերելոյ քաղաքացեաց:

[2] Համտուն կամ Համատանեան տոհմ արաբացի, յելս Թ դարու ձեռն արկ 'ի վերայ Միջագետաց, և հաստատեաց տիրապետութիւն աթոռս 'ի Մօսլ, 'ի Մէրտին, 'ի Նիբրկերտ, 'ի Բերիա:

[3] Կոստանդին Պորփիւռուժեն է թագաւորեալդ երկրորդ անգամ յետ մահուան Ռոմանոսի:

[4] Մեսրապօրիսք Սիւնեաց հաստատեալ առ վայր մի 'ի կաթողիկոսաց Հայոց յԱղուանից առնուին զձեռնադրութիւն:

[5] Փակագծեալ հատուածդ չկայ 'ի Բ. Օ.:

[1] Ոչ առ պատկերսն բերի հակառակութիւնդ, այլ առ 'ի Վրաց անտի բերումն:

[2] Փոքր պարիսպն Անւոյ յայտ է թէ ներքինն է բարձրագոյն և մեծակառոյց, յորոյ աշտարակս թուի մատրունս գործեալ, և այսպէս անէ թիւ եկեղեցեաց Անւոյ:

[3] Իմա՛ կողակիցն:

[4] Այս ամենայն աւանք և վիճակք 'ի հարաւային արևելեան մասին Գուգարաց աշխարհի են, զոր Վիրք Սոմխէթ կոչեն, որպէս և զՀայս Սոմխէթս, իբրու հարաւայինս:-Խոռակերտն կամ Խորխորունիք, և Բազկերտ կամ Բազունիք՝ յայտ առնեն որդւոց և թոռինն Հայկայ յետ չինութեանցն 'ի Տուրուբերան աշխարհի՝ եկեալ և հաստատեալ այսր զբնակութիւն իւրեանց:

վիթ, Աբաս և Կիւրիկէ. յորոց կանայքն կրօնաւորք՝ Մամքան, և Ռուզուքան: Եւ Գագիկ սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն, հալածական լինի վասն կարծեաց ինչ դրժանաց: Իսկ Սմբատ հասեալ 'ի չորեքհարիւր քսան և ութ թիւն՝ կատարի. և նոյնժամայն կոչեն զՀալածեալն Գագիկ, և տան նմա զթագն և ածեն նմա 'ի կնութիւն զԿատրամիտէ, դուստր Սահակայ Սիւնեաց թագաւորի, որ վճարեաց աւարտմամբ զկաթուղիկէն, 'ի հրեշտակէ Աստուծոյ յորդորեալ, որ խոստանայր նմա կալ 'ի ձեռնտուութիւն գործոյն, և մնալ 'ի նմին տաճարի, մինչև զՔրիստոս եկեալ տեսցեն արարածք:

Իսկ զսուրբ աթոռն յաջորդէ տէր Խաչիկ ազգային տեառն Անանիայի, ամս իններեասան. և զնա փոխէ տէր Սարգիս՝ ամս քսան և չորս: Սա չինեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Անւոյ, և անդ փոխեաց զնշխարս նոցա բերեալ մեծաւ հանդիսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ:

ԽԹ. Այլ զկնի Կոստանդեայ կայսեր[1], առնու զթագն Լևոն, և ապա Կոստանդին և Եռինեա մայր իւր, որ խաւարեցոյց զորդին, և ինքն տիրեաց ամս հինգ մեծի աթոռոյն: Յորում աւուրս կատարեցան 'ի Քրիստոս Սահակ և Յովսէփ, տաճիկք ազգաւ, յարացի հնգետասան: Եւ զկնի Միքայէլն, և ապա Լևոն, և յետ նորա Միքայէլ, ապա Թէոփիլոս. և զկնի Միքայէլ, ապա Վասիլ, և զկնի Լևոն, ապա Ալեքս. և զկնի Ռոմանոս, որ հալածեաց զուղղափառ (!) վանորայսն յարևելից աշխարհս. կամեցաւ ձեռնարկել և 'ի վանորեայս Սև լերինն, յերթալն իւրում ծանր զօրու 'ի կողմանս Հալպայ, որ և 'ի բարկութենէն Տեառն հետիոտս փախեաւ միայն մտազապուր: Յետ նորա Կոստանդին որդի Լևոնի. ապա Ռոմանոս, և ապա Նիկիփոռ, ապա Կիւռ-Ժան, և ապա Վասիլն, ամս յիսուն և երկու:

Ծ. Իսկ յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ 'ի գլխոս նոցա, եթէ Թորգոմ ութ որդւովք եկն յԱյրարատ զաւառ զկնի Ջրոյն մեծի. և երեք յորդւոց նորա նախագահք եղեն՝ Հայոս և Քարթլոս և Կոկասոսն, և տիրեցին աշխարհաց, և իւրեանց անուամբն կոչեցին Հայս և Քարթլ և Կովկաս. և տիրեցին 'ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասբից՝ մինչև ցՄիհրան,

[1] Զկարգ կայսերացդ սկսանի 'ի Դ Կոստանդեայ, որ է Կոպրոնիմոս, թագաւորեալ յամս 741-775, և հասուցանէ ցՎասիլ Բ որ թագաւորեաց ցամն 1028. բայց մոռանայ յետ Եռինեայ զՆիկիփոռ, և յետ Ալեքսի զԿոստանդին Պորփիւրոժեն:

և ցԱրբակ թոռն իւր, որ էառ կին 'ի Պարթևաց՝ Սահակդուխտ անուն 'ի Պարտաւայ. որ և ամուլ զոլով հաւատաց 'ի Քրիստոս, և ետ նմա. զաւակ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն կոչեցաւ, որ է Գայլազլուխ 'ի Պարսից բառն[1]. զի ունէր 'ի վերայ սաղաւարտին պատկեր գայլոյ յառաջի կոյսն, և յետի կոյսն՝ առիւծու: Սա էառ իւր 'ի կնութիւն զդուստր Լևոնի կայսեր. և 'ի սմանէ սերեցան թագաւորք մինչև ցԹևտաս, զոր կուրացոյց Աբաս. յետ որոյ թագաւորեաց Բագարատ[2], որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, 'ի վերայ Ափխազաց. այս ըստ Մխիթարայ երիցու ասիցն[3]:

ԾԱ. Իսկ Վասպուրականի թագաւորքն՝ յազգէն Սենեքերիմայ, Գագիկ որդի Դերենկանն, սա չինեաց զԱխթամար. ապա Դերենիկ որդի նորա, և զկնի եղբայր նորա Աբուսահլ, և յետ նորա Շահնշահ՝ որդի նորա, և զկնի եղբայր իւր Գուրգէն. և ապա եղբայր իւր Սենեքերիմ, որ նեղեալ 'ի Պարսից՝ ետ զերկիր իւր 'ի Վասիլն, և չոգաւ առ նա չորս որդւովք, որոց անուանքն՝ Դաւիթ և Աբուսահլ, Ատոմ և Կոստանդին, և եղբօրորդիքն՝ Դերենիկ, Գագիկ և Աշոտ. և առնու փոխան զՍևաստ և զԼարիս[4], և յոլով պատաստինս[5]: Որ զկնի սպան Դաւիթ զՓոկաս ապստամբ, և առ գրով զԽաւատանէն[6]:

ԾԲ. Ի չորեքհարիւր քառասուն և չորս թուին մեռաւ Գագիկ, տուեալ զթագաւորութիւնն երից որդւոց իւրոց, Յովաննեսի, Աբասայ և Աշոտոյ: Զթագն տայ Յովաննիսի, և զԱնի և

[1] Վախտանգ հռչակագոյն 'ի թագաւորս Վրաց և դիւցազն նոցին, զորմէ բազում ինչ առասպելախառն պատմեն. իսկ ժամանակակից նորին մերս Ղազար պատմիչ արդարակորով նշանակէ իբրև նենգաւոր և դրժող ուխտին ընդ Վահանայ մամիկոնենոյ: Կոչի և 'ի Վրաց Գուրգասարն կամ լաւ. և Գուրգասարան, որ ըստ Պարսից և Թուրքաց Գայլագլուխ նշանակէ. իսկ Գուրգասար արդարև գայլագլուխ է:

[2] Բ. Օ. Աբաս:

[3] Մխիթար Երէց՝ Անեցին է, պատմիչ ԺԲ դարու, որոյ գրուած ընդ կորուստեալն համարի արդ:

[4] Լարիս, զոր յիշեն և Բիւզանդացիք, 'ի կողմանս Սեբաստիոյ ճանաչի, այլ ընկ տեղին անյայտ:

[5] Պատաստին՝ զոր այլուր գտեալ թարգմանէ հեղինակս, է յունականն բրոտաստիոն, որ և նշանակէ արուարձան կամ սահմանավայրք քաղաքի:

[6] Խաւատանէք՝ ըստ Չամչեան Հոր ամրոց է 'ի հարաւոյ արևմտից Սեբաստիոյ:

զՇիրակ, զուրբ Գրիգոր Ջորոմն Աշոցաց, զԱնբերդ և զդաշտն այրարատեան, զԿայեան և զԿայծոն և զՏաւուշ գաւառն Սեւորդեաց. և զայլ մնացեալսն՝ Աշոտի և Աբասայ բաժանէ: Եւ 'ի վիճել նոցա զկնի այնորիկ, զայ Թագաւորն Ափխազաց Գորգի, որդի Բագարատայ, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, և առնէ իրաւունս 'ի մէջ նոցա և զնայ: Եւ զի ոմանք յիշխանացն անհնազանդ լինէին, գնայ կրտսերն Աշոտ առ կայսրն Վասիլ, և առեալ 'ի նմանէ զօր, զայ և հնազանդէ զամենեսեան, և նստի Թագաւոր Դրուց աշխարհին[1]. և Աբաս 'ի Կարս:

Ցայնմ ժամանակի վախճանեցաւ կիւրապաղատն Դաւիթ[2], անժառանգ զոլով. և տայ անդարձագրով զհայրենիսն իւր 'ի Վասիլն, զՈւխթիսն և զնամրուան, և զքաղաքն Ապահունեաց՝ զՄանծկերտ, և զամենայն ինչս: Զոր լուեալ Վասիլ կայսեր, զայ բանակի 'ի դաշտն Կարնոյ. զայս իմացեալ Յովհաննիսի երկեաւ, և առաքէ առ նա զՊետրոս պատրիարգն պատարագօք, զոր տէր Սարգիս 'ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք 'ի յԱնի, մեծ հանդիսիւ: Այլ և նեղէր զՅովհաննէս՝ արքայն Վրաց. վասն որոյ պատրիարգին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ 'ի Հոռոմս, որպէս և կիւրապաղատն, եթէ պահէ զնա 'ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն: Եւ կոչէ առ ինքն զԳորգի Թագաւորն Վրաց, և ոչ եկն 'ի կոչ նորա. վասն որոյ երթայ զայրացմամբ, և աւերէ զնորա գաւառս երկոտասան, և դառնայ յերկիրն Խաղտեաց, անդ անցուցեալ զձմեռն: Կոչէ առ ինքն զտէր Պետրոս օրհնել ընդ նմա ջուր 'ի տօնի Աստուածայայտնութեանն. որ եղև հրաշալի նշան, լոյս փայլատակեալ 'ի յաջոյ հայրապետին և յօծմանէ սուրբ իւղոյն 'ի հիացումն տեսողացն. և յոյժ զովեցաւ հաւատն[3] Հայոց: Եւ դառնայ Վասիլն 'ի Կոստանդնուպօլիս և վախճանի 'ի չորեքհարիւր եօթանասուն և երեք թուին. և առնու զթագն Կոստանդին ամս երեք. և զկնի Ռոմանոս փեսայ նորին, ամս հինգ. զոր հրամանաւ

[1] Դրուց աշխարհ, բաժինն Աշոտոյ, թուի որ արտաքոյ Շիրակայ և սահմանացն Անւոյ տեղիք:

[2] Դաւիթ ունէր զիրդմանս Տայոց և Մոկաց և մասն 'ի միջնաշխարհէն Հայոց:

[3] Նոր Օր. հայրապետն:

կնոջն խեղդեցին 'ի բաղանիսն, և եդին զՄիքայէլ ամս եօթն:

ԾԳ. Իսկ որ զԱմիրալամուսնեացն կարգն բերեալ Հաւուցաք 'ի Ջափր և Թողաք. քանզի սկսաւ իշխանութիւն նոցա 'ի վաթսուն թուին, և դադարեալ չփոթեցան յերեքհարիւր յիսուն թուին. և աստ և անդ բռնակալեալ տկարացան 'ի զօրութենէ, և զօրացան ազգն Թուրքաց այսպիսի պատճառաւ: Էր 'ի Խորասան ոմն յԻսմայելացւոցն Մահմուտ անուն, որ անցեալ ընդ Ջահան գետ յերկիրն Թեռալացւոց[1], ածէ բազում գերիս 'ի Խորասան՝ որ ասի արևելք[2], բնակեցուցանէ առանձինն, և աճեալ նոցա և բազմացեալ՝ դնեն զոմն ամիրա, և ապա տան նմա թագ՝ 'ի մեռանելն Մահմուտին. նա յաջողակ եղեալ տիրեաց Պարսից և նստաւ սուլտան, որում անուն էր Դօղլա-բաք[3]: Այս ըստ Վահրամայ, որդւոյ Տիգրանայ[4], վիպագրի. իսկ պատուական երէցն Մխիթար Անեցին, որոյ յիշատակն 'ի գիրն Կենաց, այսպէս ասէ. Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն՝ որ 'ի Թուրքաց, և զտի շնորհաքն Աստուծոյ այսպէս. Մահմուտն՝ զոր ասացաք, Սբքթանայ[5] որդի, յաննշանից մեծացեալ՝ որպէս Արտաշիրն Սասանեան, և եբարձ զիշխանութիւնն Մահմետի ազգին 'ի Մահմատ Մուհթադէ, երեսներորդ երրորդ 'ի Մահմետայ, յերկերիւր քառասուն և վեցերորդ[6] ամի իշխանութեան նոցա. և զօրացաւ նա 'ի Բահլ քաղաքի 'ի յերկրին Քուշանաց, և ել համբաւ զնմանէ ուժգին, մինչև խալիֆայն երկուցեալ՝ առաքէ նմա ընծայս և ալամ, և լաղապ՝ Ամինադլ[7], և սուլտան կոչէ զնա: Եւ առեալ նորա զզաւտիւն էս մեծանայ. և ելանէ 'ի Հնդիկս՝ 'ի համբաւ

[1] Տե՛ս յէջ 42 Ծան. 2:

[2] Քանզի նոր արեգակն լսի 'ի պարսիկ լեզու:

[3] Դողլաբաք, այսինքն Տօղլապ-բէկ, որ է Տուղրիլ ըստ այլոց:

[4] Անծանօթ պատմիչ, զոր Մխիթար Այրիվանեցի՝ ոչ որդի Տիգրանայ՝ այլ Տիգրանակերտցի կոչէ:

[5] Սեպէքթէկին կամ Սեպզէոտին:

[6] Երկերիւր քառասուն և վեց ամ իշխանութեան Արաբացւոց է 860 ամ փրկչին, բայց Մահմուտ իբրև դարու և կիսով յետոյ հաստատեաց զիշխանութիւնն, յամի 997:

[7] Ալամ, Աղեմ վաստ, դրօշ իշխանութեան: Լաղապ, Էգրաղ կոչումն պատուոյ.-Էմին-ադդիլ ստորկան արդարութեան, կամ արդար և հաւատարիմ:

կոտցն Մաթանայ[1], զոր կործանէ, և առեալ աւար դառնայ, զՄահմատ որդի իւր Թողլով անդէն, և գայ 'ի Գուրգան[2]. և առնու 'ի տեառնէն Գուրգանայ չորեքհարիւր հազար դահեկան, և սլեհս տամբ միով, 'ի չորեքհարիւր և քսան Թուին իւրեանց. և անցանէ գայ յ'Ըռէ[3]. և տէրն Ռէոյ Մաջա-դալա Ռստամ, երեք աւուրբ յառաջ առեալ զԴելմիկն[4] ել ընդ առաջ նորա, և գայ 'ի Սրաւ[5] անհնարին ուժով, և ընդ նմա երկերիւր և յիսուն փիղ: Եւ տեսեալ զնա, ասէ. Շահ, նամազ կարդացեա՞լ ես. և նա ասէ. Այո՛. և դարձեալ ասաց. Ճատրկուց խաղացեա՞լ ես. -Այո՛: Ապա ասէ. Թագաւոր 'ի Թագաւորի տուն մտէ՞ Թէ ոչ. և նա լռեաց: Եւ առժամայն կապեալ զնա յղարկէ 'ի Խորասան, և զամենայն ինչս նորա առեալ՝ տիրեալ Ռէոյ, և գայ ի Տապարստան[6] և 'ի Տառաբի[7], և 'ի Սարի[8]. տայ 'ի ձեռս Մասխուտի որդւոյ իւրոյ զՌէ, և զՂազուին[9] և զՔոհաստան[10] բովանդակ. Թողլով զնա յՌէ, գայ 'ի Սրաւ և առնու հարիւր հազար դենարս, և անցանէ 'ի Նաշաւուրն[11] 'ի չորեքհարիւր քսան և մի Թուին իւրեանց: Իսկ Մասխուտն առնու զՇամիան և զԱապահան, և դառնայ յՌէ. և իսկոյն լսէ Թէ սպանին զշահնայսն[12] քո յԱսպահան: Եւ դարձեալ անդրէն սատակէ չորս հազար

[1] Մաթան կուռք Հնդկաց անծանօթ է մեզ, Թէ չիցէ Մաչալի չաստուած վարիչ կաւաց Ինտրայ:

[2] Գուրգան կամ Ճուրճան, ըստ մեզ Վրկան, արևելեան հարաւակողմ Կասպից ծովու:

[3] Ռէ կամ Հրէ, այժմ Ռայ, է հին Ռագաւ Մարաց, մերձ 'ի Դէհրան:

[4] Դելմիկք, ժողովուրդ Տիլէմ նահանգի կամ Դելմաստանի, 'ի հարաւոյ Կաղբից ծովու, 'ի սահմանս բարձու Տէմավէնտ լերին:

[5] Սրաւ, Սէբաւ կամ Սէբ-Աղ, քաղաք Ատրպատականի:

[6] Տապարիստան, Դէպէրիստան, լեռնավայր նահանգ 'ի հարաւային եզերս Կասպից ծովու:

[7] Տառաբի, Թուի Տարապ կամ Տարապկերտ, վիճակ և քաղաք Ֆարսիստանայ:

[8] Սարի գլխաւոր քաղաք և վիճակ Դէպէրիստանայ:

[9] Ղազուին կամ Խազուին, Գազվին, երևելի քաղաք 'ի սահմանապուխս Պարսից աշխարհի:

[10] Քիւհիստան, որ է Լեռնաստան, մի 'ի մեծամեծ նահանգաց տէրութեանն Պարսից, ընդ մէջ Իրագայ և Խորասանայ:

[11] Այս է Նիշապուհ կամ Նիշափուր, քաղաք Խորասանի մերձ յիրագ:

[12] Շահնէ ըստ պարսկի լեզուի վերակացու կամ հրամանատար:

այր և դառնայ յՌէ. և նոցն ժամայն բերեն նմա զգոյժ մահուն հօրն, և Թէ սուլտանացաւ Մահմատ եղբայր քո. և յարուցեալ գնայ, և կալեալ զեղբայրն կուրացուցանէ, և առնու զիշխանութիւնն և զաթոռն: Եւ քանզի հայր նորա 'ի գնալն յոգնականութիւն ազգին՝ որոց գլխաւորն կոչիւր Խորղան-Պօզրղան, 'ի ճանապարհին պատահէ բանակաց ինչ բազմութեան Թուրքաց, և 'ի դառնալն նոյն ճանապարհաւ՝ մեծաւ յաղթութեամբ առեալ զամիրայն նոցա զԱփաղու բերէ 'ի Խորասան և դնէ 'ի կապանս. և ազգ նորա եկեալ խնդրեցին 'ի հօրէն, և ապա յորդւոյն, և ետուն: Իսկ նոցա բարկացեալ անցին ընդ Ջահան ամենայն բանակօքն փրեանց, և զանձինս 'ի մահ եղեալ կռուեցան, և յաղթեցին և առին զնշաւուրն և կոտորեցին զզօրս սուլտանին 'ի Դաղանղանն[1] մօտ 'ի Սրմն[2]. և փախստական եղեալ սուլտանն՝ գնայ 'ի Ղազինն և անտի 'ի Հնդիկս: Եւ 'ի ճանապարհին սպանաւ սուլտանն, և զկոյր եղբայր նորա Թագաւորեցուցին 'ի Ղազոնին, որոյ յերկարեալ 'ի նմին ծնանի որդիս. և մի 'ի միոջէ առեալ ունին զՂազուին մինչև ցայսօր:

Իսկ յառաջադէմն 'ի Թուրքացն՝ որում անուն էր Մուսեփաղոյ Սարչուքեայ[3] որդի, ունէր հինգ եղբօրորդիս. որոց անունքն՝ Աբուսալիմ, Դաւութ, Ջաղրբեկ, Աբուսալիփ, Տողրիլ-Բէկն, որ էառ զիշխանութիւն սուլտանութեանն, և հնգետասան ամ ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն Խորասանայ. և եկեալ յՌէ գտանէ երկուս չոտեմարանս զանձուց լի ոսկւով. և առնու ընդ ձեռամբ, և յղէ առ խալիփայն և խնդրէ օրհնութիւն. և նա մեծարէ զնա արամբք պատուականօք[4], և տայ նմա ալամ և ընծայք, և կարդայ զանուն

[1] Դաղանզանն ըստ Պարսից Փինա-Տատուն-նան:

[2] Սրմն է Մերվ կամ Մրու, նշանաւոր և մեծ քաղաք Պարսից, 'ի սահմանս Խորասանի և Թուրքաստանի:

[3] Սարչուք, Սէլճուկ կամ Սէլճուկ, ըստ աւանդութեան Պարսից սերեալ յէֆրէսիապայ դիւցազնէ. որոյ էին որդիք Միքայիլ, Իսրայիլ, Եունուզ կամ Պիկան, և յիշեալն 'ի հեղինակէդ՝ Մուսա. Դողրուլ և Ջաղր որ է ձեռֆար՝ Միքայելի որդիք են: Զորք գաւազանք իշխանութեան չառաւիղեցան 'ի Սէլճուկեանց. ա. Պարսիցն, որ պայազատեանց զՂազնեւանցն. բ. Խորազմեանց Թուրքաց. գ. Հալպայ և Դամասկոսի. դ. Իկոնիոնի որ է Գոնեա և Փոքրն Ասիոյ՝ որ Ռում կոչեցան յանուն Հռոմոց:

[4] Բ. Օ. Մեծարէ զնա առ ինքն:

նորա 'ի մամբարն[1], և դնէ նմա մականուն Ռուքնադօվլա[2]. և յայնմ օրէ քարոզեցաւ աշխարհակալ: Եւ փոխէ զնա Արփասլան հօրեղբօրորդի Տուղրիլին, որ ելից զամենայն աշխարհ արեամբ. և ունէր որդիս ութ, որ և հասանէր յաթոռ թագաւորութեանն Մէլիք շահն, բարի և խաղաղարար. և զկնի Մահմուտ սուլտանն: Եւ յետ նորա աւագ եղբայր Բաքարուին[3] որ կոտորեց զնա, և առ զաթոռն ամս հինգ: Եւ յառնէ 'ի վերայ նորա Դուդուշն որդի Ալփասլանին, զոր վկանդեալ Բակիարուին եհար զզօրս նորա, և ապան զԴուդուշն: Եւ Մահմուտ սուլտանն Մահմուդի որդին եհար զԲակիարուին տղայ հասակաւ, և առ զսուլտանութիւնն ամս երեքտասան, և զկնի նորա Մահմուդն որդի նորին. ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտանն կոտորէ զնա, և առնու զԱրաղայ[4] իշխանութիւնն, և դնէ զնա 'ի Բաբաղայ. և զկնի նորա Դաւութ որդի նորա եկաց սուլտան՝ զոր սպանին Մլհետքն[5]: Եւ ապա եկաց Տօղրիլն, և զկնի Մասխուտն, և ապա որդին՝ Ասլան, և զկնի ուժոմն Տուղրիլ[6], որ կայր մինչ 'ի պատմագիրս. որում պատիւ 'ի տեառնէ Աստուծոյ:

ԾԴ. Նոյն այր ասէ և յաղագս թագաւորին Յովաննիսի, եթէ եղբայր նորա Աշոտ 'ի յոտս թալնայ[7] կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ 'ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով 'ի սնարփցն կուսէ որոգայթս. և այնու ըմբռնեալ՝ տայ 'ի ձեռս մեծ իշխանին Ապիրատն[8] կոչեցելոյ սպանանել զնա. և նա յոժար կամաք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, և խելագար մի եղից 'ի տեղւոջ սորա: Զամանէ ասեն յանչանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն՝ մինչ լինել տէր երկոտասան հազար հեծելոց. որ և չինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վարհամ իշխանն զՄարմաշէն[1]:

Ի չորեքհարիւր եօթանասուն թուին ել Տուղրիլ-Բէկն և պատահեաց նմա 'ի Նախճաւանի Լիպարիտն[2] հինգ հազար հեծելօք, և փախեաւ յահագին բազմութենէն, և 'ի գալ Թուրքին 'ի Դուին և սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ 'ի Սերկեվիլ[3], և 'ի հանգչելն անդ սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի:

Զայսու ժամանակաւ պատրիարգն Պետրոս քինով ինչ Յովհաննու թագաւորի զնաց 'ի Վասպուրական, և աղաչանօք տչ դարձաւ. ապա 'ի ձեռն տուկի[4] կողմանցն ածաւ բռնութեամբ, և արգելաւ 'ի Բջնի: Զոր լուեալ տէր Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, գայ և հանէ զնա 'ի բանտէն, և տանի դնէ յաթոռն իւր, հանելով զԴիոսկորոս առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին՝ զոր եղեալ էին կաթուղիկոս փոխանակ Պետրոսի ած մի. և նա դարձաւ 'ի վանս իւր, այր սուրբ և առաքինի:

Յայնմ ժամանակի փոխէ զԳէորգ Վրաց թագաւոր որդի իւր Բագարատ, և իշխանն Վրաց Լիպարիտ ապատամբեալ փախուցանէ զնա 'ի խորին Ափխազք, և շէն ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ, ձեռն տուեալ 'ի Միքայէլ կայսրն: Որ 'ի մեռանելն իւրում տայ զթագն Կալափատայ որդւոյ քեռ իւրոյ, որ զկնի սակաւ ատուրց կուրացաւ հրամանաւ Զոյի թագուհւոյն կնոջն Միքայելի. յորում տեղւոջ երևեցաւ քար մի ունելով գիր, թէ ստէ թագաւոր խաւարի: Եւ Զոյի առնու այր իւր զՄոնոմախն և դնէ նմա թագ:

---

1 Մամբար է Միանգէր բեմն աղօթից, յորմէ զանուն Խալիփային կարդային:

2 Ռուքնիլ-ատ-դէվլէթ Մին կամ հաստատութիւն բարգի:

3 Գարքի-արուք, որ իշխեաց իբրև երկոտասան ամ:

4 Արաղ, Իրագ. նշանաւոր աշխարհ Գարսից, 'ի հնումն սահման Մարաց:

5 Մլհեդք, մեղահիտ ըստ Արաբացւոց, որ է հերձեալք կամ մոլորեալք, ըստ Ասորւոց և Գարսից՝ Հաշիշի և Ասասասին ըստ Եւրոպէացւոց, որ է աւազակք. հիմնադրք են Հասան-Սէպահայ մոլեռանդն բռնաւորի, որոյ ամրոց և կայազ էր Ալամուդ բերդ, զոր էառն Հուլաղու ղան: Յաճախ ևս կոչին Իսմայիլացիք:

6 Ուժոմդ Դօղրուլ Բ, յետին սուլտան տոհմին, տիրեաց յամսն 1177-1187: Նորա ժամանակակից է պատմիչ Երէցն Մխիթար:

7 Թալին 'ի հին Աբաղածոտն գաւառի. այժմ կրկին ուսանք են՝ Հին և Նոր Թալին 'ի համանուն վիճակի:

8 Ի Գահլաւունեաց տոհմէ և 'ի զարմից Լուսաւորչին ասին զոր Ապիրատն և Վահրամ, որ է եղբայր Վասակայ հօր հռչակելւոյն Գրիգորի Մագիստրոսի:

ժար կամաք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, և խելագար մի եղից 'ի տեղւոջ սորա: Զամանէ ասեն յանչանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն՝ մինչ լինել տէր երկոտասան հազար հեծելոց. որ և չինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վարհամ իշխանն զՄարմաշէն[1]:

Ի չորեքհարիւր եօթանասուն թուին ել Տուղրիլ-Բէկն և պատահեաց նմա 'ի Նախճաւանի Լիպարիտն[2] հինգ հազար հեծելօք, և փախեաւ յահագին բազմութենէն, և 'ի գալ Թուրքին 'ի Դուին և սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ 'ի Սերկեվիլ[3], և 'ի հանգչելն անդ սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի:

Զայսու ժամանակաւ պատրիարգն Պետրոս քինով ինչ Յովհաննու թագաւորի զնաց 'ի Վասպուրական, և աղաչանօք տչ դարձաւ. ապա 'ի ձեռն տուկի[4] կողմանցն ածաւ բռնութեամբ, և արգելաւ 'ի Բջնի: Զոր լուեալ տէր Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, գայ և հանէ զնա 'ի բանտէն, և տանի դնէ յաթոռն իւր, հանելով զԴիոսկորոս առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին՝ զոր եղեալ էին կաթուղիկոս փոխանակ Պետրոսի ած մի. և նա դարձաւ 'ի վանս իւր, այր սուրբ և առաքինի:

Յայնմ ժամանակի փոխէ զԳէորգ Վրաց թագաւոր որդի իւր Բագարատ, և իշխանն Վրաց Լիպարիտ ապատամբեալ փախուցանէ զնա 'ի խորին Ափխազք, և շէն ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ, ձեռն տուեալ 'ի Միքայէլ կայսրն: Որ 'ի մեռանելն իւրում տայ զթագն Կալափատայ որդւոյ քեռ իւրոյ, որ զկնի սակաւ ատուրց կուրացաւ հրամանաւ Զոյի թագուհւոյն կնոջն Միքայելի. յորում տեղւոջ երևեցաւ քար մի ունելով գիր, թէ ստէ թագաւոր խաւարի: Եւ Զոյի առնու այր իւր զՄոնոմախն և դնէ նմա թագ:

---

1 Հ. Օ. յաւելու. Զի մի՛ յանցաւորիս միայն իշեն ճանիք, այլ և յանմահիցն գաւառ. ուր կանն խակ զարմիւք իւրեանց 'ի դամբանի, ասի ունէրով վիճակն:

2 Լիպարիտ իշխան վրացի, յՈւռպելեան տոհմէ:

3 Սերկեվիլ գեղ, բլուր և լճակ 'ի Թալին դեհ Արագածոտան:

4 Դուքս յոյն 'ի դրանէ կայսեր կողմնակալ կարգեցաւ նախ վիճակաց Դարբ թի կիւրապաղատի զոր եթող 'ի Յոյնս, և ապա Վասպուրականի մարզին, զոր թագաւորք աշխարհին փոխանակեցին ընդ Սենեքերիմայ:

Մե. Առ սա գնաց տէր Պետրոս և դառնայ 'ի Սեւասդ, և որդիքն Մենեքերիմայ տան նմա զվանքն, զոր յանուն Վարագայ սուրբ նշանին շինեալ էին, ընդ ինքեանս ունելով զիսաչն, թէպէտ զկնի անդրէն դարձուցին: Եւ երեք պատստինս Մոնամախն ետ պատրիարգին, որ և կեցեալ 'ի տեղւոջն ամ մի, կատարի: Եւ առնու զքոյն խաչիկ քորորդին իւր, զոր ձեռնադրեալ էր 'ի կեանս իւր 'ի յԱնի, և կեցեալ ամս երկու վճարի, և մնաց աթոռն թափուր զամս հինգ:

Քանզի 'ի չորեքհարիւր ինանունեներեք թուին մեռան Յովհաննէս և Աշոտ, և ետուն զթագն 'ի Գագիկ որդին Աշոտոյ. և յիշեցին Յոյնք զկտակն կորստեան վասն Անւոյ. զի անդարձ է ասեն, և հաստատուն է զկնի մահու կտակ: Եւ կոչեցին երդմամբ զԳագիկ 'ի Կոստանդնուպոլիս, որպէս թէ անդրէն դարձուցանեն պարգևաք. և կատապան[1] եղին ինքեանք քաղաքին. և վերացուցին 'ի նմանէ զերկոսեան պսակս, զգահ հայրապետութեան և զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկոսեան առ իւրեանս, և անդրէն ոչ դարձուցեալ: Վասն որոյ անյոյս եղեալ Գագկայ՝ առնու փոխան զԿալօնպաղատն և զՊիզու[2], և կայր պանդխտութեամբ 'ի մէջ ատեցողացն ազգիս:

Զայսու ժամանակաւ Գրիգոր որդի քաջին Վասակայ տայ զԲՋնի 'ի Մոնոմախն, և զԿայեան և զԿայծոն, զոր ընդ ձեռամբ իւր ունէր, և առնու զդքսութիւնն Միջագետաց. որ և առնու ընդ իւր զԱպիրատն զիշխանն Վրաց, և այլ ևս երկու Մաժիստրոսս, և երթայ ընդդէմ Բրեհիմայ զօրագլխի Տուղրիլ Բէգ սուլտանին. ուր ըմբռնեցաւ Լիպարիտն և ածաւ առ սուլտանն. և առաքեաց առ նա դաւանել զհաւատ նորա: Եւ պատասխանեալ եթէ իբրև տեսից զերեսս քո՝ առնեմ զոր հրամայես: Եւ իբրև ետես ասէ. Յորժամ եղէ արժանի տեսանել զքեզ՝ ոչ արարից զկամս քո և ոչ երկեայց 'ի մահուանէ. և ասէ սուլտանն. Զի՞նչ կամիս. և նա ասէ. Եթէ վաճառական ես, ծախեա զիս, և եթէ դահիճ՝ սպան զիս. իսկ եթէ թագաւոր ես, պարգևաք ազատեա՛ զիս: Եւ ասէ սուլտանն. Ոչ գնոյ քո վաճառական, և ոչ արեան քո դահիճ կամիմ լինել, այլ թագաւոր

[1] Կատապան, թուի յոյնն զանթապան xαράσσον, իբր ամենապետ կամ համակարգ իշխան:

[2] Կալանդաղատ կամ Կալանդէղատ ըստ Մատթէի Ուռհայեցւոյ, և Պիզու, երկոքին ևս 'ի Կապպադովկիա, այլ դիրքն անյայտք:

եմ, ե՛րթ ուր և կամիս. և արձակեաց զնա պարգևաք: Եւ զի կայսրն խնդրէր զնա, չոգաւ առ նա. և առեալ 'ի նմանէ զծիս, եկն 'ի Վիրս և կալեալ զթագաւորն Բագրատ՝ յղեաց զնա առ կայսր, և ինքն կալաւ զերկիրն ամենայն:

ԾԶ. Ի սոյն աւուրս կին մի Մամ անուն գայ 'ի Պարսից երեք որդւովք 'ի գաւառն Փառիսոսոյ[1] առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն, և առնուն զՇօթն և զԲերդն Շամիրամայ[2]. և անտի ընտանացեալ ընդ Խլաթիզն[3] ամիրայն Գանձակայ սպանին զնա, և առին զԳանձակ և տիրեցին: Երեց որդին Պարզուան մեռաւ կարճ. և իշխանացաւ Լէշքարի միւս եղբայրն, և առնու զՊարտաւ[4] և զՇամքոր[5] 'ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր որ Փատլուն[6] կոչիւր՝ սպանեալ զնա յորսի, առնու զիշխանութիւնն: Եւ գնացեալ առ նա Փիլիպպէ՝ որդին Գրիգորոյ՝ սիրոյ աղաչաւ, ըմբռնէ զնա 'ի կալանս զկնի մահուան հօրն. և առնու 'ի նմանէ զՇաշուաղ և զՇօթս[7]: Եւ կոչեցեալ առ ինքն զԳագիկ որդի Համամայ զտէրն Տանձեաց[8] սպանանէ, և առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ տիրէ Խաչենոյ և Գորոզոյ[9] և Սևորդեացն, և զոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Զորոյգետոյ, և ընդ Կիւրի-

[1] Փառիսոս մասն է Արցախոյ յարևելս կոյս, սահմանակից Ուտիոյ. և թուի Քուստի Փառնէս հին գաւառ:

[2] Շամիրամաբերդ 'ի Փառիսոս:

[3] Հին Օ. Ակռակն:

[4] Պարտաւ, քաղաք Առանձնական Ուտիոյ, յետոյ մայրաքաղաք Աղուանից և աթոռ կաթուղիկոսաց նոցին:

[5] Շամքոր քաղաք 'ի Շամքորաձոր վիճակի, 'ի սահմանս Գանձակայ. այժմ աւերակ:

[6] Փատլուն (Ֆաղլ) Ա ամիրայ Դունայ: Եէտտատայ որդի, յառաջնում քառորդի ԺԱ դարու եհաս իշխանութեան, յորում ժամանակի պայազատէին Փիլիպպէ որդի Գրիգորոյ թագաւոր Աղուանից Արցախոյ՝ Առան-Սիւնիք կոչեցելոյ. Գագիկ որդի Համամայ, Կորիկէ կամ Գուրգէն որդի Դաւթի Անհողնի՝ 'ի կողմանս Տաշրաց, Բագարատ Գ և Դ թագաւորք Վրաց: Իսկ Գագիկդ թագաւոր Զորոգետոյ կամ Բագրատունին է Ա, և կամ Կախեթու թագաւորն որդի Անհողնի:

[7] Շաշուաղ կամ Շաղուաղ և Շօթք՝ 'ի Խաչէն նահանգի, որ այժմ Կիւլիստան և Ջրբերդ կոչի:

[8] Տանձեաց վիճակն թուի 'ի հիւսիսակողմանս Արցախոյ և Ուտիոյ:

[9] Գորոզի որ և Գորոզու գրի, անուանի լեռան, բերդ և վիճակ, 'ի սահմանս Արցախոյ և Ուտիոյ, յայժմեանս Խոշխարա կամ Խաչքար գաւառի:

կէի թագաւորին Աղուանից, և ընդ Բագարատայ թագաւորին Վրաց, և նեղէր զնոսա: Տիրեաց և Դունայ, և եդ հարկս 'ի վերայ Հայոց երեքհարիւր հազար դրամ:

Սոյնպիսի օրինակաւ արք ոմանք քաղդէացիք ելեալք յաշխարհէն իւրեանց գան 'ի Գարդման, և ասեն ցիշխանն Գարդմանայ. Տուր մեզ զմասն խաչին զոր ետ քեզ Հերակլ, և լինիմք քրիստոնեայք և քո ծառայք. և կատարեցան իրքն: Եւ լուեալ ամիրայն Բաղդատայ սպառնայ յոյժ. յորմէ երկուցեալ գնացին յոտն Կովկասու. և աջողեալք 'ի Քրիստոսէ յոր հաւատացին՝ տիրեցին ամենայն գաւառացն. մինչ զի և ոմն 'ի նոցանէ թագաւորեաց Դաւիթ անուն, որ խնամացաւ ընդ արքային Զորոյգետոյ: Եւ կոչեցին զգաւառն Մանարք[1], զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց. և իշխանն Գարդմանայ կոչեաց զնոսա Քորեպիսկոպոս ըստ լեզուին Վրաց:

ՄԷ. Իսկ զկնի բառնալոյ թագաւորացն Հայոց 'ի յԱնւոյ, ել 'ի Հայս Հօրեղբօրորդին Տուղրիլին Ալփասան, և աւերեաց քսան և չորս գաւառս. զի էր զօրագլուխ սուլտանին, որ և ըզկնի մահուան նորա սուլտանացաւ. եկն դարձեալ հարիւր հազարաւ, և առ զՆոր քաղաք, զոր Վիրք Ախալ-քալաք ասեն, և զՍամշոյլդէ. և առնու կին զդուստր Կիւրիկէի թագաւորին[2], և զդուստր քեռ թագաւորին Վրաց Բագրատայ: Առնու և զԱնի, և հազար այր զենու 'ի փոս մի, և լոգանայ յարիւն, զոհ մեռելոց իւրոց արարեալ[3]:

Եւ ապա գայ 'ի խալիֆայէն դեսպան և արկանէ օղ ոսկի 'ի պարանոց նորա, և երկոտասան վարոց 'ի մի կապեալ հարկանէ զնա խածեալթ[1] արարեալ, որպէս թէ այնչափ հնազանդ է իւրում առաջնորդին:

Գործեցաւ այս զկնի մահուանն Յովհաննիսի թագաւորին՝ քսան և երեք ամաւ, 'ի հինգ հարիւր երեքտասան թուին:

Այլ զկնի Մոնամախին Կիւ Թօտորն կալաւ զթագն. և ապա Տուկիծն, և զկնի Դէջուժանն[2], որ եկն 'ի վերայ սուլտանին, սպառնալով Հայոց՝ հոռոմ առնել զբնաւս. ըստ որում 'ի Կարս եկեալ այրէր զփայտակերտ եկեղեցին Հայոց: Եւ չոգաւ 'ի Մանծկերտ և առ զնա և դարձաւ սուլտանն 'ի վերայ նորա և եհար զնա յոյժ, մինչ ըմբռնեցաւ 'ի նմանէ. որ զի թէպէտ և արձակեաց ողորմութեամբ, այլ ոչ եղև ընկալեալ յազգէն իւրմէ, այլ ետուն զթագն 'ի Միխայէլն որդի Տուկիծին, որ և կալեալ կուրացոյց զԴէօժանն, և մեռաւ 'ի ցաւոցն 'ի հինգհարիւր քսան և մի թուին:

ՄԸ. Իսկ թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ Թուրքացն՝ տայ զհայրենիս իւր 'ի Ցոյնս, և առնու զՄամընդաւ[3], և զԼաոիա և զԱմասիա և զԿոմանա[4], և զպատրինս հարիւր, որ է գեօղեան: Եւ գնացեալ առ կայսր՝ խնդրէ հրամանս ձեռնադրել Հայոց պատրիարգ զՎահրամ որդի Գրիգորի Մաժիստրոսի և տուկի. որ կոչեցաւ 'ի ձեռնադրելն՝ Գրիգորիս. և ամ մի կալեալ զաթոռն 'ի Մամընդաւ՝ թողու 'ի Գէորգ վարդապետն իւր Լօռեցի: Եւ ինքն անցեալ գնայ 'ի Կոստանդնուպօլիս 'ի թարգմանութիւն, և առեալ զգրեանն կամեցաւ գնալ յԵրուսաղէմ. և նաւին առեալ զնա տանի 'ի Մսր. որ և մեծարեցաւ յոյժ 'ի սուլտանէն. և չինեաց վանս Հայոց, և ձեռնադրեալ զեղբօրորդի իւր Գրիգորէս եպիսկոպոս, և ինքն գայ կատարի 'ի Կարմիր վանքն[5] 'ի սահմանս Եփրատ գետոյ առ Տօրոս լերամբն, մերձ տեառն Բարսղի պատրիարգի որ զկնի Գէորգեայ:

Իսկ 'ի հինգհարիւր քսան և մի թուին այրեցաւ սուրբ Պետ-

---

[1] Մանարացդ անուան ծագումն ծաղրական է, քանզի հնագոյն պատմիչք և աշխարհագիրք Թովմաս Արծրունի յԹ դարու, Խորենացի 'ի Ե-ում և Պողոմէոս յԲ-ում չիշեն զՄանարս. ապա հեղինակիդ յիշածն գաղթական է եկեալ առ Մանարս փախստեամբ յամիրապետէն: Արաբացի պատմիչք 'ի Նէզաբայ ումեմնէ յԵօմէնայ ասեն զնոսա ծագեալս, և զերկիր նոցին ընդ մէջ Տփխեաց և Դրանն Ալանաց, և զթագաւորս նոցա Մէնէքէրիպա կոչեն. զոր մերս քորեպիսկոպոս ասէ, որպէս և Յովհ. կաթողիկոս՝ մեծ քորեպիսկոպոսն կոչէ, և զերկիր նորա՝ մասն Գուգարաց մերձ 'ի դրունս Ալանաց. զնոյն և Արաբացիք կոչեն քարիակովա, քարիակովազ, քէրքէսուզ: Թուի զերկուսեան միանգամայն վարեալ նոցա զիշխանութիւնս, զհոգևոր և զմարմնաւոր:

[2] Կորիկէ Ա որդի Դաւթի Անհաղնի:

[3] Հին Օ. յաւելու, ասեն ամանք:

[1] Թուի խայծեալպն արարեալ, ծանակեալ, կամ խանձեալթ ըստ Արաբաց:

[2] Կարգ կայսերացդ պակասաւոր է. պարտի լինել Մոնոմախ, Թէոդորա, Միքայէլ Զ, Իսահակ Կոմնենոս, Կոստանդին Դուկիծ:

[3] Մամնդաւ, անշուշտ առ Զամանդի գետով որ թափի 'ի Սարա (Ձիհուն). բերդաքաղաք յարևելից հարաւոյ Կեսարիոյ. այժմ անծանութ:

[4] Կոմանա, այժմ Կիւմէնէք մերձ յԵւդոկիա, 'ի Հիւսիսոյ կուսէ:

[5] Կարմիր վանք 'ի սահմանս Մարաշոյ:

րոս 'ի յԱնտաք. և եղև շարժ, և պատառեալ երկիրն եկուլ զպատրիարքն Հոռոմ և տասն հազար այր ընդ նմա, վասն այրելոյ նոցա զաւետարանն Ասորւոց ուղղափառաց, որ չորս անգամ ելանէր 'ի հրոյն ամբողջ, մինչև զհինգերորդ կատարումն նոցա յանձն առնոյր, որպէս Տէրն զխաչն 'ի Հրէից (!):

ՄԹ. Ի հինգհարիւր քառասուն և երեք թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ, յանառիկ յամուրսն Բաղաց և կապանին, որ և խաբէութեամբ հնարեալ մտին անդր. և սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի, զի թագաւորքն որ անդ՝ Հայկականք էին. և ոչ բարձաւ մինչև 'ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անզաւակաց, Սմբատայ և Գրիգորոյ[1], որ առեալ զմանուկն Սենեքերիմ Հայազարմ եղին թագաւոր ժառանգորդ իւրեանց. զոր և սպանեալ հրամանաւ Փատլնոյ՝ շիջաւ ճրագն որ անդ, և տիրեցին Պարսք:

Այս Փատլուն առնու զԱնի յԱլփասլանայ[2], տալով նմա ոսկիակուռ նկարս ծաղկոցի. և առաքէ տէր աւեր քաղաքին զՄանուչէ թոռն իւր յոյժ տղայ, որ իբրև զարգացաւ՝ յաւելոյր 'ի պարիսպն Անւոյ և յամրութիւնս նորա. և ած 'ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն. որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր 'ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին. զոր ասեն ունել 'ի գլուխ ազատաց կանանցն հինգհարիւր թագս երևելիս. զի տէր էր մեծ զօրաց, և բազում ազատաց: Եւ էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ 'ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ և կամօք Մանուչէի և ամենայն Հայոց: Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն:

Իսկ Ալփասլանն գնացեալ 'ի յԱլամուտն[3] պաշարեաց

[1] Սմբատ և Գրիգոր թագաւորք՝ որդիք են Աշոտոյ իշխանաց իշխանի Սիւնւոյ, քեռառն Վասակայ Բ Սիւնեաց թագաւորի: Գրիգոր անզաւակ գոլով որդեգրեաց զՍենեքերիմ զեղբայր Շահանդխտոյ կնոջ իւրոյ, 'ի զարմից իշխանացն Խաչենոյ. բայց ոչ Սենեքերիմաւ բարձաւ Սիւնեացն հարստութիւն. քանզի յետ նորա տիրեաց որդի իւր Գրիգոր ցամն 1166, և յետ նորա դուստր իւր Կատա կին Հասանայ Խաչենեցոյ, ամս երիս. և ապա լուծաւ թագաւորութիւն Սիւնեաց:

[2] Առումն Անւոյ յառաջ է քան զՍիւնեացն թագաւորութեան արկածս. զի Ալփասլան սպանաւ յամի 1072, Սենեքերիմ յամի 1094:

[3] Ալամուտ հզօր բերդաւան Մլհեդացն Դելմկաց. տես 'ի Տան. 3. յէջ 97:

զբերդ մի ամուր. և տէր բերդին արար մեծ խնդութիւն 'ի տան իւրում և զկնի սուգ մեծ. և ապա իջեալ առ սուլտանն որպէս թէ 'ի հնազանդութիւն, և 'ի համբուրելն զոտս նորա՝ փողոտեաց զգազանն արբեալ արեամբ անմեղաց, և բարձաւ չարն 'ի միջոյ: Եւ առ զպատիւ նորա Մէլիք-Շահն որդի նորա, այր ողորմած և բարեմիտ, առաւել ազգիս մեր. մինչ զի զպատրիարքն Բարսեղ վերացեալ խաչիւ առաջի իւր մուծանէր, և պատուէր պարգևօք, և տուղրայիւ գրոյ[1]. որով համարձակեալ առնու զգաւազանն և զանունն 'ի Հոնեցոյն[2], որ անձամբ առեալ էր արտաքոյ կարգաց զկաթուղիկոսութիւնն:

Կ. Ի հինգհարիւր քսան և հինգ թուին սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթուղիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, 'ի նմին քաղաքի, նենգութեամբ. և զօրք նորա ամրացեալ 'ի կլայն, ետուն զքաղաքն 'ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յայնժամ 'ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ. որոյ առեալ զքաղաքն խնդրեաց զվրէժ արեան նորա: Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի 'ի Միջագետս, այր սուրբ և պարկեշտ, մինչ կենդանի էր Վահրամ և Գէորգ. զոր աքսորեցին տէր Վահրամ և տէր Բարսեղ՝ որ յարևելս, զոր 'ի Հաղբատ ձեռնադրեցին տէր Ստեփաննոս կաթողիկոս Աղուանից և թագաւորն Կիւրիկէ: Ցորում աւուրս և զՍարգիս աւագերէցն արքունի դրանն արհեպիսկոպոս ձեռնադրեցին երկոքեան կաթուղիկոսքն սուրբ ուխտին Հաղբատայ, տալով վիճակս յերկուց կողմանցն: Այլ և զկնի մահուանն տեառն Սարգսի կաթուղիկոսի ետ ձեռնադրել 'ի տեղին Փիլարտոսն զԹէոդորոս ոմն:

Ի սոյն աւուրս սպանաւ Բեխղն[3] իշխանն Շիրակունի, որ վասն յոյժ լաւութեանն նեղեալ սիրով 'ի կայսերէ՝ եղև[4] Հոռոմ. և տուաւ հայր խոստովանութեան նորա արքեղայ մի Հոռոմ. և զի ոչ պահէր զօրէնս Հոռոմոց, խեղդեաց զնա պիղծ կրօնա-

[1] Տուղրա, թուղրա ըստ Պարսից, կնիք արքունի:

[2] Այսինքն 'ի Թէոդորոսէ՝ որ յաջորդեացն զՍարգիս Տակաթու 'ի Հոնի, յերկրին Մարաշոյ:

[3] Բեխտ թուի վեռա (a veste ըստ Լատինաց, պաշտօնեայ զգեստաւորիչ), իշխան Շիրակունի, ծանօթ է առ Բիւզանդացիս, և բնիկ անուն Խաչատուր. այլ բերդն իւր Անդրիօնն անծանօթ, խնդրելի 'ի կողմանս Անտիոքու:

[4] Հին O. կնքեցաւ

տրն 'ի քուն գտեալ զնա միայն՝ 'ի բերդն իւր յԱնդրիանն, զոր խմացեալ զօրաց նորա՝ գահավէժ առնեն զվիրագն անօրէն: Իսկ զկայսրն Միքայէլ՝ փոխէ Վտանիօտն ամ մի. և զկնի Մեսելիանոսն[1] ամիսս վեց. և ապա Ալեքս՝ պիտանի այր և խելացի:

Յորում աւուրս եղև նշան սոսկալի 'ի վանքն Պիզու, զոր շինեաց Գագիկ արքայ: Արք երկու անապատաւորք եղեալ 'ի տեսլեան՝ եկին 'ի վանքն, և նախ քան զհարցն ասացին զոր տեսին. մինն ասաց թէ տեսանէի, զի կանթեղ եկեղեցւոյ գրմբեթին անկաւ յատակ եկեղեցւոյս, և ոչ շիջաւ լոյս նորա. և միւսն ասաց թէ տեսանէի զի անկաւ յերկնից աստղ մի, և լոյսն առաւել փայլէր յեկեղեցիս: Եւ հայր վանիցն ասաց, տեսէք զի անկեալ է 'ի սուրբ խորհրդոյն. և վառեալ մոմեղէն և գնացեալ զտին մասն անկեալ 'ի սուրբ խորհրդոյն 'ի բեմն 'ի սուրբ պենտեկոստէին, յանզգոյշ առնէ. որ զկնի երեք աւուր գտաւ 'ի սուրբ պենտեկոստէին. և զայն երեք օրն չէր անկեալ ոչ յաւելն և ոչ յոտս[2], և զոհացան զԱստուծոյ:

Իսկ զտէրն Անւոյ զԳագիկ՝ որ չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս, չատ աղերսեալ Թօղորին[3] քեռն Զոյի, զի լիցի հոռոմ և այր նմա և թագաւորէ Յունաց, և ոչ հաւանեցաւ. բայց զորդին իւր զկրտսեր տայ 'ի փեսայութիւն Ապլղարբի որդւոյ Խաչկայ, յիշխանացն Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՄսիս և զԱտանա, զՊապառոնն և զԼամբրոնն, զոր ատեաց և ետ 'ի բանդի. և լուեալ հօրն զնաց հանել զնա. և 'ի դառնալն յիջևանս, խեղդեցին զնա Հոռոմք: Եւ պիղծն Ապլխարիպ սպան դեղով զփեսայն: Իսկ երէց որդին Յոհանէս փեսայացաւ տուկին Անւոյ հոռոմի՝ յուսով ինչ, և եկն յԱնի, և չգտեալ հանդիստ չոգաւ 'ի Վիրս. և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս, միով տղայիւ Աշոտ կոչեցելով, զոր խնդրեաց կայսրն փեսայ և ոչ կամեցաւ տալ: Եւ սա չոգաւ առ սուլտանն հրամանաւ կայսեր, և ետ նմա զԱնի. և ներքինի ոմն ազգական Մանուչէի դեղով սպան զնա, և մարմինն բերաւ 'ի Կոստանդնուպօլիս: Եւ նախ քան զգալն մեռեալ որդւոյն՝ մեռաւ հայրն, և բարձան թագակալքն Անւոյ այսու օրինակաւ:

---

[1] Նիկիփոռ Վատանիատ և Նիկիփոռ Բրիենն են յիշեալ կայսերքդ:

[2] Հինն յաւելու 'ի փառս սանձառ խորհրդոյն:

[3] Թէոդորոս, այն որ նստաւ 'ի գահ ինքնակալութեան յամս 1054-1056:

ԿԱ. Ի հինգհարիւր երեսուն և եօթն թուին Պուզան[1] ամիրայն հրամանաւ Մէլիք-շահին առ զԳանձակ 'ի Փատլնեացն որ Շատատիկքն կոչէին: Իսկ Վրաց թագաւորն Բագրատ դարձեալ 'ի կայսերէ՝ առնու զհայրենիսն իւր. և զկնի նորա առնու Գէորգի որդի իւր. որ և գնացեալ զկնի Կիւրիկէի 'ի Խորասան առ Մէլիք-շահն, դարձան պատուով: Այս Կիւրիկէ որդի էր Դաւթի, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածի. սմա հայրն Դաւիթ չինեաց զԼոռէ, և այլ ևս երկոտասան բերդ, որ կայ թաղեալ 'ի Սանահինն: Որոց թոռունքն Աբաս և Դաւիթ նեղեալ 'ի Վրաց՝ չոգան առ տեարսն Ռանայ, և առին մէն մի բերդս, և կային տառապանօք[2]: Այլ սուլտան Մէլիք-շահն խաղաղասէր և քրիստոնեասէր բարուք, տիրեաց 'ի Կաղբից ծովէն մինչև ցծովն Պոնտոսի երկոտասան թագաւորութեանց. և բարձեալ աւազ յովկիանու՝ տարաւ 'ի Պարսս, և էարկ 'ի վերայ գերեզմանի հօր իւրոյ, և ասաց. Ահա հայր աւետիս քեզ, զի որդի քո զոր թողեր տղայ՝ տիրեաց մինչև 'ի ծագս երկրի: Եւ առ սա չոգաւ Փիլարտոսն և տկարացաւ 'ի հաւատն: Եւ Պուզանն մեծ ամիրայն՝ հրամանաւ սուլտանին էառ զՈւռհա, և սպան արս ազնիւս 'ի փառաւոր իշխանացն Հայոց 'ի մատնութենէ քսու արանց:

Ի սոյն աւուրս թագաւորն Պեծենեկաց[3] եկն վեցհարիւր հազարաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի վերայ Ալեքսին. և քրիստոնէիցն աղօթեալ զաւուրս ութ, ջնջեցին զնոսա բովանդակ, արկանելով հուր 'ի սայլս նոցա որովք եկեալն էին:

Ի նմին աւուրս յայտնեցաւ չարութիւն հոռոմ աբեղայի մի, որ պաշտէր զշունն. և մոլորեցոյց արս իբրև բիւր մի, և զմայրն Ալեքսին, մինչ դնել մասն 'ի սուրբ խաչափայտէն Տեառն ծածուկ 'ի կօշկի որդւոյ իւրոյ 'ի ներքանս կոխել միշտ. զոր խմացեալ Ալեքսին կորոյս զամենեսեան, և զմայրն եհան 'ի տիկնութենէ (!):

ԿԲ. Ի հինգհարիւր քառասուն թուին մեռաւ Պօղոս կաթո-

---

[1] Պուզան ամիրայ զօրավար Մէլիք-շահ սուլտանի, որ յետոյ ապստամբեալ սպանաւ 'ի Դուդուչայ:

[2] Բերդդ են Նորբերդ և Մածնաբերդ յՈւռի կամ 'ի Հայկական Ազուանս:

[3] Պեծենեակք կամ Բեչենեակք, Թուրք հալածեալք 'ի Խազարաց վտարեցան յայս կոյս Վոլգայ, և արշաւանօք կալան մինչև 'ի Դրանսիլուանիա և 'ի Մոլդաւիա, ասէպ պատերազմելով ընդ Ռուսք և ընդ Յոյնս:

դիկոսն որ 'ի Մարաշ, զոր եղեալ էր Փիլարտոսն. և սուրբ և մեծ գիտնականն Գէորգ վարդապետն Հայոց, և թաղեցաւ 'ի Կամրջաձոր[1] առ Սամուէլի վարդապետի: Եւ եղև միահեծան սուրբ աթոռն պատրիարգութեան. քանզի տէր Բարսէղ 'ի նմին ժամու ընկէց զկաթուղիկոսն Թէոդորոս յաթոռոյն, և առ 'ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ նշանն տեառն Պետրոսի. և շրջեալ 'ի Կեսարիա եկն յԱնտիոք, և անտի 'ի յՈւռհա. և լինէր ամենայն ուրեք խնդութիւն մեծ:

Այլ խաղաղասէր սուլտանն դեղակուր եղեալ 'ի կնոջէն իւրմէ, վճարէր զկեանս իւր, 'ի հինգհարիւր քառասուն և մի թուին: Եւ լուեալ Պուզան ամիրային որ էր 'ի Նիկիա, դառնայ յՈւռհա. և տէր Բարսէղ երթայ յԱնի: Եւ թաղեցաւ Մէլիք-շահն 'ի Մարանդ առ հօր իւրում Արփասլանայ. որոյ էին երկու որդիք Բակիարուխ և Սափան կոչեցեալք. և Դուդուշն[2] եղբայր Մէլիք-շահին սուլտանացաւ 'ի կողմանս Ցունաց. և Բէկիարուխն 'ի վերայ Պարսից և Հայոց: Որ և զքեռին իւր զԻսմայիլն արարեալ հէջուր[3], կարի քաղցր և բարեմիտ առ Հայս. վասն որոյ խնամածեալ ազգիս՝ չինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, և զամենայն եկեղեցականս: Իսկ Դուդուշն տիրեալ Միջագետաց՝ հարկանէր զթագաւորն Արաբիոց զԲրեհիմն[4], և առեալ զամենայն բանակս նոցա հարստանայր. և գայր առ նա գիր 'ի կնոջէն Բէկիարուխին, զի գնասցէ 'ի Պարս և լիցի նմա այր, և առցէ զամենայն աշխարհ ինքեան: Եւ նորա խնդացեալ ընդ լուրն խաղայ անթիւ բանակօք, և երթայ 'ի դաշտն Ասպահանայ, և յղէ առ նա Բէկիարուխն աղաչանս, զի տացէ նմա զԱսպահան, և այլ ամենայն տիեզերք նմա լիցին: Եւ ոչ կալեալ նորա յանձին, յարձակին 'ի միմեանս, և մեռանի Դուդուշն, և փախչի Ըռատուան որդի նորա յՈՒռհա, և նստի և նա սուլտան 'ի Հալպ և 'ի սահմանս

[1] Կամրջաձոր վանք յԵրասխաձոր կամ յԱրշարունեաց գաւառի, ուր ծաղկէր Սամուէլ վարդապետ հեղինակ եկեղեցական գրուածոց և թղթոյն պատասխանւոյ առ Թէոդորոս մետրապօլիտ Մելիտինոյ, զոր գրեաց հրամանաւ Խաչիկայ կաթուղիկոսի։ Իսկ Գէորգ մեծ գիտնական ոչ է Մեղրիկն, այլ Ուռճեցին. սակայն գործք նորա չեն մեզ ծանօթք:

[2] Դուդուշ նահապետ է Սուլտանաց Հալպայ և Դամասկոսի:

[3] Հէջուր, հաճիլ ըստ Արաբացւոց, դոնապան կամ սենեկապետ:

[4] Իբրահիմ թագաւոր Արաբաց թուի ոմն յիշողաց անապատին Միջագետաց, թէ ոչ Եթովպացւոց:

նորա. և այլ ոմն յազգէ նորա Ալփիրակ կոչեցեալ 'ի կողմն Ցունաց սուլտանացաւ, և եկեալ յՈՒռհա տիրել ջանայր նմա: Եւ Թորոս կիւրապաղատն սպան զնա դեղով զկնի աւուրց երեսնից:

Ի նմին ամի մեռաւ սուրբ կաթուղիկոսն Թէոդորոս 'ի Հոնին, լին ամենայն առաքինութեամբ, և թաղեցաւ մօտ 'ի տէր Սարգիս:

ԿԳ. Ցայնմ ժամանակի եղև 'ի պատճառս մարախոյ և երաշտոյ սով սաստիկ, և 'ի յԱնի կարի իմն նեղութիւն մեծ. ուստի զմեռեալսն թաղել ոչ կարէին 'ի սովոյն և ոչ օրինացն հաղորդել. որ և այր մի ասեն քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց վեց հազար անձինս, որում անուն էր Բեխ: Զայպիսի աղէտս լուեալ այր մի մեծատուն 'ի Պարսս, և երամակ մի ուղտուց բարձեալ ցորենով՝ գայր 'ի յԱնի, և ասէր, ոչ այլ ումեք տալ բայց տղայոց: Զոր լուեալ բերէին զբազումս յորդառատ արտասուօք, և նա յագեցուցանէր և կերակրէր զնոսա. և 'ի սպառել ցորենոյն ձայն արարեալ ծնողաց մանկանցն զի եկեսցեն համբուրեսցեն զուստերս և զդստերս իւրեանց: Եւ իբրև կական բարձեալ մորմոքէին գրկախառնեալք, և ահա բարբառ քաղցր և բարի այրն բարբառեալ ասաց. Առէք զտղայսդ ձեր, և գնացէք 'ի տունս ձեր փառաւորելով զտուողն բարեաց զԱստուած 'ի մեծութեանն իւրում, զոր և արարինն իսկ:

Զկնի անցանելոյ սովոյն, ազգ մի սկիւթական, որ 'ի վաղեաց ժամանակաց զօղեալ կեայր առ Վրկանօք, անուն զքխաւորին Ելխազի[1] կոչեցեալ, որ եկն եօթն հազարաւ ընդ միջոցս աշխարհի մինչև յԱնի քաղաք պատերազմաւ. և մեռաւ անդ եղբայր նորա, որ նման էր Գողիադու հսկայի, 'ի Գրիգորոյ որդւոյ Վասակայ թոռին Ապիրատին. որ զկնի աւուրց նահատակեցաւ 'ի Կաղզուանն, զերծուցեալ 'ի մահուանէ զամիրայն Անւոյ զՄանուչէ. և տարեալ թաղեցին զնա 'ի Կեչառուս. եղ-

[1] Ելխազի, է Օրդօք էլղազի ամիրայ, յորմէ անուանի թուրք տոհմն Որդքեան, զոր մերքս Արդուխ կոչեն, որք տիրեցին Խլաթայ և բազում այլոց քաղաքաց հարաւային Հայոց, Միջագետաց և Երուսաղէմի իսկ. բայց յառաջ քան զգալն Խաչակրաց, և ոչ որպէս հեղինակս ասէ 'ի ձեռաց Փռանկաց առին զԵրուսաղէմ, այլ Փռանկք 'ի սոցանէ, մանաւանդ թէ 'ի յաջորդաց նոցին 'ի զօրավարաց խալիփային Եգիպտոսի:

բայր տէր Բարսղի կաթողիկոսի. և Մանուչէ և ամենայն զօր բանակին Հայոց զկնի դիմոյն: Իսկ Ելիսազի երթեալ ընդ Միջագետս առնու զԵրուսաղէմ 'ի Փռանգաց, հարկանելով նետ մի 'ի ձեղուն Յարութեանն, որ կայ մինչև ցայժմ 'ի նշան գործոյն:

Ի հինգհարիւր քառասուն և չորս թուին Սուքման որդի Արդուխին, և ամիրայն Սամուսատայ Պալտուխն՝ որդին Ամիր-դազէ՝ գան 'ի վերայ Ուռհայոյ. և դարձան լի ամօթով, զի կիւրապաղատն Թէոդորոս իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն. մինչև ոչ սուլտանն Ռատուան կարաց հնազանդել զնա: Դարձեալ 'ի հինգհարիւր քառասուն և եօթն թուին Ղլիճ Ասլան[1] սուլտանն արևմտից՝ թոռն Դղմշոյ՝ գնայ 'ի վերայ Մելտենոյ. և իշխան քաղաքին Ղավրիլն[2] աներ կիւրապաղատին Ուռհայոյ՝ դարձոյց զնա անարգանօք:

ԿԴ. Յայսմ ժամանակի լնու բան մարգարէութեան սուրբ Հայրապետին Ներսիսի՝ որ վասն ելից Փռանգացն. քանզի մինչ տիրէին Սկիւթացիքն Երուսաղեմի, և առնուին վարձս 'ի մտելոցն 'ի սուրբ գերեզմանն, դիպեցաւ կոմս մի փռանգ ազգաւ 'ի խռանն հարամղիլ և զայրանալ, և վասն այնր գանիլ, մինչև հանին զակն նորա զմի 'ի կապճացն և ընկեցաւ 'ի վայր. զոր առեալ եղ 'ի գրապանն. և տարեալ 'ի Հռոմ ցուցանէր. և նախանձու վառէր զքաղումս: Եւ ելանէին արք փառաւորք գլուխք զօրաց բազմաց, որոց անուանք էին այս[3]. Կոնդուիր, և Պաղտոյն՝ եղբայր նորա՝ յազգէ Թագաւորաց. զոր ասեն ունել

[1] Գրճ Արսլան որդի Սիւլէյմանայ, որդւոյ Գուրթուլմուշայ, սուլտան Իկոնիոնի:

[2] Ղաւրիլ, է Գաբրիէլ իշխան հայ բստ ոմանց, ըստ այլոց յոյն կամ յունահայ, աներ Պոտուենայ թագաւորի Երուսաղեմի:

[3] Աշխարհածանօթ առաջնորդք են առաջին խաչակրաց, Կոտուիրէ (Կոտրֆրուա տը Պույոն, Godefroy de Bouillon), և Պալտին (Պոտուէն, Baudouin) եղբայր նորա, 'ի հանդոյ իւրեանց սերունդք ասին մեծին Կարոլոսի ինքնակալի. իսկ Թագ և Թուր Վեսպիանու՝ ըստ կարծեաց Մատթ. Ուռհայեցւոյ, յորմէ առնու Հեղինակս:-Պեմունդ (Boemoud) որ դուքս եղև Անտիոքայ՝ որդի է Հրոչակելոյն Ռոպերդայ Կիշարայ:-Տանկրի, (Դանգրեռ, Tancrede) ոչ քեռորդի այլ հօրաքեռորդի Պեմոնդայ կարծի:-Զնջիլ է կոմսն Ռայմոնտ Սէն-Ժիլ (Raymond de Saint-Gille) :-Ռոպերդ կոմս Որմնաց (Ալամանաց) է կոմսն Նորմանդիոյ:-Միւս Պալտինն է Պոտուէն տը Պուրկ (Baudouin de Bourg) արեանատու առաջնոյն:-Ջոսլին է Ժոսլէն տը Գուրդընէ (Josselin de Courtenay) որ յաջորդեաց զմիւս Պալտին:

զԹագն Վեսպիանու՝ որ աւերեաց զԵրուսաղէմ. և մեծ կոմսն Պայմունդ, և Տանկրի քեռորդի իւր, և կոմսն Զնջիլ. և Ռոպերտն՝ Որմնաց կոմսն. և միւս Պաղտոյնն, և Ջոսլին կոմսն. արք յաղթողք և բազմազօրք: Յուղի անկեալք գան 'ի Բիւզանդիա, և սիրով անցեալք 'ի Նիկիա՝ հարին զՂլիճ Ասլանն միանգամ և երկիցս, և առնին զՆիկիա, և ետուն յԱլեքսն. և ինքեանք գնացեալ ընդ Կիլիկէ՝ առին զԱնտիոք, և զամենայն ծովեզերսն և զԵրուսաղէմ. և եղին թագաւոր, որպէս ծանուցանեն յոլովից պատմութիւնք:

Առ այսու ժամանակօք եմուտ սուրբ խաչն Նունեայ 'ի յԱնի. այն որ 'ի յուրացմանն Վազգենի Վրաց առաջնորդի գաղթեցաւ 'ի խորշս լերինն Պարխարու, 'ի ձեռն սուրբ վանականին Անդրէասայ յաշակերտաց սրբոյն Սահակայ: Եւ կացեալ անդ զեօթն ամ, և ապա ազդ արարեալ մամիկոնեանն Գրիգորոյ որդւոյ Հմայեկի՝ տարաւ 'ի Կապոյտն կոչեցեալ բերդ[1] և անդի փոխեցաւ 'ի Վանանդ, և կոչեցաւ Վանանդայ խաչ. և 'ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրէնն Սուքմանայ՝ բերաւ յԱնի, 'ի հայրապետութեանն տեառն Բարսղի. և կարգեցաւ նմա տօն կիւրակէն՝ որ զկնի ութօրէից Խաչավերացն տօնի:

Այլ 'ի հինգհարիւր քառասուն և եօթն թուին Պաղտոյն կոմսն[2] էառ զԹլպաշար և զՈւռհա: Եւ 'ի միւս ամին սպասալարն Բէկիարուքին եկեալ յԱնտիոք 'ի վերայ Փռանգին, և հարաւ 'ի նոցունց իբրև բիւրս ութ. քանզի գտին 'ի ճախակողմն սրբոյն Պետրոսի զգեղարդն՝ որով Հրեայքն խոցեցին ընդ կատականս զպատկերն փրկչական, ուստի ել արիւն և ջուր, որպէս 'ի կողէն Տեառն. և պատուեցաւ զէնն որպէս աստուածամուխն այն՝ զոր Հայք ունին. որով զօրացեալ Փռանգքն՝ հարին զՊշնամիս իւրեանց, և ապա առաքեցին զնա Ալեքսին:

ԿԵ. Ի հինգհարիւր քառասուն և ութ թուին մեռաւ Կոստանդին մեծ իշխանն Հայոց՝ որդին Ռուբինայ, որ էր յազատաց[3] Գագկայ արքայի, ուր ակնյայտնի ցուցաւ նշան մահու նորա: Զի 'ի նմին աւուր անկեալ շանթ 'ի յերկնից՝ հարկանէր

[1] Կապոյտ բերդ յԱբշարունիս:

[2] Եղբայրն Կոտրֆրուայ է առող Թլպաշարայ. սա նշանակէ և կոչի Թիլ Աւետեաց, և է բերդաքաղաք յարևմտից հարաւոյ Հռոմկլայ և Պիրիճիկայ, յաջմէ Եփրատայ:

[3] Հին Օ. Հաքազատ:

զարծաթի սկտեղն՝ որ կայր առաջի նորա 'ի բերդն Վահկա[1] կոչեցեալ. և մեռաւ այր մի առ ժամայն. յետոյ ապա և ինքն իսկ, որ բռնացեալ ունէր զքեառն Սեաւ[2]: Եւ թողու երկու որդի, զԹորոս և զԼևոն:

Ի հինգհարիւր քառասուն և ինն թուին Դանըշմանն[3] տէրն Սեբաստիոյ, զորմէ ասեն յազգէն Հայոց, եկեալ 'ի վերայ Մելտենոյ, և Պեմունդն և Ռաջարդն[4] որ կային յՈւռհա, ելին ընդդէմ նորա, և ըմբռնեցան 'ի նմանէ և եդան 'ի բանտի:

Ի հինգհարիւր և յիսուն թուին յաւուր շաբաթու ոչ վառեցաւ լոյս յԵրուսաղէմ, այլ յօր կիւրակէին 'ի յինն ժամուն, և զարմացաւ ամենայն երկիրն. այլ պատճառն էր անուղղայ գործք Փռանգին, զի կանանց ետուն զսպասաւորութիւն աստուածընկալ գերեզմանին:

Եւ 'ի նոյն ամի գայր կոմսն մեծ Պետևանն[5] կոչեցեալ երեսուն բիւրօք 'ի Կոստանդնուպոլիս, և հպարտ բանիւք եպարքոս կոչելով նախատէր զԱլեքսն, և առնոյր զօրս 'ի նմանէ յուղարկաւորս ընդ երկիրն Թուրքաց: Եւ նոցա նենգ գործեալ հրամանաւ իւրեանց թագաւորին, տարան ընդ անջրդի անապատ, և տկարացուցեալ զնոսա՝ մատնեցին Դանշմանայ և զօրացն Խլիճ Ասլանայ, մինչ զի երեսուն արամբ միայն զերծեալ Պետևանն՝ անկաւ յԱնտիոք. և յԵրուսաղէմ հասեալ և ուխտեալ՝ դարձաւ անդրէն 'ի Հռոմ: Ի հինգհարիւր յիսուն և մի թուին՝ տասն ազգ քրիստոնէից թիւր զատիկ արարին 'ի ծառզարդարն, բայց 'ի Հայոց և յԱսորւոց. 'ի չար սերմանց Իռիոնի[6]:

Ի հինգհարիւր յիսուն և երկու թուին՝ իշխանն Հայոց Գողն կոչեցեալ Վասիլ[7] գնեաց զՊեմունդն օգնելով 'ի գինս տասն

[1] Վահկայ բերդ ոչ հեռի 'ի Սսայ:

[2] Սեաւ Լեառն 'ի Կիլիկիա, չար Ամանոս լերանց, ընդ մէջ Ասորւոց և Ծովուն:

[3] Դանըշման է Տէնիշմէնտ, որ նշանակէ գիտուն, ընթերցող. զի որդի էր գիտնոյ որումն թուրքի բռնացելոյ 'ի կողմանս Սեբաստիոյ, իբրու յամի 1084. և սերունդ նորա տնեաց դարս բովանդակ: Ոչ յազգէն Հայոց, այլ թուի ծնեալ յերկրին Հայոց:

[4] Ռաջարդ է Ռիչար (Richard du Principat) ազգական Պեմունդայ:

[5] Պետևանդ մեծ կոմս է Գուլիելմոս Թ կոմս Բուաղիէի (Guillaume IX comte de Poitiers).

[6] Ի տոմարագիտութեան գտցեն խնդրողք զպատճառս թիւր և ուղիղ զատկաց, և արդարանան դատափետեալքն 'ի հեղինակէդ:

[7] Գող Վասիլ ժամանակակից Ռուբենի Ա, տիրէր 'ի կողմանս Մարաշոյ. վասն

հազար դահեկան, որ գնեցաւ հարիւր հազարաւ: Ի նոյն ամի կոմսն Ուռհայոյ Պաղտոյնն գնայ 'ի վերայ Թուրքին 'ի սահմանս Մերտնայ. և կալաւ զՈւլիսալար[1] ամիրայն, և ած 'ի յՈւռհա յոլով գերութեամբ, և հազարս հազարաց ոչխարաց: Յորում աւուրս գայր պատրիարքն Բարսեղ 'ի յԱնւոյ, և յոյժ պատուեալ լինէր 'ի կոմսէն գեօղօք և գանձիւք:

Ի հինգհարիւր յիսուն և երեք թուին մեռաւ Դանըշմանն, թողլով երկոտասան որդիս. և առ զիշխանութիւնն աւագն Ղազի: Եւ 'ի նմին ամի մեռաւ Բէգիարուխ սուլտանն, և ապ զտեղի նորա եղբայր իւր Տաքար[2]: Եւ 'ի սոյն աւուրս առ զՄարաշ Ճօշլինն. և իշխանն Ցունաց որ կայր անդ՝ Թաթուլն՝ ծախեաց զպատկեր Տիրամօրն՝ Թորոսոյ որդւոց Կոստանդեայ, որդւոյ Ռուբենի յոլով ոսկւոյ և արծաթոյ:

Ի հինգհարիւր յիսուն և չորս թուին 'ի չփոթել իշխանութեանն Պարսից, յարեաւ ամիրա մի Ղզիլ անուն սկիւթացի, էառ զաւանն Լօռէ, և գնայ մտանէ 'ի Դուին բռնութեամբ ուժոյ, սպանեալ զԱբունասր զեղբայրն Մանուչէի: Եւ գնացեալ Մանուչէի առնու զօր 'ի դրանէ արքային Պարսից, և գայ սպանանէ զՂզիլն 'ի վերայ գերեզմանի եղբօր իւրոյ, և զԴուին տայ 'ի ձեռս Պարսից:

ԿԶ. Յայնմ ժամանակի պատրիարքն Բարսեղ նեղեալ յազգի ազգի չփոթմանէն գնաց յաթոռն իւր յԱնի. և իսկոյն հասանէ նմա խնդիր 'ի տէր Գրիգորիսէ Պահլաւէ, որ և Վահրամն, Վկայասէր կոչեցեալ, եթէ հասեալ է ժամանակ իմ, ե՛կ յուղարկեա՛ զիս առ Տէր: Եւ նա ոչ յապաղեալ յուսով վերջին օրհնութեանն, և պատահէ նմա փորձութիւն ինչ սակաւ 'ի ճանապարհին 'ի բերդն Մենծկերտոյ[3] մօտ 'ի Բալու, 'ի յունականացն որ անդ՝ որք կամեցան կողոպտել զնոսա. բայց նա քաջասրտաբար արիացեալ ոչ ետ ըստ կամաց իւրեանց առ-

յանկարծօրէն 'ի վերայ թշնամեացն հասանելոյ՝ Գող կոչեցաւ, զոր Լատին պատմիչք ժամանակին ծեքանօք կոչեցին Covasillus կամ Corouassilius.

[1] Ուլու Սալար կամ Սաղրը թուի զօրավար կամ իշխան, 'ի ձեռանէ Որդոքեանն Էլղազեայ տեառն Մերտինու:

[2] Տաքար Մուհամէտ սուլտան Պարսից:

[3] Մենծկերտ 'ի գաւառին Մուշոց Շահունեաց, յայժմեանս Ջարանեագ:- Մովակն թուի ոչ Մովք լիճ (Կէօլճիւկ), այլ լճակ մի փոքրիկ մերձ 'ի Բալու, որ ոչ նշանակի յաշխարհացոյցս:

նուլ, այլ զոր ինքն Թողացոյց. բայց զիսաչն երկաթի ձեռագործ առաքելոյն Թադէոսի, որ տանէին առաջի, ընկէց բարձողն 'ի ծովակն, որ յետոյ գտեալ եղև 'ի քրիստոնէից 'ի ճաճանչ նշուլիցն գուշակեալ, և տարեալ եդին 'ի սուրբ Գրիգորոյ լեառն[1], ուր կայ գերեզման նորա. և կայ անդէն առնելով պէսպէս աքանչելիս: Իսկ նորա գնացեալ զերկայնաձիգ ճանապարհն, և հասեալ 'ի Կարմիր վանքն կոչեցեալ, ուր կայր այրն Աստուծոյ, առ իշխանն մեծ Վասիլն, և օրհնեալ 'ի նմանէ և յանձնեալ 'ի նա զտղայսն ձեռասուն, որք էին նորա քորորդւոյ որդիք, Գրիգորիս՝ որ և լինէր[2] կաթողիկոս, և Ներսէս եղբայր նորա, և էին որդիք Ապիրատին: Եւ ինքն ննջեաց 'ի տրէ ամիս յաւուր շաբաթու, 'ի յիսնակաան ամարան, 'ի տօնի Երեմիայի մարգարէին, և Թաղեցաւ 'ի տեղւոջն: Եւ արարին կոծ մեծ 'ի վերայ նորա Վասիլն և ամենայն ազատագունդն Հայոց:

Ի նմին ամի կատարեցաւ սուրբ ճգնաւորն և մարգարէն Մարկոս 'ի Կոկաց գաւառին, 'ի լեառն Կոնկոնաթ[3] մերձ 'ի Մարաշ, որ վաթսուն և հինգ ամ ոչ եկեր հաց, և ոչ որ ինչ նման է հացի, բայց միայն խոտ. որ և ասաց իսկ՝ եթէ յաճախեն չարիք մարդկան, և աւերի աշխարհ յայլազգեաց, և փակին դրունք եկեղեաց, և զԵրուսաղէմ դարձեալ առնուն Թուրքք: Սա յերկու տեղիս ջուր եհան 'ի նոյն անապատի և ամփոփեցաւ 'ի վանքն Կաստաղոն[4]. յետ տօնի Աստուածածնին հինգշաբաթ օրն տօն է սմա:

Ի հինգհարիւր յիսուն և եօթն Թուին առաւ Տրապօլիս, զամս մետասան տուեալ խսար 'ի վերայ նորա Թագաւորն Երուսաղեմի, և կոմսն Պերդրան[5]. այլ սակայն տուաւ քաղաքն 'ի Տանկրի 'ի տէրն Անտիոքու: Վասն որոյ բարկացեալ 'ի վերայ նորա Թագաւորն և Պերդրան, առին վերստին զքաղաքն և

[1] Ս. Գրիգոր լեառն զոր յիշէ հեղինակդ և գինի (125) 'ի սահմանս Զահանայ և Կիւրիկիոյ Թուի և ոչ Սեպուհն Դարանաղեաց:

[2] Հին Օ. զոր և անուանէր:

[3] Կոնկոնաթ կամ Կոնդանակ լեառն և Կոկաց գաւառ 'ի սահմանս Մարաշու, յիշին միայն 'ի Մատ. Ուռհայեցւոյ՝ յորմէ մերք առնու. ոմանք Մոկաց գաւառ ընթեռնուն:

[4] Կաստաղոն վանք մերձ 'ի Վահկա ըստ Մատ. Ուռհ. և ոչ առ Տիվրիկաւ, ուր յիշէ մերս Ինճիճեան՝ զՊէչտաղուն գալէսի:

[5] Պերդրան որդի Ռայիմոնտի կոմսի Սէն-Ժիլայ:

մաշեցին սրով և կողոպտեցին. և Պերդրան ժառանգեաց զտեղին:

Ի հինգհարիւր յիսուն և ինն Թուին Մամտուտն[1] սպասաւորն Պարսից՝ աւերեաց զամենայն երկիրն Ուռհայոյ կոտորածով և գերութեամբ, և 'ի սուգ նստոյց զամենայն քրիստոնեայսն:

Ի նմին ամի 'ի ժամանակս ձմերանի 'ի մթին գիշերի՝ անկաւ հուր 'ի բարձանց 'ի ծովն[2] Վասպուրական. և գոչեցեալ ծովուն անկաւ զցամաքաւն. և դարձաւ ծովն 'ի գոյն արեան, և մեռան ձկունքն. և 'ի լուսանալ առաւօտուն կուտեալ կային առ ցամաքաւն իբրև զփայտակոյտս անտառաց:

Իսկ 'ի հինգհարիւր վաթսուն Թուին մեծ իշխանն Հայոց, կորովի իմաստութեամբ իւրով էառ զբերդն Կինտռոսկաւիր[3], ուր սպանին զԳագիկ Շահնշահ: Եւ զի կենդանի էին սպանողք Թագաւորին՝ որդիքն Մանդալէոնի՝ երեք եղբարք, եպան զնոսա չարչարանօք. և էառ զԹուրն և զհանդերձս Թագաւորին, և զգանձն ամենայն գաւառին՝ որ կայր անդ 'ի պահեստի վասն անառ ամրութեան դղեկին. և խաչ և պատկեր ոսկի՝ բազում յոյժ. և տարեալ զբովանդակն 'ի Վահկայն՝ զտհանայքն զԱստուածոյ, և կացոյց յիւրոցն պահապան բերդին:

Իսկ պատրիարքն Բարսեղ այլ ոչ դարձաւ 'ի Յանի, այլ անդէն կեցեալ ժամանակս ինչ՝ ապա եղ 'ի մտի երթալ յԵրուսա-

[1] Մամտուն է Մանտուտ որդի Աբթուն-Թէքթէնայ, զորավար Տարսոնի աւրասնի:

[2] Մատթ. Ուռհայեցի ասէ և երկրին հերձատեալ յեղեալ ծովուն, և Թանձրացեալ ասարՇնայ Հրաբղխի ժայռքուն, քան մեծի ոգաքարի անկանն:

[3] Հինտռոսկաւիր բերդ ոչ գիտի ասա աշխարհագիրս. և զի այլ պատմիչք 'ի Կիլիկիոյս ասեն զԳագիկայ սպանումն, երեքին մի են, կամ առասպելն է բուն բերդին անուն և միւսն աւանին. որ յամանց հաճարի նոյն քան Կիւրիստաւայ՝ քան զԿիլիկիան գրանց և Տիմանայ, յայժմեանս Գարամանի. և յայլոց որիշ և մերձ 'ի Մաժակ: Հեթում պատմիչ 'ի Լիւկանոսն գաւառի ասէ զբերդն. իսկ գաւառդ այդ ասեալ յիշատակեալ 'ի մերոցս և 'ի Բիւզանդացւոց՝ է Լամանիա գաւառ հին, յարևելեան հիւսիսային ծայր Կիլիկիոյ, սահմանակից Կապպադովկիոյ և Կոմագենիոյ, այսինքն Եփրատացւոց: Արդ Թուի Կիւրիստաւ որից 'ի Կիւրիստաւայ, և զոյգ առաջնոյն կամ մերձաւոր նմին բերդն եղերական 'ի լեռնաստահանին Տաւրոսի, որ գտանէ քան Կապպադովկիա և քան Կիլիկիա, և հայի 'ի գաւառն Արգէոսի. զի և այլ պատմիչ 'ի սահմանս Արմենիա գաւառի ասէ զբերդն. և մերձ 'ի Զկնչուր երկիր. իսկ արդ ծանօթ է հոգիոս Գայրգաւ գեղայ 'ի սահմանս Կիւրինի:

ղէմ: Եւ հրաւիրեալ զեպիսկոպոսունս և զվանորեայս երկրին և զիշխանսն գալ 'ի տօն վարդավառին, ձեռնադրել զԳրիգորիս յաստիճան առաքելական. զի ինքն աներկբայ զառաջի եղեալ ճանապարհն վճարեսցէ: Եւ պատահեալ նմա որոգայթ ինչ 'ի վանքն՝ որ Շուղրն[1] կոչի, չինելով տուն, որ և 'ի վեր տանելն զհեծանն, զերծեալ 'ի ձեռացն անկաւ 'ի վերայ, և հրաւիրեաց մահու: Սակայն կեցեալ զկնի զաւուրս հինգ, տայ Գրիգորի զաստիճանն, և ինքն վճարի, ուր և թաղեցաւ անդէն 'ի հինգհարիւր վաթսուն և երկու թուին: Իբրև լուաւ զայս Դաւիթ[2]. ոմն որդի Թոռնկայ 'ի կղզւոջն Աղթամարայ, արարեալ ժողով եպիսկոպոսաց հնգից ձեռնադրեցաւ կաթուղիկոս, պատճառելով եթէ Վահանիկ կաթուղիկոս եկն առ Աբուսահլ որդի Գագկայ 'ի Զորոյվանա[3] և անդ վախճանեցաւ. և կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի, և գաւազանն և գօտին մաշկեղէն, և հողաթափ սրբոյ Հռիփսիմեայ և պերեզոտն ներկեալ արեամբ, և շղարշն՝ որ է դաստառակ, մնացեալ անդ 'ի ժառանգաւորաց. և 'ի ժամանակս Հալածանացն ամրացաւ 'ի կղզին Աղթամարայ: Եւ զի ասեն աթոռ է սա թագաւորացն Արծրունեաց և վայել է լինել և պատրիարգ: Սակայն ոչ եղև ընկալեալ, թէ և շատիցս եղև աշխատ ընծայիւք և աղաչանօք, մանաւանդ 'ի յԱնւոյ զլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարգն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով:

Բայց մինչ կենդանին էր տէր Բարսեղ, մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն, որ Աստուծոյ յայղղելովն տիրեալ էր բազում բերդից և գաւառաց. և հոգաց զտունն նորա պատրիարգն Բարսեղ, և ետ զիշխանութիւնն 'ի տղայ Վասիլն, ձեռնասուն մեծ Վասիլն՝ յազգէ կամսարական: Զի տուն Վասիլն էր յայնժամ հաւաքարան թագաւորազանց և ազատաց Հայոց,

[1] Շուղր անապատ յարևմտից հարաւոյ Մարաշու խնդրելի է:

[2] Դաւիթ՝ որ առաջնորդ համարի կաթուղիկոսաց Աղթամարայ՝ սերունդ է զարմի թագաւորաց Վասպուրականի. յորոց և յիշեալդ Աբուսահլ որդի Աշոտոյ երիցու եղբօր Գագկայ՝ և ոչ սորա: Իսկ կաթողիկոսութիւն Աղթամարայ երկու ևս դարուք երիցագոյն է քան զկարծեցեալն 'ի Հասարակաց, հաստատեալ 'ի Գագկայ թագաւորէ յամի 921. և յառաջնոյ կաթողիկոսէն, որ է Տէր Եղիշէ եղբարդի Նորին Գագկայ, մինչև ցայժմս անընդհատ կարգին շարք կաթուղիկոսացն 'ի դիւանս Աղթամարայ:

[3] Զորովանք որ և Սալնապատ 'ի սահմանս Վանայ քաղաքի:

և աթոռ Հայրապետաց:

Ի նմին ամի մեռանէր մեծ կոմսն Անտիոքու Տանկրի քրիստոսասէրն և իրաւադատն. և առ զիշխանութիւնն Ռոճէր քորորդին իւր:

Կէ. Ի հինգհարիւր յիսուն և երեք թուին 'ի մարերի երկոտասանն՝ դողաց երկիր[1] հանդերձ աղիողորմ ձայնիւ որ պայթ 'ի լերանց և 'ի դարափուլ վիմաց, և օրն էր կիւրակէ և ձայնն վառ. վասն որոյ և կարծեցաւ թէ օրն է կատարած աշխարհիս. և փլան յոլով քաղաքք և մեռան քառասուն հազար անձինք, զոր թուել կարացին:

Ի նմին ամի մեռաւ Գէորգ վարդապետն մականուն Մեղրիկ կոչեցեալ սակս քաղցրութեանն, նորոգող սուրբ ուխտին Դրազարկան[2], որ էր 'ի Վասպուրական պաւառէ 'ի յԱնալիւբ կոչեցեալ գեղջէ, սուրբ և սքանչելի և մեծ ճգնաւոր: Եւ 'ի դալ միւս ամին, անկաւ հուր յերկնից 'ի ճէմիարն Ամթայ, որ է մնիբայն հաւաքման մալիմանաց, և այրեաց զպարաշէն յարկն և ելանէր բոցն մինչև յերկինս:

Ի հինգհարիւր յիսուն և հինգ[3] թուին Թորոս եղբայր Լևոնի որդի Կոստանդեայ՝ կալեալ զտղայ Վասիլն ետ 'ի Պատմոյն 'ի կոմսն Ռուհայոյ, և նա չարչարեալ զնա էառ զամենայն երկիր նորա, և եկաւ աշխարհն 'ի Հայոց: Եւ Վասիլն գնաց 'ի Եդեսիէ առ ազգերն իւր Լևոն, և անտի 'ի Կոստանդնուպաղս. և զատուեցաւ 'ի կայսերէ ազատութիւն իւրոյ: Եւ 'ի միւս ամի գնայ Պատմոյն 'ի Նպէտն[4] 'ի վերայ Ապղարիպին՝ Հայոց իշխանին, որդւոյ Վասակայ[5], եղբօր Լիպարիտ, որ էին տեսուչք Հայոց զօրականի. որ յառաջ ունէին զմի բաժանն և զՊարն, առեալ 'ի Թագրայ մեծաւ քաջութեամբ. զոր 'ի բաւար ստրկեալ ամ մի, էառ 'ի նմանէ զարմանդանն. և նա գնայ առ Թորոսն: Նոյնպէս քաջութեամբ զմիւս իշխանն որ բնակեալ էր

[1] Աստանութիւնս մեծ եղև 'ի կողմանս Եդեսիոյ և Մարաշոյ, որպէս պատմէ Մատ. Ուռհայեցի:

[2] Դրազարկ անուանի մենաստան Սիւնեաց և քնարական թագաւորաց Հայոց թուականաց, յարևմտակողմն Ասայ խնդրելի է և հետաքննելի:

[3] Յին Ռ. հինգ հարիւր յիսուն և եօթն:

[4] Նպէտ, Նիսիպ, ասան ամուր յարևմ. Եփրատայ, մեջ Հռոհիոյ, Պիրայ Թլպաշարայ և Այնթապայ:

[5] Վասակ Պահլաւունի է Հարեղբայր Ա. Նիկոսի Շնորհալոյ:

յԱրևելեանս՝[1] զԲագարատ, և զԿոստընդին տէրն Կառկառայ[2], զոր մեռոյց 'ի կապանս 'ի բերդին Սամուսատ:

Ի հինգհարիւր վաթսուն և եօթն թուին մեռաւ թագաւորն Երուսաղեմի Պաղտոյնն, և առ զթագն միւս Պաղտոյնն կոմսն Ուռհայոյ: Ի նմին ամի մեռաւ Տափարն սուլտանն Պարսից, որ մերձ 'ի մահ եղեալ՝ ետ սպանանել զաւագ կինն իւր զԳոհար խաթունն, որ ունէր ասեն առաջի իւր ութսուն[3] կուսանս 'ի սպասու ինքեան թագ 'ի գլուխ, և էր տէր զօրաց բազմաց, յորոց գաղտ ղենուլ ետ. զի մի՛, ասէ, արասցէ այր զեղբայրն իմ, որ ունէր զխորին աշխարհն Պարսից. զԱւզկան[4] քաղաք, և զԽզնէ, որ իննսուն աւուրբ ճանապարհաւ անդր է քան զԱսպահան. և զաթոռն տայր յաւագ որդին 'ի Մահմուտն, և զկրտսերն՝ զՄէլիքն[5] դնէր տէր Գանձակայ Հայոց: Եւ 'ի գալ տարւոյն՝ մեռաւ Ալեքսն, և առ զթագն որդին իւր Փեռիեռոժէն, որ եղև բարեմիտ առ Հայս. և մեղադրէր հօր իւրում, որ մոլեալ 'ի ռուտ առաջնորդաց, կրկին մկրտելով խաչէր կրկին զՏէրն:

ԿԸ. Ցայնմ ժամանակի զօրանայր Դաւիթ թագաւորն Վրաց որդի Գէորգեայ, որդւոյ Բագարատայ. և առ զՏփխիս 'ի Պարսից. և եհար զՄէլիք զսուլտանն Գանձակայ 'ի հարուածս ռնստիկս. և հինգհարիւր արս սրահանգս բարձրացոյց 'ի փայտ մահու 'ի Տփխիս քաղաքի: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ, զի մեռեալ էր Մանուչէ՝ ամիրայն Անւոյ, և Ապլսուար որդի նորա տիրէր նմա, այր անարի և կնամարդի, որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դենարի 'ի վերայ Կարուց ամիրային. և ետ բերել նալ[6] ծանրագին և բարձրահասակ 'ի Խլաթայ, և դնել 'ի վերայ զմբեթի կաթուղիկէին, փոխելով զե-

[1] Արևելեան թուի յաջմէ Եփրատայ, յարևմտից Այնթապայ և Քիլիսայ; մերձ 'ի Կուրիս (Խորոս) քաղաք, ըստ Զամչեան հօր:

[2] Հին օր. Ն, որ է չարեքհարիւր:

[3] Կարկառ նովին անուամբ ճանաչի ցարդ, բերդաւան ամուր յեզր Եփրատայ յաջմէն, 'ի հիւսիսոյ վերոյնշանակեալ տեղեաց, ուր և հուն է գետոյն:

[4] Օզկան է Օգքէնտ քաղաք առ Սիհոն գետով, 'ի հիւսիսոյ Սմրղանտայ:

[5] Մէլիք Տօղրուլ, որ հակառակութեամբ կալաւ զաթոռ սուլտանութեան Պարսից. առ կենդանեաւ եղբօրն:

[6] Նալ, ըստ Թուրքաց, պայտ. զի լուսնաձև է՝ իբրև նշան մահմետականութեան համարէր:

դեալն յառաջնոցն. վասն որոյ սրտառեալ քրիստոնէիցն՝ կոչեն զԴաւիթ, և տան 'ի ձեռս նորա զքաղաքն Անի. և ընկեցեալ զզէնն ատելի 'ի պատուական գլխոյ կաթուղիկէին, զոր ունէր վաթսուն ամ վասն մեղաց մերոց համբերելով՝ եդին զպսակն զարդու, և զթագն Յիսուսի՝ զպարծանքն Պօղոսի, զփրկութեան մերոյ արեգակն, զխաչն աստուածընկալ. և հարեալ զժամահարն առ խաչին՝ դաւանեցին Աստուած զխաչեալն 'ի փրկութիւն հաւատացելոց: Իսկ թագաւորն զԱբուլէթ[1], և զորդին իւր զԻւանէ թողեալ 'ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպլսուար որդւովք իւրովք, որք անդէն մեռան և ոչ ևս դարձան: Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւխթիս[2] և զսահմանս իւր, և զԳագ, և զՏէրունական, և զՏայուշ և զԿայեան և զԿայծոն, և զԼօռէ և զՏաշիր, և զՄահկանաբերդ, և զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Աբասայ, Հնազանդէր և զլեառն Կովկասու, և զթագաւորութիւնն Սոնաց[3], զՄրաճուլք, և զՃքեթ, և զԴուալէթ, զՀերէթ, և մինչև ցծուն Կազբից և ցՇաղրանդ[4], և ցՇապուրան[5] քաղաք: Խնամածեալ և անիմաստ ազգին Վրաց, ընտրեալ մանկունս քառասուն առաքեաց 'ի Յոյնս ուսանել լեզու, և առնել թարգմանութիւնս և բերել. զոր և արարին իսկ. երեք 'ի նոցանէ լաւագոյն գաան և մտաւոր, զարդարեցին զազգն անզարդ: Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցւոյ և յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր 'ի ներքոյ ձեռաց մերոցն[6] խնդրելով օրհնութիւն: Սա թագաւորեաց երեսուն և երեք ամ,

[1] Աբուլէթ յՈւռպելեան տոհմէ:

[2] Ուխթիք, այժմ Օլթի, 'ի սահմանակցութեան Գուգարաց և Ուռհոյ, և 'ի հիւսիսոյ Սիւնեաց և Արցախոյ:

[3] Սոնաց թագաւորութիւն է Սուանք, Սուանէթ, 'ի հիւսիսոյ արևելից Եփրատայ:-Մրաճուլք մասն է Ռաճայ, յելից հարաւոյ Սուանաց:-Ճքեթ կամ Ճիքեթ են Զէրքէզք, յարևմտից հիւսիսոյ Ափխազաց, յեղեր Սեւ ծովու:-Դուալէթ, Դուալք, յարևելից Ռաճայ:-Հերէթ կամ Հեր, յանուն եղբօր Հայկայ, մասն Կախեթու, Մզխեթ կոչեցեալ այժմ, ընդ մէջ Վրաց, Աղուանից և Հայոց:

[4] Նոյն ինքն Դարբանդ:

[5] Ցայժմեանս Տաղստան:

[6] Ակնարկէ 'ի խոնարհել թագաւորին ընդ ձեռամբ Յովհ. Սարկաւագայ վարդապետի:

և մեռաւ 'ի Տփխիս. և թաղեցաւ 'ի Գելաթ[1] 'ի գերեզմանս հարց իւրոց: Եւ առ զթագն Դեմետրէ որդի իւր, որ պահեաց նոյնպէս զիշխանութիւն հօրն. և յաւել նա զԴմանիս[2], և զՆունան[3] քաղաք առեալ 'ի Պարսից:

ԿԹ. Ի ժամանակին յայնմիկ որդի մի Ապլսարայ, որ կայր 'ի Խորասան, իբրև լուաւ զանցս հօրն և զեղբարցն և զմահն Դաւթի, գայ 'ի խնդիր հայրենի քաղաքին Անւոյ, և աղերսանօք խնդրէ յԱպուլեթէ և յաւագաց քաղաքին. և զի կայր քաղաքն 'ի մեծի վտանգի 'ի Թուրքաց, ետ 'ի նա Ապուլէթ խնայելով 'ի քրիստոնեայսն, և առաւել յորդին իւր Իւանէ, զի մի կորիցէ 'ի յաճախ մարտիցն. և ինքն անցեալ գնայ 'ի տուն իւր: Իսկ Փաւլուն որդին Ապլսարայ բարիոք խնամարկեալ քաղաքին և ամենայն սահմանացն՝ արիաբար ջանացեալ, արար խաղաղութիւն. առ և զԴուին և զԳանձակ և եղև անուանի: Եւ զի կամեցաւ ձեռնարկել 'ի սուրբ կաթուղիկէն, զկնի երից ամաց եղև 'ի վերայ նորա արհաւիրք 'ի խոցոտմանէ հրակերպ արանց, որք ելանէին 'ի բանալեաց եկեղեցւոյն, զոր առեալ էր 'ի սուրբ սպասաւորէն Գրիգորոյ: Եւ 'ի վաղիւն կամէր կողոպտել զեկեղեցին 'ի զարդուէն՝ զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթանամեայ սգոյն. յորմէ տեսլենէ հիւանդացեալ և ահաբեկեալ, խնդրեաց աղօթս 'ի Գրիգորոյ՝ հանելով զնա 'ի բանտէ կապանացն. յորում կայր. յաղագս զի 'ի կարճ աւուրսն գնացեալ էր 'ի Վիրապն. և 'ի դառնալն նորա 'ի Դուին՝ տեսեալ զահագին ժողովն Թուրքաց յոգնախուռն բանակին, աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասաց՝ Օրհնեալ է Քրիստոս Աստուած, որդին Աստուծոյ, զոր սովորն էր առնել օր ըստ օրէ յԱնի. քանզի աղօթակից ընկերն ասաց ընդ կատակ յականջս նորա, եթէ ահա տեղիս օրհնելոյ զՔրիստոս. վասն որոյ կապեալ զնա և տարեալ 'ի Փաւլուն՝ եղին 'ի զնդան, և կամեցեալ անդ սպանանել 'ի նմին գիշերի յորում կալան. բայց Ճէր պահեաց զնա այսպէս:

[1] Գելաթի մեծահռչակ մենաստան Վրաց յիմերէթ, կառուցեալ 'ի նոյն ինքն 'ի Դաւթայ Բ, ուր և կայ ցարդ տապան նորին և պատկեր նկարեալ յորմն եկեղեցւոյն:

[2] Դմանիք քաղաք և վիճակ Սոմխէթու:

[3] Խունան է Հունարակերտ ըստ Հայոց, 'ի սպառուած Գուգարաց, առ մեծահռչակ Կարմիր կամրջաւն Վրաց՝ 'ի վերայ Կուր գետոյ, 'ի սահմանակցութեան Վրաց, Աղուանից և Հայոց:

Հ. Էին և վարդապետք յայնմ ժամանակի. Յովհաննէս, որ և Սարկաւագ, 'ի զաւառէն Փառիսոսոյ 'ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչև ցարդ 'ի բանս իւր, և 'ի նմանէ աշակերտեալսն.-Երեմիա որ և Անձրևիկ, որ զամս երեսուն չորակեր եղև, այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ և 'ի սաստելն երբեմն թէ լուռ լեր՝ զամս երիս ոչ խօսեցաւ ընդ մարդ, բայց եթէ ընդ վարժիչն իւր 'ի կարիս.-և Սամուէլ երեց աշխարհի՝[1] որ զգաւազանսն յօրինեաց քրոնիկոնին՝ Անեցին: Եւ նախ քան զսոսա Անանիա, որ զառաքեալսն համառօտեաց հրամանաւ կաթուղիկոսին Պետրոսի, Սանահնեցին[2]: Իսկ Սարկաւագ վարդապետն կեցեալ 'ի ժիր մշակութեան զաւուրս իւր, հանգեաւ 'ի հինգհարիւր ութսուն և ութ թուին[3]: Եւ զկնի ամի միոյ լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ[4], որ կանոնք գրեաց դիւրահաս: Եւ Թոքակերայ որդին[5] կոչեցեալ աշակերտ նորին, և այլ արք ճգնաւորք 'ի յԱղուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդին, և Յակոբ սքանչելին, որ յաւուր միում տեսանէր զսատանայ հեծեալ յուս կրօնաւորի միում որ գայր առ նա 'ի խոստովանութիւն, և 'ի մօտիլն մտրակեալ զնա և խոթեալ[6], անդրէն դարձոյց որպէս փախըստական: Եւ նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զկնի և բերել առ նա բռնութեամբ. և հարցեալ զնա ասաց. Եկի առ քեզ զղջացեալ 'ի յապաշխարութիւն, և յիշեալ զսովորական գործն իմ դարձայ 'ի քէն: Եւ սուրբն պատմեաց նմա զտեսիլն. և նորա լուեալ անկաւ յոտս նորա և խոստովանեալ էառ զլուծն ապաշխարութեան: Էին և կանայք թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ 'ի Քոթայրն[7], Խորասու և Մա-

[1] Սամուէլ անուանի ժամանակագիրն, որ ըստ Եւսեբեայ շարակարգէ զդէպս պատմութեան, և այլք ըստ նմանէ:

[2] Անանիայ Սանահնեցւոյ ծանօթագոյն գրուած է մեկնութիւն Թղթոց Պողոսի. յիշի նորա և մեկնութիւնն Մատթէի, և Դիմագրութիւն առ Յոյնս:

[3] Հին Օ. ՇԿԸ, որ է հինգհարիւր վաթսուն և ութ: Այլ ժամանակագիրք ՇՀԸ ասեն, հինգհարիւր եօթանասուն և ութ, որ ուղղագոյն թուի:

[4] Դաւիթ Գանձակեցւոյ Ալաւկայ որդւոյ զտանին կանոնքն խրատական գրեալ առ Արքայութիւն ոմն համբակ քահանայ:

[5] Թոքակերի որդւոյն, Խոնթկայ որդւոյն Պետրոսի և Սքանչելաւորին Յակոբայ որդիքն և գրուածք անծանօթք են մեզ:

[6] Յոր. մտրակել, խոթել: Հին. Օ. խոթեմք:

[7] Քոթայր կուսաստան 'ի Զորափոր գաւառի Գուգարաց. իսկ Թագաւորա-

րիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագն զգուշական խրատս:

ՀԱ. Ի հինգհարիւր եօթանասուն և ինն թուին Խուրթի[1], որդի Կզին՝ գայ 'ի Դուին և տիրէ, վիրաւորեալ 'ի պատերազմին զՓատլուն, զոր նենգիչք ոմանք գաղտ խեղդեցին պատճառելով զվէրն, որ չէր մահու: Եւ առ զամիրայութիւնն կրտսեր եղբայրն Փատլունոյ Խուշչերն. և զկնի սակաւու աւագն Մահմուտ. և անկաւ դարձեալ 'ի թշուառութիւն երկիրն Անւոյ:

Ի նոյն ժամանակաց ոչ հեռագոյնս ինչ՝ որդին Ապուլեթի Իւանէ կամեցաւ սպանանել զԴեմետրէ և զեղբայրն իւր զԳորգի. և հայր նորա Ապուլէթ ճողելով[2] զալիսն իւր առաջի որդւոյն՝ արգել զնա: Եւ էին երկոքեանն արգելեալք 'ի բերդն Դմանիս պատճառանօք ինչ խաբէութեան 'ի մէջ եղբարցն. զոր ապա իմացեալ Դեմետրէ, ասաց ցԻւանէ. Կալար զիս, մամ: Եւ նա զղջացեալ ասաց. Ոչ, արքայ, այլ ետու զեղբայր քո 'ի ձեռս քո, որ խնդրէ առնուլ զթագաւորութիւնդ: Եւ նա ըմբռնեալ՝ խաւարեցուցանէ, և թողու:

Յորում ժամանակի լցաւ դաշտն Գագայ[3] անթիւ և անհամար հեծելօք յամենայն ազգաց անօրինաց հաւաքեալ, որ կամեցան այրել զսուրբ խաչն՝ որ յանուն զօրավարին Սարգսի: Եւ 'ի բարկութենէ Տեառն խելացնորեալք կոտորեցին զմիմեանս. զոր լուեալ Դեմետրէ երթեալ ժառանգէր անաշխատ զկարասի նոցա: Ի սոյն աւուրս պատանի մի յեղբարցն Փատլունոյ լուեալ եթէ հան նորա Կատայն 'ի տանէ Բագրատունի՝ քրիստոնեայ էր յազգէ թագաւորաց, խաղայր հոգի իւր 'ի սէրն Քրիստոսի, և երթեալ 'ի լեառն սրբոյն Գրիգորի՝ մկրտեալ կրօնաւորեցաւ անդ՝ զամս հնգետասան մեծ ճգնութեամբ[4],

զունքդ են 'ի զարմից Կորիկեան կամ Հայ-Աղուան թագաւորաց:

[1] Խուրթ էմիր 'ի Ղազ կամ Ուզ առհմէ Թրքաց, որք ընդ Սէլջիւկեանց խաղացին յարևմուտս:

[2] Հին Օ. փեռեալով:

[3] Գագ դաշտ և բլուր 'ի Կողբոփոր գաւառի Գուգարաց աշխարհի, 'ի սահմանակցութեան Ուտիոյ, յորոյ կատար շինեալ էր տաճար Ս. Սարգսի, և ատաման մի նորին սրբոյ եղեալ անդ 'ի ձեռն Ս. Մեսրոպայ. յայս ակնարկէ շարականն. «Առաւել պայծառ 'ի գլուխս Գագայ, 'ի գագաթան տեղւոջն, օրհնեալ սրբոյն Մեսրովպայ»: Իսկ գումարտակը այդ էր Թուրքաց ժողով, զորս եհար Դեմետրէ:

[4] Հինն յաւելու և հանմամբ զիշերաց:

մինչ զի տեսանէին լոյս անճառելի բորբոքեալ ընդ երդս խրցկանն. և զկնի գնաց 'ի Դրազարկն և անդ փոխեցաւ 'ի Քրիստոս:

Ի հինգհարիւր ութսուն թուին, Իւանէ որդի Ապուլեթին ասպատակեաց 'ի Գառնի և հարան զորք նորա 'ի Խուրթէ, զորոց կտրեալ զգլուխսն եփեաց թանով, և զգանկսն դնէր 'ի բարձրութեան մնիրային 'ի շարս քարորմոցն: Եւ 'ի զալ միւս ամին սպանաւ Իւանէ 'ի Դեմետրէ նենգիւ. և որդին նորա Թիրքաշն գնաց առ ամիրապետն Շահի Արմէնն, և առեալ ի նմանէ զԱշարունիս՝ աւերէր զտունն Վրաց մեծաւ քաջութեամբ:

Ի հինգհարիւր ութսուն և ութ թուին կործանեցաւ Գանձակ 'ի շարժմանէ[1]:

ՀԲ. Եօթն ամօք նախ քան զայս Շահի Արմէնն տիրեաց երկրին Խլաթայ և այլ բազում քաղաքաց, որ էր թոռն Սուքմանայ. և սպան զհանիկն իւր, որոյ սպանեալ էր զորդիսն և կալաւ զիշխանութիւնն: Եւ իբրև զարգացաւ սա, կամեցան և զսա հեղձուցանել, որ և զերծեալ Աստուծոյ յաջողելովն և տիրեալ երկոտասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց. որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին: Որ և փեսայացոյց ինքեան զՍալղուխն[2] և խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի: Յորում ժամանակի էր և Ելտկուզ Աթաբակն[3] նովին բարի կամօք, յԱստուծոյ եղեալ երեքեան սոքա քրիստոնէասէր և աշխարհաշէն: Այս Շահի Արմէն գնացեալ 'ի Սասունս՝ յօրանայր 'ի գեօղի միում. և լուեալ Վիզենայ տեառն երկրին՝ երթեալ 'ի գիշերի միում պատէր զտունն յորում կայր, և յասելն ումեմն 'ի կատակս. Ա՛յ Վիզէն, ո՞ւր ես. ետ պատասխանի ընդ երդն և ասէ. Կամ աւասիկ շնորհօքն Աստուծոյ: Եւ կալեալ տանի զնա յամուրս իւր. և զկնի աւուրց արձակէ ուխտիւ և երդմամբ սիրոյ:

Յորում աւուրս ել 'ի վերայ նորա զօրավարն Գաբրից Ելտկուզն, և հարեալ գնաց ամօթով: Սա էառ զԱմուկ 'ի Խեռեն-

[1] Մեծ ժամն Գանձակայ եղև յամին 1139 յ30 սեպտեմբերի, զորոյ ուրվագծս մանրագոյն յիշեն Կիրակոս պատմիչ և նորին վարդապետն Միխիթար Գոշ:

[2] Սալտուխ ամիրայ Կարնոյ:

[3] Ելտկիզ տիրոջ կողմանց Նախճաւանայ, ամիրայի կոչեցեալ վասն խիստակալ և հայրապէր կալոյ ազգատանին Գաբրից:

կայ[1], և զՍասունք 'ի Վիգենայ ամենայն վանորէիւքն. և պահէր 'ի խոր խաղաղութեան, զամս վաթսուն:

Ցաւուրս սորա եղև սով սաստիկ 'ի Միջագետս, և քահանայ մի Աւետ անուն հայ ազգաւ՝ բարձեալ ցորեան իշոց՝ տանէր աղալ 'ի ջրաղացն, և 'ի տեսլենէ տառապելոցն աղէխարշեալ բաշխէր զամենայն աղքատաց. և զէշն վաճառեալ նոյնպէս արար, և այլ ոչ դարձաւ 'ի տուն իւր, այլ զգեցեալ այծեայս շրջէր քարոզութեամբ ընդ քաղաքս և ընդ գեօղս քրիստոսաբար. զի ունէր բանս հանճարեղս, և ետ նմա Տէր շնորհս նշանաց. և զղջացեալ 'ի բանս նորա՝ դառնային բազումք 'ի չարեաց. և խնամ ածէր որբոց և այրեաց, ընկալով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ 'ի կարողացն: Եւ ել համբաւ զնմանէ. և գային յարենային 'ի նա յոլովութիւնք ժողովոց, և եկն մինչև 'ի Մանծկերտ, և ել ընդ առաջ նորա Շահի Արմէնն մեծաւ հանդիսիւ և խնդրեաց 'ի նմանէ աղօթս և եմոյծ պատուով 'ի քաղաքն: Եւ զի յանդիմանէր զպոռնիկ քահանայսն՝ քսեցին զնա առ շահն, թէ լրտես է Հոռոմ թագաւորին, և ետուն զնա քարկոծել. յորոյ վերայ տեսին լոյս երկնային զերիս տիւս և զերիս գիշերս: Զոր տեսեալ շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն, և ետ հրաման պատուել զոսկերս նորա:

ՀԳ. Ի հինգհարիւր իններորդ թուին եկն Փերփերոժանն և առ զԿիլիկիա, և տարաւ տամբ և որդւովք զԼևոն եղբայր Թորոսոյ, և զպատկեր Տիրամօրն 'ի Կոստանդնուպօլիս. և անդ մեռաւ Լևոն, որդին Կոստանդեայ: Եւ զկնի երկուց ամաց մեռաւ Փերոժն, և առ զթագն Կիր Մանիլ որդի նորա: Եւ 'ի նոյն ամի մեռաւ թագաւորն Երուսաղեմի. երկոքին սոքա[2] 'ի յորսի որոգայթեցան, վասն խոզի՝ թագաւորն Ցունաց, և վասն նապատակի՝ թագաւորն Երուսաղեմի:

Ի հինգհարիւր իններորդ թուին Զանդի ամիրայն[3] էառ զՈւռհա. և զկնի երկուց ամաց էառ զնա Զօսլինն, որ էր տէր նորա. և զկնի եօթանասուն աւուր սպանաւ 'ի Թուրքաց,

[1] Խեղենեկ 'ի զարմից Թագաւորաց Արծրունեաց, որք յետ վաճառման աշխարհին իւրեանց 'ի Ցոյնս՝ տիրէին մասին միոյ, մինչև 'ի ԺԵ դար:

[2] Փերփերոժանդ կամ Փերոժդ է Ցովհ. Կոմնենոս կայսր. և թագաւորն Երուսաղէմի՝ Ֆուլգ, որք մեռան յամի 1142:

[3] Էմատէտտին Զանկի Ա, սուլտան Դամասկոսի. հաչակեալ առամարն Եդեսիոյ, զոր ողբերգեաց Ներսէս Շնորհալի:

որք եկին վերստին առին զքաղաքն, և մեռաւ քաջն և յոյժ հայասէրն. որում արար ողբս Գէորգ վարդապետն, որ Հայրն էր խոստովանութեան նորա:

Իսկ 'ի հասանել թուիս մերոյ 'ի վեցհարիւր ամն, եկին որդիքն Լևոնի՝ Թորոս և Ստեփանէ, և մեծաւ իմաստութեամբ և քաջութեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլիկիոյ, հարեալ զԱնդրոնիկոս զօրագլուխն Ցունաց, որ կայր անդ երկոտասան հազարաւ. զոր լուեալ Մանիլին 'ի վարձու կալաւ միանգամ և երկիցս զՄասուդ[1] սուլտանն, առնուլ զքէն վրիժուց նորա. որ և 'ի յերկրորդ մուտն սուլտանին անկաւ ահ Տեառն 'ի վերայ նոցա, և փախեան առհասարակ, զմիմեանս սատակելով, անդէն թողեալ զընաւ արարս իւրեանց. քանզի Աղուպն զօրագլուխ նոցա կամեցաւ գնալ երեք հազարաւ յԱնաւարզու 'ի կողմանս Անտաքու, յորոյ վերայ անկեալ Ստեփանէ եղբայր Թորոսի՝ սատակեաց զամենեսին. և 'ի լսել զձայնն գուժին 'ի բուն բանակին՝ դողացին առհասարակ, և ոչ մնաց չունչ զօրութեան 'ի նոսա: Եւ հազիւ զերծեալ սուլտանն՝ անկեալ 'ի յորջս իւր սատակի, տալով զպատիւն: Խլիճ Ասլանայ որդւոյ իւրոյ, 'ի թուին վեցհարիւր և չորս:

Ի նմին ժամանակի առին Փռանգք զԱսկալոն քաղաք: Ի սոյն ժամանակս եկն Մանիլն 'ի Կիլիկիա, և սիրով նուաճեաց զԹորոս. և առեալ զնա և զզօրսն Փռանգաց, գնաց 'ի վերայ Հալպայ. և լուեալ համբաւ յաթոռոյն՝ դարձաւ 'ի տուն. և ծայրաքաղ արար 'ի նոցանէ Թուրքն երկոտասան հազար 'ի ճանապարհին:

ՀԴ. Իսկ թագաւորն Վրաց Դեմետրէ կալեալ զթագաւորութիւնն ամս երեսուն և երկու, վճարի. և առնու զթագն՝ Դաւիթ որդին իւր, կորովամիտ և բարեսէր, և հանեալ 'ի բանտէ զԹիրքաշն, զհօրն կապեալն, դնէ զօրագլուխ, և զկնի ամսոյ միոյ մեռանի. (ոմանք ասեն 'ի դաւելոյ Օրբելեանց 'ի Սմբատայ և յիւանէէ, վասն 'ի տեղի նոցա դնելոյ զԹիրքաշն, բանս եղեալ ընդ Գէորգայ եղբօր Դաւթի՝ զնոսա դնել զօրավար[2]). և առ զթագն Գէորգի, 'ի թուին վեցհարիւր և հինգ:

Ցաւուրս յայսոսիկ յայտնեցան 'ի Շահապիվանս՝ մարմինք սպանողացն Գնելոյ՝ անփուտ հանդերձիւք, և արիւնաշաղախ

[1] Մասուտ սուլտան Իկոնիոնի, որ տիրէր յամս 1117-1155:

[2] Փակագծեալ հատուածդ չիք 'ի Բ. Օ.:

մարմնով՝ որպէս և սպանանն, ըստ անիծից սրբոյն Ներսիսի[1]:

Ի վեցհարիւր և տասն թուին էառ Գէորգի Վրաց թագաւորն զԱնի ՝ի Փատլուն ամիրայէն. որ փոխեաց զՇատատն եղբայր իւր. և զկնի յիսուն աւուր եկն Շահի Արմէնն բազում հրոսակօք ՝ի վերայ հարուածեալ և ախտացեալ քաղաքին ՝ի Սոնացն: Զոր լուեալ Գէորգի անդրէն դարձաւ, և եհար զնոսա կոտորմամբ սրոյ, զորոց զթիւն ոչ ոք կարաց գիտել. բայց ձերբակալքն էին քսան հազար. և թողոյր ՝ի յԱնի զՍադուն[2] իշխանն, յորոյ վերայ կարծիք ապստամբութեան եղեն՝ վասն խնամով[3] ամրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն ընկենու զնա ՝ի պատուոյ: Եւ նա սրտառեալ զնաց հատուած առ Ելտկուզն. զոր խաբէութեամբ կալեալ Երիսթավն[4] Շաքէոյ[5], բերէ անդրէն առ արքայ և մեռանի. և զիշխանն Զաքարեան զՍարգիս՝ դնեն ՝ի տեղի նորա ՝ի յԱնի: Իսկ Ելտկուզն զայրացեալ չէր ինչ ձեռնհաս առնել, զի չորեք հազար Պարսիկ կորեաւ ընդ Սադունին:

Իսկ թագաւորն Վրաց կուտէ առ ինքն զկովկասային զօրսն, և գայ առնու զԴուին՝ խստագոյն խայտառակեալ զնոսա ՝ի սուր և ՝ի հուր, բաց ՝ի քրիստոնէիցն որ անդ. և զգազաթունսն թանեփեացս առեալ ՝ի մնիրայէն՝ զարդարէ ոսկեթել հանդերձիւք. և եդեալ. ՝ի դագաղս՝ բառնայ ՝ի յուսս մուկրեաց, և բոկոտիւք տայ տանել մինչև ցՏփխիս, նախագահ քաղաքն իւր, ՝ի վեցհարիւր երկոտասան թուին: Զոր լուեալ Ելտկուզն գայ յայրեցեալն և ՝ի քանդեալն Դուին, և խոցոտեալ սրտիւ և մրմռեալ իբր զգազան կատաղի՝ գայ ՝ի Մրեն և այրէ անդ զամրոցն, ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրև չորեք հազար. և դառնայ ՝ի դաշտն Գագայ, և ասաց այրել զիսաչն հռչակաւոր. վասն որոյ ՝ի բարկութենէն Տեառն պատժեալ լինէին ՝ի տուէ և ՝ի գիշերի ՝ի թիւնաբեր օձից: Եւ զկնի ՝ի թագաւորէն Վրաց ահաբեկեալ փախչի, թողլով զկարասին

[1] Գնել ինք սպանաւ ՝ի Շահապիվան, իսկ սպանիչք նորա ոմն ՝ի Բասեն և այլք այլուր. այլ եթէ ոմանք ՝ի դաւաճանացն անդէն առ օրին սպանան, ոչ գիտեմք ՝ի հնաւանդ պատմութեանց:

[2] Սադուն յԱրծրունեաց ազգէ իշխան հուժկու:

[3] Հինն. ՝ի պատացաւութեամբ:

[4] Երիսթաւ՝ նախարար կամ իշխան մեծ նշանակէ առ Վիրս:

[5] Շաքի անուանի քաղաք և դաստ Աղուանից. զարդիս մի ՝ի կուսակալութեանց Տաղստանի:

և զգերիսն անդէն. սակայն զրգռէ զՇուվիզ սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան[1] և ածէ յԱնի, և զամս չորս պահէ ՝ի տառապանս անվար և անհանգիստ. մինչև թագաւորն Վրաց Գէորգի ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ ՝ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել ՝ի բազմութենէ անօրինացն:

Հե. Յայնմ ժամանակի աթոռն Հայոց շրջեալ ՝ի բազում վայրս՝ ՝ի Կարմիր վանքն, և ՝ի Շուղրն, և ՝ի Ծովքն, գնացեալ դադարէ ՝ի Հոռոմկլայն[2] կոչեցեալ դղեակն, վասն Հոռոմ աբեղայի անդ բնակելոյ. յորմէ առին Տաճիկք, և ՝ի նոցանէ Վասիլ իշխանն Հայոց, և ՝ի նմանէ առին Փռանգք. և ՝ի յորսի պատահեալ իշխանին որոգայթիւ մատնիլ ՝ի ձեռս Տաճկաց, զոր տարեալ ՝ի Հալպ, մեռաւ անդէն. և կին նորա՝ որ ՝ի Հոռոմկլայն, առաքէ ՝ի Ծովքն, և բերեալ զպատրիարքն՝ տայ ՝ի ձեռս նորա ասելով, եթէ Կայ իմ որդի յայնկոյս ծովուն առ ծնողսն իմ. և երթամ, եթէ լինի կենդանի՝ առաքեցից առ քեզ, և տուր ՝ի նա՝ որպէս ճշմարիտ աւանդապահ. և թէ ոչ՝ լաւ քեզ քան օտարաց: Եւ գնացեալ առաքէ զորդին, որում տուեալ ինչս յոլով՝ դարձուցին անդրէն. զի և ինքն ոչ վստահանայր միայն բնակել ՝ի մէջ այլազգեաց. քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացն. և սեփհականեցաւ աթոռ Հայոց. զոր բարեպաշտ կին Զօշլին իշխանին շարժեալ ՝ի հոգւոյ ետ յերկոսեան հարազատսն ՝ի Տէր Գրիգոր և ՝ի Ներսէս:

Որ և ՝ի վեցհարիւր հնգետասան թուին կատարեալ տէր Գրիգոր՝ յաջորդէ զաթոռն տէր Ներսէս: Առ սոսա առաքեաց Մանիլն վասն հաւատոյ դաւանութեան. և ետուն գրով, յոյժ կորովի և հաճելի բնաւից դաւանութիւնս, զոր ունիմք. և կամեցան միաբանութիւն առնել ազգացս, և մնաց գործն անկատար, որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք:

Ի նմին ամի ահագին շարժ եղև և կործանեցաւ Եզնկայն[3]:

Ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին[4] յայլազգիս, Գրհամ և Գեղի և Կաքաւաբերդ, վասն սաստկա-

[1] Ասլան Սէլչուկեան սուլտան Պարսից:

[2] Հռոմկլայ, Ուռում-գալէ, յեղը Եփրատայ, յաջմէն, ՝ի հիւսիսոյ Պիրիճիկայ: Ասատանօր բնակութեամբն Կլայեցի կոչեցաւ Շնորհալին Ներսէս:

[3] Հինն յաւելու, ՝ի գաւառին Եկեղեաց:

[4] Կապանն՝ թագաւորութիւնն Բաղաց է, որ է Միւնեացդ, և յիշատակեալքդ են ամուր բերդք տէրութեանն այնորիկ:

ցեալ մեղաց մերոց:

Ցորում ժամանակի և 'ի մխիթարութիւն քրիստոնէից՝ գեղեցիկ պտուղն հասուն և քաղցրաճաշակ պատանին Ցովսէփ[1] վկայեաց չարչարանօք յամսեանն յահեկի 'ի քսանն[2], և թաղեցաւ 'ի Հաւութառ[3]. որ էր պարսիկ ազգաւ, 'ի սահմանացն Դունայ, 'ի գեղջէն որ Նորաշէնք կոչի:

Ի սոյն աւուրս և Գէորգ Աչիկայ[4] 'ի գնալն իւր 'ի Հռոմ՝ յարոյց 'ի մեռելոց զառաջնորդն իւր զԳրիգոր, զոր սպանին յելուզակք 'ի գաւառին Ունկուաց. որ և մեղադրէր նմա, եթէ ընդէ՞ր յանճառելի բարութեանցն յորում կայի՝ դարձուցեր վերստին 'ի թշուառութիւն կենցաղոյս:

Եղև նշան և 'ի Հոռոմայրն 'ի հուչակաւոր սուրբ նշանէն, ածեալ մանուկ մի կոյր 'ի ծնէ և եդեալ 'ի վերայ աչացն տեղւոյ զզէնն աստուածամուխ՝ նոյնժամայն պատառեալ տեղւոյ աչացն և հոսեալ արիւն բազում կազմեցան աչքն անարատ ամենևին 'ի փառս խաչելոյն Աստուծոյ: Եւ էր 'ի յՈւձնայ, (և հօր վանիցն Պետրոս էր անունն 'ի լինել գործոյն[5]):

Ի վեցհարիւր քսան և մի թուին կատարեաց պատրիարգն Ներսէս զվարս իւր. եօթն ամ պաշտեալ զպատիւն, և եօթն եպիսկոպոս ձեռնադրեալ ձրի, արք անուանիք և ընտիրք, որ վարդապետ և որ փիլիսոփայ: Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նորաղնին[6]: Եւ միւս եղբօրորդին Գրիգորէս, որ և Ապիրատ կոչէր, չոգաւ 'ի Լամբրոնն, և խնամէր զՏարսոնի վիճակն:

ՀԶ. Ի վեցհարիւր քսան և երեք թուին էառ Գէորգ զԱնի երկրորդ անգամ, 'ի սադրելոյ Իւանէի ամիր սպասալարի, զի

[1] Ցովսէփդ Նոր վկայ կոչի, զորոյ զվարս գրեաց Շնորհալին՝ երբեմն ասպընջական նորին և խրախուսիչ:

[2] Հինն երկարաբանէ. վկայեաց Քրիստոսի աստուածութեանն, և վշտակատաւ չարչարանօք և սուրհարուք մահուամբ կատարեցաւ 'ի Քրիստոս:

[3] Կամ Հայոց-Թառ. հուչակաւոր մենաստան մերձ 'ի Գառնի, յարևմտից Գեղամայ ծովուն:

[4] Ի Ցայսմաւուրս, ահկի ԷԷ, մանր պատմին դէպք աչիկայիս, այսինքն կուրին Գէորգայ Արճիշեցւոյ, որ յուխտ երթալով 'ի Հռոմ սրախողխող եղև յերկրին Ունկարաց, և բժշկեալ՝ յետ կատարման ուխտին դարձ արարեալ բնակէր առ դրամբք եկեղեցեաց Անւոյ:

[5] Փակագծեալդ չիք 'ի Բ. Օ.:

[6] Նուրէտտին Մահմուտ, որդի և յաջորդ Զէնկեայ:

ինքն նստցի 'ի նմա, և արասցէ զերադարձ քրիստոնէից. և զՇահնշահ[1] ամիրայն տարաւ ընդ իւր արքայն, և այլ ոչ ևս դարձաւ անդրէն: Եւ լուեալ զայս ամենայն Թուրքաստանաց՝ հաւաքեցան 'ի մի, զԱլփասլանն[2] կոչեցեալ սուլտան՝ ընդ ինքեանս առեալ զան 'ի յԱնի, և աւերեն զտունն Շիրակայ: Իսկ Իւանէ կամեցաւ տալ զքաղաքն 'ի Թուրքն, և ոչ աջողեցաւ գործն. զի իմացաւ քաղաքն և զգուշացան, և գնաց սուլտանն և աթաբակն իւր սրտախոցեալ, և մեռան երկոքեան 'ի միում ամի:

Ի նմին ժամանակի ել 'ի բանտէն Կարուց մեծ իշխանն Ապիրատն և եկն 'ի յԱնի. սա էր եղբայր եպիսկոպոսի քաղաքին տեառն Բարսղի, որ աղաչեաց զթագաւորն Վրաց, և ետ փոխան նմա ամիրայ, և առ զնա և եօթնևտասն հազար դահեկան: Ցայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, զեղբօրորդի թագաւորին իւրեանց զԴեմնէն և զյոլովս յազատացն յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր 'ի Սախատա[3] յանհոգս. զոր իմացեալ յառնէ միոջէ՝ փախեաւ 'ի Տփխիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ թողլով զչար խորհուրդն: Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, և կամէր գնալ 'ի վերայ ապստամբացն՝ որք 'ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին 'ի Լօռէ, բաց 'ի Լիպարտէն՝ որ չոգաւ 'ի Պարսից կողմն երկու որդւովք. և էառ թագաւորն զամենայն գանձ Օրբէլեանց, և ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբօրորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ Իւանէ. զորոյ զաչսն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զՔավթար և զԻնէն, զորդի Լիպարտին սպան, և յոչինչ եղեն չար խորհուրդքն ամենայն, 'ի վեցհարիւր քսան և վեց թուին:

Այլ զԱրփասլան սուլտանն փոխեաց Տուղրիլն, և զԵլտկուզն՝ Փալհաւանն[4], որ տիրեաց խորին աշխարհին, և Խզլասլան՝ վերին աշխարհիս[5], որք էին որդիք նորա: Ի նոյն աւուրս

[1] Շահնշահս այս թուի որդի Փատլուն ամիրայի Անւոյ, 'ի Շէտտատեան տոհմէ:

[2] Ալփ Արսլանդ է Ասլան շահ Սէլճուկեան Պարսից:

[3] Զսախատա յիշէ և Ստեփանոս Ուռպելեան, երկարագոյն պատմելով զանցս իրացս, և զտեղին կոչէ նա Դարպաս-Ագարակ. և է այն գեղ 'ի Մորթփոր գաւառի Գուգարաց, յայժմեանս Շուլավէր կամ Պօռչալու, վիճակ Սօմխէթու:

[4] Փահլաւան և Գըզըլ Արսլան որդիք Ելտկուզի աթաբէկի:

[5] Խորին աշխարհ իմանայ զկողմանս Պարսից, Վերին՝ զմերս:

առաւ Ծառաքար[1] 'ի գողոց Հրամանաւ Ղարաչայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց զնա Խզլասլանայ ընդ բազում ոսկւոյ. և նա բնակեցոյց անդ արս վնասակարս որք ոչ դադարէին յարենհեղութենէ 'ի տուէ և 'ի գիշերի. մինչև զքրիստոնեայս 'ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին. որ և հինգ կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէին:

ՀԷ. Ի վեցհարիւր քսան և ութ թուին թագաւորն Երուսաղէմի երեքհարիւր ձիաւորով եհար զՍալահադինն[2] 'ի դրանն Երուսաղեմի զօրութեամբ սուրբ խաչին, որ եկեալ էր հարիւր քառասուն հազարաւ յառնուլ զԵրուսաղէմ, բարձեալ ջուր վաթսուն հազար ուղտով, (որք միշտ կրէին 'ի գետոց և յաղբիւրաց[3]): Ցառաջ Ցուսուփ էր անուն նորա, որդի Էյուբին, առն տառապելոյ Դունացւոյ, որ և 'ի մեծանալն կոչեցաւ Սալահադին՝ որ է խաղաղութիւն հաւատոց[4]:

Ի վեցհարիւր քսան և ինն թուին Գէորգի երարձ զգող և զաւազակ յերկրէ. զի ամենայն զօրացն 'ի միասին եղելոյ՝ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու և մեծի իրաց՝ անողորմ զամենայն մարդ, և յոլովք 'ի պատուաւորաց կախեցան. և ըզգտեալ ինչսն տանէին կախէին զփայտիցն պատուհասից, և կախեցին մինչև ցանասուն և ցշուն և ցմուկն, և ահ անկաւ 'ի վերայ ամենեցուն, և եղև խաղաղութիւն մեծ:

Ցայնմ ժամանակի մեռանէր Մանիլն. և կին նորա՝ զի դուստր էր Բրնձին Անտաքայ, կամեցաւ Փռանգ այր առնուլ և սպանանել զորդին իւր զԱլեքսն՝ որում տուին զթագն: Եւ փախեաւ տղայն յեկեղեցին և ազդ առնեն Անդրոնիկայ ազգականին Մանիլին. և գայ սպանանէ զսևաստոսն՝ որ կամէր առնուլ զթագուհին. և զազգն Փռանգաց՝ որ էին 'ի քաղաքին՝ կոտորէ, և որք 'ի նաւ մտեալ փախչէին, նֆաստ ձգեալ 'ի նաւն՝ այրեաց երեսուն հազար արանց. սպան և զտղայն, և առ

[1] Ծառաքար վանք և Կեչրոր քաղաքաւան յԱբեղեան գաւառի Այրարատայ, 'ի կողմանս Բասենոյ մերձ յԵրասխաձոր:

[2] Սէլահէտտին կամ Սալատին յ' Էյիւպեան Քուրդ տոհմէ, անուանի աշխարհակալութեամբ, նուաճեաց զԴամասկոս, զՀալէպ, և զԵրուսաղէմ յամի 1187: Հօր նորա Դունեցի կոչելոյ ոչ գիտեմ զոք երաշխաւոր:

[3] () Հին Օ.:

[4] Բ. Օ. խաղաղութեան հաւատս:

զթագն: Եւ առաքեաց կոչել զայր մի թագաւորազն Փիսիկ անուն, զի և զնա սպանցէ. և նորա զօրացեալ սպան զկոչողն. և մեծաձայն գոչմամբ երթայր 'ի սուրբն Սոփի. և չարժեցաւ քաղաքն, և չարամահ սատակեցին զԱնդրոնիկոս, և զերկու որդիս նորա անմեղ մանկունս՝ ծովամոյն արարին:

Ի վեցհարիւր երեսուն և մի թուին Խարաչայն որ էառ զԾառաքար, և խորտակեաց կռանաւ զխաչն Գորոզոյ կոչեցեալ, անկեալ 'ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն իւր զԿեչրոր և զՈւխթիսն և զամենայն ձորն Երասխայ, և երթայ կնաւ և որդւովք 'ի Դուին. և տեսանէ այր մի ահաւոր՝ որ ասէր ցնա: Ես եմ խաչն Գորոզոյ՝ զոր կոտորեցեր. և ահա սպանանեմ զքեզ ձեռօք սիրելւոյն քո Շահի-արմէնին: Եւ պատմեաց զտեսիլն, և 'ի վաղիւն զնաց բռնութեամբ զերծեալ, թէպէտ արգելուին զնա վասն երկիւղի տեսլեանն, մինչև փակեցին զդրունսն. այլ նա ընդ պարիսպն իջեալ, և երկու ջնիբայով[1] չոգաւ 'ի Մանծկերտ, և եկաց առաջի Շահին, և նոյնժամայն յարուցեալ եհար զդանակն ընդ սիրտն և սատակեաց զնա:

Ի նոյն ամի Սարգիս ոմն խաչենեցի[2] կայր 'ի Գանձակ և առնոյր խարաճ[3], և ոմն պարսիկ 'ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պարիսպն, ասելով. Խաչակից լեր Քրիստոսին քում. զոր լուեալ իշխանք նորա՝ տարան առ ինքեանս զպարսիկն և չարամահ սպանին:

Ի սոյն աւուրս և Ցորդանան ոմն 'ի Տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ 'ի Կարնոյ քաղաք[4]. և եղան նշխարք նորա ընդ Ցովսեփայ և ընդ Սահակայ ազգականին իւրոյ[5]:

ՀԸ. Ի վեցհարիւր երեսուն և երեք թուին մեռաւ Գէորգի Վրաց թագաւորն և ոչ գոյր նորա որդի, և Դեմնայն յաչաց և յերանաց յապաւած էր, որդին Դաւթի: Ապա առնու զթագն դուստր նորա Թամարն, բերեալ նմա այր զորդին Ռըզոց թագաւորին զՍոսլան, որ առ զԴուին քաղաք: Եւ 'ի գալ միւսոյ ամին մեռաւ Շահի-արմէնն անորդի, և աւեր և սուր և գերու-

[1] Ջնիբա, ճէնիպէ, ճէնեյիպ, ըստ Արաբացւոց. որ է նժոյգ 'ի ձեռանէ:

[2] Հարկահան ամիրային Գանձակայ:

[3] Հարկ, մարդահարկ, ըստ արաբ լեզուի:

[4] Բ. Օ. Ի Կարին քաղաք:

[5] Այսինքն՝ ազգակցացն, որպէս և ասի յերես 98:

թիւն բազմացաւ 'ի վերայ աշխարհի նորա ի շրջակայ ազգացն: Եւ զի Թոռն Վիգենայ՝ Շահնշահ քեռորդի տեառն Գրիգորի կաթողիկոսի առընթեր կայր մահուան շահին, առեալ զիւրսն անկանի 'ի Սասունս. և անդ անկաւ 'ի ձեռս նորա Բէկդամուրն՝ որ էր իշխան ամենայն տան շահին. առնու 'ի նմանէ զբերդն որ Թառձեան[1] կոչի, և ուխտիւ արձակեաց զնա, որ և ստեաց ուխտին 'ի տիրելն իւրում աթոռոյ շահին. և զայն ևս և զամենայն Սասունք՝ եհան 'ի նմանէ, և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս:

Ի վեցհարիւր երեսուն և չորս թուին ըմբռնեցաւ Ռուբէն 'ի բրնձէն, և թափեաց զնա Լևոն եղբայրն իւր, որդին Ստեփաննեայ, որդւոյ Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, որ տիրեաց եօթանասուն և երկու բերդից և զօրացաւ 'ի վերայ Ցունաց և Պարսից, և արար ընդ հարկաւ զՂլիճ ասլան սուլտանն մէջերկրեայ[2]:

Ի վեցհարիւր երեսուն և հինգ թուին առին Անեցիք զՄառաքար զհայրենիս տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց 'ի կանանց և 'ի մանկանց: Զոր լուեալ Ալիշէրն ամիրայն Դունայ ճողէր զմօրուան, և սեաւ զգենոյր 'ի վերայ կնոջն և որդեացն որ անդ, և 'ի վերայ զօրացն կոտորման. և 'ի քրիստոնէից փառաւորիւր սուրբ Երրորդութիւնն:

Հթ. Իսկ 'ի վերայ Ցունաց թագաւորեաց Փիսիկն որ և Սահակ, և յարոյց հալածանս և չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարքն Գրիգոր խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց 'ի կրօնս իւր, և զայլս հալածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք և հազար և վեցհարիւր քահանայք. զորս 'ի մի հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով: Եւ զայսպիսի աղէտս գրեաց յարևելս տէր Գրիգոր. և խոշորեալ[3] սրտիւ ոչ ինչ կարացին առնել: Առաքէր և նոյն պատրիարք եպիսկոպոս մի Գրիգոր անուն 'ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ 'ի Ցունաց կրէին Հայք, և զի խնդրեսցեն աղօթս և օրհնութիւնս, որպէս և առաջինքն, զոր կարի մեծարեաց

[1] Թառձեան կամ Հովհաննս յիշատակի 'ի Տարօն, որ 'ի ժամանակի պատմութեանս ընդ Սասնոյ համավիճակ էր ըստ վարչութեան:

[2] Գլըճ-ասլան, սուլտան Իկոնիոնի:

[3] Այսպէս ամենայն օրինակք:

Պապն, և ետ պատարագ առնել և հաղորդեցաւ (!), և զգեցոյց նմա զիւր քահանայապետական հանդերձն: Եւ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս, զկայսրն Ալամանաց, և զթագաւորն Անկլիզաց, և զթագաւորն Փռանցիսաց, իւրեանցայովքն. և զպատրիարքն Ալամանաց՝ որ ունի քսան և հինգ հազար ձիաւոր. և զարհի եպիսկոպոսն Սպանիոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, և զարքեպիսկոպոսն սուրբ Ցակոբայ՝ որ տիրէ հինգ հազար ձիաւորաց. և զմեծ արքեպիսկոպոսն մեծի քաղաքին Մելանայ, որ տիրէ երեսուն և վեց հազար ձիաւորաց. և յայսմ կողմանէ զպատրիարքն Երուսաղեմի: Եւ 'ի խորհուրդ մտեալ նոքօք՝ գրեաց գիր հրամանաւ սուրբ առաքելոցն 'ի նոցա երեսաց, եթէ Հայոց պատրիարքն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի 'ի վերայ Հայոց և Ցունաց և ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօք: Եւ վասն զի երկայն ճանապարհ է 'ի մէջ իմ և եղբօրն իմոյ, Հայոց պատրիարքին, առաքեցի նմա զիմ վասն և զպսակն և զկօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ: Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. Տար և զգեցո պատրիարքին. և յայնմ հետէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից[1]:

Զ. Այլ 'ի վեցհարիւր երեսուն և վեց թուին եղև զի վաճառականք Սալահադինին անցանէին ընդ Պաղեստինէ չորեքհարիւր ուղտուց բարձեալ ազնիւ կարասի, զոր կոմսն Տրապօլեաց իմացոյց թագաւորին Երուսաղեմի, և էառ հրաման յաւարի առնուլ: Զոր լուեալ Սալահադինն յղեաց և խնդրեաց միանգամ և երկիցս, զոնեայ զծառայսն միայն, յիշեցուցանելով զուխտ երդմանն՝ որ 'ի մէջ իւրեանց, և ոչ լուաւ. վասն որոյ զայրացեալ զայ 'ի վերայ նորա: Եւ ել ընդդէմ նորա թագաւորն Երուսաղեմի երեսուն և վեց հազարաւ 'ի դաշտն Հերմոնի, և նենգութեամբ կոմսին Տրապօլեաց զտեղի առեալ յոստ մի անջրդի՝ փակեցաւ 'ի թուրքաց, և ըմբռնեցաւ սաստիկ հարուածովք, և առան ամենայն քաղաքք ծովեզերեայք, և ապա Երուսաղէմ. զորոյ զընակիչս ոչ հրամայեաց կոտորել, այլ վաճառել զկեանս նոցա, կտրելով գին արուի՝ տասն դահեկան, և իգին հինգ. և զայլ ամենայն ինչս իւրեանց առեալ գնասցեն յո՛

[1] Մեծաբանութիւնք նմանաձայն Դաշանց թղթոյ. բայց ստոյգ միայն է թղթակցութիւնն և առաքումն ընծայից առ մերս հայրապետս:

և կամեսցին, և արարին այնպէս: Իսկ անօրէն կոմսն՝ որ միաբանեալ էր ընդ Սալահադինին 'ի ծածուկ, հարեալ 'ի Տեառնէ սատակէր. և երթեալ Սալահադինին 'ի վերայ բերդի նորա՝ խնդրէր զկինն և զբերդն. և նա խնդրեաց պատանդս յերևելի արանցն՝ զի գնասցէ առ նա, և լիցի նմա կին. և առեալ 'ի ներքս եհատ զգլուխս նոցա և ընկէց արտաքս, ընդ որ զարհուրեալ 'ի բաց գնացին: Քանզի լուան զհամբաւ գալստեան մեծի թագաւորին Ալամանաց, որ գայր 'ի գոյժ սգոյ սուրբ գերեզմանին և ամենայն քրիստոնէից, հարիւր յիսուն հազար հեծեալ առաքելով ընդ ծով. որք եկեալ պաշարէին զԱքայ. և ինքն գայր ընդ ցամաք անհուն բանակօք ընդ աշխարհն Ցունաց, առնլով 'ի նոցանէ զՎեռիաւ քաղաք և զՓիլիպուպոլիս[1] և զԱնդրիանուպոլիս և այլ յոլով բերդս և աւանս. և առաքէր զորդի իւր յառաջագոյն 'ի վերայ Կոստանդնուպոլսի, և խառնէին հալածեալքն 'ի կիս Սահակայ մերքն՝ 'ի նոսա, և բազում առնէին աւերս 'ի նոցանէ վառեալ նախանձու:

Իսկ Կոստանդնուպոլսացիք խնդրեցին ողորմութիւն, և ետուն հարիւր կենդինար ոսկւոյ և երկու հարիւր արծաթոյ, և ձրի անցուցին զամենայն բազմութիւնն, զոր առեալ էին 'ի Բլախաց[2] և 'ի Բուլղարաց, յոլովութեամբ զանձուց 'ի յանցանելն ընդ աշխարհս նոցա: Իսկ որդիքն Խլիճ-ասլանայ ոչ լսելով հօրն իւրեանց՝ Ուճին Թուրքումն արարին ընդ նոսա պատերազմ, երեսուն և երեք օր ոչ մեկնելով 'ի նոցանէ՝ մինչև Հարան և կորեան 'ի նոցանէ, և այնքան սովեցան՝ մինչ զի ութեւտասն օր անուաղ կացին 'ի բերոյ հողոյ. և մինչ 'ի Կոնն կերան վաթսուն հազար ձի. և առեալ զԿոնն կոտորեաց, և նըստաւ անդ: Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լևոն, և ոչ հասաւ առ նա. և իբրև ել 'ի Կոնն՝[3] եհաս զիր 'ի պատրիարգէն Գրիգորոյ, եթէ Եկաք մեք մինչև 'ի Սիս քաղաք, և մնամք քեզ աստ: Եւ թագաւորն ժողովեալ զամենայն մեծամեծս իւր՝ ետ կարդալ, և 'ի խնդութենէն լացին. և գրեաց պատասխանի՝ եթէ Աստի 'ի հինգ ամ քո հրամանաւ կամիմ բանալ անդաստան Հայոց, և ապա գնամ յերկիրն իմ. և ահա ունիմ թագ և

[1] Վերիա և Փիլիպպուպոլիս քաղաքք Թրակիոյ (Ռումելի), այժմ կոչին Գարավերիա և Ֆիլիփփի:

[2] Բլախք՝ Վլահք կամ Ուլահք:

[3] Կոն է Իկոնիոն, Գոնեա:

զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց՝ զով ընտրես: Եւ ասէր 'ի լսելիս ամենեցուն, եթէ Մինչ տեսանեմ զՊարոնն իմ, և զսուրբ Պետրոս՝ զպատրիարգն Գրիգոր, ոչ ասեմ զոր ինչ կայ 'ի սրտի իմում: Եւ եկեալ 'ի Սելևկիա[1], գտեալ հուն՝ անցին ընդ գետն ամենայն զօրն. և թագաւորն ոչ անց ընդ հունն, այլ ասաց նըստել յայնկոյս գետոյն սակաւ մի: Եւ յորժամ խաղաղեցան մեծամեծք նորա, յարեաւ ինքն և երկու արամբք եմուտ 'ի գետն, և զմինն 'ի նոցանէ խլեաց գետն և տանէր. և թագաւորն օգնելով նմա չպահեաց և ինքն, կորոյս զքրիստոնեայք, և հեղձաւ 'ի գետն, և զմարմինն առեալ տարան 'ի Սիս: Եւ 'ի զօրացն բազումք նաւեցին 'ի յերկիրն իւրեանց. քանզի էր և որդի մի կրտսեր թագաւորին, և այն ևս մեռաւ երթեալ 'ի յԱքայ: Բայց քանզի թագաւորն Անկլիզաց և միւս ևս այլ ընդ նմա զայնու աւուրքք եկին առին զԿիպրոս, և լուեալ վասն անգլուխ մնացեալ զօրացն՝ որ զԱքայ էին պաշարեալ՝ հասին նոցա 'ի թիկունս, և առեալ զքաղաքն՝ սատակեցին տասն հազար ընտիր այր 'ի զօրացն Սալահադնին, և զինքն իսկ զլխովին՝ որ եկն յայցելութիւն իւրոցն, առաջի եդեալ տարան կոտորելով մինչև յԱսխալան[2], և յոլովս յամիրացն ձեռնակալեալ տարան յայնկոյս ծովուն. և վերստին առին զամենայն առեալն 'ի Թուրքաց՝ բաց յԵրուսաղեմէ, որ ասէին մինչև եկեսցէ օր այցելութեան նորա:

ՁԱ. Ի սոյն ժամանակս ումն 'ի զլխաւորաց Սալահադինին գայ 'ի վերայ Մանծկերտոյ, և պաշարեալ զնա՝ ոչինչ կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն 'ի վերայ նոցա 'ի մէջ ամարան. և դարձաւ և սատակեցաւ 'ի ճանապարհին. և Բէգդեմուրն շնորհ կալեալ քրիստոնէիցն՝ սկսաւ պատուել և սիրել յայնմհետէ զքրիստոնեայսն:

Զայնու ժամանակօք թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայն կաթողիկեցի[3] զպատճառս խաւարման արեգական և լուսնի, 'ի պարսկէ միոջէ Ոճիէ անուն, զոր ասէր թարգմանեալ 'ի յունաց 'ի պարսս, և թէ Ցոյնք 'ի յենովքայ մարգարէութենէն ունէին. որ ասէր թէ արեգակն բնութեամբ ոչ եր-

[1] Այս Սելևկիա 'ի հուսկ յարևմտեան սահմանս Կիլիկիոյ է, յայժմեանս Իչէլի. և գետն յիշեալ է Կալիկադնոս, այժմ Կէօքսու:

[2] Ասկալա՝ Ասկաղոն քաղաք յեղերս Պաղեստինեայ:

[3] Մխիթարդ՝ պատմիչն է նախայիշեալ. տես յերես 99:

բէք խաւարի՝ այլ 'ի լուսէն լինի պատճառն. յորժամ 'ի միում կենդանակերպի դիպին արեգակն և լուսին, և ժամ իցէ ծննդեան լուսնի, և անդ դիպին թանձր ամպքն կոչեցեալ ռաստ, և կամ զանապն[1]. զոր թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խաւարման. թէպէտ ժամ իցէ ծննդեան լուսնի, և իցեն 'ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն մերձ՝ խաւարի արեգակն. թէ բոլորն հանդէպ է միմեանց՝ բոլորն խաւարի, և թէ մասամբ ինչ՝ առ 'ի շեղ մասն նսեմանայ. և որ մեզ երևի՝ պատեան լուսնին է և ոչ արեգականն ման, որպէս որ եղև 'ի վեցհարիւր քսան և հինգ թուին մեծ խաւարումն: Իսկ լուսնին խաւարումն լինի՝ յորժամ վեց կենդանակերպօք հեռի լինի յարեգակնէն, և զանապն և ռաստն 'ի նոյն կենդանակերպի, մութ ամպք չտան առնուլ լոյս յարեգակնէն, և ստուեր թանձրութեան երկրի անկանի զլուսնաւն, խաւարի լուսինն. եթէ զոյգ և ոչիւ միմեանց կայցեն՝ բոլորն խաւարի, իսկ եթէ առ 'ի շեղ լինի՝ ապրեալ մասն լուսաւորի յարեգականէ: Զայս աշխատեալ ծրարբոլորիւն փոխեաց 'ի մերս:

ՁԲ. Ցաւուրս ժամանակացս այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Իւանէ որդիք Սարգսի, որդւոյ Վարհամայ, որդւոյ Զաքարի յորդւոյ Սարգսի, 'ի Քուրդ ազգէ, հատուած եղեալ առ թագաւորսն Զորոգետոյ, որ 'ի Բագրատունեաց ազգէ, հաւատացին 'ի Քրիստոս, և պատուեցան. և տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի. և զի արիագոյնք էին, յառաջեցին օր ըստ օրէ 'ի բարձ և 'ի պատիւ: Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա զԼՕՌԷ. և ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին 'ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս 'ի սուղ ժամանակի. քանզի 'ի վեցհարիւր քառասուն թուին առին զերկիրն Շիրակայ. և 'ի վեցհարիւր քառասուն և հինգ, առին զԱնբերդ[2]. և 'ի վեցհարիւր քառասուն և ութ թուին առին զԱնի. և 'ի վեցհարիւր յիսուն թուին առին զԲՋՆԻ. և 'ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին զԴՈՒԻՆ. և 'ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս՝ թագաւորին[3]. և ապա զԳետաբակս և զՋարեքն[4]. և ել անուն նոցա ընդ

[1] Զանապն և Ռաստն նշանակեն զհանդոյցս լուսնի 'ի վերայ Խաւարման ծրին, և զկէտն՝ յորում դիտի ասողն:

[2] Անբերդ վիճակ՝ մասն Արագածոտան:

[3] Այսպէս յՕՕ. թուի թագաւորանիստ լինիլ:

[4] Գետաբակք և Զարեք բերդք 'ի Հիւսիսակողմանս և յարևելս Արցախոյ:

ամենայն երկիր: Բայց Իւանէ խաբեալ 'ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ 'ի հաւատոյն[1], և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի 'ի Խլաթ. և եղբօրն արիական անուամբ՝ ազատեցաւ դարձեալ, զդուստր իւր տալով 'ի կնութիւն Մէլիք Աշրաֆին տեառն Խլաթայ: Իսկ Զաքարէ եղբայրն Իւանէի մնաց 'ի սեփհական հաւատն. սակայն կամեցաւ զտան Տիրամօրն և զխաչին 'ի պատկեր աւուրն տօնել, և զճրագալոյցսն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանոյն[2] պատարագ մատուցանել. և վրանով պատարագել 'ի բացեայ՝ դպրօք և սարկաւագօք. վասն որոյ առաքեաց առ Լևոն որ այն ինչ օծեալ էր թագաւոր 'ի Ծռանգաց և Ցունաց, առաքելով նմա թագս 'ի վեցհարիւր քառասուն և վեց թուին. և էր ճոխ և յաղթազգեաց և հարկադիր և լծատանջ ամենայն շրջակայ ազգացն: Իսկ նոքա յամեցուցին զպատասխանին, վասն զի յետ տեառն Գրիգորի առ Տէր փոխելոյն՝ էառ զաթոռն Գրիգորիս, Տղայն[3] կոչեցեալ. զոր կալեալ Լևոնի եդ 'ի բանտի զկնի ամի միոյ, որ և կամեցաւ ելանել 'ի բանդէն բերդին, պարանաւ իջմամբ, և մեռաւ, կտրելով պարանին: Եւ զաթոռն էառ Ապիրատն, ամս, հինգ: Եւ ապա տէր Յովհաննէս, որ կայր ապստամբ 'ի Լևոնէ, յորմէ վշտացեալ թագաւորին Լևոնի՝ դնէ կաթուղիկոս զտէր Դաւիթ յԱրքակաղնին[4]: Եւ յերկպառակութենէն անտի հազիւ եկեալ 'ի մի կամս ամենեքեան հաւանութեամբ արարին պատասխանի, առնել Զաքարի՝ զոր խնդրէ. զի չէ, ասեն, արտաքոյ գրոց, և մեր է սահմանդ հայրենի, և յաւերմանէ եկեղեցւոյ է խանգարեալ: Բայց 'ի յարևելս միանգամ և երկիցս արար ժողով՝ կատարեալ արանց՝ 'ի Լօռէ և յԱնի, և ոչ եղև ընկալեալ. զուցէ, ասեն, և ամենայն իրօք հարկեալ լինիմք գնալ զկնի աղանդոյն Ցունաց և Վրաց:

Իսկ 'ի յաւուրս ժամանակաց Թամարայ թագաւորին Վրաց, զօրացան քրիստոնեայք. թէպէտ ընկէց զայրն Ռուս, և էառ զՕսն Սօսլան, որ ելից զՎիրս գերութեամբ և աւարաւ 'ի

[1] Իւանէ միաբանեաց ընդ Վիրս և ընդ Յոյնս 'ի դաւանութեան:

[2] Որպէս վասն յիշատակի ննջեցելոց, նոյնպէս և վասն հոգեւոր օգտի բարեպաշտից կենդանեաց:

[3] Ոչ Գրիգոր Տղայն մականուանեալ Դ, այլ Ե Գրիգոր, արդարև տղայ տիւք և մտօք, որ և Քարավէժն կոչեցաւ:

[4] Արքակաղնի վանք՝ շինեալ 'ի Լևոնէ Ա թագաւորէ, հետաքննելի 'ի սահմանս Սսոյ:

թուրքաց. յորմէ ծնաւ միամօր որդի, և կոչեաց զնա Լաշա, և ինքն կալեալ զթագն ամս քսան և երեք՝ վճարի: Եւ նստի յաթոռն Լաշայն, որ 'ի զօրացն կոչեցաւ Գէորգի, 'ի թուին վեցհարիւր յիսուն և եօթն[1]:

ՁԳ. Ի վեցհարիւր յիսուն և ինն թուին մորեխն աւերեաց զբազում գաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ աւերէր զտունն Պարսից մինչև ցԱրտաւիլ քաղաք, առնլով 'ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից, ըստ որում և զաղօթատուն նոցա լցեալ արամբ՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանացն՝ որք 'ի Նախչուանու եկեղեցիսն, և կուռայքն և մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, որ 'ի Բագուան զնեցան, և արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցւոյն: Եւ դարձեալ յայնր կոտորուածէ՝ կատարի 'ի տէր ուղղափառ և ամբիծ հաւատով, և թաղի 'ի սուրբ ուխտն Սանահնին, 'ի վեցհարիւր վաթսուն և մի թուին, թողլով տղայ մի հնգամեայ Շահնշահ անուն, ('ի պատիւ տէրութեանն Անւոյ կոչեցեալ[2]), զոր դարձոյց յաղանդն (!) Քաղկեդոնի Խոշաքն զուգակիցն Իւանէի:

Եւ զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ և աքանչելի վարդապետն Մխիթար, մականուն Գոշ Գանձակեցին, և թաղեցաւ յիւրում ձեռակերտին 'ի Գետիկ, զոր շինեաց հրամանաւ Իւանէի քեռորդւոյն մեծի իշխանին Քրդին, որոյ հրամանաւ եկնալ իսկ էր յերկիրն Կայենոյ, 'ի Հինն կոչեցեալ[3] Գետիկ. զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենեօք 'ի Հասանայ Կայենեցւոյ շինողէ բերդին:

Ի վեցհարիւր վաթսուն և երեք[4] թուին զՀաթերք յիւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ. և միւս Վաղթանգ Սակռեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ, թողլով երկու տղայս, զՀասան՝ որ 'ի զգուանաց Զաղալդօլա, և զՁաքարէ՝ որ և Նասրադինշահ. զորս խնամարկէր Իւանէ մարքն իւրեանց Խորիշահիւ: Որ և ապա յԵրուսաղէմ երթեալ և յամեալ, մեծաւ ճգնու-

[1] Ամ մահուն Թամարայ թագուհւոյ՝ զոր թագաւոր գրէ մերս, ոչ նշանակի ստուգիւ 'ի պատմութեան Վրաց:

[2] () Ըստ հին 0:

[3] Հինն Գետիկ 'ի Միափոր գաւառի որ յելից կուսէ ծովուն Սեւանայ, երկրաստան կործանմամբ աւերեալ. Մխիթար շինեաց զնորն ոչ հեռի 'ի հնոյն:

[4] Հաթերք կամ Հայթերք բերդաւան յԱրցախ աշխարհի, 'ի Սիւնեաց կողման, որ է յարևմուտս կոյս:

թեամբ կատարի յոլով զբուատիւք 'ի տէր: Եւ մեծն Իւանէ առնուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՁաքարէն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Զաքարիայ, առնուն զՇամքոր. և 'ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին առնու զՈրոտն[1], և զմերձակայ դղեակսն, թէպէտ ոչ զբովանդակ. քանզի երբ ունէին զնա Հայկազունքն[2], քառասուն և երեք բերդք էին նշանաւորք, և հազար չորեքհարիւր գեղք, և քառասուն և ութ վանորեայք. որոց սկիզբն աւերման եղև 'ի հինգ հարիւր յիսուն և երկու թուին, 'ի պատճառէ երիտասարդի միոյ մատռուակի Մէլիքշահ սուլտանին, որ 'ի գնալն հայկազնի թագակալին[3] 'ի հնազանդութիւն սուլտանին, նեղէր զնա զինով խիստ[4], մինչ խոստանալ նմա զդուստր իւր կնութեան, և նորա հանգուցեալ[5] զգօտին՝ ցուցանէր սուլտանին ըստ իւրեանց սովորութեանն: Եւ զկնի անցեալ աւուրց՝ խնդրէր զխոստացեալն, և 'ի հարկանելն զնա նախատանօք՝ լինի նախանձարեկ. և առեալ յոլովութիւն զօրաց աւերէր զաշխարհ, մինչև ամենևին քանդեալ ապականեցաւ. որում յետոյ տիրեալ հզօրն Իւանէ:

ՁԴ. Ի սոյն թուականի փոխի առ Քրիստոս պատկաւորն մեր Լևոն, և առնու զթագն դուստր նորա միամօր, Եղիսաբեթ անուն, որ ըստ Ցռանգաց լեզուին Զապել կոչի, ածեալ նմա այր զՑիլիպն զորդի տեառն Անտաքու, զամս երկու. և զի ատելի էր նմա ազգս Հայոց, և զիւրսն մանաւանդ պատուէր զբՑռանգան, երդմնազանց եղեալ 'ի յեղեալ ուխտէն Հայաղաւան և Հայասէր լինել, վասն որոյ և զպատուական թագն և զպաղատն[6] առաքէր 'ի տուն հօր իւրոյ: Որում ոչ կարացեալ տանել իշխանացն, դնեն զնա յարգելանի՝ մինչև մեռաւ անդէն. և տան զաղջիկն՝ Հեթմոյ, որդւոյ Կոստանդեայ, մեծահոգի և

[1] Որոտն հռչակաւոր բերդ և աւան Մղուկ գաւառի Սիւնեաց:

[2] Հայկազունքդ են ազնուագոյն իշխանք Սիւնեաց սերեալք 'ի զարմից Հայկայ:

[3] Ստեփանոս Ուռպելեան (գլ. կա.) ծանուցանէ զի Սենեքերիմ թագաւորն էր երթեալն առ Մէլիքշահ. մատուցեալն էր Զորթման ոմն, և զսկիզբն աւերածին Սիւնեաց գնէ յամի 1103:

[4] Հ. խստագոյնս:

[5] Այսինքն հանգոյց գործեալ 'ի գօտին:

[6] Իմա՛ զսպաս և զգանձս արքունի պալատանն:

հանճարեղ պատանեկի, որ էր անձնեայ և թիկնեղ և գեղեցկադիտակ երիտասարդ, պսակելով զնոսա պատրիարգին Կոստանդեայ, որ ժառանգեաց զաթոռն սուրբ՝ զկնի մահուան տեառն Յովհաննիսի 'ի վեցհարիւր վաթսուն և ինն թուին. ոչ յարենէ և կամ 'ի պատուոյ, կամ 'ի մամոնայէ, այլ 'ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ, և յամենայն լեզուաց վկայեալ:

Նախ քան զձեռնադրիլն նորա միով ամաւ՝ եղև շարժ ահագին, և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ 'ի Մշակավանս[1] 'ի մետասանն յունուարի 'ի ժամ ճաշոյ, և չորս պատարագող ընդ մեծ զենմանն նուիրեցան: Իսկ 'ի երկինս տեսեալ լինէր 'ի բոլորից աստղ նիզակաձև զամենայն գիշեր. որք երկոքեան ցոյցքն նշանակէին զշարժումն խաղաղութեան աշխարհի 'ի խռովութիւն նիզակաւոր թշնամեաց. որպէս և եղևն իսկ 'ի զալ Թուականին 'ի վեցհարիւր վաթսուն և ինն: Զօր ինչ օտարադէմ և այլալեզու շարժեալ 'ի Զին և 'ի Մաչին[2] աշխարհէն, Մուղալ և Թաթար անուն կոչեցեալ՝ եկին մտին յերկիրն Գուզարացւոց առ դաշտավայրօքն, 'ի կողմանցն Աղուանից, իբրև թէ քսան հազար. և կոտորէին զամենայն կենդանի՝ զորս գտանէին, և փութով դառնային: Զորոց զհետ մտեալ ամենայն ուժով Լաչն՝ հասանէ առ գետովն Կոտմանայ. և պարտեալ 'ի նմանէ՝ ապրի փախստեամբ հանդերձ Իւանէիւ, զորոյ երիվարին ածէր զՋիլն իշխան ոմն՝ զրկեալ 'ի նմանէ. բայց Վահրամ տէր երկրին՝ մեծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման, չգիտելով զայլոց փախուստն:

Եւ 'ի վեցհարիւր եօթանասուն և մի թուին կամեցան այրէն դառնալ նոյնք. այլ զի գտին դեսպանք նոցա կազմ և հաւաք զՀայս և զՎիրս, և տարեալ զհամբաւն՝ ոչ համարձակեցան գալ, այլ անդրէն դարձեալ գնացին, յո՛ և գնացին: Եւ 'ի նոյն ամին զօր բազում հաստատեալ 'ի Հոնաց, զոր Խուշաղն[3] կոչեն, եկեալ 'ի Գանձակ միաբանեցան ընդ նոսա. և 'ի գնալ մերոցս վստահութեամբ և անզգուշաբար 'ի վերայ նոցա, հա-

[1] Մշակավանք 'ի Կողբփոր գաւառի Գուգարաց:

[2] Ոչ 'ի բնիկ Զինաց այլ և ոչ կարի հեռի 'ի նոցանէ են բնավայրք Մոնկոլ կամ Մուղալ տոհմի, որ խառնեալ ընդ Թաթարաց՝ երկոքեան անխտիր միով անուամբ կոչին:

[3] Խուշաղ, Ղիչաղ, կամ Խիչաղ կամ Քափչաք, տոհմ է Խաղրաց-Թուրքաց 'ի Ֆինեան ցեղէ:

տուածեալք զարձան փախստեամբ, զբազումս սրոյ ճարակ տուեալ, և զոմանս կենդանի կալեալ 'ի փառաւոր ազատացն՝ եղին 'ի բանտի. ընդ որս և զԳրիգոր[1] իշխանն զկոչեցեալն որդի Խաղբակայ, և զեղբօրորդին իւր զարիական և զքաջ նահատակն զՊապաքն անուանեալ. զորոց զվրէժն առին 'ի զալ ամին զօրքս մեր ջնջելով զաւելի մասն Խուշաղին, 'ի զալն նոցա յերկիրն Վարդանաշատոյ[2]:

Զե. Իսկ 'ի վերանալ թուիս մերոյ 'ի համարն վեցհարիւր եօթանասուն և չորս, երկոքին որդիքն Խորազմն շահին[3] պարտեալ և նեղեալ 'ի Թաթարացն[4], զան երկերիւր հազարաւ, որպէս ասեն, ընդ Աղպպարական երկիր 'ի յՈստանն Հայոց, առնուն զնա, և լնուն զդաշտն լայնատարած վրանօք. յորոց վերայ երթեալ մերքս՝ յաղթահարեալ կորնչին ոչ սակաւք, առ գեղաքաղաքին Գառնոյ, աւելի մասն՝ վիժմամբ ընդ խրամս խորխորատին, յաստուածասաստ բարկութենէն՝ 'ի վերայ Իւանէի. յաղագս նոր և օտար չարեացն, զոր գործեաց կին նորա: Քանզի Պարկեշտ անուն երեց մի մեռեալ, հանել ետ 'ի գերեզմանէն և այրել, և շուն զենուլ 'ի տեղւոջն, վասն յաճախ ուխտականացն երթևեկաց[5], զոր պատուեաց Աստուած իջմամբ լուսոյ 'ի վերայ նորա. ակներև բերդաքաղաքին Բջնոյ, ուր և հիմն արկին եկեղեցւոյ[6], ելեալ 'ի բանս բանսարկու առն միոյ, զոր շանթակեզ արար Տէր 'ի նմին գիշերի, յորում 'ի տուրնջեանն զայնպիսի անցս կրեցին:

Իսկ սուլտանն յաղթազգեաց պերճանօք յանհոգս եղեալ, կոխէ բազում տեղիս, և ընդ կրունկն դարձեալ 'ի Դավրէժ, ըզկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրացն Գազայ 'ի Տփխիս.

[1] Գրիգորդ՝ իշխան է Խաչենոյ, իսկ եղբայր իւր՝ Հայրն Պապաքայ՝ կոչի Վասակ:

[2] Վարդանաշատոյ երկիրն է միջանկեալ խառնրդոց Կուր և Երասխ գետոց:

[3] Խորազմ շահն է Մուհամէտ և որդի իւր Մուհամէտ Ճէլալ-իւտտին, որ եկն ընդ Աղրպատական (Աղպպարական) յԱյրարատ և էառ զԴուին (Ոստանն Հայոց). խաղաց 'ի վերայ նորա Իւանէ զօրօք Վրաց և Հայոց. այլ զիրաբանական ձայն գիտին իւրեանց՝ խուճապական կարծեցեալ 'ի փախուստ փութացան, և ընդ վախս Գառնոյ գահավիժեալք կորեան շատք 'ի զօրուէն 'ի խորխորատս ձորոյն:

[4] Հ. յաւելու. արևելից զօրացն Հիւսիսայեայ:

[5] Հ. 'ի նշխարս սրբոցս նորա:

[6] Հ. յաւելու. զոր չկարաց տանել զպատիս Հայ քահանային:

և բազում ոճիրս գործեալ դառնայ 'ի վերայ Խլաթայ. և առեալ զնա և հարստացեալ երթայ 'ի Հոռոմք 'ի վերայ Ալատին սուլտանին և Մէլիք Աշրաֆին. և մեծապէս խորտակումն կրեալ 'ի զօրն, փախչի սակաւուք 'ի Մուղան՝ 'ի դաշտն ամենունակ զամենայն պէտս մարդոյ և անասնոյ. յորոյ վերայ հասանէ վաղվաղակի Տաթարն, որ հանեալ էր զնա յիւրմէ աշխարհէն յառաջագոյն, և անտի դարձուցանէ զնա 'ի փախուստ դէպ 'ի յԱմիթ. և յանգէտս մեռանի 'ի փախչելն, թէ սրով Թաթարին, և թէ որպէս ասեն՝ յիւրայոցն ոմն մի՝ զորոյ մերձաւոր սպանեալ էր 'ի կարճոյ, և սրտառեալ կայր վասն այնորիկ, և յաղագս անհանգիստ շրջեցուցանելոյն զնոսա. և այնպէս խնդրեցաւ վրէժ արեան անձանց անմեղաց: Իսկ Թաթարն կոչեցեալ որ եկեալ էր յառաջագոյն սակաւուք 'ի վեցհարիւր վաթսուն և ինն թուին, և կամեցաւ դառնալ 'ի վեցհարիւր եօթանասուն և մին՝ և ոչ վստահացաւ, յաւելեալ յինքն անհուն բազմութիւն առաջնորդ ունելով զՋարմաղանն կոչեցեալ զօրապետ, զայ 'ի Գանձակ շահաստանի 'ի վեցհարիւր եօթանասուն և չորս թուին. պաշարէ զնա աւուրս ինչ և առնու. և կոտորէ անողորմաբար, բաց 'ի մատաղ տղայոց և 'ի կանանց՝ յորս հաճէին: Եւ յայսմանէ ոյժ առեալ մտանեն 'ի Թագաւորութիւնն Վրաց, և բաժանեն զանուանի տեղիս զաւառաց, և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն՝ զորս Նոյինս[1] կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ դղեակս զաւառացն՝ վաղվաղակի մատնեալ լինէին 'ի ձեռս նոցա, 'ի պատուհաս մեղացն մերոց: Զաղաղա նոյինն էառ զԼօռէ քաղաք, և որք յայնր կողմանէ զաւառք. Դոլաղա նոյինն՝ զԿայեն բերդ, ուստի հանին զԱւագն[2] տէր երկրին. և մեծն Զորմաղանն՝ զԱնի և զԿարս, և զմերձակայսն. Ղատաղա նոյինն՝ զկողմանս Զարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու: Իսկ Մոլար նոյինն 'ի բաժնի առեալ զբերդս զաւառաց մեծ իշխանի Վահրամայ[3], և նախ առնու զՇամքոր հնարիւք. և Վահրամ որդւոյն Աղբուղայիւ փախչի տեղւոջէ 'ի տեղի, մինչև գիտաց եթէ խնայեն 'ի հնազան-

[1] Նոյին լաւ էս Նոյան, ըստ Մողոլաց նշանակէ բիւրապետս:

[2] Աւագ որդի Իսանէի եղբօր մեծին Զաքարիայ:

[3] Վահրամ որդի Զաքարիայ տեառն Գագայ և Տայուշոյ, խնամի իշխանաց Խաչենոյ և ժառանգ Կիւրիկեան Թագաւորաց Աղուանից, որոց կալուածք էին յիշեալքդ 'ի ստորեւ:

դեալս՝ որք կամօք խոնարհին 'ի ձեռս նոցա: Եւ ապա եկեալ առնոյր զառեալն 'ի նոցանէ զղղեակս և զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա 'ի հայրենեաց. որ և զամենայնն առեալ էին, զՏաւուշ[1], զԿածարէթ[2], զՏէրունականն[3], զԵրգևանքն[4], զՄածնաբերդ՝[5] որ էր Կիւրիկեանց Ասխարթանայ. զՆոր բերդ՝[6] որ էր Վասակայ Թագաւորազնին, և զՔաւազինն[7] անմարտնչելի ամրոց, և զԳագ անուանի բերդ, և զաւառ 'ի Գագկայ[8] Թագաւորէ շինեալ, ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ 'ի սրբոյն Մեսրովբայ վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ 'ի գլուխս Գագայ, և Հայի 'ի դաշտն լայնանիստ և երկայնատարած. և զայլ ամրոցս[9] և զգեօղս և զագարակս. ամենեքեան տուեալ լինէին 'ի ձեռս նոցա 'ի սուղ ժամանակս, անվաստակ, և առանց աշխատութեան. զի գիտացուք եթէ ձեռն Տեառն է որ ետ զաշխարհս մեր առաջի աչաց մերոց կերակուր օտարաց[10]:

ԶԶ. Եւ սկիզբն 'ի սրբութեանց իւրոց և 'ի սրբոց արարեալ, առեալ լինէր նեղեալ 'ի կարօտութենէ պիտոյից, և աւելի 'ի ջրոյ, քարայրն վսամականին համբաւատենչ և արդիւնական վարդապետին Վանականն[11] կոչեցեալ. յորում ինքն իւրա-

[1] Տաւուշ, Տայուշ կամ Տաուշ, 'ի հիւսիսակողմ Ուտիոյ աշխարհի, Տուչքատակ գաւառ հին:

[2] Կածարէթ 'ի նմին Տաւուշ գաւառի, այլ իսկական տեղին անյայտ:

[3] Տէրունական բերդ 'ի դաշտին Կոտմանայ մերձ յԱղստև գաւառ Ուտիոյ, 'ի վիճակի՝ այժմս յանուն գետակին՝ Հասանայ-ձոր կոչեցելոյ:

[4] Երգևանք կամ Երգեվանք բերդ 'ի Տայուշ գաւառի:

[5] Մածնաբերդ, 'ի Տայուշ, աթոռ Կիւրիկեան արքայազանց, 'ի կողմանս Հասան-ձորոյ:

[6] Նորբերդ, միւս աթոռ արքայազանց, 'ի կողմանս Հասան-ձորոյ:

[7] Քաւազին կամ Գաւազին, Կէվէզին տարբ 'ի Թուրքաց կոչեցեալ. քարաբլուր միապաղաղ և բերդ 'ի գագաթանն:

[8] Գագիկս այս հնագոյն թուի քան զամենայն ծանօթ Թագաւորս Բագրատունիս և Կորիկեանս:

[9] Հինն. և զայլ ամրոցս, և զայրն վիմափոր՝ որ կայրն 'ի մայրքս և ծագեալս և 'ի ձորակս գաւառաց, զէջից և տարակաց, որք և ամենեքեան, և այլն:

[10] Հինն յաւելու. ընդ որս և զաղխատարն զոյն և զգայթակղեցուցիչն տարբերակեալ, նախ քան զաստուածային տիպքն. և այլն:

[11] Վանական վարդապետ Յովհաննէս, հռչակաւոր 'ի հեղինակս ԺԴ դարու առաքինակրօն վարուք և գիտութեամբ. վարժապետ հեղինակիս և Կիւրակոսի պատմչի:

յովքն ամրացեալ էր աշակերտօք և այլովք գաղթականօք յոլովիւք՝ 'ի նա ապաւինելօք. որոց տուեալ զանձն փոխանակ քրիստոսաբար՝ գնայ գերի, ազատելով զնոսա, և ժամանակս ինչ շրջեալ ընդ բանակս խուժական ազգին վաճառի քրիստոնէիցն՝ որք 'ի բերդն Գագայ. որք գնեցին ոչ հրէաբար 'ի մահ նախատանաց, այլ տիրանման յազատութիւն փառաց (յիսուն դահեկանաւ, աւելի քան զՏէրն: Այնքան ժլատ էր վաճառողն Տեառն, և զիւրազին և թեթև ունէր, որում ինքն էր արժանաւոր[1]): Յետ որոյ կեցեալ ամս հնգետասան 'ի փառս Աստուծոյ և յօգուտ բազմաց, հանգչի 'ի Քրիստոս 'ի բազմավաստակ ճրագնութեանցն 'ի խորանս լուսաւորչացն աշխարհի, յեօթն հարիւր թուականին, 'ի յութևտասն մարտի և 'ի տասն յարեգի հին զուգիւն, 'ի յաղուհացան յաւուր շաբաթի, 'ի յիշատակի Ովրենդի և եղբարցն իւր 'ի կարգի. և ըստ մեզ՝ Կիւրղի Երուսաղեմի Հայրապետի, առնելով տօն վերին Երուսաղեմի, որ աստէն տօնիչ և գգուիչ էր զաւակաց նորա, որդւոցն լուսոյ 'ի փառս փեսայի նորա, անմահ թագաւորին Յիսուսի և Հօր իւրում և Հոգւոյն սրբոյ.. զհարիւրապատիկն աստէն թողեալ զանուն քաջութեան յաշակերտս իւր, և 'ի գիրս զանձուց եկեղեցւոյ, զոր ամբարեաց 'ի շնորհացն Աստուծոյ և 'ի յստակ մտաց ծննդականաց:

Զէ. Արդ 'ի վեցհարիւր ութսուն և հինգ թուականէն Հայոց մինչև յեօթն հարիւր չորեքտասան, յորում եմքս մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց, ընդ աշխարհս և ընդ իշխանութիւնս, որ յայսմ կողմանէ ծովուն մեծի, ընդ Պարս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վիրս, և ընդ աշխարհն Հոռոմոց կոչեցեալ. ուր էին բնակեալ Հայք և Ասորիք, Յոյնք և Տաճիկք և Թուրքմանք, գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ Հայրն մեր Վանական վարդապետն, և հարազատն մեր Կիրակոս վարդապետն Հօրն համանման. զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել, այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակօք 'ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յոլով ժամանակօք սկսեալ և թերի թողեալ պատկառելով 'ի գրողացն պատուոյ՝ զոր վերագոյն յիշեցաք. թէպէտ և չկարէ բան և նիւթ պեղել և 'ի յիշումն ածել զյորդութիւն բազմութեան մեղաց և յանցանաց և անզգամութեան մերոյ, ըստ որում և ոչ զհատուցումն վրիժուց արդար դատաստանին Աստուծոյ: Մանաւանդ եթէ զոյ հնար թուել զհատուցմունս, և զհամար չարեացն մեր ոչ բնաւ. որում յաղթեաց և միշտ յաղթէ խորոցն խորք և անդնդոցն անդունդք, զթութեանցն Աստուծոյ անբաւութիւնք: Որում շնորհ և զօրութիւն, փառք և պատիւ, օրհնութիւն և գոհութիւն, անթուական և անոլորտ յաւիտենիւն, 'ի բոլորից և 'ի մասանց արարածոց իւրոց, յիմանալեաց և 'ի զգալեաց, յորոց և ամէնն ասասցի անսպառ և անեզր էիւն անվախճանիւն[1]:

Զէ. Արդ 'ի վեցհարիւր իններորդ և մի թուին Հայոց Բաչանուին[2] փոխեաց զիշխանութիւնն Զարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երևելի մեծատուն և երկիւղած 'ի Տեառնէ զՈւմեկն[3], և զազգականս նորա զորդիսն պարոն Յովհաննու, զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ. և 'ի վեցհարիւր իններորդ և երկու թուին զամենայն աշխարհն Հոռոմոց՝ կոչեցեալ, և զանուանի քաղաքսն, զԿեսարիա նախ, ապա զՍեբաստ, յորս խնայեցին 'ի կոտորելոյ, զի վաղ եկին 'ի հնազանդութիւն, ապա զԵզնկա, զորս յանխնայ կոտորեցին և գերեցին. քանզի ընդդէմ դարձան: Եւ զայլ աշխարհս և զգաւառս, ուր մանաւանդ ազգ Հայոց վշտատեսաց բնակեալ էին. զի համարագիր թուականին ՈՂԲ (վեցհարիւր իններորդ և երկու) էր, և ըստ այն գործեցան արդիւնքն արժանաւոր ողբոց և արտասուաց, ոչ միայն բանականաց, այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք: Որ և զոյն ողբ կրկնեցաւ 'ի վեցհարիւր իններորդ և ութ թուին. քանզի կարծիս առին Բաչուն և այլ աւազակին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանացն Վրաց. և ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ, և զայլ մեծսն՝ կապեցին և հատին զճիր մահու, այլ 'ի խնամոց վերնոյն արձակեցին 'ի մահուանէ: Սակայն անթիւս կոտորեցին և գերեցին զիրաց և ապարակս և գործեցին խայտառականս 'ի կանայս՝ 'ի Հայս, և աւելի յաշխարհն Վրաց:

---

1 Ո Ըստ հին Օ.:

[1] Աստուծոյ գաղտաբար պատմութիւնն 'ի բնագրի մերում յլեսարքն օրինակի հետևեալդ՝ 'ի Հնագիր օրինակէն է:

[2] Պայման Նայան, ըստ Թաթարաց, ազգաս Մոնկոլ:

[3] Ումեկայ տերունդք յիշին յարձանս վանորէից Զորոգեաց. որքի նորա կրկի ձոր Մանասպիկարանի հոն վաճառական 'ի Կարին:

Ի վեցհարիւր ինն տուն և ինն թուին մեռաւ Աւազն որդին Իւանէի և թաղեցաւ 'ի Գղնձահանքն[1] ընդ հօր իւրում, այր ա-նագահ և պատերազմասէր և աղօթական:

ՁԹ. Յեսթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր 'ի մեծ Պապէն Հռոմայ, և գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին Աստուած՝ խոստովանել 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ. և ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց և Վրաց, բայց 'ի Հայոց. որք քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց 'ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականին, և զտին համախոհ երևելի արանց փառաւորաց Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց:

Ղ. Յեսթն հարիւր և մի թուին մարախ եկն 'ի վերին աշխարհս Հայոց, և արար վնաս յոլովից գաւառաց:

Յեսթն հարիւր և երեք թուին Մանկու ղանն հրաման ետ համարել զհնազանդեալ աշխարհս ընդ իւրով իշխանութեամբ 'ի ձեռն առն երևելւոյ Արղօն կոչեցելոյ, և դնել հարկս ըստ գլխոց արանց, բաց 'ի կանանց և 'ի բուն ծերոց և 'ի մատաղ տղայոց:

Յեսթն հարիւր և երեք թուին քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում չոգաւ 'ի Բաթաւ[2] մեծ թագաւորն հիւսիսոյ, հարմազգի Զանգզ ղանին, և անտի առ Մանկու ղանն. և ըստ արժանւոյն մեծարեցաւ, և դարձաւ յետ տարւոյ խաղաղութեամբ յաթոռ իւր:

Յեսթն հարիւր և չորս թուին եկն Հուլաւոյն եղբայր Մանկու ղանին անթիւ զօրօք, և մեծասաստ իշխանութեամբ 'ի վերայ Պարսից, Ասորեստանեաց, Հայոց, Վրաց և Աղուանից, և հրաման ետ նախ եկեալ զօրուն՝ ամենայն ախիւն իւրեանց գնալ յաշխարհն Հոռոմոց: Յորմէ ահէ թողին զվերին աշխարհս[3], և գնացին 'ի հարկէ, և կալան զամենայն միջերկրեայս մինչև 'ի ծովն, տիրելով աշխարհացն՝ որ ընդ իշխանութեամբ սուլտանացն Հոռոմոց կոչեցեալ:

Իսկ մեծն Հուլաւու 'ի նոյն ամի գալստեանն իւրոյ 'ի թուին եօթն հարիւր և չորք, չոգաւ յերկիրն Մլհեղաց յԱլամուդն կոչեցեալ, և առ զնա, հանեալ զգլխաւորն, զի յառաջ քան զգալն նորա՝ պաշարեալ և 'ի նեղ արկեալ էին զօրք նոցա, որոց գլխաւոր էր Իսաւուր նուինն կոչեցեալ: Եւ 'ի դառնալն անտի կոչեաց առ ինքն զԴաւիթ թագաւորն Վրաց և զմեծամեծս աշխարհին, և սիրով և պատուով տեսեալ զամենեսեան, մանաւանդ զքրիստոնեայսն. զի աւագ կին նորա Տողուզ խաթունն[1] կոչեցեալ քրիստոնեայ էր ըստ Ասորւոց ուսմանն՝ որ Նեստորքն կոչին. սակայն չէր տեղեակ նոցա աղանդոյն, այլ անխարդախ սիրով մեծարէր զամենայն ազգ քրիստոնեայ և խնդրէր աղօթս. որպէս և ինքն իսկ Էլղանն[2] կոչեցեալ Հուլաւուն. խորան կտուեալ 'ի ձև եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նոսա, 'ի ձայն ժամահարի և աղօթից կարգաւորութեան և պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք և սարկաւագունք. և գոյր գպրոցս և ուսմունս մանկանց համարձակութեամբ: Եւ անդ հանդէէին եկեղեցականք որ յամենայն կողմանց և 'ի լեզուաց քրիստոնէից գնային խնդրել զիաղաղութիւն և զտանէին ևս, և զառնային խնդութեամբ և պարգևօք:

Յեսթն հարիւր և հինգ թուին մեռաւ Բաթաւ մեծ կողմնակալն հիւսիսի: Եւ 'ի նոյն տարւոջն որդի նորա Սարղսխն դեղակուր եղև յիւրոցն եղբարց վասն նախանձու. զի նմա յանձնեցաւ իշխանութիւնն 'ի հօրէն և 'ի Մանկու ղանէն յաւելուածով. և սուգ մեծ եղև մահն նորա քրիստոնէիցն. զի կատարեալ քրիստոնեայ էր և լինէր պատճառ փրկութեան բազմաց, ածելով 'ի հաւատս յիւրոցն և յօտարացն:

ՂԱ. Յեսթն հարիւր և եօթն թուին քաջն Հուլաւու էառ զԲաղդատաստ, զկնի հինգհարիւր և եօթնեսուն[3] ամի շինու-

---

1 Գղնձահանքդ են 'ի Լեալվար լերինս Սամիէթու, ընդ մէջ Տաշրաց և Մորբոխորոյ, ուր եկեղեցի և վանս կանգնեալ էր յաւուրս իշխանութեան Զաքարեայ և Իւանէի:

2 Պաղուի խան որդի Ճուչեայ սնդրանկանն Ճինկիզխանի, իշխող կողմանց Հոնաց:

3 Այսինքն զՄեծ Հայս:

1 Ըստ Ռէշիտ-էլտինեայ Տօնղուզ Խաթուն էր 'ի Քէբայիզ տոհմէ Թաթարաց, դուստր Իրքուայ որդւոյ Օնկ խանայ:

2 Իլ-խան նշանակէ ըստ Թաթարաց՝ թագաւոր գաւառի կամ աշխարհի ասելիք, հպատակ մեծի խանին Թաթարաց՝ զոր Խաքանն կոչէին. և սեփական եղև տոհմն Հուլաղուի անունս Իլ-խանեան:

3 ԶԲաղդատաստ շինեաց Ճեաֆար-էլ-Մանսուր, յամի Տեառն 762, որով 496 ամք լինին ցառումն նորին 'ի Հուլաղու խանէ, յամի 1258, վերջին խալիֆայն է Մուսթազէմ, որ խեղդամահ եղև հրամանաւ և ոչ ձեռամբ խանին:

թեան նորա 'ի Զափրէ Իսմայելացւոյ՝ 'ի հարիւր ինն տուն և չորս թուին Հայոց, 'ի վերայ Տիգրիս գետոյ, որպէս ասեն, հեռի 'ի հին Բաբելոնէ եօթն աւուր ճանապարհ, սպան և զիսալիփայն իւրով իսկ ձեռօքն Հուլաղու, որում անուն էր Մուաթասր, և ապրեցան քրիստոնեայք որ կային անդ կամօք և բարեխօսութեամբ Տողուզ մեծի թագուհւոյն:

Եւ զի Խալիփայն՝ յետամնաց ասի ազգին Մահմէտի՝ որ 'ի վաթսուն թուականին Հայոց երևեցաւ, և տևեաց յետնորդն մինչև 'ի յեօթն հարիւր և եօթն թիւս: Ի դառնալն Ելդան Հուլաւուին յաւերմանէն Բաղդատայ՝ 'ի նոյն թուին պաշարեցաւ Մուփարկինն քաղաքն Մարտիրոսաց զամս երկու, զի անուանեալ սուլտանն որ անդ՝ ընդդէմ դարձաւ որդւոյ Հուլաւին Իսմուդին[1], և փակեաց զքաղաքն և մարտեաւ ընդ նմա եւ, որ էր յազգէն Եղլեաց, որ եղև նիւթ բարկութեանն Աստուծոյ. զի 'ի սղարն[2], կերան զսուրբ և զանսուրբ անանուանս, և ապա զաղքատսն, ապա զծնունդս իւրեանց և զմիմեանս զոր կարէին: Մինչ զի աւագ և զլուխ երիցանցն որ անդ՝ հարկեալ 'ի կատաղի բոցոյ որկորին և զաղանացեալ՝ եկեր յիւրոցն, և գրեաց խոստովանութիւնս 'ի քարտիսի, և յուսացաւ տեսանել մեզ զգիրն, և ողորմութիւն գտանել յողորմածէ բնութեանս ստեղծողէն: Եւ ինքն տուեալ զինքն կողկողման և լալեաց՝ վայիւք և հառաչմամբ անդադար ափսոսանօք, մինչև քաղեցաւ չունչն: Զորոյ զգիր խոստովանութեանն ըստ յուտոյն իւրոյ տեսաք մեք, և ակն ունիմք նմա ողորմութիւն գտանել 'ի գիտողէն և ստեղծողէն բնութեանս, որ մահուամբ եւս կարակցեաց մեզ. զթածն Հայր և ողորմութեան խորքն, և սիրոյն անդունդքն. նովիմբ կամօք և կարողութեամբ ողորմեսցի նմա, և քաւեսցէ խորհրդով սուրբ եկեղեցւոյ. և ամենեցուն իսկ՝ որ զզիմամբ ապաւինեցան և ապաւինեսցին յողորմութիւնն Քրիստոսի աստուծոյ մերոյ. և պատահեալքդ սրտի մտօք հայցեցէք զամէնն ասելով:

ՂԲ. Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաւուն յաշխարհն Միջագետաց, և առ զքաղաքն և զգաւառսն զայնոսիկ, որպէս և գրեցին մանրապատում զիրքն: Եկն առ նա պատրիարգն Հայոց, կաթուղիկոսն, օրհնեաց զնա և սիրեցաւ

[1] Զիսամութ ըստ Կիրակոսի պատմչի, Իշմութ ըստ Մոդոլաց:

[2] Հիսար ըստ Արաբաց, պաշարումն քաղաքի:

'ի նմանէ. ընդ նմա էր 'ի յառնուկն զամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պապակատրն Հեթում, ազատելով 'ի մահուանէ զքրիստոնեայսն զեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով: Որում հատուցէ Տէր հազարաւոր թողութեամբ մեղաց, և յերկարութեամբ կենաց ըստ իւրոց կամաց, յորդւոց յորդիս:

Դարձաւ Հուլաւուն յիջևանս 'ի ձմերոցս 'ի դաշտն Մուղանայ[1], և 'ի կայս ամարան 'ի Դարին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց 'ի Դարան-դաշտ[2]. զի այրք և դերբուկք քարանց կան անդ շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց, և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում. և խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր, մարդ և անասուն, փայտս ծանունս 'ի հեռաստանէ բերելով:

Յեօթն հարիւր և ինն թուին առաւ Մարտիրոսաց քաղաքն, զկնի յոլով աղետից և վնասուց՝ ոչ միայն պաշարեալ քաղաքին, այլ և պաշարողացն զօրացն Տաթարուն, և քրիստոնէիցն որ ընդ նոսա. կռուելով ընդ միմեանս 'ի ներքուստ և արտաքուստ. ուր սպանաւ գեղեցիկ երիտասարդն Սեաղա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ և յայնոսիկ պակեալ, հաւատ և երկիւղ պահելով զԱստուծոյն և զԵլղանին. որում մասն հասցէ արեամբ նահատակացն Քրիստոսի՝ պահողացն զհաւատ և զերկիւղ նորա. ամէն:

Ի նոյն թուին կոտորեցան զօրքն զոր թողեալ էր Ելդան Հուլաւուն կողմնապահ երկրին Շամայ իբրև քսան հազար, ընդ մեծ զօրագլխին Քիթբուղա կոչեցեալ, քրիստոնեայ հաւատով, ընդ որս մարտեաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թարտրական լերինն անթիւ բազմութեամբ, և զի սակաւք էին բուղայեանքն՝ կոտորեցան և գերեցան, և էին որք ցրուեցան թաքեան և ապրեալ եկին առ թագաւորն Հայոց. և 'ի նմանէ յոլով գտեալ մարդասիրութիւն, հանդերձ և երիվարս և ոչխիկս, եկին զոհութեամբ առ տէրն իւրեանց, Տաթարք և քրիստոնեայք: Եւ յայնմանէ յոլով փառաւորեցաւ անունն Քրիստոսի յարքային Հեթում, յօտարաց և յընտանեաց:

[1] Մուղան կամ Մուկան դաշտ, յանուն Մովսանայ եղբօր Հայկայ, խոպան կամ անապատ ընդարձակ յերկոսին ափունս վերջին գնացից Երասխայ:

[2] Ի հարաւակողմն աշխարհին Այրարատայ և 'ի հիւսիսի Վասպուրականք:

ՂԳ. Ի յեօթն հարիւր թուին իշխանաց իշխանն արքայաշուքն Զալալն[1] դառն չարչարանօք կցորդեցաւ մահուն Քրիստոսի և վկայից նորա 'ի զրախօս Տաճկաց, զուր պարտաւորեալ և մատնեալ Արղունին. տարեալ 'ի Տաճկաստան 'ի Խազուինն, և անդ գիշերի յօդակոտոր արարեալ սպանին, միայն զքրիստոսասիրութիւնն ունելով պատճառս, պահօք և աղօթիւք և ողորմածութեամբ և զմիաշաբաթն յոտնկացութեամբ անցուցեալ զժամանակս իւր մինչև 'ի ծերութիւն. վասն որոյ և լուսով 'ի բարձանց պատուեաց զնա Աստուած՝ իշանելով 'ի վերայ յօշեալ անդամոցն նորա, պսակելով և վկայելով զանպարտաւոր մահ նորա զմարտիրոսական: Զոր տեսեալ սպանողացն սոսկացեալ ընկեցին 'ի ջրհոր մի ցամաք, մինչև եկին իւրքն և տարեալ թաղեցին յիւր սեփհական վանքն Գանձասար[2] կոչեցեալ, հայրենեօք տուն գերեզմանի իւրեանց. զնոյն ճառագայթս լուսոյ տեսանելով բերռզացն: Ի նոյնքանիս թուականին Հայոց յեօթն հարիւր սպանին 'ի դուռն Ելղանին Հուլաւին զսպարապետն Վրաց զՁաքարէ՝ զորդի Շահնշահի, 'ի տիս երիտասարդութեան 'ի գեղ ծաղկի՝ և յառաջադէմ յաջողման ժամանակի, յերևանի և ծանօթ ամենեցուն, բարուրս ինչ եղեալ 'ի վերայ. և զայն ևս՝ թէ խափանեալ եղև կարգեալ հարկն յիւրում ժամու երթալոյ յարքունիս: Զորոյ մահն ողորմագին աշխարանօք սգացին ամենայն տունն Վրաց, Հայաստանօք մերձաւորօք նոցա. քանի՛ առաւել որք ծնանն զնա ծնողքն զառնակսկիծ և մարմնատանջ ողբովք: Վասն որոյ 'ի նոյն աւուրս և 'ի նոյն սևու ագին սրտակրծուր լեալ մեռաւ Հայրն Շահնշահ կոչեցեալ, իբր տէր մայրաքաղաքին Անւոյ, որ երբեմն նստոց էր արքայի, որ աւագն էր թագաւորացն Բագրատունեաց, այլ և այլ աշխարհացն, զանուն տեառն Անւոյ Շահնշահ կոչելով, իբր թագաւորաց թագաւոր:

ՂԴ. Թիւքս խորհրդաւորք, Զ, (եօթն հարիւր) որ է կատարեալ հանգիստ, և Ժ՝ (տասն) սուրբ, իբրև զսուրբ Աստուծոյ հանգուցեն 'ի շաբաթն Աստուծոյ՝ որ առաջի կայ, զասացեալ նշանաւոր որեարսդ յայսմ թուաբերութեան, կատարեալ յաղօթս ամենայն սրբոց:

ՂԵ. Յեօթն հարիւր և մետասան թուականին վախճանեցաւ տէր Ներսէս կաթուղիկոսն Աղուանից դառն ցաւով ջրգողութեամբ, չգտեալ 'ի բժշկաց դեղ, բայց միայն զմինն Յիսուս Աստուած, և դեղ կենաց անմահութեան. առ որ փոխեցաւ մեծ յուսով խոստովանութեամբ և անդաթիւ ըստ արժանւոյն, կեցեալ զժամանակս իւր հեզութեամբ և ողորմածութեամբ:

Յեօթն հարիւր և երկոտասան թուին հանգեաւ 'ի Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պատուելի աստիճանաց և կոչմանց, ուր կոչեաց զնորհն Աստուծոյ 'ի քահանայութիւն, 'ի վարդապետութիւն և յարհեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց, այրն անուանի և յերևանի աշխարհի՝ տէրն Յովհաննէս Տուեցին անուանեալ, որ զերիս յիսնակսն անհաց և անջուր կատարէր, և զուրբաթ և զչորեքշաբաթ, և յերուսաղէմ զնացեալ բոկոտիւք, և զաւուրս աղուհացիքն յոտն կալով և անհաց 'ի սուրբ Յարութեանն. և զարմացոյց զազգն Փռանգաց՝ որք անդ էին. զի ոչ միայն յոտն և անկերակուր, այլ և լռութեամբ կեայր, և խնդրէր յԱստուծոյ յայտնի հաւատ համբաւոյն՝ որ գայր յազգս. թէ յիշանեալ լուսոյն՝ Հայոց կանթեղն է 'ի վառիլ, որպէս և ինքն պատմեաց, եթէ որ զկուբայ[1] սուրբ գերեզմանին պահէր՝ սիրէր զմեզ և փարէր զմեզ, և մեք խնդրեցաք 'ի նմանէ զհաւաստիս իրացն. և նա ասաց դու գնէ կանթեղս, և բե՛ր կախէ քոյին ձեռօքդ և արարի այնպէս, գնեցի երեք կանթեղ, և կախեցի 'ի վերայ սուրբ գերեզմանին. յաջմէ յանուն Փռանգաց և 'ի ձախմէ Յունացն և 'ի միջին զՀայոցն, որպէս ինքեանք սովոր էին. թերևս փակեցաք զդուռն և մատանեցաք: Եւ ետ ցիս պահապանն զմատանին և զբանալին յաւուրն մեծի ուրբաթուն. և յաւուրն մեծի շաբաթուն՝ յինն ժամուն մինչ կայաք յաղօթս՝ առհասարակ ամենայն քաղաքն և աղօթականքն եկեալ 'ի հեռաստանէ, ասէ ցիս պահապանն գուրային, Տէր հրամէ՛, և բաց, զի իջաւ լոյսն, և չոգայ բացի, 'ի վեր առեալ զմատանին. և ճշմարտապէս առանց կարծեաց միջին կանթեղն վառեալ բորբոքէր անպատմելի գեղով: Եւ այսու աքանչելեօք[2] փառաւորեցաւ համբաւեցաւ այրն այն տէր Յովհաննէս: Ասաց ինքնին և

[1] Տէրն Խաչենոյ:

[2] Գանձասար անուանի մենաստան և աթոռ առաջին և վերին կաթողիկոսաց Աղուանից, 'ի Մեծիրանից գաւառի Արցախոյ:

[1] Կուբայ, գուբպէ, կամար, կամ մատուռն կամարակապ:

[2] Ըստ հաւատոց հեղինակիդ այս և որ զկնի աքանչելիքն Յովհաննու յերուսաղէմ:

զայս բան եթէ, չոգայ 'ի սուրբ Բեթղեհէմ, և տեսի անդ զսուրբ առաքելոցն պատկերսն նկարեալ 'ի պարիսպ եկեղեցւոյն, և Տաճիկք 'ի պատճառս անարգութեան փորեալ էին զաչսն. տրտմեցայ ընդ իրսն, և աղօթեցի առ սուրբ առաքեալսն աղաչելով յայտնել ինձ՝ եթէ հաճո՞յ է նոցա ամենայն ուրեք նկարել զնեսա: Եւ յորժամ դարձայ յԵրուսաղէմ՝ յայնմ գիշերի տեսի 'ի տեսլեան երկու արս փառաւորս, զի զային առ իս, և ելի ես ընդ առաջ նոցա և ասացի, թէ Ո՞վ էք սուրբդ Աստուծոյ. և նոքա ասեն, Պետրոս և Յովհաննէս, որ աղաչեցեր ցուցանել քեզ վասն ձևակերպելոյն զմեզ քրիստոնէից՝ որ բնաւ չէ մեզ հաճոյ և ձանձրացեալ եմք. և յայտնեմք ուրեք ուրեք և չլսեն մեզ[1]: Ասէր և աբեղայն իւր ուղեկից յԵրուսաղէմ. եթէ բոկ երեկ մինչ 'ի տեղն. և ապա յաւուր միում կոչեաց զիս, և ասաց. Տես զոտս իմ զի ցաւէ և նեղէ զիս. և 'ի տեսանելն իմ և 'ի յորոնել զուտիցն ասղամբ՝ սրագոյն և ստուար կտորս փշոյ գտի՝ որ ելանէր թարախով ոչ սակաւ. և զարմանք կալաւ զմեզ, զի չյայտնեաց մինչև 'ի տեղին, առ սէրն Աստուծոյ և սուրբ տեղեացն առ ոչինչ համարեալ զկսկիծն: Այսպիսի զառ 'ի վեր և նեղ ճանապարհաւ կացեալ մինչ 'ի խորին ծերութիւնն՝ հանգեաւ 'ի Քրիստոս, 'ի հոչակաւոր վանսն Նոր-բերդին անապատ կոչեցեալ. թաղեցաւ 'ի դուռն եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր ջինեալ. և այլ բազում չինուած և արդիւնս վաստակեալ հրամանաւ, կամօք և ձեռնտուութեամբ Վասակայ թագաւորազին Բագրատունւոյ. որոյ յիշատակն օրհնութեամբ 'ի կաթուղիկէ եկեղեցւոջ կացցէ առաջի Աստուծոյ անչիջանելի 'ի հոտ անուշից յաւիտեանս:

ՂԶ. Ի յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ մեծն Հուլաւու Էլղանն 'ի ձեռն Շնորհաւոր[2] կոչեցեալ փառաւորելոյ առն յայնմ ժամանակի՝ յամենեցունց, և աւելի յաշխարհակալացն, 'ի Բաթու կուսակալէն Հիւսիսոյ, ուր չոգաւն

[1] Պատկերք առաքելոցդ զտանէին և յեկեղեցիս Հայոց՝ ուր աղօթէին հեղինակդ և տեսանողդ, այլ թերևս ոչ շատք մինչև 'ի ձանձրութիւն նոցին:

[2] Շնորհաւորդ է անշուշտ վանականն որ ընդ Ռամեկայ գտաւ 'ի Կարնոյ քաղաքի, յատման նորին 'ի Թաթարաց: Այլ ոմն ժամանակագիր ասէ. «Սարվանին որդին Շահպատինն՝ զՎարդան վարդապետն տարաւ 'ի մօտ Հուլայուն, և մեծաւ սիրով պատուեաց զնա խանն. և բազում քանս խնամութեան հարցաւ ընդ սուրբ վարդապետն»: Տ. յէջ 161:

և պատուեցաւ նախ, ապա 'ի Հուլաւու Էլղանէն՝ որ տարաւ իւրով ծախիւք և գրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբայրք մեր Սարգիս և Գրիգոր, և աւագ երէցն Տրփխեաց տէրտէրն: Եւ տեսաք զմեծն զայն 'ի մեծի աւուրսն ամառամտի և տարեմտի իւրեանց, 'ի յամսեանն յուլիս ըստ Հռոմայեցւոց, և ըստ մեզ յարաց[1]: Եւ էր նոցա աւուրք ուրախութեան իբր լուսին մի. և կոչէին զաւուրսն զայնոսիկ խուտուլթայ[2], իբր խորհրդատոնս, յորս խորհէին այլղանքն ազգային՝ Զանկզղանին՝ առ մեծն եկեալ, զոր ինչ պատշաճն տեսանէին, հանդերձ ամենայն աւագունօքն իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիշ գունով փոփոխս: Անդ լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երևելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք. որպէս և 'ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում, և թագաւորն Վրաց Դաւիթ և Բրինձն[3] Անտաքու, և սուլտանք 'ի Պարսից կողմանց յոլովք: Եւ 'ի տեսանելն զմեզ ծունր ոչ ետուն կրկնել և ոչ չոքել[4] ըստ իւրեանց սովորութեանն. իբր թէ արքաւունքն[5] Աստուծոյ միայն երկրպագեն. զինի ետուն օրհնել, և 'ի մեր ձեռաց առնուլ: Եւ խօսք զոր ինչ հրամայեաց՝ առաջին այս. Կոչել եմ զքեզ որ տեսանես զիս և ճանաչես, և 'ի սրտանց աղօթես վասն իմ: Եւ աւելորդ է թերևս զամենայնն գրել, շատ խօսեցաւ: Եւ մեք տուաք պատասխանի և նստուցին զմեզ, և գինի ետուն. և շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ. և Վրացիք զիւրեանց պաշտօնն, և Ասորիք և Հոռոմք զիւրեանցն: Զի յայնմ աւուր տեսին զեկեալսն յամենայն կողմանց, մինչ ասել Այլղանին, թէ ես զքեզ միայն եմ կոչեալ, ի՞նչ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ յետև՝ մի աւուրբ յամենայն կողմանց եկին ընդ քեզ, տեսանել և օրհնել զիս: Եւ յառաջեաց հրամայեաց ինքն, թուի եթէ նշան է, որ Աստուծոյ սիրտն լաւ է ինձ: Ասացաք. Զմեզ այլ կալաւ զարմանք, և պատճառ՝ զոր դուք հրամայեցիք: Ա-

[1] Ըստ շարժական տօմարի Հայոց, որոյ նաւասարդ յայնմ ամի, ՉԺԳ 1264, սկսանէր 'ի 14 յունուարի, ապա և տարեմուտն Թաթարաց 'ի սկիզբն էր յուլիսի:

[2] Գուրիլթաի կոչէին Թաթարք զհամաշխարհական ժողովս և տօնս իւրեանց յընտրութիւն նորոց Խաքանաց և յայլ կարևոր դէպս:

[3] Prince, այսինքն Փռանկ իշխանն Անտիոքայ:

[4] Չոքիլմէք ըստ Թուրքաց, 'ի գուռս անկանել:

[5] Այսպէս կոչէին Թաթարք զքրիստոնեայս:

պա Հրամայեաց, թէ Ծածուկ բան ունիմ առ քեզ: Եւ յաւուր միում արար անառաջաւ յոյժ, և Հեռի կացուցեալ զամենայն բանակն, և երկու արամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար. յիւր ծննդենէ հետէ և 'ի մտրէ՝ որ քրիստոնեայ էր, ասէ. և թէպէտ դայեակ սնուցանէ զտղայն, երբ 'ի հասակ գայ՝ զիւր մայրն սիրէ. չենք օտարք 'ի սիրոյ քրիստոնէից, զոր ինչ ունիս ասելոյ ասա՛: Եւ բռնեալ էր զիմ ձեռքս, և մեք ասացաք զինչ Աստուած երեսս ասել բան. թէ Որչափ 'ի վեր ես դու քան զայլ մարդիկ, մօտ ես յԱստուած. Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ: Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի. մինչ 'ի ձեզ՝ աշխարհաւեր են լեալ, և աղքատաց անողորմն ծանր շալակ են դրել. նաքան[1] յոգոց են հանել, և լացեալ առաջի Աստուծոյ. Աստուած առեալ է զիշխանութիւնն և յա՛յլ ազգ տուեալ. թէ դուք աշխարհաշէն լինիք և աղքատաց ողորմած, 'ի ձեզանէ չառնու Աստուած, զոր տուեալ է՝ թողու առ ձեզ, և զոր տալ կամի՝ զայն այլ տայ: Ի քո դրանս հէնց[2] մարդ կացո՝ որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ. որ զլալով եկած տառապեալն՝ որ աղերս չունի և կաշառք՝ ուրախ 'ի տուն աղարկէ[3], քեզ յիշեցնէ. և զաշխարհս տեսանել տուր հէնց մարդոյ՝ որ յստակ տեսանէ, կուրանայ ո՛չ կաշառօք, և քեզ ասէ զիրան:

Եւ յայս կարգիս շատ խօսեցաք: Հրամայեաց թէ 'ի սրտումս դրի զքո խօսքդ: Ո՞նց է[4] որ զամէն զայն ասացեր որ յիմ սիրտս կայր՝ որ ինձ դիւր թուեաց. Աստուած խօսեցեալ է քեզ, երևեալ է քեզ: Ասացաք, թէ Չէ. մեք մեղաւոր մարդ ենք, ապա[5] զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացել ենք, և սիրտ թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ են, Աստուած յայտնեալ է քեզ առանց գրոց: Ապա ասացաք, թէ Առաջի աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դու՝ որ սուտ չկայ 'ի ներս: Հրամայեաց, թէ ասա՛: Ասցի, թէ զինչ քրիստոնեայ կայ և արքաւուն ընդ ծով և ընդ ցամաք, ամենոյ սիրտ հետ քեզ լաւ է և քեզ աղօթք են առնում: Հրամայեաց, թէ Հա-

1 Եւ նոքա:

2 Այնպիսի:

3 Ցուղարկէ:

4 Ուստի՞ է այս, զի...:

5 Սակայն:

ւատալ եմ որ հէնց է. ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքաւունքն, ինձ ի՞նչ աղօթք առնեն, և թէ առնեն՝ Աստուած ե՞րբ լսէ. մէջում[1] արքաւունն զԱստուած յերկնից յերկիրս բերէ՞, չբերէ: Ասցէք որ յԱստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնեն. մեր եղբարքն[2] հետ մեզ վասն այն են 'ի կռուիլ, որ մեք քրիստոնասէր ենք և քրիստոնէութիւն կայ 'ի մեր տանս. նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ 'ի նոցա տանն:

Ապա ասէ ցմեզ. Ոչխարենի է՞ր ես զգեցեալ և ոչ ոսկի. և իմացեալ թէ մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուր[3] արքայ մի եմք. և հրամայեաց թէ Մեծացանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ: Եւ մեք ասեմք. Ոսկին մեզ և հողն մի է. մեք ա՛յլ մեծ ուզենք, որ վայել է քո մեծութեանդ, ողորմութիւն 'ի վերայ աշխարհի: Եւ հրամայեաց, թէ մէջում քթեթ[4] կարեմ խիստ գէշ և խիստ փոքր իրք[5], լուր այնչափ որ խունկ գնես եկեղեցւոյն, թէ չէ երկիր ի՞նչ ասեն թէ Այլղանն զնա ո՞նց տեսաւ: Եւ զայդ զոր ասացեր՝ առնեմ, և մարդիկ յղարկեմ որ տեսանեն զաշխարհ:

Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ, այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ. և ունէր 'ի ձեռքն բալիշ[6] մի, և երկու հանդերձ էր տուել կարել: Թիշեցուցաք, թէ Այլղան, այդ դրամդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատանելի և անմատչելի խնդրեցաք պարգևք: Եւ հրամայեաց թէ առաջի օրն զքո խօսքդ լսենեցի[7], առլեխ[8] եմ տուել գրել. կարդալ տուր և զինչ քո սրտիդ զիտի աւելի՝ զայն այլ գրել տուր: Եւ 'ի Սախալթու և 'ի Շահաբատինն եմ յանձնել զերկիրդ և զքեզ, որ զինչ ասես առնեն: Եւ մեք շնորհ կալաք և ելաք: Թերևս աւելորդ թուիմք գրերով զայս, այլ վասն բարեսէր և քաղցրաբարոյ մեծի Հուլաունին յիշատակի գրեցաք յօգուտ, կամ յօրինակ այլոց՝ որ

1 Մեջում արաբերեն թշուառ լսէ:

2 Ակնարկէ 'ի պատերազմն Պէրքայի, զոր յետոյ յիշէ և հեղինակս:

3 Սոսկ:

4 Քթանեայ զգեստիկ գծուծ:

5 Իմա՛, և յոյժ սակաւ ինչ դրամ տաց:

6 Գալիշ. ոսկի կամ արծաթի դրամ տախտակաձև կտրեալ. ոսկին արժէր երբեմն 2000 գենար արաբացի, արծաթեայն 200:

7 Կատարեցի լիովին:

8 Նպարեղ, հրովարտակ հրամանի:

զալոց են յետ մեր, ո՞ զիտէ:

Ղէ. Քանզի 'ի մտանել Թուականութեանն Հայոց յեօթն հարիւր չորեքտասան, եհաս մեծին այնորիկ մեծագոյն հրաւիրակ, և եհար զաւազանն զօրեղ զքաջն զայն յաղթազգեաց Հուլաւուն, և ժամանեաց նմա վճիռ նախահօրն. քանզի որդի էր և նա Աղամայ, որ էարբ 'ի բաժակէն յորմէ ամենեքեան ճաշակեցին և ճաշակեն. թէ և դառն էր նմա, էարբ զլեղին մահու՝ ոչ ուրախութեամբ որպէս Տէրն և յուսացեալք 'ի նա. զի խաբէին զնա աստեղագէտք և քուրմք պատկերաց ոմանց Շակմոնիայ[1] կոչեցեալ, որ է ասեն՝ Աստուած երեք հազար և քառասուն ամաց. կալոց է դեռ այլ ևս երեսուն և հինգ դումանս, որ է դումանն տասն հազար[2]: Եւ ապա հանէ զնա ասեն միւս ևս Մոնդրին[3] անուն. Տոյինք[4] կոչէին զքուրմն զայնոսիկ, որոց հաւատայր և հրամանաւ նոցա ելանէր 'ի պատերազմ, կամ չելանէր. որք ասէին եթէ յերկար մնալոց ես 'ի մարմինդ յայդ. և յորժամ յերկար ծերանաս՝ այլ նոր մարմին զգենուս. չինել ետուն նմա մեհեան պատկերացն այնոցիկ. և երթայր անդ յաղօթս, և դիւթէին նմա զոր ինչ կամէին:

Եւ մինչդեռ սպասէաք մեք այլ ժամանակի, և երկրորդ տեսութեան և ծանօթութեան աւելագունի, ասել ինչ նմա զարժանն, այլ և մնայաք 'ի բարեսէր բարուցն և 'ի քրիստոնէասէր ցուցանել նմա յԱստուծոյ նշան ինչ ձեռնտու քրիստոնէից, ասել ինչ նմա վստահութեամբ. քանզի վարժեալ էր 'ի նոցա բանսն և հիւանդացեալ: Քանզի թաղեայ պատկերաց խօսել տային և ձիոց, և յոլով էր 'ի նոսա արուեստ խաբէութեան և հմայութեան. և էին պարկեշտ 'ի կերակուր և 'ի հանդերձ և 'ի կուսութիւն, և 'ի չափաւոր ամուսնութիւն և 'ի խառնակութիւն. քան ամաց կին առեալ, ասեն, մինչ յերեսուն ամն՝ 'ի շաբաթն երեք հետ խառնին. և անդի մինչ 'ի քառասուն ամն՝ ամսեանն երեք, և անդի մինչ 'ի յիսունն՝ տարեանն երեք. և

[1] Շաքիա-մունի ըստ Հնդկաց, անուն մի Գուտհայ դից մարմնացելոյ 'ի թագաւորէ Շաքեան տոհմի. Մունի նշանակէ առ նոսա ապաշխարող սրբազան:

[2] Ըստ պարսիկ լեզուի:

[3] Ըստ Կիրակոսի և Ստեփանոսի Ուռայեցեան՝ Մադրին, իսկ ըստ Հնդկաց Մաիդրեյա. այսպէս կոչեն զԳուտհա մինչչեւ մարմնացեալ և եկեալ յաշխարհ 'ի փրկութիւն մարդկան:

[4] Թուին ըստ Թաթարաց:

ընդանցեալ՝ բնաւ ասեն ոչ մերձենալ, ուստի մանաւանդ կարէին խաբել: Եւ յայսոսիկ զայր հասանէր օրհասն, և կոխեր զբարձրն զայն բլուր լայն ոտամբն մահն. և փլուցանէր հաւասարէր իւրոցն նախնեաց. քանզի լեառն որ փլանելոցն է՝ փլցի, ասէ գիր: Եւ լինէր հաւատարիմ բան մարգարէին. Ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. այլ հաւատարիմ է Տէր և արդար հատուցանել նմա զմասն բարւոյն, զոր օրինօք բնութեանն ստացեալ ունէր, և զիւրեանցն հայրենիս[1] պահելով. զի ասասխն[2], որպէս ասէին ինքեանք կոչելով զեղեալ սահմանն 'ի Զանկըզղանէն, սուտ չասել, չգողանալ, յայլոյ կին չխառնակել, սիրել զիրեարս հաւասար անձին, յիշոդք չունել և չգիտել բնաւ, զկամաւ հնազանդեալսն ապրեցուցանել՝ զերկիր և զքաղաք. և զանուանեալ տունս Աստուծոյ, և զկոչեցեալ նորա ծառայսն՝ զիարդ և իցենն՝ ազատ թողուլ 'ի հարկաց, և դնել պատիւ: Զոր և նա հրամայէր պահել և պահէր: Այլ և յիշենք զոր ասացն, թէ մեք որ պատուիրեմք աղօթել վասն մեր, ոչ թէ 'ի մահուանէ զերծանել, զայն չգիտենք, այլ խնդրէք յԱստուծոյ որ 'ի մեր թշնամեացն ձեռացն չմեռանիմք: Թէ կատարեցաւ՝ այն Աստուած գիտէ. զի համբաւեցին նախ, թէ դեղով և հնարիւք սպանին, և յետոյ ծածկեցին զզրոյցն: Սակայն մեծ թագուհին Տողուզ խաթունն կոչեցեալ՝ նախ քան զհամբաւել մահուն առաքեաց առ մեզ գաղտ, թէ Աստուած սիրեաց զԱյլղանն և տարաւ ստտի, և զինչ որ ստտ սիրէր և զայս աշխարհս նմա էր տուեալ, նոյնպէս և արդ զայն աշխարհն երեսն նմա. պատարագ լինի՞ թէ ոչ: Եւ ասացաք, թէ չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն և հարկաց թեթևութիւն առնէք. զի Ասորիքն ասացեալ էին՝ թէ պատեհ է: Հարցեալ էր և վասն Ապաղային, որ աւագ որդին էր Հուլաւին, թէ պա՞րտ է զնա դնել, զի անդարձ նմա արար: Եւ մեք պատուիրեցաք՝ որ 'ի զրոց է զաւազն դնել, և անդարձն անկրկնելի կոչի ստուգաբանութեամբ: Որպէս և եղևն իսկ. և իւրեանց ազգայինն՝ որ և նա կոչէր Այլղան՝ Տակութար՝ երթեալ նստուցանէր զԱպաղէն կոչեցեալ 'ի տախտն և 'ի գահոյս հօրն, և հաւանեցան զօրքն ամենայն և հնազանդեցան: Այլ սակայն զի մեղքն մեր անչափ էին, չեղև սուգն չափով. զի յետ երից ամսոց 'ի նոյն

[1] Զիւրեանց հայրենի օրէնսն պահելով:

[2] Ճշմարտ, արդել հրամանի:

թուին՝ փոխեցաւ 'ի Քրիստոս քրիստոսասէր թագուհին Տողուզ խաթունն, և սրտակտուր միջաբեկ եղեն ազգք քրիստոնէից բազմապատիկ սգով տրտմութեամբ. զի նմա կենօքն վաղվաղակի ողջանալ սկսաւ խոցն Այլղանին, ակն ունելով առաւել պայծառանալ քրիստոնէութեանն. զի որքան և էր պատճառն՝ նա իսկ էր ըստ մեր կարծելոյն: Այլ քանզի Աստուած իսկ է ամենայն բարեաց պատճառ, զոյսն չէ պարտ հատանել մեզ. քանզի կացոյց նա 'ի տեղի իւր միւս ևս հաւատացեալ ազգական իւր, կին բարեպաշտօն՝ կոչեցեալ Թուխթանի: Եւ բերեալ եղև 'ի Ցունաց կին Ապաղային Դեսպինայ[1] անուն, դուստր թագաւորին զոր Վատածն ասէին, և պատուէր՝ թէ կնքուի Ապաղայն, և ապա առնու: Եւ ել համբաւն նոյնպէս եթէ մկրտեցաւ և առ զնա, 'ի փառս Քրիստոսի:

Ցաւուրս յայս 'ի մեզաց իմոց անկաւ զրքունկս 'ի ձեռն հարամեաց[2], տղայօք մեր, և յողորմութենէն Ցիսուսի ապրեցան տղայքն առ ժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս 'ի Տփխիս 'ի վաճառ բերեալ և գնեալ 'ի տանէ եղբօր մերոյ միոյ Մելեր կոչեցելոյ: Վասն որոյ ողորմութեան Տեառն փառք 'ի սուրբս ամենայն և յարարածս, և գնողին զսա՝ զթութիւն 'ի Քրիստոսէ:

ՂԸ. Իսկ 'ի մտանել թուականին յեօթն հարիւր և հնգետասան՝ կողմնակալն հիւսիսի կոչեցեալն Բարքա[3], որ ունէր զտեղի Բաթուին և զՍարդախին և հաւանեալ էր օրինացն Տաճկաց, լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ զայ բազմութեամբ առ Կուր գետով, և ցուցանէ զինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Ապաղային, և եղբօր իւրոյ՝ Իսմուդին, իբր թէ կենդանի է յետ մահու հօր նոցա: Եւ զայ կոխէ զնոսա, և անհոգութեամբ մինչև 'ի Հէճն[4], աղօթել անդ յուրախութիւն ամենայն Տաճկաց. յորմէ զարհուրեալ յայսմ կողմանէ կացելոցն՝ ցանկեն զերկայնութիւն գետոյն աստի՝ զոր Շիբարն[5] կոչէին, և

[1] Դեսպինա՝ տիկին կամ տիրուհի ըստ յունաց լեզուի, էր Մարիամ դուստր ոչ զբինաւոր կայսեր Միքայէլի Բալէոլոգի, 'ի Տիրավաստի տոհմէ:

[2] Հարամի, ըստ Արաբացւոց. աւազակք կամ մեկնակազէնք թաթարաց:

[3] Պէրքէ կամ Պէրքայի խան, եղբայր Բաղու խանի:

[4] Հէճն թուի Էհիճ գաւառ Շրուան նահանգի, զի աստ մզեցաւ պատերազմն:

[5] Շիբար թուի Ագսու գետ օժանդակ Կրի 'ի Շրուան նահանգի. այլ պատմիչք ոչ յիշեն զգետակդ, բայց յափունս Կուր գետոյ ասեն բանակեալ զթշնամիսն աստի և անտի:

զգուշացան ամենայն պատրաստութեամբ զաւուրս ձմերայնոյն: Իսկ Բարքայն վրիպեալ 'ի յուսոյն՝ դառնայր 'ի տեղի իւր. և յաւուրս ամարայնոյն վճարէր զկեանս. զոր ասեն լինել բարուք ոչ խռովարար, և ատեցող արեանհեղութեան:

ՂԹ. Ի նոյն թուին մերձ յաշնան յեղանակն՝ բացաւ մեզ ամանդառն քացախուն, և մրուր բարկութեանն Աստուծոյ հայկազարմ ազգիս: Քանզի սուլտանն Մսրայ Փնտխտար[1] անուն խնդրէր զբերդն՝ զոր Տաթարին ուժուն առեալ էր Հայոց թագաւորն Հեթում: Եւ 'ի չտալն, աւելի վասն երկեղի Տաթարին, բարկանայր յոյժ, և զօրս գումարէ բազում յոյժ, և առաքէ 'ի ձեռն զօրագլխի ուրումն Սմլմօթ[2] անուն յերկիրն Կիլիկեցւոց, որ և յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՍիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ 'ի նմա, և գտանէ զտունն գետնափոր գանձուցն, և առնու յոյժ բազում, զոր 'ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր[3]: Եւ գնայ աւերմամբ մինչև յԱտանա, և ապա լսէ համբաւ երկիւղի և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ, բաց 'ի կոտորելոցն: որ զլուխ և խոց անողջանալի կոտորելոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ 'ի մատաղ հասակի մերձ 'ի փթիթս մուրուաց, վկայեալ յամենայն բերանոյ, անպակաս 'ի բովանդակ բարւոյ, և կուսութեամբ շտեմարանեալ 'ի ծրարս շնորհացն Աստուծոյ: Որ յոժարութեամբ ևս դիմեալ 'ի պսակն արեան. քանզի հարցեալ զուն ոչ ետ զանուն հօրն. զի կենօքն գերեալ՝ մի՛ լիցի աւելի բեռն հօրն և աշխարհին՝ ընդ անդրանիկ եղբօրն Լևոնի, պսակելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն առ կենօք հօրն: Քանզի նա եղև զլուխ գերելոցն մեր, և հուր աղէկէզ լերդաչարչար և սրտակտուր աշխարհիս մեր և ազգիս, որ կամք չնչարգել և յերերման: Հասանէ ձեռն վերին, որ եհարն ցասմամբ՝ նոյն բժշկէ ողորմութեամբ, ածելորվ զմեծաբաց խոցն, առնելով գերէդարձ՝ զոր տարան ընդ այլսն. հնգետասան օր յամելով յաշխարհն և ընլով աղետիւք, զնոսա՝ իրօք, և զմեզ՝ խոցոտիչ համբաւուն:

[1] Պիյպարս Ալի Փունտուգտար:

[2] Սիմ-էլ-մաւդ:

[3] Կարմիր նշանակէ զոսկի դրամն կամ զդահեկանն. թիւն նշանակեալ է յ00. կՃՌ, որ ընթերցեալ լինի վեցսուն հարիւր հազար, 6.000.000, և համարիմք սխալեալ փոխանակ գրելոյ ՋՃՌ:

Ճ. Իսկ 'ի վերանալ թուոյն մերոյ յեօթն հարիւր և վեշտասան 'ի կատարման քառասուներորդաց աղուհացիցն, 'ի լնուլ վեցերորդ շաբաթուն 'ի յարութեան աւուր Ղազարու, սահմի ամսեան 'ի քսան և վեց, փոխի յաշխարհէս զգալւոյ յիմանալին՝ տէր Կոստընդին պատրիարգն Հայոց, ծերացեալ և լի աւուրքք ըստ մարմնոյ, և առաւել ևս ըստ հոգւոյ և ըստ կամացն Աստուծոյ, յորովայնէ ընտրեալ, և ընդ ամենայն աստիճանս յառաջանալով անցեալ, ամենեքումք հաճոյացեալ, յամենայն ազգաց և 'ի լեզուաց վկայեալ. կուսութեամբ անփուտ մնացեալ յիմանալի և 'ի զգալի մարդն և 'ի զգայութիւնս և 'ի զգայարանս, և 'ի բոլոր անդամս մարմնոյ. կրակից և վշտակից և ազակից ազգիս եղեալ 'ի մեղաբեր և 'ի ցասմնահար դարուս. և 'ի ժամանակս ցաւալից և 'ի կսկծահար՝ զբոլորն յինքն տարեալ և ըստ կարի թեթևացուցեալ, սիրտ և բան և զանձ ծախելով առատաբար և անխնայ: Վասն որոյ և յարմարի նմա ասել տեառն իւրոյ. Անցաք մեք ընդ հուր ջուր զանազան փորձանաց, այրիչ և խեղդիչ որոգայթից, որ և ճաշակեաց իսկ և 'ի թանձրացեալ և զմռսեալ վերջնոյ լեղւոյս, մերձ 'ի կատար կենացն տեառնաբար, զղջրդումն թագաւորութեան մերոյ, զսուր և զգերութիւն իւրական ծննդեան, սննդեան աշխարհին. մտեալ 'ի փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բորբոքման, ձեռնասուն արքայորդեացն կորստեան. որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա և արարին տագնապել ստիպեան[1] շնչոյն, բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիծ կենցաղոյս: Զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Աստուծոյ՝ ընդ Ղազարու հանէ արտաքոյ այսքան դժնդակ կրիցս՝ յանապատումն:

[1] Այսպէս յԾՕ. Թուի լինել տագնապել տարբերան շնչոյն:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Գրաբար և աշխարհաբար

Հրատ. խմբագիր Դ. Վ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր Վ. Զ. Բգոյան
Համակարգչային շարվածքը և ձևավորումը
Ս. Ա. Գասպարյանի

Հանձնված է շարվածքի 18.10.01 թ.: Ստորագրված է տպագրության 07.12.01 թ.: Չափը՝ 84×1081/32: Թուղթը՝ օֆսեթ.: Հրատ. 19,2 մամուլ, տպագր. 12,75 մամուլ=21,42 պայմ. մամուլի: Պատվեր՝ 129

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52